

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱԽԱԼՍԱՐԱՆ

Վ. Ս. ՄԱՂԱԼՅԱՆ

ԻՄ ՆՎԵՐԸ  
ՄԱՅՐ ՆԱԽԱԼՍԱՐԱՆԻՆ

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

1997

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Վ. Ս. ՄԱՂԱԼՅԱՆ**

**ԻՄՆՎԵՐԸ  
ՄԱՅՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ**

*(Հոդվածների ժողովածու)*

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2019

ՀՏԴ 378  
ԳՄԴ 74.58  
Մ 200

*Հրատարակության և երաշխավորվել  
ԵՊՀ հոբելյանական հանձնաժողովի կողմից:*

Խմբագիր՝ ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բան. գիտ.  
դոկտոր, պրոֆ. Ս. Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մաղալյան Վ. Ս.

Մ 200 Իմ նվերը մայր համալսարանի դարակազմիկ հոբելյանին  
(հոդվածների ժողովածու) / Վ. Ս. Մաղալյան: -Եր.: ԵՊՀ  
հրատ., 2019, 506 էջ:

Ժողովածուն նվիրված է ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին: Նրանում ընդ-  
գրված են հեղինակի՝ տարբեր տարիների գրած մի շարք հոդվածներ, որոն-  
ցում լուսաբանվում են մայր կրթօջախի հարուստ պատմության մինչ այդ չու-  
սումնասիրված առանձին էջեր, վեր հանվում նոր փաստեր ու իրողություններ:  
Գիրքը բաղկացած է յոթ բաժիններից, որոնցում խոսվում է Երևանի պետական  
համալսարանի հիմնադրման, նրա գործունեության, գիտական մասնաժողովի,  
գրատպության և այլ հարցերի մասին: Ներկայացված են «Երևանի համալ-  
սարան» թերթի անցած ուղին, ԵՊՀ վերջին շրջանի կարևոր հրատարակու-  
թյուններին նվիրված գրախոսություններ, ինչպես նաև անվանի դասախոսների  
դիմանկարներ և այլն:

Այն կարող է օգտակար լինել հանրապետության բուհերի, մասնավորա-  
պես՝ ԵՊՀ անցած ուղու պատմության հարցերով զբաղվող մասնագետներին,  
ինչպես նաև կհետաքրքրի հիշյալ խնդիրներով շահագրգիռ ընթերցող լայն  
շրջաններին:

ՀՏԴ 378

ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-2381-7

© ԵՊՀ հրատ., 2019 թ.

© Մաղալյան Վ. Ս., 2019 թ.

## ՈՐՊԵՍ ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ

Այսօր Երևանի պետական համալսարանը հարյուր տարեկան է: Նրա այդ տարիքի շուրջ վեց տասնամյակն անցել է իմ աչքի առաջ: Դրանից 5-ը եղել են իմ ուսանողական, իսկ 3-ը՝ բանակում ծառայելու տարիները, ուր գորակոչվել էի 3-րդ կուրսից: Ձորացրվելուց հետո շարունակել եմ ուսումնառությունս և, 1968 թ. ավարտելով ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, նշանակվել եմ ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնի ավագ լաբորանտ: Այդուհետև իմ աշխատանքային ողջ գործունեությունն առ այսօր՝ ուղիղ կես դար, անցել է համալսարանում: 1971-2006 թթ. եղել եմ «Երևանի համալսարան» թերթի, իսկ 1991-2000 թթ.՝ համատեղության կարգով նաև «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատուի գլխավոր խմբագիրը, 2007 թվականից Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող եմ, 1981 թվականից պարբերաբար կազմում և հրատարակության եմ պատրաստում «Գրական համալսարան» տարեգիրքը: Այս աշխատանքները կատարելու ընթացքում իմ առջև բազմիցս ծառայել են համալսարանի պատմությանն առնչվող մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են եղել նվիրում ու երկար ժամանակ: Ուստի տարիներ շարունակ արխիվային նյութերի, ժամանակակիցների հուշերի ու եղած գրականության ընձեռած հնարավորությունների սահմաններում ուսումնասիրել և գրել եմ հարյուրից ավելի հոդվածներ ու հաղորդումներ, որոնք տպագրվել են հանրապետական գիտական և հասրակական-բաղաբական հանդեսներում, ինչպես նաև արտերկրի մամուլում:

Մույն ժողովածուն կազմվել է այդ նյութերի հիման վրա, որոնք նվիրված են համալսարանական կյանքի զանազան կողմերին, նրա պատմության չուսումնասիրված էջերին, գրական-մշակութային կյանքին և այլ ոլորտների: Դրանք գրքում զետեղված են ըստ բաժինների՝ նկատի ունենալով նաև այդ նյութերի բովանդակային ներքին միասնությունը:

Գիրքը բաղկացած է յոթ բաժիններից, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է մի առանձին թեմա: Կատարվել է նյութերի ընտրություն: Հարյուրից ավելի հոդվածների միայն մի մասն է ներառվել գրքում, հատ-

կապես՝ այն մասը, որը չի կորցրել իր գիտական արժեքը: Բոլոր նյութերը տպագրվել են նույնությամբ՝ անփոփոխ, այնպես, ինչպես եղել են մամուլում: Միայն ուղղվել են տպագրական վրիպակներն ու ակնհայտ սխալները, անհրաժեշտության դեպքում տողատակերում տրվել են ծանոթագրություններ:

Եթե հանդեսներում այդ հոդվածների տպագրությունից հետո ընկած ժամանակահատվածում դրանցում նկարագրված բնագավառներում տեղի են ունեցել փոփոխություններ, ապա այդ մասին որոշ տեղեկություններ են տրվում տողատակերի ծանոթագրություններում: Օրինակ՝ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոնի մասին «Պատմաբանասիրական հանդեսի» 1984 թ. թիվ 1-ում տպագրված հոդվածից հետո արդեն անցել է 34 տարի, իսկ այդ ընթացքում հիշյալ կենտրոնում շատ բան է փոխվել, այն համալսարանի կազմում դարձել է ինքնուրույն ինստիտուտ: Ժողովածուում ընդգրկելով այդ հոդվածը՝ այն օժտել ենք համապատասխան ծանոթագրություններով: Կամ, ասենք, «Չարենցյան ընթերցումներ» գրքի 5-րդ հատորի գրախոսականը գրվել է սրանից 30 տարի առաջ, իսկ այդ ընթացքում տպագրվել է 5 հատոր և: Տողատակում տվել ենք ծանոթագրություն՝ նշելով հիշյալ հատորների լույսընծայման թվականները և այլ տեղեկություններ: Նման անհրաժեշտ ծանոթագրություններ ունեն նաև մյուս նյութերը:

Այս ամենով հանդերձ՝ պետք է նշել, որ մի շարք հոդվածներում նկատվում են որոշ կրկնություններ: Քանի որ դրանք նվիրված են համալսարանին, պարզ է, որ առանձին մտքեր, արտահայտություններ, թվեր ու փաստեր պետք է կրկնվեին, որոնք գրքում թողնվել են նույնությամբ: Միայն փոփոխվել են որոշ վերնագրեր, հատկապես՝ գրախոսականների, որոնք գիտական հանդեսներում սովորաբար կրում են հեղինակների անուններն ու գրքերի վերնագրերը: Այլ փոփոխություններ գրեթե չեն կատարվել: Նյութերը բաժիններում ներկայացված են ժամանակագրական կարգով:

Այս է իմ սրտից բխած համեստ նվերը ինձ սնուցող ու ուսուցող Մայր համալսարանին իր ծննդյան պանծալի դարալիցի առթիվ:

## ՄԱՅՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ\*

Դու իմաստության սրբազան տաճար,  
Հայ մտքի կաճառ, մայր համալսարան,  
Մի լույս առավոտ հուզմունքով անափ  
Քո գիրկն եմ եկել ես ուսման ծարավ:

Ու քո վեհաշուք կամարների տակ  
Խոսքերն եմ լսել մեծ Խորենացու,  
Որ մեր անցյալն էլ հարուստ է ու թանկ,  
Թեպետ հույժ քիչ ենք ու փոքր ածու:

Որ մեր հոգին էլ կարող է վառվել  
Ու լույս տալ երկնի խավար աստղերին  
Եվ անհունի մեջ հավերժ սավառնել  
Ու լուծել անհաս խորհուրդներ վերին:

Ես քո գրկի մեջ սերտել եմ ուշիմ  
Մեր հավերժության խորհուրդն իմաստուն,  
Որ մութը երբեք չի հաղթի լույսին,  
Եվ դու այդ լույսն ես վառել իմ սրտում:

Դու իմ հոգին ես հավատով կռել  
Եվ ինձ օժել ես անուշ բարությանը,  
Շռայլությամբ ես ամեն ինչ տվել,  
Բայց ես վերցրել եմ մեծ դժվարությամբ:

Եվ խենթ եմ եղել ես մի քիչ եթե,  
Լոկ չեմ հասկացել, եղիր դու ներող,  
Արդ ես գնում եմ իմ ճամփան թեթև՝  
Քո տված ծանր գանձերի բեռով:

---

\* «Երևանի համալսարան» շաբաթաթերթ, 05 հուլիսի 1968, թիվ 23 (765):



**ՄԱՍ ԱՌԱՋԻՆ**

**ՀԱՅՈՑ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՌՎՈՒՄ Է  
ՀՈԳԵՎՈՐ ԼՈՒՅՍԻ ՄԵՃ ՋԱՀԸ**





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԳՐՈՒՄԸ\*

Այս տարվա մայիսի 16-ին լրացավ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 80-ամյակը:

Արդեն դարասկզբից բարձրացվում է հայրենի հողում միջնադարյան համալսարաններից հետո վերստին համալսարան ունենալու հույժ կարևոր խնդիրը: Այդ առիթով դեռևս 1917 թ. ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանը, խոսելով հայկական համալսարան ունենալու մասին, ասում էր. «Եվ պետք է ստեղծել Հայոց Համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդել ու սովորել հայերեն լեզվով: Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեջ ջահ՝ Հայկական Համալսարան... Ինչ որ մենք կլինենք՝ մեր համալսարանն էլ մեզ հետ»<sup>1</sup>:

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումից մեկ տարի էլ չանցած՝ նախանձախնդիր մի խումբ մտավորականներ դիմում են կառավարությանը և շեշտում համալսարան հիմնելու «հույժ կարևորությունը նորանկախ Հայաստանը կուլտուրապես, քաղաքականապես բարձրացնելու ու զարգացնելու տեսակետից»<sup>2</sup>: Այդ խնդիրն առաջադրողներից ու դրա հետևողական պաշտպաններից էին ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարներ Գևորգ Մելիք-Ղարազյոզյանը, Սիրական Տիգրանյանը և Նիկոլ Աղբալյանը: Նրանք մի քանի անգամ դիմում են ՀՀ կառավարությանը՝ հիմնավորելով համալսարան ունենալու խիստ անհրաժեշտությունը: Սկզբում խնդիր է դրվում Թիֆլիսում գործող Անդրկովկասյան մասնավոր համալսարանը Երևան տեղափոխելու կամ նրան նյութական օգնություն ցույց տալու, քանի որ այդ համալսարանի 1715 ուսանողներից մոտ 700-ը և 76 դասախոսներից 25-ը հայեր էին:

Այդ խնդրի շուրջ տեղի են ունենում մի շարք բանակցություններ, գրվում դիմումներ ու զեկուցագրեր. հարցը դառնում է լայն քննարկման

\* «Էջմիածին» ամսագիր, 1999, № Ը-Թ, էջ 80-92:

<sup>1</sup> Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 7, Եր., 1995, էջ 326-327:

<sup>2</sup> Երևանի համալսարան. 1918-1920 թթ. (վավերագրերի ժողովածու), կազմեցին՝ Ֆ. Հ. Մամիկոնյան, Ս. Ս. Միրզոյան, Եր., 1995, էջ 18: Ներկա հոդվածում առկա մեջբերումների մեծ մասը վերցված է այդ ժողովածուից:

առարկա: 1919 թ. մայիսի 7-ին ՀՀ Նախարարների խորհուրդը լսում է հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Մելիք-Ղարազոյանի՝ «Անդրկովկասյան համալսարանին 500.000 ռուբլի նպաստ տալու մասին» զեկուցումը և մերժում այն: Բայց և նույն նիստում նրան հանձնարարվում է նոր զեկուցում պատրաստել Հայաստանում համալսարան հիմնելու մասին՝ դրան կցելով համալսարանի ծրագիրը և նախահաշիվը:

ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարությունն այս հանձնարարականների հիման վրա նախապատրաստում և ՀՀ Նախարարների խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հայաստանում համալսարան հիմնելու առաջարկը: Այդ ամենից հետո՝ 1919 թ. մայիսի 16-ին, ՀՀ Նախարարների խորհուրդն ընդունում է «Օրենք Հայաստանում համալսարան բանալու և նրա նախնական ծախսերը հոգալու համար 300.000 ռուբլի հատկացնելու մասին», որում ասված է.

«1. Հիմնել Երևանում համալսարան հետևյալ չորս բաժիններով՝ ա) պատմալեզվաբանական, բ) տնտեսաիրավաբանական, գ) բժշկական և դ) ֆիզիկամաթեմատիկական՝ տեխնիկական ստորոբաժանումով:

2. Համալսարանը բանալ 1919-20 ճեմարանական տարում:

3. Առաջին հերթին բանալ պատմալեզվաբանական բաժինը:

4. Մնացած բաժինները բանալու ժամանակը և հերթը սահմանում է Մինիստրների խորհուրդը ըստ հանրային կրթության մինիստրի առաջարկության:

5. Համալսարանը բանալու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել 300.000 ռուբլի, հանձնարարելով ֆինանսների մինիստրությանը բանալ համապատասխան վարկ Հանրային կրթության մինիստրությանը»<sup>3</sup>:

Ըստ այս որոշման՝ 1919 թ. հունիսի 5-ին ընդունվում է «Օրենք Երևանի համալսարանի մասին», իսկ հուլիսի 8-ին հաստատվում են «Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնները»: Հուլիսի 19-ին ընդունվում է «Լրացուցիչ օրենք Երևանի համալսարանի մասին», որոշվում է համալսարանի տեսուչ (ռեկտոր) հաստատել նշանավոր իրավաբան, Մոսկվայի և Բրյուսելի համալսարանների պրոֆեսոր, Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի քաղաքացիական իրավունքի ամբիոնի

---

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 58:

վարիչ Յուրի Ստեփանի Ղամբարյանին (1850-1926): Որոշվում են մաս համալսարանի դասախոսների աշխատավարձերի չափերը. ա) պրոֆեսորների՝ սահմանվում է նախարարական, բ) դոցենտների՝ նախարարների օգնականների և գ) պրիվատդոցենտների՝ բաժանմունքների կառավարչի աշխատավարձի չափով:

Այնուհետև՝ 1919 թ. ամռան և աշնան ամիսներին, ընթանում են համալսարանի կազմակերպման բարդ ու դժվարին աշխատանքները: Երևանում համապատասխան շենք տրամադրել չկարողանալու պատճառով համալսարանը ժամանակավորապես փոխադրվում է Ալեքսանդրապոլ:

Ըստ հուլիսի 6-ին ընդունված «Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնների»՝ որպես իսկական ուսանող կարող էին ընդունվել լրիվ միջնակարգ կրթություն ունեցող քաղաքացիները՝ առանց սեռի խտրության, իսկ միջնակարգ կրթություն չունեցողներից կարող էին ընդունվել որպես ազատ ունկնդիրներ միայն ժողովի թույլտվությամբ: Դիմումի հետ պետք էր ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ 1. միջնակարգ դպրոցի լրիվ դասընթացի ավարտման վերաբերյալ վկայականը կամ նրա վավերացված պատճենը. 2. ծննդյան վկայականը. 3. զինվորական ծառայության վկայականը: Սահմանված էր մաս ուսման վարձ՝ ուսանողների համար տարեկան 500, իսկ ազատ ունկնդիրների համար 100 ռուբլու չափով:

Դիմումների թիվը համալսարանում մինչև 1919 թ. հոկտեմբերի 1-ը եղել է 632: Սակայն, համալսարանի ժամանակավոր կանոններին համապատասխան, ընդունվում են ընդամենը 260 ուսանողներ, որոնցից 121-ը՝ հիմնական, իսկ 139-ը՝ որպես ազատ ունկնդիր: Հետաքրքրական է, որ ազատ ունկնդիրների ցուցակում հանդիպում ենք մաս Չարենցի՝ Երլիշե Սողոմոնյան անվանը<sup>4</sup>:

Նախապատրաստական այս աշխատանքներից հետո՝ 1920 թ. հունվարի 31-ին, տեղի է ունենում Հայաստանի համալսարանի\* հանդիսավոր բացումը: Այդ տոնական արարողությանը մասնակցում են հան-

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 330:

\* Փաստաթղթերում կոչվել է «Երևանի համալսարան», իսկ ի պաշտոնե՝ «Հայաստանի համալսարան»: Նրա կնիքի վրա նշված է «Երևանեան Հայաստանի համալսարան»:

րապետության կառավարության ղեկավարները՝ Ալ. Խատիսյանի գլխավորությամբ, քաղաքական կուսակցությունների ղեկավարները, ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից, Պարսկաստանից և այլ երկրներից, «բազմաթիվ օտարազգի հյուրեր ու հայկական հիմնարկությունների պատգամավորներ»։ Հանդիսավոր նիստը բացել է նորաստեղծ համալսարանի ռեկտոր, պրոֆ. Յու. Ղամբարյանը, որի ողջույնի ելույթից հետո Հայաստանի համալսարանի մասին զեկուցումով հանդես է եկել հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը։ Նա նշում է, որ վերջապես իրականացավ հայ ժողովրդի դարավոր երազանքը, որ համալսարանի ստեղծումով նոր փուլ է սկսվում հայ ժողովրդի մտավոր կյանքում։ «Չնայած որ մեր երկիրն ավերված է,- ասում է նա,- մեր ժողովուրդը՝ աղքատության մեջ, մենք հիմնում ենք բարձր կրթարան։ Այն, ինչ որ մենք ունենք այսօր,- շարունակում է նախարարը,- ձեռք է բերված սերունդների արյունով. հարգենք նրանց հիշատակը (ամենքը լուռ ոտքի են կանգնում)»։

Նախարարից հետո համալսարանի հիմնադրման մանրամասներին ու խնդիրներին նվիրված ճառով կրկին հանդես է գալիս պրոֆ. Յու. Ղամբարյանը։

Ռեկտորի ելույթից հետո խորհրդարանի կողմից ողջույնի խոսք է ասում փոխնախագահ Ա. Սահակյանը։ Նա հավատում է, որ նորարաց համալսարանը կդառնա գիտության օջախ միացյալ Հայաստանի համար։ «Այն կլինի լուսավոր փարոս,- ասում է ելույթ ունեցողը,- որն իր շողերը կտարածի Հայաստանի բոլոր կողմերը և բոլոր ցեղերի վրա»։

Կառավարության կողմից ողջույնի խոսքով հանդես է գալիս նախարարապետ Ալ. Խատիսյանը։ Նա, դիմելով երիտասարդությանը, կոչ է անում «բռնության շղթան կործանելուց հետո կործանել մաս տգիտության շղթան»։

Հանդիսավոր նիստում ընթերցվում է մաս Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի ողջույն-օրհնանքը, որում մասնավորապես ասված է. «...Ընդ մերովս հայրենի իշխանութեամբ, և աչք մեր այսօր տեսանեն զբացումն բարձրագոյն Հայկական կրթարանի, յորում, որպէս մեծայոյս ենք, ըստ հնոյն օրինակի, ծաղկելոց են պէսպէս գիտութիւնք ի հայ լեզու ի ձեռն հայագնեայ ուսուցչապետաց և դասախօսաց։

Սիրելի է մեզ տեսանել զայդ բարձր կրթարան առ Մեզ, առընթեր ճենարանի Ս. Էջմիածնի, որ ամս յիսուն լեալ է միակ բարձրագոյն հոգևոր կրթարան ազգիս և Մայր Աթոռոյս, յորս ուսեալ են և բազումք յուսուցչապետաց և դասախօսաց նորոյ Հայաստանի համալսարանիդ:

Ուրախ ենք ի սիրտ և յոգի ի բացումն բարձրագոյն կրթարանիդ. և որպէս յանցելումն Ս. Թարգմանչիք մեր և նոցին աշակերտք ի դարս եղեն սատարք հայ կրթութեան և մերոյս դպրութեան՝ հաւատամք եթէ զհետ գնացեալ նոցին օրինակի և ուսանողք և ուսանողուհիք համալսարանիդ մերոյ, ճոխացեալք և հմտացեալք յուսումն զիտութեան՝ լինելոց են մշակք բարիք և ժրաջանք յանդաստանի կրթութեան ժողովրդեանն Հայոց մերոց Հայրենեաց:

Օրինենք Մերով Հայրապետական Օրինութեամբ զայդ կրթարան, լինել առ միշտ հաստատուն և ջահ լուսատու: Օրինենք զվերաստեսուչ նորին և զամենայն ուսուցչապետս և դասախօսս ի գործ կրթութեան հաւտացեալ ինքեանց ուսանողաց, և մաղթենք ոյժ և կարողութիւն ի ջամբել աշակերտելոց իրեանց ըստ աւանդեալ գիտութեանցն և ոգի հայկական: Օրինենք և զամենայն ուսանողս համալսարանիդ՝ լինել ջանասէր յուսանելն, սիրել զլեզու և զդպրութիւն Հայոց և զմերս պատմութիւն. իսկ յետ աւարտման ընթացից ուսման իրեանց լինել ազնիւ և բարի քաղաքացիս Հանրապետութեան Հայոց և մերոյ Հայրենեացս: Ամէն»<sup>5</sup>:

Ամենայն հայոց հայրապետի օրինանքին հաջորդում են դիվանագիտական ներկայացուցիչներ Օ. Ուորդրոպի, Վ. Հասկելի, Պուաղեբարի, Ասադուլախանի, Այսվերդովի, գնդապետ Ջենկկիչի, գեներալ Նազարբեկյանի ողջույնի ելութները: Իսկ Օ. Տիգրանյանն ընթերցում է ստացված ողջույնի հեռագրերը, որից հետո Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը կարդում է ակադեմիական դասախոսություն՝ «Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի կուլտուրական գործերում» քեմայով:

Այդ դասախոսությունից հետո դարձյալ շնորհավորանքի խոսքեր են ասում բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը, Ա. Շարաֆյանը (Երևանից), Հ. Նահրատյանը (Կարսից), Վ. Աֆրիկյանը (Նոր Բայազետից), Ա. Չոլախյանը (Ալեքսանդրապոլի կանանց միությունից), Պ. Թարվերդյանը (Երևանի ուսա-

---

<sup>5</sup> «Հայաստանի համալսարան» քերթ, 31 հունվարի 1920:

նողության անունից), Ա. Ղազարյանը (Հայ հեղափոխական դաշնակցությունից), Ա. Խոնդկարյանը (Էսէռների կողմից) և ուրիշներ:

Ողջ հանդիսության ընթացքում առևտրական դպրոցի շենքի դիմաց հավաքվել էր մեծ բազմություն, որը ցնծությամբ է դիմավորում միստի մասնակիցներին: Նրանց առջև ելույթ են ունենում Ալ. Խատիսյանը, Ս. Վրացյանը և ուրիշներ: Այս Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը կազմակերպում է մեծ ճաշկերույթ, գրական-երաժշտական երեկույթ և պարահանդես, որոնք տևում են մինչև ուշ գիշեր:

Ի պատիվ համալսարանի հանդիսավոր բացման՝ նույն օրը լույս էր տեսել նաև «Հայաստանի համալսարան» թերթը, որը բաժանվում է միստի մասնակիցներին և տարածվում քաղաքում: Նրանում տպագրված են ռեկտոր, պրոֆ. Յու. Ղամբարյանի, եպիսկոպոսներ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի և Գարեգին Հովսեփյանի, Եր. Տեր-Սիմասյանի, Ստ. Մալխասյանցի, Ռ. Աբրահամյանի, Ալ. Բարխուդարյանի և այլ գիտնականների հողվածները, որոնք արժեքավոր փաստաթղթեր են նորաստեղծ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դպրոցի առաջնեկի վերաբերյալ: «Ազատված և մեծ ազգերի ընտանիքի կողմից իբրև անկախ պետություն ճանաչված Հայաստանում այսօր բացվում է բարձրագույն դպրոց,- գրում է Պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան, մագիստրոս Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը,- նորագույն ծրագրով և պահանջներով ծառայելու հայ սերնդի զարգացմանը և մարդկության լավագույն մասի քաղաքակրթական առաջադիմության ամենաբարձր նպատակներին: Մենք կամենում ենք ապրել մեր հայրենիքում, կամենում ենք շենացնել մեր ավերակները և այսօր վառում ենք մեր լուստ լսատերը, վառում ենք, որպեսզի նրա փայլուն լույսով լուսավորենք մեր երկրի մութ խորշերը, լուսավորենք մեր լեռների գագաթներն ու գետերի հովիտները, հաստատուն հավատով, որ այսուհետև ընդմիշտ մեր սիրուն հայրենիքից հեռանալու և ջրանալու են խավար ուժերը...»:

Իսկ մեր եկեղեցու մյուս մեծ մվիրյալը՝ Գարեգին եպս. Հովսեփյանը (1867-1952, հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), համալսարանի հիմնադրումը համարում է «մեր պատմության մեջ հաճախ կրկնված երևույթներից մեկը»: «Հաստատուն է այն տունը,- գրում է նա,- որ հիմնված է ժայռի վրա, ազգերի կյանքի այդ անասան ժայռը նրա հավատն է դեպի յուր լուսավոր ապագան, դեպի հոգևոր գեղեցկությունն

ու ճշմարտությունը, դեպի յուր սրբազան առաքելությունը ազգերի շարքում: Այդպիսի աննկուն հավատի և ձգտումների աննման շղթա է մեր նախնյաց պատմությունը, անմար յուր ազատագրության տենչերով և քաղաքակրթական ու ստեղծագործական կյանքի անդադրում ձգտումներով: Քաղաքական ամենադժվարին կացության մեջ իսկ, բարբարոսների հարվածների տակ, հայ ժողովրդի մեջ չէ հանգել ազատության, հոգևոր կյանքի, գիտության և արվեստի սրբազան տենչը. ժամանակի գրական հասկացությունների համեմատ դարեիդար ստեղծվել է մի անվավեր գրականություն, որտեղ մեր ժողովրդի լավագույն գավակների անունով հուսադրվել է տառապանքի շղթաների տակ հեծող ժողովուրդը, թե պիտի գա ժամանակը, երբ ամպերի տակ թաքնված ազատության արևը նորից պիտի փայլե մեր հայրենիքի գեղեցիկ երկնականարի վրա»:

Ահա այսպես, տոնական ճոխ հանդիսություններով 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում իր պարապմունքներն է սկսում Հայաստանի համալսարանը: Նրա միակ՝ պատմալեզվաբանական ֆակուլտետում, որտեղ ընդգրկված էին 260 ուսանողներ, փետրվարի 1-ին առաջին դասախոսությունը կարդում է Ստ. Մալխասյանցը: Միաժամանակ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում հասարակագիտական ու բնագիտական ֆակուլտետներ հիմնելու ուղղությամբ:

Այս շրջանում համալսարանում դասավանդում էին Գրիգոր Դավանցյանը (լեզվաբանության ներածություն և համեմատական լեզվաբանություն), Ստեփան Մալխասյանցը (հայագիտության ներածություն և հին հայերեն), Արսեն Տերտերյանը (հայ գրականության պատմություն), Կոնստանտին Սավիչ-Չաբլոցկին (երկրաբանություն), Աշխարհաբեգ Լուռու Մելիք-Քալանթարյանը (ինագիտություն), Գարեգին եպս. Հովսեփյանը և Երվանդ Տեր-Մինասյանը (եկեղեցու պատմություն), Ալեքսեյ Ջիվիլեզովը (ընդհանուր պատմություն), Ալեքսանդր Հովհաննիսյանը (հայոց պատմություն), Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը և Ռուբեն Աբրահամյանը (հունարեն և լատիներեն): Այս ֆակուլտետում են աշխատել նաև նշանավոր հայագետներ Հակոբ Մանանդյանն ու Մանուկ Աբեղյանը, ճարտարապետներ Ալեքսանդր Թամանյանն ու Թորոս Թորամանյանը և ուրիշներ: Շուտով այստեղ աշխատանքի են հրավիրվում Նիկողայոս Ադոնցը, Հրաչյա Աճառյանը, Հովսեփ Օրբելին, Աշոտ Հով-



հաննիսյանը, Լևոն Մսերյանը, Նիկոլ Աղբալյանը, ինչպես նաև օտարազգի մեծանուն հայագետներ Նիկողայոս Մառը, Անտուան Մեյեն, Յոզեֆ Մարկվարտը և շատ ուրիշներ: Այդ ժամանակ հիշյալ ֆակուլտետի ղեկանն էր Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը (1864-1936), որին մարտի 5-ից փոխարինում է Հ. Մանանդյանը: Այստեղ պարապմունքները տևում են մեկ կիսամյակ՝ մինչև 1920 թ. հունիսը: Դրանից մի փոքր առաջ՝ մայիսի 27-ին, ֆակուլտետի խորհուրդը միաձայն որոշում է ընդունում համալսարանը Երևան տեղափոխելու վերաբերյալ:

Հայաստանի համալսարանը Ալեքսանդրապոլից Երևան է տեղափոխվում 1920 թ. հոկտեմբերի սկզբներին, իսկ պարապմունքները, Ս. Վրացյանի վկայությամբ, պետք է սկսվեին նույն ամսվա 16-ից: Սակայն պարապմունքները չեն սկսվում ստեղծված քաղաքական իրադրության կտրուկ վատթարացման պատճառով, չնայած արդեն հոկտեմբերի վերջերին կազմակերպվել էին Պատմալեզվաբանական (90 ուսանող), Իրավաբանական (146 ուսանող), Ֆիզիկամաթեմատիկական (484 ուսանող) ֆակուլտետները: Իսկ հաջորդ տարվանից պետք է բացվեր նաև բժշկական ֆակուլտետ:

Համալսարանի գործունեությունը վերսկսելու կապակցությամբ հոկտեմբերի 29-ին տեղի է ունենում Պատմալեզվաբանական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ժողովը, որը որոշում է «մեկ շաբաթով հետաձգել ֆակուլտետի բացումը՝ նկատի ունենալով ներկա լուրջ դրությունը ռազմաճակատում»: Սակայն մեկ շաբաթ անց ուսանողությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը պահանջում են դասերն անհապաղ սկսել: Այդ առթիվ ռեկտորի նոր պաշտոնակատար Դավիթ Չավրյանը (1889-1957) անընդհատ խուսափողական պատասխաններ է տալիս նրանց պահանջին, որը և ստիպում է հիշյալ ֆակուլտետի խորհրդին նոյեմբերի 30-ին «բողոքելու պարոն Չավրյանի այդօրինակ ընթացքի դեմ»:

Դրանից մեկ օր առաջ՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր, որից անմիջապես հետո՝ դեկտեմբերի 5-ին, ֆակուլտետի խորհուրդը հանձնարարում է ղեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյանին «ներկայանալ հանրային կրթության նոր կոմիսարին (խոսքը Ա. Գ. Հովհաննիսյանի մասին է - Վ. Մ.) և զեկու-

ցել դասախոսությունները սկսելու՝ ֆակուլտետի որոշման մասին, և խնդրել նրա աջակցությունը»<sup>6</sup>:

Այսպիսին է Հայաստանի համալսարանի հիմնադրման և նրա կարճատև գործունեության պատմությունը, որը Խորհրդային Հայաստանի նորակազմ կառավարության կողմից ընդունվում ու պաշտոնապես ճանաչվում է: Եվ երբ 1920 թ. դեկտեմբերի 17-ին ՀԽՍՀ լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանը հրաման է արձակում, այն լինում է ոչ թե նոր համալսարան ստեղծելու, այլ եղածը վերակազմելու վերաբերյալ: Այդ հրամանում հստակ կերպով ասված է. «Երևանի համալսարանը վերակազմվում է և վերակոչվում Երևանի ժողովրդական համալսարան: Նախկին համալսարանի ֆակուլտետները փակվում են, և հիմնվում է երկու բաժանմունք՝ բնագիտական և հասարակագիտական»: Նույն նպատակով ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որի աշխատանքների ավարտվելուց հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 28-ին, ՀԽՍՀ լուսժողկոմատն արձակում է համալսարանի կազմավորման մասին նոր հրաման, և հաստատվում է նրա ժամանակավոր կանոնադրությունը<sup>7</sup>: Իսկ 1921 թ. հունվարի 2-ին համալսարանի խորհուրդը փակ (զաղտնի) քվեարկությամբ ժողովրդական համալսարանի ռեկտոր է ընտրում մեծանուն պատմաբան Հակոբ Համալզասայի Մանանդյանին (1873-1952):

1921 թ. հունվարի 23-ին Երևանի Ստ. Շահումյանի անվան բանվորական ակումբի դահլիճում (ներկայիս երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքի տեղում) տեղի է ունենում Երևանի ժողովրդական համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը, որի վերջում «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով հրապարակային դասախոսություն է կարդում նշանավոր իրավաբան Գրիգոր Չուբարը: Իսկ հաջորդ օրը՝ հունվարի 24-ին, ուսուցչական սեմինարիայի շենքում (ներկայիս Աբովյան փողոցի թիվ 52-ում գտնվող հին սև շենքում) սկսվում են պարապմունքները:

Այսպիսով՝ Երևանի ժողովրդական համալսարանը, ինչպես տեսնում ենք, Հայաստանի համալսարանի օրգանական շարունակությունն է, և նրա ստեղծման տարեթիվը պաշտոնապես ընդունված է 1919 թ.

---

<sup>6</sup> Երևանի համալսարան. 1918-1920 թթ. (վավերագրերի ժողովածու), էջ 279:

<sup>7</sup> ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 17-18:

մայիսի 16-ը<sup>8</sup>: 1923 թ. հոկտեմբերի 20-ից ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահության որոշմամբ Երևանի ժողովրդական համալսարանը անվանվում է ՀԽՍՀ պետական համալսարան, իսկ 1933 թ. սեպտեմբերի 1-ից՝ Երևանի պետական համալսարան:

Նրա սկզբնական շրջանի 2 ֆակուլտետի, 260 ուսանողի և 27 դասախոսի փոխարեն այսօր գործում են 20 ֆակուլտետներ և Իջևանի մասնաճյուղը՝ իր 4 ֆակուլտետներով, որոնք ունեն 10 հազար ուսանող և 200-ից ավելի ասպիրանտ, այդ թվում մասնաճյուղում արտասահմանցիներ ու սփյուռքահայեր: Ուսանողներից 36-ը անվանական կրթաթոշակառուներ են, և շուրջ 700-ը՝ գերազանցիկներ: Նրանց ուսուցմամբ ներկայումս զբաղված են 1400 դասախոսներ, որոնցից 39-ը ՀԳԱԱ ակադեմիկոսներ են, 170-ը՝ գիտությունների դոկտորներ ու պրոֆեսորներ, և 700-ից ավելին՝ թեկնածուներ ու դոցենտներ, որոնք աշխատում են 105 ամբիոններում: Բացի այդ՝ նրանցից 35-ը տարբեր երկրների միջազգային ակադեմիաների ու գիտական ընկերությունների անդամներ են, իսկ 55-ը ունեն ՀՀ գիտության, բարձրագույն դպրոցի և զանազան ոլորտների վաստակավոր գործչի պատվավոր կոչումներ, ոմանք էլ պետական ու այլ մրցանակների դափնեկիրներ են<sup>9</sup>:

Երևանի պետական համալսարանը կադրեր է պատրաստում 28 մասնագիտությունների և 77 մասնագիտացումների գծով: Իր գոյության 80 տարիների ընթացքում երկրին տվել է շուրջ 70 հազար որակյալ մասնագետներ: Նրա կամարների ներքո կրթություն են ստացել մասնաճյուղի 75 երկրների 6.000-ից ավելի քաղաքացիներ, որոնցից շուրջ 2.500-ը սփյուռքահայեր են: Այստեղ իրենց թեկնածուական ու դոկտորական թեզերն են պաշտպանել 550 օտարերկրացիներ, որոնցից շուրջ 300-ը սփյուռքահայեր են: Այսօր աշխարհում ԵՊՀ պատվավոր դոկ-

---

<sup>8</sup> Երևանի պետական համալսարանի հիմնադրման տարեթիվը ընդհուպ մինչև 1980-ական թվականների վերջը խորհրդահայ պատմագրության մեջ ընդունված էր 1920 թ. դեկտեմբերի 17-ը: Սակայն 1989 թ. մայիսի 15-ին ԵՊՀ մեծ դահլիճում տեղի ունեցած գիտական նստաշրջանը, որը նվիրված էր այդ կարևոր տարեթվի ճշգրտմանը, վերջնականապես հաստատեց, որ Երևանի համալսարանը հիմնադրվել է ոչ թե 1920 թ. դեկտեմբերի 17-ին, այլ դրանից շուրջ մեկուկես տարի առաջ՝ 1919 թ. մայիսի 16-ին՝ այդպիսով ճշգրտելով խորհրդային շրջանում արձագանքված, մեր պատմության համար կարևոր նշանակություն ունեցող մի տարեթիվ և:

<sup>9</sup> Այս թվերը վերցված են «Երևանի պետական համալսարան. 1997-98 ուստարվա հաշվետվություն»-ից (Երևան, 1998, էջ 292):

տորի գիտական աստիճանը կրում են 25 նշանավոր օտարագիներ ու սիյուռքահայեր, այդ թվում նաև՝ երջանկահիշատակ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը, իսկ Վազգեն Ա երջանկահիշատակ հայրապետը 1990 թ. արժանացել է ԵՊՀ բարձրագույն պարգևին՝ «Գիտական ուսումնասիրությունների և բարձրագույն կրթության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» մեդալին: 1994 թ. ԵՊՀ պատվավոր դոկտորի գիտական աստիճան է շնորհվել նաև հայ եկեղեցու մեկ այլ անվանի գործչի ու գիտնականի՝ պրոֆ. Շահե արքեպս. Աճեմյանին, ով Աստվածաբանության ֆակուլտետի ստեղծումից (1995 թ.) ի վեր նրա անվտոմիս դեկանն է ու սիրված դասախոսը:

Երբ 1943 թ. նոյեմբերի 25-ին հիմնադրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիան, նրա անդրանիկ կազմի 23 անդամներից 12-ը համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ էին: Ներկայումս ՀԳԱԱ նախագահության կազմում ընտրված 25 ակադեմիկոսներից 10-ը համալսարանականներ են: Իսկ ակադեմիայի գոյության 55 տարիների ընթացքում նրա կազմում ընդգրկված 208 անդամներից 100-ը եղել են համալսարանի դասախոսներ ու շրջանավարտներ: Նրա սաներից մի քանիսը ընդգրկվել են նաև ԽՍՀՄ ԳԱ կազմում և իրենց գիտական ծանրակշիռ վաստակով ձեռք են բերել համաշխարհային հռչակ: Այստեղ են իրենց գիտական մկրտությունն ստացել հայ մեծանուն գրողներ Եղիշե Չարենցը, Գուրգեն Մահարին, Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սևակը, Վահագն Գավթյանը և շատ ուրիշներ:

Համալսարանի՝ տարբեր տարիների ֆակուլտետների հիման վրա են ստեղծվել մեր հանրապետության մի շարք բուհեր, որոնք են պոլիտեխնիկական (ներկայումս՝ ճարտարագիտական և ճարտարապետաշինարարական), բժշկական, գյուղատնտեսական, Խ. Աբովյանի անվան մանկավարժական, Վ. Յա. Բրյուսովի անվան օտար լեզուների, Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտները, որոնց պրոֆեսորադասախոսական կազմի շատ անդամներ նույնպես Երևանի համալսարանի շրջանավարտներից են:

Երևանի պետական համալսարանն այսօր աշխարհի ճանաչված համալսարաններից մեկն է: Դեռևս 1970 թ. աշնանը, երբ նշվում էր նրա կեսդարյա հոբելյանը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության

հրամանագրով պարզևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, իսկ դրանից մի կարճ ժամանակ անց դասվել է Խորհրդային Միության 70 առաջատար բուհերի շարքը: Ներկայումս համագործակցում է աշխարհի 25 երկրների ու գիտական կենտրոնների հետ և լիիրավ անդամ է համալսարանների միջազգային ընկերակցության, Եվրոպական համալսարանների ընկերակցության, Եվրասիական համալսարանների ընկերակցության, Սևծովյան երկրների համալսարանների ընկերակցության և համալսարանների մախագահների միջազգային ընկերակցության:

Հիմնադրումից ի վեր մեր մայր կրթօջախը գիտահետազոտական աշխատանքներ կատարելու խոշոր կենտրոն է դարձել: Այստեղ ներկայումս մշակվում են 217 թեմաներ, այդ թվում 121-ը՝ պետպատվերով: Համալսարանի գիտնականներից շատերը վերջին հնգամյակում արտասահմանյան գիտական կենտրոններից ստացել են տասնյակ դրամաշնորհներ: Գիտական հետազոտությունները հիմնականում ընդգրկում են երկու բնագավառ՝ բնական և հումանիտար գիտություններ, որոնց գրեթե բոլոր ճյուղերով հետազոտություններ են կատարում 1.000-ից ավելի գիտնականներ: Այստեղ հատկապես լուրջ աշխատանքներ են կատարվում «Լագերային տեխնիկա» գիտաարտադրական միավորումում, որտեղ ուսումնասիրվում են ժամանակակից լագերային ֆիզիկայի ու տեխնիկայի, պինդ մարմնի ֆիզիկայի և բյուրեղների աճի խնդիրները: Նոր արդյունքներ են ստացվել նաև մաթեմատիկայի, աստղաֆիզիկայի ու տեսական ֆիզիկայի, օրգանական ու ֆիզիկական քիմիայի, բժշկության և դեղաբանության, կենսատեխնոլոգիայի ու կենսաբանական ակտիվ նյութերի սինթեզի, գյուղատնտեսության և հանքային ռեսուրսների արդի խնդիրների ուսումնասիրության բնագավառում:

Հումանիտար գիտությունների և հայագիտության բնագավառներում ևս հաջողություններն ակնառու են: Հրատարակվել են մի շարք մենագրություններ ու դասագրքեր: Հայագիտական կենտրոնում վերջին շրջանում ուսումնասիրվում են միջնադարյան մատենագրությունը, հայբասկյան փոխառնչությունները: Այստեղ ստեղծվել է նաև բասկագիտական «Արաքս» միջազգային կիսամյա հանդեսը, ավարտին են մոտենում Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բազմահատոր բառարանի աշխատանքները, որի 4 սովարածավալ հատորներն արդեն

լույս են տեսել: Հայ ժողովրդի պատմության ու բանասիրության, արևելագիտության ու ռոմանագերմանական լեզուների, փիլիսոփայության ու իրավագիտության, մանկավարժության ու հոգեբանության, տնտեսագիտության ու սոցիոլոգիայի, քաղաքագիտության ու հասարակագիտության հարցերը ևս համալսարանականների ամենօրյա ուշադրության կենտրոնում են: Իսկ արվեստաբանության խնդիրները ուսումնասիրվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո ստեղծված հայ արվեստի պատմության ամբիոնի կողմից:

Մեր մայր կրթօջախի պատկերն ավելի ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է խոսել նաև նրա անբաժան մասը հանդիսացող մի քանի կարևոր օղակների մասին: Դրանցից առաջինն է գիտական գրադարանը, որի դերն անվտիխարինելի է բարձրորակ մասնագետներ պատրաստելու գործում: Այն հիմնադրվել է համալսարանի հետ մեկտեղ դասախոսների անձնական գրքերի մվիրատվություններով և հետագա տասնամյակներում հարստացել ու ընդլայնվել է՝ դառնալով Հայաստանի խոշորագույն գրադարաններից մեկը: Ներկայումս նրա գրքային ֆոնդերում պահվում է 2 մլն կտոր գրականություն՝ աշխարհի տարբեր լեզուներով: Իր մեծությամբ ու հարստությամբ ԵՊՀ գիտգրադարանը երրորդն է հանրապետությունում՝ ՀՀ ազգային և ՀԳԱԱ հիմնական գրադարաններից հետո: 1994 թ. շահագործման հանձնվեց նրա բազմահարկ գեղեցիկ մասնաշենքը, որի ամբողջական կահավորումը՝ նորագույն սարքավորումներով, կատարել է սփյուռքահայ բարերար Տիգրան Իգմիրյանը՝ ի հիշատակ իր ծնողներ Սարգիս և Մարի Իգմիրյանների, որոնց անունով էլ կոչվում է գրադարանը ներկայումս:

Մյուս կարևոր օղակը հրատարակչությունն է, որը հիմնադրվել է 1927 թ. մարտի 31-ին: Մինչև այդ, իհարկե, համալսարանում հրատարակվել են գրքեր, և դրանց ընդհանուր թիվը սկզբնական շրջանում (1920-27 թթ.) անցել է 30 անունից: Առաջին երկու գրքերը, որ 1920 թ. տպագրվել են այստեղ, եղել են Ս. Տիգրանյանի «Հոգեբանություն» համառոտ ձեռնարկն ու նույն հեղինակի քարգմանած՝ Ջեմսի «Հոգեբանություն» գրքի մի մասը (7 մասնույ): Հետագա 72 տարիներին ԵՊՀ հրատարակչությունը լույս է ընծայել 3050 անուն գիրք՝ մոտ 20.500 մասնույ ծավալով: ԵՊՀ հրատարակչությունն այսօր հանրապետությունում երկրորդն է՝ ՀԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունից հետո, որ լույս է

ընծայում գիտական գրականություն: Նրա տպագրած գրքերը մեծ հեղինակություն ունեն աշխարհի գիտական շրջաններում: Բացի այդ՝ այստեղ լույս են տեսնում նաև «ԵՊՀ գիտական տեղեկագիր» (1925 թվականից), «Բանբեր Երևանի համալսարանի» (1967 թվականից), «Հանդես Երևանի համալսարանի» (1967-1922 թթ.՝ «Երևանի համալսարան») քառամսյա հանդեսները, ինչպես և «Երևանի համալսարան» թերթը:

ԵՊՀ պատմության թանգարանը ևս մեծ դեր ունի մեր «Ալմա մատերի» տարեգրության ստեղծման գործում: Այն հիմնադրվել է 1960 թ. և առ այսօր մեր բուհերի մասին վիթխարի քանակությամբ նյութեր է ամբարել, որոնց մի մասը ցուցադրվում է մշտապես գործող ցուցահանդեսում, իսկ մի զգալի մասն էլ պահվում է արխիվային ֆոնդերում:

Գիտամանկավարժական կադրերի պատրաստման ասպարեզում մեծ է ասպիրանտուրայի դերը, որը հիմնադրվել է 1928 թ. սեպտեմբերի 1-ին: Իր գոյության 71 տարիների ընթացքում 70-ից ավելի մասնագիտությունների գծով հազարավոր գիտնականներ է պատրաստել: Ամեն տարի այստեղ ընդունվում է շուրջ 100 հոգի, և նույնքան էլ՝ ավարտում, որոնցից շատերը պաշտպանում են թեկնածուական թեզեր: Այժմ ԵՊՀ ասպիրանտուրայում սովորում են 250-ից ավելի երիտասարդներ ու աղջիկներ: Նրանց թվում քիչ չեն օտարազգիներն ու սվյուռքահայերը, որոնք արտերկրում միշտ էլ աչքի են ընկել իրենց հարուստ գիտելիքներով: Գիտական կադրերի պատրաստման գործը խթանում է նաև Ուսանողական գիտական ընկերությունը, որը համալսարանում հիմնադրվել է 1947 թ., իսկ մինչ այդ՝ սկսած 1922 թվականից, եղել են ուսանողական գիտական խմբակներ՝ տարբեր գիտությունների գծով, որոնք ղեկավարել են ակադեմիկոս գիտնականները:

Վերջին հինգ տարիներին Երևանի համալսարանում մի շարք նոր մասնագիտությունների ու մասնագիտացումների գծով բացվել են նոր ֆակուլտետներ ու բաժիններ, որոնց թվում՝ Աստվածաբանության և Միջազգային հարաբերությունների ֆակուլտետները: Հիշարժան է 1995 թ. սեպտեմբերի 16-ը, երբ համալսարանի հին շենքի կամարների ներքո հանրապետության ղեկավարների, երջանկահիշատակ Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Ա-ի, բազմաթիվ անվանի գիտնականների, արտասահմանյան հյուրերի ու համալսարանականների մասնակցությամբ

հանդիսավոր պայմաններում բացվեց Աստվածաբանության ֆակուլտետը՝ իր 25 նորընծա սաներով: Այդ օրը ցնծության և ուրախության տոն էր համալսարանում: Արդ անցել է չորս տարի, և Աստվածաբանության ֆակուլտետն այս տարի տվեց իր առաջին շրջանավարտները՝ թվով 25 հոգի, որոնցից 7-ը համալսարանն ավարտել են գերազանցությամբ:

Ընթացիկ տարվա հուլիսի 17-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրանոցի սրահում տեղի ունեցավ հիշյալ ֆակուլտետի առաջին շրջանավարտների ավարտական հանդիսությունը, որին մասնակցում էին ԵՊՀ ռեկտորատի անդամները, անվանի գիտնականներ, բարձրաստիճան հոգևորականներ, բազմաթիվ համալսարանականներ և հյուրեր Սփյուռքից: Այդ օրը հանդիսավոր պայմաններում աստվածաբան շրջանավարտները ստացան իրենց վկայագրերը:

Ահա այսպես, ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական և հասարակական կյանքում ձեռք բերած նվաճումներով Երևանի պետական համալսարանը ոտք է դնում նոր՝ 21-րդ դարի շեմին: Ներկայումս համալսարանում կատարվում են մեծ վերափոխություններ. նոր ուստարվանից լիարժեք կերպով շարք է մտնելու եռաստիճան ուսուցման համակարգը, առաջին անգամ ընդունելություն է կատարվելու մագիստրատուրայում: Ընդլայնվում են նաև նրա գիտամշակութային կապերը արտասահմանյան առաջատար համալսարանների հետ, և այդ գործում մեծ են ԵՊՀ քսանմեկերորդ ռեկտոր (1993 թ. հոկտեմբերի 25-ից), ակադեմիկոս գիտնական, ՀԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի ջանքերը: Նա ամեն ինչ անում է մեր մայր կրթօջախի միջազգային հեղինակության բարձրացման համար: Արդեն երրորդ տարին է, ինչ համացանցի հիման վրա ձևավորվում է տեղեկատվական լայն ցանց, որի նպատակն է ստեղծել գիտելիքների ամբողջական բանկ և այն մատչելի դարձնել բոլոր համալսարանականներին: Դա թույլ կտա միջազգային ասպարեզում բարձրացնել Երևանի պետական համալսարանի հեղինակությունը, և նրա շրջանավարտները համաշխարհային կրթագիտության բնագավառում կունենան մեծ նրբունակություն:

Վերջում ուզում ենք ավելացնել, որ վաղուց իրականություն են դարձել Հովհ. Թումանյանի մարգարեական խոսքերը. մեր համալսարանն արդեն ութսուն տարի է, ինչ մեզ հետ է, ինչքան որ մենք ենք եղել, նա էլ՝ մեզ հետ, կիսել է հարազատ ժողովրդի փորձություններն ու դառնու-



թյունները ստալինյան բռնապետության դաժան տարիներին՝ տալով մեծ թվով զոհեր, ապա հարյուրավոր զոհեր է տվել Մեծ հայրենականի ռազմաճակատներում: 1960-ականներին և 1988 թ. նույնպես համալսարանը ժողովրդի հետ էր, իր նպաստն էր բերում ազգային զարթոնքի և արցախյան ազատագրական պայքարի գործին, որում ևս նահատակվեցին իր նվիրյալ սաներից շատերը: Երևանի համալսարանի դերը մեծ է եղել նաև ժողովրդի հասարակական-քաղաքական գիտակցության ձևավորման, գիտակրթական գործունեության և հայրենական գիտության վարկի բարձրացման ասպարեզներում: Այսօր նրա դերն առավել մեծանում է հայոց անկախ պետականության ամրապնդման գործում:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԳՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ\***

Շուրջ վեցդարյա ընդմիջումից հետո՝ 1918 թ. մայիսի 28-ին, Արևելյան Հայաստանի մի փոքր մասում վերականգնվում է հայկական պետականությունը, որով նոր էջ է բացվում մեր բազմադարյան պատմության մեջ:

Այդ համազգային խոշոր իրադարձությունից անմիջապես հետո անկախություն ձեռք բերած Հայաստանի նորակազմ կառավարությունն իր առաջին քայլերն է կատարում հանրապետությունում միջնակարգ դպրոցներ բացելու, համալսարան հիմնադրելու և լուսավորություն տարածելու ուղղությամբ: 1918 թ. հոկտեմբերի կեսերին արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանի նախաձեռնությամբ Թիֆլիսում տեղի է ունենում խորհրդակցություն՝ Հայաստանում համալսարանական տիպի դպրոց ստեղծելու մտահոգությամբ, որին մասնակցում են տեղի մտավորականության մի շարք ակնառու ներկայացուցիչներ և բազմաթիվ ուսուցիչներ: Այդ խորհրդակցության ընթացքում այն միտքն է արտահայտվում, որ Հայաստանում բարձրագույն մասնագիտական դպրոցների բացումը և համալսարանի հիմնումը կարող են մեծ դժվարու-

---

\* «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), 2014:

թյուններ ստեղծել տնտեսապես քայքայված ու աղքատ երկրի համար: Ուստի առաջարկվում է նախ ստեղծել համալսարանական տիպի միջ-նակարգ մասնագիտական ուսումնարաններ, որոնց հիման վրա հետագայում հնարավոր կլինի բացել համալսարան:

Այս հարցերը շուրջ մեկ տարի բուռն քննարկվում են թե՛ Երևանում և թե՛ Թիֆլիսում, որտեղ այն ժամանակ կենտրոնացած էր հայ մտավորականության մեծ մասը: Ի վերջո, 1919 թ. մայիսի 16-ին ՀՀ կառավարությունը օրենք է ընդունում Երևանում համալսարան բացելու մասին, որը, ինչպես հայտնի է, իր գործունեությունը սկսել է 1920 թ. փետրվարի 1-ից Ալեքսանդրապոլում:

Նորաստեղծ համալսարանի վարչության և պրոֆեսորադասախոսական կազմի առաջնային մտահոգություններից մեկը դառնում է ուսանողությանը մայրենի լեզվով դասագրքերով ու ուսումնական ձեռնարկներով ապահովելու և գրադարան հիմնադրելու գործը: Այդ ուղղությամբ կատարվում են առաջին լուրջ քայլերը: Այդ մասին են վկայում արխիվներում պահպանվող մի շարք վավերագրեր<sup>10</sup>, որոնցից ցարդ հայտնի առաջին փաստաթուղթը թվագրված է 1919 թ. հունիսի 10-ով: Դա համալսարանի կազմակերպիչների ուղեցույց-հրահանգն է, որի 2-րդ կետի «դ» ենթակետով նրանց վրա դրվում էր նաև «անհրաժեշտ գրքերի, ուսումնական ձեռնարկների, գործիքների, փորձասարքերի և այլ պարագաների ձեռքբերումը համալսարանական գրադարանի, լաբորատորիաների, կլինիկաների ու կաբինետների և այլնի կազմակերպման համար» (էջ 68): Մյուս վավերագիրը թվագրված է 1919 թ. հունիսի 12-ով: Դա Հայաստանի համալսարանի կազմակերպիչ Դավիթ Չավոյանի՝ դասախոսությունների համար անհրաժեշտ գրականության ցուցակ ներկայացնելու վերաբերյալ շրջաբերական նամակն է՝ ուղղված Երևանի համալսարանի ստեղծման հանձնաժողովի անդամներին (էջ 123):

Կա նաև նախապատրաստական աշխատանքների կազմակերպմանը վերաբերող մեկ այլ փաստաթուղթ, որը Ս. Տիգրանյանի՝ 1919 թ. հունիսի 15-ով թվագրված նամակն է՝ հասցեագրված համալսարանի

---

<sup>10</sup> Այդ փաստաթղթերի զգալի մասը հրատարակվել է առանձին գրքով (տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ. (վավերագրերի ժողովածու), 334 էջ): Այս գրքից հղումներն այստեղևս կարվեն շարադրանքում՝ փակագծերում նշելով միայն էջերը:

կազմակերպիչ Գ. Ջավրյանին: Գրանում մասնավորապես ասված է. «Նախահաշիվը\* կազմելիս անհրաժեշտ է հատուկ գումար նախատեսել ուսանողների համար ուսումնական ձեռնարկներ (ղասընթացներ, դասագրքեր, դասախոսություններ) գրելու և դրանց տպագրության ծախսերը հոգալու նպատակով: Գա անհրաժեշտ է մեզանում գիտական գրականության, հատկապես հայոց լեզվով գրքերի սակավության պայմաններում ամեն տեսակի խրախուսանքների համար: Առանց ուսումնական ձեռնարկների ոչինչ դուրս չի գա» (էջ 71-72):

Գոյություն ունի նաև մեկ այլ փաստաթուղթ (1919 թ. հոկտեմբերի 10), որը ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարի օգնականի պաշտոնակատար Պողոս Սոտնիկյանի գրությունն է՝ ուղղված արտաքին գործոց նախարարությանը, որով նա խնդրում է, որ «Վրաստանում Հայաստանի դիվանագիտական միսիան գործուն աջակցություն ցույց տա Երևանի համալսարանի ուսուցչապետերին՝ նոցա մասնավոր գրադարանները Հայաստան տեղափոխելու գործում» (էջ 113):

Մեկ այլ վավերագիր, որը գրվել է 1920 թ. հունվարի 3-ին, հասցեագրված է Թիֆլիսում գործող «Հայ կանանց միության» վարչությանը. Գ. Ջավրյանը խնդրում է այդ բարեգործական կազմակերպությանը, որ վերջինս համալսարանի գրադարանի գրքերը կազմելու աշխատանքներում ընդգրկի իր խնամքի տակ գտնվող դեռահաս որբերին (էջ 136-137), և սա այն դեպքում, երբ համալսարանը չէր սկսել իր գործունեությունը, ու գրադարանը դեռևս գոյություն չուներ:

Փետրվարի 11-ին հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը գրությամբ դիմում է ՀՀ արտաքին գործոց նախարարությանը և խնդրում, որ Վրաստանից և Ադրբեջանից գրքեր ու գրեմական պիտույքներ տեղափոխելիս մաքսատներում զանազան արգելքներ չստեղծվեն (էջ 170):

Այդ գրության վրա արտաքին գործոց նախարարը մակագրել է. «Պատճենները ուղարկել Բաքվի և Թիֆլիսի մեր դիվանագիտական ներկայացուցիչներին, խնդրելով հարաբերության մեջ մտնել Ադրբեջանի և

---

\* Այստեղ խոսքը վերաբերում է Երևանի համալսարանի իրավատնտեսագիտական ֆակուլտետի բացման համար կազմվելիք նախահաշվին:

վրաց կառավարությունների հետ, այս հարցի մասին համաձայնություն կապել նրանց հետ՝ այդպիսի արգելքները վերացնելու համար» (էջ 171):

Հաջորդ օրը՝ փետրվարի 12-ին, Պատմալեզվաբանական ֆակուլտետի ղեկան Մեսրոպ Մազիստրոսը նամակով դիմում է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Սուրենյանցին և խնդրում նրա թույլտվությունը՝ համալսարանի պետքերի համար Մայր Աթոռի մատենադարանից գրքեր ձեռք բերելու վերաբերյալ (էջ 171-172):

Համալսարանի կազմակերպիչներն ու ներկայացուցիչները ահա այսպես օր օրի աշխատում էին ուսանողությանն ու դասախոսական կազմին ապահովել գրեական պիտույքներով ու գրքերով: Այդ է վկայում նաև 1920 թ. մարտի 8-ին ֆակուլտետի խորհրդին ղեկան Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի տված հաշվետվությունը, որում նա մանրամասն ներկայացնում է Թիֆլիսում իր երեքշաբաթյա գործուղման ընթացքում կատարած աշխատանքները: Նա այդ օրերին կարողացել է գնել 22 փոք թուղթ և զանազան պիտույքներ: Դրանց մեջ, իհարկե, ծանրակշիռ բաժինն ընկնում է գրքերին: «Դիմեցի Ղուկասյան թանգարանի մնայուն հանձնաժողովին,- գրում է նա,- խնդրելով հայոց պատմագիրների հրատարակած գրքերից 200-ական օրինակ նվիրաբերել համալսարանին և ստացա թե՛ այդ նվերը և թե՛ թանգարանի կաի կարասիքը (6 աթոռ, մի սեղան, էլեկտրական մի լամպ, մի բազկաթոռ, իսկ գրքերի թիվն է՝ 2780)» (էջ 177):

Գրքերի նշված քանակությունը այն օրերին հիրավի պատկառելի թիվ էր, որի համար համալսարանում անհրաժեշտ էր ունենալ առանձին սենյակներ և գրադարանավար: Ուստի Պատմալեզվաբանական ֆակուլտետի ղեկան Մեսրոպ եպիսկոպոսը 1920 թ. ապրիլի 1-ի գրությամբ դիմում է համալսարանի տեսուչ, պրոֆ. Յու. Ղամբարյանին՝ Հակոբ Մանանդյանին դոցենտի կոչում շնորհելու և գրադարանի ժամանակավոր կառավարիչ նշանակելու առաջարկությամբ:

Ինչպես տեսնում ենք, Երևանի համալսարանի գրադարանը սկզբնավորվել է 1920 թ. մարտի սկզբներին: Սակայն այն չի գործել մի շարք դժվարությունների պատճառով: Այդ մասին հավաստի տեղեկություններ կան դարձյալ Պատմալեզվաբանական ֆակուլտետի գործունեության ընթացքի մասին կազմված «Տեղեկագրում», որն ընդգրկում է 1920 թ. փետրվարի 1-ից մինչև նույն տարվա հունիսի 12-ն ընկած ժա-

մանակահատվածը: Այստեղ գրադարանի մասին ասված է. «Ֆակուլտետի գործունեությունը կատարվել է շատ աննպաստ պայմաններում: Համալսարանը չուներ դասախոսությունների համար հարմար շենք, Առևտրական դպրոցում այս նպատակին հատկացված մասը ֆակուլտետի տնօրինության տակ չէր գտնվում, ուստի հաճախ աշակերտների նվազախումբը կամ կողմնակի հանդեսների համար հավաքված ժողովուրդը աղմուկներով խլացնում էին դասախոսությունը: Լուսավորություն հաճախ չէր լինում, շատ անգամ դահլիճը չէր տաքացվում մագոթ չլինելու պատճառով: Ֆակուլտետը զուրկ էր գրադարանից: Համալսարանի համար գնված գրքերից շատ փոքր մասը փոխադրվեց Ալեքսանդրապոլ մարտի վերջերին, մի քանի գիրք էլ՝ մայիսի 29-ին: Այս գրքերից օգտվել կարելի չեղավ, որովհետև չկային ապահով սենյակ և պահարաններ՝ գրքերը տեղափոխելու և դարսելու համար: Ուսանողները զուրկ էին անհրաժեշտ ձեռնարկներից և, բացի սրանից, առավոտները պաշտոններով զբաղված լինելով և երեկոներին դասախոսություններին հաճախելով, ժամանակ էլ չէին ունենում առանձին պարապմունքի: Այս և ուրիշ աննպաստ պայմանները, հարկավ, ազդեցություն պիտի ունենային պարապմունքների կանոնավորության և արդյունավետության վրա, և նրանց վերացնելը անհրաժեշտ պահանջ է: Չնայած այս աննպաստ պայմաններին, դասախոսությունները ամխափան շարունակվել են մինչև սեմեստրի վերջը» (էջ 201):

Այսպիսի պայմաններում է գտնվել Հայաստանի համալսարանը գործունեության առաջին կիսամյակում Ալեքսանդրապոլում: Ուստի ՀՀ Նախարարների խորհուրդը 1920 թ. հուլիսի 21-ին որոշել է համալսարանը Ալեքսանդրապոլից փոխադրել Երևան:

Մայրաքաղաք փոխադրվելուց հետո ևս շարունակվել են գրադարանի համալրման աշխատանքները: 1920 թ. հուլիսի 3-ին համալսարանի տեսուչ, պրոֆ. Յու. Ղամբարյանը մի գրությամբ դիմում է ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարին՝ համալսարանի նոր ստեղծվելիք հասարակագիտական ֆակուլտետի համար արտասահմանում համապատասխան գրականություն գնելու և Երևան տեղափոխելու հարցով (էջ 221): Իսկ նույն թվականի հուլիսի 27-ին ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարությունը համալսարանի դրույքների մասին օրինագծով դիմում է ՀՀ Նախարարների խորհրդին: Օրինագծով գրա-

դարանին հատկացվում է առանձին բաժին, որի համար նախատեսված էին գրադարանապետի 1, օգնականի 1 և ծառաների 7 հաստիքներ: Վերջին 7 հաստիքներից 1-ը հատկացված էր գրադարանին, 2-ը՝ իրավագիտական ու տնտեսագիտական բաժիններին, և 4-ը՝ ընդհանուր համալսարանին (էջ 234):

Հայաստանի համալսարանի գրադարանին վերաբերող մի վավերագիր էլ ստեղծվել է 1920 թ. սեպտեմբերի 20-ին: Դավիթ Ջավրյանը խնդրում է ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Ղազարյանին, որ վերջինս համալսարանի համար գնված կահույքը, գործիքները և գրադարանը Թիֆլիսից Երևան տեղափոխելու համար հանձնարարություններ տա համապատասխան անձանց (էջ 252-253): Այդ գրության վրա եղած նշումները հավաստում են, որ գործին ընթացք է տրվել:

Հայաստանի համալսարանի գրադարանի համար գրքերի ձեռքբերումն ու նվիրատվությունները շարունակվել են նաև 1920 թ. ամռան ու աշնան ամիսներին: Պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկան Հ. Մանանդյանի կազմած «Պատմալեզվաբանական ֆակուլտետի ամառվա գործունեության մասին» հաշվետվության մեջ, որը թվագրված է 1920 թ. հոկտեմբերի 17-ով, այդ առիթով մասնավորապես ասված է. «Ամռան ընթացքում ստացված են, իբրև նվեր, համալսարանի գրադարանի համար 39 կտոր գիրք պարոն Մարտին Հակոբյանից, նաև պր. Հայկ Գր. Ռաֆաելյանից 86 կտոր գիրք, այն է՝ «Энциклопедический словарь» Ф. А. Брокгауза и И. А. Эфрона, тт. 1-86: Այդ նվիրատվությունների համար հայտնված է շնորհակալություն և գրքերն այժմ տեղափոխված են Երևան:

Բացի այդ՝ հատուկ ցուցակով ստացված են Ալեքսանդրապոլում նախկին 153 Բակինսկի պոլկի գրադարանի երկրորդ, չորրորդ, վեցերորդ և իններորդ բաժինները և այդ գրքերը ևս բերված են այժմ Երևան: Ի նկատի առնելով, որ ֆակուլտետի ժողովում ցանկություն էր հայտնված հավաքել առաջին հերթին Հայաստանում մասնավոր մարդկանց մոտ գտնվող և համալսարանի գրադարանի համար պիտանի գրքերը, Ալեքսանդրապոլում հիսուն հազար ռուբլու գնել են, համաձայնությամբ Ալեքսանդրապոլում գտնվող ֆակուլտետի անդամներ Ս. Տիգրանյանի, Երվանդ Տեր-Մինասյանի և Ռ. Աբրահամյանի, ֆակուլտետիս դիվանապետ Արմ. Բարայանից մոտ 150 գիրք, որոնց գնահատությունը

կատարել ենք և գրքերը ևս ցուցակագրել միասին: Այդ գրքերը, որ խիստ արժեքավոր և կարևոր են ֆակուլտետիս գրադարանի համար, նույնպես բերված են այժմ Երևան» (էջ 262):

Գրադարանին վերաբերող մյուս փաստաթուղթը Պատմալեզվաբանական ֆակուլտետի խորհրդի՝ 1920 թ. հոկտեմբերի 25-ին տեղի ունեցած հինգերորդ նիստի արձանագրությունն է, որում նշված է. «Համալսարանի գրադարանի համար պատմալեզվաբանական բովանդակությամբ գրքեր գնելու և կազմելու համար անհրաժեշտ է հատկացնել հինգ միլիոն ռուբլի» (էջ 273): Այնտեղ ասված է նաև, որ «Երևանի համալսարանի գրադարանը 1920 թ. գարնան ընթացքում, որպես նվիրատվություններ Վրաստանի համալսարանից ստացել է 4 գիրք, Կ. Մելիք-Օհանջանյանից՝ 2 գիրք, հոգուտ գիտական հրատարակությունների ֆոնդի, որպես վաճառելի – Սիր. Տիգրանյանից՝ 22 օր[ինակ] Ստրալսովի հոգեբանության հիմնական գաղափարների մասին, Հառիճո ընկերությունից՝ 150 օր[ինակ] Հառիճո վանքի պատմությունից, Ստ. Մալխասյանցից և Գարեգին Եպիսկոպոսից՝ 125 օր[ինակ]: «Պատմագիրք հայոց» հրատարակչությունից՝ 50 Ազաթանգեղոս, 50 Խորենացի, 25 Ղազար Փարպեցի, Արսեն վարդապետ Ղլտճյանից՝ յուր հրատարակությունները, Ղուկասյան ընկերության վարչությունից՝ «Ղուկասյան Մատենադարանի» բոլոր (16 ամուն) հրատարակությունները, ընդամենը ... օրինակ» (էջ 202-203): Բնագրում ընդհանուր քանակն արտահայտող թիվը նշված չէ, տեղը բաց է թողնված, ուստի մեր հաշվարկներով ստացված գրքերի ընդհանուր թիվը կազմում է մոտ 450 օրինակ:

Ինչպես հավաստում են վկայակոչված փաստաթղթերը, համալսարանի գրադարանի հիմնադրման համար լուրջ աշխատանքներ են կատարվել ռեկտորի, Պատմալեզվաբանական ֆակուլտետի խորհրդի և առանձին անդամների կողմից, որոնց ներդրած ջանքերը տվել են իրենց ցանկալի արդյունքը, և 1920 թ. ընթացքում փաստորեն ձևավորվել է գրադարանը: Եթե ի մի բերենք այդ փաստաթղթերում հիշատակված գրքերի ընդհանուր քանակը, ապա կարող ենք ասել, որ մինչև 1920 թ. հոկտեմբերի վերջերը գրադարանի համար արդեն հավաքվել էր ավելի քան 4000 կտոր գրականություն:

Այս մանրամասները վկայում են, թե ինչպիսի ջանքեր են գործադրվել համալսարանի հիմնադիրների ու ՀՀ հանրային կրթության և ար-

վեստի նախարարության ու կառավարության կողմից՝ Հայաստանի համալսարանում գրադարան ստեղծելու համար:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանը հիմնադրվել է 1920 թ. գարնանը, իսկ ամռան և աշնան ամիսներին շարունակվել է նրա հարստացման գործընթացը: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց և համալսարանի վերակազմվելուց հետո ՀՍԽՀ լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի՝ 1920 թ. դեկտեմբերի 28-ի հրամանով համալսարանի շարժական և անշարժ գույքի բոլոր գործերը, հաշիվները և այլ գործառնություններ փոխանցվել են ժողովրդական համալսարանին<sup>11</sup>: Ըստ այդ հրամանի՝ Երևանի ժողովրդական համալսարանին է փոխանցվել գրադարանի համար հայթայթված գրականությունը: Դրան ավելացվել է նաև Երևանի ուսուցչական սեմինարիայի (որի շենքում էր տեղավորվել նորաստեղծ համալսարանը) գրադարանի ամբողջ ֆոնդը՝ շուրջ 10 հազար միավոր գիրք: Շուտով Երևանի արական գիմնազիայի, նախկին քեմական դպրոցի, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի և այլ հիմնարկների ու ՀՍԽՀ արտաքին գործերի նախարարության գրքային ունեցվածքները նույնպես տրվում են համալսարանի գրադարանին:

Երևանի ժողովրդական համալսարանի գրադարանի համալրման ու հարստացման ուղղությամբ լուրջ աշխատանք է կատարել ՀՍԽՀ նորանշանակ լուսժողկոմ Պողոս Մակինցյանը, որի ջանքերով Մոսկվայից Երևան են տեղափոխվում Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի գրադարանի ունեցվածքը՝ 163 արկղ արժեքավոր գրականություն, և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի գրադարանը: Դրանց հետ մեկտեղ Մոսկվայից Երևան են տեղափոխվում Վ. Տերյանի, Ալ. Ծատուրյանի, Լ. Աթաբեկյանի, Եվանգուլյան եղբայրների, Բերբերյանների և այլոց անձնական գրադարանները և նվիրաբերվում համալսարանին: Նույն Պ. Մակինցյանը և ՀՍԽՀ առաջին լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանը ևս իրենց անձնական գրադարանների շատ գրքեր նվիրաբերում են նորաստեղծ գրադարանին:

Երևանի համալսարանի գրադարանի հարստացմանը մեծ աջակցություն են ցույց տվել նրա հիմնադիր դասախոսներից շատերը, որոն-

---

<sup>11</sup> Տե՛ս «Կոմունիստ» օրաթերթ, 4 հունվարի 1921:



ցից են անվանի գիտնականներ Մ. Աբեղյանը, Գր. Ղափանցյանը, Ա. Տերտերյանը, Գր. Չուբարյանը, հետագայում՝ մաս Հր. Աճառյանը և շատ ուրիշներ: Համալսարանի գրադարանը արժեքավոր նվերներ է ստացել մաս Սփյուռքում ապրող մտավորականներից, այդ թվում՝ արևմտահայ ականավոր երգիծարան Երվանդ Օտյանից:

Այդ նվիրատվությունների շնորհիվ 1921 թ. վերջերին Երևանի ժողովրդական համալսարանի գրադարանի գրքային ունեցվածքն արդեն հասնում էր շուրջ 25 հազար միավորի: Գրադարանի հանդիսավոր բա-ցումը տեղի է ունեցել 1922 թ. նոյեմբերի 8-ին:

Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանի կազմավորման ու հետագա գործունեության աշխուժացման համար անուրանալի են նրա առաջին կազմակերպիչ Հ. Մանանդյանի (1920 թ. ապրիլից) և առաջին տնօրեններ Գաբրիել Ռոտինյանի (1921-1929 թթ.) ու Վահե Միքայելյանի (1933-1936 թթ.) ջանքերը: Նրանց կատարած աշխատանքի շնորհիվ այն դժվարին տարիներին Հայաստանի բուհական անդրանիկ գրադարանը կայունանում և հանրապետությունում ձեռք է բերում առաջատար գրադարանի համբավ:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Վահե Միքայելյանի անվանը չենք հանդիպում ԵՊՀ գիտական գրադարանի պատմությանը նվիրված գրքում, որի հեղինակներին չի հաջողվել պարզել, թե 1930-ական թվականներին ով է եղել գրադարանի տնօրենը: Ուստի գրել են. «1929-1936 թթ. գրադարանի տնօրենի մասին համալսարանի արխիվներում հիշատակություն չի պահպանվել»<sup>12</sup>, որի պատճառով նրա անունը տեղ չի գտել տնօրենների անունների շարքում:

Մենք վերջերս Ռ. Չարյանի «Հուշապատում» եռահատորյակում և «Մայրամուտից առաջ. Ինքնապատում հուշեր» երկհատորյակում գտանք, որ ԵՊՀ գիտական գրադարանի տնօրենն այդ տարիներին եղել է Վ. Միքայելյանը: Ռ. Չարյանը գրում է, որ Չարենցը 1935 թ. զարմանք, երբ «Մակբեթ»-ից հետո պիտի խմբագրեր «Լիր արքա» ողբերգությունը, և նրան անհրաժեշտ էր Հովհ. Խան-Մասեհյանի թարգմանությամբ 1898 թ. թիֆլիսյան հրատարակությունը, «ինձ խնդրեց, որ ես գտնեմ այդ

---

<sup>12</sup> Վ. Ս. Ապրանյան, Հ. Գ. Հայրապետյան, Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանը, Եր., 2011, էջ 56:

ժողովածուն»<sup>13</sup>: «Ես գիտեի, որ համալսարանի գրադարանում կա այդ գիրքը,- գրում է Ռ. Չարյանը: -Եվ Չարենցը համալսարանի ռեկտոր Տիգրան Մուշեղյանին հղեց հետևյալ երկտողը. «Խնդրում եմ կարգադրես գրադարանին թույլ տան, որ Խան-Մասեհյանի «Լիր արքա»-ն մնա ինձ մոտ մեկ-երկու ամիս, որովհետև այն ես վերախմբագրում եմ թատրոնի համար, ուրիշ ոչ մի տեղ չկա, ուրեմն, ուզած-չուզած պետք է օգտվեմ այդ միակ օրինակից: Ողջույն սրտառուչ – Ե. Չարենց: 1935.03.28, Երևան»<sup>14</sup>: Այդ գրությունը նույն ինքը՝ Պատմագրական ֆակուլտետի ուսանող Ռ. Չարյանը, բերում և ներկայացնում է ռեկտորին, որը խնդրագիրը դրական մակագրությամբ ուղարկում է գրադարանի վարիչ Վ. Միքայելյանին: Ռ. Չարյանը գիրքը տանում է Չարենցին: Ավելի քան երկու ամիս Մասեհյանի թարգմանությունների այդ ժողովածուն մնում է Չարենցի մոտ: Աշխատանքները ավարտելուց հետո Չարենցը գիրքը վերադարձնում է գրադարանին: Երբ Ռ. Չարյանը այն բերում և հանձնում է Վ. Միքայելյանին, վերջինս իր դարակից հանում և նրան է վերադարձնում Չարենցի գրությունը՝ ասելով. «Չկորցնես, Ռուբեն, այս նամակն ապագայում պահվելու է թանգարանում»: Ռ. Չարյանը Չարենցի այդ երկտողը պահում է իր անձնական արխիվում: Շուրջ հինգ տասնամյակ անց այն օրերին համալսարանի ուսանող, հետագայում անվանի թատերագետ-շեքսպիրագետ, ակադեմիկոս Ռ. Չարյանը այս եղելությունը նկարագրել է իր հուշերում<sup>15</sup>, որտեղից էլ իմացվում է, որ ԵՊՀ գիտական գրադարանի տնօրենը 1933-1936 թթ. եղել է Վահե Միքայելյանը (1900-1967): Նա ժամանակի նշանավոր գրական-մշակութային գործիչներից էր, ԽՍՀՄ գրողների միության անդամ, ճանաչված թարգմանիչ ու գրականագետ, ռուսաց լեզվի և ֆրանսերենի հմուտ գիտակ ու դասախոս: Ծնվել է Վանում, նախնական կրթություն ստացել Երանյան դպրոցում: 1915 թ. գաղթել է Երևան: 1927 թ. ավարտել է Թիֆլիսի՝ օտար լեզուների ինստիտուտը: Վերադառնալով Երևան՝ աշխատել է համալսարանում՝ որպես գրադարանի վարիչ, ապա՝ որպես ֆրանսերենի դասախոս: Հետագայում որպես ռճաբան աշխատել է «Սովետական գրա-

<sup>13</sup> Ռ. Չարյան, Հուշապատում, հ. 1, Եր., 1975, էջ 92-93:

<sup>14</sup> Ռ. Չարյան, Մայրամուտից առաջ. Ինքնապատում հուշեր, հ. 1, Եր., 1988, էջ 426:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 427:

կանություն և արվեստ» ամսագրի ու «Գրական թերթի» խմբագրություններում: Վախճանվել է 1967 թ. փետրվարի 10-ին Երևանում: Նա իր գործունեությանը զուգընթաց զբաղվել է նաև գրական-թարգմանչական աշխատանքով, ռուսերենից ու ֆրանսերենից հայերեն է թարգմանել բազմաթիվ հեղինակների ստեղծագործություններ, որոնք, մինչև այժմ էլ վերահրատարակվելով, մնում են անգերազանցելի: Վ. Միքայելյանի՝ ԵՊՀ գիտական գրադարանի տնօրեն լինելու փաստը արձանագրված է նաև նրա հակիրճ կենսագրությունում<sup>16</sup>:

Այսպիսով, եթե ընդունենք, որ 1930 թ. համալսարանը տրոհվել էր ինքնուրույն առանձին ինստիտուտների, և գրադարանը նույնպես բաժանվել էր նրանց միջև, ապա մինչև համալսարանի վերաբացվելը նրա գրադարանի ու տնօրենի մասին խոսելն ավելորդ է: Չնայած որ 1930-1933 թթ. համալսարանի փոխարեն նույն շենքում գործել է Մանկավարժական ինստիտուտը, որի գրադարանը կազմակերպվել էր մայր բուհի գրքային ֆոնդի հիման վրա: Իսկ 1933 թ. հուլիսին, երբ նույն ինստիտուտի հիմքի վրա վերաբացվել է Երևանի պետական համալսարանը, նրա գրադարանը ևս նույնությամբ անցել է համալսարանին, որի տնօրենն արդեն դարձել է Վ. Միքայելյանը: Դրանից առաջ Մանկավարժական ինստիտուտում արդյոք նա նույն պաշտոնն է զբաղեցրել, թե՞ ոչ, ոչինչ ստել չենք կարող:

Անցած 90 տարիների ընթացքում Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանը, որի գրքային ֆոնդը ներկայումս հասնում է շուրջ երկու միլիոն միավորի, և ընթերցողների թիվն անցնում է 15 հազարից, դարձել է Հայաստանի Հանրապետության երրորդ խոշոր գրադարանը՝ ՀՀ ազգային և ՀՀ ԳԱԱ հիմնական գրադարաններից հետո:

---

<sup>16</sup> Տե՛ս «Գրական տեղեկատու», կազմեց՝ Հայկ Խաչատրյան, Եր., 1986, էջ 389-390:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ\*

Հայտնի է, որ Երևանի համալսարանը հիմնադրվել է Հայաստանի համար դժվարին ժամանակներում և գործել է չափազանց աննպաստ պայմաններում: Չկային գիտական պիտույքներ, լաբորատոր սարքավորումներ, մայրենի լեզվով դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, համալսարանը չուներ դասախոսների և ուսանողների կարիքները քիչ քե շատ բավարարող մի գրադարան, նույնիսկ հանրապետությունում այդ ժամանակ գոյություն չունեին գրադարաններ ու գրախանութներ, չափազանց դժվար էր գրքերի ստացումը արտասահմանից: Ուստի այդպիսի պայմաններում դասախոսների առջև խնդիր էր դրված, անկախ եղած դժվարություններից, բավարարելու ուսանողների կարիքները: Այդ է վկայում դեռևս 1919 թ. հունիսի 10-ով թվագրված մի վավերագիր: Դրանում ասված է, որ պետք է շտապ ձեռք բերել «անհրաժեշտ գրքեր, ուսումնական ձեռնարկներ, գործիքներ, փորձասարքեր ու այլ պարագաներ համալսարանական գրադարանի, լաբորատորիաների, կլինիկաների, կաբինետների և այլնի կազմակերպման համար»<sup>17</sup>: Երևանի համալսարանի կազմակերպիչները միաժամանակ մտահոգված էին, որ, դրանք ձեռք բերելուց բացի, պետք է մայրենի լեզվով ձեռնարկներ ստեղծվեն հենց իրենց՝ դասախոսների կողմից: Այդ է ապացուցում Սիրական Տիգրանյանի՝ 1919 թ. հունիսի 15-ով թվագրված նամակը՝ ուղղված Դավիթ Չավրյանին: Այդ նամակում ասված է. «Իրավատնտեսագիտական ֆակուլտետի նախահաշիվը կազմելու ժամանակ անհրաժեշտ է նրանում հատուկ գումարներ նախատեսել ուսանողների համար ձեռնարկների (դասընթացներ, դասագրքեր, դասախոսություններ) կազմելը և դրանց տպագրությունը խրախուսելու և վարձատրելու համար: Դա ամեն կերպ անհրաժեշտ է՝ մեզ մոտ հատկապես մայրենի լեզվով գիտական գրականության աղքատության պայմաններում: Առանց ուսումնական ձեռնարկների ոչինչ չի ստացվի»<sup>18</sup>:

\* ԲԵՀ, 2014:

<sup>17</sup> Երևանի համալսարան. 1918-1920 թթ. (վավերագրերի ժողովածու), էջ 68:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 71-72:

Այսպիսի սուղ պայմաններում 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում տեղի է ունենում Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը, իսկ փետրվարի 1-ից սկսվում են պարապմունքները: Դասախոսություններն ընթանում էին կանոնավոր, ըստ վաղօրոք կազմված ուսումնական պլանի ու դասացուցակի, և միաժամանակ մշակվում էին առարկայական ծրագրերը: Դասախոսներն այդ ծրագրերով գրում էին իրենց դասախոսությունների տեքստերը կամ կատարում թարգմանություններ ռուսերեն և օտարալեզու դասագրքերից:

Այդ ժամանակ համալսարանում «Հոգեբանություն» առարկան դասավանդում էր գիտական շրջաններում վաղուց ճանաչված Կովկասյան հնագիտական ինստիտուտի ադյունկտ, Պետրոգրադի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի կանդիդատ Սիրական Տիգրանյանը: Նա համալսարանի առաջին դասախոսներից էր, որ ձեռնամուխ եղավ «Հոգեբանություն» առարկայի գծով ուսումնական ձեռնարկներ ստեղծելու գործին: Այդ առարկայից նա է գրել և թարգմանել Հայաստանի համալսարանի հրատարակությամբ 1920 թ. զարմանը Ալեքսանդրապոլում լույս ընծայված առաջին երկու գրքերը: Դրանցից մեկը եղել է իր հեղինակած դասախոսությունների գրքույկը, իսկ մյուսը՝ իր թարգմանած ուսումնական ձեռնարկը:

Արդ ներկայացնենք այդ գրքերը, որոնցից մեկը, որը վերջերս ենք հայտնաբերել, բարեբախտաբար մեզ է հասել անխաթար վիճակում: Դա ամերիկյան նշանավոր գիտնական, Հարվարդի համալսարանի հոգեբանության պրոֆեսոր Ուիլյամ Ջեմսի «Հոգեբանություն» ուսումնական ձեռնարկի առաջին պրակն է:

Ուիլյամ Ջեմսը (1842-1910) ամերիկացի անվանի հոգեբան և իդեալիստ փիլիսոփա էր, պրագմատիզմի խոշորագույն ներկայացուցիչ: Հարվարդի համալսարանում նա աշխատել է 1889 թվականից մինչև 1907 թվականը: Նրա հիմնական աշխատություններն են «Հոգեբանության սկզբունքները» (1890 թ.), «Կրոնական փորձի բազմազանությունը» (1902 թ.) և «Պրագմատիզմ» (1907 թ.) ուսումնասիրությունները<sup>19</sup>:

---

<sup>19</sup> Տե՛ս «Փիլիսոփայական բառարան», Մ. Մ. Ռոզենտալի խմբագրությամբ, թարգմ. ռուս. երրորդ հրատարակությունից, Եր., 1975, էջ 359:

Հայաստանի համալսարանի հրատարակությունը հիշյալ «Հոգեբանության սկզբունքները» աշխատության մի մասն է միայն, որը Ս. Տիգրանյանի թարգմանությամբ հայերեն տպագրվել է Ալեքսանդրապոլի «Շիրակ» տպարանում 1920 թ. մայիսին: Գրքի հիմնական մասը բաղկացած է 106 էջից, իսկ առաջաբանը, որը գրել է թարգմանիչը, 3 էջ է: Բովանդակության հետ մեկտեղ գիրքն ունի 112 էջ ծավալ, որը տպագրական 7 մամուլ է:

Գրքի առաջաբանում Ս. Տիգրանյանը նշում է. «Ֆակուլտետն ընդառաջ գնաց դասախոսների պատրաստած կամ թարգմանած համալսարանական դասագրքերի շուտափույթ հրատարակման գործին:

Անտեղի համարելով, որ ուսանողների ձեռքին միայն իմ դասախոսածս նյութը լինի, որը հրատարակվում է այս գրքի հետ միաժամանակ, այլ անհրաժեշտ համարելով, որ հարուստ հոգեբանական գրականությանը գոնե նվազագույն չափով ծանոթանան մեր ուսանողները՝ ես առաջին հերթին կանգ առա ամերիկացի հայտնի գիտնական Ջեմսի ներկա երկի վրա, որի հեղինակը, խորամիտ ու հմուտ հոգեբան լինելով հանդերձ, միևնույն ժամանակ աչքի է ընկնում որպես առաջնակարգ շարադրող և հրաշալի գրող:

Ներկա հրատարակությունը նպատակ չունի Ջեմսի «Հոգեբանության» լրիվ հայերեն թարգմանությունը լույս ընծայել, այլ սահմանափակվում է այս առարկան ավանդելու և ուսանելու ընթացիկ կարիքներին որոշ բավարարություն տալու ծրագրով: Այս առաջին պրակի բովանդակությունը (Ջեմսի գրքի թարգմանվելիք գլուխների ընտրությունն ու հերթը) հարմարեցված է հատկապես ներկա կիսամյակում ավանդվող նյութին: Ջեմսի ամբողջ երկի քսան և վեց գլուխներից միայն հինգի թարգմանությունն է տալիս լույս տեսնող ներկա առաջին պրակը»<sup>20</sup>:

Այդ հինգ գլուխներն են՝ 1. «Գիտության հորձանք», 2. «Չգայության մասին ընդհանրապես», 3. «Շարժման զգայությունները», 4. «Ժամանակի զգայությունը» և 5. «Հիշողություն»: Սրանք էլ իրենց հերթին բաժանված են առանձին ենթագլուխների ու վերնագրերի, որոնց տակ

---

<sup>20</sup> **Ու. Ջեմս**, Հոգեբանություն, պրակ Ա, Ալեքսանդրապոլ, «Շիրակ» տպարան, 1920, էջ 3-4: Գիրքը տպագրված է հին ուղղագրությամբ, այստեղ վկայակոչված հատվածները տալիս ենք արդի ուղղագրությամբ:

ներկայացված նյութերը բավարար պատկերացում են տալիս «Հոգեբանություն» առարկայի խնդիրների ու նպատակների մասին: Իսկ այդ ձեռնարկի թարգմանության ու հրատարակության հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություններ է տալիս թարգմանիչը: «Այս թարգմանությունը կատարվել է դժբախտաբար ոչ թե անգլերեն բնագրից,- գրում է նա,- այլ ռուսերեն թարգմանությունից: Ռուսերեն երկու տարբեր թարգմանություններ են աչքի առաջ ունեցել, մեկը՝ Լապշինի, մյուսը՝ Օբոլենսկու: Այս երկու **թարգմանությունները** (պետք է լինի՝ **թարգմանիչները - Վ. Մ.**) տեղ-տեղ բավական տարբեր կերպով են հասկանում բնագրի իմաստը, ըստ երևույթին՝ Օբոլենսկու թարգմանությունը ավելի բառացի է, սակայն այդ նրան ավելի հարազատ ու վստահելի չէ դարձնում - պատահում են նախադասություններ ու կտորներ, ուր ակներև են այդ թարգմանության սխալները: Այս կողմից շատ ավելի վստահելի է Լապշինի ավելի ազատ թարգմանությունը:

Ներկա հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը առհասարակ աննպաստ պայմաններում և շտապովի կատարած մի գործ է, այսպիսի գործերին հատուկ թերություններով, որոնց համար խնդրվում է ուսանողների ներողամտությունը»<sup>21</sup>:

Մրան պետք է ավելացնել, որ գրքի խմբագրման աշխատանքներին մասնակցել է դոցենտ Ստեփան Մալխասյանցը, որին թարգմանիչը հայտնում է իր ջերմ շնորհակալությունը և նշում, որ «նրա շնորհիվ այս թարգմանությունը ազատվեց լեզվային մի շարք թերություններից»<sup>22</sup>:

Սակայն, ինչպես թարգմանիչն է նշում առաջաբանում, գրքում իրոք նկատելի են բազմաթիվ սխալներ ու սրբագրական սպորտումներ, որոնց զգալի մասն ուղղված է վերջում կցված վրիպակների ցանկում: Դրանք մեծ մասամբ ժամանակի տպագրատեխնիկական սուղ պայմանների, մասնագետների պակասի ու շտապողականության հետևանք են: Այդուհանդերձ, այն դժվարին օրերին տպագրվել է խիստ անհրաժեշտ մի գիրք, որը, փաստորեն, Երևանի համալսարանի առաջին հրատարակությունն է և, ցարդ չկորցնելով իր գիտական արժեքն ու նշանակություն-

---

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 5:

նը, այսօր էլ կարող է ուսանողների և հոգեբանությամբ զբաղվող մասնագետների համար ուսումնաօժանդակ ձեռնարկի դեր կատարել:

Այս թարգմանության հետ մեկտեղ տպագրվել է նաև Ս. Տիգրանյանի հեղինակած «Հոգեբանութիւն» դասախոսությունների գրքույկը, որը գտնելու համար մեր որոնումները արդյունք չտվեցին: Սակայն դրա տպագրության հավաստիությունը հաստատում է ոչ միայն հեղինակն իր գրած առաջաբանում, այլև ֆակուլտետի գործունեության մասին գրված «Տեղեկագիրը»<sup>23</sup>, որում այդ առիթով ասված է. «Վերջապես ֆակուլտետը որոշել է՝ ուսանողներին դյուրություն ընծայելու համար տպագրել դասախոսությունները և այլ անհրաժեշտ ձեռնարկներ, սակայն անմպաստ պայմանների պատճառով ֆակուլտետը հնարավորություն ունեցավ տպագրել միայն Ս. Տիգրանյանի թարգմանած Ջենսի հոգեբանություննից 7 մասով և նրա դասախոսություններից՝ 3 մասով: Ուրիշ դասախոսների աշխատանքները և դասախոսությունները անհնար եղավ տպագրել: Դրա համար անհրաժեշտ է, որ քաղաքում գտնվի բավականաչափ պարագաներով տպարան կամ գոնե վիճագրատուն և ձեռնարկներ տպագրելու համար հատուկ գումար»<sup>24</sup>:

Ասվածից պարզ երևում է, որ իրոք տպագրվել է նաև Ս. Տիգրանյանի գրքույկը՝ նրա կարդացած դասախոսությունների պարունակությամբ: Այդ փաստը, ինչպես տեսանք վերը, հաստատում է նաև ինքը՝ Ս. Տիգրանյանը, Ու. Ջենսի «Հոգեբանության» թարգմանության համար իր գրած նախաբանում<sup>25</sup>:

Ուիլյամ Ջենսի աշխատությունները Ս. Տիգրանյանին ծանոթ են եղել ավելի վաղ, երբ վերջինս աշխատելիս է եղել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում՝ որպես հոգեբանության դասախոս: Նա դեռևս 1904 թ. ռուսերենից հայերեն էր թարգմանել նույն հեղինակի «Հոգեբանության սկզբունքները» աշխատության գլուխներից մեկը՝ «Յոյզ» վերտառությամբ, որը նույն տարում Մուրբ Էջմիածնի հրատարակությամբ տպագրվել է Վաղարշապատում: Իսկ դրանից մեկ տարի առաջ դարձյալ Վաղարշապատում Ս. Տիգրանյանի խմբագրությամբ լույս էր տեսել

<sup>23</sup> Տե՛ս Երևանի համալսարան. 1918-1920 թթ. (վավերագրերի ժողովածու), էջ 199-203:

<sup>24</sup> Ալնհայտ է, որ խոսքը թարգմանիչ Ս. Տիգրանյանի դասախոսությունների մասին է:

<sup>24</sup> Երևանի համալսարան. 1918-1920 թթ. (վավերագրերի ժողովածու), էջ 202:

<sup>25</sup> Տե՛ս Ու. Ջենս, նշվ. աշխ., էջ 3:



Ն. Ստախովի «Հոգեբանության հիմնական գաղափարների մասին» գիրքը՝ ռուսերենից կատարված թարգմանությամբ:

Նա խմբագրել է նաև հոգեբանությանը և եկեղեցական իրավունքին վերաբերող մի շարք գրքեր Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Երևանի համալսարանում դասախոսելու տարիներին: Սակայն, ցավոք, նրա կյանքն ու գործունեությունը դեռևս պատշաճ մակարդակով չեն ուսումնասիրվել: Ի դեպ, «Մեր անվանի դասախոսները» ժողովածուի առաջին մասում կցկտոր է ներկայացված համալսարանի այդ երախտավորի կենսագրությունը<sup>26</sup>: Այն չի ընդգրկվել նաև «Հայկական սովետական հանրագիտարանում», «Հայկական համառոտ հանրագիտարանում» և այլուր: Ցավալիորեն նրա մասին հիշատակություն չկա նաև Երևանի պետական համալսարանի 90-ամյակի առիթով վերջերս տպագրված «Կենսագրական հանրագիտարանի» էջերում<sup>27</sup>: Այնինչ Ս. Տիգրանյանն ունի հարուստ ու ուսանելի կենսագրություն և գիտական ծանրակշիռ ժառանգություն, որի զգալի մասը ցարդ մնացել է անտիպ: Այստեղ ուզում ենք անդրադառնալ նրա կենսագրության առանձին էջերին:

Ս. Տիգրանյանը Ալեքսանդրապոլի Տիգրանյանների ականավոր գերդաստանից էր, եղբայրն էր նշանավոր կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանի: Ծնվել է 1875 թ. ցարական բանակի փոխգնդապետ Թադևոս Տիգրանյանի ընտանիքում: Ավարտել է Թիֆլիսի արական առաջին գիմնազիան, իսկ բարձրագույն կրթությունը ստացել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, որն ավարտել է 1899 թվականին: 1900 թ. վերադարձել է հայրենիք և պաշտոնավարել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որտեղ դասավանդել է հոգեբանություն ու տրամաբանություն, հայ հին իրավունքի պատմություն և եկեղեցական իրավունք դասընթացները՝ միաժամանակ զբաղվելով գիտահետազոտական աշխատանքով, մասնավորապես՝ հայոց հին իրավունքի և հայկական կանոնագրքերի ուսումնասիրությամբ:

---

<sup>26</sup> Տե՛ս Ա. Ոսկանյան, Մեր անվանի դասախոսները, մաս 1, «Տիգրանյան Սիրական Թադևոսի», Եր., 1970, էջ 246-247:

<sup>27</sup> Ս. Տիգրանյանի առավել ամբողջական կենսագրությունը գրելու փորձ է արել Ստ. Դարիջյանը (տե՛ս Նշանավոր ճեմարանականներ, պրակ Բ, Էջմիածին, 2009, էջ 475-479):

Ժամանակին «Արարատ» հանդեսում Ս. Տիգրանյանի աշխատասիրությամբ լույս են տեսել կանոնների մի շարք բնագրեր<sup>28</sup>: Մխիթար վարդապետի հետ հեղինակել է «Կանոնք Դունայ Սուրբ ժողովին» (Վաղարշապատ, 1905) գիրքը: Հետագա տարիներին ևս շարունակել է զբաղվել հայոց հին իրավունքի, մասնավորապես՝ հայկական կանոնագրքերի հետազոտությամբ: 1918 թ. Պետրոգրադում ռուսերեն հրատարակել է «Հին հայկական կանոնների գիրքը» արժեքավոր ուսումնասիրության առաջին հատորը<sup>29</sup>, ռուսերենից կատարել է մի շարք թարգմանություններ:

Ս. Տիգրանյանը 1906 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի կոնդակով նշանակվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ: Նույն տարում ընտրվել է Ռուսաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի՝ Պետական երկրորդ դումայի պատգամավոր, գրել է «Դաշնակցական պատգամավորները Երկրորդ Պետական Դումայում» գրքույկը (Թիֆլիս, «Յառաջի» գրադարան, № 57, 1907, 100 էջ), ինչպես նաև «Հայոց եկեղեցական տարրական դպրոցների ուսումնական ծրագիրը» և 1907 թ. առանձին գրքով լույս է ընծայել Թիֆլիսում:

Ս. Տիգրանյանի ավանդը մեծ է եղել նաև Հայաստանի անկախության վերականգնման ու պետականության հաստատման գործում: Նա եղել է ՀՅԴ կուսակցության անդամ, 1918-1919 թթ. զբաղեցրել է Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարի, հանրային կրթության և արվեստի նախարարի, Խորհրդարանի անդամի և փոխնախագահի բարձր պաշտոնները:

1919 թ. ամռանը Ս. Տիգրանյանը տեղափոխվել է Ալեքսանդրապոլ և գործուն մասնակցություն ունեցել Հայաստանի համալսարանի հիմնական աշխատանքներին: Վերջինիս բացումից հետո ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Ադրալյանի հրամանով 1920 թ. փետրվարի 6-ին Ս. Թ. Տիգրանյանը նշանակվել է Երևանի համալսարա-

---

<sup>28</sup> Տե՛ս «Կանոնական իրավունքը և նրա աղբյուրները», «Կանոնագրքերը և մեր կանոնական իրավունքը», «Արարատ», 1902, էջ 18-24 և 120-130, «Ներսես Գ կաթողիկոս, Կանոնք Դունայ սուրբ ժողովոյն (Մայր Աթոռի ձեռագիր կանոնագրքերը, որոնք ունեն Դվինի կանոնադրությունը)», բնագիրը և ուսումնասիրություն, հրատարակությունը՝ Ս. Տիգրանյանի, «Արարատ», 1905, էջ 177-202:

<sup>29</sup> Տե՛ս **С. Тигранян**, Древнеармянская книга канонов. Очерки описания и исследования памятника, 1 описательная часть, Петроград, 1918:

նի պատմալեզվաբանական ֆակուլտետի փիլիսոփայության դոցենտի պաշտոնակատար: Խորհրդային կարգերի հաստատումից և Հայաստանի համալսարանի վերակազմությունից հետո ՀԽՍՀ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի՝ 1920 թ. դեկտեմբերի 28-ի հրամանով հաստատվել է որպես հայ իրավունքի պատմության դասախոս, իսկ 1921 թ. հունվարի 2-ին ընտրվել է Հասարակագիտական ֆակուլտետի դեկան: 1921 թ. փետրվարյան խռովության ճնշումից հետո Ս. Տիգրանյանը՝ որպես այդ խռովության մասնակից, բանտարկությունից խուսափելով, անցել է Իրան, սակայն շուտով վերադարձել է Երևան և առանց որևէ արգելքի շարունակել դասավանդել Երևանի ժողովրդական համալսարանում՝ վերսկսելով նաև ընդհատված գիտահետազոտական աշխատանքը, և ձեռագրի իրավունքով լույս է ընծայել «Հայոց իրավունքի պատմության ներածություն» (1923 թ.) ուսումնական ձեռնարկը: Գրել է նաև Գոշի «Դատաստանագրքի» և «Հայոց կանոնագրքի» համեմատական վերլուծությանը նվիրված մի աշխատություն, որը տպագրվել է Թիֆլիսում<sup>30</sup>:

Ս. Տիգրանյանը 1923 թ. տեղափոխվել է Ալեքսանդրապոլ և զբաղվել մանկավարժությամբ, տեղի դպրոցներում ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդել է մանկավարժություն և հոգեբանություն, իսկ 1935 թվին կրկին վերադարձել է Երևան ու շարունակել իր գիտահետազոտական աշխատանքը՝ ավարտելով հայոց հին կանոնագրքերին նվիրված մենագրության երկրորդ հատորը, որը ցարդ մնում է անտիպ: Նա զբաղվել է նաև արևելյան երաժշտության տեսական հարցերով և թողել է իր ավագ եղբոր՝ կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանի ստեղծագործություններին նվիրված ծավալուն աշխատություն, որը նույնպես մնում է անտիպ: Նա գրել է նաև տարաբնույթ աշխատանքներ, որոնցից հատկապես արժեքավոր է «Հայերը»<sup>31</sup> ուսումնասիրությունը, որը ժամանակին տպագրվել է Ա. Ի. Կոստելյանսկու խմբագրությամբ լույս տեսած ժողովածուում:

---

<sup>30</sup> Տե՛ս **Тигранян С.**, Судебная книга Мхитара Гоша и «Книга Канонов», «Известия Кавказского историко-археологического института в Тифлисе», том III, Тифлис, 1925, էջ 61-72:

<sup>31</sup> Տե՛ս **Тигранян С.**, Армяне, в кн. «Формы национального движения в современных государствах. Австро-Венгрия, Россия, Германия», под редакцией А. И. Костельянского, Санкт Петербург, 1910, էջ 495-525: Այս աշխատությունը առանձին գրքով վերահրատարակվել է Երևանում (տե՛ս **Тигранян С.**, Армяне, Ер., 1992):

Ս. Տիգրանյանը քաղաքական մեղադրանքներով ձերբակալվել է հինգ անգամ, որից երկուսը՝ ցարական կառավարության, իսկ երեքը՝ խորհրդային իշխանության կողմից՝ մեղադրվելով համապատասխանաբար «հեղափոխական գործունեության համար» և «հակահեղափոխական նախկին գործունեության համար»: Վերջին՝ հինգերորդ ձերբակալությունը, որը տեղի է ունեցել 1937 թ., եղել է ճակատագրական. նույն տարվա դեկտեմբերի 5-ին ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմատի Եռյակի որոշմամբ դատապարտվել է մահապատժի՝ անձնական գույքի բռնագրավմամբ, որն ի կատար է ածվել դեկտեմբերի 17-ին՝ գիշերվա ժամը 2-ին: Արդարացվել է 21 տարի անց՝ 1958 թ. հոկտեմբերի 20-ին:

Արդ Երևանի համալսարանի անդրամիլի ուսումնական ձեռնարկների հեղինակ ու թարգմանիչ, անվանի հոգեբան ու իրավագետ, պետական-հասարակական նշանավոր գործիչ Սիրական Տիգրանյանի անունը պետք է իր արժանի տեղն ունենա մայր կրթօջախի հիմնադիր երախտավորների անունների կողքին: Մեզ թվում է՝ ճիշտ կլինի, եթե Ուիլյամ Ջեմսի «Հոգեբանություն» գրքի՝ նրա կատարած թարգմանությունը, որը լույս է տեսել ավելի քան 90 տարի առաջ, վերահրատարակվի՝ դրան որպես հավելված կցելով նաև նույն հեղինակի ու թարգմանչի՝ 1904 թ. Վաղարշապատում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակությամբ լույս ընծայված «Յոյզ» («Հույզ») գրքույկը, ինչպես և «Դասախոսություններ հոգեբանությունից» ձեռնարկը. բոլորը պետք է հրատարակվեն միասին՝ մեկ գրքով: Դա մի յուրահատուկ նվեր կլինի Երևանի համալսարանի մուտաբու 95-ամյակին:

Վերադառնալով Հայաստանի համալսարանի առաջին հրատարակություններին՝ նշենք, որ մայր կրթօջախը իր գոյության առաջին իսկ տարում, վերոհիշյալ երկու գրքերից բացի, հրատարակության ընթացքի մեջ է դրել նաև Փարիզի համալսարանի պրոֆեսոր Շարլ Ժոլի «Քաղաքատնտեսության սկզբունքները» աշխատության հայերեն թարգմանությունը, որը կատարել և տպագրության է պատրաստել Արտաշես Տիրացյանը՝ գրքի հեղինակի համաձայնությամբ և հայերեն հրատարակության համար գրած առաջաբանով<sup>32</sup>: Սակայն հետագայում քաղաքա-

---

<sup>32</sup> Այդ մասին տես Երևանի համալսարան. 1918-1920 թթ. (վավերագրերի ժողովածու), էջ 276:

կան կացության կտրուկ փոփոխության և երկրում նոր կարգերի հաստատման պատճառով դասագիրքը այդպես էլ չի հրատարակվել:

Ասե՛նք նաև, որ Պատմալեզվաբանական ֆակուլտետի՝ 1920 թ. հոկտեմբերի 25-ին գումարված հինգերորդ նիստում, որը նախագահում էր դեկանի պաշտոնակատար Հակոբ Մանանդյանը, մի շարք հարցերի հետ քննարկվել է նաև դասագրքերի և գիտական աշխատությունների հրատարակման հարցը, որի վերաբերյալ զեկուցումով հանդես է եկել ֆակուլտետի դասախոս Երվանդ Տեր-Մինասյանը:

Այդ առիթով ընդունված որոշման մեջ ասված է. «Հատուկ ուշադրություն պետք է դարձնել դասախոսությունների հրատարակության, ինչպես և պարբերական գիտական հանդեսի ու գիտական մոնոգրաֆիկ աշխատանքների տպագրության վրա: Այդ նպատակն իրագործելու համար պետք են հետևյալ ծախսերը»<sup>33</sup>: Այնուհետև որոշման մեջ այդ ծախսերը բերված են տարեկան 360 մամուլ ծավալով հրատարակությունների համար, որից 300 մամուլը՝ դասախոսություններ, 30-ը՝ պարբերական հանդես, 30-ը՝ գիտական մենագրություններ:

Մեկ մամուլ շարվածքի և տպագրության համար նախատեսված էր 15.000 ռուբլի, իսկ տարեկան ընդհանուր ծախսը կազմելու էր 5.400.000 ռուբլի:

Նույն որոշման մեջ բերված է նաև թղթի տարեկան ընդհանուր ծավալը՝ 240 օգմա. 1 օգմայի արժեքը 15.000 ռուբլի էր, իսկ տարեկան ընդհանուր ծախսը՝ 3.600.000 ռուբլի: Գրքեր կազմելու, ֆորզացի և դրանց տպագրության համար նախատեսված էր տարեկան 1.250.000 ռուբլի:

30 մամուլ ծավալով գիտական հանդեսի համար հոնորար էր նախատեսված 960.000 ռուբլի՝ 1 մամուլը՝ 32.000 ռուբլի հաշվարկով:

300 մամուլ դասախոսությունների տպագրության համար նախատեսված էր տարեկան 6.000.000 ռուբլի՝ 1 մամուլը՝ 20.000 ռուբլի հաշվարկով:

360 մամուլ սրբագրության համար նախատեսված էր 1.800.000 ռուբլի՝ 1 մամուլը՝ 5.000 ռուբլի հաշվարկով:

Խմբագրման և վերահսկողության համար սահմանված էր 600.000 ռուբլի:

---

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 273:

Ընդհանուր առմամբ պահանջվող գումարը տարեկան կազմում էր 19 միլիոն 610 հազար ռուբլի:

Բոլոր գները հաշվարկված են 1920 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ, որոնք, բնականաբար, ամեն տարի պետք է փոփոխության ենթարկվեին՝ պայմանավորված շուկայական գների բարձրացմամբ կամ իջեցմամբ<sup>34</sup>:

Հիշյալ որոշման մեջ նշված է նաև, որ «տպագրված գրքերի կեսը տրվում է հեղինակին, իսկ մյուս կեսը մնում է համալսարանին: Գիտական մոնոգրաֆիաների համար հոնորար չի վճարվում: Դասախոսությունները պետք է տպագրվեն 600-ական օրինակ, իսկ մոնոգրաֆիաները՝ 500-ական»<sup>35</sup>:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Երևանի պետական համալսարանը իր գործունեության առաջին իսկ տարվանից ընթացիկ ուսումնագիտական աշխատանքների հետ մեկտեղ կարևոր ուշադրություն է դարձրել ինչպես բուհական դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման, այնպես էլ հրատարակչական գործի կազմակերպման խնդիրներին, ինչը շարունակվել է նաև խորհրդային կարգերի օրոք վերակառուցված ժողովրդական համալսարանում: Այդ են հաստատում լույս ընծայված առաջին դասագրքերն ու մենագրությունները, որոնք վերաբերում են բնական և հասարակական գիտությունների տարբեր ճյուղերին:

Այդ շրջանում հրատարակված առաջին գիրքը եղել է նշանավոր ֆիզիկոս Հովհ. Նավակատիկյանի՝ «Դետերմինանտներ» վերնագրով դասախոսությունների 36 էջանոց խմորատիպ ձեռնարկը: Այն լույս է տեսել 1922 թ. «Երևանի ժողովրդական համալսարան, սերիա 1» ուշագրավ նշումով, որը փաստում է խորհրդային կարգերի օրոք Երևանի համալսարանի հրատարակած առաջին գիրքը լինելու հանգամանքը: Դրա հետ մեկտեղ նույն տարում տպագրվել են 7 անուն այլ գրքեր: 1923 թ. արդեն տպագրվել էր 10 անուն գիրք, իսկ մինչև 1927 թ., այսինքն՝ մինչև Երևանի համալսարանի հրատարակչության պաշտոնական հիմնադրումը, ընդհանուր հաշվարկով լույս է տեսել ավելի քան 30 անուն գիրք: Դրանց թվում են Վահան Արծրունու, Ալեքսանդր Հակոբյանի, Հակոբ Մանանդյանի, Մանուկ Աբեղյանի, Հրաչյա Աճառյանի, Լեոյի, Արսեն

---

<sup>34</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 273-274:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 274:

Տերտերյանի, Սիրական Տիգրանյանի, Ավետիք Տեր-Պողոսյանի, Աշխարհաբեկ Լոռու-Մելիք Զալանթարյանի, Սարգիս Աբովյանի, Պողոս Սոտնիկյանի և այլոց աշխատություններն ու կազմած ձեռնարկները:

Այդ հրատարակությունները, որոնք կատարվել են համալսարանի գոյության առաջին օրերից սկսած, այժմ դարձել են մեր գրատպության հետաքրքիր ու եզակի նմուշներ, փնտրվող գրքեր, որոնք իրենց հետքն են թողել մեր տպագրության զարգացման ճանապարհին: Եվ այսօր, երբ համաշխարհային հանրությունը հայ ժողովրդի հետ միասին նշում է հայկական տպագրության 500-ամյա հոբելյանը, այդ բազմադարյան մշակութային երփներանգ հյուսվածքում իրենց չխամբող գույներն ունեն մաս Երևանի համալսարանի հրատարակած գրքերը:

**ՄԱՍ ԵՐԿՐՈՐԳ**

**«ՄԻ ՉԵՌՔՈՒՄ ՍՈՒՐ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆՔ,  
ՄՅՈՒՍ ՉԵՌՔՈՒՄ ԳՐԻՉ ԲՈՆԵՆՔ»**





## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԹԵՐԹԸ\*

Այս միօրյա լրագիրը, որը լույս է տեսել 1920 թ. հունվարի 31-ին, մեզ ծանոթ հայ պարբերական մամուլի ոչ մի մատենագիտության մեջ հիշատակված չէ: Նրա անունը մեկ անգամ միայն նշված է Լ. Ղարիբջանյանի «Երևանի պետական համալսարանը» (Երևան, «Միտք», 1965) գրքում (էջ 32): Թերթը, ինչպես ասված է նրա գլխագրում, եղել է «Նվեր Հայաստանի անդրանիկ համալսարանին»: Այն ունի «Գիտությունը ուժ է» նշանաբանը: Առաջին էջում գետեղված փոքրիկ խմբագրականը ընթերցողներին ծանոթացնում է, որ «Հայաստանի համալսարան միօրյա թերթը հրատարակվում է իբրև հավերժացման նշան նույն համալսարանին: Եկամուտը հատկացվում է նույն համալսարանի չքավոր ուսանողների փոխադարձ օգնության ֆոնդին»: Թերթում հիշատակություն չկա նրա խմբագրի, լույսընծայման տեղի ու տպաքանակի մասին: Ըստ երևույթին, այն տպագրվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական), որովհետև 1919 թ. մայիսի 16-ին ստեղծված Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել այնտեղ 1920 թ. հունվարի 31-ին:

«Հայաստանի համալսարան» թերթը հրատարակվել է ծանր օրերին, երբ հայ ժողովուրդը գոյության կռիվ էր մղում իր և իր վերագտած պետականության ամրապնդման համար, չունեի նյութական միջոցներ, տպագրական գործի դրվածքը թույլ էր: Սակայն, չնայած դրան, թերթը համեմատաբար լավ է տպագրված, տեքստերի տառատեսակները, նյութերի վերնագրերը ընտրված են ճաշակով: Թեև այն գուրկ է լուսանկարներից ու գծանկարներից, այնուամենայնիվ, իր ամբողջության մեջ գեղեցիկ է և ունի հարուստ բովանդակություն:

Թերթը բացվում է «Դեմոկրատական համալսարանը» առաջնորդողով, որի հեղինակն է Հայաստանի համալսարանի կազմակերպիչ ու առաջին ռեկտոր, պրոֆ. Յու. Ղամբարյանը: Այնտեղ կարդում ենք. «Ազատ Հայաստանի համալսարանը, որի բացումը նշանակված էր հունվարի 2-ին (հին տոմարով՝ 12-ին), բայց պատահական պատճառներով հետաձգվեց մինչև հունվարի 31-ը, մեր ժողովրդի համար չափազանց

\* «Երևանի համալսարան» լրատու, 1989, թիվ 2, էջ 34-37:

մեծ նշանակություն ունի: Նրա կարևորությունը չի կարելի պարփակել մի քանի խոսքերի մեջ, այն էլ այսպիսի մի թուուցիկ թերթում»: Ապա հեղինակը շարունակում է. «Մեր համալսարանի բացման օրը զուգադիպում է Մոսկվայի համալսարանի բացման օրվան, որը տեղի ունեցավ ավելի քան դար ու կես առաջ, նույնպես և Հայաստանի իրական անկախության ճանաչման, որ տոնվեց հունվարի 25-ին, կիրակի օրը, երբ պետք է տեղի ունենար համալսարանի բացումը: Այս զուգադիպությունները պատահական չեն և կարող են համարվել բախտորոշ գուշակություն Հայաստանի համալսարանի համար»:

Այնուհետև հեղինակը, շարունակելով իր միտքը, նույն հողվածում ասում է. «Մեր անկախության ճանաչումը մեզ տալիս է թե՛ անհատական ազատության և թե՛ հասարակության դեմոկրատիկ կազմակերպության բարիքներ, որոնք նույնքան անհրաժեշտ են ճշմարիտ լուսավորության համար, որքան և ճշմարիտ լուսավորությունը անհրաժեշտ է ազնիվ դեմոկրատիայի համար:

Կեցցե՛ ուրեմն մեր համալսարանը, ոչ միապետական, ոչ եկեղեցական, ոչ արխատկրատական, այլ ազատ, աշխարհիկ և դեմոկրատիկ համալսարանը, որը կոչված է մշակելու հավասարապես գիտությունը և առաքինությունը, առանց որոնց դեմոկրատիան կա՛ն խաբեություն կլինե՛ր, կա՛ն դատարկ հնչյուն»:

«Ազատված և մեծ ազգերի ընտանիքի կողմից իբրև անկախ պետություն ճանաչված Հայաստանում այսօր բացվում է բարձրագույն դպրոց, համալսարան, նորագույն ծրագրով և պահանջներով ծառայելու հայ սերնդի զարգացմանը և մարդկության լավագույն մասի քաղաքակրթական առաջադիմության ամենաբարձր նպատակներին», - այսպես է բնութագրում Հայաստանի անդրանիկ բուհը Պատմալեզվագրական ֆակուլտետի դեկան Մեսրոպ եպիսկոպոսը (Տեր-Մովսիսյան) «Ռոջույն Հայաստանի համալսարանին» հողվածում: «Մենք կամենում ենք ապրել մեր հայրենիքում,- ասում է նա,- կամենում ենք շենացնել մեր ավերակները և այսօր վառում ենք մեր լուսավոր լապտերը, վառում ենք, որպեսզի նրա փայլուն լույսով լուսավորենք մեր երկրի մութ խորշերը, լուսավորենք մեր լեռների գագաթներն ու գետերի հովիտները, հաստատում հավատով, որ այսուհետև ընդմիջտ մեր սիրուն հայրենիքից հեռանալու և չքանալու են խավար ուժերը: Ապրի Հայաստանի համալսարանը, ապրի

տարիներ և դարեր յուր հզորագույն գործով վերականգնելու համար մեր երկրում նախնական պարտեզի այն երջանկությունը, որից զրկվել էինք և որտեղ կամենում ենք դարձյալ վերադառնալ»:

«Մենք վերաշինության մի մեծ գործ ենք կատարում,- իր «Երա՞զ, թե՞ իրականություն» վերտառությամբ խոսքում ասում է Գարեգին եպիսկոպոսը (Հովսեփյան),- Հայաստանի անդրանիկ համալսարանի դռները բացում ուսման, հոգևոր կյանքի ծարավի պատանեկության առաջ»:

Թերթի 2-րդ և 3-րդ էջերը բացվում են «Կեցցե՛ Հայաստանի համալսարանը» և «Կեցցե՛ ուսանողությունը» ընդհանուր վերտառություններով, որոնց տակ տպագրված են Ալ. Բարխուդարյանի «Դեպի մեծ ճանապարհ», Ե. Տեր-Սիմասյանի «Հայաստանի համալսարանը», Ստ. Մալխասյանցի «Համալսարանը և լեզուն», Իս. Տեր-Ներսիսյանի «Համալսարանի բացման առթիվ» նյութերը, որոնց մեջ արժեքավորվում է իր պետականությունը վերականգնած Հայաստանի առաջին համալսարանի բացումը: Ե. Տեր-Սիմասյանը նշում է, որ Հայաստանի համալսարանի հիմնադրումը հայ ազգի նորագույն պատմության կարևորագույն դեպքերից մեկն է, եթե չասենք ամենակարևորը: Նա վկայակոչում է, որ մարդկության պատմությունը մեզ ուսուցանում է, որ ազգերը այնքան ժամանակ շարունակում են ապրել և դեր կատարել համաշխարհային կյանքում, քանի դեռ կանգուն է նրանց հոգեկան ուժը, և անկուն՝ նրանց բարոյական կամքը՝ ապրելու և առաջադիմելու: Նա ասում է, որ հայ ժողովուրդը մի անգամ էլ ապացուցում է, որ արժանի է ապրելու քաղաքակիրթ ազգերի շարքում իբրև հավասար անդամ, որովհետև նա, արտաքին բարիքների հետևից ընկած, չի մոռանում կարևորագույնը՝ հոգևոր և մտավոր սնունդը:

Պատմալեզվաբանական ֆակուլտետի գիտական արժեքի գնահատմանն է նվիրված նշանավոր արևելագետ Ռ. Աբրահամյանի հոդվածը: Իսկ ակնամավոր հայագետ Ստ. Մալխասյանցն իր խոսքում ընդգծում է, որ համալսարանը ոչ միայն կատարելու է անմիջական պարտականություններ, այլև անուղակի կերպով գլուխ է բերելու մի շատ կարևոր գործ՝ ստեղծել հայերեն պետական լեզու: Նա ասում է, որ հայկական համալսարանը կստեղծի բավական միջոցներ՝ հայերեն լեզվով ամեն մի գիտական միտք արտահայտելու համար, և սրանով նա մեծապես կնպաստի հայ լեզվի զարգացմանը:

Այս ամենի հետ մեկտեղ հիշյալ հեղինակները նշում են, որ նախ համալսարանը պիտի «ավերված ու խեղճ» երկիրը դուրս բերի մեծ ճանապարհ, նրա սաները պիտի «գիտության խոր սիրով և ազատության հզոր եռանդով տոգորված» ցրվեն անուշ հայրենիքի ամենախուլ անկյուններում և արդարացնեն հայ ժողովրդի հույսն ու փափագը:

Այս նույն էջերում են տպագրված նաև Ս. Խանոյանի «Գիտության կաճառը» և Ս. Երզնկյանի «Մեր ակնկալիքը Հայաստանի համալսարանից» հոդվածները, ինչպես նաև Ս. Բռունցեցիի ողջույնի խոսքը:

Ս. Խանոյանը իր հոդվածում նշում է, որ Հայաստանի համալսարանը ներկա դրությամբ չի կարող բավարարել ոչ միայն սահմանափակ թվով նարդկանց ցանկությունները, այլև եթե կուզեք, նա մի համեստ սկիզբ է տպագրալի խոշոր նշանակություն ու բովանդակություն ստացող կրթական գործին: «Նա դառնալու է գիտությունների և արվեստների այն ծաղկեփունջը, որից, իբրև նեկտար հավաքող ժրջան մեղուներ, Հայաստանի քաղաքացի երիտասարդն ու պատանին, քաղելու են իրենց այնքան անհրաժեշտ գիտելիքները՝ մտքի նեկտարը: Այսօրվանից Հայաստանի ուսումնաժարավ սերունդը իսկական մարդ դառնալու անշեղ և անսայթաք գիտակցությամբ ոտք է կոխում նորաբաց համալսարանը: Կեցցե՛ նորածին կաճառը», - այսպես է ավարտում իր խոսքը հեղինակը: Իսկ Ս. Երզնկյանը, Հայաստանի համալսարանը համեմատելով ժամանակի համալսարանների հետ և վերլուծելով կրթական համակարգը նրանցում, նշում է. «Հայաստանի անդրանիկ համալսարանին ցանկանք, որ նա օր առաջ դառնա այն օջախը, որի դռները լայն կերպով բացվեն հայ աշխատավորության առջև և, ինչպես հեղափոխական Ռուսաստանում, նա կարողանա լի ու լի կերպով օգտվել գիտության ու արվեստի տաճարից իր ազատագրման համար»:

«Այն պատմական մոմենտում,- իր ողջույնի խոսքում գրում է Ս. Բռունցեցին,- ուր հին արժեքների փլատակների վրա կառուցվում են նոր կյանքի հոյակապ ամրոցները՝ Ասիայի նախադուռը կազմող Հայաստանի քաղաքներից մեկում բացվում է մի լույս կաճառ, որի գաղափարը խավարի աշխարհում գալարվող մասսաների համար եղել է երազանք, մի գեղեցիկ հեռավոր նպատակ, թերևս անիրագործելի»: «Հայաստանի համալսարանի օրինակը,- շարունակում է նա,- վարակիչ պետք է հանդիսանա Ասիայի ժողովուրդների համար և որպես այդպիսին, նա պետք

է իր դռները լայն բացի անխտիր գիտության ծարավ մասսաների առաջ, ծավալելու նրանց ինքնագիտակցության մեջ մտքի ու հոգու անկաշկանդ բռնիքները... Այդ իմաստով է, որ ողջունում ենք Հայաստանի համալսարանը»:

Թերթի 4-րդ էջը բացվում է դարձյալ «Կեցցե՛ Հայաստանի համալսարանը» ընդհանուր վերտառությամբ, որտեղ տպագրված են Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական ողջույնն ու օրհնության խոսքը՝ նորաստեղծ համալսարանի առթիվ, ինչպես նաև ողջույնի հեռագրեր: Այս վերջին բաժնից իմանում ենք, որ Հայաստանի համալսարանի բացման առթիվ ստացվել են 300-ից ավելի հեռագրեր, որոնցից թերթը ընթերցողներին է ներկայացրել մի քանիսը: Դրանք են Անդրկովկասյան համալսարանի բժշկական ֆակուլտետի, Ռուսաց աշխարհագրական ընկերության կովկասյան բաժանմունքի, Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի, Թիֆլիսի և Բաքվի պետական համալսարանների, Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի, Կովկասյան բժշկական ընկերության ողջույնի հեռագրերը: Դրանցից մեկի մեջ ասված է. «Թող սպիտակավառ Արարատ լեռան անմար լույսի ճառագայթները նորից փայլեն հայրենի երկրի վրա և համալսարանը մշտապես ծաղկած մնա»:

Թերթում տպագրված է նաև Պատմալեզվաբանական ֆակուլտետի դասագուցակը, որի մեջ նշված են առաջին կիսամյակի՝ 1920 թ. փետրվար-մայիս ամիսներին դասավանդվելիք առարկաներն ու դասախոսների անուն-ազգանունները:

«Հայաստանի համալսարան» թերթում հրապարակված բոլոր նյութերը գրված են ժամանակի գիտության ու մշակույթի անվանի գործիչների ձեռքով, բարձր մակարդակով և ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ: Դրանք առատ նյութ են պարունակում Հայաստանի Հանրապետության անդրանիկ համալսարանի բացման վերաբերյալ և ունեն պատմական կարևոր նշանակություն:

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ\*

Համալսարանի գիտական գրադարանը հիմնադրվել է 1921 թ. Երևանի նախկին ուսուցչական սեմինարիայի գրադարանի ֆոնդի հիման վրա: Նրա պաշտոնական բացումը տեղի է ունեցել 1922 թ. նոյեմբերի 8-ին հանդիսավոր պայմաններում: Սկզբնական շրջանում այն ուներ 10 հազար կտոր գրականություն: 1921 թ. հունվարին ՀԽՍՀ լուսժողովումատի հրամանով համալսարանի գրադարանին են հանձնվում նաև Էջմիածնի հոգևոր ճեմարանի, Երևանի արական գիմնազիայի, նախկին արտաքին գործոց նախարարության և այլ հիմնարկների գրականության հարուստ ֆոնդերը: Նույն շրջանում լուսժողովում Պ. Մակինցյանի օժանդակությամբ 163 արկղ գրականություն է տեղափոխվում Մոսկվայի Լազարյան ճեմարանից, որի մեջ էին Վ. Տերյանի և Ալ. Ծատուրյանի անձնական հավաքածուները: Համալսարանի գիտական գրադարանի ֆոնդի համալրմանը մեծ աջակցություն են ցույց տվել հայ առաջավոր մտավորականության շատ ներկայացուցիչներ, անվանի գիտնականներ Հակոբ Մանանդյանը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Գրիգոր Ղափանցյանը, Գրիգոր Չուբարյանը, Լևոն Աթաբեկյանը, Արսեն Տերտերյանը, Եվանգուլյան եղբայրները և ուրիշներ: Նրանք մեծ սիրով համալսարանի գրադարանին են նվիրել իրենց անձնական հարուստ հավաքածուները: Գրադարանի հարստացմանը օժանդակել են նաև արտասահմանյան հայերը, գրականության և արվեստի գործիչները: Համալսարանի նորաստեղծ գրադարանին սիրով իր գրքերն է նվիրել արևմտահայ մեծանուն երգիծաբան Երվանդ Օտյանը: Հետագայում համալսարանի գրադարանին իրենց երկերն են նվիրաբերել խորհրդահայ և սփյուռքահայ շատ ականավոր գրողներ ու գիտնականներ:

Համալսարանի գիտական գրադարանն այսօր հանրապետության երրորդ խոշոր, իսկ բուհական գրադարանների մեջ առաջին գրադարանն է: Նրա գրքային ֆոնդն անցնում է 1 մլն 700 հազար միավոր գրականությունից, որից 540 հազարը՝ գիտական, 415 հազարը՝ գեղարվեստական, 89 հազարը՝ հասարակական-քաղաքական, և 736 հազարը

---

\* «Երևանի համալսարան» լրատու, 1985:

ուսումնական բնույթի են, իսկ 200 հազար միավորը օտար լեզուներով գրականություն է՝ հիմնականում հանրագիտարաններ, տեղեկատուներ, բառարաններ, մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ և այլն: Գրադարանը ստանում է մաս 40 ամուն թերթ և 507 ամուն հանդես: Հանդեսներից 47-ը հայերեն են, 410-ը՝ ռուսերեն, և 43-ը՝ օտար լեզուներով: Արտասահմանյան 7 ամսագրեր էլ ստացվում են միջազգային արժեքոթերով: Ամեն տարի գրադարան մուտք են գործում 50 հազարից ավելի գիրք և պարբերական հրատարակություններ, որոնց շուրջ կեսը դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ են: Գրադարանը ստանում է Խորհրդային Միությունում հրատարակվող գրականության գրեթե բոլոր պարտադիր օրինակները: Նրա ֆոնդի համալրման կարևոր աղբյուրներից մեկն էլ միութենական և միջազգային գրքափոխանակությունն է: Այսօր համալսարանի գրադարանը գրքի փոխանակություն է կատարում Միության 164 գիտական (որից 62-ը՝ համալսարանական) և արտասահմանյան 20 երկրների 72 խոշոր գրադարանների հետ: Դրանց թվում են ՄՍՀՄ Վ. Ի. Լենինի անվան պետական գրադարանը, Լենինգրադի Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային պետական գրադարանը, Մոսկվայի համալսարանի գիտական գրադարանը, Հայաստանի ՄՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանը, ՄՍՀՄ և Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիաների ֆունդամենտալ գրադարանները, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանը, Փարիզի Նուպարյան մատենադարանը, Երուսաղեմի Կյուլպենկյան մատենադարանը, Էջմիածնի ճեմարանի գրադարանը և այլն: Գրադարանը սերտ կապերի մեջ է ԱՄՆ-ի, Անգլիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Ֆինլանդիայի, ԳՖՀ-ի և այլ երկրների հրատարակչական խոշոր կազմակերպությունների հետ: Գրքափոխանակության կարգով վերջին տարիներին ստացվել են ավելի քան 3500 գիրք ու պարբերական, որից շուրջ 1500-ը՝ արտասահմանից: Միաժամանակ հիշյալ գրադարաններ են ուղարկվել 3000 միավոր գիրք ու պարբերական, որից մոտ 1500-ը ուղարկել են արտասահմանյան հիշյալ երկրները: Սփյուռքահայությունից գրադարանը ստացել է մեծ թվով հայագիտական արժեքավոր գրքեր ու հանդեսներ՝ որպես նվիրատվություն:



Համալսարանի գիտական գրադարանի ընթերցողների թիվը ներկայումս անցնում է 12500-ից, որոնց միայն մեկ տարվա ընթացքում սպասարկվում է 1.4 մլն տարբեր բնույթի գրականություն: Գրադարանի ֆոնդերից օգտվում են ինչպես համալսարանի, այնպես էլ հանրապետության մյուս բուհերի ու գիտական հաստատությունների ուսանողներ, ասպիրանտներ, դասախոսներ, գիտաշխատողներ, ծառայողներ և այլ մասնագետներ:

Այսօր համալսարանի գիտական գրադարանն ունի 11 բաժին, 1400 տեղանոց 12 ընթերցասրահ, որոնց օժանդակ ֆոնդերը համալրված են մոտ 100 հազար միավոր ուսումնական ու գիտական գրականությամբ: Ընթերցասրահներից 5-ը ընդհանուր են, և 7-ը՝ մասնագիտական:

Սպասարկման բաժնին կից գործում է միջգրադարանային բաժանորդագրության ենթաբաժինը, որը կապեր ունի Սիության 57 խոշոր գրադարանների հետ և բաժանորդագրերի միջոցով գրականություն է սպասարկում հանրապետության և Սիության 245 գրադարանների ու գիտական կազմակերպությունների:

Գրադարանն ունի մաս հնատիպ ու հազվագյուտ գրականության բաժին, որտեղ հաշվառված են 5 հազարից ավելի մեծարժեք գրքեր՝ հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով: Այս բաժնում են գտնվում այնպիսի եզակի հրատարակություններ ու ձեռագրեր, ինչպիսիք են՝ Յոհաննու Պոնտայի «Չեռթացութիւն յերկինս» (1621 թ.), «Շարական երաժշտական երգեցմունք» (1635 թ.), Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» (1669 թ.), Հովհաննի վարդապետի «Ձտութիւն Հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական» (1674 թ.), Երեմիա վարդապետի «Բառագիրք հայոց», (1698 թ.), Հ. Ս. Չամչյանցի «Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն» (1784 թ.), Մ. Հ. Չամչյանցի «Քերականութիւն հայկազեան լեզուի» (1859 թ.) և այլն:

Գրադարանն իր ընթերցողների տեղեկատվական-մատենագիտական պահանջները բավարարում է տեղեկատու ապարատի՝ գրացուցակների ու քարտարանների միջոցով. ունի այբբենական, կարգային (պիստենմատիկ), առարկայական, մամուլի գրացուցակներ (հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով), ինչպես մաս համալսարանի դասախոսների ու գիտաշխատողների կենսամատենագիտական, ամսագրային

հողվածների, գրախոսությունների, գրքապահովվածության և այլ քարտարաններ:

Սկսած 1970 թվականից՝ գրադարանը եռամսյակը մեկ հրատարակում է «Նոր գրքեր Երևանի պետական համալսարանի գրադարանում» տեղեկագիրը՝ հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով: Գրադարանը տպագրել է նաև «Երևանի պետական համալսարանի հրատարակությունների մատենագիտություն» բազմահատորյակի 4 գրքերը (1964, 1980, 1984, 1985), ինչպես նաև «Երևանի պետական համալսարանում պաշտպանված դոկտորական ու թեկնածուական դիսերտացիաները» մատենագիտության 4 պրակները: Գրադարանը մասնակցում է Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակած «Գիտությունը Սովետական Հայաստանում» բազմահատորյակի լույսընծայման աշխատանքներին:

Մեծ ուշադրություն է դարձվում նաև ուսանողների գրադարան-մատենագիտական կողմնորոշմանը: 1975 թվականից սկսած՝ առաջին կուրսեցիների համար կարդացվում է «Գրադարանագիտություն, մատենագիտություն և ինֆորմացիա» դասընթացը, որը վարում են գրադարանի որակյալ մասնագետները: Պարբերաբար հրատարակվում է «Առաջին կուրսեցու հուշաթերթը»:

Երևանի համալսարանի գրադարանին 1944 թ. շնորհվել է երրորդ, իսկ 1966 թ.՝ երկրորդ կարգի գիտական գրադարանի կոչում: Համամիութենական հասարակական ստուգատեսներում ունեցած իր նվաճումների համար գրադարանը երեք անգամ արժանացել է «Հաղթողի դիպլոմի»:

Համալսարանի գիտական գրադարանը մեթոդական կենտրոն է Հայաստանի բուհական գրադարանների համար: Այն մեթոդական դեկավարություն և օգնություն է ցույց տալիս հանրապետության բուհերի և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների գրադարաններին, նրանց աշխատողների համար կազմակերպում է սեմինար պարապմունքներ, մեթոդական խորհրդակցություններ և այլն: Համալսարանի գիտական գրադարանում կազմակերպվում են նաև համամիութենական գիտագործնական կոնֆերանսներ՝ նվիրված գրադարանային գործի կատարելագործմանը, գրադարանավարության ու գրադարանագիտության խնդիրների մշակմանը: Դաստիարակչական մեծ նշանակություն ունեն գրադարանի կողմից պարբերաբար կազմակերպվող

ընթերցողական կոնֆերանսները, բանավեճերը, հանդիպումները գրողների ու գիտության անվանի գործիչների հետ, թեմատիկ ցուցահանդեսներն ու դասախոսությունները:

Համալսարանի գիտական գրադարանի կազմակերպման ու զարգացման գործին մեծապես նպաստել են նրա առաջին տնօրեններ Գարրիել Ռոտինյանը և Ասատուր Հայկազյանը: Հետագայում գրադարանը ղեկավարել են Հակոբ Հակոբյանը, Հակոբ Խաչատրյանը, Սահակ Առաքելյանը և Աննա Մակարյանը: 1987 թ. մայիսից գրադարանի տնօրենն է Վարդգես Ավանյանը: Այսօր գրադարանի 120 աշխատողներից 30-ը ունեն ընդհանուր և մասնագիտական բարձրագույն կրթություն: Նրանցից Սահակ Առաքելյանին, Աննա Մակարյանին, Արաքսյա Գրիգորյանին, Ելենա Հարությունյանին և Լիլիանա Գասպարյանին Հայկական ՄՍՀ Գերագույն խորհրդի նախագահության կողմից շնորհվել է «Հայկական ՄՍՀ վաստակավոր գրադարանավարի» պատվավոր կոչումը:

Կառուցվում է և շուտով շահագործման կհանձնվի գիտական գրադարանի նոր մասնաշենքը, որն ունենալու է 3 միլիոն միավոր գրականության համար գրապահոց, լուսավոր ու ընդարձակ ընթերցասրահներ, մասնագիտացված կաբինետներ ու աշխատասենյակներ:

## **ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ\***

Երևանի համալսարանի հրատարակչությունը Խորհրդային Հայաստանի գրքաամսագրային հինգ հրատարակչություններից մեկն է ու միակը՝ որպես բուհական հրատարակչություն: Իսկ որպես գիտական գրականության հրատարակչություն՝ երկրորդն է՝ Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունից հետո: Այն չնայած ստեղծվել է 1927 թ. մարտի 31-ին, սակայն նրա սաղմերը պետք է որոնել Երևանի համալսարանի հիմնադրման առաջին իսկ տարիների մեջ:

1920 թ., երբ կազմավորվում էր նորաստեղծ Խորհրդային Հայաստանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Երևանի ժողովրդական համալսարանը, անմիջապես հոգ է տարվում ուսանողու-

---

\* «Երևանի համալսարան» լրատու, 1985:

թյան համար մայրենի լեզվով դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ ստեղծելու, դասախոսների գիտական հետազոտությունները լույս ընծայելու համար: 1922 թ. համալսարանը խմորատիպ եղանակով սկսում է հրատարակել ուսումնական ձեռնարկներ ու առանձին աշխատություններ, որոնց մի մասը թարգմանություններ էին:

«Երևանի ժողովրդական համալսարան, սերիա № 1»՝ այս ուշագրավ նշումով 36 էջանոց խմորատիպ գրքույկը, որը լույս է տեսել 1922 թ., Հովհաննես Նավակատիկյանի «Դեպտեմիանտներ» աշխատությունն է: Դա էլ հենց համալսարանի հրատարակած առաջին գիրքն է: Այնուհետև՝ այդ շրջանում, մեկը մյուսի հետևից լույս են տեսնում Հակոբ Մանանդյանի «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում», Ալեքսանդր Հակոբյանի «Ֆիզիկա», Վահան Արծրունու «Մարդակազմություն», Լեոյի «Հայոց պատմություն (նոր շրջան)», Ավետիք Տեր-Պողոսյանի «Ընդհանուր կենդանաբանություն», Մանուկ Աբեղյանի «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության», Սիրական Տիգրանյանի «Հայոց իրավունքի պատմության ներածություն», Արսեն Տերտերյանի «Հայոց նոր գրականություն», Աշխարհաբեկ Քալանթարի «Հնագիտություն», Հրաչյա Աճառյանի «Քննություն Մարաշի բարբառի», Արշակ Հակոբյանի «Ֆիզիոլոգիա», Ս. Արդայանի «Հանքաբանություն» և ուրիշների գրքերը: Թարգմանաբար լույս տեսած դասագրքերից կարելի է հիշատակել Կ. Պոսսեի «Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվների դասընթացը», Ի. Մեշչերսկու «Տեսական մեխանիկան», Վ. Գոտմանի «Ֆիզիկայի հիմունքները» և այլն:

Առաջին իսկ տարիներից համալսարանում միաժամանակ աշխատանքներ ծավալվեցին գիտական հրատարակությունների ուղղությամբ: Գրվեցին և տպագրվեցին Միքայել Թումանյանի «Շաքարի ճակնդեղի մշակության հեռանկարները Հայաստանում», Պապա Քալանթարյանի «Բամբակենու երկու նոր բակտերիոզներ Հայաստանում», Լևոն Ռոտինյանցի «Սերձարաքսյան ճահիճների հողային և հիդրոլոգիական ուսումնասիրությունները», Հակոբ Հովհաննիսյանի և Հովհաննես Ակունյանի «Չհագեցված ցիկլոթերերի ստացումը» և մի շարք այլ աշխատություններ:

Երևանի ժողովրդական համալսարանի վարչությունը 1923 թ. հոկտեմբերի 25-ին որոշում է ընդունում հրատարակել «ՀՍԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսնում 1925 թ., իսկ մինչ այդ՝ 1924 թ. մարտին, լույս էր տեսել «Նոր ուսանող» ամսագրի անդրանիկ և միակ համարը: Սրանք էլ հիմք են դառնում համալսարանի պարբերական հրատարակությունների համար: Առաջինից մինչև 1930 թ. լույս է տեսնում 6 համար, որոնցում տպագրվում են բնագիտական ու հումանիտար բնույթի՝ համալսարանի դասախոսների գրչին պատկանող աշխատություններ: 1933 թ. այն բաժանվում է բնագիտական, հումանիտար ու հասարակական գիտությունների առանձին սերիաների, որոնք լույս են տեսնում մինչև 1967 թ.՝ կրելով «Գիտական աշխատություններ», «Աշխատություններ» անվանումները: Հիշյալ ժամանակաշրջանում լույս են տեսել «Գիտական աշխատությունների» 100-ից ավելի հատորներ, որոնք բովանդակում են համալսարանում մշակվող գիտական բոլոր ճյուղերի հիմնական արդյունքները: Այդ սերիաներով են տպագրվել նաև Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» առաջին երկու հատորները (1942, 1944) և մի շարք այլ արժեքավոր աշխատություններ:

Պետք է ասել, որ մինչև համալսարանի հրատարակչության ստեղծումը լույս են տեսել 150 մամուլ ծավալով 50 անուն գրքեր: Միայն 1922 թ.՝ հրատարակությունների սկզբնավորման առաջին տարում, տպագրվել է 60 մամուլ ծավալով գրականություն:

1927 թ. մարտի 31-ին համալսարանի վարչությունը հաստատում է հրատարակությունների հետ կապված տպագրական-տեխնիկական աշխատանքները վարող և հրատարակությունների տարածման գործը կազմակերպող խորհուրդը: Այդ թվականն էլ հենց համարվում է Երևանի համալսարանի հրատարակչության հիմնադրման տարին: Եվ ստեղծված այդ մարմինն էլ դառնում է այն հիմքը, որի վրա աստիճանաբար ձևավորվում է համալսարանի հրատարակչությունը: Դրանից հետո ավելի է կանոնավորվում հրատարակչական գործը համալսարանում: Բավական է նշել, որ այդ տարիներին են տպագրվել Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» խմորատիպ 6 հատորները (1925-1935 թթ.), իսկ վերջին 7-րդ հատորը լույս է տեսել տպագիր եղանակով, «Պարսկերեն լեզվի ձեռնարկը», «Գրաբարի ուսուցիչը», «Քննություն

պոլսահայ բարբառից»-ը, «Հայոց լեզվի պատմության» առաջին հատորը (1940 թ.) (երկրորդը տպագրվել է 1951 թ.), Մանուկ Աբեղյանի «Հին գուսանական ժողովրդական երգերը», «Գրաբարի քերականությունը», «Հայոց լեզվի տեսությունը», Արսեն Տերտերյանի «Հայ նոր գրականության պատմությունը», Լեոյի «Հայոց պատմության» 2-րդ հատորը, Գրիգոր Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը», «Ուրարտուի պատմությունը», Սյրտիչ Սյրյանի «XIII-XVIII դարերի հայ աշխարհիկ գրականությունը» ժողովածուն, «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյանկին նվիրված գիրքը, Գուրգեն Էղիլյանի «Հոգեբանության ձեռնարկը», Գարեգին Լևոնյանի կազմած «Հայ աշուղները», Ստ. Ղամբարյանի, Ավետիք Տեր-Պողոսյանի և այլ մեծանուն գիտնականների բազմաթիվ աշխատությունները: Այդ գրքերը ոչ միայն ուսումնական ձեռնարկներ էին, այլև գիտական մեծարժեք հետազոտություններ, որոնցով էլ հիմք էր դրվում խորհրդահայ լեզվաբանության, պատմագրության, գրականագիտության, մանկավարժության, հոգեբանության ու հայերենագիտության զարգացմանը, ասպարեզ էր գալիս ճշգրիտ գիտությունների հայկական դպրոցը:

Համալսարանի ընդլայնման հետ մեկտեղ մեծ ծավալ է ստանում գիտական հետազոտությունների հրատարակությունը: Նախապատերազմյան տարիներին այնտեղ հրատարակվում էր 250 մամուլ ծավալով գրականություն: Սակայն Հայրենական մեծ պատերազմի շրջանում այդ ծավալն արդեն իջնում է 20-30 մամուլի: Չնայած դրան՝ այդ տարիներին էլ տպագրվում են մի քանի հայրենասիրական գրքեր, որոնցից են Արսեն Տերտերյանի «Աբովյանի ստեղծագործությունը», «Հայ հայրենասեր գրողները Թումանյանի հայրենասիրական պոեզիան, Աղայանը և ժողովրդական հերոսությունը», «Հայ կլասիկներ» աշխատությունները, Հրաչյա Աճառյանի հիմնատորանոց «Հայոց անձնանունների բառարանի» երկու հատորները և այլ մեծարժեք ուսումնասիրություններ, ինչպես նաև Կ. Պոսսեի և Ի. Պրիվալովի «Դիֆերենցիալ հաշվի դասընթացը»:

Հետպատերազմյան շրջանում ավելի է մեծանում Երևանի համալսարանի հրատարակչությունը: Այդ բանին նպաստում է նաև տպարանի կազմավորումը, որը սկսում է գործել 1947 թվականից: Դրանից հետո համալսարանի բոլոր հրատարակությունները տպագրվում են սեփական

տպարանում, որի կարողությունները 1947 թ. 250 հազար թերթ-տպածոյից 1960-ական թվականներին հասնում են 5 միլիոնի:

Այդ տարիներին են տպագրվել Էդուարդ Ադայանի «Հայ լեզվաբանության պատմության» երկու հատորները, Սկրտիչ Սկրյանի «Գրիգոր Նարեկացի», Սերոբ Ղազարյանի «Հայոց գրական լեզվի պատմություն», Գևորգ Ջահուկյանի «Հին հայրերենի հոլովման սխառենը և նրա ծագումը», Էդվարդ Ջրբաշյանի «Թումանյանի պոեմները», Գուրգեն Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», «Հայոց լեզվի պատմություն» արժեքավոր գրքերը և այլ մենագրություններ:

1960-ական թթ. համալսարանի հրատարակչության գործունեությունը դառնում է ավելի նպատակալաց: Այդ շրջանում են լույս տեսնում Էդուարդ Ադայանի «Լեզվաբանության ներածություն», Էդվարդ Ջրբաշյանի «Գրականության տեսություն», Հովհաննես Մաղաքյանի «Հանքաբանություն», Արշակ Թովմասյանի «Սովետական քրեական իրավունք», Աղասի Եսայանի «Միջագային իրավունքի դասընթաց», Բենիկ Թումանյանի «Հայ աստղագիտության պատմություն», Արտաշես Շահինյանի «Անալիտիկ ֆունկցիաների տեսություն», Վաչե Սաղաթեյանի «Բարձրագույն մաթեմատիկայի դասընթաց», Լյուդվիգ Սիրոյանի «Աստղագիտություն» դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները և բազմաթիվ այլ արժեքավոր աշխատություններ ու թարգմանական գրքեր: Միայն 1964-1970 թթ. համալսարանը հրատարակել է 420 անուն գիրք՝ 3490 մամուլ ծավալով և 1.1 միլիոն տպաքանակով, որից ինքնուրույն ու թարգմանական ուսումնական գրականությանը բաժին էր ընկնում 210 անունը՝ 1736 մամուլ ծավալով և 450 հազար տպաքանակով: Դրանց թվում են Մխիթար Ջրբաշյանի «Ֆուրյեի ձևափոխությունները», Սկրտիչ Սկրյանի «Մովսես Խորենացի», Վահան Ռշտունու «Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության», Թադևոս Հակոբյանի «Հայաստանի պատմական աշխարհագրություն» ուսումնական ձեռնարկները, «Հայ ժողովրդի պատմություն» քառահատորյակը և այլն: Պետք է ասել, որ մինչև 1970 թ. համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել 260 անուն հայագիտական աշխատություններ՝ 3372 մամուլ ծավալով:

Երևանի համալսարանի հրատարակչությունը 1964-1968 թթ. կոչվել է «Միտք»: Այդ մակնիշով տպագրվել են 300-ից ավելի գրքեր ու ժողովա-

ծուներ: 1969 թվականից հրատարակչությունը դարձյալ կրում է իր նախկին անվանումը: Նրա հրատարակած գրքերի մեջ նորից գերակշիռ մաս են կազմում հայագիտական աշխատություններն ու դասագրքերը: Մինչև 1980-ական թթ. համալսարանի հրատարակչությամբ լույս են տեսնում «Հայ ժողովրդի պատմություն» միհատորյակը (հայերեն և ռուսերեն), «Հայ մշակույթի նշանավոր գործիչները» ժողովածուն՝ հայերեն և ռուսերեն, Սկրտիչ Սկրյանի «Հայ հին գրականության պատմություն», Հրանտ Թամրազյանի «Սովետահայ գրականության պատմություն», Թադևոս Հակոբյանի «Երևանի պատմություն» քառաստոր և «Անիի պատմություն» երկհատոր աշխատությունները, Հրաչյա Աճառյանի «Բանասիրական ուսումնասիրություններ», Հենրի Գաբրիելյանի «Հայ փիլիսոփայության պատմություն», Գևորգ Խրոպյանի «Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն», Նիկողայոս Ադունցի «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում», Ալ. Սուքիասյանի «Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն», Արշակ Թովմասյանի «Հայ հին և միջնադարյան քրեական իրավունք» (երկհատոր), Սկրտիչ Ներսիսյանի «Դեկաբրիստները Հայաստանում», Գևորգ Ջահուկյանի «Գրաբարի քերականության պատմություն», Հովհաննես Բարսեղյանի «Խոսքի մասերի ուսմունքը», Ռաֆայել Իշխանյանի «Արևելահայ գրական լեզվի պատմություն», Հրանտ Պետրոսյանի «Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության» և շատ այլ գրքեր:

1970-ական թվականներից Երևանի համալսարանի հրատարակչությունը դասագրքերի և ուսումնական ձեռնարկների լույսընծայման հետ մեկտեղ հիմք է դնում մի շարք մատենաշարային հրատարակությունների, որոնցից են՝ «Հայագիտական հետազոտությունների մատենաշար», «Ուսանողի գրադարան», «Ռուս դասական գրողները և ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունը» և այլն:

«Հայագիտական հետազոտությունների մատենաշարով» տպագրվել են Անտուան Մեյեի «Հայագիտական ուսումնասիրությունները», Գալուստ Տեր-Սկրտչյանի «Հայագիտական ուսումնասիրությունները» (1-ին հատոր), Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» չորս հատորները, «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» երկհատոր կոթողային բառարանը և ուրիշ գրքեր:



«Ռուս դասական գրողները և ՄՍՀՄ ժողովուրդների գրականությունը» մատենաշարով լույս են տեսել «Գորկին և ՄՍՀՄ ժողովուրդների գրականությունը», «Գորկին և Հայաստանը», «Խոսք Ավետիք Իսահակյանի մասին», «Պուշկինը և ՄՍՀՄ ժողովուրդների գրականությունը», «Տոլստոյը և ՄՍՀՄ ժողովուրդների գրականությունը», Լերմոնտովի, Գոգոլի, Չեխովի, Մայակովսկու և ռուս դասական մյուս գրողների ստեղծագործությունների քննությանը նվիրված ժողովածուները: Հիշյալ գրքերը, ինչպես նաև պարբերաբար լույս տեսնող «Գեղարվեստական թարգմանություն» ստվարածավալ ժողովածուները տպագրվում են ռուսերեն:

Հարուստ է նաև «Ուսանողի գրադարան» մատենաշարը: Այդ մատենաշարով արդեն տպագրվել են Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու և հայ մյուս մատենագիրներից մի քանիսի երկերը: Առաջին անգամ ճշգրտված և ամբողջական տեսքով հիշյալ մատենաշարով լույս են տեսել Սայաթ-Նովայի «Տաղերը», Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին»: Տպագրվել են նաև Հոմերոսի «Իլիականը», Դանթեի «Աստվածային կատակերգությունը», Շիլլերի «Պատմական դրամաները», «Գերմանական նովելները», «Ֆրանսիական պոեզիա», «Վրացական պոեզիա», «Սփյուռքահայ բանաստեղծություն», «Սփյուռքահայ պատմվածք» (երկու հատորով), «XX դարի արտասահմանյան դրամատուրգիա» (երկու հատորով), «Ռուս սովետական պատմվածք» (երկու հատորով), «Հին Արևելքի պոեզիա», «XX դարակերպի ռուսական պոեզիա» և այլ արժեքավոր գրքեր:

Երևանի համալսարանի հրատարակչությունը վերջին շրջանում լույս է ընծայել մի շարք արժեքավոր բառարաններ, որոնցից են Աշոտ Մուրիասյանի և Սերգեյ Գալստյանի «Հայ-ռուսերեն դարձվածաբանական բառարանը», Պողոս Պողոսյանի և Ռուբեն Մեքրումյանի «Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարանը», Արտաշես Պապոյանի «Պարույր Սևակի չափածոյի բառարանը» (երկու հատորով), և «Պարույր Սևակի աշխատությունների և թարգմանությունների բառարանը», Հովմիկ Սարգսյանի «Երկրաբանական տերմինների ռուս-հայերեն բառարանը», Ռուբեն Ղազարյանի «Բուսանունների բազմալեզվյան բառարանը», Թադևոս Հակոբյանի, Ստեփան Մելիք-Բախչյանի և Հովհաննես Բարսեղյանի կազմած քառահատոր «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը», որի առաջին հատորն արդեն

հրապարակի վրա է, Ռուբեն Ղազարյանի և Հենրիկ Ավետիսյանի երկ-  
հատորանոց «Միջին հայերենի բառարանը», որի առաջին հատորը  
հրատարակվել է, և 2-րդն էլ շուտով լույս կտեսնի:

Համալսարանի հրատարակությամբ լույս են տեսել նաև մի շարք  
քրեստոմատիաներ, որոնցից արժեքավոր են «Հայ հին և միջնադարյան  
բանաստեղծության քրեստոմատիան», «Հայ հին և միջնադարյան ար-  
ձակի քրեստոմատիան», «Հայ գրական քննադատության քրեստոմա-  
տիան», «Հայոց լեզվի պատմության քրեստոմատիան» և այլն:

Համալսարանի հրատարակչությունը 1982 թվականից ունի երկու  
խմբագրություն՝ ուսումնական և գիտական գրականության: Սրանցից  
յուրաքանչյուրը տարեկան տպագրում է 40 ամսուհից ավելի մենագրու-  
թյուններ ու ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր ու բառարաններ:

Երևանի համալսարանի հրատարակչությունն է իրականացնում  
նաև «Բանբեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություն-  
ներ), «Գիտական տեղեկագիր» (բնական գիտություններ), «Երևանի  
համալսարան» (գիտաինֆորմացիոն) քառամսյա հանդեսների լույսըն-  
ծայումը: Համալսարանի հրատարակությամբ 1965-1983 թթ. լույս է տե-  
սել նաև «Երիտասարդ գիտաշխատող» կիսամյա հանդեսը՝ բնագիտա-  
կան և հասարակագիտական ու հումանիտար գիտությունների սերիա-  
ներով:

Ներկայումս համալսարանի հրատարակչությամբ պարբերաբար  
լույս են տեսնում մի շարք միջբուհական գիտական ժողովածուներ,  
որոնցից են՝ «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզուներ և ար-  
տասահմանյան գրականություն», «Մեխանիկա», «ՍՄԿԿ պատմության  
հարցեր», «Արևելագիտության հարցեր» և այլն, որոնք ի մի են բերում  
հանրապետության բուհերում կատարվող գիտահետազոտական աշխա-  
տանքները:

Երևանի համալսարանի հրատարակչությունն այսօր մեր հանրա-  
պետության գիտական գրքերի և ամսագրերի հրատարակման կարևոր  
օջախ է: Նրա կարողություններն այժմ կրկնապատկվել են: Եթե 1953 թ.  
հրատարակչությունը լույս է ընծայել ընդամենը 38 ամուն գիրք՝ 518 մա-  
մուլ ծավալով, ապա 1987 թ. հրատարակվել է 113 ամուն գիրք՝ շուրջ  
1159.1 մամուլ ծավալով և 259.7 տպաքանակով: Մոտավոր հաշվարկում-  
ներով հրատարակչությունն իր սկզբնավորումից մինչև այսօր լույս է ըն-

ծայել շուրջ 2500 անուն գիրք՝ 300000 մամուլ ծավալով, 1.2 միլիոն ընդհանուր տպաքանակով:

Համալսարանի հրատարակչությունը 1979 թ. Խորհրդային Սիւրբյան համալսարանական հրատարակչությունների խորհրդի անդամ է: Այդ խորհրդի նպատակն է կոորդինացնել առ այսօր մեր երկրում գործող համալսարանական հրատարակչությունների գործողությունը, համախմբել նրանց ջանքերը՝ համալսարանական գիրքը էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու համար:

Հրատարակչության գործունեությունը ղեկավարում է խմբագրական-հրատարակչական խորհուրդը, որի նախագահն է համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը:

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՆ\***

Երևանի պետական համալսարանը, ուսումնագիտական հաստատություն լինելուց բացի, նաև մեր հանրապետության բուհերի ու գիտահետազոտական ինստիտուտների համար գիտամանկավարժական ուրակյալ կադրեր պատրաստող հիմնական դարբնոցն է: Համալսարանի ասպիրանտուրան իր գոյության 42 տարիների ընթացքում երկրին տվել է 1300-ից ավելի շրջանավարտներ, որոնց մի մասը ներկայումս Սիւրբյան ու հանրապետության գիտությունների ակադեմիաների ակադեմիկոսներ ու թղթակից-անդամներ են, դոկտոր-պրոֆեսորներ ու գիտության թեկնածուներ, շատերն էլ դարձել են գիտության ու մշակույթի վաստակավոր գործիչներ, անվանի գրողներ ու արվեստաբաններ: Այս առումով բավական է նշել այն փաստը, որ ներկայումս համալսարանում դասախոսող 9 ակադեմիկոսների, 22 թղթակից-անդամների, 70 դոկտոր-պրոֆեսորների և 324 գիտության թեկնածուների ու դոցենտների ճնշող մեծամասնությունը կազմում են համալսարանի նախկին ասպիրանտները: Բացի այդ՝ հանրապետությունում չկա գիտահետազոտական մի հիմնարկություն ու բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ աշխատելիս չլինեն համալսարանի ասպիրանտուրան ավարտած կադրերը:

---

\* «Երևանի համալսարան» լրատու, 1970, թիվ 8, էջ 37-40:

Համալսարանի հիմնադրման առաջին տարիներից ստեղծվում են նոր ամբիոններ ու ֆակուլտետներ, ավելանում են մասնագիտություններն ու մասնագիտացումները, և բնականաբար զգացվում է նոր դասախոսների կարիք: Գիտական կադրերի այդ պակասը լրացնելու համար համալսարանում 1923 թ. հիմնադրվում է, այսպես կոչված, առաջ քաշված ուսանողների ինստիտուտը, որի նպատակն էր ուսանողական նստարանից ճանաչել սովորողների գիտական ունակությունները և նրանցից լավագույններին նախապատրաստել դասախոսական աշխատանքի համար: Առաջադիմությամբ աչքի ընկնող ուսանողներին պահում էին որպես լաբորանտներ ու ասիստենտներ: Նրանք, աճելով ու ձեռք բերելով դասախոսական փորձ, համալրում էին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը: Այդպիսի շրջանավարտներից Գյուլատնտեսական ֆակուլտետից համալսարանում պահվեցին Հովհաննես Չափիկյանը, Գեղամ Աղաջանյանը, Նշան Մալաթյանը (1925 թ.), Էզրաս Հասրաթյանը (1926 թ.), Եղիշե Մովսիսյանը, Հրանտ Բատիկյանը (1927 թ.) և Գագիկ Դավթյանը (1929 թ.), Բժշկական ֆակուլտետից՝ Լևոն Հարությունյանը և Գրիգոր Մուշեղյանը (1926 թ.), Մանկավարժական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժնից՝ Վրույր Թորգոմյանը, Գարեգին Պետրոսյանը, Տեխնիկական ֆակուլտետից՝ Կոստանդին Ասատուրը և ուրիշներ<sup>36</sup>: Համալսարանի հիմնադիր գիտնականները հոգատարությամբ էին շրջապատում նրանց, ներդնում էին իրենց բոլոր ունակություններն ու գիտելիքները՝ այդ երիտասարդներից պատրաստելու բարձրորակ մասնագետներ, և դրանով իսկ նպաստում համալսարանի ուսումնական ընթացքի լավ կազմակերպմանը:

Սակայն, չնայած դրան, օրավուր աճող ու ընդլայնվող համալսարանը դասախոսական կադրերի մեծ կարիք էր զգում: Ուստի 1928 թվականի սեպտեմբերին Երևանի պետական համալսարանում բացվում է ասպիրանտուրան: Առաջին տարում նրան տրվում է 8 տեղ:

Համալսարանի վարչությունը 1928 թ. հոկտեմբերին հաստատում է ֆակուլտետների կողմից ասպիրանտուրայի նշված ութ տեղերի համար

---

<sup>36</sup> Համալսարանի ասպիրանտուրայի՝ սկզբնական շրջանի գործունեության վերաբերյալ այս և մյուս տեղեկությունները վերցված են Լ. Ղարիբջանյանի «Երևանի պետական համալսարանը (1920-1930 թթ.)» գրքից (Երևան, 1965):

ներկայացված առաջին թեկնածուներին: Առանց ընդունելության քննությունների ասպիրանտուրա է ընդունվում Մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնի շրջանավարտ Աբգար Հովաննիսյանը՝ ընդհանուր պատմության գծով, (ղեկավարներ՝ Հ. Գյուլիքևսյան, Հ. Ազատյան): Նույն բաժնի շրջանավարտ Արարատ Ղարիբյանը դառնում է Հ. Աճառյանի ասպիրանտը՝ լեզվի պատմության գծով: Համալսարանի առաջին ասպիրանտներն են դառնում նաև Սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետի շրջանավարտ Հենրի Գաբրիելյանը՝ պատմական մատերիալիզմի գծով, Պատմագրական ֆակուլտետի շրջանավարտ Նորայր Դաբաղյանը՝ ընդհանուր գրականության գծով, Գյուղատնտեսական ֆակուլտետի շրջանավարտ Հովաննես Չաթիկյանը՝ քիմիայի գծով, Վարդան Գուլբանյանը՝ մասնավոր երկրագործության գծով, և Հարություն Փանոսյանը՝ գյուղատնտեսական բակտերիոլոգիայի գծով:

Հաջորդ ուսումնական տարվանից ավելանում է ասպիրանտների թիվը: Տեխնիկական ֆակուլտետից ընդունվում է Լիպարիտ Ծարակյանը, Գյուղատնտեսական ֆակուլտետից՝ Ամալյա Ազատյանը, Մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնից՝ Գուրգեն Վանանդեցին, իսկ 1930 թվականին՝ Սկրտիչ Սկրյանը, Գուրգեն Սևակը, Արամ Ղանալանյանը և ուրիշներ:

1930 թ. ՄՍՀՄ-ում բարձրագույն կրթությունը վերակառուցվում է: Այդ պատճառով Միության մի շարք համալսարանների, ինչպես և Երևանի համալսարանի ֆակուլտետների հիմքի վրա ստեղծվում են ինքնուրույն մասնագիտական ինստիտուտներ: Այդ տարիներին դասախոսական կադրերի կարիքը շատ մեծ էր, որովհետև հանրապետությունում արդեն գործում էին մի քանի բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ իրենց առանձին բաժիններով: Այս անգամ էլ դասախոսների այդ պակասը լրացնելու ուղղությամբ մեծ գործ է կատարում համալսարանի ասպիրանտուրան:

Սակայն եթե հայագիտության ու հասարակագիտության գծով առաջին ասպիրանտները կրթվում ու գիտության մեջ հմտանում էին այնպիսի հոչակավոր գիտնականների մոտ, ինչպիսիք էին Հակոբ Մանանդյանը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Արսեն Տերտերյանը, Լեոն, Գրիգոր Ղափանցյանը, Հայկ Գյուլիքևսյանը, Թադևոս Ավդալբեկյանը, Հայկ Ազատյանը և ուրիշներ, ապա դրությունն այլ էր ֆիզի-

կամաքեմատիկական և բնական մյուս գիտությունների գծով ասպիրանտների համար, որոնց պատրաստումը կապված էր մեծ դժվարությունների հետ: Բայց պետք է ասել, որ այդ առարկաների գծով հայ առաջին մասնագետները՝ Հարություն Անժուրը, Ստեփան Ղամբարյանը, Վահան Արծրունին, Բահաթուր Բահաթրյանը, Հովհաննես Նավակատիկյանը, Լևոն Ռոտինյանը, Արշակ Տոնյանը, Աշոտ Տեր-Սկրտչյանը և ուրիշներ նույնպես կարողացան աճեցնել շատ ուսանողների, որոնք ասպիրանտուրա ընդունվեցին Մոսկվայում, Լենինգրադում և Ռուսաստանի մյուս գիտական կենտրոններում: 1930-ական թվականներին համալսարանի մի խումբ լավագույն շրջանավարտներ այդ վայրերն են մեկնում՝ իրենց գիտական մկրտությունը ստանալու: Դրանցից են այժմ ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոսներ, կենսաբան Նորայր Սիսակյանը, բուսաբան Միքայել Չալլախյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ, ԵՊՀ մաքեմատիկական անալիզի ու ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչ, պրոֆ. Արտաշես Շահինյանը, քիմիական ֆիզիկայի ճանաչված մասնագետ Արամ Նալբանդյանը, ագրոքիմիկոս Գագիկ Դավթյանը, գենետիկայի անվանի գիտակ Գեղամ Աղաջանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ, քիմիկոս Արաքսի Բաբայանը, ֆիզիկոս Նորայր Քոչարյանը (1906-1967 թթ.), դոկտոր-պրոֆեսորներ, ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի ղեկավար և գենետիկայի ամբիոնի վարիչ Հրանտ Բատիկյանը, մաքեմատիկոսներ Գարեգին Պետրոսյանը, Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր Արմենակ Վարդանյանը, քիմիկոս Մամիկոն Դարբինյանը (1908-1969 թթ.), անվանի ճարտարապետներ Հովհաննես Մարգարյանը, Մարկ Գրիգորյանը, Սամվել Սաֆարյանը և ուրիշներ: Ասպիրանտների այդ խմբին են պատկանում համալսարանի բժշկական ֆակուլտետի նախկին սաներ, Երևանի պետական բժշկական ինստիտուտի դասախոսներ, նշանավոր գիտնականներ, ՀՍՍՀ ԳԱ վոլխնախազահ, բիրքիմիայի ինստիտուտի տնօրեն Հրաչյա Բունիաթյանը, ՍՍՀՄ ԲԳԱ թղթակից-անդամ Լևոն Հարությունյանը, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ Պարթև Մարգարյանը, Վերգինե Միքայելյանը, Գարեգին Միրզոյանը, Բագրատ Սայադյանը, Վահան Սարգսյանը և ուրիշներ:

Այստեղ պետք է երախտագիտության խոսք ասել նաև Մոսկվայի ու Լենինգրադի բուհերի դասախոսների՝ միութենական ու համաշխարհ-

հային ճանաչում ստացած այնպիսի գիտնականների մասին, ինչպիսիք են ՍՍՀՄ ԳԱ նախագահ Մ. Կելդիշը, մաթեմատիկոսներ Ի. Պրիվալովը, Վ. Սմիրնովը, Դ. Մենշովը, Բ. Լևիտանը, Ի. Ելֆանգը, ֆիզիոլոգներ Լ. Օրբելին, Ի. Պավլովը, ֆիզիկոսներ Խ. Տամմը, Դ. Բլոխինցևը, Ի. Բարովսկին և ուրիշներ, որոնք հոգատարությամբ ու սիրով էին շրջապատում հայ երիտասարդներին, ջանք չէին խնայում նրանցից բարձրորակ մասնագետներ պատրաստելու համար: Այդ անձնուրաց մարդկանց անունները այսօր ակնածանքով են հիշում ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Մերգելյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Շահինյանը, Է. Հասարթյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Գ. Սահակյանը, Ալ. Թալալյանը, համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ Վ. Սաղաթելյանը և մյուսները, որոնք տարբեր ժամանակներում բախտ են ունեցել ասպիրանտական շրջանն անցնելու նրանց ղեկավարությամբ:

Ժամանակի գիտության նվաճումներին քաջատեղյակ այդ երիտասարդները վերադառնում էին Հայաստան ու ծավալում գիտական լայն գործունեություն: Նրանց ջանքերով հանրապետության նորաստեղծ գիտական օջախներում ու բուհերում աճեցին մեծ թվով նոր մասնագետներ: Այդ տեսակետից մեծ է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Շահինյանի վաստակը: Նա, 1937 թվականին ավարտելով Լենինգրադի համալսարանի ասպիրանտուրան, գալիս է Երևան: Այստեղ՝ համալսարանում, սկսվում է նրա գիտական գործունեությունը: Անցած երեք տասնամյակից ավելի տարիների ընթացքում նա մեծ գործ է կատարել Հայաստանում մաթեմատիկոս կադրերի պատրաստման ուղղությամբ: Այսօրվա ճանաչված հայ մաթեմատիկոսների կեսից ավելին եղել են նրա սաները, այսպես՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մլխիթար Ջրբաշյանը ասպիրանտուրան ավարտել է նրա ղեկավարությամբ: Ի դեպ, Մ. Ջրբաշյանը առաջինն էր, որ 1945 թ. մեր համալսարանում պաշտպանեց մաթեմատիկայի գծով առաջին թեկնածուական ատենախոսությունը: Ա. Շահինյանի ղեկավարությամբ են իրենց դիպլոմային աշխատանքները պաշտպանել նաև ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, հետագայում համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի ղեկան Ալեքսանդր Թալալյանը և այլք:

1930-ական թվականներին գիտության մեջ իրենց առաջին քայլերն էին անում համալսարանի անդրանիկ ասպիրանտները: 1939 թվականին հայ գրականության գծով առաջինը ատենախոսություն է պաշտպանում Մ. Սկրյանը: Հին սերնդի անվանի գիտնականների հետ նրանք, բացի գիտամանկավարժական աշխատանքից, ձեռնամուխ են լինում նաև երիտասարդ գիտնականների պատրաստման գործին: Գ. Ղափանցյանի առաջին ասպիրանտ, հետագայում ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գուրգեն Սևակը մինչև այսօր գիտաշխատողի ուղեգիր է տվել 50-ից ավելի ասպիրանտների, որոնք այժմ մեծանուն գիտնականներ են: Երկու տասնյակից ավելի հայ և օտարազգի մարքսիստ փիլիսոփաների ուսուցիչն է եղել համալսարանի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, պրոֆ. Հ. Գաբրիելյանը: Բազմաթիվ գրականագետ գիտնականներ է պատրաստել ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ղեկան, հայ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆ. Մ. Սկրյանը: Այդ նույն 30-ական թվականներից մինչև իր մահը (1970 թ.) ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, պատմաբան Վահան Ռշտունին համալսարանում ղեկավար ու խորհրդատու է եղել գիտության 20 դոկտորների ու 30-ից ավելի թեկնածուների համար: Հայաստանում քիմիկոսների աճեցման գործում զգալի ավանդ ունի ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Հ. Չաթիկյանը: Երկար տարիներ աշխատելով Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում՝ համալսարանի առաջին ասպիրանտ, հետագայում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ար. Ղարիբյանը պատրաստել է մեծ թվով լեզվաբան-գիտնականներ: Մեծ թվով պատմաբաններ, կենսաբաններ, գյուղատնտեսներ ու ագրոքիմիկոսներ են աճեցրել և գիտնականի ուղեգիր տվել համալսարանի առաջին ասպիրանտներ, հետագայում ակադեմիկոսներ Ար. Հովհաննիսյանը, Գ. Դավթյանը, Վ. Գուլքանյանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Հ. Փանոսյանը:

Համալսարանի ասպիրանտուրայի՝ 1930-ական թվականների անվանի գիտնականներ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, պատմաբան Սկրտիչ Ներսիսյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ, լեզվաբան Գևորգ Ջահուկյանը, դոկտոր-պրոֆեսորներ, պատմաբան Վարդան Պարսամյանը, գրականագետներ Արամ Ինճիկյանը, Ռուսեթ Հովհաննիսյանը, Գուրգեն Հովնանը և ուրիշներ:



Համալսարանի դրությամբ չափազանց ծանրանում է Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Ռազմաճակատ են մեկնում մեծ թվով համալսարանականներ՝ ուսանողներ, ասպիրանտներ ու դասախոսներ: Ասպիրանտուրայում ընդունելություն քիչ է կատարվում: Սակայն, չնայած դրան, այդ ծանր տարիներին ևս համալսարանի ասպիրանտուրան տալիս է իր շրջանավարտները, որոնցից են հետագայում ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, լեզվաբան Էդ. Աղայանը, դոկտոր-պրոֆեսորներ, գրականագետներ Վաչե Պարտիզունին, Սուրեն Աղաբաբյանը և այլք:

Պատերազմի ավարտից հետո դասախոսների մի զգալի մասը վերադառնում է խաղաղ աշխատանքի: Նրանք համալսարանում նոր թափով են սկսում իրենց սիրած գիտամանկավարժական գործը: Այդ տարիներին շատերն ավարտում են կիսատ թողած ուսումը: Մի խումբ լավագույն շրջանավարտներ էլ ընդունվում են ասպիրանտուրա: Այդ տարիների ասպիրանտներից են այժմ դոկտոր-պրոֆեսորներ Էդուարդ Ջրբաշյանը, Ստեփան Մելիք-Բախշյանը, Փայլակ Ենգոյանը, Արշակ Վարդապետյանը, Մեհենդակ Մելիքյանը, Ներսես Թովմասյանը, Հրանտ Թամրազյանը և այլք:

Վերջին տարիներին համալսարանի ասպիրանտուրայի շրջանավարտներից դոկտորական ատենախոսություն են պաշտպանել Պետրոս Բեգիրզանյանը, Բենիկ Թումանյանը (ֆիզիկոսներ), Վարազդատ Խղաբաբյանը (տնտեսագետ), Սահակ Բազյանը, Վաչե Նալբանդյանը, Լևոն Մկրտչյանը, Գարիկ Հովհաննիսյանը (բանասերներ), Սերգեյ Բալասանյանը (երկրաբան), Գարսևան Շառոյանը (պատմաբան), Սարգիս Ավագյանը (քիմիկոս), Հայկ Բաղալյանը (մաթեմատիկոս), Լիա Հովսեփյանը (կենսաբան) և ուրիշներ:

Համալսարանի ասպիրանտուրայի՝ 1950-ական թվականների շրջանավարտներից ևս այսօր շատերն են ճանաչված գիտնականներ, որոնք պաշտպանել են դոկտորական ատենախոսություններ: Առանձնապես այդ տարիներին են ասպարեզ գալիս մեծ թվով քիմիկոսներ, ֆիզիկոսներ, կենսաբաններ, իրավաբաններ, երկրաբաններ, տնտեսագետներ, մաթեմատիկոսներ, աշխարհագրագետներ: Նրանք միջին սերնդի գիտնականների հետ այսօր մեծ աշխատանք են կատարում թե՛ ուսումնական և թե՛ գիտամանկավարժական կադրերի պատրաստման ասպարեզում:

Սակայն համալսարանի ասպիրանտուրան վերելք է ապրում՝ սկսած 1960 թվականից: Այդ ժամանակ համալսարանում արդեն կային մեծ թվով անվանի գիտնականներ, ավելացել էին ֆակուլտետներն ու բաժինները, բացվել էին նոր ամբիոններ: Ուստի և գիտական կադրերի պատրաստման գործը դրվում է ավելի ամուր հիմքերի վրա:

Վերջին տասը տարում բավականին ընդլայնվել են համալսարանի ասպիրանտուրայի շրջանակները, բացվել են նոր մասնագիտացումներ: Բավական է ասել, որ 1961 թվականից առ այսօր համալսարանի ասպիրանտուրան ավարտել են 483 ասպիրանտներ, որոնցից 150-ը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, և մի այդքանն էլ ներկայացրել են կամ պատրաստ են պաշտպանության: Միայն 1969 թ. ընթացքում համալսարանում պաշտպանվել են 13 դոկտորական և 63 թեկնածուական ատենախոսություններ, որոնցից 33-ը եղել են համալսարանի աշխատակիցները:

Այժմ համալսարանի 80 ամբիոնների գրեթե բոլոր մասնագիտացումներով պատրաստվում են երիտասարդ գիտնականներ: Ներկայումս ասպիրանտուրայում ուսուցումը տարվում է երեք ձևով՝ արտադրությունից կտրված, արտադրությունից չկտրված և նպատակային: Մեծ ուշադրություն է դարձվում տնտեսական խիստ կարևոր նշանակություն ունեցող և տեխնիկական գիտությունների գծով մասնագետների պատրաստմանը: Այդ մասնագիտություններն են բիոֆիզիկական, գեոֆիզիկական, կիսահաղորդիչների ֆիզիկական, բիոքիմիան, մոլեկուլյար գենետիկական, ֆունկցիաների տեսությունը, տնտեսագիտական կիրառական, տեսական կիրառական, աստրոֆիզիկական, մաթեմատիկական տրամաբանությունը, մեխանիկական և այլն: Ասպիրանտուրայի միջոցով մեծ թվով գիտնականներ են պատրաստվում նաև մարքսիստական փիլիսոփայության, քաղաքատնտեսության, ՍՄԿԿ պատմության, հոգեբանության, տրամաբանության, հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության, ժողովրդաբանության, գրականության, մանկավարժության, ընդհանուր պատմության, ազգագրության և իրավագիտության գծով:

Համալսարանի ասպիրանտուրան կադրեր է պատրաստում ոչ միայն իր, այլև Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական, Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական և Լենինականի ու Կիրովականի մանկավարժական ինստիտուտների համար:

Համալսարանի ասպիրանտուրան ժամանակին ավարտել են և այժմ էլ սովորում են մեծ թվով սփյուռքահայ ու օտարազգի երիտասարդներ:

Այժմ մեծ ուշադրություն է դարձվում նաև գիտության նորագույն բնագավառների համար գիտական և մանկավարժական կադրերի պատրաստման աշխատանքների վրա, որը հաճախ իրագործվում է մեր ասպիրանտներին Միության գիտական խոշոր կենտրոններ գործուղելու միջոցով: Փոխադարձաբար մեր համալսարանում են պատրաստվում կամ կատարելագործվում ՍՍՀՄ այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների ասպիրանտներ: Մեր համալսարանի և արտասահմանյան բուհերի ու գիտահետազոտական հիմնարկների միջև վերջին տարիներին տեղի են ունենում ստաժորների փոխանակումներ: Մեր անվանի գիտնականների մոտ որակավորվել են Ֆրանսիայից, Չեխոսլովակիայից, Հունգարիայից, Բուլղարիայից, Լեհաստանից եկած երիտասարդ մասնագետներ, ինչպես և մեր դասախոսները եղել են նրանց գիտահետազոտական հիմնարկներում:

Համալսարանի բազմաթիվ ասպիրանտների գիտական ղեկավարությունը սիրով իրենց վրա են վերցրել Միության ու մեր հանրապետության մի շարք խոշորագույն մասնագետներ, ինչպես, օրինակ, Նոբելյան մրցանակի դափնեկիր, հայտնի ֆիզիկոս Ն. Բասովը, Լենինգրադի պետական համալսարանի երկրաչափության ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Դ. Ֆադեևը, Նովոսիբիրսկի տնտեսագիտական ինստիտուտի տնօրեն և տեղի համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Ա. Աղանբեկյանը, ակադեմիկոսներ Մ. Չայլախյանը, Մ. Տեր-Կարապետյանը, Ա. Թախթաջյանը, Ս. Մերգելյանը, Ն. Հարությունյանը, Է. Հարաթյանը, Աշ. Հովհաննիսյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Դ. Բաբայանը, Վ. Թառայանը, Արշ. Գաբրիելյանը, Գ. Սևակը, Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Մ. Սկրյանը, դոկտոր-պրոֆեսորներ Հ. Բատիկյանը, Էդ. Ջրբաշյանը, Հ. Թամրազյանը, Աշ. Աբրահամյանը և շատ ուրիշներ:

Ասպիրանտների համար համալսարանում ստեղծված են լաբորատոր-փորձնական աշխատանքի լավ պայմաններ: Լուծված է նաև ասպիրանտների գիտական աշխատանքների տպագրության հարցը. դեռևս 1965 թվականից տարին երկու անգամ լույս է տեսնում «Երիտա-

ասարդ գիտաշխատող» հանդեսը՝ բնական և հասարակական գիտությունների սերիաներով: Նրանում հրատարակվում են ասպիրանտների լավագույն գիտական ուսումնասիրություններն ու հոդվածները:

1969-70 ուսումնական տարվա տվյալներով համալսարանի ասպիրանտուրայում սովորում է 229 ուսանող, որից 183-ը՝ արտադրությունից կտրված: Բացի դրանից՝ ասպիրանտուրային կցված են նաև 100-ից ավելի դիսերտանտներ: Թե՛ ասպիրանտների և թե՛ դիսերտանտների թեմաները վերաբերում են ժամանակակից գիտության հրատապ հարցերին և տեսական ու գործնական մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Բոլոր ասպիրանտներն էլ ունեն անհատական պլաններ, գիտական հաշվետվություններ, որոնց հիման վրա աշխատում են հաջողությամբ: Շատերը նույնիսկ ժամկետից շուտ են հանձնում թեկնածուական միջնորդներն ու իրենց ատենախոսությունները ներկայացնում են պաշտպանության: Ամեն ամիս պարբերաբար կազմակերպվում է մարքսիստական փիլիսոփայության և օտար լեզվի թեկնածուական միջնորդների հանձնում:

Համալսարանի շատ ամբիոններ ապագա ասպիրանտների հետ աշխատանքը սկսում են դեռևս նրանց ուսանողական տարիներից: Բարձր կուրսերի լավագույն ուսանողներին, որոնք ունեն գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակություն, նախապատրաստում են ասպիրանտուրա ընդունելու համար: Եվ այդպիսիք համալսարանն ավարտելուց անմիջապես հետո ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշմամբ իրավունք են ստանում առանց աշխատանքային ստաժի մասնակցելու ասպիրանտուրայի ընդունելության քննություններին: Այս մեթոդով ասպիրանտուրան համալրվում է բանիմաց ու խելացի երիտասարդներով:

Ավարտելով Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայի անցած ուղի ուսումնառող պատմությունը՝ վերջում պետք է ավելացնել, որ չնայած մեր մի շարք բուհերում ու ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում գործում են ասպիրանտուրաներ, բայց համալսարանի ասպիրանտուրան նորից մնում է Հայաստանի ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների և ուսումնական հաստատությունների համար երիտասարդ շնորհալի գիտնական մասնագետներ պատրաստող հիմնական օջախը: Եվ ասպիրանտուրայի բաժինը համալսարանի

ռեկտորատի ու գիտական մասի անմիջական ղեկավարությամբ և բոլոր ամբիոնների ու դեկանատների աջակցությամբ ձեռնարկում է միջոցառումներ՝ կրկնապատկելու ասպիրանտների հաջողությունները և վերացնելու այն թերությունները, որոնք ծագում են նրաց ուսման ու գիտահետազոտական աշխատանքների ընթացքում:

## **ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅՈՒՆԸ\***

Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանն իր ծավալով ու գրքային ֆոնդերով հանրապետության բուհական գրադարանների մեջ զբաղեցնում է առաջին տեղը, իսկ ՀՀ ազգային և գիտությունների ակադեմիայի գրադարաններից հետո երրորդն է: Նրա գրքային ֆոնդերում հաշվարկված են շուրջ երկու միլիոն անուն գիրք ու հանդես:

1994 թ. հոկտեմբերի 10-ին շահագործման հանձնվեց ԵՊՀ գրադարանի յոթհարկանի ընդարձակ համալիրը, որն այսօր իր հարմարություններով ու տարածքով բավարարում է միջազգային համալսարանական առաջատար գրադարան լինելու բոլոր պահանջները:

Գրադարանի շենքը շահագործման հանձնելիս շատ խնդիրներ դեռ լուծված չէին, չկային համապատասխան գրապահարաններ ու սեղաններ, դեռևս օգտագործվում էր գրեթե շաքից դուրս եկած հին կահույքը: Այդ ժամանակ էր, որ համալսարանի գիտական գրադարանին օգնության հասավ Շվեյցարիայում բնակվող մեծահարուստ Իզմիրյանների ընտանիքը, որի ազգապահպան գործունեությունը հայտնի է ոչ միայն Սփյուռքում, այլև Հայաստանում:

Երջանկահիշատակ հայրենասերներ Սարգիս և Մարի Իզմիրյան ամուսինների արժանավոր ժառանգ Տիգրան Իզմիրյանը, իր ծնողների հայրենանվեր գործին հետևելով և տեղեկանալով, որ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանը չունի համապատասխան գույք և արդի պահանջները բավարարող տեխնիկական միջոցներ, ցանկություն է հայտնում օգնելու և ամեն ինչ անելու գրադարանի բոլոր կարիքները բավարարելու համար: Այդ նպատակով նա Երևանի պետական համալսարանին է տրամադրում մեկ միլիոն ամերիկյան դոլար՝ դրա մի

\* «Հանդես Երևանի համալսարանի», 1994, թիվ 3, էջ 61-72:

մասով անհրաժեշտ գույք (ընթերցողական սեղաններ, աթոռներ, բազկաթոռներ, պահարաններ, գրադարակներ, սայլակներ և այլն) ու սարքավորումներ (համակարգիչներ, կապի միջոցներ, պատճենահանող, տպագրող ու գիրք կարող մեքենաներ և այլն) ձեռք բերելու, իսկ մյուս մասով շահույթ ստանալու և այդ շահույթի հաշվին հետագայում գրադարանի կարիքները հոգալու համար:

S. Իզմիրյանի այդ նվիրատվությամբ լուծվեցին համալսարանի գիտական գրադարանի շատ խնդիրներ: Դեռևս անցյալ տարի ԱՄՆ-ում գնվել ու համալսարան է բերվել ամենաբարձր համարում ունեցող 34 «Փենթիում» և երկու «Սան» մակնիշի տեխնիկական սարքավորումներ: Գնվել են նաև 112 հազար դոլար արժողությամբ համակարգիչներ, որոնք կարճ ժամանակում մոնտաժվել և արդեն իսկ օգտագործվում են գրքերի մուտքագրման ու ծրագրավորման աշխատանքներում, որոնք կավարտվեն առաջիկա 3-4 տարիների ընթացքում: Ի վերջո, բոլոր ընթերցասարահներում ու աշխատասենյակներում կտեղադրվեն համակարգիչներ, իսկ բաժանորդագրման բաժնում՝ ինը համակարգիչներ, որոնք ընթերցողներին հնարավորություն կտան մի քանի լուսանկարներ գտնելու, պատվիրելու ու ստանալու իրենց անհրաժեշտ գրքերը, թերթերը կամ հանդեսները: Նույն հազեցվածությունը կունենան նաև համալրման ու մշակման բաժինները, որտեղ անհամեմատ արագ և որակով կկատարվի նոր հրատարակությունների մուտքագրումը:

Այդ աշխատանքները որակյալ ու բարձր մակարդակով կատարելուն նպաստելու ուղղությամբ գրադարանում կազմակերպվել են դասընթացներ՝ գրադանավարներին համակարգչային տեխնիկային ծանոթացնելու, համակարգիչներով աշխատելու համար մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ ուսուցանելու նպատակով:

Մյուս կարևոր խնդիրը համացանցային համակարգի հետ կապի հաստատումն է, որի միջոցով ԵՊՀ գիտական գրադարանը դուրս կգա միջազգային ասպարեզ: Մի քանի տարի հետո, երբ կիրականացվեն այդ բոլոր ծրագրերը, գրադարանը հանրապետության բոլոր բուհերի գրադարանների համար կդառնա համահավասար քարտազրման կենտրոն, կլինի հանրապետության հիմնական ու ամենակարևոր տեղեկատվական օջախներից մեկը, որի համակարգը թույլ կտա 25 լեզուներով փնտրումներ կատարել աշխարհի շատ համալսարանների գրադարան-

ներում՝ անհրաժեշտ գիրքն ու պարբերականը գտնելու և ընթերցողին հասցնելու համար:

Այս ամենով հանրապետության մայր բուհի գիտական գրադարանը դառնում է աշխարհի համալսարանական առաջատար մշակութային կենտրոններից մեկը: Եվ դա՝ շնորհիվ Տ. Իզմիրյանի ազգանպաստ ու հայրենանվեր գործունեության:

\* \* \*

Հունիսի 9-ին համալսարանում տեղի ունեցավ մեծ հանդիսություն՝ նվիրված գրադարանի անվանակոչությանը: Գրադարանի շքեղ ճեմասրահում, որի մուտքին հայերեն ու անգլերեն ոսկետառ գրված է «Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գիտական գրադարան», բարձր փակցված են բարերարների մեծադիր, գեղազիր դիմանկարները:

Այստեղ էին հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը, Սահմանադրական դատարանի և Ազգային ժողովի նախագահներ Գ. Հարությունյանն ու Բ. Արարքցյանը և շատ այլ բարձրաստիճան ղեկավարներ, արտասահմանյան հյուրեր, բազմաթիվ ուսանողներ ու դասախոսներ, համալսարանի ռեկտորատի անդամներ, ինչպես նաև Ս. և Ի. Իզմիրյանների հարազատներն ու մտերիմները՝ Տ. Իզմիրյանի գլխավորությամբ:

Հանդիսությունը բացեց ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը: Նա իր խոսքում բարձր գնահատեց Իզմիրյան գերդաստանի ազգանպաստ ծառայությունները, ապա շնորհակալություն հայտնեց նվիրատուին՝ համալսարանին ցույց տված մեծ օգնության համար:

Այնուհետև ելույթ ունեցավ Պատմության ֆակուլտետի ղեկան, պրոֆ. Բ. Հարությունյանը, որը երիտասարդության ուսումնառության, բարձրագույն կրթության ու գիտության զարգացման ճանապարհին կարևորեց գրադարանների, մասնավորապես՝ համալսարանական գրադարանի դերը, խոսեց Երևանի պետական համալսարանի հարուստ գրքային ֆոնդերի նպատակասլաց օգտագործման մասին՝ միաժամանակ շնորհակալություն հայտնելով Իզմիրյանների ընտանիքին մեծ նվիրատվության և ԵՊՀ գիտական գրադարանը միջազգային ասպարեզ հանելու գործում ցուցաբերած աջակցության համար:

Ձերն ընդունվեց մաս ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Պետրոսյանի խոսքը, որն ուսանողությանն ուղղված հորդոր էր՝ ժամանակին խորանալու գրքերի անեզր օվկիանոսում և այնտեղից հանելու անհրաժեշտ գիտելիքներ՝ հետագայում դրանք մարդկության առաջընթացին ծառայեցնելու նպատակով:

Պատմության ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանողուհի Բ. Յախշյանը համալսարանի ողջ ուսանողության անունից շնորհակալություն հայտնեց Իզմիրյան գերդաստանին՝ գրադարանին ցույց տված օգնության ու օժանդակության համար, և հավաստեց, որ իրենք կսովորեն բարձր առաջադիմությամբ, կդառնան լավ մասնագետներ և դրանով իսկ կարդարացնեն թե՛ դասախոսների և թե՛ բոլոր նրանց հույսերը, ովքեր համալսարանի հետ են կապում հայոց գիտության ու կրթության հետագա բարգավաճումը:

Ամենայն հայոց կաթողիկոսը՝ Գարեգին Առաջինը, նշեց՝ Երևանի պետական համալսարանի տարեգրության մեջ հունիսի 9-ը պետք է գրանցել որպես «Իզմիրյանների օր»: Շարունակելով իր ելույթը՝ հայոց հայրապետը բարձր գնահատեց Իզմիրյան տոհմի հայրենամիտ ծառայությունները, նվիրվածությունը հայոց հավատին ու եկեղեցուն: Վերջում Վեհափառը, դիմելով ուսանողությանը, ասաց. «Հոգևոր հաց ճաշակեցեք և Իզմիրյան ընտանիքին հիշեցեք»:

Հանդիսության ընթացքում մեծ ուշադրությամբ լսվեց մաս սփյուռքահայ ճանաչված գործիչ Ժակ Սարգսյանի ելույթը, որը տպագրվում է որոշ կրճատումներով:

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ մեծ բարեգործի որդին՝ Տիգրան Իզմիրյանը (նրա խոսքը տպագրվում է ամբողջությամբ):

Հանդիսությունից հետո անվանակոչության մասնակիցները և հյուրերը շրջեցին գրադարանի մասնաշենքում, եղան տեխնիկայով հագեցած և լավ կահավորված ընթերցասրահներում ու առանձնասենյակներում, համակարգչային կենտրոնում և այլուր, ծանոթացան կատարած ու կատարվող աշխատանքներին:



## ԺԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Նորին վեհմտքին Հայաստանի Հանրապետության նախագահ, Վեհափառ հայրապետ, գերաշնորհ սրբազան և սիրելի Բարեկամներ. եթե երբեք Սարգիս Իզմիրլեան պահ մը հրաշքով իր աչքերը բանար կեանքին և նայեր շրջակայքը, տեսնէր պետական համալսարանի գիտական գրադարանին գլխատր սրահին մէջ իր և իր կողակիցին նկարը, վերահասու ըլլար անուանակոչութեան այս հանդիսութեան՝ ներկայութեամբ հանրապետութեան նախագահին, Վեհափառ հայրապետին, պետական անձնատրութեանց, գիտնականներու և մտաւորականներու և նաև... ներկայութեամբ իր իսկ զուակներուն, Սարգիս Իզմիրլեանի աչքերը պիտի լեցուէին հրճուանքի, գոհունակութեան և հպարտութեան արցունքով:

Այդ արցունքին մշուշէն պիտի վերադառնար իր անցեալը. տխուր յիշատակներու շարան մը՝ 1986 թ. Կիլիկիոյ ջարդերէն իր մազապուրծ ազատումը, 1899 թ. Ժամանումը Եգիպտոս և առօրեայ մը վաստակելու համար ի գործ դրած իր հսկայ ճիգերը, անկումներն ու յուսախաբութիւնները, մաքառումներն ու մերթ ալ... յաջողութիւնները:

Իրմէ առաջ Եգիպտոս բնակութիւն հաստատած հայեր պիտի յորդորէին եկտրը՝ տեղացիի հովեր առնելով, թէ անկարելի էր դիրք մը ապահովել Գահիրէի մէջ, ապա անհրաժեշտ էր իջնել աւելի խորերը՝ Սուտան: Սուտանի մէջ նոյն կարծիքն ու թելադրութիւնը. մեկնիլ դէպի հարաւ, այսինքն՝ Ավրիկէի խորերը: Խորերը մեկնեցաւ Սարգիս Իզմիրլեան և մնաց առանձին, թող լքուած, առանց լքելու սակայն իր ժողովուրդին լեռնակուտակ հոգերը և իր անսահման հայրենասիրութիւնը: Հայրենասիրութիւն ըսինք-Սարգիս Իզմիրլեանի ամենէն յատկանշական նկարագրի գիծը իր հայրենասիրութիւնն էր: Իմացական, խորացուած հայրենասիրութիւն մը, որ կը հակադրուի զգացականին, կը նոյնանայ բանականին՝ հուսասարակչուած, գործնական ողջմտութիւն մը ներարկելով քաղաքական և հասարակական իր հայացքներու մէջ: Իր քաղաքական հայացքները ամփոփուած են երկու իրարայաջորդ գրքոյկներու մէջ. «Դատումներ մեր հարիւրամեայ ցեղասպանութեան մասին»:

Յայտնապէս Սարգիս Իզմիրլեան ականատես եղած է Ժամանակակից մեր պատմութեան զարգացումին և դառնութեամբ հաստատած է,

թէ մեր դժբախտութիւններու գլխավոր պատասխանատուները ուրիշներ չէին, եթէ ոչ տուեալ շրջանի մեր այսպէս կոչուած քաղաքական առաջնորդները: Իր երկու գրքոյկներու սեւեռուն գաղափարն է, թէ մենք ցեղասպանութեան զոհ պիտի չըլլայինք, եթէ երբէք ճիշտ ձևով գնահատէինք իւրաքանչիւր պատմական հանգրուանի քաղաքական և ընկերային իրադրութիւնը և ըստ այնմ կողմնորոշուէինք պատճառի և արդիւնքի հստակատեսութեամբ: Երկու գրքոյկներուն մէջ հեղինակը մեծ քաջութեամբ կը հակադրուի ցարդ մեզի պարտադրուած աւանդական տեսութեանց, թէ թրքահայ ազատագրական շարժումը չէր կրնար ուրիշ ընթացք և ուղիութիւն որդեգրել, թէ թուրքը որոշած էր մեզ բնաջնջել՝ յեղափոխականներ և յեղափոխութիւն ըլլային կամ ոչ: Հեղինակը կընդգծէ, թէ XX դարու սկզբին մեր հաշուեկշիռը ամբողջովին ժխտական էր, լի ծանր կորուստներով և բազմաթիւ անտեղի զոհերով, ըստ անոր՝ մենք ունեցած ենք յեղափոխականներ, այսինքն՝ ազատամարտիկներ, բայց ոչ յեղափոխութիւն: Յեղափոխութիւն, այսինքն՝ ազատագրական շարժումը, խոշոր սխալ մըն էր, հիմնովին սխալ, որովհետև ո՛չ արտաքին պայմանները թույլատրելի էին մեր դատին յաջողութեան, ո՛չ ալ մեր ժողովուրդը պատրաստ էր թոքափելու իր լուծը: Հեղինակը կը հետևցնէ, թէ նման ձեռնարկ մը յաջողցնելու համար անհրաժեշտ էր համբերել, յուսալ, պատրաստուիլ և ընտրել յարմարագոյն թիրախն ու ժամանակը:

Ըստ Սարգիս Իզմիրլեանի՝ մեր «յեղափոխութիւն»-ը կամ ազատագրական պայքարը եղած է շինծու, ապսպրուած, անյարմար և անոր ի նպաստ ո՛չ պարարտ հող, ո՛չ կարողութիւն, ո՛չ ալ տարրական միջոցներ գոյութիւն ունեցած են: Անոր արդիւնքը. բազմաթիւ նահատակներ, որոնց մէկ մասը՝ կուսակցականի գնդակով կամ դանակով: Չոհե՞ր. մեկ միլիոնէ աւելի, որոնց մնացորդները կը շարունակեն իրենց տաժանելի մահը... ճերմակ ջարդով:

Հաստատելու համար իր վարկածը ան կը պատասխանէ, աւելի՛ կը դիմէ հարցումին և կը խնդրէ մոլեռանդ կուսակցականներուն և անոնց հետևորդներուն, որ «խոկալու, տրամաբանելու, ձանձրոյթը» յանձն առնեն ու անաչառօրէն պատասխանեն հետևեալ հարցումներուն.

Ա. Թրքահայ ժողովուրդը 1890-ական թթ. մտատրապէս հասուն և պատրաստ էր ազատագրական շարժման: 1901-1902 թուականներուն

Սասունի լեռներէն գրուած Անդրանիկի մամակները ժողովուրդը կ'որակէին «անգիտակից» և իր վիճակին «անտարբեր»:

Բ. XIX դարու վերջավորութեան և XX դարու սկզբին քաղաքական ձեռնառու պայմաններ գոյութիւն ունէին, որոնք երաշխիքներ ընծայէին մեզի և մեր պահանջատիրութեան՝ արժանանալու համար որևէ մեծ պետութեան թիկունքին՝ ընդդէմ թուրք կառավարութեան:

Գ. Մեր քաղաքական կուսակցութեանց կողմէ որդեգրուած ռազմավարութիւնն ու մարտավարութիւնը կը համապատասխանէի՞ն, պատշա՞ճ էին տուեալ ժամանակի հրամայականներուն, երբ մեծ պետութիւններէ դիւանագիտական ճամփով արտաքին միջամտութիւն ապահովելու համար կազմակերպուած իւրաքանչիւր ցոյց կը յանգէր ընդհանուր ջարդերու և տեղահանութեանց, կուսակցութիւնները պարտաւոր չէ՞ին որդեգրելու աւելի խոհեմ և իմաստուն գործելակերպ:

Հեղինակը իմաստուն գործելակերպի օրինակ կը յայտարարէ, ի հակադրութիւն բազմաթիւ պատմագէտներու և անհատ մտածողներու, թէ ծանօթ հայ կուսակցութեան մը համագործակցութիւնը երիտասարդ թուրքերու հետ կրնար ըլլար արդիւնատու, եթէ երբեք կարենայինք թուրքերը համոզել, թէ բարեկարգութիւնները թէ՛ մեզի, թէ՛ իրենց անհրաժեշտ էին կանգուն պահելու համար Թուրքիան՝ փոխանակ անջատուած Հայաստանի մը հաւանականութիւնը կախելու անոնց գլխուն վերև՝ Դամոգլեան սուրի պէս:

Այս սկզբունքէն մեկնելով՝ ի՞նչ է Սարգիս Իզմիրլեանի գնահատականը մեր կուսակցութեանց, մեր քաղաքական մարմիններու, ի՞նչ է իր ախտաճանաչումն ու դեղատոմսը: Հարցը բանականացնելով՝ ան կը մեկնի այն սկզբունքէն, թէ մեծ տերութիւնները միայն «անձնասէր» և «շահամոլ» շարժառիթներով կը գործեն և տիրապետական մպատակներով կը մտածեն: Այս գուգահեռը ունենալով որպէս հիմք՝ մեր պատմութեան մեջ Խրիմեան Հայրիկի «Երկաթէ շերտի» առակը ի յառաջագունէ դատապարտուած էր ձախողութեան, որովհետև, փոխանակ Նուպար փաշան և արհեստավարժ դիւանագէտի մակարդակով, Ներսէս պատրիարքին պատուիրականութիւնը կը կազմուի Խրիմեան Հայրիկով՝ մեծագոյն դէմքը ժամանակակից եկեղեցականութեան, սակայն անձանօթ օտար լեզուի, Խորէն արք. Նարպէյով՝ ֆրանսերէնի գիտակ, բայց ոչ դիվանագէտ և Սիմաս Չէրագով՝ 26-28 տարեկան երիտասարդ մը, որ Հայ-

կական հարցը պաշտպանուի եվրոպական խորամանկ դիւանագիտութեան առջև: Նուպար փաշան՝ ժամանակակից դարուն մեծագոյն մարդոցմէ մէկը, որ ծանօթ էր ժամանակաշրջանի բոլոր պետական անձնատրութեանց և յիշատակագիր մը պատրաստած էր օրուան պատրիարքին համար՝ առանց զգացնելու ռուսական աշխարհակալական ձգտումները և առանց գրգռելու բուրբական դիրքագացութիւնները, կը մնար դուրս այս պատուիրակութիւններէն և չէր հրաւիրուէր. հրաւիրուէր կամ ոչ, Սարգիս Իգմիրլեան կը հետևցնէ, թէ նկատի առնելով, որ մեծ տէրութիւններէն իրաքանչիւրը բուրբ կառավարութիւնը սիրաշահելու հետամուտ էր՝ անկէ առանձնաշնորհումներ և ազդեցութեան գօտիներ ապահովելու, Հայկական խնդրին հետապնդումը տուեալ պայմաններու մէջ վնասակար ըլլալու սահմանուած էր:

Իր դեղատոմսը. տուեալ շրջանի հայոց բովանդակ ջանքը պետք է կենտրոնանար ուսման մակարդակի բարձրացման և տնտեսական բարգաւաճումին վրայ:

Ըլլալով ուշիմ առևտրական և խորապէս ճանչնալով որևէ գործառնութեան մէջ կորստի վտանգը՝ Սարգիս Իգմիրլեան Հայկական հարցը դիտած է կարելիին, գործնականին, ապահովին սահմաններու մէջ՝ իր հայացքներն ու մտտեցումը տրամագծորէն հակադրելով բարձրադասակ ցուցամոլութեան, անիրագործելի յեղափոխականութեան և մանաւանդ անպատասխանատու կուսակցամոլութեան: Այս հայտարարին տակ կարելի է բերել կարգ մը արկածախնդրական դէպքեր, որոնք բաւական սուղ արժեքին մեր ժողովրդին: Սարգիս Իգմիրլեան նշած է Գոմ Գափուի և Պապը Ալիի ցոյցերը, Պանք Օթոմանի գրաւումը և ուրիշներ: Դիշտ կողմնորոշումի որոնումին մէջ հեղինակը կը վկայաբերէ զօրավար Անդրանիկի օրինակը և անոր նման ուրիշներ, որոնք, հայրենասիրական պարտականութիւն նկատելով, ընտրած են մակերեսային հեղափոխականութիւնն ու կուսակցականութիւնը: Բայց ժամանակ մը վերջ վորձառութիւնը և ողջմտութիւնը հաղթահարած է զգացումներէ տարուած հայրենասիրութեան, և վերջիններու մտտեցումը եղած է աւելի նպատակասլաց և խոհեմ: Խոհեմ, այո՛, բայց ինչպիսի՞ քաղաքականութիւն վարել բուրբին և քուրդին անիրաւ պահանջներուն դիմաց. Սարգիս Իգմիրլեան կը թելադրէ «Ակն ընդ ական և ստամն ընդ ստաման» սկզբունքը, որպէսզի մեր գիւղացիութիւն չկեղեքուէր: Յայտնապես Սարգիս Իգմիր-

լեանի համար հարցին էութիւնը խաղաղապաշտութիւնը չէր, ոչ ալ՝ տկարամտութիւնը, այլ ուղեգծի անշեղելի ճշգրտութիւնը, իրադրութեան ճիշտ գնահատումն ու համապատասխան միջոցներու կիրարկումը: Անոր համար նախապատրաստական յարմարագոյն ուղին պիտի հանդիսանար զինել ժողովուրդը ոչ թէ զենքով, այլ «ուսեալ գիտակցութեամբ», հաւաքական ինքնագիտացութեան ոգիով՝ անաղմուկ համբերատարութեամբ սպասելով լաւագոյն առիթի: Հետաքրքրական է նշմարել, որ կնճռոտ հարցերու Սարգիս Իզմիրլեան հեզասահ, անբռնագրոսիկ մտեցումը ունի, դէպքերն ու դրուագները չի դիտեր համակրողի կամ հակակրողի դիրքերէն, այլ կպատկերացնէ այնպէս, ինչպէս որ է, իսկ եթէ անհրաժեշտ է մանրագնէլ որևէ մանրութիւն կամ հստակեցնել միջամկեալ կէտ, այդ կը կատարուի ճշմարտութիւնը երևան հանելու դիտաւորութեամբ, սխալը ծաղրանկարի վերածելով՝ աւելի ակնհայտ դարձնելու մտահոգութեամբ: Նոյնպիսի ծաղրանկարային ակնյայտութեամբ Սարգիս Իզմիրլեան գուգահեռական մը կը քաշէ մեր և ավիրիկեան ժողովուրդներու միջև փաստելու համար մեր քաղաքականութեան կատարեալ ճախողութիւնը՝ միաժամանակ շեշտելու, թէ որքան կանոր է ընտրել նպատակը իրագործելու ժամանակը:

«Նայեցէք խաւարակոտ Ափրիկէի երեկուս անծանօթ ժողովուրդներու, որոնք ո՛չ գիր, ո՛չ մշակոյթ ունեցած էին, այսօր ոտքի են, անկախութիւն և ազատութիւն ունին, կը ճարեն, նոյնիսկ անոր համար կը սպառնան:

Ի՞նչպէս փոխուեցաւ դարը, ինչ որ ոճիր էր հարիւր առաջ, այսօր կը ստացուի իբր իրաւունք՝ անդրժելի իրաւունք: Որքան փոխուեցան մտածման կերպը, ուղին և քաղաքական պայմանները, եթէ միայն կարենան ինքնքր հարիւր տարի ևս սպրիլ մեր հայրենիքի մէջ»:

Դժբախտաբար Սարգիս Իզմիրլեանը ականատես չ'եղաւ մեր նորաստեղծ հայրենիքի իրականութեան, վերջին տարիներուն մղուած այլ տեսակի ազատագրական պայքարին և անոր հաջող ելքին: Եթէ կա բան մը, որ ցայտուն կերպով հասունցած է վերջին շրջանին, այդ մեր քաղաքական իմաստութիւնն է, քիչ ժամանակին մէջ ձեռք բերուած պետական մտածողութիւն մը, գոր կրնա իր ուղին գտնել ականուած քաղաքական միջավայրի մէջ: Վստահաբար Սարգիս Իզմիրլեանը պիտի ողջունէր նաև Հայաստանի ներկայ խոհեմ, ուշիմ և հեռատես քաղաքականութիւնը:

նը, որուն առանցքը բնական հարաբերութիւններու հաստատումն է դրանց երկրներուն հետ՝ հեռու գրգռութիւններէ և անպատասխանատու արարքներէ:

Ըսինք՝ պիտի ողջունէր, քանի որ բացառիկ հայու տիպար մըն էր Սարգիս Իզմիրլեանը. որքան՝ վարչագէտ, նոյնքան՝ դիվանագէտ: 32 երկար տարիներ անընդհատ նախագահած է Սուդանահայ գաղութին և իր նախագահութեան շրջանին հայերը բարձրացած են նախանձեղի դիրքերու՝ յարգուելով իշխանութիւններէն իբրև երկրին օգտակար տարր և սիրուելով բնիկ ժողովուրդէն: Շնորհիւ Սարգիս Իզմիրլեանի ճիգերուն Սուդանահայ գաղութը ընդունուած է իբրև ուրոյն համայնք տեղական օրինական իշխանութիւններէն, և այդ գաղութի ժառանգական հարցերու մէջ քաղաքային օրէնքը կիրարկուած է՝ հիմնուած Մշխիթար Գոշի «Դատաստանագրքի» ժառանգական օրէնքներու վրայ:

Սարգիս Իզմիրլեանը երկար տարիներ Խարթումի առևտրական գրասենեակը ներկայացուցած է Խարթումի քաղաքապետութեան խորհուրդի մէջ: Գաղութային շրջանին անգլիական կառավարիչը, օգտուելով Սարգիս Իզմիրլեանի գիտելիքներէն, հաճախ կարծիքներու փոխանակութիւն ունեցած է վերջինին հետ փոքրասանութեանց հարցերու վերաբերեալ: Տեղին է շեշտել, թէ ստուարածաւալ վկայականներով չէր զինուած Սարգիս Իզմիրլեան, այլ կեանքի փորձառութեամբ մը, որ իր ճշգրիտ ուղին կը գտնէ բնագոյի կողմնացոյցով, խոհեմութեամբ և խելացի քաղաքականութեամբ:

Սարգիս Իզմիրլեանի հայացքներուն կարող ենք ըլլալ համաձայն կամ ոչ, անոնք կրնան ըլլալ զուգահեռ մեր տեսակէտին կամ կրնան հակադրուիլ ընդունուած կամ մեզի պարտադրուած ըմբռնումներուն, այստեամենայնիւ մէկ բան բացարձակապէս հստակ է, թէ անոր ընդհանուր հայեցողութիւնը կը մեկնի բանականութենէ մը, որ ստեղծագործ գունատորում մը ունի, հարցերուն խորքը աստիճանաբար թափանցելու տրամաբանական մոտեցում մը, որ համոզիչ է, միաժամանակ՝ առարկայական:

Առարկայական կամ ոչ, Սարգիս Իզմիրլեան խոնարհութենէ բարձրացած է դէպի խորութիւն, համեստութենէ՝ դէպի մեծութիւն՝ գերազանցելով ինքզինք, բայց միշտ ականջալուր մեր ժողովուրդի ցաւերուն՝ միշտ ցաւելով մեր սայթաքումներէն և խանդավառուելով մեր իրագործումներէ:

րեն: Հայրենասէր էր ան և ազգասէր՝ բառին իսկական առումով հայրենասիրութիւն, որ նախապատի կը համարէ փոքր գործնական քայլը փոխան մեծադորոյ ճառերու, կամ կը նախընտրէ համեստօրէն քար մը աւելցնել՝ իր հայրենիքի կառուցմանն ի խնդիր: Տեղին է նաև աւելցնել, որ այս անուանակոչութիւնը հովանատրող մը ընթացքին պիտի խոստովանէր, թէ շատ բան տրուած էր իր հորմէն, բայց ամենէն կարևորն ու ամենէն թանկագինը հայրենասիրութիւնն էր:

Վստահաբար, այս անուանակոչութիւնը հսկայ քայլ մըն է՝ Սփիւռքէն դէպի հայրենիք երկարող, գործնական և արդիւնաբեր, որ կ'ազուցէ մեր ժողովուրդի երկու թևերը իրարու՝ երկու թևերուն համատեղ գործակցութեամբ: Եթէ երբեք այսօր Սարգիս Իզմիրլեան մարդը, մտածողը և հայրենասէրը պահ մը բանար իր աչքերը և հաստատէր, թէ իր արժանատի զաւակը՝ Տիգրան Իզմիրլեան, հայրենասիրութիւնը տրուած էր իրմէ և, հայրենասիրութեան մղումով, ֆինանսատրամ էր, որպէս առաջին արարք յետագայ աւելի լայն արձագանքներու, Երևանի պետական համալսարանի գրադարանին վերանորոգման, վերակառուցման և այժմեականացման ծախսերը, Սարգիս Իզմիրլեանի աչքերը պիտի լեցունէին հրճուանքի, գոհունակութեան և հպարտութեան արցունքով:

### **ՏԻԳՐԱՆ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍԲԸ\***

Պարոն նախագահ, Չե'րդ Սրբազնություն, տիկնա՛յք և պարոնա՛յք.

Այսօր Իզմիրլեան ընտանիքի համար մեծագույն օր է, և մենք շատ հպարտ ու երջանիկ ենք, որ մեզ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Երևանի պետական համալսարանի ռեկտոր պարոն Ռադիկ Մարտիրոսյանը հնարավորություն են ընձեռել կազմակերպելու գրադարանի կահավորումը և այն կոչելու ի պատիվ մեր երջանկահիշատակ ծնողների՝ Սարգիս և Մարի Իզմիրլեանների անունով:

Ես կուզենայի շնորհակալությունս հայտնել Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, Նորին Սրբությանը և բոլոր հյուրերին, ովքեր պատվեցին մեզ իրենց ներկայությամբ:

---

\* Ելույթը արտասանվել է ֆրանսերեն:

Մեր ընտանիքը վաղուց փափագում էր իրականացնել մեր ծնողների երազանքը՝ օգնել մեր հայրենակիցներին Հայաստանում կամ Սփյուռքում: Բազմաթիվ նախագծեր ուսումնասիրվեցին, և ես մտորումների մեջ էի, երբ ինձ գանգահարեց իմ լավագույն ընկերներից մեկը՝ Ժակ Սարգսյանը՝ մի մեծ ազգասեր, և ասաց, որ Շահե Սրբազանը գտնվում է իր մոտ և ցանկանում է հանդիպել ինձ հետ: Հանդիպումը տևեց մեկ ժամ, որի ընթացքում Շահե Սրբազանն ինձ ներկայացրեց Երևանի պետական համալսարանի գրադարանի կարիքները, որից հետո միայն որոշեցի, որ սա այն նախագիծն է, որը մենք փնտրում էինք: Ես տեղեկացրի Շահե Սրբազանին, որ իր միտքն արժանացել է իմ ընտանիքի մյուս անդամների հավանությանը ևս, և «Իզմիրյան» հիմնադրամը մեկ միլիոն դոլար է տրամադրում այդ նախագիծն իրականացնելուն:

Պարո՛ն նախագահ, Չե՛րդ Սրբազնություն, տիկնա՛յք և պարոնա՛յք, սրանից դուք կարող եք եզրակացնել, որ Շահե Սրբազանը ոչ միայն մեծագույն հոգևոր առաջնորդ է, այլ նաև մեծագույն առևտրական և արժանի գործարար անձ: Իմ ընտանիքի անունից շնորհակալություն եմ հայտնում Շահե Սրբազանին, որն ընձեռեց այս երանելի հնարավորությունը: Հավատարիմ մնալով իր տված խոստումին՝ նա մեծագույն օգնություն ցույց տվեց Ժակ Սարգսյանին՝ ապահովելով նախագծի իրականացման ժամանակն ու հաջողությունը: Իմ շնորհակալությունն եմ հայտնում նաև Ժակ Սարգսյանին, որը մեծագույն ոգևորությամբ, կամավոր կերպով իր մասնակցությունը բերեց նախագծի իրականացմանը: Վերջապես իմ երախտագիտության խոսքերն եմ ուղղում տեխնիկական աշխատողներին և վարպետներին, ովքեր օգնեցին իրականացնելու այս նախագիծը:

Ո՞վքեր են Սարգիս և Մարի Իզմիրյանները: Նրանք սովորական հայեր էին, որոնք միլիոնավոր հայերի նման ապրում էին Սփյուռքում: Ճակատագիրը նրանց իրար միացրեց Սուդանում, որտեղ և ամուսնացան 1913 թ. և երջանիկ ապրեցին ավելի քան 50 տարի:

Սարգիս Իզմիրյանը ծնվել է 1880 թ. Կեսարիայում: Նա իր ծնողների միակ որդին էր: Ուսում է ստացել Կեսարիայի Գյումուշյան վարժարանում՝ սովորելով հայերեն և թուրքերեն գրել-կարդալ: 1898 թ., երբ դառնում է 17 տարեկան, ծնողները որոշում են, որ Կեսարիայում իրենց որ-



դին ապագա չունի, և նրան ուղարկում են Եգիպտոս՝ մի հեռավոր ազգականի մոտ:

Սարգիսն այլևս չի տեսնում իր ծնողներին: Մի քանի տարի Եգիպտոսում մնալուց հետո որոշում է գնալ Սուդան: Դա 1902 թվականին էր, երբ Սուդանը վերանվաճվել էր անգլիական և եգիպտական զորքերի կողմից: Այնտեղ մեծ հնարավորություններ կային աշխատելու համար: Այնտեղ նա դրեց իր բիզնեսի հիմքը՝ ընկերությունը, որտեղ ես և իմ Ավետիս եղբայրն աշխատեցինք մինչև 1970 թվականը, երբ այն ազգայնացվեց ձախ կողմնորոշում ունեցող զինվորական կառավարության կողմից:

Սարգիս Իզմիրլյանը ավելի շատ ինքնակրթությամբ է զբաղվել, ինքնուրույն է սովորել արաբերեն և անգլերեն, տարբերակել ճիշտը և սխալը: Նա կրթված անձնավորություն էր՝ ազնիվ ու խելացի, մեծ ազգասեր և խոշոր գործարար՝ հարգված համայնքի կողմից: Եվ այս ամենի հետ պարզ և հասարակ անձնավորություն էր, հարգում էր մյուսների իրավունքներն ու ազատությունները: Ինչպես շատ հայեր, այնպես էլ նա հաճախ էր խոսում իր կյանքի վաղ շրջանի մասին, որն անցկացրել էր Կեսարիայում: Պատմում էր, թե որքան դժվար էր 17 տարեկան հասակում թողնել ծնողներին և գնալ հեռու երկրներ: Պատմում էր նաև իր սիրելիների նկատմամբ կատարված գազանությունների մասին, և նրա ձայնում չկար ատելության նշույլ անգամ: Վրեժխնդրությունն ու ատելությունը բնորոշ չէին Սարգիս Իզմիրլյանին: Հավասարակշռված անձնավորություն էր հայրս և համոզված էր, որ բոլոր հարցերը կարելի է լուծել համբերությամբ և բանականությամբ: Նա մեզ պատմում էր, թե ինչպես է կատարվել ցեղասպանությունը, և մենք ինքներս պիտի որոշեինք, թե այն ինչ չափով կազդեր մեր հետագա կյանքի, միմյանց միջև եղած, ինչպես նաև Հայաստանի հետ ունեցած մեր փոխհարաբերությունների վրա: Ես հավատացած եմ, որ մեր ընտանիքի կողմից Հայաստանին օգնելու նպատակով հատկացված՝ «Իզմիրլյան» հիմնադրամի ֆոնդն ակնհայտ ապացույցն է այն բանի, որ մենք մեր հայրերից ճիշտ ենք սովորել կյանքը:

Սարգիս Իզմիրլյանը նվիրված էր իր ընտանիքին և պատրաստ էր գոհաբերելու իրեն՝ հանուն կնոջ և երեխաների: 1913-1945 թթ. նա Սուդանի առևտրի պալատի պատվավոր քարտուղարն էր և այդ տարիներին անընդմեջ ընտրվել է Խարթումի ժողովի անդամ: 1913-1949 թթ. իր ծա-

ռայություններն է մատուցել Սուդանի հայկական համայնքին: 1917 թվականից շուրջ 32 տարի հայրս եղել է Սուդանի հայ գաղթօջախի վարչական մարմնի ատենապետը և այդ գաղթօջախը պաշտոնապես ներկայացրել է պետությանն ու արտասահմանին: Նրա խորհուրդներից բազմիցս օգտվել են բրիտանական ընդհանուր կառավարիչն ու Սուդանի հոգևոր առաջնորդ Աբդել Ռահման էլ Մահդին: Հայրս՝ Մարգիս Իգմիրյանը, վախճանվել է 1976 թվականին:

Մայրս՝ Մարի Քյուրքչյան-Իգմիրյանը (1894-1974), իսկական հայ մայր էր՝ հավատացյալ և նվիրված ամուսնուն ու երեխաներին: Ծնվել է 1892 թ. Կարպետում, որտեղից նրանց ընտանիքը տեղափոխվել էր Եգիպտոս և Սուդան: Ալեքսանդրիայում հաճախել է Մելքոնյան դպրոցը, իսկ հետագայում՝ Ստամբուլի «Ռոբերտ» վարժարանը: Նա հմայիչ, բարի, կամեցող և հավատարիմ կին էր, որն իրեն ամբողջությամբ նվիրեց իր ընտանիքին ու կրոնին և նույնը սերմանեց մեր մեջ: Մարգիս և Մարի Իգմիրյանները հպարտ էին իրենց հայ լինելով և այդ սերն ու հպարտությունը փոխանցեցին իրենց զավակներին:

Մարգիս և Մարի Իգմիրյանները կարողացան Հայաստան (Երևան) գալ միայն մեկ անգամ՝ 1962 թ., իմ քույրեր Սոնայի և Ալիսայի հետ: Նրանց ընդունեց Նորին Սրբություն Վազգեն Առաջինը: Նրանք Հայաստանից վերադարձան տխուր՝ համոզվելով, որ կյանքի պայմաններն այնպիսին չէին, ինչպիսին իրենք կուզենային տեսնել: Այդուհանդերձ, նրանք երջանիկ էին: Հայրիկս Հայաստանից բերել էր մի բուռ հող: Նա ասում էր. «Ես չեմ թաղվի իմ հայրենի հողում, գոնե այստեղ ինձ վրա կցնեք այս մի բուռ հողը»: Նրանց այցը Հայաստան և այնտեղ տեսած կյանքի վատ պայմանները նրանց մեջ էլ ավելի խորացրին հայրենիքի հանդեպ ունեցած իրենց սերը:

Իգմիրյանների ընտանիքը մտադիր է շարունակել Հայաստանին և սփյուռքահայերին ցույց տրվելիք օգնությունը: Դրա վառ ապացույցն է «Իգմիրյան» հիմնադրամը, որի առաջնային նպատակն է օգնել Հայաստանին, մասնավորապես՝ կրթության ասպարեզում:

AGBU-ի միջոցով այդ հիմնադրամը կատարել է նվիրատվություն, որից ստացված տարեկան եկամուտը կծառայի Երևանի պետական համալսարանի Մարգիս և Մարի Իգմիրյանների անվան գիտական գրադարանին: Ես և իմ ընտանիքի անդամները հույս ենք տաժում, որ

նույնիսկ մեր մահվանից հետո գրադարանը և՛ կհարատևի, և՛ իր մեծ ավանդը կունենա հայ երիտասարդության կրթության կազմակերպման գործում, որն էլ իր հերթին կնպաստի հզոր ու հարուստ հայրենիք և ազգ ունենալու գործին:

Կրկին իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Ձեզ, մեծարգո՛ նախագահ, Ձերո՞ Սրբազանություն, տիկնա՛յք և պարոնա՛յք, որ Ձեր ազնվագույն ներկայությամբ պատվեցիք Սարգիս և Մարի Իզմիրլյանների հիշատակը հավերժացնող այս մեծ արարողությունը՝ գիտական գրադարանի անվանակոչությունը:

### **ՀԱՆՁՆՎԵՑ ՊԱՏՎԱՎՈՐ ԳՈԿՏՈՐԻ ՎԿԱՅԱԳԻՐ**

Գիտական գրադարանի անվանակոչությունից հետո՝ նույն օրը, տեղի ունեցավ գիտխորհրդի ընդլայնված նիստ՝ նվիրված սփյուռքահայ ազգանվեր գործիչ Սարգիս Իզմիրլյանի որդուն՝ Տիգրան Իզմիրլյանին, «ԵՊՀ պատվավոր դոկտոր»-ի վկայագիր հանձնելու արարողությանը:

Նիստը բացելով՝ ԵՊՀ ռեկտոր, գիտխորհրդի նախագահ, ակադ. Ռ. Մարտիրոսյանը նշեց, որ գիտխորհրդի՝ 1996 թ. դեկտեմբերի 25-ի նիստի որոշմամբ Տիգրան Սարգիսի Իզմիրլյանին շնորհվել է ԵՊՀ պատվավոր դոկտորի գիտական աստիճան: Այսօր մենք, ըստ կանոնակարգի, հանդիսավոր պայմաններում նրան ենք հանձնում մեր համալսարանի գիտական այդ բարձր աստիճանի վկայագիրը: Այնուհետև ասաց ռեկտորը, որ Տիգրան Իզմիրլյանը, շարունակելով իր ծնողների հայրենանվեր, ազգանպաստ գործունեությունը, շատ բան է արել Սփյուռքի բարգավաճման ու հայապահպանության համար: Այժմ էլ նա մեծ նվիրատվություն է կատարել Երևանի պետական համալսարանին՝ օգնելով, որ մեր գրադարանը դառնա աշխարհի համալսարանական առաջատար գրադարաններից մեկը, կապ հաստատի բազմաթիվ գրադարանների ու գիտական կենտրոնների հետ: Քիչ առաջ՝ գրադարանի անվանակոչության հանդիսավոր արարողության ժամանակ, ելույթ ունեցողները շատ բան ասացին Իզմիրլյանների գերդաստանի, նրանց հայրենանվեր գործունեության մասին. մենք լսեցինք այդ գերդաստանի նահապետի՝ Սարգիս Իզմիրլյանի կյանքի առանձին մանրամասների մասին, որոնք ունեն

դաստիարակչական մեծ նշանակություն: Տիգրան Իզմիրլյանն այսօր իր հոր ավանդույթները շարունակողն ու հարստացնողն է, մի բան, որի առ-հավատչյան է նրա նվիրվածությունն իր հայրենիքին ու աշխարհա-սփյուռ հայությանը: Տիգրան Իզմիրլյանը կրթության ու գիտության զար-գացման գործի մեծ ջատագով է: Նրա բազմակողմանի հոգածությունը ԵՊՀ գիտական գրադարանի նկատմամբ մեզ թույլ է տալիս ասել, որ մեր գրադարանը կդառնա XXI դարի կրթությանը համապատասխանող խոշոր գիտական օջախ:

Տիգրան Իզմիրլյանը սփյուռքահայ գործարար աշխարհի ճանաչ-ված դեմքերից է, միջազգային տնտեսական կյանքում ունի զգալի ձեռք-բերումներ, որոնց հասել է կազմակերպչական բնատուր ճիղքի, անսպառ աշխատասիրության, ինչպես նաև համալսարանական գիտելիքների հարուստ պաշարի շնորհիվ: Նրա նկարագիրն ամբողջական է դառնում նաև մեծ հայրենասերի ու ազգային բարերարի բարձր հատկանիշներով ու բարոյականությամբ:

Ծնվել է 1926 թ. Սուդանի Խարթում քաղաքում՝ հայ նշանավոր ար-դյունաբերող Սարգիս Իզմիրլյանի ընտանիքում: Ավարտել է Ալեք-սանդրիայի անգլիական «Վիկտորիա» քոլեջը և ԱՄՆ-ի Քլինգի համալ-սարանի տնտեսագիտության ֆակուլտետը: Նա ավարտել է նաև Հար-վարդի առևտրական վարժարանը: 1970 թ. տեղափոխվել է Շվեյցարիա և հաստատվել Ժնևում:

Տ. Իզմիրլյանը շուտով Ժնևում հիմնում է երկու առևտրական հաս-տատություն՝ բամբակագույն մեքենաների և թղթի արտադրության: Նրա տնտեսավարական գործունեությունը 1978 թվականից ծավալվում է նաև ԱՄՆ-ում: Այստեղ նա հիմնադրում է մի շարք ընկերություններ: Այսօր էլ. Տ. Իզմիրլյանը գործարար ակտիվությամբ մասնակցում է աշխարհի մի շարք երկրների (ԱՄՆ, Բրազիլիա, Սուդան, Միջին Ասիայի հանրապե-տություններ և այլն) բամբակի արդյունաբերության գործընթացին, մաս-նագետի նուրբ դիտողականությամբ հետևում է միջազգային առևտրի ելևէջներին, գնահատում և կողմնորոշվում: Եվ պատահական չէ, որ նա տնտեսավարության, միջազգային առևտրի կազմակերպման գործում համաշխարհային մասշտաբով գործարար մասնագետի համբավ ունի:

Նա նաև միջազգային լայն ճանաչման արժանացած բարեգործ է, որն ապրում է ժողովրդի հոգսերով: Հայկական հիմնադրամի կայունու-

թյունը Սփյուռքում ապահովված է Տ. Իզմիրյանի ազգապահպան արարքով, որի նվիրատվության 75 տոկոսը նրա կողմից է կատարվում:

Տ. Իզմիրյանը 1995 թ. ստանձնել է նաև ԵՊՀ հովանավորությունը և, որպես առաջին քայլ, գիտական գրադարանին է տրամադրել մեկ միլիոն դոլարի նվիրատվություն, որը նյութական ու բարոյական մեծ խթան է դարձել հայոց գիտության բարգավաճման համար: Վերակահավորման և հատկապես տեխնիկական զինման, մեքենայացման միջոցով համալսարանի գիտական գրադարանը բարձրացնել միջազգային պահանջների մակարդակին, համակարգչային ցանցի շնորհիվ այն դուրս բերել համաշխարհային միջգրադարանային կապի ոլորտ՝ այս է հայրենանվեր բարեգործի երազանքը:

«Ահա այս ամենը նկատի ունենալով՝ նրան շնորհվել է ԵՊՀ պատվավոր դոկտորի գիտական աստիճան», - իր ելույթի վերջում ասաց ռեկտորը և Տիգրան Իզմիրյանին հանձնեց պատվավոր դոկտորի վկայագիրն ու ԵՊՀ հոբելյանական հուշամեդալ:

ԵՊՀ պատվավոր դոկտոր, պրոֆ. Շահե արք. Աճեմյանն իր շնորհավորական խոսքում ներկայացրեց ազգային բարերարին, ասաց, որ Տ. Իզմիրյանի նվիրատվությունը միայն դրամ չէ, այլ սրտի խոսք, միայն բարեգործ ձեռքի արարք չէ, այլ սրտի պարտք: Ուսանող սերունդները, մտնելով այս գրադարանի շենից ներս, կզգան ու կհիշեն Իզմիրյան ընտանիքի շռայլ բարեգործությունը:

Այս ողջույնի խոսք են ասում Ռուսաց բանասիրության և Պատմության ֆակուլտետների դեկաններ, ակադ. Լ. Սկրտչյանը և պրոֆ. Բ. Հարությունյանը, որոնք մեծարում ու արժևորում են Տ. Իզմիրյանի հայրենանվեր գործունեությունը:

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դոցենտ, ճանաչված գեղանկարիչ Հ. Հակոբյանը, ի հուշ հանդիսավոր պահի, նորընծա դոկտորին նվիրեց իր լավագույն նկարներից մեկը՝ ջերմ մակագրությամբ:

ԵՊՀ պատվավոր դոկտոր Տ. Իզմիրյանն իր պատասխան խոսքում շնորհակալություն հայտնեց ռեկտորին, գիտխորհրդի անդամներին՝ իր բարեգործությունը, տնտեսական, հասարակական-մշակութային գործունեությունը զնահատելու և իրեն գիտական այդ բարձր աստիճանին արժանացնելու համար: Նա նշեց նաև, որ ինքը միշտ կապված է եղել իր

Ժողովրդի ու հայրենիքի հետ, իսկ այսուհետև իր պարտքն է նաև ցմահ մնալ Երևանի պետական համալսարանի հետ, նրա դասախոսների ու բարեկամների շարքում:

Եզրափակելով գիտխորհրդի նիստը՝ ակադ. Ռ. Մարտիրոսյանը, կրկին դիմելով դոկտորին, ասաց. «Երևանի պետական համալսարանն այսուհետև Ձեր և Ձեր հարազատների տունն է, այստեղ երբեք չեն մռնանա Ձեր ծնողներին, Ձեզ և Ձեր բոլոր հարազատներին: Այն, ինչ Դուք արեցիք համալսարանի համար, համալսարանականների սրտերում հավերժ կապրի: Հաջողություններ և ամենայն բարիք Ձեզ»:

\* \* \*

Գիտխորհրդի անդամները և նիստի մասնակիցները այդ օրը նվեր ստացան սփյուռքահայ նշանավոր գործիչ Սարգիս Իզմիրլյանի «Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին (անձնական յուշերուս ընդմէջէն)» գիրքը, որը լույս է ընծայել Երևանի համալսարանի հրատարակչությունը: Գիրքը բաղկացած է երկու մասերից, որոնք տպագրվել են Բեյրութում 1962 և 1966 թվականներին: Այն ունի նաև «Հեղինակի մասին» հակիրճ առաջաբան ու հեղինակի համառոտ «Երկու խօսքը»:

## **ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ\***

Աշխարհի խոշոր ու հնագույն շատ համալսարանների նման Երևանի պետական համալսարանը ևս ունի իր պատմության քանգարանը, որը հիմնադրվել է 1960 թվականին: Սկզբնական շրջանում այն եղել է որպես առանձնասենյակ: Նրա ստեղծման վերաբերյալ արխիվում պահպանվում է ռեկտորատի՝ 1960 թ. մարտի 22-ով թվագրված № 5 որոշումը, որի մեջ մասնավորապես ասված է. ա) գոյություն ունեցող կենտրոնական մասնաշենքում ստեղծել համալսարանի պատմության առանձնասենյակ, նրա աշխատանքների ղեկավարման պարտականությունները դնել Լ. Պ. Ղարիբջանյանի վրա (առանց աշխատավարձի), բ) հանձնարարել ուսումնական բաժնին պատմության առանձնասենյա-

---

\* «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատու, 1995:

կին տրամադրել ավագ լաբորանտի մեկ հաստիք, գ) հանձնարարել տնտեսական բաժնին միջոցներ ձեռնարկել առանձնասենյակը անհրաժեշտ գույքով կահավորելու համար:

Այս որոշման ընդունումից անմիջապես հետո համալսարանի հին շենքի (Աբովյան փողոց, թիվ 52) մարզական դահլիճին կից սենյակը կահավորվում և վերածվում է առանձնասենյակի, որը հինք է դառնում հետագայում Երևանի պետական համալսարանի պատմության քանգարանի կազմավորման համար:

«Սակայն քանգարանի ստեղծման գաղափարը համալսարանականների մոտ եղել է ավելի վաղ,- մեր գրույցի ժամանակ նշեց նրա երկարամյա ղեկավար, պրոֆ. Լ. Ղարիբջանյանը:- Ես 1950-ական թվականների կեսերից աշխատում էի Երևանի համալսարանում՝ որպես կուսկոմիտեի առաջին քարտուղար,- ասաց նա,- հետաքրքիր ժամանակներ էին: Նոր էր ավարտվել համամիութենական կոմկուսի XX համագումարը, որը խստագույնս դատապարտել էր անհատի պաշտամունքը: Համագումարից անմիջապես հետո արդարացվեցին և արտոբարձրներից սկսեցին վերադառնալ մտավորականների այն ներկայացուցիչները, ովքեր կարողացել էին դիմանալ ստալինյան դաժան բռնություններին և ողջ մնալ սիբիրյան բանտերում ու ճամբարներում: Նրանց թվում էին նաև համալսարանականներ Աշոտ Հովհաննիսյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Գրիգոր Ջուբարյանը, Լևոն Ռոտինյանցը, Գևորգ Գրձելյանը, Գրիգոր Շիրմազանը և շատ ուրիշներ: Ես նրանց հետ հանդիպումներ էի ունենում, գրուցում էինք տարբեր հարցերի շուրջ, վերլուծում համալսարանի անցյալն ու գալիքը: Այդ գրույցների ընթացքում լսում էի շատ մարդկանց մասին, որոնց անունները տալն իսկ այդ տարիներին լի էր վտանգներով: Նրանք, որ 1937-1949 թթ. հանիրավի դատապարտվել ու մռռացության էին մատնվել, աստիճանաբար վերականգնում են իրենց նախկին անունն ու հեղինակությունը, կյանքում զբաղեցնում իրենց տեղն ու դիրքը: Մեծանուն գիտնականներ, ճանաչված հասարակական-քաղաքական գործիչներ: Իհարկե, նրանցից շատերն արդեն կյանքում չկային, գնդակահարվել կամ վախճանվել էին արտոբարձրներում: Սակայն ողջ մնացածները թարմ էին պահում նրանց պայծառ հիշատակը:

Այդպիսի գրույցներից մեկի ժամանակ, եթե չեն սխալվում, 1957 թվականին էր,– շարունակում է Լ. Ղարիբջանյանը,– նշանավոր իրավաբան Գրիգոր Չուբարյանը միտք հայտնեց ստեղծելու Երևանի պետական համալսարանի հիմնադրման ու անցած ուղու ճշմարտացի պատմությունը և դրանով իսկ վերականգնելու նրա երախտավորների անուններն ու հայրենանվեր գործը: Այն ժամանակ համալսարանի ռեկտորն էր նշանավոր ագրոքիմիկոս, ակադեմիկոս Գագիկ Դավթյանը, որը ոգևորվեց այդ գաղափարով և ինձ հանձնարարեց զբաղվել այդ գործով: Համալսարանի գիտական պատմության ստեղծման և կաբինետի հիմնադրման աշխատանքները միաժամանակ ձեռնարկեցի: Ինքնուրույն սկսեցի հավաքել նյութեր, լուսանկարներ, փաստաթղթեր, իսկ ազատ ժամանակ հանդիպում էի համալսարանի երախտավորների հետ և գրի առնում նրանց հուշերն ու խորհրդածությունները՝ մայր բուռի հիմնադրման ու նրա գործունեության առաջին տասնամյակների մասին: Նախապատրաստական որոշակի աշխատանքներ կատարելուց հետո՝ 1960 թ. մարտին, ռեկտորատը լսեց այդ հարցը և որոշեց հիմնադրել Երևանի պետական համալսարանի պատմության կաբինետ:

Ահա այսպիսին է եղել համալսարանի թանգարանի հիմնադրման նախապատմությունը,– մեր գրույցի վերջում ասաց պրոֆ. Լ. Ղարիբջանյանը»:

Այդ օրերից անցել է երեքուկես տասնամյակ, որի ընթացքում առանձնասենյակը հարստացել ու վերածվել է իրոք մի հարուստ թանգարանի: Այնտեղ հավաքվել ու մշակվել են հանրապետության բուհերի առաջնեկի և Հայաստանում բարձրագույն կրթության զարգացման վերաբերյալ բազմաթիվ ու բազմապիսի արժեքավոր նյութեր: Երբ 1965 թ. ավարտվում է Երևանի պետական համալսարանի նոր համալիրի կառուցումը, և բոլոր ֆակուլտետներն ու ստորաբաժանումները հին շենքից տեղափոխվում են նոր մասնաշենքեր, համալսարանի պատմության առանձնասենյակը ևս փոխադրվում է կենտրոնական մասնաշենքի 5-րդ հարկ՝ գիտխորհրդի նիստերի դահլիճին կից սենյակ, որտեղ էլ շարունակվում են նյութերի հավաքումն ու ցուցադրումը: Գնալով մեծանում է առանձնասենյակի հավաքածուների քանակը, նորանոր նյութեր են հայտնաբերվում, ստեղծվում են առանձին բաժիններ: Համալսարանի երախտավորների հարազատները թանգարանին են նվիրում շատ ու



շատ արժեքավոր փաստաթղթեր, նրանց անձնական իրերը, գրքերը և այլն: Հավաքված նյութերն այնքան են շատանում, որ հարց է ծագում առանձնասենյակը տեղափոխելու ավելի հարմարավետ ու լայնարձակ սենյակներ:

Այդ ամենը նկատի ունենալով՝ Երևանի պետական համալսարանի ռեկտորատը 1988 թ. մայիսի 17-ին կրկին անդրադառնում է առանձնասենյակի գործունեությանը: Ընդունված որոշման մեջ նշված է՝ Հայաստանում բարձրագույն կրթության պատմության և հանրապետության բուհերի վերաբերյալ հավաքված նյութերի արդյունավետ օգտագործումը ուսումնամեթոդական, գիտական և դաստիարակչական աշխատանքներում ապահովելու նպատակով Երևանի համալսարանի պատմության առանձնասենյակի հիմքի վրա գիտահետազոտական մասի կազմում պետք է ստեղծել Հայաստանի բարձրագույն կրթության պատմության գիտահետազոտական լաբորատորիա՝ նրան կից թանգարանով: Նույն որոշմամբ հանձնարարվում է գիտական և վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորներին, ինչպես և գլխավոր հաշվապահին որոշել լաբորատորիայի ու թանգարանի կառուցվածքը, կազմել հաստիքների ցուցակը և լաբորատորիայի ու թանգարանի գործունեության համար ստեղծել անհրաժեշտ ու նպաստավոր պայմաններ:

Ներկայումս Հայաստանի բարձրագույն կրթության պատմության գիտահետազոտական լաբորատորիան և նրան կից թանգարանը զբաղեցնում են համալսարանի կենտրոնական մասնաշենքի 7-րդ հարկը: Թանգարանն ունի ցուցասրահ, դասախոսությունների ու կինոցուցադրումների դահլիճ, փաստաթղթերի, կինո-ֆոտո ու տեսաֆիլմերի արխիվ, ճայնադարան և հարուստ գրադարան:

Ցուցասրահն իր հերթին բաժանված է թեմատիկ մասերի, որոնցից յուրաքանչյուրում ներկայացված է Հայաստանում բարձրագույն դպրոցի պատմության մի շրջափուլ՝ սկսած նախամաշտոցյան շրջանից մինչև մեր օրերը: Այդ փուլերը ներկայացված են «Կրթությունը Հայաստանում նախամաշտոցյան շրջանում», «Կրթությունը Հայաստանում V-VII դարերում», «Բարձրագույն կրթությունը Հայաստանում IX-XIII դարերում», «Բարձրագույն կրթությունը Հայաստանում XIV-XIX դարերում» վերտառությամբ, գեղեցիկ ձևավորված ցուցափեղկերում, որոնք լիարժեք պատկերացում են տալիս հայոց միջնադարյան բարձր տիպի կրթարան-

ների, եվրոպական տիպի համալսարանների և նոր շրջանի դպրոցների մասին: Այստեղ կարելի է հետաքրքիր նյութեր գտնել Վաղարշապատում Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի հիմնադրած դպրոցի մասին: Հետաքրքրությամբ են դիտվում նաև Անանիա Շիրակացու (VII դար) և Սյունյաց (VII-VIII դդ.), Աղթամարի ու Սանահինի (X-XI դդ.), Անիի (XI-XII դդ.), Խորանաշատի (XIII դ.), Սև լեռան և շատ այլ բարձր տիպի դպրոցների ու ակադեմիաների մասին նյութերն ու մանրանկարները: Սակայն սրանց մեջ առանձնանում են Գլածորի ու Տաթևի համալսարանները (XIII-XIV դդ.), որոնք էլ ցուցահանդեսում ներկայացված են պատշաճ մակարդակով: Հետաքրքրությամբ են դիտվում նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1815-1918 թթ.), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1824-1924 թթ.), Էջմիածնի Գևորգյան ճեմարանի (1874 թվականից մինչև այսօր) վերաբերյալ նյութերը: Միայն այս դպրոցներով չեն ավարտվում թանգարանի ցուցանմուշները, այլ այնտեղ կարելի է գտնել նաև միջնադարյան Հայաստանի՝ բարձր տիպի տասնյակ այլ կրթարանների ու համալսարանների մասին հետաքրքիր շատ տեղեկություններ:

Թանգարանի մյուս ցուցավահանակների մեծ մասը նվիրված է Հայաստանի համալսարանի հիմնադրման (1919 թ. մայիսի 16) և նրա զարգացման պատմությանը: Այստեղ ցուցադրված են հիմնադիր դասախոսների, ռեկտորների ու երախտավորների լուսանկարները: Ըստ տասնամյակների թվերով ու փաստերով ցույց է տրված համալսարանի գործունեությունը անցած 75 տարիների ընթացքում: Այստեղ հետաքրքիր տվյալներ կարելի է գտնել ուսանողների ու շրջանավարտների, դասախոսների ու ասպիրանտների մասին, որոնցից շատերը դարձել են աշխարհահռչակ գիտնականներ, մեծանուն գրողներ, հասարակական-քաղաքական գործիչներ: Նրանք իրենց առանձին տեղն ունեն ցուցասրահում:

Ցուցասրահում զգալի տեղ է հատկացված համալսարանական գիտության զարգացման պատմությանը: Ցուցադրված նյութերի հիման վրա կարելի է լիարժեք պատկերացում կազմել մայր բուհում գիտության գրեթե բոլոր ճյուղերի զարգացման մասին: Այսօր հանրապետությունում գործող գրեթե բոլոր բուհերը ժամանակին իրենց սկիզբն առել են Երևանի պետական համալսարանից: Մի շարք ցուցավահանակներ պարունակում են այդ բուհերի տարեգրությունը, որն էլ իր հերթին ընդհանուր

պատկերացում է տալիս մեր հանրապետության բարձրագույն դպրոցի ու կրթության ներկայիս վիճակի մասին:

Յուցարահում հատաքրքրությամբ են դիտվում նաև համալսարանի երախտավորների անձնական իրերը, նրանց գրքերն ու գրեմական պիտույքները, նկարները, որոնք ցուցադրված են ապակեպատ պահարաններում: Առանձին անկյուններ են նվիրված առաջին ռեկտորներ Յու. Ղամբարյանի, Հ. Մամանդյանի, Հ. Հովհաննիսյանի, հիմնադիր-դասախոսներ, մեծամուն գիտնականներ Հր. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գր. Ղափանցյանի, Աջ. Հովհաննիսյանի, Գագիկ Դավթյանի, Արտաշես Շահինյանի, Մխիթար Ջրբաշյանի, Նագուշ Հարությունյանի, Հրաշյա Բունիսթյանի անձնական իրերին, փաստաթղթերին, հազվագյուտ գրքերին ու լուսանկարներին: Մեծ արժեք են ներկայացնում նաև այստեղ ցուցադրված հիշյալ երախտավորներից շատերի գեղարվեստական դիմանկարները, որոնք նվիրատվություններ են համալսարանին նրանց անվանի հեղինակների կողմից:

Թանգարանի մաս է կազմում նաև դասախոսությունների ու կինոցուցադրումների դահլիճը, որտեղ կազմակերպվում են համալսարանի ու նրա անվանի դասախոսների կյանքին ու գործունեությանը նվիրված փաստավավերագրական ֆիլմերի ցուցադրումներ և դասախոսություններ:

Թանգարանի արխիվում պահպանվում են բազմաթիվ արժեքավոր նյութեր ու փաստաթղթեր՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրման ու նրա գործունեության վերաբերյալ: Մեծաթիվ նյութեր կան նաև Հայաստանում բարձրագույն կրթության ու գիտության զարգացման մասին: Նրա ֆոնդերում եղած նյութերը խմբավորված են հիմնականում հետևյալ կերպ.

1. Հայաստանում բարձրագույն կրթության սկզբնավորման ու զարգացման վերաբերյալ նյութեր ու վկայություններ՝ սկսած հնագույն շրջանից մինչև XX դար:

2. Երևանի պետական համալսարանի գործունեության հետ առնչվող նյութեր, որոնք դասավորված են ըստ իրենց բովանդակության ու կարևորության: Դրանք են.

ա) մայր բուհի հիմնադրմանը վերաբերող նյութեր, փաստաթղթեր, վկայություններ և հուշեր,

բ) նրա կառուցվածքին ու ֆակուլտետների փոփոխություններին վերաբերող նյութեր,

գ) թվական տվյալներ պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, ասպիրանտների և շրջանավարտների մասին,

դ) նյութեր ուսումնադաստիարակչական աշխատանքների, կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և հասարակական այլ կազմակերպությունների գործունեության, նրանց ձեռնարկած կարևորագույն մաջոցառումների մասին,

ե) նյութեր գիտահետազոտական աշխատանքների, ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, հումանիտար ու հասարակագիտական գիտությունների զարգացման, ըստ տարիների՝ դիսերտացիաների պաշտպանության, գիտական նստաշրջանների ու կոնֆերանսների մասին,

զ) կենսագրական տեղեկություններ ռեկտորների, պրոռեկտորների, երախտավոր դասախոսների, անվանի գիտնականների, նախկին սաների մասին, նրանց նամակներն ու հուշագրությունները, ձեռագրերը, անձնական փաստաթղթերը և այլն,

է) փաստաթղթեր ու նյութեր Երևանի համալսարանի՝ Հայրենական մեծ պատերազմի շրջանի գործունեության մասին, նրա սաների ու աշխատակիցների սխրագործությունների, գոհված համալսարանականների վերաբերյալ հուշեր ու այլ արժեքավոր տեղեկություններ, նրանց կենսագրությունները,

ը) նյութեր նախկին ԽՍՀՄ և արտասահմանյան առաջատար համալսարանների ու մյուս բուհերի հետ ունեցած ուսումնագիտական, մշակութային ու բարեկամական կապերի մասին,

թ) պլաններ, ծրագրեր, հաշվետվություններ, զեկուցումներ ու զեկուցագրեր համալսարանի տարբեր տարիների գործունեության մասին,

ժ) նյութեր ու փաստաթղթեր հրատարակչության, «Երևանի համալսարան» թերթի և մյուս պարբերականների խմբագրությունների գործունեության վերաբերյալ,

ժա) Երևանի համալսարանի ֆակուլտետների հիմքի վրա ստեղծված բուհերի մասին նյութեր ու կառավարական որոշումներ և այլն:

Թանգարանի արխիվային բաժնում առանձին մաս են կազմում հազվագյուտ ու արժեքավոր լուսանկարների հավաքածուները, որոնք

ներկայացնում են համալսարանի պատմությունը գրեթե նրա հիմնադրումից սկսած մինչև մեր օրերը: Այդ նկարներում անվանի գիտնականներն ու առաջին դասախոսներն են, համալսարանի մասնաշենքերը, լաբորատորիաներն ու առանձնասենյակները, ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական և հասարակական-քաղաքական կյանքը:

Նույնը կարելի է ասել նաև կինոֆիլմերի ու տեսաժապավենների մասին, որոնք դարձյալ խնամքով պահվում են քանգարանում:

Հարուստ է և ձայնադարանը, որտեղ կան շատ արժեքավոր ձայնագրություններ թե՛ ուսումնական գործընթացից (դասախոսություններ, գործնական պարապմունքներ և այլն) և թե՛ կարևորագույն միջոցառումներից (հանդիսավոր նիստեր, գիտական նստաշրջաններ, հաշվետու ժողովներ, հոբելյանական երեկոներ, դասախոսների մեծաբլումներ, հանդիպումներ և այլն):

Թանգարանն ունի նաև հարուստ գրադարան, որտեղ պահվում են Հայաստանի բարձրագույն կրթության և գիտության տարբեր ճյուղերի զարգացման վերաբերյալ հազվագյուտ գրքեր, Երևանի համալսարանի հիմնադրման և նրա գործունեության մասին աշխատություններ, հոբելյանական հրատարակություններ: Մի շարք գրքեր էլ նվիրված են Հայաստանի միջնադարյան համալսարաններին, մեր ներկա բուհերին: Գրադարանում պահվում են նաև համալսարանի երբեմնի սաների մենագրություններն ու ժողովածուները՝ հեղինակների ընծայագրերով: Սրանց հետ մեկտեղ պահվում են նաև համալսարանի պարբերականների՝ գրեթե բոլոր տարիների հավաքածուները: Կան նաև շատ այլ գրքեր, ժողովածուներ, հանդեսներ, թերթեր, որոնք նյութեր են պարունակում Երևանի համալսարանի մասին:

Թանգարանը մինչև վերջերս իր տեսակի մեջ առաջինն ու միակն էր մեր հանրապետությունում, որից օգտվում էին բոլոր բուհերը: Ներկայումս այն սերտ կապերի մեջ է հանրապետության արխիվների ու նմանատիպ այլ հաստատությունների հետ: Նրա աշխատակիցները կատարում են գիտահետազոտական և մշակութային-լուսավորական աշխատանքներ թե՛ համալսարանի և թե՛ մյուս բուհերի կոլեկտիվների շրջանում: Ամեն տարի քանգարան են այցելում հարյուրավոր ուսանողներ, դասախոսներ, ուսուցիչներ և աշակերտներ, տարբեր երկրներից ժամանած հյուրեր, որոնք ծանոթանում են մեր Մայր համալսարանի և հանրա-

պետության մյուս բուհերի ստեղծման պատմությանը, լսում հետաքրքիր դասախոսություններ ու դիտում ֆիլմեր Հայաստանում բարձրագույն կրթության զարգացման վերաբերյալ: Շատ անվանի գիտնականներ ու մշակութային գործիչներ, ովքեր երբևէ եղել են թանգարանում, «Տպավորությունների գրքում» իրենց սրտի ջերմ խոսքն են թողել Երևանի պետական համալսարանի ու նրա հարուստ թանգարանի մասին:

Թանգարանի հիմնադիրն ու նրա անփոփոխ գիտական ղեկավարն է պրոֆ. Լյուդվիգ Պապիկի Ղարիբջանյանը: Նա եղել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի սան (1940-1945 թթ.), այնուհետև ընդունվել է ասպիրանտուրա, որն ավարտելուց հետո անցել է կուսակցական աշխատանքի, 1951-53 թթ. և 1957-61 թթ. եղել է համալսարանի կուսկոմիտեի առաջին քարտուղար: Աշխատել է նաև որպես ՀԿԿ երքադկոմի երրորդ (1953-1957), երկրորդ (1961-1965), առաջին (1966-1975) քարտուղար, ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար (1975-1988), Հայաստանի Հանրապետության ժողովրդական կրթության նախարարի առաջին տեղակալ (1989-1992) և այլն: Սակայն նա իր գործունեության բոլոր տարիներին երբեք կապերը չի խզել համալսարանից, համատեղությամբ կատարել է դոցենտի, այնուհետև՝ պրոֆեսորի պարտականություններ: Դասախոսական աշխատանքի հետ մեկտեղ հարստացրել է թանգարանի հազվագյուտ հավաքածուն և գրել Երևանի պետական համալսարանի պատմությունը: Նրա հեղինակած «Երևանի պետական համալսարանը (1920-1930 թթ.)» արժեքավոր գիրքը առաջին անգամ լույս է տեսել 1965 թ.: Այնուհետև թարգմանվել է ռուսերեն և տպագրվել 1971 թ.: համալսարանի հիմնադրման կեսդարյա հոբելյանի օրերին: Այս տարի նույնպես լույս տեսավ այդ գիրքը բարեփոխված տեսքով՝ նվիրված համալսարանի հիմնադրման 75-ամյակին:

Ներկայումս պրոֆ. Լ. Ղարիբջանյանը զբաղվում է իր հիշյալ գրքի և «Մեր անվանի դասախոսները» ժողովածուի երկրորդ և երրորդ հատորների պատրաստման աշխատանքներով:

Թանգարանին աշխատակցում է նաև Երևանի համալսարանի երկարամյա դասախոս, ճանաչված երկրաբան, դոց. Հայկազ Արամյանը: Վաստակաշատ դասախոսն այժմ զբաղված է «Երևանի համալսարանի գրական սերունդը» թեմայի մշակումով:

Թանգարանի մյուս անվտուխ աշխատակիցը՝ նրա փոխտնօրեն Սեդա Սարգսյանը, որն այստեղ է եկել հիմնադրման առաջին իսկ օրից, արդեն 35 տարի է, ինչ ժրջան աշխատանք է կատարում արխիվային նյութերի հավաքման ու խնամքով պահպանման ուղղությամբ:

Ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի՝ 1994 թ. դեկտեմբերի 1-ի հրամանով Երևանի համալսարանի պատմության ուսումնական լաբորատորիան այդուհետև դառնում է կառուցվածքային ինքնուրույն առանձին միավոր՝ «Երևանի համալսարանի պատմության քանգարան» անվամբ, վեց հաստիքային աշխատակիցներով:

Երևանի պետական համալսարանի պատմության քանգարանի աշխատակիցներն այսօր էլ շարունակում են իրենց գործունեությունը, զբաղվում Երևանի պետական համալսարանին վերաբերող նյութերի հավաքման, մշակման և լուսաբանման հարցերով:

## **ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ\***

Երևանի պետական համալսարանը, հանրապետության առաջատար ուսումնական հաստատությունը լինելուց բացի, նաև գիտահետազոտական աշխատանքների ծավալման խոշորագույն կենտրոն է: Համալսարանի հիմնադրման (1920 թ. դեկտեմբերի 17) առաջին իսկ տարիներից բնագիտական և հասարակական գիտությունների հետ մեկտեղ այնտեղ մեծ թավի է հաղորդվում նաև հայագիտության զարգացմանը: Համալսարանի հիմնադիր գիտնականներից այդ ասպարեզում իրենց ծանրակշիռ ներդրումն ունեցան Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Հ. Մանանդյանը, Լեոն, Գ. Ղափանցյանը, Խ. Սամուելյանը, Ա. Տերտերյանը և ուրիշներ, որոնց սկսած գործը հետագայում շարունակեցին նրանց աշակերտները: Համալսարանի հայագետների նոր սերունդը պատվով է շարունակում ավագ սերնդի թողած ավանդները և հայագիտությունը հարստացնում է նորանոր հետազոտություններով:

Հայագիտությամբ զբաղվող գիտնականների ջանքերը և համապատասխան ամբիոնների գործունեությունը միավորելու, այդ ուղղությամբ

---

\* «Պատմաբանափրական հանդես»:

տարվող աշխատանքները էլ ավելի ամուր հիմքերի վրա դնելու նպատակով 1968 թ. Երևանի համալսարանում ստեղծվեց հայագիտական կենտրոն (հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիա): Նրա ստեղծման նախաձեռնությունը պատկանում է ՀՍՄՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանին, որը 1966-1977 թթ. Երևանի համալսարանի ռեկտորն էր: Նա էլ առաջինը եղել է հայագիտական կենտրոնի գիտական ղեկավարը: Այժմ կենտրոնի գիտական ղեկավարն է ՀՍՄՀ ԳԱ ակադեմիկոս Էդ. Բ. Աբեղյանը, իսկ վարիչը՝ դոց. Էմ. Ա. Պիվազյանը:

Հայագիտական կենտրոնը համալսարանի գիտահետազոտական բաժնի կազմի մեջ մտնող միջֆակուլտետային պրոբլեմային լաբորատորիա է, որի հիմնական խնդիրն է հայ ժողովրդի պատմության, մշակույթի և գրականության ուսումնասիրությունը ռուս և Խորհրդային Միության մյուս ժողովուրդների պատմության, մշակույթների ու գրականությունների հետ ունեցած պատմական փոխառնչությունների մեջ: Կենտրոնն ունի պատմաբանասիրական ուսումնասիրությունների, ՄՍՀՄ ժողովուրդների գրական կապերի, հայ-վրացական բանասիրության, հնագիտական հետազոտությունների և Հայաստանի ու հարակից շրջանների տեղանունների հանրագիտական բառարանի բաժինները, որոնցում բեղմնավոր գործունեություն է ծավալվում՝ հրապարակի վրա դնելով մի շարք գիտական արժեքավոր աշխատություններ:

Պատմաբանասիրական ուսումնասիրությունների բաժինը զբաղվում է հայ ժողովրդի պատմության ու բանասիրության հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Անցած մեկուկես տասնամյակի ընթացքում բաժինը հրատարակել է մի շարք արժեքավոր աշխատանքներ, որոնցից է «Հայ մշակույթի նշանավոր գործիչները» (1976 թ.) գիրքը: Այս սովորաժավալ հատորը, որը թարգմանվել և 1982 թ. հրատարակվել է նաև ռուսերեն, ընդգրկում է V-XVIII դդ. հայ մշակույթի ու գիտության առավել աչքի ընկնող ներկայացուցիչների դիմանկարները՝ առանձին ընդարձակ հոդվածներով: Նրա մեջ ընդգրկված նյութերը՝ միջնադարյան Հայաստանի մշակույթի ակնավոր գործիչների (մատենագիրներ, բանաստեղծներ, ճարտարապետներ, քանդակագործներ, մանրանկարիչներ, փիլիսոփաներ, իրավագետներ և բժշկագիտության ներկայացուցիչներ) մասին, գրել են հանրապետության անվանի գիտնականները՝ տվյալ թե-



մայի լավագույն մասնագետները: Ժողովածուի բոլոր ուսումնասիրությունները շարադրված են հանրամատչելի ձևով՝ նկատի առնելով հայ մշակույթի պատմությամբ հետաքրքրվող ընթերցողների լայն շրջաններին: Հիշյալ գիրքը շուտով լույս կընծայվի նաև անգլերեն:

Չնայած հայ ժողովրդի պատմության վերաբերյալ հրատարակվել են բազմաթիվ մեծագրություններ և ընդհանուր ուրվագծային աշխատություններ, բայց և այնպես ընթերցող հասարակայնությունը վաղուց պահանջ ուներ մի առանձին ամփոփ գրքի, որով կծանոթանար հայ ժողովրդի պատմությանը: Այս պահանջը բավարարելու նպատակն է հետապնդում հայագիտական կենտրոնի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» (1972 թ.) միհատորյակը, որն ընդգրկում է հայկական լեռնաշխարհի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը: Հիշյալ միհատորյակի խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը, իսկ առանձին գլուխների հեղինակներն են Խորհրդային Հայաստանի ճանաչված պատմաբանները: «Հայ ժողովրդի պատմություն» միհատորյակը 1981 թ. լույս է տեսել ռուսերեն, նախատեսվում է առաջիկայում այս գիրքը հրատարակել նաև անգլերեն:

Հայոց լեզվի ամբիոնի հետ համատեղ կենտրոնը 1975 թ. տպագրել է «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը», որի հեղինակներն են բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ա. Սուքիասյանը և դոց. Ս. Գալստյանը: Բառարանն ընդգրկում է ժամանակակից հայ գրական լեզվի մոտ 20000 դարձվածաբանական միավոր՝ փոխաբերական իմաստ ունեցող կայուն կապակցություններ, դարձվածային արժեք ստացած առածներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր և այլ լեզվական միավորներ:

Պատմաբանասիրական ուսումնասիրությունների բաժինը զբաղվում է նաև հայոց լեզվի և հայ մշակույթի պատմության առանձին խնդիրների ուսումնասիրությամբ, որոնցից մեկն էլ նախամեսրոպյան հայ գրի ու գրականության, դանիելյան գրերի, մեսրոպյան այբուբենի ստեղծման, այդ այբուբենի և հարակից այլ հարցեր ընդգրկող բազմաբնույթ խնդիրն է, որի բազմակողմանի ու խոր ուսումնասիրությանն է նվիրված ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Էդ. Բ. Աղայանի «Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին» (1977 թ.) աշխատությունը: Վերլուծելով մեսրոպյան այբուբենը

և անդրադառնալով այդ այբուբենի հորինվածքին՝ պրոֆ. Էդ. Աղայանը ժխտում է հայոց այբուբենի հարավսեմական, հունարենի կամ որևէ այլ այբուբենի վրա ձևված լինելու տեսակետը և ցույց է տալիս, որ Սեբրոպ Մաշտոցը, նկատի ունենալով իրեն ծանոթ այբուբենները, գործնական ու ստեղծագործական աշխատանքով հաջողությամբ կերտել է ինքնուրույն տառաձևերով ինքնատիպ այբուբեն, որն իր գոյության 1600 տարիների ընթացքում փոփոխության չի ենթարկվել:

Բաժնի կարևոր ձեռնարկումներից են նաև հայագիտական մեծարժեք ուսումնասիրությունների վերահրատարակությունները և արտասահմանյան ականավոր հայագետների աշխատությունների հայերեն թարգմանությունները: Այս շարքի ամենաաչքի ընկնող վերահրատարակությունը մեծամուն լեզվաբան Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանն» է (1971-1979 թթ.)՝ չորս սովորաձևավալ հատորներով: Բառարանը յոթ հատորով, սահմանափակ տպաքանակով, ապակետիպ եղանակով հրատարակվել է 1927-1935 թթ. և մեր օրերում ունի մատենագիտական հազվագյուտ արժեք: Ներկա վերահրատարակությունը կատարվել է տպարանային եղանակով՝ 20000 օրինակ տպաքանակով: Այն լույս է տեսել «Հայագիտական հետազոտությունների մատենաշար»-ով: Հատորները տպագրության են պատրաստվել հայոց լեզվի ամբիոնի ճանաչված գիտնականների ուժերով և ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Էդ. Աղայանի խմբագրությամբ:

Բաժինը հրատարակել է նաև Հր. Աճառյանի «Բանասիրական ուսումնասիրություններ» (1976 թ.) արժեքավոր գիրքը, որի մեջ ամփոփված են ականավոր հայագետի՝ տարբեր ժամանակներում գրած և առանձին պարբերականներում տպագրված, բանասիրության ու հայ գրականության զանազան հարցերին նվիրված փոքրածավալ աշխատությունները:

«Հայագիտական հետազոտությունների մատենաշար»-ի մյուս մեծարժեք վերահրատարակությունը «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանն է: Հայ բառարանագրության մեջ իր նմանը չունեցող այս բառարանի կազմումը տևել է կես դար: Նրա հեղինակները՝ Գաբրիել Ավետիքյանը (1750-1827), Խաչատուր Սյուրմեյանը (1751-1827), Մկրտիչ Ավգերյանը (1762-1854) մեղվաջան աշխատանքով Մխիթարյան միաբանության մատենադարանում եղած մոտ 1000 ձեռագիր հուշարձան-

ների և հայ հին մատենագրության՝ այն ժամանակ տպագրված մատյանների բառաքննությամբ, հնագույն աղբյուրներից մինչև նոր ժամանակների գրչագրական տարբերակների համեմատությամբ ու բառաքննական ուսումնասիրություններով կազմել են 12 ձեռագիր հատորներից բաղկացած մի ընդարձակ բառարան: Սակայն նրանց կազմած բառարանը հսկայական ծախսերի պատճառով Մխիթարյան միաբանությունը և ժամանակի հայ հասարակայնությունը չկարողացան ամբողջությամբ հրատարակել: Ստիպված եղան 50 տարվա ընթացքում հավաքած նյութը համառոտել և ամփոփել միայն երկու հատորում, որն էլ հրատարակվեց Վենետիկում (Սուրբ Ղազարի տպարան) 1836-1837 թթ. և մինչև այսօր էլ մնում է որպես գրաբարի ամենաընդարձակ ու ամփոփաբնույթի բառարան: Այն արդեն շուրջ 150 տարի է, ինչ հայագիտությամբ զբաղվողների սեղանի գիրք է, ուղեցույց և ուսուցիչ: «Հայկազյան բառարանը», ինչպես հայագիտության մեջ անվանվում է այն, գրաբարի հանրագիտարան լինելուց բացի, նաև բացատրական, ստուգաբանական, իմաստաբանական, լեզվաբանական, ինչ-որ չափով նաև բազմալեզվյան բառարան է: Այն հայ բառարանագրության խոշորագույն գանձերից մեկն է, որն այսօր էլ հայագիտության համար հսկայական գործնական նշանակություն ունի: Այդ նշանակությունը նկատի ունենալով է, որ հայագիտական կենտրոնը վերահրատարակում է այն: Բառարանի առաջին հատորը լույս է տեսել 1979 թ., իսկ երկրորդը՝ 1981 թ.:

Վերահրատարակվել են նաև ականավոր պատմաբաններ Հակոբ Մանանդյանի «Տիգրան Երկրորդը և Հռոմը» (1971 թ.) և Նիկողայոս Արոնցի «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում» (1971 թ.) ծանրակշիռ հետազոտությունները, որոնք ունեն համապատասխան առաջաբաններ ու ծանոթագրություններ:

Օտարազգի հայագետների աշխատություններից արդեն լույս է ընծայվել ֆրանսիացի ականավոր լեզվաբան և հայագետ Անտուան Մեյեի «Հայագիտական ուսումնասիրություններ» (1978 թ.) մեծածավալ ժողովածուն՝ հայերեն թարգմանությամբ, ներածական հոդվածով և հարուստ ծանոթագրություններով: Ժողովածուում տեղ են գտել հանրահռչակ հայագետի՝ ֆրանսիական ակադեմիայի լրատուներում և «Ռեվյու դեգ Էտյուդ Արմենիեն» պարբերականում ու այլ հանդեսներում հրատարակված ուսումնասիրությունները: Անտուան Մեյեն լեզվաբանական մի ողջ

դպրոցի ամենակարկառուն ներկայացուցիչն էր: Նրա հետազոտությունները հայագիտության համար բացառիկ արժեք են ներկայացնում, և վաղուց էր զգացվում հիշյալ ժողովածուի կարիքը:

«Հայագիտական հետազոտությունների մատենաշար»-ով բաժինը շարունակելու է իր կարևոր ձեռնարկումը և հայերեն թարգմանությամբ լույս է ընծայելու նաև օտարազգի այլ ճանաչված հայագետների ուսումնասիրությունները: Այդ մատենաշարով առաջիկայում կիրատարակվի Հյուբշմանի «Հայագիտական ուսումնասիրություններ» արժեքավոր գիրքը:

Գասական հայագետների գիտական ժառանգության վերահրատարակության ուղղությամբ ևս բաժինը զգալի աշխատանք է կատարել: Տպագրվել է մեծամուն գիտնական Գալուստ Տեր-Սկրտչյանի «Հայագիտական ուսումնասիրություններ» ժողովածուի առաջին հատորը, որի մեջ ամփոփված են հայ մշակույթի ու մատենագիտության ամենաբազմազան խնդիրներին նվիրված նրա աշխատությունները: Հատորն ընդգրկում է Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ստեփանոս Սյունեցու, Անանիա Շիրակացու և այլ հեղինակների մասին ուշագրավ մենագրական ուսումնասիրություններ, որոնք մեծ մասամբ հրատարակվել են անցյալի պարբերական մամուլում և մատենագիտական հազվագյուտ մնուշ են դարձել, անմատչելի են ժամանակակից ընթերցող լայն շրջաններին: Տպագրված ժողովածուում առաջին անգամ ի մի է բերվել մեծ հայագետի գիտական ժառանգության մի ստվար մասը: Գիրքն ունի Գ. Տեր-Սկրտչյանի կյանքին ու գործունեությանը նվիրված ընդարձակ առաջաբան և մանրակրկիտ ծանոթագրություններ, որոնց հեղինակն է պրոֆ. Պ. Հակոբյանը: Ժողովածուն կազմել և խմբագրել են Պ. Հակոբյանը և Էմ. Պիվազյանը: Հրատարակության է պատրաստվում նաև Գ. Տեր-Սկրտչյանի հայագիտական ուսումնասիրությունների երկրորդ հատորը:

Պատմաբանասիրական ուսումնասիրությունների բաժնի մյուս արժեքավոր հրատարակություններից է հայ գրի ու գրականության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի աշակերտ ու կենսագիր Կորյունի «Վարք Մաշտոցի» (1981 թ.) երկը: Այն ընդգրկում է Կորյունի գրքի գիտաբնական բնագիրը, նրա աշխարհաբար, ռուսերեն և անգլերեն թարգմանությունները: Գրքում տպագրված է նաև ակադեմիկոս Մ. Աբեղյանի «Մեսրոպ

Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը» արժեքավոր ուսումնասիրությունը նույնպես հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակներով: V դարի հեղինակի այս կոթողային երկասիրությունը տպագրության է պատրաստել ու խմբագրել հնուս բանասեր, դոց. Էմ. Ա. Պիվազյանը:

Ընթերցողների սեղանին է դրվել նաև XIII դարի նշանավոր պատմագիր, իրավագետ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» (1980 թ.) ռուսերեն թարգմանությունը, որը նույնպես միջնադարյան հայ մշակույթի կոթողային հուշարձաններից է և սկզբնաղբյուրի արժեք ունի հայ իրավագիտության ուսումնասիրության գործում:

Երևանի համալսարանում հայագիտական կենտրոնի խնդիրներից մեկն էլ հայ, ռուս և Խորհրդային Միության մյուս ժողովուրդների գրականությունների, պատմության և մշակույթների փոխառնչությունների հետազոտումն է, որի նպատակն է բացահայտել մի կողմից հայ գրականության դերը Խորհրդային Միության ժողովուրդների հոգևոր կյանքում, մյուս կողմից՝ ռուս և ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների տեղն ու դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Այս ուղղությամբ հետազոտական լուրջ աշխատանք է կատարում հայագիտական կենտրոնի ՍՍՀՄ ժողովուրդների գրական կապերի բաժինը (գիտական ղեկավար՝ դոց. Ղ. Այվազյան): Այս բաժինը համալսարանում գոյություն ունեւ հայագիտական կենտրոնի ստեղծումից առաջ և կոչվում էր ռուս-հայկական գրական կապերի կաբինետ: Մինչև 1970 թ., երբ այն մտնում է հայագիտական կենտրոնի մեջ, կաբինետի կողմից հրատարակության էին պատրաստվել մի քանի գրքեր: Դեռևս 1968 թ. հրատարակվել էր «Գորկին և Հայաստանը» (ռուսերեն) արժեքավոր ժողովածուն, որի մեջ ի մի են բերված Գորկու գրագրությունները հայ մշակույթի գործիչների հետ, նրանց հիշողությունները Գորկու մասին, հայ պարբերական մամուլում տպագրված քննադատական հոդվածները և այլ նյութեր: Տպագրվել են նաև Վ. Բրյուսովի ստեղծագործությունների մատենագիտությունը (1976 թ.) և նման այլ գրքեր:

Բաժինը հիմնականում զբաղվում է հայ, ռուս և Խորհրդային Միության մյուս ժողովուրդների գրական կապերի ուսումնասիրությունների հարցերով: Այդ կապերը ուսումնասիրվում են երկու տեսանկյունով. քննարկվում է ազգային գրականությունների փոխազդեցությունը, և հետազոտվում մի ժողովրդի գրական ժառանգության գործառնությունը

ՄՍՀՄ մի այլ ժողովրդի ժամանակակից մշակույթի մեջ: Այս առումով արժեքավոր են «Ռուս գրականության դասականները և ՄՍՀՄ ժողովուրդների գրականությունը» մատենաշարով պարբերաբար հրատարակվող գրքերը, որոնք արդյունք են Երևանի, ինչպես նաև Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Կիևի, Բաքվի և Միության այլ գիտական կենտրոնների ու համալսարանների գիտնականների համագործակցության: Արդեն հրապարակի վրա են այդ մատենաշարի «Գորկին և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը» (1970 թ.), «Նեկրասովը և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը» (1972 թ.), «Լերմոնտովը և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը» (1974 թ.), «Պուշկինը և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը» (1975 թ.), «Տոլստոյը և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը» (1978 թ.), «Չեխովը և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը» (1982 թ.), «Մայակովսկին և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը» (1983 թ.) արժեքավոր ժողովածուները:

ՄՍՀՄ ժողովուրդների գրական կապերի բաժինը ռուսերենով պարբերաբար լույս է ընծայում ժողովածուների մի այլ մատենաշար ևս, որը կոչվում է «Գրական կապեր»: Արդեն հրապարակի վրա են այդ ժողովածուի չորս սովորաձևավալ հատորներ (I հ.՝ 1973 թ., II հ.՝ 1977 թ., III հ.՝ 1981 թ., IV հ.՝ 1982 թ.), որոնք նվիրված են հայ-ռուսական գրական կապերին, ինչպես նաև Խորհրդային Միության մյուս ժողովուրդների գրական-մշակութային առնչություններին:

«Հայագիտական հետազոտությունների» կենտրոնի հայ-վրացական բանասիրության բաժինը հիմնականում զբաղվում է հայ և վրաց ժողովուրդների պատմության և մշակութային առնչությունների ուսումնասիրությամբ: Այստեղ պետք է նշել, որ հայագիտական կենտրոնի ստեղծումից երկու տարի առաջ՝ 1966 թ., Երևանի համալսարանում հիմնադրվեց Շոթա Ռուսթավելու անվան հայ-վրացական բանասիրության կաբինետ, որի գործունեությունը գիտական նպատակասլաց ուղղություն ստացավ հայագիտական կենտրոնի մեջ մտնելուց հետո (1970 թ.), երբ ստեղծվեց հայ-վրացական բանասիրության գիտահետազոտական խումբը (հիմնադրման օրից մինչև իր մահը (1981 թ.) գիտական ղեկավարն է եղել ՀՄՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Սևակը): Խմբի ավագ գիտաշ-

խաստող Հր. Բայրամյանը կազմել է «Վրացական պոեզիա» ժողովածուն (1983 թ.): Տպագրվել է նաև նույն հեղինակի «Ակնարկներ վրաց գրականության պատմության (1800-1890 թթ.)» ուսումնական ձեռնարկը: Այստեղ մշակվել է նաև «Գրաբարի հնչյունաբանության մի քանի հարցեր» (Ռ. Գորգաձե) թեման:

Հայագիտական կենտրոնի առանձին բաժին են կազմում հնագիտական հետազոտությունների արշավախմբերը, որոնք պեղումներ են կատարում Խորհրդային Հայաստանի տարածքում:

Հնագիտական արշավախմբերը իրենց հետազոտությունները սկսել են 1970-ական թթ. սկզբներին, պեղել են Արարատյան դաշտի՝ մ. թ. ա. VI-IV հազարամյակների մի շարք բնակավայրեր, որոնցում հայտնաբերվել են բազմաթիվ քարե և ոսկե գործիքներ, խեցեղեն և բուսական մնացորդներ, հնագիտական այլ նյութեր: Դրանք կարևոր նշանակություն ունեն Անդրկովկասի հնագույն երկրագործական համայնքների նյութական և հողևոր մշակույթի, սոցիալ-տնտեսական կարգի ուսումնասիրման համար:

Էջմիածնի մոտ գտնվող Մոխրաբլուր բնակավայրի շարունակվող պեղումները ճշգրտում են Անդրկովկասի վաղ երկրագործական մշակույթների զարգացման ավարտական փուլը, որն ընդգրկում է մ. թ. ա. IV հազարամյակի վերջը և III հազարամյակի առաջին կեսը: Հայտնաբերված նյութերը վկայում են այդ դարաշրջանում քաղաքային մշակույթի տարրերի առաջացման մասին: Քաղաքատեղիի կենտրոնական հրապարակում գտնվել են Խորհրդային Միության տարածքում մոնումենտալ ճարտարապետության հնագույն հուշարձանը համարվող տաճարի ավերակները:

Հայագիտական կենտրոնի հնագիտական արշավախմբերը Արագածի լանջերին և Սևանա լճի ավազանում հետախուզական աշխատանքներ են կատարել և հայտնաբերել մ. թ. ա. II-I հազարամյակներին պատկանող քաղաքատեղիներ: Հնագիտական հետազոտությունների բաժինը պեղում է նաև Անդրկովկասի տարածքում գտնվող Շամիրամի ճարտարապետական-հնագիտական խոշորագույն հուշարձանի համալիրը: Այդ ուսումնասիրությունը կատարվում է ՀՄՍՀ Նախարարների խորհրդի որոշմամբ: Գլխավոր միջնաբերդի և դամբարանների պեղումները արժեքավոր նյութեր են տալիս II-I դդ. Արևմտյան Ասիայի լեռ-

նային ժողովուրդների սոցիալական կառուցվածքի վերաբերյալ: Արշավախմբերի պեղումները շարունակվում են: Պեղված արժեքավոր նյութերը հանձնվում են Հայաստանի և Երևանի պատմության թանգարաններին:

Հայագիտական հետազոտությունների կենտրոնի կազմի մեջ է մտնում նաև տեղանունների բառարանագրական խումբը, որը պատրաստում է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը»: Այդ արժեքավոր գործն ընդգրկելու է հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը եղած աշխարհագրական բոլոր անունները (նահանգներ, գավառներ, շրջաններ, թագավորություններ, իշխանություններ, քաղաքներ, գյուղեր, բերդեր, վանքեր, դաշտավայրեր, լեռնագագաթներ, գետեր և այլ աշխարհագրական միավորներ)՝ լեզվագիտական, աշխարհագրական, պատմական համապատասխան բացատրություններով և տարբերակներով հանդերձ: Բառարանի կազմողներն են պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Թ. Հակոբյանը (ղեկավար), պրոֆ. Ստ. Մելիք-Բախշյանը և դոցենտ Հ. Բարսեղյանը:

Հայագիտական հետազոտությունների կենտրոնը կազմակերպում է նաև համամիութենական ու միջազգային գիտաժողովներ: Առաջին գիտաժողովը կազմակերպվել է 1979 թ. ՍՍՀՄ ԳԱ ռուս գրականության ինստիտուտի (պուշկինյան տուն) ռուս հին գրականության բաժանմունքի, ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Մաշտոցի անվան Մատենադարանի հետ համատեղ: Այն նվիրված էր Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակին:

Հայագիտական կենտրոնում իրենց գիտելիքներն են խորացրել ինչպես Միության, այնպես էլ արտասահմանյան երկրների երիտասարդ հայագետներ: Կենտրոնի ՍՍՀՄ ժողովուրդների գրական կապերի բաժինը շնորհակալ աշխատանք է կատարում եղբայրական հանրապետությունների համալսարանների հետ ուսանողների փոխանակման միջոցով թարգմանիչներ պատրաստելու ուղղությամբ: Երևանի համալսարանի ուսանողները իրենց կրթությունը շարունակում են Մոսկվայի, Լեհինգրադի, Կիևի, Ռիգայի, Վիլնյուսի, Տարտուի, Թբիլիսիի համալսարաններում՝ սովորելով ռուսերեն, ուկրաիներեն, լատվերեն, լատիշերեն, էստոներեն, վրացերեն: Փոխադարձաբար նրանց ուսանողները սովոր-



րում են Երևանի համալսարանում՝ հատուկ ծրագրով անցնելով հայոց լեզու և գրականություն: Իրենց հանրապետություններում նրանք գրական-մշակութային գործունեություն են ծավալում, թարգմանում են հայ դասական ու ժամանակակից գրողների լավագույն ստեղծագործությունները և առանձին գրքերով հրատարակում իրենց մայրենի լեզուներով: Նրանք ուսումնասիրում են նաև իրենց գրականությունների ու մշակույթների կապերը հայ գրականության ու մշակույթի հետ և տպագրում գիտական հոդվածներ ու մենագրություններ:

### **ՆՇՎԵՑ ՄԱՅՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԵՄԱՐՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԸ\***

Հիսուն տարի առաջ՝ 1921 թ. հունվարի 23-ին, Ստ. Շահումյանի անվան բանվորական ակումբի դահլիճում (այժմ՝ Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքը) տեղի ունեցավ Երևանի ժողովրդական համալսարանի բացման պաշտոնական արարողությունը:

Այդ նշանավոր օրվանից հիսուն տարի հետո՝ 1970 թ. դեկտեմբերի 23-ին, հայ ժողովուրդը հպարտությամբ ու մեծ շուքով նշեց Խորհրդային Հայաստանի բուհերի առաջնելի՝ Երևանի պետական համալսարանի կեսդարյա հոբելյանը: Երևանի համալսարանը այդ տարիների ընթացքում հզորացել ու դարձել է մեր Միության ուսումնագիտական խոշորագույն կենտրոններից մեկը՝ երկրին տարվ ավելի քան 23 հազար մասնագետներ, որոնցից շատերը դարձել են նշանավոր գիտնականներ, դոկտորներ ու պրոֆեսորներ, գրողներ ու արվեստագետներ, գիտության ու մշակույթի գործիչներ:

Այդ օրը Ալ. Սպենդիարյանի անվան, Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճում հավաքվել էին Երևանի բազմաթիվ կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների ծառայողներ, արտադրության առաջավորներ, կուսակցական ու խորհրդային աշխատողներ, համալսարանի դասախոսական կազմի մի քանի սերնդի ներկայացուցիչներ, բազմաթիվ շրջանավարտներ, համալսարանում սովորող տեղացի ու արտասահմանցի ուսանողներ, գիտնականներ, գրողներ, ինչպես նաև հոբելյանական

---

\* «Երևանի համալսարան» լրատու, 1971, թիվ 9, էջ 4-14:

հանդիսություններին մասնակցելու նպատակով Մոսկվայից, Լենինգրադից, միութենական հանրապետություններից, արտասահմանյան երկրներից ու Սփյուռքից Երևան ժամանած հյուրեր:

Բեմի խորքում, Հայկական ՍՍՀ պետական դրոշի ֆոնի վրա Լենինի մեծ դիմանկարն է, շողշողում են հորեյանական «50» թվանշանը և Երևանի պետական համալսարանի խորհրդանիշը:

Առավոտյան ժամը 10-ն է: Նախագահությունում տեղեր են գրավում Հայաստանի կոմկուսի կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն խորհրդի, Նախարարների խորհրդի ղեկավար աշխատողներ, համալսարանի հոբելյանը ողջունելու եկած ՍՄԿԿ կենտկոմի և ՍՍՀՄ Բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության ղեկավար աշխատողներ, ՍՍՀՄ եղբայրական հանրապետությունների պատվիրակությունների ղեկավարներ, արտասահմանցի հյուրեր, համալսարանի պրոֆեսորներ, դասախոսներ, հանրապետության գիտության ու մշակույթի բազմաթիվ գործիչներ: Նախագահությունում էին նաև համալսարանի կազմակերպման մասին առաջին հրամանը ստորագրող ականավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը (այն ժամանակ՝ Հայաստանի լուսժողովում, իսկ այժմ՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս) և համալսարանի առաջին դասախոսներից ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, քերմոդինամիկայի ու տեսական մեխանիկայի նշանավոր մասնագետ Ալեքսանդր Հակոբյանը:

Բացման խոսքով հանդես է գալիս հանրապետական հորեյանական հանձնաժողովի նախագահ, Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար ընկեր Ա. Ե. Քոչինյանը: Նա խոսում է Խորհրդային Հայաստանի անդրանիկ բուհի ձեռք բերած նվաճումների և այն մեծ դերի մասին, որ ունեցել է համալսարանը ժողտնտեսության ու մշակույթի բազմաթիվ բնագավառների զարգացման գործում: Այնուհետև նա փառապանծ հորեյանի առթիվ շնորհավորում է բոլոր ներկաներին, համալսարանի ուսանողությանը, պրոֆեսորադասախոսական կազմին, որոնց ամենօրյա մանկավարժական ու գիտահետազոտական աշխատանքի շնորհիվ հայոց գիտությունն ու մշակույթը արժանացել են համաժողովրդական ճանաչման, և Երևանի պետական համալսարանը դուրս է գալիս միջազգային ասպարեզ:

Իր խոսքի վերջում նա Երևանի պետական համալսարանի հիմնադրման հիսունամյակին նվիրված հանդիսավոր նիստը հայտարարում

է բացված: Դահլիճի կամարների ներքո վեհորեն հնչում են ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ պետական հիմները:

Հանդիսավոր նիստի պատվավոր նախագահություն է ընտրվում ՍՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն:

Այնուհետև ընկ. Ա. Ե. Քոչինյանը հրապարակում է ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ Երևանի պետական համալսարանին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին: Ներկաների բուռն ծափահարությունների ներքո նա շքանշանը ամրացնում է համալսարանի դրոշին և Հայաստանի կոմկուսի կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության և Նախարարների խորհրդի անունից արտանց շնորհավորում համալսարանի կոլեկտիվին կառավարական բարձր պարգևի արժանանալու առթիվ:

Ներկաները ջերմ ծափերով են ընդունում Հայաստանի կոմկուսի կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության և Նախարարների խորհրդի ողջույնը՝ ուղղված Երևանի պետական համալսարանին, որը հրապարակում է ՀՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահ ընկ. Բ. Հ. Մուրադյանը:

Չայնը տրվում է Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանին: Նա հանգամանալից գեկուցում է ներկայացնում համալսարանի կեդարյա ուղու մասին, որն ունկնդիրները լսում են լարված ուշադրությամբ:

Այնուհետև սկսվում են հորեյարին ուղղված ողջույնները: Նախագահողը առաջինը ձայն է տալիս ՍՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարի տեղակալ Ն. Ս. Եզրովին, որը նախարարության անունից ներկաներին շնորհավորում է հայ ժողովրդի գիտության ու մշակույթի մեծ տոնի առթիվ:

Հանրապետության բոլոր գիտնականների անունից համալսարանի հորեյանը ողջունում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախարար Վ. Հ. Համբարձումյանը և համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվին ցանկանում նորանոր հաջողություններ:

Հանրապետության ուսումնագիտական անդրամիկ հաստատությանը իրենց արտագին մադթանքները հղեցին Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան համալսարանի պրոռեկտոր Վ. Ի. Տրոպինը, Լենինգրադի հա-

մալսարանի պրոֆեսոր, ՄՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Մ. Ն. Բոգոլյուբովը, Ադրբեջանի պետական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Մ. Ս. Ալիևը, Կազանի Վ. Ի. Ուլյանով-Լենինի անվան համալսարանի պրոռեկտոր, Թաթարական ԻՍՄՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Շ. Տ. Հաբիբուլիևը, Բելոռուսիայի Լենինի անվան համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ա. Ն. Սևչենկոն, Վիլնյուսի համալսարանի պրոֆեսոր Յո. Յո. Պալյոնիսը, Լատվիայի համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Ս. Կ. Գրաուժինսը, Տարտուի համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Յո. Կ. Տամեորգը, Թուրքմենիայի Մ. Գորկու անվան համալսարանի գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր Գ. Մյալիգուլիևը, Դադաստանի, ԻՍՄՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ, պրոֆեսոր Ռ. Մ. Մագոմեդովը, Դոնի-Ռոստովի համալսարանի պրոռեկտոր Վ. Ա. Տիշչենկոն, Հյուսիսային Օսեթիայի համալսարանի ՄՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մ. Ի. Գիլևը, Օդեսայի համալսարանի պրոռեկտեր, պրոֆեսոր Վ. Վ. Ֆաշչենկոն, Երևանի պետական համալսարանի շրջանավարտ, բեյրութահայ Շուշանիկ Մոլոյանը:

Թրիլիսիի համալսարանի ռեկտոր, Մոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Ի. Ն. Վեկուան, ողջունելով հայ ժողովրդի ուսումնագիտական ամենամեծ օջախի հորելյանը, հրապարակեց նաև Վրացական ՄՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ Երևանի համալսարանի դասախոսներ, ՀՍՄՀ գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանին և ՀՍՄՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Գ. Սևակին Վրացական ՄՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում շնորհելու մասին: Նա բուռն ծափերի տակ շնորհագրերը հանձնեց հայ-վրացական գիտական ու մշակութային ասպարեզներում մեծ ծառայություններ կատարած անվանի գիտնականներին:

Երևանի պետական համալսարանի հորելյանը ջերմորեն ողջունեցին նաև Խորհրդային Միության ու արտասահմանյան ժողովուրդների՝ այստեղ կրթություն ստացող պատանիներն ու աղջիկները:

Հանդիսավոր նիստի մասնակիցների բուռն ծափահարությունների ներքո ընդունվեց ողջույնի մամակ՝ ուղղված ՄՄԿԿ կենտկոմին, ՄՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը և Նախարարների խորհրդին,

որը հրապարակեց Երևանի համալսարանի կուսակցական կոմիտեի քարտուղար Հ. Բարսեղյանը:

Երեկոյան Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի դահլիճում հանրապետության արվեստի վարպետները տվեցին տոնական մեծ համերգ՝ նվիրված Երևանի պետական համալսարանի հիսունամյակին:

Դեկտեմբերի 24-ին շարունակվում էին Երևանի՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանի հոբելյանական հանդիսությունները: Այդ օրը՝ առավոտյան, համալսարանում տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված մեծ հոբելյանին: Ֆիզիկամաթեմատիկական, քիմիակենսաբանական, հասարակական գիտությունների բաժանմունքներում կարդացվեցին մի շարք գեկուցումներ, որոնց հեղինակները՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ն. Հարությունյանը, Մ. Ջրբաշյանը, Մ. Տեր-Կարապետյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամներ Գ. Սահակյանը, Ալ. Թալալյանը, Մ. Տեր-Միքայելյանը, Դ. Բաբայանը, Հ. Չալթիկյանը, պրոֆեսորներ Ա. Հակոբյանը, Գ. Բրուտյանը, Էդ. Ջրբաշյանը, դոցենտներ Ս. Մովսիսյանը, Ն. Գասպարյանը, Գ. Նալբանդյանը, Հ. Պետրոսյանը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ս. Մխիթարյանը, պատմական գիտությունների թեկնածու Ի. Ղարիբյանը, կանգ առան ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, կենսաբանության, պատմության, աստղագիտության, բանասիրության և բնական ու հասարակական մյուս գիտությունների բնագավառներում համալսարանի գիտնականների՝ 50 տարիների ընթացքում ձեռք բերած նվաճումների վրա, խոսեցին այն ուղիների և հեռանկարների մասին, որոնցով պետք է այդուհետև ևս զարգանա խորհրդահայ գիտությունը:

Նրանք խոսեցին մաս բնական ու հասարակական գիտությունների բնագավառներում իրենց կատարած հետազոտությունների արդյունքների մասին:

Նստաշրջանում ներկայացված բոլոր գեկուցումներն էլ լավեցին մեծ հետաքրքրությամբ: Նրա աշխատանքներին մասնակցում էին ինչպես Երևանի համալսարանի, այնպես էլ մայրաքաղաքի այլ բուհերի գիտնականներ, Միության տարբեր համալսարաններից տոնակատարությանը մասնակցելու եկած պատվիրակներ և բազմաթիվ ուսանողներ:

Նույն օրը՝ երեկոյան, լեփ-լեցուն էր համալսարանի մեծ դահլիճը: Այնտեղ հավաքվել էին դասախոսներ, ուսանողներ, մայրաքաղաքի հասարակայնության հարյուրավոր ներկայացուցիչներ ու բազմաթիվ հյուրեր:

Ներածական խոսքով երեկոն բացեց համալսարանի կուսակցական կոմիտեի քարտուղար Հ. Բարսեղյանը: Այնուհետև ներկաներին հանրապետության մշակույթի գործիչների անունից հայ ժողովրդի գիտության ու մշակույթի մեծ տոնի առթիվ ողջունեց ՀՍՍՀ մշակույթի նախարար Կամո Ուղումյանը: Նա վերջում համալսարանին նվիրեց Մ. Աբեղյանի «Առավոտը Ջրառատի լեռներում» կտավը:

Կիևի՝ Լենինի շքանշանակիր Ս. Գ. Շևչենկոյի անվան պետական համալսարանի պատվիրակության ղեկավար, ՌԽՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Չուխովը, ողջունելով համալսարանի հոբելյանը, ռեկտոր Մ. Ներսիսյանին հանձնեց ողջույնի նամակն ու իրենց համալսարանի հուշամեդալը:

Ձեռք էր Բրատիսլավայի Յա. Ա. Կոմենսկու անվան համալսարանի պրոռեկտոր, ՉՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Սիլոշ Գոսնորսկու ելույթը: Նա ասաց, որ իրենց համալսարանի գիտական խորհուրդը Երևանի հոբելյար համալսարանին պարգևատրել է Յա. Ա. Կոմենսկու անվան համալսարանի ոսկե մեդալով: Նա ներկաների բուռն ծափահարությունների ներքո մեդալը հանձնեց մեր համալսարանի ռեկտոր պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանին:

Երեկոյի ժամանակ համալսարանի հոբելյանը ողջունեցին նաև Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Գասպարյանը, Երևանի բժշկական ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Ս. Գալստյանը, հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Ա. Թովմասյանը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր Պ. Սեյրանյանը, Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի դասախոս, համալսարանի շրջանավարտ Գ. Անդրեսայանը և Կալինինգրանի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա. Սանջյանը: Իսկ համալսարանի նախկին սան, անվանի բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը կարողաց իր նոր բանաստեղծությունը՝ նվիրված Երևանի համալսարանին:

Բազմահազար շրջանավարտների անունից ելույթ ունեցավ համալսարանի աշխատակից Ս. Շիրինյանը՝ հորելյարին նվիրելով համալսարանի պատմությունը լուսաբանող մի մեծադիր ալբոմ, որը նրա՝ տարիների քրտնաջան ստեղծագործական աշխատանքի արդյունքն է, ուսանողության անունից՝ Բանասիրական ֆակուլտետի լրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Ս. Հարությունյանը:

Վերջում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հանդես եկավ պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Ղ. Վարդապետյանը: Նա շնորհակալություն հայտնեց բոլորին և համալսարանի ուսանողությանը ու երիտասարդ դասախոսներին ցանկացավ նորանոր հաջողություններ:

Երեկոյի վերջում տրվեց ճոխ համերգ, որին մասնակցում էին համալսարանի և Երևանի բուհերի ինքնագործ խմբերը:

Երևանի պետական համալսարանի հիսունամյակի տոնակատարությանը մասնակցում էին ՍՍԿԿ կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչի տեղակալ Իգոր Միխայլովիչ Մակարովը, ՍՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարի տեղակալ Նիկոլայ Սերգեևիչ Եգորովը, ինչպես և Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Թբիլիսիի, Բաքվի, Օրջոնիկիձեի, Օդեսայի, Մախաչկալայի համալսարանների պատվիրակությունները՝ իրենց ղեկավարներով: Իսկ այն համալսարանները, որոնք հնարավորություն չէին ունեցել իրենց ներկայացուցիչներին ուղարկելու, ողջունել էին հեռագրերով:

Հորելյանի օրերին հեռագրով Հայաստանի բուհերի առաջնեկին ողջունել էին ՍՍՀՄ ԳԱ նախագահ Մ. Վ. Կելդիշը, ՍՍՀՄ լուսավորության նախարար Մ. Ք. Պրոկոֆևը, Խորհրդային Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանը, ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկին, ՍՍՀՄ-ում ԳԴՀ դեսպան Հորստ Բիտները, անգլիացի պրոֆեսոր Չարլզ Դաուսեթը, ֆրանսիացի պրոֆեսոր Ֆրեդերիկ Ֆեյդին, գերմանացի պրոֆեսոր Մայգելը, ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ Ջ. Խանգաւայանը (Ֆրանսիա), Թբիլիսիից՝ ակադեմիկոս Ակակի Շանիձեն և այլ հանրահայտ գիտնականներ ու մշակույթի գործիչներ: Ողջույնի հեռագրեր էին ուղարկել նաև համալսարանի՝ տարբեր տարիների շրջանավարտներ, որոնք ղեկավար ու գիտական աշխատանք են կատարում Միության բուհերում,

գիտահետազոտական հիմնարկներում, պետական ու կուսակցական մարմիններում:

Հորեյլանի առթիվ իրենց շնորհավորական հեռագրերն էին ուղարկել Պրագայի, Վարշավայի, Հալլեյի, Բուդապեշտի, Բելգրադի, Հարվարդի և արտասահմանյան մի շարք այլ համալսարանների ռեկտորներն ու անվանի գիտնականները: Համալսարանի 50-ամյա հոբելյանը ի սրտե ողջունել էր նաև Բեյրութի Հայկազյան քոլեջի անձնակազմը:

Այդ հեռագրերը պահվում են համալսարանի թանգարանում: Այնտեղ են պահվում նաև բոլոր այն հուշանվերներն ու ուղերձները, որոնք մեր համալսարանը ստացավ հոբելյանի օրերին:

Այդ օրերին մի հաճելի նորություն ևս ուրախացրեց համալսարանականներին: Թբիլիսիի՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանի ռեկտորի՝ 1970 թ. դեկտեմբերի 22-ի հրամանով Երևանի պետական համալսարանի հիսունամյա հոբելյանի և երկու համալսարանների միջև բարեկամական ու գիտական կապերի ամրապնդման գործում ունեցած նշանակալից ներդրման համար Երևանի համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյանը պարգևատրվեց Թբիլիսիի համալսարանի հիմնադիր Իվանե Ջավախիշվիլու անվան հուշամեդալով:

Համալսարանի կեսդարյա հոբելյանի առթիվ Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով գիտամանկավարժական բեղմնավոր գործունեության համար ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչումներ շնորհվեցին 16, իսկ ՀՍՍՀ վաստակավոր երկրաբանի՝ 4, ՀՍՍՀ վաստակավոր տնտեսագետի՝ 4, ՀՍՍՀ վաստակավոր իրավաբանի՝ 5, ՀՍՍՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի՝ 3, ՀՍՍՀ վաստակավոր գրադարանավարի՝ 3 մարդու: Այդ օրերին ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով պարգևատրվեցին նաև համալսարանի 132 աշխատակիցներ:

Համալսարանի 50-ամյա հոբելյանի տոնակատարության օրերին ընթերցողները ստացան լավ նվերներ: Այդ օրերին համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց «Մեր անվանի դասախոսները», «Երևանի պետական համալսարան» (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գրքերն ու «Երևանի համալսարան» նկարների հուշամատյանը:



«Մեր անվանի դասախոսները» գիրքը ընթերցողներին պատմում է համալսարանի դասախոսական կազմի ավագ սերնդի 129 ներկայացուցչի կյանքի ու գործունեության մասին: Իսկ «Երևանի պետական համալսարան» գիրքը իր մեջ ամփոփում է Հայաստանում բարձրագույն կրթության սկզբնավորման, Երևանի պետական համալսարանի հիմնադրման, նրա ֆակուլտետների ստեղծման ու գործունեության պատմությանը, գիտահետազոտական աշխատանքներին, հրատարակչության ունեցած ուղուն վերաբերող հոդվածներ: Նույն գրքի ռուսերեն և անգլերեն տարբերակներում, այդ բոլորից բացի, համառոտ տեղեկություններ կան մեր քաղաքամայր Երևանի անցյալի ու ներկայի մասին:

Համալսարանի ուսումնագիտական և ուսանողության հարուստ առօրյան լուսաբանող բազմաթիվ հետաքրքիր նկարներ է պարունակում նաև «Երևանի համալսարան» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հուշամատյանը:

Հայ գիտության ու մշակույթի մեծ տոնը շուքով նշեց նաև հանրապետական մամուլը: Այդ տոնին էին նվիրված «Սովետական Հայաստան», «Կոմունիստ» (ռուսերեն), «Սովետ Էրմանիստանե» (ադրբեջաներեն), «Ռյա Թազա» (քրդերեն), «Ավանգարդ», «Երեկոյան Երևան», «Գրական թերթ», «Հայրենիքի ձայն», «Կոմսոմոլեց» (ռուսերեն), «Սովետական դպրոց», «Երևանի համալսարան» և այլ թերթերի՝ 1970 թ. դեկտեմբերի 20-26-ի համարները:

Հայաստանի կենտրոնական ամսագրերի՝ 1970 թ. դեկտեմբերյան համարները նույնպես իրենց էջերում լայն տեղ տվեցին համալսարանի հոբելյանին: Այդ ուղղությամբ աչքի ընկան «Լենինյան ուղիով», «Պատմաբանասիրական հանդես», «Բանբեր Երևանի համալսարանի», «Գիտական տեղեկագիր», «Սովետական Հայաստան», «Գարուն», «Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն» և այլ հանդեսներ: Իսկ «Երևանի համալսարան» լրատուի 8-րդ համարը ամբողջությամբ նվիրված է հոբելյանին:

Հոբելյանի առթիվ նյութեր տպագրվեցին նաև սփյուռքահայ բազմաթիվ թերթերում ու հանդեսներում: Իսկ Հայաստանի ռադիոն ու հեռուստատեսությունը մի քանի օր շարունակ հեռարձակում էին բովանդակալից հաղորդումներ՝ նվիրված համալսարանի առօրյային:

«Համալսարանը 50 տարում»՝ այս խորագիրն էր կրում համալսարանի կենտրոնական ճեմասրահում բացված լուսանկարների ու գրքերի ցուցահանդեսը: Առաջին ցուցավահանի վրա փակցված, արդեն սրբության մատուցներ դարձած նկարները դիտողին մի պահ տեղափոխում էին համալսարանի ստեղծման առաջին տարիները: Այնտեղ կարելի էր տեսնել Հայաստանի անդրանիկ բուհի հիմնադիր գիտնականների աշխատանքային առանձին պահեր՝ անցկացված հարմարություններից գուրկ և սող լսարաններում ու աշխատանոցներում:

Մյուս ցուցավահաններին փակցված լուսանկարները պատմում էին համալսարանի գործունեության հետագա տասնամյակների ու այսօրվա ուսումնական, գիտահետազոտական, ուսանողության հարուստ ու բազմաբեղուն առօրյայի մասին: Մի շարք լուսանկարներ էլ դիտողներին ծանոթացնում էին Երևանի համալսարանի միջազգային ու համամիութենական գիտական կապերին:

Այդ օրերին առանձին պահարաններով ցուցադրվեցին նաև համալսարանի հրատարակությամբ լույս տեսած բուհական դասագրքեր, ձեռնարկներ, մենագրություններ, որոնց հեղինակներն են համալսարանի դասախոս-գիտնականները:

Երախտավոր հայ ժողովուրդը հանդիսավորությամբ ու շուքով նշեց Երևանի պետական համալսարանի կեսդարյա հոբելյանը, որը հիրավի վերածվեց հայոց գիտության ու մշակույթի մեծ տոնի:

Համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվը, ոգևորված կառավարական բարձր պարգևով՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, թևակոխեց իր երկրորդ հիսունամյակը:

## ՄԵԶ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ

Մեր համալսարանի հիմնադրման 50-ամյակի տոնակատարությունների օրերին ռեկտոր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանի անունով աշխարհի տարբեր վայրերից ստացվեցին բազմաթիվ շնորհավորանքի հեռագրեր, որոնց հեղինակները՝ առանձին հիմնարկներ, կազմակերպություններ ու անհատ մարդիկ, դրվատում են մեր համալսարանը, նշում նրա դերը գիտության և ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների համար որակյալ մասնագետներ պատրաստելու գործում:

Ստորև թարգմանաբար տպագրում ենք ստացված հեռագրերի տեքստերը:

- ՄՍՀՄ գիտությունների ակադեմիան սրտանց շնորհավորում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողությանը, աշխատակիցներին և անձամբ Չեզ՝ նշանավոր տարելիցի՝ Երևանի համալսարանի 50-ամյակի առթիվ:

Համալսարանի կոլեկտիվին ցանկանում ենք հետագա ստեղծագործական մեծ հաջողություններ երիտասարդ մասնագետների պատրաստման և գիտության զարգացման ասպարեզներում:

ՄՍՀՄ գիտությունների ակադեմիայի  
նախագահ, ակադեմիկոս ԿԵԼԴԻՇ  
ՄՍՀՄ գիտությունների ակադեմիայի  
գլխավոր գիտնական քարտուղար,  
ակադեմիկոս ՊԵՅՎԵ

- Շնորհավորում ենք Երևանի պետական համալսարանի կոլեկտիվին հոբելյանի առթիվ: Բարձր ենք գնահատում ձեր ավանդը գիտության և լուսավորության զարգացման ասպարեզում: Կոլեկտիվին ցանկանում ենք նոր հաջողություններ գիտության մեջ, կադրերի պատրաստման և դպրոցին օգնելու գործում:

ՄՍՀՄ լուսավորության նախարար ՊՐՈԿՈՖԵՎ

- Արհմիության նախագահությունը Երևանի պետական համալսարանի հիմնադրման հիսունամյակի առթիվ սրտանց շնորհավորում է

պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողությանը և աշխատակիցներին:

Բարձրորակ մասնագետների պատրաստման բնագավառում Ձեր համալսարանը հասել է մեծ հաջողությունների, իսկ գիտության ու մշակույթի զարգացման գործում նա ունի իր արժանի ներդրումը:

ՍՍՀՄ լուսավորության բարձրագույն դպրոցի և գիտական հիմնարկների աշխատողների արհմիութենական կենտրոնական կոմիտեի նախագահ  
Տ. ՅԱՆՈՒՇԿՈՎՍԿԱՅԱ

• Տաշքենդի՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Վ. Ի. Լենինի անվան պետական համալսարանի կոլեկտիվը սրտանց շնորհավորում է Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողությանը և աշխատակիցներին: Ի փառս հայրենիքի՝ ցանկանում ենք Ձեզ հետագա մեծ հաջողություններ գիտության զարգացման ու բարձրորակ մասնագետների պատրաստման գործում:

Տաշքենդի՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Վ. Ի. Լենինի անվան պետական համալսարանի ռեկտոր ԱԶԻԶՈՎ

• Սրտանց շնորհակալություն ենք հայտնում տոնակատարություններին մասնակցելու հրավերի համար և մաղթում մեծ հաջողություններ Ձեր ազնիվ աշխատանքի ասպարեզում:

Կրթության բնագավառի հաջողությունները, ինչպես նաև գիտության ու մշակույթի ասպարեզներում ունեցած ձեռ ներդրումները մեկ անգամ ևս հաստատում են առաջադեմ ու հրաշալի հայ ժողովրդի բազմադարյան ավանդները:

Ձեր կետդարյա աշխատանքը կոմունիստական շինարարության ու խորհրդային մեծ ժողովրդի ինտերնացիոնալիստական բարեկամության մեջ հավաստումն է կառավարական այն բարձր պարգևի, որին դուք արժանացաք հորեյանական օրերին:

Մեր քանկագին գործընկերներին հղում ենք մեր լավագույն ցանկությունները:

Քիշնևի պետական համալսարանի ռեկտոր Բ. Մելնիկ

- Գորկի քաղաքի համալսարանի ռեկտորատը, կուսակցական կոմիտեն և հասարակական կազմակերպությունները ջերմորեն շնորհավորում են Ձեզ Երևանի պետական համալսարանի հիմնադրման հիսունամյակի կապակցությամբ և ցանկանում մեծ հաջողություններ գիտահետազոտական աշխատանքների ծավալման, գիտության ու արտադրության կապի ամրապնդման և բարձրորակ մասնագետների պատրաստման բնագավառներում:

Գորկու համալսարանի ռեկտոր ՌԻԳՈԴՉԻԿՈՎ

- Ուրալի՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Ա. Մ. Գորկու անվան պետական համալսարանի կոլեկտիվը Երևանի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ սրտանց շնորհավորում է համալսարանի պրոֆեսորներին, դասախոսներին, ասպիրանտներին, ուսանողներին և աշխատակիցներին:

Ձեր կոլեկտիվին անկեղծորեն ցանկանում ենք մեծ հաջողություններ ուսումնադաստիարակչական, գիտական և որակյալ մասնագետների պատրաստման աշխատանքներում:

Ուրալի՝ Աշխատանքային կարմիր դրոշի  
շքանշանակիր Ա. Մ. Գորկու անվան  
պետական համալսարանի ռեկտոր,  
պրոֆեսոր ԿՈՒՁՆԵՅՈՎ

- Խորհրդային Հայաստանի գիտության ու մշակույթի օրրանի՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյա փառապանծ հոբելյանի օրերին ջերմորեն շնորհավորում են Ձեզ և Ձեր կոլեկտիվին նշանավոր տարելիցի առթիվ, ցանկանում են Ձեզ երիտասարդ, որակյալ կադրերի դաստիարակության ազնվագույն գործում նոր ու մեծ հաջողություններ և գիտության զարգացում՝ ի փառս Ձեր հանրապետության, ի փառս խորհրդային հայրենիքի:

Վրացական ՍՍՀ բարձրագույն և  
միջնակարգ մասնագիտական կրթության  
նախարար, ակադեմիկոս Գ. ՋԻԲԼԱՉԵ

- Ջերմորեն շնորհավորում են Երևանի պետական համալսարանի կետարյա գոյության փառապանծ հոբելյանը, որն ուղեկցվել է պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքային սխրանքներով, գիտության բազմաթիվ ճյուղերում ակնառու նվաճումներով և ժողովրդին ծառայելու համար պատրաստված բազմաթիվ որակյալ մասնագետների դաստիարակման գործով:

Ամբողջ սրտով ցանկանում են հետագա հաջողություններ՝ ի փառս հարագատ Հայաստանի և հարևան ժողովուրդների հետ նրա բարեկամական կապերի ամրապնդման:

Վրացական և հայկական հանրապետությունների  
գիտության վաստակավոր գործիչ,  
ակադեմիկոս Ա. ՇԱՆԻՉԵ

- ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրենությունը, կուսակցական կոմիտեն և հասարակական կազմակերպությունները Երևանի պետական համալսարանի 50-ամյա փառապանծ հոբելյանի առթիվ սրտանց շնորհավորում են պրոֆեսորադասախոսական կազմին, ասպիրանտներին և ուսանողությանը:

Հանրապետության բարձրագույն կրթության առաջնեկ, Խորհրդային Հայաստանի հասակակից ու նրա ծնունդ Երևանի համալսարանը, որի 50-ամյակը հանդիսավորությամբ նշվեց ոչ միայն Ձեր հանրապետությունում, այլև մեր հայրենիքի եղբայրական բոլոր ժողովուրդների կողմից, իր մեծ ներդրումն ունի ժողովրդական տնտեսության, գիտության ու մշակույթի ամենատարբեր բնագավառների համար բարձրորակ մասնագետների պատրաստման գործում:

Մեզ առանձնապես հաճելի է նշել, որ Երևանի համալսարանում աշխատել են բազմաթիվ խոշոր գիտնականներ, որոնք հարստացրել են ոչ միայն հայրենական, այլև համաշխարհային արևելագիտությունը, նրանց թվում՝ պրոֆեսոր Լեոն, ակադեմիկոսներ Աճառյանը, Մանանդյանը, Օրբելին և այլք:

Երևանի համալսարանի բոլոր դասախոսներին և ուսանողությանը ցանկանում ենք նոր, ավելի մեծ հաջողություններ գիտության և ուսումնառության ասպարեզներում:

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի  
արևելագիտության ինստիտուտի կոլեկտիվի անունից՝  
ակադեմիկոս Բ. Գ. ԳԱՖՈՒՐՈՎ

- Փառապանծ հորեյանի առթիվ ջերմորեն շնորհավորում են Չեզ և ողջ կոլեկտիվին՝ պրոֆեսորադասախոսական կազմին, աշխատակիցներին և ուսանողությանը: Բազմաթիվ ուսանող սերունդների հետ հպարտանում են, որ եղել են համալսարանի սանը, դաստիարակվել այն սքանչելի ավանդույթների ոգով, որոնք հաստատված են համալսարանի կազմավորման օրերից:

Թող հավերժ հարատևի գիտության ու մշակույթի այդ հիանալի օջախը, թող հավերժ բոցկլտա նրանում բարու և ճշմարտության ջահը:

Ակադեմիկոս ՉԱՅԼԱԽՅԱՆ

- Վարչավայի համալսարանի կոլեկտիվը և անձամբ ես հղում ենք մեր սրտագին ողջույնները և շնորհավորում Չեզ ձեր համալսարանի 50-ամյակի առթիվ: Մենք հիացած ենք ձեր ձեռք բերածով և ցանկանում ենք ավելի մեծ նվաճումներ ձեր սոցիալիստական հանրապետության բարգավաճման և համաշխարհային գիտության զարգացման գործում:

Վարչավայի համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր ՈՒԲԻՑԿԻ

- Շնորհավորում են Խորհրդային Հայաստանի բարձրագույն կրթության առաջնեկ Երևանի պետական համալսարանի կոլեկտիվին 50-ամյա փառապանծ տոնի կապակցությամբ:

Իր գոյության ընթացքում պետական համալսարանը երիտասարդ սերնդի կրթության և դաստիարակության ասպարեզում, ինչպես նաև երկրի գիտության ու մշակութային կյանքում ունեցել է հսկայական ներդրում:

Հայաստանի Հանրապետության խոշորագույն և առաջատար գիտական կենտրոնի կոլեկտիվը ոչ միայն երկրին տվել է բարձրորակ մասնագետների հսկայական բանակ, այլև ժամանակակից գիտության բոլոր բնագավառներում կատարում է գիտահետազոտական մեծ աշխատանքներ:

Երևանի պետական համալսարանի ողջ կոլեկտիվին մանկավարժական և գիտահետազոտական աշխատանքներում ցանկանում են ստեղծագործական մեծ հաջողություններ, քաջառողջություն և երջանկություն անձնական կյանքում:

Հարգանքներով՝ Խորհրդային Միության մարշալ Հ. Բաղրամյան

• Ողջուն հիսունամյա հոբելյարին: Թող անխափան ըլլա գիտության և կրթության օջախի ծառայությունը հայ ժողովրդին ու մարդկությանը:

ՀԱՅԿԱԶ ԿՈԼԵՁ

• Հարվարդի համալսարանի հայագիտական ամբիոնի կողմից կուգանք ներկայացնել Ձեզ մեր ամենաջերմ շնորհավորությունները այս բարեբաստիկ առիթով:

Երախտապարտ ենք մաս Ձեր լուրջ հետաքրքրության համար, գոր հաճախ կցուցաբերենք Հարվարդի համալսարանի հայագիտական աշխատանքների վերաբերյալ: Հուսով ենք, որ հետ այսու գործակցութեան ոգին առավել ևս կամրապնդվի մեր երկու համալսարաններու միջև:

Հաջողության լավագույն մաղթանքներով՝  
պրոֆեսոր ՌՌԲԵՐՏ Վ. ԹՈՍՍՈՆ  
Պատասխանատու վարիչ Հարվարդի  
հայագիտության ամբիոնի

• Բելգրադի համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմը ողջունում է ձեր համալսարանի 50-ամյա հոբելյանը և ցանկանում գիտահետազոտական և ուսումնական նոր հաջողություններ: Թող հետագայում ևս առաջադեմ գիտության զարգացման ու ամրապնդման գործում ի կատար ածվեն ձեր ձգտումները:

Բելգրադի համալսարանի անձնակազմի  
անունից՝ ռեկտոր, պրոֆեսոր  
ԴՐԱԳԻՍԱ ԻՎԱՆՈՎԻՉ

• 1970 թվականի դեկտեմբերի 23-ին Երևանի պետական համալսարանը նշում է իր հիմնադրման 50-ամյակը: Այդ ժամանակամիջոցում համալսարանը դարձել է ամբողջ աշխարհում ճանաչված ուսումնական հաստատություն և դաստիարակել է բազմաթիվ հրաշալի գիտնականներ:

1969 թ. Գերմանական Դեմոկրատական Հանրապետության ուսանողների մի մեծ խմբի հնարավորություն տրվեց ֆիզիկայի և մաթեմա-



տիկայի գծով կրթություն ստանալու Ձեր աշխարհահռչակ պրոֆեսորների ղեկավարությամբ:

Մենք խորապես համոզված ենք, որ ԳՂՀ այդ երիտասարդ քաղաքացիները Երևանի պետական համալսարանում ոչ միայն կդառնան բարձր որակավարման մասնագետներ, այլև կդաստիարակվեն որպես սոցիալիզմի և կոմունիզմի համոզված կառուցողներ, Խորհրդային Սիոթյան և Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության ժողովուրդների բարեկամության իսկական ջատագովներ:

Այդ բոլորի համար Ձեզ և Ձեր ղեկավարությամբ աշխատող ողջ կոլեկտիվին կամենում են ամբողջ սրտով արտահայտել իմ շնորհակալությունը:

Թույլ տվեք ՍՍՀՄ-ում ԳՂՀ ղեսպանատան բոլոր աշխատակիցների անունից շնորհավորել Ձեզ և Երևանի պետական համալսարանի ողջ կոլեկտիվին՝ դասախոսներին, աշխատակիցներին և ուսանողությանը, համալսարանի գոյության հիսունամյակի կապակցությամբ և ցանկանալ հետագա հաջողություններ կոմունիզմի կառուցման գործում, ինչպես նաև երջանկություն անձնական կյանքում:

Սոցիալիստական ողջույններով՝ ԲԻՏՆԵՐ

● Բեռլինի Հումբոլդտի համալսարանի աշխատողների անունից հղում են իմ լավագույն և ամենաջերմ ցանկությունները Երևանի պետական համալսարանի ողջ կոլեկտիվին 50-ամյակի կապակցությամբ: Ողջունում են ձեր այն նշանակալից առաջընթացը, որ ուսման մեջ ու գիտության բնագավառում ձեռք եք բերել 50 տարիների ընթացքում:

Ցանկանում են նորանոր հաջողություններ սոցիալիստական գիտահետազոտական աշխատանքների բնագավառում:

Հումբոլդտի համալսարանի ռեկտոր,  
պրոֆ. ՎԻՐՅ ԲԵՐԳԵՐ

● Թո՛ւյլ տվեք Երևանի պետական համալսարանի 50-ամյակի կապակցությամբ Բուդապեշտի Լորանդ Էտվոշի անվան պետհամալսարանի խորհրդի և իմ անունից ցանկանալ ձեր համալսարանի դասախոսական կազմին և ուսանողությանը մեծ հաջողություններ գիտական և ուսումնական աշխատանքներում:

Ռեկտոր, դոկտոր ԿԱՌՈՒ ԵԱԳԻ

- Թանկագին ընկեր ռեկտոր, թո՛ւյլ տվեք սրտագին շնորհավորանքներ հղել Ձեզ, պրոֆեսորադասախոսական կազմին և բոլոր ուսանողներին համալսարանի 50-ամյակի կապակցությամբ: Այդ հիշարժան տարելիցի առթիվ ցանկանում եմ Ձեզ և միաժամանակ համալսարանի բոլոր աշխատողներին մեծ հաջողություններ քաղաքական, գիտական ու գաղափարական բնագավառներում:

ԳԴՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության անունից ընդունեցեք շնորհակալությունս՝ գերմանացի ուսանողների դաստիարակության գործը կազմակերպելու համար: Համոզված եմ, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Երևանի պետական համալսարանը ավելի կգարգանա, կծաղկի, և մեծ հաջողություններ ձեռք կբերեք ուսանողությանը կոմունիստական ոգով դաստիարակելու և կրթելու ուղղությամբ:

Սոցիալիստական ողջույներով՝  
պրոֆ. ԲՈՒՀԵՄԵ

- Ստացանք Ձեր մեծահոգի հրավերը՝ ուղղված պարոն Մավյանին և ինձ՝ մասնակցելու Երևանի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյա տարելիցի տոնակատարությանը: Անչափ շնորհակալ եմք հրավերի համար: Խորապես ցավում ենք, որ չկարողացանք մասնակցել հորեյանական արարողություններին տարեվերջյան գործերով ծանրաբեռնված լինելու պատճառով:

«Գալուստ Գյուլբենկյան» ընկերությունը 50-ամյակի առթիվ հղում է Ձեզ սրտագին շնորհավորանքներ և համալսարանին մաղբում ծաղկուն ապագա:

Հարգանքներով՝  
ՌՈՒԲԵՐՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ

- Շնորհակալություն եմ հայտնում Ձեր շատ սիրալիր հրավերի համար՝ ներկա գտնվելու Երևանի պետական համալսարանի հիսունամյակի տոնակատարությանը:

Մեծ հաճույքով հղում եմ Ձեզ մեր համալսարանի եղբայրական ողջույնները այդ երջանիկ առիթի կապակցությամբ:

Չեզ պետք է մեծ գոհունակություն պատճառի այն հանգամանքը, որ կեսդարյա իր գոյությամբ համալսարանն այժմ դարձել է Խորհրդային Հայաստանի ուսման և գիտության առաջատար կենտրոններից մեկը և մեծ ծառայություններ է մատուցել ուսման բոլոր բնագավառներում:

Մեր կրթոտ ցանկությունն է, որ Չեր համալսարանն է՛լ ավելի ամրապնդվի և դառնա գիտության ամենափայլուն կենտրոնն աշխարհում:

Շնորհակալությամբ հայտնում եմ իմ մեծ ավստասանքը՝ ի վիճակի չլինելու անձամբ մասնակցելու այս տոնական հանդիսություններին:

Լավագույն ցանկություններով՝  
Չեր անկեղծ ՍՈՒՐԱՆՋ ԲՀԱՆ,  
Փենջաբիի համալսարանի պրոռեկտոր

• Օքսֆորդի համալսարանի հայագիտական ամբիոնի կողմից ողջուններ Երևանի համալսարանի 50-ամյակի առթիվ:

Պրոֆեսոր ՉՈՐԼՁ ԴՈՈՒՍԵԹ

• Անսահման հիացմունքով մաղթում եմ գիտական եռանդուն գործունեություն, սրտագին ցանկություններ և մշտապես փայլուն ապագա:

Պրոֆեսոր ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻ

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 60 ՏԱՐԵԿԱՆ Է\***

Բոլորեց Խորհրդային Հայաստանի կրթական ու գիտական խոշորագույն կենտրոնի՝ Երևանի՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանի հիմնադրման 60-ամյակը: Հանրապետության լուսժողկոմատի՝ 1920 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումով իրականացավ հայ ժողովրդի վաղեմի երազանքը:

«Անբացատրելի հաճույքով մըն է, որ կգրենք ձեզի մեր այս անդրանիկ նամակը,- սաված է 1923 թվականին Փարիզի հայ համալսարանական միության՝ Երևանի համալսարանի պրոֆեսորադասախոսական

---

\* «Գարուն» ամսագիր, 1982, թիվ 1, էջ 7-9:

կազմին հղած ողջույն-նամակում:- Դուք անհնարին պայմաններու մեջ, հազար ու մեկ դժվարությունների դեմ պայքարելով, Հայաստանի սրտին մեջ իսկ ստեղծեցիք հայկական մշակույթի բարձրագույն վառարանը, Արարատի հովանիին տակ վերականգնելով մեր բազմադարյան քաղաքակրթությունը»:

Հանրապետության բուհերի առաջնեկի ստեղծումը ջերմությամբ ընդունեցին ոչ միայն աշխարհասփյուռ հայության պատառիկները, այլև մեր երկրի բոլոր ժողովուրդները: Մոսկվայի, Պետրոգրադի, Խարկովի, Կազանի և Մյուրիայի այլ խոշոր քաղաքների համալսարանները բարեկամական ձեռք մեկնեցին մեր հանրապետությանը, օգնեցին նորաստեղծ կրթօջախին հայթայթելու ծրագրեր, դասագրքեր և լաբորատոր սարքավորումներ, լուծելու ուսումնական պրոցեսի ու մի շարք այլ խնդիրների հետ կապված բազմաթիվ հարցեր: 1924 թ. լինելով Խորհրդային Հայաստանում՝ ՍՍՀՄ լուսժողկոմ Անատոլի Լունաչարսկին գրում է. «Անձամբ ծանոթանալով համալսարանին՝ ես եկա մի համոզման, որ անպայման անհրաժեշտ է ամեն կերպ օգնություն ցույց տալ այդ փոքրիկ հանրապետությանը, որպեսզի բարձրագույն կրթության այդ ջահը, որը պետք է քաղաքակրթության կենտրոնը դառնա հայ լեզվին տիրապետող բոլոր մարդկանց համար, ոչ թե մարի, այլ ավելի լավ վառվի»:

Եվ իրոք բոցավառվեց այդ ջահը: Ըստ կարճ ժամանակամիջոցում Հայաստանի կառավարության հրավերով Երևան եկան բազմաթիվ գիտնականներ՝ մարդիկ, որոնց շնորհիվ ստեղծվեցին ուսումնական ու գիտական աշխատանքի լավագույն ավանդույթներ, կրթվեց ու դաստիարակվեց այն սերունդը, որն այժմ էլ պատվով է շարունակում իր նախորդների սկսած հայրենամովեր գործը:

Երևանի համալսարանը զարգացել է հանրապետության հետ մեկտեղ, նպաստել հայ ժողովրդի գիտական ու մշակութային կյանքի առաջընթացին: Նրա ֆակուլտետներից է ճյուղավորվել մեր այսօրվա բուհերի կեսից ավելին, մեծ է նրա ներդրումը նաև Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծման գործում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին և դրա հաղթական ավարտից հետո այստեղ վերակառուցվեցին աշխատանքները, բացվեցին նոր ֆակուլտետներ ու բաժիններ, ամբիոններ ու լաբորատորիաներ:

Նոր վերելք ապրեց ուսումնական ու գիտահետազոտական կյանքը: Կատարվեցին նոր ու հետաքրքիր գիտափորձեր, ծանրակշիռ աշխատություններ ստեղծվեցին հայագիտության, բնագիտության, հումանիտար ու հասարակական մյուս գիտությունների ասպարեզներում:

Ներկայումս համալսարանի 87 ամբիոններում և 13 պորբլեմային ու ճյուղային լաբորատորիաներում, ինչպես նաև կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտում աշխատում է շուրջ 3000 մարդ:

Հանրապետության մայր բուհի ցերեկային, երեկոյան և հեռակա 16 ֆակուլտետներում սովորում են 8000 ուսանողներ և 500 ասպիրանտներ, որոնք, ուսումնառությունից բացի, ընդգրկված են տեղի ակումբներում և խմբակներում, նամակագրական սերտ կապեր ունեն աշխարհի բազմաթիվ ուսանողական ու երիտասարդական կազմակերպությունների հետ: ԼԿԵՄ կոմիտեին կից գործող «Կռունկ» միջազգային կապերի և ինտերնացիոնալ բարեկամության՝ Գայի անվան ակումբներում ռազմահայրենասիրական դաստիարակության, զբոսաշրջության և մարզական ակումբների միջոցով ուսանողները ընդլայնում են իրենց բարեկամական կապերը, բարձրացնում սպորտային վարպետությունը, դառնում կարգայիններ, արշավների միջոցով նրանք ծանոթանում են հանրապետության հուշարձաններին:

Շեֆական աշխատանքների «Ջահ» ակումբը լուրջ աշխատանքներ է ծավալում դպրոցականների շրջանում, նրանց կողմնորոշում մասնագիտության ընտրության հարցում: Համալսարանի «Փոքր ակադեմիայում» այժմ սովորում են 1000-ից ավելի դպրոցականներ, որոնց ուսուցումը կազմակերպվում է «Պատանի մաթեմատիկոս», «Պատանի ֆիզիկոս», «Պատանի բանասեր», «Պատանի քիմիկոս», «Պատանի կենսաբան» և մասնագիտական թեքումներ ունեցող այլ դպրոցներում:

Մեծ համբավ ունեն համալսարանի ուսանողական երգչախումբը և կամերային ու «Նաիրի» վոկալ-գործիքային համույթները, որոնք իրենց գոյության ընթացքում հանդես են եկել Միության ու արտասահմանյան բազմաթիվ քաղաքներում կազմակերպված փառատոներում, դարձել դափնեկիրներ ու շահել մրցանակներ:

Համալսարանում ամեն տարի անցկացվում են մաս «Ուսանողական գարուն» և «Քաղաքական երգ» փառատոներ, որոնց մասնակցում են ինչպես հանրապետության, այնպես էլ Միության շատ քաղաքներից:

Իր գոյության վեց տասնամյակների ընթացքում Երևանի պետական համալսարանը տվել է շուրջ 40 հազար շրջանավարտներ: Նրանցից մոտ 2000-ը պաշտպանել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, 50-ը դարձել են տարբեր գիտությունների ակադեմիաների ակադեմիկոսներ ու թղթակից անդամներ: Այստեղ ուսանած կադրերը մեծ ներդրում ունեն երկրի արդյունաբերության ու գյուղատնտեսության, գիտության ու մշակույթի, գրականության ու արվեստի զարգացման գործում, շատերը դարձել են անվանի գիտնականներ ու գրողներ, կուսակցական ու պետական, հասարակական ու մշակութային գործիչներ, հրապարակախոսներ ու լրագրողներ:

Ուշագրավ է, որ հանրապետության մայր բուհը մասնագետներ է պատրաստում մաս արտասահմանյան երկրների համար: Միայն վերջին երկուսուկես տասնամյակների ընթացքում համալսարանն ավարտել են 300-ից ավելի արտասահմանցի ուսանողներ, ասպիրանտներ ու ստաժորներ՝ աշխարհի 27 երկրներից:

Բացի ուսանողներից՝ Երևանի համալսարանը ընդունում է մաս արտասահմանյան մասնագետների, գիտության վերջին նվաճումների մասին ինֆորմացիա է փոխանակում մի շարք այլ կրթօջախների ու գիտական կենտրոնների հետ: Միայն վերջին տասը տարում Երևանի պետական համալսարանը գիտական կապեր է հաստատել աշխարհի 15-ից ավելի խոշորագույն համալսարանների հետ:

Երևանի պետական համալսարանը մեծ հեղինակություն է վայելում ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս: ՍՍՀՄ Նախարարների խորհրդի որոշմամբ 1978 թվականին այն դասվել է Խորհրդային Միության 70 առաջատար բուհերի շարքը, իսկ նրա կոլեկտիվը արդեն չորրորդ անգամ անընդմեջ հաղթող է ճանաչվում հանրապետությունում ծավալված սոցմրցության մեջ և արժանանում է Հայաստանի կոմկուսի կենտկոմի, Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի, ՀԱՄԽ, ՀԼԿԵՄ կենտկոմի փոխանցյի կարմիր դրոշին:

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 75 ՏԱՐԻՆ՝\*

Հայաստանում բարձրագույն կրթության և գիտության զարգացման գործում բացառիկ է Երևանի պետական համալսարանի դերը: Այն, հիմնադրվելով Հայաստանի առաջին հանրապետության օրոք՝ 1919 թ. մայիսի 16-ին, և լինելով մեր հանրապետության բուհերի առաջնեկը, իր գոյության յոթուկես տասնամյակների ընթացքում պատրաստել է շուրջ 60 հազար բարձրորակ մասնագետներ, որոնցից 600-ը օտարերկրացիներ էին: Իր հիմնադրման տարում համալսարանն ունեցել է ընդամենը մեկ՝ պատմալեզվագրական ֆակուլտետ՝ 262 ուսանողներով: Հետագա տասնամյակներում վերակառուցվել և ընդլայնվել են նրա ֆակուլտետները՝ ընդգրկելով ժողովուրդագրության, գիտության, լուսավորության և մշակույթի գրեթե բոլոր բնագավառների համար մասնագետներ պատրաստելու ոլորտները: Անցած 75 տարիների ընթացքում Երևանի համալսարանի ֆակուլտետների հիման վրա են ստեղծվել մեր հանրապետության մի շարք բուհեր, որոնք են Պոլիտեխնիկական (ներկայումս՝ ճարտարագիտական), Գյուղատնտեսական, Բժշկական, Մանկավարժական, Ժողովրդական տնտեսության, Օտար լեզուների ինստիտուտները:

Այսօր Երևանի համալսարանն ունի 18 հիմնական և 2 օժանդակ ֆակուլտետ՝ 110 ամբիոններով, որոնցում աշխատում են շուրջ 1200 դասախոսներ, այդ թվում՝ 25 ակադեմիկոս և թղթակից անդամ, 130 դոկտոր-պրոֆեսոր, 700 գիտությունների թեկնածու և դոցենտ: Ուսանողների թիվը հասնում է մոտ 10 հազարի, որոնցից 300-ը օտարերկրացիներ են, իսկ ասպիրանտներինը՝ 250-ի: Համալսարանը մասնագետներ է պատրաստում 28 մասնագիտությունների և 77 մասնագիտացումների գծով:

Երևանի համալսարանը նաև գիտական աշխատանքի խոշոր կենտրոն է, որտեղ հետազոտություններ են կատարվում 36 հիմնական ուղղություններով: Այդ աշխատանքներն ընթանում են «Լազերային տեխնիկա» գիտաարտադրական միավորում, մաթեմատիկայի միջբուհական կենտրոնում, հայագիտական հետազոտությունների պորբլեմային, 26 գիտահետազոտական լաբորատորիաներում ու 13 խմբերում և 110 ամբիոններում: Համալսարանի գիտնականները զբաղվում են է-

\* «Պատմաբանամիրական հանդես», 1994, թիվ 3, էջ 263-268:

ներգետիկայի, բարձր էներգիաների, լազերային տեխնիկայի, ֆունկցիաների տեսության, աստղաֆիզիկայի, տեսական ֆիզիկայի, պինդ մարմնի ֆիզիկայի, օրգանական և ֆիզիկական քիմիայի, բժշկության, կենսատեխնոլոգիայի, կենսաբանական ակտիվ նյութերի սինթեզի, գյուղատնտեսության, հանքային ռեսուրսների, հայագիտության, բառարանագրության, հայ ժողովրդի պատմության, գրականագիտության ու լեզվի, գրական-մշակութային կապերի և ժամանակակից գիտությունների մի շարք այլ խնդիրների ուսումնասիրությամբ: Համալսարանի դերը կարևորվում է նաև ժողովրդի հասարակական գիտակցության ձևավորման ու նրա կրթական մակարդակի բարձրացման ասպարեզներում:

Նկատի ունենալով մեր մայր բուհի այդ լուրջ ներդրումը երկրի գիտամշակութային ու հասարակական-քաղաքական կյանքում՝ Հայաստանի Հանրապետության նախագահի՝ մարտի 23-ի հրամանագրով 1994 թ. հոկտեմբերի 6-11-ը հայտարարվեցին Երևանի պետական համալսարանի 75-ամյա հոբելյանի անցկացման օրեր: Այդ առթիվ ստեղծված հոբելյանական հանձնաժողովը (նախագահ՝ Լ. Տեր-Պետրոսյան) նախապատրաստական զգալի աշխատանքներ կատարեց գիտամշակութային այդ մեծ տարելիցը պատշաճ մակարդակով անցկացնելու համար: Տպագրվեցին հոբելյանին նվիրված գրքեր և ժողովածուներ, տեղի ունեցան հանդիսավոր նիստ, գիտական նստաշրջան, այլ հավաքույթներ, հանդիպումներ, պատրաստվեցին հուշանվերներ և այլն:

Հոկտեմբերի 10-ին համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ գիտական խորհրդի ընդլայնված նիստ, որին, խորհրդի անդամներից բացի, մասնակցում էին պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ, համալսարանի տարբեր տարիների շրջանավարտներ և վարչական աշխատողներ, հանրապետությունում հավատարմագրված դեսպանատների աշխատակիցներ, հյուրեր՝ ժամանած արտասահմանյան մի շարք երկրներից ու Սփյուռքից: Բացելով նիստը՝ համալսարանի ռեկտոր, գիտխորհրդի նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն ասաց, որ այսօր կկատարվի համալսարանի բարձր պարզև՝ «Գիտական ուսումնասիրությունների և բարձրագույն կրթության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար» մեդալի հանձնման և պատվավոր կոչումների շնորհման հանդիսավոր արարողություն:



Խորհրդի գիտքարտուղար Արամ Միմոնյանը ներկայացրեց ԵՊՀ գիտխորհրդի՝ 1994 թ. սեպտեմբերի 22-ի որոշումը՝ ՀԳԱԱ ակադեմիկոսներ, մեր ժամանակի մեծանուն գիտնականներ, Երևանի պետական համալսարանի նախկին ռեկտոր, պատմաբան Մկրտիչ Գեղամի Ներսիսյանին և տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր Գուրգեն Մերոբի Սահակյանին հիշյալ մեղալով պարզևատրելու մասին: Ելույթ ունեցողը հակիրճ կերպով ներկայացրեց պարզևատրվածների կյանքը և գիտամանկավարժական ու հասարակական գործունեությունը:

Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը ծնվել է 1910 թ. Աշտարակի շրջանի Փարպի գյուղում: 1931 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը՝ աշխատանքի է անցել ՀԿԿ կուսպատմության ինստիտուտում, ապա՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական բաժանմունքի (ԱրմՖԱՆ) պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտում: 1940 թ. ստանձնել է վերջինիս տնօրենությունը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Պատերազմից վերադառնալով՝ նա նշանակվել է ՀԳԱ պատմության ինստիտուտի տնօրենի տեղակալ ու բաժնի վարիչ: 1950-1962 թթ. եղել է ՀԳԱ փոխնախագահ, իսկ 1962-1966 թթ.՝ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: Նրա անմիջական նախաձեռնությամբ 1958 թ. հիմնադրվել է Հայաստանում և արտասահմանում գիտական մեծ հեղինակություն վայելող ՀԳԱ «Պատմաբանասիրական հանդեսը», որի անփոփոխ խմբագիրն է մինչև օրս: 1961 թ. նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում:

Մ. Ներսիսյանը Երևանի համալսարանի հետ կապված է եղել դեռևս 1930-ական թթ., որտեղ կատարել է դասախոսական բեղմնավոր աշխատանք, եղել ամբիոնների վարիչ, իսկ 1966-1977 թթ. ստանձնել է համալսարանի ռեկտորի պարտականությունները: Նրա ջանքերով համալսարանում ամուր հիմքերի վրա են դրվել ուսումնադաստիարակչական և գիտահետազոտական աշխատանքները, բացվել են մի շարք նոր ֆակուլտետներ ու ամբիոններ, մասնագիտություններ ու մասնագիտացումներ: Նրա անմիջական նախաձեռնությամբ համալսարանում 1968 թ. ստեղծվել է նաև հայագիտական հետազոտությունների պրորեկտիվ լաբորատորիան, լույս են տեսել բազմաթիվ արժեքավոր դասագրքեր ու մենագրություններ, բառարաններ ու ուսումնական ձեռնարկներ, հիմ-

նադրվել են «Բանքեր Երևանի համալսարանի», «Երևանի համալսարան» (ներկայումս՝ «Հանդես Երևանի համալսարանի»), «Երիտասարդ գիտաշխատող» հանդեսները: Ներսիսյանն այսօր աշխատում է ՀԳԱԱ պատմության ինստիտուտում՝ որպես բաժնի վարիչ: Նա է կազմել ու խմբագրել «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն, որն ունեցել է ռուսերեն երկու հրատարակություն (Երևան, 1966 և 1983). վերջին հրատարակությունը՝ լրացված ու բարեփոխված, նորերս թարգմանվեց ու տպագրվեց նաև հայերեն (Երևան, 1992): Մ. Ներսիսյանը կազմել ու խմբագրել է բազմաթիվ կոլեկտիվ աշխատություններ, ժողովածուներ և ուսումնական ձեռնարկներ, այդ թվում՝ «Հայ ժողովրդի պատմության» միհատորյակը, որն ունեցել է դարձյալ երկու հրատարակություն (Երևան, 1972 և 1981):

Մեծավաստակ գիտնականը ծավալել է նաև հասարակական լայն գործունեություն, եղել ՀԿԿ կենտկոմի և երքադկոմի անդամ, Հայաստանի, ապա և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մի շարք գումարումների պատգամավոր: Նա պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով: Մ. Ներսիսյանին Երևանի պետական համալսարանի բարձրագույն պարզևին արժանացները նրա բազմամյա գիտամանկավարժական և հասարակական գործունեության, ինչպես և համալսարանական տարիների ժրաջան աշխատանքի գնահատանքն է:

Ծերունագարդ գիտնականը, համալսարանի ռեկտոր Ռ. Մարտիրոսյանի ձեռքից ընդունելով բարձր պարգևը, ասում է. «Իմ խորին շնորհակալությունն են հայտնում Երևանի պետական համալսարանի գիտխորհրդի բոլոր անդամներին, ռեկտոր, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին, որոնք հարկ են համարել ինձ պարգևատրելու այս բարձր մեդալով: Խորապես զգացված են և իմ շնորհակալությունն են հայտնում բոլորին: Ես երկար տարիներ կապված եմ եղել համալսարանի հետ և այսօր համալսարանի ղեկավարությանը, պրոֆեսորադասախոսական կազմին, ողջ ուսանողությանը ցանկանում եմ անսպառ եռանդ ու կամք՝ հաղթահարելու մեր ժողովրդին բաժին ընկած այս ժամանակավոր դժվարությունները և սպահովելու մեր մայր կրթօջախի հետագա ծաղկումն ու զարգացումը»:

Հայ խոշորագույն ֆիզիկոս-տեսաբան Գուրգեն Մերոփի Սահակյանը ծնվել է 1913 թ. Անիի շրջանի Սոգոթյու (այժմ՝ Սառնաղբյուր) գյու-

դում: 1939 թ. ավարտել է Երևանի համալսարանի ֆիզմաթի ֆակուլտետը, որից հետո գորակոչվել է բանակ և մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Այնուհետև Մոսկվայում ավարտել է ասպիրանտուրան և տեսական ֆիզիկայի գծով պաշտպանել թեկնածուական ատենախոսություն: Վերադառնալով Հայաստան՝ նա իր ողջ կյանքը կապել է Երևանի պետական համալսարանի հետ: 1963 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1964 թվականից պրոֆեսոր է, 1982 թվականից՝ ՀԳԱԱ ակադեմիկոս, իսկ 1970 թվականից՝ գիտության վաստակավոր գործիչ: 1951-1985 թթ. եղել է տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ, այժմ նույն ամբիոնի պրոֆեսոր է, իսկ 1967-1972 թթ. միաժամանակ եղել է նաև ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան:

Գ. Սահակյանի աշխատանքները վերաբերում են տարրական մասնիկների և տիեզերական ճառագայթների ֆիզիկային, այլասերված գերխիտ պլազմայի և գերխիտ աստղերի ֆիզիկային, ձգողականության տեսությամբ: Ներմուծել է նուկլոնների ֆորմֆակտորի գաղափարը, ուսումնասիրել լիցքերի բաշխումը միջուկում, ցույց տվել, որ էլեկտրոնների առաձգական ցրումը մեծ անկյունների տակ հնարավորություն է տալիս հետազոտելու նուկլոնների ներքին կառուցվածքը: Գ. Սահակյանը համարվում է Հայաստանում աստղաֆիզիկայի նոր ուղղության՝ նեյտրոնային աստղերի ֆիզիկայի հիմնադիրը: Նա հիմք է դրել նաև գերխիտ աստղերի ֆիզիկային, ապացուցել է, որ միջուկային և ավելի մեծ խտությունների դեպքում նյութը տարրական մասնիկներից բաղկացած գազ է, որում մեծապես գերակշռում են բարիոնները, կառուցել է գերխիտ աստղային կոնֆիգուրացիաների մոդելներ: Նա հայտնաբերել է նաև հարաբերականության ընդհանուր տեսության նոր էֆեկտ՝ զանգվածի աննորմալ պակասորդը:

Գ. Սահակյանը մեծ ավանդ է ներդրել Հայաստանում տեսական ֆիզիկայի զարգացման և գիտական կադրերի պատրաստման գործում: Նա արժանացել է ՀԳԱԱ վաստակագրի (1976 թ.), պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով: Նա հեղինակ է հարյուրավոր գիտական աշխատությունների ու մի քանի դասական մենագրությունների:

Երևանի պետական համալսարանի բարձրագույն պարգևին Գ. Սահակյանն արժանանում է իր բազմամյա բեղմնավոր գիտամանկավարժական և հասարակական գործունեության համար: Ընդունելով մե-

դալը՝ նա իր շնորհակալական խոսքում նշեց, որ ինքն արժանացել է մեծ պատվի, որի համար իր խորին երախտագիտությունն է հայտնում համալսարանի ղեկավարությանն ու գիտխորհրդի անդամներին:

«Երբ 1946 թ. ես վերադարձա Բանակից,- ասաց նա,- իմ միակ երազանքն այն էր, որ կարողանամ աշխատել համալսարանում: Իմ մտքով երբեք չէր անցնում, որ ես կարող էի պրոֆեսոր դառնալ և մնալ Երևանի պետական համալսարանում, պաշտոն զբաղեցնել և դառնալ գիտական մեծ խնդիրների լուծման մասնակից: Սակայն ես այդ բանին հասա իմ մեծ աշխատասիրությամբ ու տքնանքով: Ես այսօր խորապես շնորհակալ եմ, որ իմ՝ տարիների գիտական վաստակը արժանանում է այսպիսի բարձր գնահատականի: Այսուհետև ևս ես կաշխատեմ ամեն ինչ անել հանուն համալսարանական կրթության ու գիտության զարգացման»:

Մեղալների հանձնումից հետո տեղի ունեցավ պատվավոր կոչումների շնորհման արարողությունը: Գիտխորհրդի որոշմամբ համալսարանի պատվավոր դոկտորի գիտական տիտղոսին են արժանացել նաև մի շարք արտասահմանյան գիտնականներ և ազգային-մշակութային ու հասարակական գործիչներ: Նրանք են Հայկական համընդհանուր բարեգործական միության պատվավոր նախագահ Ալեք Մանուկյանը, նույն միության նախագահ Լուիզ Միմոն Մանուկյանը, հասարակական-քաղաքական գործիչ Քերոլայն Քոքսը, Գալուստ Գյուլբենկյանի անվան հիմնադրամի խորհրդի անդամ, Լիսաբոնի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Գյուլբենկյանը, Ռուսաստանի ակադեմիայի ակադեմիկոս, Մոսկվայի համալսարանի ռեկտոր Վիկտոր Սադովնիչին, Բրաունի համալսարանի նախագահ Վարդան Գրիգորյանը, Ռենսելի պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր Ոսկան (Վազգեն) Պարսեղյանը, Կորնելի համալսարանի աստղաֆիզիկայի բաժանմունքի վարիչ, տիեզերական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Երվանդ Թերզյանը, Փարիզ-7 համալսարանի պրոֆեսոր, Պաստերի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ Դենիս Պոլյանը, Կալիֆորնիայի համալսարանի Արևելքի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը, Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Միիրան Աղբաբյանը, Մոնպելյե-3 համալսարանի միջին դարերի պատմության ամբիոնի պրոֆեսոր Ժիրայր Դեղեյանը, եկեղեցական գործիչ, աստվածաբանության

և կրոնագիտության հայտնի մասնագետ, արքեպիսկոպոս Շահե Աճեմյանը:

Ստանալով «ԵՊՀ պատվավոր դոկտոր»-ի դիպլոմները՝ նիստին մասնակցող հյուրերը՝ Ժիրայր Դեղեյանը, Լուիզ Սիմոն Մանուկյանը, Ռիչարդ Հովհաննիսյանը, Միհրան Աղբաբյանը և Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը իրենց խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեցին այդ բարձր տիտղոսին արժանանալու համար, հույս հայտնեցին, որ իրենք ամեն կերպ կնպաստեն Հայաստանի մայր բուհի ծաղկման ու բարգավաճման գործին:

Ողջույնի ու շնորհավորանքի խոսքեր ասացին նաև համալսարանի շրջանավարտ, անվանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, Աթենքի ազգային տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Նիկոլատս Ուզունօղլուն, Ղարաբաղի Հանրապետության նորաստեղծ համալսարանի ռեկտոր Բ. Դավթյանը, Արխագիայի պետական համալսարանի ռեկտոր Գվարամիա Ալեքո Ալեքսեևիչը:

Հանրապետության մայր բուհի հոբելյանը ողջունեցին նաև Երևանի պետական բժշկական ինստիտուտի ռեկտոր, պրոֆ. Վ. Հակոբյանը, Ժողովրդական տնտեսության ինստիտուտի ռեկտոր, պրոֆ. Գր. Կիրակոսյանը, օտար լեզուների ինստիտուտի ռեկտոր, պրոֆ. Ի. Առաքելյանը, գեղարվեստից ինստիտուտի ռեկտոր Ա. Իսաբեկյանը, Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ Վ. Խաչատրյանը, Իջևանի շրջգործկոմի նախագահ Զ. Անանյանը և Երևանի համալսարանի՝ նույն շրջանում գործող մասնաճյուղի տնօրեն, պրոֆ. Հ. Կարայանը: Սվյուռքահայ շրջանավարտների անունից ողջունեց Միչիգանի համալսարանի պրոֆեսոր Գևորգ Բարդակչյանը, ամերիկահայ իրավաբանների միության անունից ելույթ ունեցավ Արմեն Հովհաննիսյանը:

Դիմելով ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանին՝ Ֆրանսիայի Մոնպելյե քաղաքի համալսարանների պատվիրակության ղեկավար, Մոնպելյե-2 համալսարանի պատվավոր նախագահ, պրոֆ. Ժան Լագարիգն ասաց. «Մեծ պատիվ է մեզ համար լինել ձեր կողքին և ձեզ հետ միասին տոնել Երևանի համալսարանի 75-ամյակը: Այստեղ է գտնվում մեր պատվիրակությունը, որը հիացած է ձեր համալսարանի հաջողություններով: Շատ լավ է, որ գիտամշակութային սերտ կապեր են հաստատվել մեր համալսարանների միջև: Մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի ավելի ընդ-

լայնվեն այդ կապերը: Ես մի հաճելի պարտականություն էլ ունեմ կատարելու,- վերջում ասաց նա:- Ֆրանսիայի կառավարությունը որոշել է Երևանի համալսարանի միջազգային կապերի գծով պրոռեկտոր Ռ. Մաթևոսյանին պարզևատրել կառավարական շքանշանով՝ նկատի ունենալով նրա երկարամյա ծառայությունները Հայաստանի և Ֆրանսիայի միջև ակադեմիական և մշակութային կապերի զարգացման գործում»: Շքանշանը հանձնվում է Ռ. Մաթևոսյանին:

Գիտխորհրդի նիստին մասնակցում էին և վերջում ելույթ ունեցան Հայաստանում Եգիպտոսի գործերի ժամանակավոր հավատարմատար Ահմադ Ֆուադ Ռ-սալանը և Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Յակովոս Սպեցիոսը: Նրանք ջերմորեն շնորհավորեցին բոլոր ներկա գտնվողներին, ողջ հայ ժողովրդին գիտամշակութային մեծ տոնահանդեսի առթիվ և Երևանի համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվին ցանկացան նորանոր հաջողություններ:

\* \* \*

Երևանի պետական համալսարանի պատմությանը, միջազգային կապերին և բարձրագույն կրթության համակարգի վերափոխումներին էր նվիրված միջազգային գիտաժողովը, որը տեղի ունեցավ համալսարանի մեծ դահլիճում հոկտեմբերի 11-12-ին: Այն ներածական խոսքով բացեց ռեկտոր Ռ. Մարտիրոսյանը, և ինքն էլ կարդաց առաջին զեկուցումը՝ նվիրված Երևանի պետական համալսարանի միջազգային կապերին և ներկայիս համալսարանական համագործակցության կատարելագործման ուղիներին:

Իր զեկուցման մեջ Ռ. Մարտիրոսյանն ընդգծեց, որ Երևանի համալսարանի միջազգային կապերը սկսվել են նրա հիմնադրման առաջին իսկ տարիներից և ծավալվեցին ու ամրացան հետագայում: Այստեղ ուսումնառության են գալիս ոչ միայն սփյուռքահայերը, այլև մեծ թվով այլազգիներ: Անցած ժամանակաշրջանում համալսարանում սովորել են 6250 օտարերկրացիներ՝ եկած աշխարհի 78 երկրներից, որոնցից 2420-ը եղել են սփյուռքահայեր: Մեր համալսարանն ավարտել, ինչպես նաև թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ են պաշտպանել 620 օտարերկրացիներ, որոնցից 330-ը սփյուռքահայեր են:

Երևանի համալսարանը Լյուբլինի (Լեհաստան) և Բրատիսլավայի (Չեխոսլովակիա) համալսարանների հետ անմիջական համագործակցության մեջ է մտել 1973 թվականից, այնուհետև ընդլայնվել են կապերը, և այսօր մենք բարեկամական ու գիտամշակութային համագործակցություն ենք սկսել աշխարհի 24 երկրների 60 համալսարանների հետ: Դրանցից կարելի է նշել Ամերիկայի, Եվրոպայի, Ասիայի, Սիչին և Մերձավոր Արևելքի մի շարք երկրների առաջատար համալսարանները: Մենք ամրապնդելու ենք մեր կապերը մաս Ռուսաստանի և ԱՊՀ երկրների առաջատար բուհերի ու համալսարանների հետ: Մեր համալսարանն այժմ մասնակցում է միջազգային 25 կազմակերպությունների և հիմնադրամների հետ համագործակցության ու փոխանակությունների ծրագրերին:

Այնուհետև ԵՊՀ պատմության քանգարանի տնօրեն, պրոֆ. Լ. Ղառիբջանյանը հանդես եկավ Երևանի պետական համալսարանի հիմնադրման և նրա անցած ուղու պատմությանը նվիրված գեկուցումով: Հեղինակը նոր փաստերով ու վավերագրերով ներկայացրեց Հայաստանի համալսարանի հատկապես 1919-20 թթ. գործունեությունը, ցույց տվեց այն վիթխարի առաջընթացը, որ նա ունեցել է հետագա տարիների ընթացքում Հայաստանում ու նախկին ԽՍՀՄ-ում:

Սփյուռքահայ նշանավոր պատմաբան, պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանն իր գեկուցման մեջ բազմաթիվ նոր փաստեր հրապարակեց 1918-1920 թթ. Հայաստանի առաջին համալսարանի հիմնադրման վերաբերյալ: Իսկ Սիչիգանի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն, պրոֆ. Դենիս Փափազյանի գեկուցումը նվիրված էր «Բարձրագույն կրթությունը Հայաստանում և հնարավոր միջազգային կապերը արտասահմանցիների հետ» թեմային:

Հունաստանի և Հայաստանի համագործակցության պատմական անցյալին և ներկա իրականությանն էր նվիրված Աթենքի ազգային տեխնիկական համալսարանի պրոֆեսոր, համակարգիչների հաղորդակցության համակարգերի ինստիտուտի տնօրեն Նիկոլաոս Ուզունօղլուի գեկուցումը, որում նա վերհանեց երկուստեք կարևոր ու շահավետ մի շարք խնդիրներ, որոնց լուծումը մեծ արդյունք կտա երկու հիմնավոր երկրների համար: Իտալիայի համալսարանական համագործակցության ինստիտուտի տնօրեն Մասիմո Կանևան իր գեկուցման մեջ ան-

դրադարձավ միջհամալսարանական համագործակցության զարգացման ժամանակակից խնդիրներին:

Գիտաժողովում հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան ԱՄՆ-ից ժամանած սփյուռքահայ գիտնականներ, Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ, պրոֆ. Միհրան Աղբաբյանը («Դրական քայլեր դեպի գերազանց, նաև հավասարակշռված հարաբերություններ կրթության ոլորտում»), Բրանդես համալսարանի փոխտնօրեն և գլխավոր խորհրդական Թամար Հաջյանը («Հայաստանի բարձրագույն կրթության վարչական բարեփոխումների գործընթացը 1919 թվականից մինչև 21-րդ դարը»), Քլարքսոն համալսարանի պրոֆեսոր Լևոն Միննեթյանը («Ակադեմիական ծրագրերի տեխնիկական գերազանցությունը և երկարակեցությունը»), Երևանի համալսարանի նախկին սան, այժմ Միչիգանի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, Մարի Մանուկյանի հիմնադրամի պրոֆեսոր Գևորգ Բարդակչյանը («Երևանի պետական համալսարանը 1960-ական թվականներին. մի քանի հետահայաց մտքեր»), «Մաշտոց» քոլեջի նախագահ Կարպիս Տեր-Եղիյանը («Երևանի պետական համալսարանի և ամերիկյան համալսարանների կրթական ու վարչական հաստատությունների միջև փոխհարաբերությունների հեռանկարը»): Հայաստանում ֆիզիկայի զարգացման և հանրապետության պաշտպանության ամրապնդման խնդիրներին էր նվիրված նաև Լոս Անջելեսի համալսարանի պրոֆեսոր, ֆիզիկոսների հայկական ընկերության նախագահ Չավեն Կիրակոսյանի զեկուցումը:

Ֆրանսիայից ժամանած պատվիրակությունից գիտաժողովում զեկուցումներ կարդացին պատվիրակության ղեկավար, Մոնպելյե-2 համալսարանի պատվավոր նախագահ Ժան Լագարիզը («Համալսարանական կրթության համակարգը Ֆրանսիայում»), Մոնպելյե-3 համալսարանի պատմության պրոֆեսոր Ժիրայր Դեղեյանը («Մոնպելյե-Երևան միջազգային կապերը 19-րդ դարի վերջերից մինչև մեր օրերը»), Մոնպելյե-1 համալսարանի միջազգային կապերի առաքելության ղեկավար Ժան Քաստելը («Մոնպելյեի համալսարանների միջազգային կապերը. արդյունքներ և հեռանկարներ») և ուրիշներ:

Ռուսաստանի Դաշնության «Իմպերիալ» ընկերության նախագահ Արկադի Վարդանյանի զեկուցումը նվիրված էր ազգային համախմբման



գործում համալսարանական կրթության դերին: Երևանի համալսարանի գեներալիստիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռուբեն Հարությունյանն իր զեկուցման մեջ միջազգային համագործակցության փորձով ներկայացրեց հայերի էկոլոգիական գեներալիստիկան:

\* \* \*

Երևանի պետական համալսարանի հոբելյանին նվիրված միջոցառումներն ավարտվեցին հոկտեմբերի 11-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային թատրոնում տեղի ունեցած հոբելյանական հանդիսավոր նիստով, որին մասնակցում էին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, ՀՀ ԳԱ նախագահ Բ. Արարքյանը, ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանը, վարչապետ Հ. Բազրատյանը, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ, կառավարության անդամներ, աշխարհի տարբեր երկրներից, սփյուռքահայ գաղթօջախներից ժամանած բազմաթիվ հյուրեր, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:

Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացեց համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, որից հետո հոբելյանի առթիվ ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը:

Այնուհետև Երևանի պետական համալսարանի անցած ուղու մասին զեկուցեց Ռ. Մարտիրոսյանը, որը բազմաթիվ փաստերով ու հավաստի թվական տվյալներով ցույց տվեց այն վիթխարի առաջընթացը, որ ունեցել է Հայաստանի բուհերի առաջնեկն իր գոյության 75 տարիների ընթացքում:

Հանրապետության մայր բուհի պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողությանը, նրա բոլոր տարիների շրջանավարտներին ջերմորեն շնորհավորեցին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բ. Արարքյանը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆ. Սարգսյանը, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պրոռեկտոր, պրոֆ. Մ. Մարչենկոն, Լեռնային Ղարաբաղի համալսարանի ռեկտոր Բ. Դավթյանը, Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Մ. Աղբաբյանը, Ֆրանսիայի Մոնպելյե-2 համալսարանի պատվավոր նախագահ Ժան Լագարիզը, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի նախագահ Յու. Սարգսյանը:

Հանդիսավոր նիստի վերջում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ գիտության ու կրթության անդաստանում ներդրած բացառիկ ավանդի համար ՀԳԱԱ պատվավոր նախագահ Վիկտոր Համբարձումյանին շնորհվել է «Հայաստանի ազգային հերոսի» կոչում: Ներկաները ջերմությամբ ընդունեցին այս որոշումը և աշխարհահռչակ գիտնականի շնորհակալական խոսքը:

Վերջում տրվեց համերգ՝ օպերայի ու բալետի քատրոնի արտիստների, գործիքային կոլեկտիվների և արվեստի վարպետների մասնակցությամբ:

Նույն օրը՝ երեկոյան, համալսարանի նորաբաց գիտական գրադարանի շենքի քանդակազարդ ճեմասրահում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության ղեկավարության, արտասահմանյան հյուրերի, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների, առանձին նախարարությունների ու գերատեսչությունների ղեկավարների պաշտոնական ընդունելություն: Այն բացեց համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը:

Ելույթ ունեցավ ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքյանը և նորանոր հաջողություններ մտքեց համալսարանին ու համալսարանականներին:

Ընդունելությանը մասնակցում էր և ելույթ ունեցավ նաև Ռուսաստանի Դաշնության համապետական ժողովի դաշնության խորհրդի նախագահ Վ. Շումեյկոն: Նա բոլոր ներկա գտնվողներին շնորհավորեց մեծ հոբելյանի առթիվ և իր խոսքի վերջում Երևանի պետական համալսարանին նվիրեց ռուսական գեղանկարչության լավագույն մմուշներից մեկը:

## ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ԱԶԳԱՐԱՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ\*

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ. 1918-1920 թթ. (վավերագրերի ժողովածու), կազմողներ՝ Ֆ. Հ. Մամիկոնյան, Ս. Ս. Միրզոյան, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1995, 336 էջ, տպաքանակ՝ 600:

Երևանի պետական համալսարանը, որի 75-ամյակը նշվեց 1994 թ., վիթխարի դեր է կատարել մեր հանրապետության կրթության բնագավառում և գիտամշակութային ու հասարակական-քաղաքական կյանքում: Նրա հիմնադրումը պետք է համարել Հայաստանի նորագույն պատմության ամենանշանավոր իրադարձություններից մեկը, միջնադարում հռչակավոր համալսարաններ ու բարձր տիպի դպրոցներ ունեցած հայ ժողովրդի՝ կրթության, գիտության ու լուսավորության նկատմամբ տածած սիրո ու փայփայած երազանքների, հոգևոր պահանջների արգասիք:

Հայ ժողովուրդը շուրջ վեց հարյուր տարվա ընդմիջումից հետո՝ 1918 թ. մայիսի 28-ին, տառապանքների ու կորուստների ծանր գնով իր պատմական հայրենիքի մի փոքր մասում վերականգնում է իր պետականությունը: Եվ դրանից մեկ տարի չանցած՝ 1919 թ. մայիսի 16-ին, հիմնադրում է Հայաստանի համալսարանը, որը խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 17-ին, վերակազմվում ու անվանվում է Երևանի ժողովրդական համալսարան:

Հիմնադրումից ի վեր Երևանի համալսարանը եղել է Հայաստանի մայր բուհը, որից հետագայում ծնվել են ներկայիս մեր գրեթե բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունները: Նա է հիմք հանդիսացել մեր գիտությունների ազգային ակադեմիայի ստեղծման համար: Ուստի համալսարանի հիմնադրման և նրա անցած ուղու հավաստի պատմության ստեղծումը կարևոր նշանակություն ունի Հայաստանի բարձրագույն դպրոցի պատմության ամբողջականացման համար:

---

\* ԲԵՀ, 1999:

Ե՞րբ է ստեղծվել Երևանի համալսարանը: Այս հարցը ընդհուպ մինչև 1980-ական թթ. վերջը խորհրդահայ պատմագրության մեջ ուներ մեկ պատասխան, այն է՝ Երևանի համալսարանը հիմնադրվել է 1920 թ. դեկտեմբերի 17-ին: Այդ թվականն էր նշվում մաս մեր մայր կրթօջախի հիմնադրմանն ու անցած ուղուն նվիրված հոբելյանական հրատարակություններում<sup>37</sup> և առանձին աշխատություններում<sup>38</sup>: Սակայն 1989 թ. մայիսին այդ կարևոր հարցի պարզաբանմանը նվիրված հատուկ գիտական նատաշրջանը վերջնականապես վերականգնեց այն ճշարտությունը, որ Երևանի համալսարանը ստեղծվել է ոչ թե 1920 թ. դեկտեմբերի 17-ին, այլ դրանից մեկուկես տարի առաջ՝ 1919 թ. մայիսի 16-ին: Այդ գիտաժողովում կարդացված գեկուցումների և ելույթների մեջ վկայակոչվեցին ու հրապարակվեցին մի շարք փաստաթղթեր, որոնք խոսում էին այդ ճշմարտության օգտին, հաստատում համալսարանի հիմնադրման վերահիշյալ տարեթիվը:

---

<sup>37</sup> Տե՛ս **Գ. Բ. Պետրոսյանի** «Երևանի պետական համալսարանը» (Երևան, 1924, 37 էջ) գրքույկը՝ հրատարակված ԵՊՀ 20-ամյակի առթիվ, **Հ. Ի. Աղամյանի** և ուրիշների խմբագրությամբ 50-ամյակի առթիվ տպագրված «Երևանի պետական համալսարան» գիրքը (Երևան, 1970, 112 էջ) և դեպ, խորհրդային շրջանում Հայաստանում հրատարակված այս գրքում է միայն Երևանի պետական համալսարանի հիմնադրման տարեթիվը ճիշտ հիշատակված, որը ակադ. Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակվել է մաս ռուսերեն ու անգլերեն (Երևան, 1970, 106 և 104 էջ): Իսկ վերջին ԵՊՀ 60-ամյակի կապակցությամբ հրատարակված «Երևանի պետական համալսարան» (Երևան 1981, 324 էջ) և «Наука в Ереванском государственном университете» (Երևան, 1981, 216 էջ) գրքերում դարձյալ մայր բուռի հիմնադրման թվական է նշված 1920 թ. դեկտեմբերի 17-ը: ԵՊՀ հիմնադրման մույն տարեթիվն է արձանագրված մաս «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատորյակում (հ. 7, Երևան, 1976, էջ 441) և բազմաթիվ այլ մեմագրություններում ու լրագրային հոդվածներում:

<sup>38</sup> Լ. Պ. Ղարիբջանյանը, իր «Երևանի պետական համալսարանը (1920-1930 թթ.)» (Երևան, «Մխար» հրատ., 1965, 298 էջ) գրքում և մույնի ռուսերեն բարձրագույն (տե՛ս **Լ. Պ. Գարիբջանյան**, Ереванский государственный университет (1920-1930 гг.), Երևան, «Հայաստան» հրատ., 1971, 227 էջ) մեջ տուրք տալով ժամանակի տիրու գաղափարախոսությանը և համալսարանի հիմնադրման տարեթիվն ընդունելով 1920 թ. դեկտեմբերի 17-ը, այնուամենայնիվ, դրանց առաջաբաններում թուցիկ կերպով հիշատակում է Ալեքսանդրապոլում 1919 թ. մի կարճ ժամանակ գործած Հայաստանի համալսարանի մասին: Սակայն նա այդ գրքի բարեփոխված հոբելյանական (ԵՊՀ 75-ամյակին նվիրված) նոր հրատարակության (տե՛ս **Լ. Պ. Ղարիբջանյան**, Երևանի պետական համալսարանը (1919-1930 թթ.), Երևան, Եր. համալս. հրատ., 1994, 304 էջ) մեջ վերանայել ու ճշգրտել է իր այդ տեսակետը և Երևանի համալսարանի հիմնադրման տարեթիվը համարել է 1919 թ. մայիսի 16-ը:

Այդ գիտական նստաշրջանի զեկուցումների ու հաղորդումների մի գգալի մասը անմիջապես տպագրվեց մամուլում<sup>39</sup>: Առաջարկություն եղավ նաև Երևանի համալսարանի հիմնադրման և նրա 1919-1920 թթ. գործունեության վերաբերյալ հրապարակի վրա եղած ու արխիվներում պահպանվող փաստաթղթերն ի մի բերելու և հրատարակելու առանձին գրքով:

Անցել է վեց տարի, և արդեն հրապարակի վրա է «Երևանի համալսարան. 1918-1920 թթ.» վավերագրերի ժողովածուն, որը խնամքով կազմել ու ծանոթագրել են ԵՊՀ դասախոս, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոց. Ֆ. Հ. Մամիկոնյանը և ՀՀ պատմության արխիվի տնօրեն Ս. Ս. Սիրոդյանը: Գրքում զետեղված են ոչ միայն զուտ համալսարանին առնչվող փաստաթղթերը, այլև Հայաստանի Հանրապետության ստեղծման առաջին իսկ օրերից կուտակված այն նյութերն ու վավերագրերը, որոնք նպատակաուղղված են եղել կրթության ու գիտության բարելավման գործին:

Ժողովածուն ամփոփում է Երևանի համալսարանի հիմնադրմանը և նրա գործունեության առաջին մեկուկես տարվան վերաբերող 193 փաստաթուղթ, որոնք դասավորված են խիստ ժամանակագրական կարգով և լայն պատկերացում են տալիս 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Անդրկովկասում բարձրագույն կրթության հաստատությունների վիճակի և մասնավորապես Երևանում համալսարանի հիմնադրելու մանրամասնությունների մասին: Գրքի առաջին էջերն զբաղեցնող մի շարք փաստաթղթերից իմանում ենք, որ Հայաստանի Հանրապետության ստեղծումից անմիջապես հետո նախանձախնդիր մի խումբ մտավորականներ դիմում են կառավարությանը և հիմնավորում համալսարանի ստեղծման «հույժ կարևորությունը ազգի մտավոր ու բարոյական զարգացման տեսակետից»: Դրանից հետո կառավարությունը ձեռնամուխ է լինում համալսարանի հիմնադրելու բարդ ու դժվարին գործին: Համալսարանի հիմնադրումը հետևողականորեն պաշտպանում էին Նիկոլ Աղբալյանն ու Սիրական Տիգրանյանը:

---

<sup>39</sup> Տե՛ս «Գրական թերթ», 12 մայիսի 1989, № 20, «Երևանի համալսարան» շաբաթաթերթ, 10 հունիսի 1989, № 23, «Երևանի համալսարան» լրատու, 1989, № 2, «Բանբեր Երևանի համալսարանի», 1989, № 3, «Մշակույթ» հանդես, մարտ-հունիս 1990, № 2-3 և այլն:

Փաստաթղթերի զգալի մասը վերաբերում է Թիֆլիսում գործող Անդրկովկասյան մասնավոր համալսարանը Երևան տեղափոխելու կամ նրան նյութական օգնություն ցույց տալու խնդրին: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ համալսարանի 1715 ուսանողներից 700-ը և 76 դասախոսներից 25-ը հայեր էին, նպատակահարմար են համարում այդ համալսարանը տեղափոխել Երևան: Այդ խնդրի շուրջ տեղի են ունենում մի շարք բանակցություններ, գրվում են դիմումներ ու զեկուցումներ, հարցը դառնում է քննարկման առարկա<sup>40</sup>: 1919 թ. մայիսի 7-ին ՀՀ Նախարարների խորհուրդը լսում է հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարազյոզյանի «Անդրկովկասյան համալսարանին 500.000 ռուբլի նպաստ տալու մասին» զեկույցը և մերժում է այն (17, 48): Բայց և նույն նիստում նրան հանձնարարվում է նոր զեկուցում պատրաստել Հայաստանում համալսարան հիմնելու մասին՝ դրան կցելով համալսարանի ծրագիրը և նախահաշիվը:

Հանրային կրթության նախարարությունը այս հանձնարականների հիման վրա նախապատրաստում և ՀՀ Նախարարների խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հայաստանում համալսարան հիմնելու առաջարկը: Այդ ամենից հետո՝ 1919 թ. մայիսի 16-ին, Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը ընդունում է «Օրենք Հայաստանում համալսարան բանալու և նրա նախնական ծախսերը հոգալու համար 300.000 ռ. հատկացնելու մասին», որում ասված է.

«1. Հիմնել Երևանում համալսարան հետևյալ չորս բաժիններով՝ ա) պատմալեզվաբանական, բ) տնտեսաիրավաբանական, գ) բժշկական և դ) ֆիզիկամաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանով:

2. Համալսարանը բանալ 1919-20 ճեմարանական տարում:

3. Առաջին հերթին բանալ պատմալեզվաբանական բաժինը:

4. Մնացած բաժինները բանալու ժամանակը և հերթը սահմանում է Մինիստրների խորհուրդը ըստ Հանրային կրթության մինիստրի առաջարկության:

---

<sup>40</sup> Տե՛ս «Երևանի համալսարան. 1918-1920 թթ. (վավերագրերի ժողովածու)», Երևան, 1995, էջ 10-48, վավերագրեր՝ 2-17: Այսուհետև սույն ժողովածուից հղումները կտրվեն տեքստում. առաջին թիվը կնշի վավերագրի հերթական համարը, երկրորդը՝ գրքի էջը:

5. Համալսարանը բանալու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել երեք հարյուր հազար ռուբլի (300.000 ռ. ), հանձնարարելով ֆինանսների մինիստրությանը բանալ համապատասխան վարկ Հանրային կրթության մինիստրությանը» (23, 58):

Ըստ այս որոշման՝ 1919 թ. հունիսի 5-ին ընդունվում է «Օրենք Երևանի համալսարանի մասին», իսկ հուլիսի 8-ին հաստատվում են «Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնները»: Հուլիսի 19-ին ընդունվում է «Լրացուցիչ օրենք Երևանի համալսարանի մասին» (44, 88), որոշվում է համալսարանի տեսուչ (ռեկտոր) հաստատել նշանավոր իրավաբան, Մոսկվայի և Բրյուսելի համալսարանների պրոֆեսոր, Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ Յուրի Ստեփանի Ղամբարյանին (1850-1926): Որոշվում են նաև համալսարանի դասախոսների աշխատավարձերի չափերը. ա) պրոֆեսորներինը սահմանափակվում է նախարարական, բ) դոցենտներինը՝ նախարարների օգնականների և գ) պրիվատ-դոցենտներինը՝ բաժանմունքների կառավարչի աշխատավարձի չափով:

Այնուհետև, ըստ փաստաթղթերի հաղորդած տվյալների, 1919 թ. ամռան և աշնան ամիսներին ընթանում են համալսարանի կազմակերպման բարդ ու դժվարին աշխատանքները, մշակվում են ծրագրերն ու ճշգրտվում առարկաները, հավաքագրվում դասախոսներն ու ուսումնասօժանդակ կազմը, հրամանագրվում ուսանողները, մշակվում համալսարանի ժամանակավոր կանոնները և այլն: Այդ ընթացքում պարզվում է նաև, որ համալսարանն ի վիճակի չէ իր գործունեությունը ծավալելու Երևանում: Ուշագրավ է այդ առթիվ Ե. Տեր-Սիմասյանի՝ 1919 թ. դեկտեմբերի 3-ին հանրային կրթության և արվեստի նախարարին ուղղված գեկուցագիրը, որից պարզ է դառնում, որ Երևանում հնարավոր չի եղել շենք տրամադրել համալսարանի գործունեության համար, իսկ Ալեքսանդրապոլի «քաղաքային ինքնավարությունը համալսարանի վարչության տրամադրությանն է հանձնում 4 մեծ սենյակ առևտրական դպրոցի շենքում, որոնցից համալսարանը իր պետքերի համար կարող է օգտվել ամբողջ օրը, իսկ ետճաշա ժամերին՝ նաև մնացած 18 սենյակներից... Հետագայի համար խոստանում են ավելի մեծ հնարավորություններ» (73, 131):

Մրան հաջորդում է հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանի՝ 1919 թ. դեկտեմբերի 5-ի համալսարանը ժամանակավորապես Ալեքսանդրապոլ տեղավորվելու մասին զեկուցագիրը՝ ուղղված Նախարարների խորհրդին, որտեղ ասված է. «Մայիսի 16-ին օրենքով համալսարանը պիտի բացվի Երևան քաղաքում: Բայց ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Երևան քաղաքում անհնար է գտնել շենքեր նույնիսկ բոլոր տարրական և միջնակարգ դպրոցների կարիքները բավարարելու համար, մինիստրությունը գտնում է, որ համալսարանը առժամանակ պետք է տեղավորվել Ալեքսանդրապոլ, ուր քաղաքը տալիս է բոլոր հնարավորությունները: Գրությանը կցվում է համալսարանի հանձնաժողովի անդամ պ. Երվանդ Տեր-Սիմասյանի զեկուցման պատճենը» (40, 154):

Հայաստանի վարչապետ Ալ. Խատիսյանը այս զեկուցագրի վրա մակագրել է. «Փոխադրել Ալեքսանդրապոլ մինչև ուսումնական տարվա վերջը»: Իմանալով այդ մասին՝ Ն. Աղբալյանը հեռագրով հայտնում է Ալեքսանդրապոլի քաղաքագլխին և խնդրում, որ վերջինս իր առաջարկած շենքը նախապատրաստի համալսարանի համար:

Ըստ հուլիսի 6-ին ընդունված «Երևանի համալսարանի ժամանակավոր կանոնների»՝ որպես իսկական ուսանող կարող էին ընդունվել լրիվ միջնակարգ կրթություն ունեցող քաղաքացիները՝ առանց սեռի խտրության, իսկ միջնակարգ կրթություն չունեցողներից կարող էին ընդունվել որպես ազատ ունկնդիրներ միայն ժողովի թույլտվությամբ: Դիմումի հետ պետք էր ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ 1. միջնակարգ դպրոցի լրիվ դասընթացի ավարտման վերաբերյալ վկայականը կամ նրա վավերացված պատճենը, 2. ծննդյան վկայականը, 3. զինվորական ծառայության վկայականը: Սահմանված էր նաև ուսման վարձ՝ ուսանողների համար տարեկան 500, իսկ ազատ ունկնդիրների համար 100 ռուբլու չափով: Դիմումների թիվը համալսարանում մինչև 1919 թ. հոկտեմբերի 1-ը եղել է 632: Սակայն, համալսարանի ժամանակավոր կանոններին համապատասխան, ընդունվում են ընդամենը 260 ուսանողներ, որոնցից 121-ը՝ հիմնական, իսկ 139-ը՝ որպես ազատ ունկնդիր: Ընդունվածները երկսեռ քաղաքացիներ էին, որոնց մեծ մասը զբաղված էր ուսուցչությամբ: Հետաքրքրական է, որ ազատ ունկնդիրների ցուցա-



կում հանդիպում ենք նաև Չարենցի՝ Եղիշե Սողոմոնյան անվանը (էջ 330):

Ժողովածուում զետեղված մի շարք նյութեր հանված են ժամանակի մասնույից («Նոր աշխատավոր», «Ժողովուրդ» «Յառաջ» և այլն), որոնք մանրամասնորեն լուսաբանում են Հայաստանում համալսարան հիմնադրելու նախադրյալներն ու խնդիրները և այդ կապակցությամբ ձեռնարկված կառավարական միջոցառումները:

Ահա այդ ամենից հետո՝ 1920 թ. հունվարի 31-ին, տեղի է ունենում Հայաստանի համալսարանի բացումը: Այդ տոնական արարողությանը մասնակցում են հանրապետության կառավարության ղեկավարները՝ Ալ. Խատիսյանի գլխավորությամբ, քաղաքական կուսակցությունների ղեկավարները, ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, Անգլիայից, Ֆրանսիայից, Պարսկաստանից և այլ երկրներից, «բազմաթիվ օտարազգի հյուրեր ու հայկական հիմնարկությունների պատգամավորներ»:

Վավերագրերից իմանում ենք, որ հանդիսավոր նիստը բացել է նորաստեղծ համալսարանի ռեկտոր, պրոֆ. Յու. Ղամբարյանը, որի ողջույնի ելույթից հետո Հայաստանի համալսարանի մասին զեկուցումով հանդես է գալիս հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը: Ձեկուցողը նշում է, որ վերջապես իրականացավ հայ ժողովրդի դարավոր երազանքը, որ համալսարանի ստեղծումով նոր փուլ է սկսվում հայ ժողովրդի մտավոր կյանքում: «Չնայած որ մեր երկիրն ավերված է, -ասում է նա,- մեր ժողովուրդը՝ աղքատության մեջ, մենք հիմնում ենք բարձր կրթարան: Այն, ինչ որ մենք ունենք այսօր,- շարունակում է Ն. Աղբալյանը,- ձեռք է բերված սերունդների արյունով. հարգենք նրանց հիշատակը (ամենքը լուռ ոտքի են կանգնում): Մենք վերաշինում ենք մեր տունը և հիմնում կրթության տաճարներ՝ առանց խորհելու, թե ինչ են մտածում մեր մասին մեր թշնամիները, որոնք միշտ քանդել են մեր շինածը: Մեր մեջ հավատ կա, որ այս անգամ հայոց ազգի նավը դուրս կգա փոթորկից անփորձանք: Մեր թշնամիները չեն հաջողելու, և այն ջահը, որ մենք վառում ենք Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի և կլուսավորե Առաջավոր Ասիան: Անցնում է մոճավանջը, և պայծառանում է Հայաստանի երկինքը,- ասում է հռետորը: Դեռ մեզ համար,- շարունակում է նա,- բոլոր վտանգները անցած չեն, դեռ մեկ ձեռքում սուր

պիտի ունենանք, բայց արդեն ժամանակն է, որ մյուս ձեռքում գրիչ բռնենք»:

Ապա նա, հիշելով Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունը, շարունակում է. «Խորտակվում է արդեն Թուրքիան և թող շուտ հասնի նրա խորտակման ժամը, որովհետև այդ պետությունը կործանել է քաղաքակրթություններ՝ արաբական, բյուզանդական, հայկական, վրացական և այլն, որովհետև ճիշտ են ասել մեր պատմիչները, թե մաշեցին նրանք մեր ժայռերը և տեղը թողին անապատ: Չկա նաև Ռուսաստանի բռնապետությունը, և այս երկու բռնապետությունների խորտակումից նոր հորիզոններ են բացվում մեզ, մենք պետք է հաղորդակցության մեջ մտնենք Արևմուտքի հետ» (103, 159-160):

Նախարարը կանգ է առնում նաև Եվրոպայի հետ Հայաստանի տնտեսական ու գիտամշակութային կապերի ստեղծման վրա: «Եթե մենք կարողանանք այդ մեծ քաղաքակրթության մեր փոքրիկ մուրճը խփել,- ասում է նա,- այդ իսկ պատիվ է մեզ: Եվ այս հիմնարկությունը հաստատելով,- վերջում նշում է Ն. Աղբալյանը,- մենք հիմնում ենք մի աշխատանոց, որտեղ մեր միտքը պիտի աշխատակցի եվրոպական մտքերի ղեկավարությամբ: Կգա ժամանակ, երբ մենք էլ ընդունակ կլինենք մի քանի գաղափարներ արտադրելու մարդկության համար. հայ ժողովուրդը ընդունակ է դրան: Մեր համբավված ջանասիրության շնորհիվ մենք կհասնենք այն օրվան, երբ ընկերներ կլինենք քաղաքակիրթ ազգերի: Եվ երբ վերանա ամեն տեսակ անհավասարություն, այս հիմնարկությունն էլ նպաստած կլինի դրան: Եվ կստեղծվի համամարդկային մի միություն, երբ բոլոր ազգերը կաշխատեն կողք կողքի, և այսօր մեր սահմաններում կեցած բանակների տեղ մենք կստեղծենք նոր բանակներ մեր երկրի ազատության համար և խավարի դեմ»:

Ապա հռետորը կանգ է առնում պատմալեզվաբանական բաժնի վրա, որից այն ժամանակ կազմված էր համալսարանը, և անում է մի քանի բարեմադրություններ, որ նորաստեղծ համալսարանում միտքը լինի մատչելի ամենքի համար, մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժվար, որ ուսումը լինի ձրի, գիտությունը վարվի գործնական եղանակով, որ հիմք դրվի համայնական գիտական աշխատանքի (103, 159-160):

Այնուհետև համալսարանի հիմնադրման մանրամասներին ու խնդիրներին նվիրված ճառով կրկին հանդես է գալիս պրոֆ. Յու. Ղամ-

բարյանը: Նա ներկայացնում է համալսարանի կազակերպման պատմությունը, ասում, որ համալսարանը բանալու վճիռը կառավարությունն արել է հուլիս 18-ին (պետք է լինի հուլիսի 17-ին - Վ. Մ.): Հասարակության շատ շրջաններում այդ վճիռը համարել են անժամանակ թե՛ երկրի անկայուն վիճակի և թե՛ պրոֆեսորների պակասության պատճառով. երկրի սպահովության տեսակետից համալսարանի հետ կապվելիք տարրերն առանձին արժեք չունեն, իսկ պրոֆեսորներ միշտ կունենանք. թե՛ մենք ունենք, և թե՛ օտարները կգան:

Ռեկտորի ելույթից հետո խորհրդարանի կողմից ողջույնի խոսք է ասում փոխնախագահ Ա. Սահակյանը: Նա բաղձանք է հայտնում, որ նորաբաց համալսարանը դառնա գիտության օջախ միացյալ Հայաստանի համար: «Այս համալսարանը կլինի լուսավոր փարոս,- ասում է ելույթ ունեցողը,- որ իր շողերը կտարածի Հայաստանի բոլոր կողմերը և բոլոր ցեղերի վրա»:

Կառավարության կողմից ողջույնի խոսքով հանդես է գալիս նախարարապետ Ալ. Խատիսյանը: Նա, դիմելով երիտասարդությանը, կոչ է անում. «Բռնության շրթան կործանելուց հետո կործանել նաև տգիտության շրթան» (103, 160):

Հանդիսավոր նիստում ընթերցվում է նաև Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի ողջույն-օրհնանքը, որին հաջորդում են դիվանագիտական ներկայացուցիչներ Օ. Ուորդրոպի, Վ. Հասկելի, Պուստեբարի, Ասադուլախանի, Ախվերդովի, գնդապետ Ջինկևիչի, գեներալ Նազարբեկյանի ողջունի ելույթները: Իսկ Ս. Տիգրանյանն ընթերցում է ստացված ողջունի հեռագրերը, որից հետո Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը կարդում է ակադեմիական դասախոսություն՝ «Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի կուլտուրական գործերում» թեմայով (103, 163):

Այդ դասախոսությունից հետո դարձյալ ողջույնի խոսքեր են ասում բանաստեղծ Հովի. Հովհաննիսյանը, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը, Ա. Շարաֆյանը, (Երևանից), Հ. Նահրատյանը (Կարսից), Վ. Աֆրիկյանը (Նոր Բայազետից), Ա. Չոլախյանը (Ալեքսանդրապոլի կանանց միությունից), Պ. Թարվերդյանը (Երևանի ուսանողության անունից), Ա. Ղազարյանը (Հայ հեղափոխական դաշնակցությունից), Ա. Խոնդկարյանը (Էսէռների կողմից) և ուրիշներ:

Ողջ հանդիսության ընթացքում առևտրական դպրոցի շենքի դիմաց հավաքվել էր մեծ բազմություն, որը ցնծությամբ է դիմավորում նիստի մասնակիցներին: Նրանց առջև ելույթ են ունենում Ալ. Խատիսյանը, Ս. Վրացյանը և ուրիշներ: Այնուհետև Ալեքսանդրապոլի քաղաքագուրխ Հ. Մելքոնյանը կազմակերպում է մեծ ճաշկերույթ, գրական-երաժշտական երեկույթ և պարահանդես, որոնք տևում են մինչև ուշ գիշեր:

Ի պատիվ համալսարանի հանդիսավոր բացման՝ նույն օրը լույս էր տեսել նաև «Հայաստանի համալսարան» միօրյա թերթը, որը բաժանվում է նիստի մասնակիցներին և տարածվում քաղաքում: Ժողովածուում ընդգրկված են նաև այդ թերթում տպագրված նյութերը (90-101, 144-156), որոնք պատկանում են Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի, համալսարանի ռեկտոր, պրոֆ. Յու. Ղամբարյանի և մյուս անվանի դասախոսների (Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյան, Գարեգին եպ. Հովսեփյան, Ալ. Բարխուդարյան, Ե. Տեր-Մինասյան, Ստ. Մալխասյանց, Ռ. Աբրահամյան, Իս. Տեր-Ներսիսյան, Ս. Խանոյան, Ս. Երզնկյան, Ս. Բռունեցի) գրչին, արժեքավոր փաստաթղթեր են նորաստեղծ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դպրոցի առաջնելի վերաբերյալ:

Տոնական այսպիսի ճոխ հանդիսություններով Ալեքսանդրապոլում 1920 թ. հունվարի 31-ին բացվում է Հայաստանի անդրամիկ համալսարանը: Պարապմունքները դեռևս միակ՝ Պատմալեզվաբանական ֆակուլտետում, որտեղ ընդգրկված էին 260 ուսանողներ, սկսվում են փետրվարի 1-ից: Առաջին դասախոսությունն այստեղ կարդում է Ստ. Մալխասյանցը: Միաժամանակ մախապատրաստական աշխատանքներ են կատարվում հասարակագիտական ու բնագիտական ֆակուլտետներ հիմնելու ուղղությամբ:

Խորին ակնածանքով ես լցվում գիտության այն կարկառուն դեմքերի նկատմամբ, ովքեր այդ կարճ ժամանակամիջոցում հրավիրվել էին համալսարան՝ վարելու պարապմունքները: Նրանք էին Գրիգոր Ղափանցյանը (համեմատական լեզվաբանություն), Արսեն Տերտերյանը (հայ գրականության պատմություն), Կոնստանտին Սավիչ-Չաբլոցկին (երկրաբանություն), Աշխարհաբեկ Լոռու Մելիք-Քալանթարյանը (ինագիտություն): Այս ֆակուլտետում էին աշխատում նաև նշանավոր հայագետներ Հակոբ Մանանդյանն ու Մանուկ Աբեղյանը, ճարտարապետներ

Ալեքսանդր Թամանյանն ու Թորոս Թորամանյանը և ուրիշներ: Շուտով այստեղ աշխատանքի են հրավիրվում Նիկողայոս Ադոնցը, Հրաչյա Աճառյանը, Հովսեփ Օրբելին, Աշոտ Հովհաննիսյանը, Լևոն Մսերյանը, Նիկոլ Աղբալյանը, ինչպես նաև օտարազգի մեծամուն հայագետներ Նիկողայոս Մառը, Անտուան Մեյեն, Յոզեֆ Մարկվարտը և շատ ուրիշներ: Այդ ժամանակ հիշյալ ֆակուլտետի ղեկանն էր նշանավոր ձեռագրագետ, բանասեր Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանը (1864-1936), որին մարտի 5-ից փոխարինում է Հ. Մանանդյանը: Այստեղ պարսպամունքները տևում են մեկ կիսամյակ՝ մինչև 1920 թ. հունիսը: Դրանից մի փոքր առաջ՝ 1920 թ. մայիսի 27-ին, ֆակուլտետի խորհուրդը միաձայն որոշում էր ընդունել համալսարանը Երևան տեղափոխելու վերաբերյալ: Դեկան Մ. Տեր-Մովսիսյանը դիմել էր կրթության և արվեստի նախարարին՝ նշելով, որ «առաջին կիսամյակի փորձը համոզեց բոլոր դասախոսներին, որ անհրաժեշտ է համալսարանն ունենալ մայրաքաղաքում և ոչ այլուր»: Ստանալով այդ դիմումը՝ նախարար Գ. Ղազարյանը համալսարանը Ալեքսանդրապոլից Երևան տեղափոխելու մասին առաջարկ է ներկայացնում Նախարարների խորհրդին:

Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը 1920 թ. հունիսի 21-ին ընդունում է հետևյալ որոշումը. «ա) Համալսարանը իր բոլոր ֆակուլտետներով Ալեքսանդրապոլից տեղափոխել Երևան: բ) Ուսուցչական սեմինարիայի շենքը տրամադրել համալսարանին: գ) Պրոֆեսորների համար գտնել մասնավոր շենքեր: դ) Բանալ իրավաբանական ֆակուլտետ, իսկ բնագիտական ֆակուլտետի համար տանել նախապատրաստական աշխատանքներ: ե) Հանձնարարել կրթականի նախարարին, որ ներկայացնի համալսարանի կանոնադրությունը»: Դրա հետ մեկտեղ «ուսուցչական սեմինարիայի շենքի վերանորոգման համար նախարարությունը հատկացնում է 500.000 ռուբլի» (141, 214):

Հայաստանի համալսարանը Ալեքսանդրապոլից Երևան է տեղափոխվում 1920 թ. հոկտեմբերի սկզբներին, իսկ պարսպամունքները, Ս. Վրացյանի վկայությամբ, պետք է սկսվեին նույն ամսվա 16-ից: Սակայն պարսպամունքները չեն սկսվում ստեղծված քաղաքական իրադրության կտրուկ վատթարացման պատճառով, չնայած արդեն հոկտեմբերի վերջերին կազմակերպվել էին Պատմալեզվաբանական (90 ուսանող), Իրավաբանական (146 ուսանող), Ֆիզիկամաթեմատիկական (484 ուսանող)

Ֆակուլտետները: Իսկ հաջորդ տարվանից պետք է բացվեր մաս բժշկական ֆակուլտետ:

Համալսարանի գործունեությունը վերսկսելու կապակցությամբ հոկտեմբերի 29-ին տեղի է ունենում Պատմալեզվաբանական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ժողովը (6-րդ նիստը)<sup>41</sup>, որը նախագահում էր ֆակուլտետի ղեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյանը, իսկ արձանագրում էր Ե. Ֆրանկյանը: Նիստին մասնակցում էին Ս. Տիգրանյանը, Մ. Աբեղյանը, Ռ. Աբրահամյանը, Ա. Քալանթարը, Ե. Տեր-Սիմասյանը և Ս. Գասպարյանը: Օրակարգում կար երկու հարց՝ 1. ֆակուլտետի բացման հարցը և 2. նոր խնդրատուներ ընդունելու հարցը: Այդ նիստում Ս. Տիգրանյանը առաջարկում է մեկ շաբաթով հետաձգել ֆակուլտետի բացումը՝ նկատի ունենալով ներկա լուրջ դրությունը ռազմաճակատում: Կարծիքների կարճ փոխանակությունից հետո ձայների մեծամասնությամբ որոշվեց մնալ նախկին վճռին, այսինքն՝ թողնել ֆակուլտետի վարչությանը աշխատանքների սկզբի մասին հայտարարել, երբ այդ հնարավոր կգտնի: Սակայն ուսանողությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը շուտով պահանջում են դասերն անհապաղ սկսել: Այդ առթիվ ռեկտորի նոր պաշտոնակատար Գավիթ Չավոյանը (1889-1957) անընդատ խուսափողական պատասխաններ է տալիս նրանց պահանջին, որը և ստիպում է հիշյալ ֆակուլտետի խորհրդին նոյեմբերի 30-ին «բողոքելու պարոն Չավոյանի այդօրինակ ընթացքի դեմ»:

Գրանից մեկ օր առաջ՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր, որից անմիջապես հետո՝ դեկտեմբերի 5-ին, ֆակուլտետի խորհուրդը հանձնարարում է ղեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյանին «ներկայանալ հանրային կրթության նոր կոմիսարին (խոսքը Ա. Գ. Հովհաննիսյանի մասին է – Վ. Մ.) և զեկուցել ֆակուլտետի՝ դասախոսությունները սկսելու որոշման մասին և խնդրել նրա աջակցությունը» (189, 279):

---

<sup>41</sup> Այս վավերագիրը գրախոսվող ժողովածուում զետեղված չէ: Այն մենք վերցրել ենք Լ. Պ. Գարիբջանյանի «Երևանի պետական համալսարանը (1919-1920 թթ.)» գրքից (Երևան, 1994, էջ 207-208):

Ըստ ներկայացված փաստաթղթերի՝ այդպիսին է եղել Հայաստանի համալսարանի հիմնադրման ու նրա կարճատև գոյության պատմությունը, որը Խորհրդային Հայաստանի նորակազմ կառավարության կողմից ընդունվում ու պաշտոնապես ճանաչվում է: Եվ երբ 1920 թ. դեկտեմբերի 17-ին ՀԽՍՀ լուսժողովում Ա. Հովհաննիսյանը հրաման է արձակում, այն լինում է ոչ թե նոր համալսարան ստեղծելու, այլ եղածը վերակազմելու վերաբերյալ: Այդ հրամանում հստակ կերպով ասված է. «Երևանի համալսարանը վերակազմվում է և վերակոչվում Երևանի ժողովրդական համալսարան»: Նույն նպատակով ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որի աշխատանքների ավարտվելուց հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 28-ին, լուսժողովմատն արձակում է համալսարանի կազմավորման մասին նոր հրաման, և հաստատվում է նրա ժամանակավոր կանոնադրությունը: Իսկ 1921 թ. հունվարի 2-ին համալսարանի խորհուրդը փակ (գաղտնի) քվեարկությամբ ժողովրդական համալսարանի ռեկտոր է ընտրում մեծանուն պատմաբան Հակոբ Համազասպի Մանանդյանին (1873-1952):

1921-ի հունվարի 23-ին Երևանի Ստ. Շահումյանի անվան բանվորական ակումբի դահլիճում (ներկայիս երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքի տեղում) տեղի է ունենում Երևանի ժողովրդական համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը, որի ժամանակ «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով հրապարակային դասախոսություն է կարդում նշանավոր իրավաբան Գրիգոր Չուբարը: Իսկ հաջորդ օրը՝ հունվարի 24-ին, ուսուցչական սեմինարիայի շենքում (ներկայումս Արվյան փողոց, թիվ 52) սկսվում են պարապմունքները:

Այսպիսով, ինչպես հավաստում են փաստերը, Երևանի պետական համալսարանը Հայաստանի համալսարանի օրգանական շարունակությունն է, և նրա ստեղծման տարեթիվը պաշտոնապես ընդունված է 1919 թ. մայիսի 16-ը:

Ժողովածուն ունի առաջաբան, որը պատկանում է ակադ. Վ. Բարխուդարյանի գրչին: Այնտեղ մասնավորապես ասված է. «Ծանոթանալով այդ վավերագրերին՝ մենք մտովի տեղափոխվում ենք և լավագույնս պատկերացում ենք կազմում այն ժամանակվա բարդ ու դժվարին իրավիճակի մասին: Վավերագրերը հավաստում են, թե երկրի ծայրաստի-

ճան քայքայված պայմաններում, երբ մոլեգնում էին սովն ու համաճարակը, երբ բացակայում էին կյանքի ու կենցաղի կազմակերպման ամենատարրական հնարավորությունները, հայ մտավորկանության և իշխանության ներկայացուցիչները ինչպիսի մվիրումով էին անասելի մեծ ջանքեր գործադրում կրթության բարձրագույն հաստատություն՝ համալսարան հիմնելու ուղղությամբ: Եվ թե ինչպիսի հետևողականությամբ ու աննահանջ եռանդով կարողացան իրենց ձեռնարկումը պսակել հաջողությամբ» (էջ 7):

Ժողովածուն կազմողները բնագրերում որևէ կրճատում կամ այլ միջամտություն չեն կատարել: Նրանք ընթերցողների գործը դյուրացնելու նպատակով ծավալում ու դժվարին աշխատանք են կատարել. վավերագրերում հիշատակված իրադարձություններն ու փաստերը, դեպքերն ու դեմքերը ներկայացրել են առանձին ծանոթագրություններով, որոնք նպաստում են այդ վավերագրերը խորությամբ ընկալելուն և դրանց մասին լիարժեք պատկերացում կազմելուն: Գիրքն ունի մաս այն հեռավոր տարիների կրթության գործի նախանձախնդիր դեկավարների և առաջին դասախոսների լուսանկարների ու փաստաթղթերի պատճենահանված ներդիրներ, որոնք ավելի հետաքրքիր ու առարկայական են դարձնում այս արժեքավոր հրատարակությունը:

Այժմ մի երկու դիտողություն գրքի ընդհանուր կառուցվածքի մասին: Այն կազմողները թեև առաջնորդվել են մնան փաստաթղթերի հրատարակման ընդունված կարգ ու կանոնով, որն հաստատում է մաս առաջաբանի հեղինակը, այնուամենայնիվ նկատվում են վիճարկելի տեղեր: Մեզ թվում է, որ ռուսերեն բնագրերը, որոնք կազմում են ժողովածուի շուրջ կեսը (70 վավերագիր), պետք է ունենային իրենց թարգմանված գուգաղի տեքստերը, կամ այդ թարգմանությունները պետք է ներկայացվեին ծանոթագրություններում, ինչպես, ասենք, դա արվել է «Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Քերզոնի կողմից» տրված անգլերեն հեռագրի (89, 143) ու «Կովկասի ֆրանսիական զինվորական առաքելության՝ Հայաստանի կառավարության վարչապետ Խատիսյանին Փարիզի և Հայաստանի համալսարանների միջև կապեր հաստատելու մասին» Թիֆլիսից ուղարկված ֆրանսերեն գրության (111, 172) դեպքում: Թվում է՝ ճիշտ չէ մաս ռուսերեն բնագրերը հայերեն վերտառությամբ ներկայացնելը: Եթե ռուսերեն տեքստերը ունենային



հայերեն գուգադիր թարգմանություններ, ապա հեշտ կլիներ նշված թյուրիմացությունից խուսափելը:

Նկատի ունենալով նման ժողովածուներ կազմելու բարդություններն ու դժվարությունները՝ հնարավոր է, որ գրքում լինեն նաև այլ թերություններ, մոռացության մատնված վավերագրեր ու առանձին բացթողումներ: Ասվածը հաստատելու համար վկայակոչենք վերը հիշատակված Պատմալեզվաբանական ֆակուլտետի՝ 1920 թ. հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած 6-րդ նիստի արձանագրությունը, որը, ցավոք, տեղ չի գտել ներկա ժողովածուում: Այստեղ չկա նաև հիշյալ ֆակուլտետի 7-րդ նիստի արձանագրությունը, որը պետք է տեղի ունեցած լիներ 1920 թ. հոկտեմբերի 29-ի և նոյեմբերի 30-ի միջև ընկած ժամանակահատվածում: Բացառված չեն նաև նման բնույթի այլ բացթողումներ ու վրիպումներ: Գրքում հաճախակի են հանդիպում նաև սրբագրական վրիպակներ ու անճշտություններ: Օրինակ՝ 160-րդ էջում տպագրված «հիմնում ենք մի աշխատանք»-ի փոխարեն պետք է լինի «հիմնում ենք մի աշխատանոց»: Կամ՝ նույն վավերագրում *Պուադեբար* (էջ 158) ազգանունը ներկայացված է նաև *Պուադարար* (էջ 164) ձևով. արդ, չգիտես ո՞րն է ճիշտը: Այլ օրինակներ չենք ուզում բերել:

Այրուհանդերձ, վավերագրերի ներկա հարուստ ժողովածուն, որը հրատարակվել է Երևանի պետական համալսարանի 75-ամյակի առթիվ, մի գեղեցիկ նվեր է այդ հիշարժան հոբելյանին: Նրանում գետեղված փաստաթղթերը և մյուս նյութերը՝ իբրև կարևոր սկզբնաղբյուրներ, կարող են օգտակար լինել մասնագետներին, հանրապետության մայր բուհի պատմությամբ զբաղվողներին ու հետաքրքրվողներին, ինչպես և ընթերցող լայն շրջաններին:

Պետք է երախտագիտությամբ հիշատակել, որ վավերագրերի սույն ժողովածուն տպագրվել է Հայաստանի առաջին հանրապետության պետական գործիչ Հայկ Յաղջյանի դստեր՝ Վերա Մովսիսյանի հովանավորությամբ:

## ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ\*

(Նվիրված Երևանի համալսարանի հիմնադրման փարերթվի  
նշգրտմանը)

Ե՞րբ է ստեղծվել Երևանի համալսարանը՝ 1920 թ. դեկտեմբերի 17-ի՞ն, ինչպես ընդունված է խորհրդահայ պատմագրության մեջ, թե՞ դրանից առաջ: Այս կարևոր հարցի պարզաբանմանն էր նվիրված մայիսի 15-ին համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցած գիտական նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցում էին ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ, այնպես էլ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ու հանրապետության բուհերի ճանաչված գիտնականներ ու հյուրեր:

Գիտական նստաշրջանը ներածական խոսքով բացեց համալսարանի ռեկտոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Համբարձումյանը: Նա ընդգծեց, որ ներկա գիտական նստաշրջանն ունի կարևոր նշանակություն: Այն մի փորձ է պատմության մեջ եղած «մութ անկյունները» լուսավորելու, «սպիտակ բծերը» լրացնելու, նորովի մեկնաբանելու մեր մշակույթի համար չափազանց կարևոր նշանակություն ունեցող մի խնդիր, այն է՝ ճշտելու, թե երբ է ստեղծվել Երևանի համալսարանը:

Այնուհետև ակադ. Ս. Համբարձումյանն ասաց, որ բարձրագույն դպրոցի սկիզբը Հայաստանում պետք է սկսել V դարից, այն պահից, երբ Մեսրոպը Մաշտոցը ստեղծել է մեր ազնվական ու սուրբ գրերը, երբ սկզբնավորվել է իսկական հայատառ գրականությունը, զարգացել են փիլիսոփայությունն ու աստվածաբանությունը, երբ մայրենի լեզվով դրվել են մեր մշակույթի հիմքերը: Մինչև IX դարը մենք ունեցել ենք երևելի ու մեծանուն շատ պայծառ դեմքեր, որոնք պատմությանը թողել են բազմաթիվ յխամրող գործեր: Այս ամենը հող է նախապատրաստել տարբեր ժամանակներում Հայաստանում բարձրագույն դպրոցներ հիմնելու համար: Դրանցից են Շիրակացու (VII դ.) և Սյունյաց (VII-VIII դդ.) դպրոցները, Աղբամարի դպրոցն ու Սանահինի ակադեմիան (X-XI դդ.), Անիի դպրոցը (XI-XII դդ.) և այլն:

---

\* «Երևանի համալսարան» շաբաթաթերթ, 1989:

«Հայոց առաջին բարձրագույն դպրոցը, ըստ իս,- նշեց ելույթ ունեցողը,- ստեղծվել է սրանից 1.000 տարի առաջ՝ IX դարում, Լևոն Իմաստասերի կողմից Կոստանդնուպոլսում: Հետագայում Եվրոպական համալսարաններ են ստեղծվել Գլաձորում ու Տաթևում (XIII-XIV դդ.), որոնք բարձրագույն կրթությունը Հայաստանում հասցնում են մի նոր աստիճանի: Այդ համալսարաններում դասավանդումը տարվել է հայերեն: Երբ 1051 թ. Գրիգոր Մագիստրոսը հայերեն է թարգմանում Էվկլիդեսի երկրաչափությունը, հետապնդում է մի նպատակ՝ հայոց բարձրագույն դպրոցներում ուսուցումը տանել մայրենի լեզվով: Այս տեսակետից միջնադարյան հայոց համալսարանները, ըստ երևույթին, պատմականորեն եղել են միակը, որոնցում դասավանդումը տարվել է մայրենի լեզվով:

Այնուհետև երկար ընդմիջումից հետո, որի ընթացքում հայ մտավորականությունը Հայաստանում ու նրա սահմաններից դուրս բարձր է պահել գիտության ու կրթության ավանդույթները, նորից խնդիր է դրվել ունենալու հայկական համալսարան: Այդ երազանքն են փայփայել Խ. Աբովյանն ու Մ. Նալբանդյանը, Ա. Արծրունին ու Զ. Պատկանյանը, Ստ. Նազարյանցն ու Ս. Շահագիզը և շատ ուրիշներ: Սակայն հայրենի հողում քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով հնարավորություններ չեն ստեղծվում հիմնելու համալսարան, ուստի հայկական բարձր տիպի դպրոցներ են հիմնադրվում Մոսկվայում (Լազարյան ճեմարանը (1815 թ.)), Թիֆլիսում (Ներսիսյան դպրոցը (1824 թ.)), Էջմիածնում (Գևորգյան ճեմարանը (1874 թ.)): Կարելի է ասել, որ բարձրագույն կրթության ու գիտության զարգացման համար կարևոր դեր է կատարել նաև Մխիթարյան միաբանությունը, որն ունեցել է իր դպրոցները Եվրոպայում:

Եվ ահա այս ամենից հետո հայ ժողովուրդը 1918 թ. տառապանքների ու կորուստների ծանր գնով իր պատմական հայրենիքի մի փոքր մասում վերականգնում է իր պետականությունը, որից մեկ տարի անց՝ 1919 թ. մայիսի 16-ին, հիմնվում է Հայաստանի համալսարանը, որն էլ խորհրդային կարգերի հաստատումից հետո վերակազմվում ու անվանվում է Երևանի համալսարան: Մեր ներկա գիտական նստաշրջանը նվիրված է այդ համալսարանի ստեղծման ու նրա գործունեության պատմությանը,- իր բացման խոսքի վերջում ասաց ակադեմիկոս Ս. Համբարձումյանը»:

Այնուհետև «Երևանի համալսարանի հիմնադրման հարցի շուրջ» քեմայով գեկուցում կարդաց ՀԽՍՀ ժողովրդական կրթության նախարարի առաջին տեղակալ Լ. Ղարիբջանյանը: «Հայտնի է, որ 1918 թ. մայիսի 28-ին ստեղծվեց Հայաստանի անկախ հանրապետությունը, որի գլուխ կանգնեց «Հայ հեղափոխական դաշնակցությունը», - ասաց նա: - Իր իշխանության 2-րդ տարում, ընդառաջելով հայ մտավորականության եռանդուն գործիչների ցանկություններին, հանրապետության կառավարությունը ձեռնամուխ եղավ Հայաստանում համալսարան հիմնադրելու շատ բարդ ու դժվարին գործին: Այդ հարցը առաջադրողներից ու նրա հետևողական պաշտպաններից էին Նիկոլ Աղբալյանը և Սիրեկան Տիգրանյանը: 1919 թ. մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը քննարկում և որոշում է ընդունում Երևանի համալսարան հիմնելու մասին»:

Ի որին ակնածանքով ու երախտագիտությամբ ես լսում էի գիտության այն կարկառուն դեմքերի անունները, որոնք կարճ ժամանակամիջոցում հրավիրվեցին հայկական համալսարան դասախոսություններ կարդալու: Մերոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյան (հայոց պատմություն), Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան (հայ եկեղեցու պատմություն), Սիրեկան Տիգրանյանը (հայ իրավունքի պատմություն և հոգեբանություն), Հակոբ Մանանդյան (հայոց պատմություն), Գրիգոր Ղափանցյան (համեմատական լեզվաբանություն), Արսեն Տերտերյան (հայ գրականության պատմություն), Կ. Սավիչ-Չաբլոցկի (երկրաբանություն), Աշխարհաբեկ Լոռու-Մելիք Քալանթար (ինագիտություն), Մանուկ Աբեղյան, Ստեփան Սալխասյանց, ճարտարապետներ Ալեքսանդր Թամանյան ու Թորոս Թորոմանյան, Նիկողայոս Մառ, Մարկվարտ, Մեյն և շատ ուրիշներ...

«ՀԽՍՀ պետական արխիվում,- այնուհետև իր գեկուցման մեջ նշեց Լ. Ղարիբջանյանը,- պահպանվել է համալսարանի բացման առթիվ Երվանդ Տեր-Մինասյանի՝ 1919 թ. դեկտեմբերի 3-ին հանրային կրթության և արվեստի նախարարին ուղղված գեկուցագիրը, որից պարզվում է, որ Երևանում հնարավոր չի եղել շենք տրամադրել, իսկ Ալեքսանդրապոլի «քաղաքային ինքնավարությունը համալսարանի վարչության տրամադրությանն է հանձնում չորս մեծ սենյակ առևտրական դպրոցի շենքում,

որոնցից համալսարանն իր պետքերի համար կարող է օգտվել ամբողջ օրը»»:

Հայաստանի համալսարանի բացման պաշտոնական արարողությունը տեղի է ունեցել 1920 թ. հունվարի 31-ին: Այդ առթիվ տպագրվել է նաև «Հայաստանի համալսարան» միօրյա թերթը:

Հաջորդ գեկուցումը նվիրված էր «Մոցիալ-քաղաքական իրադրությունը Հայաստանում 1919-1920 թթ.» թեմային, որով հանդես եկավ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Խուրշուդյանը: Ձեկուցողը փորձ արեց հստակ ու պարզորոշ ներկայացնելու այն ժամանակաշրջանն ու միջավայրը, որում ստեղծվել է հայկական համալսարանը: Նա նշեց, որ 1918-1920 թթ. Հայաստանի պատմության շատ դրվագներ կեղծված են, փաստաթղթերի պակասի ու այլ հանգամանքների բերումով չի ստեղծվել Հայաստանի՝ այդ շրջանի պատմությունը, և այսօր մենք հստակ պատկերացում չունենք այդ տարիների իրադարձությունների մասին: «Ինչպես հայտնի է,- նշեց գեկուցողը,- շուրջ 600 տարի ընդմիջումից հետո՝ 1918 թ. մայիսի 28-ին, հայ ժողովուրդը վերականգնում է իր կորցրած պետականությունը, ունենում է իր պետական դրոշը, զինանշանը (գերբը), հիմնը, բանակը, դրամը, քաղաքական կուսակցությունները, ազգային ու մշակութային կազմակերպությունները և այլն: Այդ պետականությունը ճանաչվում է արևմտյան մի շարք երկրների կողմից, որոնք էլ դիվանագիտական հարաբերությունների մեջ են մտնում նրա հետ: Երկուսուկես տարի գոյություն ունենալուց հետո այդ պետությունը իր տեղը զիջում է Խորհրդային Հայաստանին»:

Հայաստանի Հանրապետության քաղաքական վիճակը եղել է ծանր: Փաստորեն, այն իր գոյության ամբողջ ընթացքում պայքարել է թուրքական հրոսակների դեմ, աշխատել է ամրապնդել իր դիրքերը: Այդ պետականության և այդ շրջանի անմիջական արդյունքն էր նաև Հայաստանի համալսարանի հիմնադրումը:

«1918-1920 թվականները հայ ժողովրդի պատմության ծանր ու բարդ շրջաններից են,- իր գեկուցման վերջում ասաց պրոֆ. Լ. Խուրշուդյանը,- այն պետք է խորհրդահայ պատմագիտության կողմից լրջորեն ուսումնասիրվի, գիտականորեն վերլուծվի ամեն ինչ, գնահատվի ու ասպարեզ հանվի իսկական ճշմարտությունը այդ հանրապետության մասին: Պատմության ընդհանուր շղթայից պետք է հանել շատ օղակներ, ո-

րոնք վերաբերում են Հայաստանի Հանրապետությանը և դրանք վերլուծել ժամանակի ընդհանուր ֆոնի վրա»:

Ձեկուցումների շուրջ եղան մաս ելույթներ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանը, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ. Անանյանը, փիլիսոփայության պատմության ամբիոնի պրոֆ. Հր. Միրզոյանը, ՍՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ Հ. Պետրոսյանը և ուրիշներ այն կարծիքն հայտնեցին, որ Երևանի պետական համալսարանը Հայաստանի համալսարանի օրգանական շարունակությունն է, և նրա հիմնադրման տարեթիվը պետք է համարել 1919 թ. մայիսի 16-ը:

Գիտական նստաշրջանում Հայաստանի համալսարանի հիմնադիր դասախոսներից մեկի՝ նշանավոր բանասեր Երվանդ Տեր-Մինասյանի որդին՝ քիմիական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող Լևոն Տեր-Մինասյանը, կարդաց իր հոր հուշերը՝ այդ համալսարանի հիմնադրման մասին: Իսկ Միքայել Վերմիշերը ներկայացրեց մի փաստաթուղթ, ըստ որի՝ Հայաստանի համալսարանի կազմակերպիչներից մեկը եղել է Դավիթ Չավրևը (Չավրյան), որը 1920 թ. աշնանը եղել է նույն համալսարանի ռեկտորի պաշտոնակատար:

Գիտական նստաշրջանը ամփոփելով՝ ակադեմիկոս Ս. Համբարձումյանը նշեց, որ Հայաստանի համալսարանի ստեղծման ու նրա գործունեության վերաբերյալ արխիվային մի շարք փաստաթղթեր է հայտնաբերել Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դոցենտ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու Ֆ. Մամիկոնյանը, որոնք պետք է հրատարակվեն առանձին գրքով: Միաժամանակ գիտական նստաշրջանի կողմից առաջարկվեց հարց բարձրացնել Հայաստանի կոմկուսի կենտկոմի և կառավարության առջև՝ Երևանի պետական համալսարանի 70-ամյակը նշելու այս տարվա աշնանը:

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ ՊԱՀԱՊԱՆ\*

Երևանի պետական համալսարանն իր հիմնադրման առաջին իսկ օրերից ուսանողության շրջանում վառ է պահել հայրենասիրության ջահը: Անցած ութսունից ավելի տարիների ընթացքում մեր մայր բուհը, բարձրորակ մասնագետներ պատրաստելուն զուգընթաց, երիտասարդության սրտերում սերմանել է սեր ու նվիրում անցյալի մեր հոգևոր ու նյութական արժեքների նկատմամբ: Եվ պատահական չէ, որ երբ 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) տեղի էր ունենում նորաստեղծ Հայաստանի Հանրապետության անդրանիկ համալսարանի հանդիսավոր բացումը, առաջին ակադեմիական դասախոսությունը նվիրված էր «Հայոց վանքերի նշանակությունը Հայաստանի մշակութային գործերում» թեմային, որով հանդես է եկել Պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկան, հասարակական-մշակութային ու եկեղեցական խոշոր գործիչ, անվանի գիտնական ու մանկավարժ Մեսրոպ Մազիստրոս Տեր-Մովսիսյանը<sup>42</sup>:

\* «Էջմիածին» ամսագիր, 2000, թիվ ԺԱ, էջ 125-132:

<sup>42</sup> Մեսրոպ Մազիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (ավագանի անունով՝ Փարսաղան Վարդանի Տեր-Մովսիսյան, 1865-1939) ծնվել է Ելիզավետպոլի նահանգի Չանգեզուրի գավառի (այժմ՝ Սյունիքի մարզի Գորիսի շրջան) Շիկահող գյուղում: 1882 թ. ավարտել է Շուշիի թեմական, իսկ 1885 թ.՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցները, ապա, Ռևելում (Ռիգա) էքստեռն կարգով քննություններ հանձնելով և հատուության վկայական ստանալով, ընդունվել է Դորպատի համալսարան, որի դասական բանասիրության բաժինը 1891 թ. ավարտել է ոսկե մեդալով: Հետագայում նա իր գիտելիքները հարստացրել է Վիեննայի, Փարիզի, Օքսֆորդի, Լոնդոնի, Բեռլինի, Հռոմի, Վենետիկի, Կահիրեի, Երուսաղեմի և այլ քաղաքների ազգային ու արքունական գրադարաններում՝ կատարելով գիտահետազոտական բեղմնավոր աշխատանք հայոց հիմնադրերն ուսումնասիրելու և դրանց լիակատար ցուցակը կազմելու ուղղությամբ: Գրել է «Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունը» (ռուսերեն), որը 1902 թ. Պետերբուրգում պաշտպանել և ստացել է հայ բանասիրության մագիստրոսի գիտական աստիճան, հայերեն և գերմաներեն տպագրել է «Հայ գյուղական տունը» ազգագրական երկը, աշխատակցել է «Հանդես ամսօրեայ»-ին, հեղինակ է ավելի քան 130 հետազոտությունների: Նա ուսումնասիրել է 23.500 ձեռագիր և կազմել դրանց լիակատար ցուցակը, որն այժմ պահվում է Մատենադարանում:

...Երբ 1995 թ. սեպտեմբերի 16-ին դարձյալ մեծ հանդիսություն էր Երևանի պետական համալսարանում, այս անգամ արդեն այն նվիրված էր համալսարանի 20-րդ՝ Աստվածաբանության ֆակուլտետի բացմանը: Մեր մայր կրթօջախի պատմական շենքի կամարների ներքո հնչած ռեկտորի, պետական ու հասարակական նշանավոր գործիչների, ականավոր գիտնականների և ուսանողների, ինչպես նաև Ամենայն հայոց հայրապետի ողջույնի ու օրհնանքի խոսքերից հետո դասախոսությամբ հանդես եկավ նորաստեղծ ֆակուլտետի առաջին ղեկան, երևելի հոգևորական, հայ եկեղեցու նշանավոր գործիչ, բանասիրության և փիլիսոփայության դոկտոր, պրոֆ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը, որը հանգամանորեն ներկայացրեց աստվածաբանության նշանակությունը մեր գիտության ու մշակույթի հետագա զարգացման գործում:

Հայոց Մայր համալսարանի կյանքում տեղի ունեցած այս երկու նշանակալից իրադարձություններն իրարից բաժանող շուրջ ութ տասնամյակների ընթացքում, անգամ՝ 1930-ականների մոռյալ ու մոռված ճանաչողության տարիներին և 1940-ականների վերջերի արտորների ու բռնությունների շրջանում, մեր «Ալմա մատերի» դասախոսները շարունակել են իրենց հայրենամվեր գործունեությունը՝ ուսանող երիտասարդությանը դաստիարակելով քրիստոնեական ինքնությանն ու առաքինություններին հավատարիմ մնալու սկզբունքներով և անցյալի մեր մշակութային արժեքները հարգելու և բարձր գնահատելու մի

---

Մերոպ Մագիստրոսը սկզբում, որպես տեսուչ, պաշտոնավարել է Երևանի և Շուշու թեմական դպրոցներում, եղել Շամախու կոնսիստորիայի նախանդամ, ապա, որպես հայագիտության դասատու, աշխատել է Գևորգյան ճեմարանում, որի տեսուչն է եղել 1910-11 թթ., 1906 և 1918-20 թթ. եղել է Էջմիածնի մատենադարանապետը: Նա 1909-ին ստացել է ծայրագույն վարդապետի աստիճան և ձեռնադրվել եպիսկոպոս, ապա ստացել է արքայության աստիճան, առաջնորդել է Վրաստանի և Իմերեթիայի (1913-16 թթ.), Ասորախանի (1916-17 թթ.), Պարսկահայաստանի (1929-31 թթ.) հայոց թեմերը, ընդգրկվել Գեորգույն հոգևոր խորհրդի կազմում: 1919 թ., երբ հիմնադրվում է Հայաստանի համալսարանը, Մերոպ Մագիստրոսը հրավիրվում է այնտեղ՝ որպես «Հայոց հին գրականության և մատենագիտության» դասախոս: Միաժամանակ 1919-20 թթ. Ալեքսանդրապոլում եղել է Պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին ղեկանը (մրա կենսագործունեության և գիտահետազոտական աշխատանքների մասին ավելի հանգամանալից տե՛ս **Գ. Տեր-Վարդանեանի** «Մերոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսեան» գրքում (Երևան, «Մագաղաթ» հրատ., 1999, 180 էջ):



ներքին խոր զգացումով: Նրանք այդ ծանր տարիներին անգամ, երբ մեր հոգևոր ու նյութական շատ արժեքներ ոմանց կողմից «անցյալի մնացուկ» էին համարվում, ուսանողներին ուսուցանում էին սիրել այդ զանձները, ուսումնասիրել մեր մագաղաթն ու քարագիր մատյանները, կազմակերպում էին էքսկուրսիաներ ու գիտարշավներ դեպի մեր վանքերն ու եկեղեցիները, պատմաճարտարապետական մյուս կոթողները:

Գեռևս 1923 թ. դեկտեմբերի 18-ին ՀԽՍՀ Ժողկոմխորհի դեկրետով լուսժողկոմատի կազմում ստեղծվում է հուշարձանների պաշտպանության կոմիտե, որի կազմում հայ մշակույթի անվանի գործիչներ Թորոս Թորամանյանի, Երվանդ Շահագիզի, Հովսեփ Օրբելու, Երվանդ Լալայանի, Մարտիրոս Սարյանի հետ ընդգրկվում են նաև համալսարանի դասախոսներ Աշխարհաբեկ Լոռու Մելիք-Ջալանթաբյանը, Նիկողայոս Բունիաթյանը, Գևորգ Ասատուրը, Գարեգին Լևոնյանը, Ստեփան Լիսիցյանը և ուրիշներ: Առաջին նախագահն է եղել դարձյալ համալսարանի դասախոս, ականավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը (1923-33 թթ.): Այդ կոմիտեն, որ գործել է շուրջ 40 տարի՝ մինչև 1964 թվականը<sup>43</sup>, և նրա կազմն ամեն անգամ թարմացվել ու համալրվել է նորանոր անդամներով (Կարո Ղաֆադարյան, Սեդրակ Բարխուդարյան, Նիկոլայ Տոկարսկի և ուրիշներ), շատ բան է արել մեր պատմաճարտարապետական հուշարձանները գիտականորեն հաշվառելու, նորոգելու և մասսայականացնելու ուղղությամբ: Ինչ խոսք, այդ հայրենամուկներ գործում միշտ էլ ընդգրկվել են մեր լավագույն ուսանողներն ու դասախոսները: Նախապատե-

---

<sup>43</sup> 1933 թ. հունիսի 2-ից կրել է «Հնությունների կոմիտե» անվանումը և ընդգրկվել ՀԽՍՀ Կենտրոնական կազմում: ՀԽՍՀ Ժողկոմխորհի՝ 1941 թ. հունվարի 25-ի որոշմամբ մտել է ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) մեջ, 1945-52 թթ. կրկին գործել է որպես ինքնուրույն մարմին, 1953-79 թթ. եղել է ՀԽՍՀ Պետշինի պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման ու պահպանման վարչություն, որը ՀԿԿ կենտկոմի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի՝ 1978 թ. ապրիլի 19-ի որոշմամբ դարձել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր պատմության և մշակութային հուշարձանների պահանման ու օգտագործման վարչություն և սկսել է գործել 1979 թ. սեպտեմբերի 20-ից: Այս կարևոր մարմինը տարբեր տարիների դեկավարել են Հ. Օրբելին (1943-44 թթ) և ուրիշներ:

րագմյան և հետպատերազմյան դժվարին տարիներին Հայաստանի կառավարությունը զգալի միջոցներ է հատկացրել այդ մարմնին՝ հնագույն հուշարձանները ուսումնասիրելու ու պահպանելու նպատակով: Այդ տարիներին է, որ լույս են տեսնում մի շարք կոթողային աշխատություններ՝ նվիրված հայկական հին արվեստին ու ճարտարապետությանը<sup>44</sup>:

Բացի այդ՝ կատարվում են մի շարք պեղումներ, ուսումնասիրվում Գառնիի տաճարը, Մարմաշենը, Բջնիի, Ամբերդի եկեղեցիները, Թալինի Կաթողիկեն, Տաթևի վանքը, Դվինի, Չվարթնոցի, Էջմիածնի, Կարմիր բլուրի և այլ վայրերի հնություններն ու ճարտարապետական կոթողները, և այդ աշխատանքներին իրենց գործուն մասնակցությունն են բերում Երևանի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները: Ցավոք, դարերի ընթացքում օտար նվաճողների կողմից ավերված, լքված ու շատ դեպքերում հողի հաստ շերտերով ծածկված մեր բազմաթիվ ամրոցներն ու բերդերը, կամուրջներն ու իջևանատները, վանքերն ու եկեղեցիները լիարժեք կերպով ուսումնասիրելու և վերականգնելու համար միայն հիշյալ կոմիտեն ու պետությունը ոչինչ անել չէին կարող: Դրանց համար անհրաժեշտ էին համաժողովրդական հոգատարություն և ուշադրություն, ինչպես և գործնական օգնություն: Այդ նպատակով էլ 1941-45 թթ. հիշյալ կոմիտեի նախագահի տեղակալ պրոֆ. Ն. Մ. Տոկարսկու ղեկավարությամբ 1949 թ. փորձ է արվում ստեղծելու Հուշարձանների պահպանության հանրապետական ընկերություն: Նրա այդ իղձը, սակայն, իրականություն է դառնում 1964 թ. միայն, երբ Հայաստանում ստեղծվում է կամավոր սկզբունքների վրա հիմնված այդ կազմակերպությունը, որը ղեկավարելու պատասխանատու պարտականություններ

---

<sup>44</sup> Առանձնապես արժեքավոր են հետևյալ աշխատությունները. Խ. Սամունյան, Հին Հայաստանի կուլտուրան (եռսիստոր), Եր., 1931-41 թթ., Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության (երկհատորը), Եր., 1942-48 թթ., **Н. М. Токарский**, Архитектура древней Армении, Ер., 1946, նույնի՝ Архитектура IV-XIV вв., նույնի՝ По страницам истории армянской архитектуры, Ер., 1973, **А. Л. Якобсон**, Очерки истории зодчества Армении V-XVIII веков, М., Л., 1950, **Б. Аракелян**, Гарни, Ер., 1952, **К. В. Тревер**, Очерки по истории культуры древней Армении, М., Л., 1953 և այլն:

րի կատարումը դրվում է մեր հուշարձանների պահպանման մեծ երախտավոր ու կազմակերպիչ Մ. Սարյանի վրա, իսկ տեղակալ է ընտրվում ճարտարապետության դոկտոր, պրոֆ. Վ. Հարությունյանը, որը հետագայում ստանձնում է նախագահի պաշտոնը (1977-82 թթ.): Այս նորաստեղծ կամավոր կազմակերպությունը փաստորեն գործում է ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առնթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման վարչությանը զուգահեռ, հասարակական հիմունքներով, որին շատ կարճ ժամանակահատվածում անդամագրվում են 100 հազարից ավելի երիտասարդներ, ովքեր սիրում են նվիրումով ծառայել մեր ճարտարապետության հնագույն կոթողների պահպանության, վերականգնման ու քարոզչության սրբազան գործին:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ այդ հայրենամավեր աշխատանքը Երևանի պետական համալսարանի ուսանողության կողմից սկսվել էր դեռևս հիշյալ ընկերության ստեղծումից ավելի վաղ՝ 1960-ականների սկզբից: Համալսարանում այդ հայրենամավեր գործի առաջին կազմակերպիչն ու ջատագովը եղել է ֆիզիկոս, ներկայումս լաբորատորիայի վարիչ Միսաք Մարտիրոսյանը: Նրա ղեկավարությամբ ուսանողները նույնիսկ ամառային արձակուրդների ընթացքում իրենց հանգստի հաշվին կազմակերպել են աշխատանքային բազմաթիվ այցելություններ դեպի անբարենպաստ ու լքված վիճակում գտնվող վանքերն ու եկեղեցիները, մացառներից ու բույսերից մաքրել ու բարեկարգել են դրանց փլվող պատերն ու սյուները, խորաններն ու կամարները, գմբեթներն ու քիվերը և շրջակայքը բերել պատշաճ տեսքի: Հարյուրավոր խաչքարեր ու վիմագիր արձանագրություններ են հանվել փլվածքների ու հողի տակից և ամրացվել իրենց տեղերում:

Ուսանողության շրջանում այդ գործն ավելի մեծ չափերի ու ծավալների է հասնում, երբ 1967 թ. ստեղծվում է պատմական հուշարձանների պահպանության հանրապետական խորհուրդ, որի վրա է դրվում ուսանողության կողմից ծավալված հուշարձանների պահպանման ու վերականգնման աշխատանքների ղեկավարումը: Այդ

երիտասարդական խորհուրդը կարճ ժամանակահատվածում ստեղծում է տեղական միություններ, որոնց միջոցով էլ, ըստ հանրապետության շրջանների, ցուցակագրվում ու քարտեզագրվում են առավել վտանգված ու փյունան եզրին կանգնած հուշարձանները, մշակվում դրանց վերականգնման կամ բարեկարգման ծրագրեր:

Սկսված գործին մասնակցում են գրեթե բոլոր բուհերի ուսանողներն ու հանրապետության դպրոցների բարձր դասարանների աշակերտները: Համալսարանականները ևս ընդգրկվում են նորաստեղծ մասնաճյուղի մեջ: Շուտով կազմակերպվում է հանրապետական հավաք, որի առթիվ Երևանի պետական համալսարանը կազմակերպում է Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձանների վիճակը և դրանցում իր սաների կողմից կատարված աշխատանքները պատկերող լուսանկարների հարուստ ցուցահանդես: Այդուհետև ավելի մեծ ծավալ է ստանում ձեռնարկված գործը: Համալսարանում և բացօթյա վայրերում՝ հուշարձանների մոտ, կազմակերպվում են դասախոսություններ, որոնց միջոցով ուսանողները ծանոթանում են տվյալ կառույցի պատմությանը, հաճախ նշվում են կարևոր հուշարձանների տարելիցները, հրատարակվում են հանրամատչելի գրքեր ու գրքույկներ, քարտեզ-ուղեցույցներ ու փոստային բացիկներ, դրոշմանիշներ ու հուշանվերներ, լույս է տեսնում ընկերության տարեգիրքը<sup>45</sup>: Սրանց զուգահեռ՝ շարունակվում են տպագրվել գիտական արժեքավոր աշխատություններ՝ նվիրված միջնադարյան հայոց վանքերին ու եկեղեցիներին<sup>46</sup>: Այստեղ հատկապես պետք է ընդգծել Մայր

---

<sup>45</sup> Դրանցից են **Յու. Թամանյանի** «Քարե տարեգրության վերականգնումը» (Եր., 1971), **Կ. Հովհաննիսյանի** «Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը Մովսեսական Հայաստանում» (Եր., 1978) աշխատությունները, ինչպես նաև «Էջմիածին», «Հաղպատ-Մանսիին», «Գառնի-Գեղարդ» և այլ հանրամատչելի պատկերազարդ գրքույկները:

<sup>46</sup> Այդ գրքերից են **Ա. Սահինյանի** «Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը» (1955) և «Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը» (1983), **Ս. Մնացականյանի** «Հայկական ճարտարապետության Մյունիքի դպրոցը» (1960), «Երևանը և նրա շրջակայքը» (1971) և «Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները» (1971), **Կ. Ղաֆադարյանի** «Դվին քաղաքը և նրա պեղումները» (երկհատորյա) (1962-1982), **Ի. Էլլարյանի** «Աղստևի հովտի պատմական հուշարձանները» (1978), **Շ. Մկրտչյանի** «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» (1985), **Ա.**

Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակած «Հայկական եկեղեցիներ» շքեղ ալբոմները, որոնց մեջ ի մի են բերված ողջ Հայաստանի (Արևելյան և Արևմտյան) տարածքում պահպանված ու եզակի արժեք ունեցող վանքերի ու եկեղեցիների լուսանկարների սև-սպիտակ և գունավոր վերատպությունները:

Համալսարանականները պատմական հուշարձանների պահպանման ու վերականգնման աշխատանքներին գործում մասնակցություն են ունեցել մինչև 1980-ականների կեսերը: Նրանց ուժերով պարբերաբար կազմավորվել են մասնագիտացված ջոկատներ, որոնց աշխատանքներին մասնակցել են 2500-ից ավելի ուսանողներ ու դասախոսներ: Նրանց հայրենանվեր գործին աջակցել են այդ շրջանի ռեկտորներ Ն. Հարությունյանը, Հր. Բատիկյանը, Մ. Ներսիսյանը, Ս. Համբարձումյանը, ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարներ Ստ. Պողոսյանը, Ս. Հարությունյանը, Լ. Տիտանյանը, Ա. Հայթյանը, Ռ. Մխիթարյանը և ուրիշներ, ինչպես նաև հուշարձանների պահպանման հայկական ընկերությունը: Նրանք անում են ամեն ինչ, որպեսզի ուսանողության հայրենանվեր նախաձեռնությունը հաջողությամբ պսակվի: Հիշյալ ընկերության և համալսարանի ղեկավարության կողմից հատկացվում են նյութական միջոցներ ու փոխադրամիջոցներ, տրամադրվում վրաններ և հանդերձանք՝ տեղերում գիշերելու և բարեկարգման աշխատանքներ կատարելու համար: Այդ տարիներին համալսարանականները մաքրել ու բարեկարգել են Իջևանի շրջանում գտնվող Մակարավանքը, Դիլիջանի տարածքի Ջուխտակ վանքը, Նորավանքի ճարտարապետական համալիրը, ապա՝ Գրիգոր Մամիկոնյան իշխանի՝ Թալինում գտնվող Եղեգնաձորի շրջանի գյուղի մոտ կառուցված Յախացքարի վանքը, ապարանքի փլատակների շրջակայքը: Վերանորոգչական աշխատանքներ են կատարվել Աշտարակի, Թալինի, Ապարանի, Հրազդանի, Աբովյանի և այլ շրջաններում, կազմակերպվել է ջոկատ՝ «Համալսարանը որոնում է համալսարանին» խորհրդանշական անվամբ, որն էլ գտել է Գլաձո-

---

**Այվազյանի** «Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները» (1987) աշխատությունները:

րի համալսարանի տեղը Եղեգնաձորի շրջանի Վերնաշեն գյուղի մոտ՝ Թանահատի վանքի շրջակայքում, որտեղ և հնագետ-դասախոս Իգիթ Ղարիբյանի ղեկավարությամբ կատարվել են պեղումներ ու հայտնաբերվել միջնադարյան մեր հռչակավոր համալսարանի պատմության վերաբերյալ հարուստ նյութեր<sup>47</sup>: Ուսանողներին մշտապես խրախուսել և գիտականորեն ղեկավարել են հնագիտության և ազգագրության ամբիոնի (վարիչ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Գ. Աբրահամյան) դասախոսները, որոնց թվում հատկապես հիշատակության արժանի է հնագետ, դոց. Ս. Սարդարյանի նվիրումն այդ գործին:

Համալսարանական ջոկատի ղեկավար Մ. Մարտիրոսյանի ելույթների ու ահագանգերի հիման վրա ավերումից փրկվել են մ.թ.ա. 2-րդ դարին պատկանող Քարաշամբի ամրոցն ու նրան կից լայնածավալ դամբարանադաշտը, Երևանի կենդանաբանական այգուց արևելք ընկած Ձորաբերդն ու նրա դամբարանադաշտը և այլ հնություններ: Նա ժամանակին կազմել է և ընկերության ղեկավարության ուշադրությանն է ներկայացրել հնագիտական այն հուշարձանների ոչ լրիվ ցանկը՝ շուրջ 50 անուն, որոնք ենթակա են եղել կորստյան: Նրա միջամտությամբ ու ջանքերով վերականգնվել են դրանցից շատերը:

Շուրջ քառորդ դար տևած այդ աշխատանքներին իրենց գործուն մասնակցությունն են բերել տարբեր ֆակուլտետների բազմաթիվ ուսանողներ, որոնց թվում՝ Գագիկ Հովսեփյանը, Կարեն Մովսիսյանը, Անդրանիկ Ղուկասյանը (ֆիզիկայի ֆակուլտետից), Կարապետ Քացախյանը (քիմիականից), Էվելինա Հարությունյանը (կենսաբանականից), Աստղիկ Բեքմեզյանը, Գուրգեն Մելիքյանը, Խաչատուր Վարդանյանը, Խորեն Պալյանը (քանասիրականից) և շատ ուրիշներ, որոնք ներկայումս անվանի գիտնականներ ու դասախոսներ են: Ուսանողների հետ այդ աշխատանքներին գործուն մասնակցություն են ունեցել նաև ֆիզդաստիարակության ու սպորտի ամբիո-

---

<sup>47</sup> Այդ նյութերի հիման վրա Ի. Ղարիբյանը հետագայում գրեց իր «Գլաձոր» (Եր., 1983) մենագրությունը՝ նվիրված Գլաձորի համալսարանի 700-ամյակին:

նի երիտասարդ դասախոսներ Հարություն Երանոսյանը, Հենրիկ Սարյանը և Ռոբերտ Գալոյանը, որոնք «ճանաչենք հայրենի բնությունը և մեր պատմական հուշարձանները» նշանաբանը կրող, վաղօրոք մշակված երթուղիներով հարյուրավոր արշավներ են կազմակերպել դեպի հազարամյա վանքերն ու եկեղեցիները, և, նրանց վիճակին ու պատմությանը ծանոթանալուց բացի, ամեն անգամ մաքրվել ու բարեկարգվել են տվյալ երթուղու շրջակայքում եղած հուշարձանները:

Համալսարանականները մտահոգվել են նաև Հայաստանի սահմաններից դուրս՝ այլ հանրապետություններում գտնվող հայկական ճարտարապետական կոթողների ճակատագրով: Այդ վայրերից եկած ուսանողներից շատերը ամառային արձակուրդների ընթացքում տեղեկություններ են հավաքել իրենց ծննդավայրերում գտնվող եկեղեցիների վիճակի մասին և, վերադառնալով դասերի, մասնաճյուղի նիստերում ներկայացրել կատարված դիտարկումների արդյունքները, որոնց համապատասխան հանրապետության ընկերության հետ մեկտեղ ձեռնարկել են համապատասխան միջոցառումներ՝ այդ հուշարձանները հոգատարությամբ շրջապատելու համար: Դրանց շնորհիվ պահպանվել են Դոնի Ռոստովի, Մոսկվայի, Լվովի, Լենինգրադի, ինչպես նաև Դրիմի, Մոլդովայի, Վրաստանի ու Ադրբեջանի տարածքներում եղած շատ վանքեր ու եկեղեցիներ<sup>48</sup>: Այդ տարիներին են սկսվել ու ավարտվել Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի վերանորոգման ու շրջակայքի բարեկարգման աշխատանքները: Ի դեպ, նրա գավթում են հանգչում Հարություն Ալամդարյանի (1795-1834), Սիքայել Նալբանդյանի (1829-1866) և Ռ-ափայել Պատկանյանի (1830-1892) աճյունները:

Հուշարձանների պահպանման հայկական ընկերության գործունեությունը ժամանակին լայն արձագանք է գտել Սփյուռքում: Տարբեր գաղթօջախների շատ գործիչներ, ողջունելով նրա հիմնադրումը,

---

<sup>48</sup> Նախկին Խորհրդային Միության տարածքի եվրոպական մասում գտնվող մեր հնավայրերի, վանքերի ու եկեղեցիների, ինչպես նաև մյուս հուշարձանների մասին տես՝ **М. Г. Пештмалджян**, Памятники армянских поселений, Ер., 1987:

իրենց բարոյական ու նյութական աջակցությունն են ցուցաբերել: «Գալուստ Գյուլբենկյան» հաստատությունը, օրինակ, ընկերությա-  
նը նվիրաբերել է 20 հազար դոլար, որով վերականգնվել են Գնդե-  
վանքն ու նրա ժամատունը: Սփյուռքում ևս իրականացվել են մի  
շարք արժեքավոր հրատարակություններ՝ նվիրված մեր պատմա-  
ճարտարապետական կոթողներին:

Անցել են տարիներ, սակայն Երևանի պետական համալսարա-  
նում դարձյալ շարունակվում են հին ավանդույթները, կրկին կազմա-  
կերպվում են արշավներ ու երթեր դեպի մեր ժողովրդի հոգու պատ-  
կերն արտացոլող հնագույն հուշարձանները, դեպի մեր սրբավայրե-  
րը: Մեզանից ութսուն տարի առաջ՝ համալսարանի հիմնադրման  
օրը, Մեսրոպ Մազիստրոս Տեր-Մովսիսյանի կարդացած՝ հայոց վան-  
քերի դերի ու նշանակության մասին առաջին դասախոսության ար-  
ձագանքները այսօր էլ թևածում են մեր մայր կրթօջախի լսարաննե-  
րում: Այդ սուրբ գործի մերօրյա շարունակողներից ու հարստացնող-  
ներից մեկը Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Շահե  
արքեպիսկոպոս Աճեմյանն է, որը վերջին հինգ տարիների ընթաց-  
քում կազմակերպել է բազմաթիվ այցելություններ դեպի Հայաստանի  
հնավայրերն ու ուխտատեղիները, որոնց ընթացքում դասախոսու-  
թյունների միջոցով ուսանողությանը ծանոթացրել է դրանց հարուստ  
պատմությանը, ակնածանք ու սեր ներարկել նրանց հոգիներում դե-  
պի մեր մշակութային կոթողները, մեր վանքերն ու եկեղեցիները: Դա  
հայրենանվեր ու սրբազան մի գործ է՝ իր ութսունամյա հարուստ  
պատմությամբ, որով հայոց Մայր համալսարանը դիմավորում է  
քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-  
ամյակը:



## ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ 250 ՏԱՐԵԿԱՆ\*

Այս տարվա հունվարին Ռուսաստանում, նախկին Խորհրդային Միության հանրապետություններում և արտասահմանյան երկրներում լայնորեն նշվեց համաշխարհային գիտակրթական ու մշակութային խոշորագույն կենտրոններից մեկի՝ Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի հիմնադրման 250-ամյակը:

Մոսկվայի համալսարանը իրավամբ համարվում է ռուսական հնագույն բուհը: Ներկայումս այն դասվում է աշխարհի առաջատար համալսարանների թվին, որի պատմությունը, կարելի է ասել, կրթության, գիտության ու մշակույթի վեհ գաղափարների արմատավորման ու տարածման պատմությունն է Ռուսաստանում: Նրա ճակատագիրը սերտորեն շաղկապված է երկրի ճակատագրին ու պատմությանը, նրա դասախոսները, աշխատակիցները և ուսանողները միշտ էլ գտնվել ու գտնվում են հասարակական-քաղաքական կյանքի հորձանուտում և ծառայում են հայրենիքի առաջընթացի ու բարգավաճման գործին: Այնտեղ կատարվում են ժամանակակից հետազոտություններ, զարգանում համաշխարհային ճանաչման արժանացած գիտական դպրոցներ, փորձարկվում տարաբնույթ կրթական ծրագրեր:

Ռուսաստանի մշակութային կյանքում տեղի ունեցած այդ կարևոր իրադարձությունը մտցվել էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային հիշարժան տարելիցների շարքը, և նրա կողմից 2004 թ. հունվարից մինչև 2005 թ. հունվարի վերջը հայտարարվել էր «Մոսկվայի համալսարանի տարի»: Այդ առթիվ ՌԴ նախագահ Վ. Վ. Պուտինը հրամանագիր էր արձակել, համաձայն որի՝ ՌԴ նախկին վարչապետ Մ. Մ. Կապանովի ղեկավարությամբ ստեղծվել էր հեբեյանական միջոցառումները մշակող և անցկացնող կազմկոմիտե, որի կողմից ներկայացված առաջարկություններին համապատասխան՝ ՌԴ կառավարությունը դեռևս անցյալ տարվա սկզբին հրատարակել էր «Մոսկվայի համալսարանի 250-ամյակի տոնակատարության մասին» հանձնարարականը և հաստատել էր հոբելյանական մրջոցառումների ու հանդիսությունների ծրագիր: Ըստ այդ ծրագրի՝ «ՄՊՀ-250» նշանաբանով աշխարհի խոշոր քաղաքներում

\* «Կրթությունը և գիտությունը Արցախում» հանդես, 2005, թիվ 3, էջ 174-179:

կազմակերպվեցին միջազգային ցուցահանդեսներ, անցկացվեցին գիտաժողովներ, «ՄՊՀ դասական դասագրքեր» մատենաշարով լույս են տեսել 250 հիմնարար դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, տեղի է ունեցել ՄՊՀ շրջանավարտների համագումար: Հոբելյանական միջոցառումների շարքում կարևորվում է միջազգային գիտական կոնֆերանսը, որը կայացավ հունվարի 24-ին ՄՊՀ մշակույթի պալատում, իսկ 25-ին Կրեմլի համագումարների պալատում տեղի ունեցած հանդիսավոր նիստով ավարտվեցին միջազգային այդ խոշոր իրադարձության հոբելյանական արարողությունները:

Մոսկվայի համալսարանն այսօր ունի համաշխարհային համբավ: Չնայած հիմնադրվել է 1755 թ., սակայն նրա ստեղծման գաղափարը եղել էր դրանից էլ վաղ: Դեռևս Բորիս Գողունովը, ռուս լավագույն երիտասարդներին ուղարկելով Եվրոպայում բարձրագույն կրթություն ստանալու, մտածում էր համալսարան ունենալու մասին: Եվ նա էլ առաջինը Դումայում հարց է բարձրացնում Մոսկվայում համալսարան հիմնադրելու վերաբերյալ: Հետագայում այդ գաղափարը պաշտպանում էին Ռոմանովների դինաստիայի թագավորները: Այդ գաղափարը իշխել է նաև այն օրերին, երբ Պետրոս Առաջինի նախաձեռնությամբ 1724 թ. Պետերբուրգում կազմավորվում է կայսերական գիտությունների ակադեմիան: Պետրոս Մեծը, Եվրոպայում շրջագայելու ընթացքում գրուցելով մեծանուն փիլիսոփաների հետ, համոզվում է, որ երկիրը զարգացնելու ու հզորացնելու համար անհրաժեշտ է հիմնել համալսարան և առաջին հերթին՝ Մոսկվայում, ապա՝ նաև Ռուսաստանի մյուս քաղաքներում: Սակայն նա չկարողացավ իրականացնել իր երազանքը: Իսկ նրա հիմնադրած ակադեմիային կից Ռուսաստանում գիտական կադրեր պատրաստելու համար ստեղծված համալսարանն ու գիմնազիան իրենց նպատակին չէին ծառայում: Ուստի Միխայիլ Վասիլևիչ Լոմոնոսովը (1711-1765) բարձրացնում է Ռուսաստանի կենտրոնում՝ Մոսկվայում, համալսարան ունենալու հարցը: Նա իր գործունեության ասպարեզում առաջնային տեղ էր տալիս գիտության զարգացմանը, խորամուխ լինում նրա մեջ, յուրացնում նրա նվաճումները, որոնց շնորհիվ շուտով աչքի է ընկնում ու դուրս գալիս համաշխարհային գիտական մտքի առաջավոր բնագծերը, աշխարհին ցուցադրում իր ժամանակի ռուսական գիտության ողջ հզորությունը, գեղեցկությունն ու կենսունակությունը:

Մ. Վ. Լոմոնոսովի մտահոգությունն էր, որ Պետրոս Առաջինի վերափոխություններից հետո Ռուսաստանը կարողանա զգալիորեն կրճատել աշխարհի առաջավոր տերություններից ետ մնալու ժամկետը և մտնել նրանց շարքը: Այդ խնդիրը լուծելու համար նա մեծ նշանակություն էր տալիս Ռուսաստանում բարձրագույն կրթության համակարգի ձևավորմանը: Այդ առթիվ նա նամակ է գրում պետական նշանավոր գործիչ Ի. Ի. Շուվալովին, որում շարադրում է համալսարանի ստեղծման մասին իր առաջարկությունները և տալիս է նրա նախագիծը: Շուվալովի կողմից ընդունվում են Լոմոնոսովի դրույթները, և նա ընթացք է տալիս այդ նամակին: Կայսրուհի Ելիզավետա Պետրովնան, ծանոթանալով նամակում ներկայացված նախագծին, հավանություն է տալիս և 1755 թ. հունվարի 25-ին (հին տոմարով՝ հունվարի 12-ին)՝ ռուս ուղղափառ եկեղեցու տոնացույցով սուրբ Տատյանայի օրը, հաստատում է այն: Նույն օրը նա հրաման է արձակում «Մոսկվայում համալսարան և երկու գիմնագիա բացելու մասին», որի գաղափարը փաստորեն տվել էր ռուս խոշորագույն գիտնական, ականավոր էնցիկլոպեդիստ, ռուս առաջին ակադեմիկոս Մ. Վ. Լոմոնոսովը, ում անունն էլ կրում է այդ համալսարանը 1940 թ. ի վեր: Այդպիսով Պետրոս Առաջինի երազանքը իրականություն է դառնում նրա սիրելի դստեր՝ Ելիզավետա կայսրուհու կողմից Լոմոնոսովի նախագծով:

Ժամանակի պետական գործիչ, առաջադեմ մտածող Իվան Իվանովիչ Շուվալովը (1727-1797), որը կայսրուհի Ելիզավետա Պետրովնայի երկրպագուն էր, խթանում էր ռուսական գիտության ու մշակույթի զարգացումը, օգնում Լոմոնոսովին իրականացնելու իր նախաձեռնությունները: Ի դեպ, նա մինչև իր կյանքի վերջը եղել է Մոսկվայի համալսարանի խնամակալ հոգաբարձու վերահսկիչը: Շուվալովի հետ Լոմոնոսովը մշակել էր նաև համալսարանի ընդհանուր կառուցվածքը և տվել նրա գործունեության ուղղություններն ու սկզբունքները:

Լոմոնոսովը համալսարանի հիմնադրման վայր էր ընտրել Մոսկվան, որովհետև այնտեղ կենտրոնացված էր մեծ թվով բնակչություն, և համարվում էր ռուսական կայսրության սիրտը: Նա մտածում էր, որ հիմնավորց Կրեմլի սուրբ հովանու ներքո գիտությունն ու մշակույթը կծաղկեն և իրենց արմատները կնետեն ռուսական կյանքի խորքերը: Այդ ժամանակ Մոսկվայում գործում էր Սլավոնա-հունալատինական ակադեմի-

ան, որը փոխարինել էր դեռևս 1682 թ. Սիլվեստր Մեդվեդևի կողմից բացված դպրոցին: Այդ ակադեմիայի սաներն ու լավագույն շրջանավարտներն էլ դառնում են նորաստեղծ համալսարանի առաջին ուսանողներն ու դասախոսները: Չնոռանանք նշել, որ ժամանակին այդ ակադեմիան էր ավարտել նաև Մ. Վ. Լոմոնոսովը: Հիշյալ ուսումնական հաստատությունում ուսուցումը փաստորեն կազմակերպվում էր ժամանակի համալսարանական կանոններով:

Նորաստեղծ համալսարանի հանդիսավոր բացման և դասերն սկսելու արարողությունը տեղի է ունեցել Ելիզավետա Պետրովնայի թագադրության տարելիցի տոնակատարության օրը՝ 1755 թ. ապրիլի 26-ին (նոր տոմարով՝ մայիսի 7-ին): Այդ օրվանից սկսած՝ ամեն տարվա մայիսին Մոսկվայի համալսարանում տեղի են ունենում տոնական հանդիսություններ, անցկացվում են «Լոմոնոսովյան ընթերցումներ» ու գիտական նստաշրջաններ, կազմակերպվում ուսանողների գիտաստեղծագործական աշխատանքների ստուգատեսներ ու մրցույթներ:

Մոսկվայի համալսարանը, ըստ Մ. Վ. Լոմոնոսովի նախագծի, սկզբնական շրջանում ունեցել է երեք ֆակուլտետ՝ Փիլիսոփայության, իրավաբանական և բժշկական: Բոլոր ուսանողները նախ սովորում էին այդ համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում, ապա՝ մասնագիտանում ինչպես փիլիսոփայության, այնպես էլ մյուս երկու ֆակուլտետներից որևէ մեկում՝ ըստ իրենց նախասիրությունների ու ընտրության: Դասախոսությունները կարդացվում էին ոչ միայն այն ժամանակվա համար ընդունված գիտության ընդհանուր լեզվով՝ լատիներենով, այլ նաև ռուսաց լեզվով: Իսկ 1767 թ. դասավանդումն այնտեղ կազմակերպվում է միայն ռուսերենով: Այդպիսով իրականություն է դառնում Մոսկվայի համալսարանի առաջին պրոֆեսոր Ն. Ն. Պոպովսկու խոսքը, որ նա ասել էր համալսարանի հիմնադրման առաջին իսկ տարում. «Չի կարող լինել այնպիսի մի միտք, որը հնարավոր չլինի արտահայտել ռուսերենով»:

Համալսարանի հիմնադրումից մեկ տարի անց ստեղծվում է նաև գրադարանը, որն ավելի քան 100 տարի Մոսկվայում գործող միակ հանրային գրադարանն է եղել: Այդ գրադարանից, ուսանողները ու դասախոսներից բացի, կարող էին օգտվել բոլոր ցանկացողները: Այժմ այդ գրադարանն ունի 9 միլիոն կտոր ուսումնական և գիտական գրականու-

թյուն, այդ թվում՝ 200 հազարից ավելի հնատիպ ու հազվագյուտ գրքեր, հունարեն, լատիներեն, գերմաներեն, ֆրանսերեն, արևելյան ու սլավոնական, ինչպես նաև ռուսական միջնադարյան ձեռագրեր, արխիվային արժեքավոր փաստաթղթեր ու ձայնագրություններ: ՄՊՀ գիտական գրադարանն այսօր ունի 60 ընթերցասրահներ, որոնք ունեն 3300 տեղ և տարեկան սպասարկում են 1.8 միլիոն հաճախողների: Իսկ գրադարանում գրանցված ընդհանուր ընթերցողների թիվը կազմում է 60 հազար:

Հետագայում՝ 1804 թ., ընդունվում է Մոսկվայի համալսարանի կանոնադրությունը, որը հնարավորություն է տալիս ինքնուրույն գործունեության: Արդեն ռեկտորն ու ֆակուլտետների ղեկավաները ոչ թե նշանակվում, այլ ընտրվում էին նշանավոր պրոֆեսորներից: XIX դարում արդեն համալսարանը ղեկավարում էր գիտական խորհուրդը, որն էլ ընտրում էր ռեկտորին: Առաջին ընտրված ռեկտորն այստեղ եղել է պատմության և բանագիտության ճանաչված պրոֆեսոր Խ. Ա. Չեբոտարյովը:

Գրահրատարակչական գործը ևս Մոսկվայի համալսարանում շուտով դրվում է ամուր հիմքերի վրա: Դեռևս 1756 թ. այստեղ բացվում է գրատուն, ստեղծվում են հրատարակչական մարմին ու տպարան, և սկսում են լույս տեսնել համալսարանական առաջին գրքերն ու պարբերականները, որոնք նպաստում են ռուսական գրատպության զարգացմանը: Անցած 250 տարիների ընթացքում ՄՊՀ հրատարակչությունը, որը պաշտոնապես ամրագրվել է 1927 թ., լույս է ընծայել տասնյակ հազարավոր անուն ուսումնական և գիտական գրքեր: Ներկայումս այդ հրատարակչությունը տարեկան տպագրում է 400 անուն արժեքավոր դասագրքեր, տեղեկատուներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ և այլն: Հրատարակչության հիմնական հեղինակները համալսարանի առաջատար դասախոսներն ու գիտնականներն են: Նրանց ուժերով ստեղծված գրքերն ընդգրկում են հայրենական ու արտասահմանյան գիտական մտքի նվաճումներն ու լավագույն արժեքները գիտությունների գրեթե բոլոր բնագավառներից: Բացի այդ՝ այստեղ լույս են տեսնում «Вестник Московского университета» («Բանքեր Մոսկվայի համալսարանի») գիտական հանդեսի բնագիտական, հումանիտար ու հասարակագիտական 17 սերիաներ, տարաբնույթ ամսագրեր ու տարեգրքեր: Այստեղ 1756-1917 թթ. հրատարակվել է «Московские ведомости» («Մոսկովյան տեղեկագիր») պարբերականը, իսկ 1925 թ. առ այսօր տպագրվում է

«Московский университет» («Մոսկվայի համալսարան») թերթը: Համալսարանի հրատարակած գրքերի ընդհանուր տպաքանակը տարեկան կազմում է միջին հաշվով 3 միլիոն օրինակ: Հրատարակչությանը սպասարկում են երկու տպարան և այլ տպագրական օդակներ, որոնք գործում են համալսարանում:

Իր գոյության ընթացքում Մոսկվայի համալսարանը հիմք է հանդիսացել ռուսական 60-ից ավելի բուհերի ու գիտամշակութային հաստատությունների ստեղծման համար, որոնցից առաջիններն են եղել Կազանի համալսարանը (1804 թ.), Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան, Մոսկվայի փոքր թատրոնը և այլն: Հետագայում՝ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին, նրա նախածեռնությամբ ու օգնությամբ են ստեղծվել Մոսկվայի պոլիտեխնիկական, պատմական, կենդանաբանական, մարդաբանական, նրբագեղ արվեստների (ներկայիս Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի) թանգարանները, բուսաբանական և կենդանաբանական այգիները և այլ հաստատություններ: Իսկ խորհրդային շրջանում նրա ֆակուլտետների հիմքի վրա ձևավորվել են Մոսկվայի Ի. Մ. Սեչենովի անվան բժշկական առաջին ինստիտուտը (այժմ՝ ակադեմիա), Մոսկվայի պետական երկրաբանահետախուզական, ֆիզիկատեխնիկական և միջազգային հարաբերությունների ինստիտուտները, Ուլյանովսկի համալսարանը և այլն:

Նախախորհրդային շրջանում Մոսկվայի համալսարանում գիտամանկավարժական աշխատանք են կատարել ռուսական գիտության շատ ականավոր ներկայացուցիչներ, որոնց անունն ու գործը հայտնի են ողջ աշխարհում: XVII դարում այստեղ գիտամանկավարժական աշխատանք են կատարել փիլիսոփաներ Ն. Ն. Պուպովսկին և Գ. Ս. Անիչկովը, մաթեմատիկոսներ և մեխանիկոսներ Վ. Կ. Արշենևսկին և Մ. Ի. Պանկևիչը, ֆիզիկոս Պ. Ի. Ստրախովը, բժշկագետ Ս. Գ. Ջիբելինը, կենսաբան Պ. Գ. Վենիամինովը, բանասերներ Ա. Ա. Բարսովը, Ե. Ի. Կոստրովը, Ե. Խալֆինը, իրավագետներ Ս. Ե. Դեսնիցկին և Ի. Ա. Տրետյակովը, ճարտարապետներ Վ. Ի. Բաժենովը և Ի. Ե. Ստարովը, հրատարակիչներ և գրողներ Մ. Մ. Խերասկովը և Ն. Ի. Նովիկովը: Իսկ XIX դարի վերջերին և XX դարի սկզբին Մոսկվայի համալսարանում արդեն աշխատում էին ռուս մեծ մտածողներ Մերգել և Վլադիմիր Սոլովյովները, Մերգել և Նիկոլայ Տրուբեցկիները, Ս. Ն. Բուլգակովը, Պ. Ա. Ֆլորենսկին,

Տ. Ն. Գրանովսկին, Պ. Ն. Լեբեդև, Վ. Ի. Վերնադսկին, Ի. Մ. Սեչենովը, Ն. Վ. Ֆիլատովը, Ն. Դ. Բրաշմանը, Ն. Ե. Ժուկովսկին, Ն. Վ. Բուգակը, Ս. Ա. Չապլիգինը, Ա. Գ. Ստոլետովը, Ֆ. Ա. Բրեդիխինը, Ն. Ա. Ումովը, Դ. Ա. Անուշինը, Ն. Դ. Չելինսկին, Ա. Ն. Սևերցովը, Կ. Ա. Տիմիրյազևը և ուրիշներ, որոնց մի մասն այստեղ աշխատում էր նաև հետհոկտեմբերյան շրջանում՝ մինչև 1930-ական թվականները:

Իր գոյության առաջին մեկուկես հարյուրամյակում այդ համալսարանը երկրին տվել է 40 հազարից ավելի շրջանավարտներ, որոնց թվում՝ ակադեմիկոս գրողներ ու գիտնականներ Վ. Գ. Բելինսկին, Ա. Ն. Ռադիշչևը, Դ. Ի. Ֆոնվիզինը, Վ. Ա. Ժուկովսկին, Ա. Ի. Գերցենը, Ն. Պ. Օգարյովը, Ա. Ս. Գրիբոյեդովը, Մ. Յու. Լերմոնտովը, Ա. Ն. Օստրովսկին, Ա. Ի. Գոնչարովը, Ա. Ա. Ֆետը, Յա. Պ. Պոլոնսկին, Ի. Ս. Տուրգենևը, Ֆ. Ի. Տյուտչևը, Ն. Վ. Գոգոլը, Ա. Պ. Չեխովը, Կ. Դ. Ուշինսկին, Վ. Յա. Բրյուսովը, Անդրեյ Բելին, Բորիս Պաստերնակը և ուրիշներ, մշակութային գործիչներ Ն. Վ. Ստանկևիչը, Ն. Գ. Ռուբինշտեյնը, Վ. Ի. Նեմիրովիչ-Ղանչենկոն, Ե. Բ. Վախթանգովը, Լ. Գ. Սոբինովը, Վ. Ի. Պուրովինը, գեղանկարիչ Վ. Վ. Կադինսկին և շատ շատերը:

Մոսկվայի համալսարանը հատկապես մեծ զարգացում է ապրել խորհրդային կարգերի օրոք, երբ այն առնվել է պետական հովանավորության ներքո: Այդ շրջանում բացվում են նոր ֆակուլտետներ ու մասնագիտություններ, բայց և միաժամանակ 1930 թ. համալսարանն ապրում է ծանր փորձաշրջան. մի շարք ֆակուլտետներ անջատվում և ձևավորվում են որպես ինքնուրույն ինստիտուտներ, շարք է մտնում ուսուցման և քննությունների հանձնման բրիգադային կամ խմբակային ձևը, որը բացասաբար է անդրադառնում համալսարանի զարգացման վրա: Համալսարանը ծանր կյանքով է ապրում նաև անհատի պաշտամունքի տարիներին՝ 1930-1950-ական թվականներին:

Սակայն Մոսկվայի համալսարանը հատկապես մեծ կորուստներ է ունեցել պատերազմների շրջանում: Ինչպես 1812 թ., այնպես էլ 1941-1945 թթ. Հայրենական պատերազմների ընթացքում նրա սաներն ու դասախոսները հերոսաբար մարտնչել են թշնամու դեմ: Առաջին Հայրենականի օրերին այրվել ու փլատակների են վերածվել նրա մասնաշենքերը, ոչնչացվել են գրադարանն ու արխիվը, իսկ դրանից շուրջ 130 տարի անց կրկին լուրջ վտանգ է կախվել նրա գլխին: Մեծ հայրենականի

առաջին իսկ օրերին ուսանողներից և դասախոսներից կազմվել են ութ աշխարհագրային դիվիզիաներ, որոնք Մոսկվայի պաշտպանների շարքերում կենաց ու մահու կռիվ էին մղում գերմանական զավթիչների դեմ: Համալսարանը 1941 թ. հոկտեմբերին արդեն էվակուացվել և գործում էր սկզբում Աշխաբադում, իսկ 1942 թվականից՝ Սվերդլովսկում: Համալսարանը կրկին Մոսկվա է «վերադարձել» 1943 թ. գարնանը, չնայած դասերն այնտեղ վերսկսվել էին դեռևս 1942 թ. փետրվարից:

Պատերազմի տարիներին ՄՊՀ-ն տվել է շուրջ 3000 մասնագետներ, իսկ դասախոսներն իրենց գիտական նվաճումներով մեծ ներդրում են կատարել երկրի պաշտպանունակության բարձրացման և քայքայված տնտեսության վերականգնման գործում: Պատերազմում մարտնչել են 5000-ից ավելի համալսարանականներ, որոնցից 7-ը արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման: Դասախոսներից և ուսանողներից 2000-ը զոհվել են անհավասար մարտերում, որոնց հիշատակը հավերժացնող հուշատախտակ և հուշակոթող են կանգնեցվել ՄՊՀ հին և նոր շենքերի առջև:

Հետպատերազմյան տարիներին Մոսկվայի պետհամալսարանում գիտամանկավարժական աշխատանք են կատարել Մստիսլավ Կելդիշը, Անդրեյ Կոլմոգորովը, Իվան Պետրովսկին, Նիկոլայ Բոգոլյուբովը, Նիկոլայ Վավիլովը, Պյոտր Կապիցան, Իգոր Կուրչատովը, Լև Լանդաուն, Իգոր Տամմը, Ալեքսանդր Նեամեյանովը, Նիկոլայ Մեմյոնովը և շատ այլ խոշոր գիտնականներ, որոնց անունն ու համբավը վաղուց դուրս են եկել Ռուսաստանի սահմաններից: Շատերի համար մեծ պատիվ է եղել լինել ՄՊՀ պատվավոր դոկտոր: Նրանց թվում են եղել Յոհան Գյոթեն ու Ֆրիդրիխ Շիլլերը, Լուի Պաստյորն ու Նիլս Բորը, Նիկոլայ Պիրոգովն ու Դմիտրի Մենդելեևը, Ռոմեն Ռոլանն ու Տուր Հեյերդալը, Ջավահարլար Ներուն ու Ինդիրա Գանդին:

Ներկայումս ՄՊՀ-ն համարվում է հայրենի լուսավորության, գիտության ու մշակույթի առաջատար կենտրոնը Ռուսաստանում: Այնտեղ ուսուցումը եռաստիճան է՝ բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա, որոնցում ուսումնառության տևողությունը համապատասխանաբար չորս, երկու և երեք տարի է, իսկ ուուցման ձևերը՝ ցերեկային, երեկոյան և հեռակա: Կան նաև մախապատրաստական բաժիններ, որոնցում ուսման տևողությունն ավելի քիչ է, և դրանցում ընդգրկված են



10 հազարից ավելի դպրոցականներ, իսկ ինտերնատում սովորում են 300-ից ավելի տաղանդավոր երեխաներ՝ եկած Ռուսաստանի տարբեր ծայրերից: Այսօր Մոսկվայի համալսարանը մասնագետներ է պատրաստում 29 ուղղություններով՝ 57 մասնագիտությունների գծով, իսկ ասպիրանտների և դոկտորանտների ուսուցումը կազմակերպվում է 168 մասնագիտությունների գծով: Խորհրդային շրջանում այդ համալսարանը կադրեր է պատրաստել ոչ միայն Ռուսաստանի, այլև ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների, ինչպես և արտասահմանյան բազմաթիվ երկրների համար: Այդ տարիներին և հետխորհրդային շրջանում Մոսկվայի պետհամալսարանը տվել է շուրջ 200 հազար բարձրորակ մասնագետներ և պատրաստել է 35 հազարից ավելի գիտության թեկնածուներ:

Այդ տարիներին են կառուցվել նաև նրա հիմնական մասնաշենքերը ոչ միայն քաղաքի կենտրոնում, այլև Լենինյան (Վորոբյովյան) բլուրներում, որոնք զբաղեցնում են 205.2 հեկտար տարածք: Այժմ համալսարանն ունի 630-ից ավելի հիմնական և օժանդակ մասնաշենքեր ու կառույցներ, մշակույթի պալատ, 8 հանրակացարան (12 հազար տեղով)՝ կառուցված թե՛ Մոսկվայի կենտրոնում և թե՛ հիշյալ բլուրների փեշերին, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 1 մլն 20.2 հազար քառ. մետր: Գլխավոր շենքը, որի առջև վեր է խոյանում Լոմոնոսովի հոյակերտ հուշարձանը, ունի 32 հարկ, բարձրությունը 240 մետր է: Իսկ նրա շարունակությունը հանդիսացող սայրը (ծայրածող) 57 մետր է, որի վրա ամրացված և հասկերով պսակված աստղն ունի 9 մետր տրամագիծ: Ռ-Ռ կառավարության որոշմամբ ՄՊՀ-ի համար Վորոբյովյան բլուրներում արդեն կառուցվել է հիմնական գրադարանի նոր մասնաշենք, որը հորեյլանի օրերին իր դռները բացեց ընթերցողների առջև: Նրա գլխավոր մուտքի մոտ տեղադրվելու է համալսարանի հիմնադիրներից մեկի՝ Ի. Ի. Շուվալովի բրոնզաձույլ հուշարձանը: Վերանորոգվել է գլխավոր մասնաշենքը, ինչպես նաև վերակառուցվել ու թարմացվել են եղած մասնաշենքերից մի քանիսը, ստեղծվելու են նաև նոր համալիրներ:

Հետխորհրդային տարիներին ավելի են ընդլայնվել Մոսկվայի համալսարանի հնարավորությունները: Ներկայումս այն ունի 29 ֆակուլտետ, որոնց մի զգալի մասը ստեղծվել է վերջին տասը տարիների ընթացքում, գործում են 354 ամբիոն, 15 գիտահետազոտական ինստիտուտ, 450 լաբորատորիա, 4 թանգարան, 2 աստղադիտարան, 2 նավ և

այլ հաստատություններ Ռուսաստանի տարբեր մասերում՝ Սև և Սպիտակ ծովերի ափերին, Դրիմում և այլուր: Ուսանողների թիվն այսօր հասնում է 40 հազարի, որից 5 հազարը արտասահմանցիներ են՝ ժամանած աշխարհի 80 երկրներից: Նրանց ուսումնառության գործը կազմակերպում են 10000-ից ավելի դասախոսներ, որոնց թվում՝ 300 ակադեմիկոսներ ու թղթակից անդամներ, 2500-ից ավելի դոկտոր-պրոֆեսորներ, շուրջ 6000 թեկնածու-դոցենտներ ու գիտաշխատողներ: Ռուսաստանի Նոբելյան մրցանակի 18 դափնեկիրներից 11-ը ՄՊՀ սաներ ու պրոֆեսորներ են: Այստեղ աշխատում են նաև Լենինյան մրցանակի 60, ԽՍՀՄ պետական մրցանակի 120 դափնեկիրներ: Միայն վերջին մեկուկես տասնամյակում 40-ից ավելի աշխատանքների հեղինակներ արժանացել են ՌԴ պետական մրցանակի դափնեկրի կոչման: Ամեն տարի համալսարանը կյանքի ուղեգիր է տալիս 4000-ից ավելի բարձրորակ մասնագետների: ՄՊՀ ասպիրանտուրայում 185 մասնագիտությունների գծով սովորում է շուրջ 4000 հոգի: Ամեն տարի ՄՊՀ ասպիրանտուրան ավարտում և թեկնածուական թեզեր են պաշտպանում 1500-ից ավելի ասպիրանտներ, իսկ դոկտորանտուրայում պաշտպանվում են 250 դոկտորական ատենախոսություններ:

\* \* \*

Անուրանալի է Մոսկվայի համալսարանի դերը հայ ժողովրդի կրթանշակութային կյանքում: Հայ երիտասարդներն այդ համալսարանում կրթություն են ստացել նրա հիմնադրման առաջին իսկ տասնամյակներից սկսած: Դեռևս 1803 թ. Վրաստանի կառավարիչ, իշխան Պ. Դ. Յիցիանովը Ալեքսանդր I թագավորին գրած իր նամակում հայտնում է, որ 1802 թ. 12 հայ և վրացի երիտասարդներ Թիֆլիսից մեկնել են Մոսկվա՝ համալսարանի բժշկական ֆակուլտետ ընդունվելու նպատակով, և նրանք սովորելու են պետական կրթաթոշակով: Հայագգի Մողոմոն Տեր-Ղուկասյանը, որը 1819 թ. ավարտել էր հիշյալ համալսարանի բժշկական ֆակուլտետը, 1824 թ. պաշտպանելով թեզ, ստացել է դոկտորի գիտական աստիճան՝ դառնալով նոր շրջանի հայ առաջին անվանի բժշկագետը:

Հայ երիտասարդության հոսքը դեպի Մոսկվայի համալսարան նկատելիորեն մեծացել է XIX դարի առաջին տասնամյակներում, երբ

1815 թ. Մոսկվայում հիմնադրվում է Լազարյան ճեմարանը, իսկ այնուհետև, երբ Արևելյան Հայաստանը 1828 թ. միացվում է Ռուսաստանին: Սկսած այդ շրջանից՝ Կովկասից և Ռուսաստանի հայաշատ վայրերից մեծ թվով հայ երիտասարդներ են մեկնում այնտեղ՝ սովորելու: Դեռևս 1854 թ. այդ համալսարանի ուսանողներ Գ. Քանանյանը, Մ. Թիմուրյանը և Ռ. Պատկանյանը միասին ստեղծում են «Գամառ-Քաթիպա» գրական ընկերությունը: XIX դարի կեսերին Մոսկվայի համալսարանում սովորող հայ ուսանողների ժողովրդավարական հայացքների ձևավորման գործում մեծ ազդեցություն են ունեցել «Հյուսիսափայլ» և «Современник» հանդեսները: 1861-62 ուստարում այստեղ սովորում էին 46 հայեր, որոնցից Գ. Տեր-Հովհաննիսյանը, Ա. Սուլբանշահը, Հ. Հարությունյանը, Ս. Ստեփանյանը (Խորեն Ստեփանեն), Հ. Բերբերյանը, Մ. Սինասարյանը և ուրիշներ հետևում էին Մ. Նալբանդյանի հայացքներին, գործում կերպով աշխատակցում «Հյուսիսափայլ»-ին, նրա համար թարգմանություններ ու փոխադրություններ կատարում «Современник» ամսագրից: 1880 թ. այնտեղ ստեղծվում է հայ ուսանողության գրական ընկերությունը, իսկ 1881 թվականից սկսում է գործել Մոսկվայի համալսարանի և Պետրովսկյան գյուղատնտեսական ակադեմիայի հայ ուսանողների կազմած «Հայրենասերների միության» գաղտնի խմբակը:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների թիվը զգալիորեն աճում է: 1905 թ. այնտեղ արդեն սովորում էին 194 հայեր, որոնցից 81-ը՝ Իրավաբանական, իսկ 75-ը՝ Բժշկական ֆակուլտետներում:

Իր հիմնադրումից ի վեր՝ մինչև 1917 թ. հեղափոխությունը, Մոսկվայի համալսարանն ավարտել են 3000-ից ավելի հայ երիտասարդներ, որոնց թվում առաջիններից մեկը՝ մեծանուն գրող ու հրապարակախոս, հեղափոխական ժողովրդավար Մ. Նալբանդյանը: Նրանից հետո այդ համալսարանն ավարտել են հասարակական-քաղաքական ու պետական նշանավոր գործիչներ Ս. Սպանդարյանը, Ալ. Մյանսիկյանը, Գ. Դորդանովը և շատ ուրիշներ: Այդ համալսարանն են ավարտել նաև հայ անվանի գրողներ ու մշակութային գործիչներ Մ. Բարխուդարյանը, Ս. Տիգրանյանը, Ն. Փուլինյանը, Մ. Պատկանյանը, Գ. Ախվերդյանը, Պ. Քալանթարյանը, Հովհ. Հովհաննիսյանը, Վ. Տերյանը և շատերը:

Մոսկվայի համալսարանում անցյալում դասախոսական աշխատանք են կատարել Մ. Էմինը, Գ. Խալաթյանը, Գ. Շանշյանը, Հ. Կուսիկյանը, Յու. Ղամբարյանը (Երևանի համալսարանի առաջին ռեկտորը) և ուրիշներ: Խորհրդային շրջանում այս անունների կողքին ավելանում են նաև հայազգի նշանավոր ռուսագետների՝ ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամներ Ստ. Գ. Բարխուդարովի, Ռ. Հ. Ավանեսովի, Ռ. Ա. Բուդաղովի անունները, որոնք մեծ ներդրում ունեն ռուս լեզվաբանության զարգացման բնագավառում:

Խորհրդային տարիներին Մոսկվայի համալսարանը հազարավոր հայ երիտասարդների է կյանքի ուղեգիր տվել, որոնք, ուսումնառությունից հետո վերադառնալով մայր հայրենիք, նվիրվել են գիտության ու մշակույթի զարգացման գործին: Շատերն էլ մնացել են այնտեղ, դարձել անվանի գիտնականներ ու դասախոսներ: Այսօր այդ համալսարանում ուսումնագիտական ղեկավար պաշտոններ են զբաղեցնում և դասախոսական աշխատանք կատարում հայազգի 32 խոշոր գիտնականներ: Ժամանակի ընթացքում Երևանի համալսարանից և Հայաստանի այլ բուհերից հարյուրավոր երիտասարդներ են մեկնել Մոսկվայի համալսարան՝ ընդունվելու նպատակային ասպիրանտուրա կամ ուսումը շարունակելու և խորանալու այս կամ այն գիտաճյուղի մեջ: Ներկայումս էլ շարունակվում է այդ ավանդույթը:

Երևանի համալսարանը Մոսկվայի համալսարանի հետ գիտամշակութային կապեր է հաստատել իր հիմնադրման առաջին իսկ տարիներից, և անցած ութուկես տասնամյակների ընթացքում համատեղ գիտահետազոտական լուրջ աշխատանքներ են կատարվել: Այդ կապերը այսօր էլ շարունակվում են, թարմացվում ու ընդլայնվում: 1995 թ. Երևանի և Մոսկվայի համալսարանների միջև կնքվել են մոր պայմանագրեր, որոնք քննարկվել են երկու համալսարանների գիտխորհուրդների նիստերում և վավերացվել ռեկտորներ, ակադեմիկոսներ Ռ. Մարտիրոսյանի և Վ. Ա. Սադովնիչիի կողմից: Ըստ այդ փաստաթղթերի՝ երկուստեք տեղի են ունենում ուսանողների, դասախոսների ու գիտաշխատողների փոխանակություններ, կատարվում համատեղ հետազոտական աշխատանքներ, կազմակերպվում գիտամշակութային միջոցառումներ: Դրանցից մեկն էլ վերջերս ԵՊՀ-ում Մոսկվայի համալսարանի 250-ամյակին նվիրված, «Մոսկվայի համալսարանի օրեր» նշանաբանով անցկացված միջոցա-

առումների շարքն էր, որն սկսվեց գիտխորհրդի ընդլայնված հանդիսավոր նիստով: Այդ նիստին մասնակցում էր նաև Մոսկվայից ժամանած ակա-  
նավոր գիտնական, ակադ. Յու. Դ. Տրետյակովը: Երևանում գտնվելու  
օրերին նա ջերմ հանդիպումներ ունեցավ ԵՊՀ-ում աշխատող 40-ից  
ավելի ՄՊՀ շրջանավարտ գիտնականների հետ, եղավ տարբեր ֆակուլ-  
տետներում և հարուստ տպավորություններով մեկնեց Մոսկվա:

Մոսկվայի համալսարանի հոբելյանին էր նվիրված նաև «Չեխո-  
վյան ընթերցումներ» գիտաժողովը, որը կազմակերպել էր Ռուս բանա-  
սիրության ֆակուլտետը, և որը տևեց մի քանի օր: Ուսանողական այլ  
տոնախմբություններ ու միջոցառումներ ևս կազմակերպվեցին դեկտեմ-  
բեր և հունվար ամիսներին: Իսկ հունվարի 23-ին ռեկտոր, ակադ.  
Ռ. Մարտիրոսյանի գլխավորությամբ Մոսկվա մեկնեց ԵՊՀ պատվիրա-  
կությունը (միջազգային կապերի գծով պրոռեկտոր, պրոֆ. Ա. Ավետի-  
սյան, Մեխանիկայի ֆակուլտետի դեկան, ակադեմիկոս Վ. Սարգսյան,  
արհևոմիտեի նախագահ Վ. Գալստյան)՝ մասնակցելու հոբելյանական  
հանդիսություններին: Հոբելյանական նիստում Ռ. Մարտիրոսյանը պատ-  
վավոր հյուրերի շարքում հանդես եկել և ՄՊՀ ռեկտոր, ակադ. Վ. Ա. Սա-  
րովնիչիին է հանձնել ԵՊՀ գիտխորհրդի շնորհավորական ուղերձը:

\*\*\*

Հոբելյանի եզրափակիչ փուլում, որին ներկա էին ԱՊՀ և Բալթյան  
հանրապետությունների կառավարական պատվիրակություններ (այդ  
թվում նաև՝ Հայաստանից), Ռուսաստանի և այլ երկրների բուհերի շուրջ  
500 ռեկտորներ և այլ բարձրաստիճան հյուրեր, տեղի ունեցան բազմա-  
թիվ հանդիսություններ ու տոնախմբություններ: Իսկ Կարմիր հրապա-  
րակում գտնվող կենտրոնական պատմական թանգարանում, որը կա-  
ռուցվել է 1812 թ. պատերազմի ժամանակ հիմնովին այրված համալսա-  
րանի հիմնադիր շենքի՝ այսպես կոչված Դեղատան տեղում, կազմա-  
կերպվել է «Մոսկվայի համալսարանի հարստությունները» թեմատիկ  
ցուցահանդեսը, իսկ գրադարանի նորակառույց շենքում բացվել է ՄՊՀ  
պատմության թանգարանը: Հոբելյանական արարողություններն անցել  
են պետական բարձր մակարդակով և ՌԴ նախագահի անմիջական ա-  
ջակցությամբ:

Մոսկվայի պետական համալսարանը, որին 1992 թ. ՌԳ նախագահի հրամանագրով տրվել է ինքնավար բուհի կարգավիճակ, ներկայումս իրավամբ ճանաչվում է Ռուսաստանի առաջին խոշորագույն դասական համալսարանը, որը նաև ռուսաստանյան ժողովուրդների՝ հատուկ նշանակության մշակութային ժառանգություն ու արժեք է: Նա այժմ շարունակում է պահպանել և զարգացնել բարձրագույն կրթության ազգային ավանդույթները, իր ակտիվ մասնակցությունն է բերում ԱՊՀ և Բալթյան երկրների, ինչպես նաև Ռուսաստանի առաջատար դասական համալսարանները միավորող Եվրասիական համալսարանների ասոցիացիայի գործունեությանը, որի լիիրավ անդամն է նաև Երևանի պետական համալսարանը:

Ավարտելով մեր խոսքը՝ նշենք, որ երկար է Մոսկվայի համալսարանի անցած ուղին, հարուստ՝ նրա պատմությունը: Ճիշտ է, նա այսօր դարձել է 250 տարեկան, բայց հավերժ երիտասարդ է և դեռ իր ծանրակշիռ ներդրումն է ունենալու ռուսական նոր պետականության կերտման ու ամրապնդման, նրա զարգացման ու հզորացման գործում: Եվ նրա հուբեյանի համաժողովրդական նշումը, որը կատարվեց նոր հազարամյակի շեմին, Ռուսաստանի կրթության ու գիտության զարգացման մի նոր փուլ է նշանավորում և դնում է այդ հնագույն կրթօջախի պատմության երրորդ շրջափուլի սկիզբը:



**ՄԱՍ ԵՐՐՈՐԴ**

**ՀԻՇԱՐԺԱՆ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՊՀ ԿԱՄԱՐՆԵՐԻ ՆԵՐՔՈՒ**





## «ԻՄ ԱՐՄԱՏՆԵՐ ՀՈՍ ԵՆ»<sup>49</sup>

Երևանի համալսարանի ուսանողությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը սրտատրոփի ու սիրով էին սպասում աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանի հետ հանդիպմանը: Եվ այն տեղի ունեցավ հոկտեմբերի 23-ին համալսարանի մեծ հանդիսասրահում: Բացի համալսարանականներից՝ այդ բաղձալի հանդիպմանը մասնակցում էին նաև մայրաքաղաքի հասարակայնության հարյուրավոր ներկայացուցիչներ՝ բանվոր-ծառայողներ ու գրողներ, գիտնականներ ու արվեստագետներ, ուսանողներ այլ բուհերից:

Համալսարանի գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր, պրոֆ. Կ. Խաչատուրյանը, դիմելով մեծ գրողին, իր բացման խոսքում ասաց.

«Մեզ՝ այս դահլիճում հավաքվածներին համար այսօր մեծ, իսկական տոնական օր է, Ձեզ՝ հիանալի մարդու և իր արվեստով անկրկնելի գրողի, իր գրքերով բազմաթիվ մարդկանց սրտերը գրաված արվեստագետի հետ հանդիպման օր: Դուք մեր ժամանակի ամերիկյան գրականության ամենապայծառ և հռչակավոր վարպետներից եք: Ձեր անունն ու ստեղծագործությունը հայտնի են ողջ աշխարհին, Ձեր գրքերը կարդում են շատ լեզուներով: Բայց և այնպես, Դուք վաղուց արդեն զգում եք ու գիտեք և այս օրերին նորից կարող եք համոզվել, որ մի առանձին հետաքրքրությամբ, ուշադրությամբ ու ջերմությամբ, ես կասեի՝ հիացմունքով, սիրով ու հպարտությամբ են վերաբերվում Ձեզ հարազատ հայոց հողում»:

Այնուհետև ելույթ ունեցողը խոսեց մեծ արվեստագետի ստեղծագործությունների հումանիզմի ու ժողովրդայնության մասին, նշեց, որ դրանք նպատակաուղղված են ողջ մարդկության երջանկությանն ու խաղաղությանը:

Ելույթից հետո պրոֆ. Կ. Խաչատուրյանը Սարոյանին մվիրեց Երևանի պետական համալսարանի 50-ամյակի հուշամեդալ և նրա կրծքին ամրացրեց համալսարանի հոբելյանական կրծքանշան:

---

<sup>49</sup> «Երևանի համալսարան» լրատու:

Ռուսաց լեզվի և թարգմանության տեսության ամբիոնի վարիչ, պրոֆ. Լ. Մկրտչյանը, դիմելով ներկաներին, ասաց, որ սիրելի գրողը պատրաստ է պատասխանելու ունկնդիրների հարցերին:

Իսկ մինչ առաջին հարցաթերթիկը դահլիճից կհասներ ամբիոն, հախուռն շարժումներով ոտքի կանգնեց Սարոյանը: Ու դահլիճով մեկ հնչեց նրա բամբ ձայնը. «Միրելի՛ երիտասարդ տղաք և աղջիկներ, սիրելի՛ հայ ժողովուրդ, ես երջանիկ եմ մասնակցել ձեր հավաքումին: Աս տեսակ պատեհություն մարդու կյանքի տարիներին մեջ շատ հազվադեպ կըլլա: Ես շնորհակալ եմ և իմ գոհունակությունը կհայտնեմ ձեր ընծայի համար, որը թանկ է ինձի: Մենք իրավունք ունինք հպարտ զգալու, որ հայ ենք: Հայը միշտ զբաղված է կրթության գաղափարով, և մենք պետք է օգտակար ըլլանք մեր գաղափարներով իրարու և օտարի: Գիտնալ հայ պատմություն, հայ երգ, հայ բանաստեղծություն մեծ ուրախություն է: Դուք լավ գիտեք մեր պատմություն, մեր երգ, դա շատ լավ է: Աշխարհում մեկ հայկական համալսարան կա, աշխատեցեք լավ սորվիլ, բարձր պահել այդ համալսարանի անունը: Դուք պարտավոր եք լավ սորվիլ, որովհետև ունիք լավ դասախոսնի, գիտնականնի, որոնք ձեզի շատ օգտակար կըլլան, որոնց փորձը մեծ է, և դուք պիտի անոնցմե օրինակ առնիք»:

Հետո մեծ գրողը պատմեց, որ ինքը երրորդ անգամն է Հայաստանում. առաջին անգամ եղել է 1935 թ., երկրորդ անգամ՝ 1960 թ. և երրորդ անգամ՝ այժմ: Ու ամեն մի այցելության ժամանակ նա զգացել է Խորհրդային Հայաստանի աննախընթաց վերելքը, հայ ժողովրդի տնտեսության, գիտության ու մշակույթի բարգավաճումը:

Այնուհետև անդրադառնալով իրեն ուղղված հարցերից մեկին, թե ի՞նչ ստեղծագործությունների վրա է այժմ աշխատում, Սարոյանը պատասխանեց. «Ուր տարի առաջ զգվեցա կոֆե խմելեն և ջիղարա ծխելեն, որովհետև համ չկա մեջը, ձգեցի: Պիտի փոխելի իմ գրության միջոցներ: Ան ժամանակ երեք օրվա մեջ մի պիես կգրեի: Վերջերս կամաց կգրեմ: Ունիմ կարգ մը բանաստեղծություններ, որոնք ինձի կմնան: Կգրեմ պատմվածքներ, դրամաներ և վեպ: Տարի մը չկա, որ նոր գրություն (նոր գիրք – Վ. Մ.) չեմ ըներ, աղիկ իմ բնությունեն է: Վերջին գրությունս է՝ «Ծերունի և անհանգիստ»:

Այս գրքի մեջ հեղինակը շոշափում է կյանքի և մահվան խնդիրը: Չնայած մարդը ձգտում է լինել ավելի առողջ ու երիտասարդ, բայց բնությունը կատարում է իրենը, մարդը ծերանում է, հիվանդանում ու նոր միայն կյանքից հեռանում, այսինքն՝ մարդն առողջ չի մեռնում: Եվ Վիլյամ Սարոյանն ասում է. «Աս, որ գրել եմ, քիչ մը կծաղրի աղիկ, մարդ պիտի ուրախ, զվարթ մեռնի»: Այնուհետև շարունակում է. «Ես շատ կգրեմ, բայց շատ չեմ տպեր, որովհետև մեկ գրագետի մը համար, եթե բոլոր գրածներ տպեին, պիտի դժվար ըլլար, և մեկ գիրք տպել չաթին խնդիր է: Ատոր համար է, որ ես ավելի գիրք ունիմ անտպված, քան տպված: Տպված ունիմ 44 գիրք: Ըսել է, ինչո՞ւ կգրես, եթե չպիտի տպես: Պատասխանն աս է՝ ինձի համար գրել և ապրիլ կյանքը, նույնն է: Կգրեմ, որովհետև առողջ եմ, որովհետև հետաքրքիր է, և տարբերություն չկա՝ կտպեմ, թե չեմ տպեր: Չորս դյուժին ալ գիրք ունիմ, որ դուրս չեն էկե, բայց օր մը պիտի երևան գան»:

Իսկ թե ո՞վ է իր փոքրիկ Ջոնիի նախաստիպը, այդոք ի՞նքն է եղել հարցին Սարոյանը պատասխանեց. «Ջոնին ալ ես եմ, Մեք Գրեգորն ալ: Այսինքն՝ պիտի հասկնալ, որ գրողն իր գրության մեջ ամեն մարդ պիտի ըլլա: Սատանային վրա գրե, նորեն ինքը պիտի ըլլա, հրեշտակին վրա գրե, նորեն ինքը պիտի ըլլա»:

Երբ հարցրին, թե Հայաստանի մասին մտադի՞ր չէ որևէ բան գրել, հուզվեց, մի պահ կարկամեց, ապա ասաց. «Իմ հոգիական արմատներ Բիթլիսի կողմերն են, իմ մարմնական արմատներ Ֆրեզնոյի և Կալիֆորնիայի մեջ են: Ավելի խորունկ կըրնաս գրել ան տեղերու մասին, որտեղերը խորունկ արմատ ունիս: Իմ արմատներ հոս են: Ինձի վրա մեր երկիր, մեր հայություն, մեր ժողովուրդ մեծ պարտավորություն կդնեն և ես մտադիր եմ աղիկ կատարել»:

Այնուհետև Վիլյամ Սարոյանը պատմեց իր և Հեմինգուեյի, իր և Բերնարդ Շոուի հանդիպումների մասին:

«Ես և Հեմինգուեյ հին թշնամիներ ու բարեկամներ ենք, կռվել ենք: Բայց արվեստին մեջ թշնամություն չկա, այսինքն, եթե ըլլա, թշնամություն չէ ճշմարիտ: Հեմինգուեյ նուրբ գրություն բերավ, անոր գրություն ուժ ունի, ինչպես «Հին կտակարան»: Անոր սիրողներ քիչ էին: Ան անհանգիստ մարդ մը էր: Ան սորվեցուց նուրբ գրել: Ով կուզե նուրբ գրել, պզտիկ պարտք մը ունի Հեմինգուեյի առաջ... Բերնարդ Շոուն ինձի հա-

տուկ նամակ գրեց, երբ որ ես գորք էի (զինվոր – Վ. Մ.) Լոնդոն: Հանդիպանք իրար... Հրեշտակի պես, քիթեռի պես սուրբ մարդ մը էր Շոուն, շատ կսիրեր իմ գրություն: Ես միշտ մեծ մարդիկ չեմ նեղեր, բայց ուրախ եմ, որ հանդիպմանք իրար»:

Խոսք եղավ հայկական երգի մասին: Ասաց, որ փոքր հասակից շատ է սիրել Արմենակ Շահմուրադյանի երգերը: «Ատոնք ժողովրդական երգեր են, մեյամաղձոտ: Զվարթ երգեր ու պարեր ալ ունինք: Երգեր մասն ունին մեր փորձության, մեր հավատի: Ազգի միտքը, հոգին երգին մեջ է: Պիտի խոստովանիմ, որ երգն իմ ամեն օրվա ապրելն է, ես հոգուս մեջ ալ կերգեմ: Շոտլանդական մեծ բանաստեղծ Ռոբերտ Բյոռնս շատ լավ երգեր ունի: Ես պզտիկուց կերպգեի անոր պես երգ մը գրել, բայց չեղավ: Երգեր ես շատ գիտեմ, որոնցմե մեկը 1949 թ. ահագին հաջողություն ունեցավ: Այ երգ բավականին լուրջ երգ մըն է: Որ գոնե համը առնիք, ես կերգեմ ադ երգ»:

Եվ երգում է Սարոյանը...

Խոսեց Նարեկացու, Ներսես Շնորհալու, Աբովյանի, Թումանյանի, Այվազովսկու, Սարյանի, Խաչատրյանի, Մինաս Ավետիսյանի արվեստի մասին:

«Նարեկացին մեզի համար հարստություն է, կարևոր մը բանաստեղծ, անչափ կրակ կա հոգիին մեջ: Անոր գրության պես ահագին գրություն մը չկա: Ան կձգտե մոտենալ աստծուն»:

Այվազովսկու մասին ասաց. «Անիկ շատ մեծ է, հզոր, ջուր-շարժմունք, տիեզերք-շարժմունք հասկացություն միացուցած է իրար»:

«Մարտիրոս Սարյան և Արամ Խաչատրյան անչափ ահագին հայեր են, ասոնք մեծ են: Աշխարհում Սարյան ավելի քիչ կճանչցվի, քան Խաչատրյան: Հոս պիտի գաս, որ Սարյան ավելի ճանչնաս: Ամեն մարդ չի կրնար Սարյան ու Խաչատրյան ըլլար... Մենք Սարյանով ու Խաչատրյանով շատ-շատ կուրախանանք և հպարտ կզգանք: Մինաս Ավետիսյանեն լավ նկարիչ չկա, ես անոր գործեր ամենն ալ նայել եմ, ասիկ մեր հանճարներեն է: Վիկտոր Համբարձումյան ամբողջ աշխարհ գիտե, առաջիններեն է: Գրիգոր Գուրգադյան կձգտե անհասանելիին, երիտասարդ, գորավոր միտք ունի»:

Սարոյանը նշեց նաև, որ նրանց արվեստն ու գործերն ունեն համաշխարհային նշանակություն, և երիտասարդ սերունդը պետք է սրբու-

թյամբ սովորի ու պահպանի նրանց ստեղծագործությունները, էլ ավելի խորացնի և զարգացնի ազգային մշակույթը:

Այն հարցին, թե հասարակությունը եթե չընդուներ իրեն որպես գրող, ի՞նչ պիտի աներ, Սարոյանն պատասխանեց. «Ես գործավոր եմ, և իմ գործս գրությունն է: Իմ գործս շիտակ գործ է իմ բնության համար: Եթե չհաջողեր, ես նորեն պիտի շարունակեի գրություն: Ամեն մարդու մեծ հաջողություն է, որ ինքը ճշմարտորեն հավատա իր գրության ու չխաբե ինքզինք: Ատ տեսակ գրագետ, երբ կուզե ըլլա, մեծ հաջողություն կունենա»:

Ո՞րն է իր լավագույն ստեղծագործությունը հարցին նա պատասխանեց. «Իմ լավ գրություն ես կհամարեմ «Իմ անունս Արամ է» պատմվածքը: Արամ Կարաօղլանյան, ընտրեցի աս անուն, որ ամեն մարդ գիտենա, որ աստիկ հայ մարդու անուն է»:

Վիլյամ Սարոյանը շուրջ երեք ժամ մնաց համալսարանում, պատասխանեց շատ հարցերի, պատմեց իր կյանքի հետաքրքիր դեպքերից, իր հիացմունքն արտահայտեց հայ ճարտարապետության, գիտության ու մշակույթի մասին խոսելիս:

Վերջում տաղանդավոր գրողն ասաց. «Ես չունիմ իմաստություն, ունիմ լոկ գրական փորձություն, 42 տարվա տպված ըլլալու ճամփա: Ունիմ անհազին պարտք հայ պատմությանն ու իմ հայրենիքիս: Պիտի չմոռնամ ձեզի ըսել, որ աս դպրոցին մեջ դուք լավ սորվիք, որովհետև առողջ եք, կիուսամ, որ հաջողություն ունենաք: Թող կատարվի ձեր անուշ խորհուրդ»:

Հանդիպումից հետո, ի պատիվ մեծ գրողի, ռեկտորատում տեղի ունեցավ ընդունելություն, որին մասնակցում էին համալսարանի մի խումբ անվանի գիտնականներ, ղեկավար աշխատողներ, ինչպես նաև սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, ՀՄԳ միության վարչության առաջին քարտուղար Վ. Պետրոսյանը, բանաստեղծ Վ. Դավթյանը և ուրիշներ:

Ընդունելության ընթացքում Սարոյանը ծանոթացավ համալսարանի պատմության և ուսուցման ընթացքին, Հայաստանում բարձրագույն կրթության դրվածքին, ինչպես նաև ուսանողության ու պրոֆեսորադասախոսական կազմի կատարած գիտահետազոտական ու մանկավարժական աշխատանքներին:

**«ԿԸ ՄՆԱՄ ԸՆԳՄԻՇՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ՇԱՐՔԻՆ»<sup>50</sup>**

*(«ԵՊՀ պատվավոր դոկտոր»-ի վկայագիր հանձնվեց  
Ռիրա Պալյանին)*

Երևանի պետական համալսարանի գիտխորհրդի նիստերի դահլիճում հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած հանդիսավոր նիստին՝ նվիրված սփյուռքահայ նշանավոր հասարակական գործիչ և բարերար Ռիտա Պալյանին «ԵՊՀ պատվավոր դոկտոր»-ի վկայագիր հանձնելու արարողությանը, մասնակցում էին խորհրդի անդամներ, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, հյուրեր արտասահմանից ու Սփյուռքից, հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպություններից ու բուհերից:

Հանդիսավոր նիստում համալսարանի ղեկավար, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի կողմից ասված ներածական, ողջույնի խոսքից հետո ելույթներ ունեցան ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, սոցիալական և առողջապահության հանձնաժողովի նախագահ Հ. Հակոբյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Կ. Դավլաթյանը, Պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Բ. Հարությունյանը, Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, ԵՊՀ պատվավոր դոկտոր, պրոֆ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը, նորաստեղծ հայ արվեստի պատմության ամբիոնի վարիչ, դոց. Լ. Չուգասյանը, նշանավոր կոմպոզիտոր Է. Միրզոյանը:

Ռ. Մարտիրոսյանը նշեց, որ դեռևս 1995 թ. դեկտեմբերի 14-ին կայացած գիտխորհրդի նիստում էր որոշվել պատվավոր դոկտորի տիտղոս շնորհել սփյուռքահայ հանրահայտ հասարակական գործիչ Ռիտա Պալյանին՝ նկատի ունենալով նրա՝ սփյուռքահայությանն ու մայր հայրենիքին կրթության ու գիտության զարգացման գործում մատուցած մեծ ծառայությունները: Ռեկտորը շարունակեց՝ բավական է հիշել երկրաշարժի ծանր օրերին ծավալված նրա եռանդուն գործունեությունը (ԱՄՆ-ում նրա կողմից կազմակերպված՝ Հայաստանի համար տրա-

---

<sup>50</sup> «Հանդես Երևանի համալսարանի» գիտախնդրմանցիոն լրատու:

մադրվող հանգանակությունն ու ամեն տեսակ օգնությունը), նաև հետագայում նրա կյանքի ավելի ու ավելի ընդլայնվող հայրենամտեր ընթացքը (ամենուր նրա կողմից հիմնված հայրենամապաստ կազմակերպություններն ու հաստատությունները, որոնց միջոցով դրամական և նյութական մեծ օգնություն ցույց տրվեց աղետյալ Հայաստանի կրթության ու գիտության զարգացմանը):

Ռ. Մարտիրոսյանը հատկապես կարևորեց Ռ. Պալյանի՝ Երևանի պետական համալսարանին ցույց տրվող օգնության ուղղությամբ ներդրած ջանքերը, նշեց, որ նա ԱՄՆ-ում ստեղծել է «Երևանի պետական համալսարանի բարեգործների միություն», որն այդ ուղղությամբ լայն գործունեություն է ծավալում արտասահմանում:

Վերջում ռեկտորը բոլորի անունից շնորհավորեց Ռ. Պալյանին այդ բարձր պատվին՝ ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչմանն արժանանալու առիթով և հանդիսավոր կերպով նրան հանձնեց «ԵՊՀ պատվավոր դոկտոր»-ի վկայականն ու ԵՊՀ հոբելյանական հուշամեդալը:

Հ. Հակոբյանը, լավատեղյակ լինելով, ներկայացրեց Ռ. Պալյանի՝ Սփյուռքում (նաև Հայաստանում) ծավալած ազգամտեր գործունեությունը, նշեց, որ ԵՊՀ գիտխորհրդի որոշումը՝ Ռ. Պալյանին ԵՊՀ պատվավոր դոկտորի տիտղոս շնորհելու մասին, իրոք հիմնավորված է և տեղին՝ նվիրյալ հայուհուն համարելով արժանավորներից ամենաարժանավորը:

Կ. Դալլաքյանի ընդարձակ խոսքը նվիրված էր Ռ. Պալյանի կյանքին ու գործունեությանը: Նա հանգամանորեն անդրադարձավ Սիմոնյանների (այդպես է Ռ-իտայի հայրական ազգանունը) գերդաստանի պատմությանը, նրա ծնողների հայրենամտեր գործունեությանը, որն էլ ժառանգել է նրանց դուստրը՝ Ռ-իտան: Այս խոսեց Ռ. Պալյանի ուսումնառության ու գիտամանկավարժական գործունեության մասին, ներկայացրեց նրա կողմից հայկական գաղթօջախներում կատարված հասարակական լայն աշխատանքը: Պրոֆ. Կ. Դալլաքյանն անդրադարձավ նաև Ռ. Պալյանի ամուսնու՝ Վարդգես Պալյանի հայրենամտեր գործունեությանը, ընդգծեց, որ նրանք ամենուր հանդես են գալիս միասնաբար, և այն, ինչ որ կատարում է Ռ-իտան, պետք է համարել նաև Վարդգեսի նախաձեռնությունը:



«Սփյուռքում այսօր շատ կան հայրենասեր հայ ընտանիքներ,- վերջում ասաց ելույթ ունեցողը,- կուզենայի, սակայն, որ բոլոր-բոլոր հայ ընտանիքների հոգում, բոլոր-բոլոր հայ մարդկանց սրտերում մշտապես վառվեր Ռ-իտա և Վարդգես Պալյանների հոգու կրակը, որ բոլոր-բոլորին առաջնորդեր նրանց սրտի կերոնը, որ Մովսեսի անկեզ մորենու նման լուսավորեր մեր ժողովրդի ժամանակակից կյանքի տասնաբանյան՝ ապրել միասնությամբ, ապրել գեղեցիկի օրենքներով, ապրելով ու գործելով հաստատել մեր Հայրենիքի հավերժությունը»:

Բ. Հարությունյանի ելույթից պարզվեց, որ Պատմության ֆակուլտետի ամենամեծ լսարանը վերանորոգվում է Ռ. Պալյանի օժանդակությամբ և անվանակոչվելու է նրա (մեկենասի) անվամբ: Ելույթ ունեցողը նշեց նաև, որ Ռ. Պալյանն իր ազգանվեր գործունեությամբ հավերժ կմնա մեր ժողովրդի հիշողության մեջ: Բ. Հարությունյանը վերջում հույս հայտնեց, որ Ռ. Պալյանին շնորհված այս բարձր տիտղոսը էլ ավելի կմերձեցնի նրան մայր բուխի հետ:

«Նշանավոր մարդիկ նշանի կարիք չունեն»,- այսպես սկսեց իր շնորհավորանքի խոսքը Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը: Ռ. Պալյանը Սփյուռքի մեր նշանավոր կանանցից է, որը ժամանակին իրավամբ անվանվել է «Լիբանանի հրաշք կինը»: Մեզ թվում է՝ ԵՊՀ պատվավոր դոկտորի տիտղոսը նրան կմղի նորանոր հայրենամեր որոնումների:

Լ. Չուգասզյանն իր ելույթում Ռ. Պալյանին բնութագրեց նաև որպես մշակութային նշանավոր գործիչ, ասաց, որ իր դեկավարած ամբիոնի ստեղծման գործում ևս մեծ է եղել Ռ. Պալյանի ներդրումը: «Պալյանների ընտանիքը,- շարունակեց նա,- կարելի է համարել ԱՄՆ-ում հայ մշակույթի դեսպանատուն, իսկ իրենց՝ հայ մշակույթի դեսպաններ»:

Հուզիչ էր և ջերմությամբ ընդունվեց Է. Միրզոյանի ելույթը: Նա հասկապես նշեց արտասահմանում հայ արվեստի տարածման գործում Պալյանների ընտանիքի կատարած հույժ արժեքավոր ծառայությունները, հետաքրքիր դրվագներ պատմեց նրանց հետ իր ունեցած հանդիպումներից, ինչպես նաև ԱՄՆ-ում նրանց կողմից իր համերգներին ցույց տրված օգնության մասին:

Մեծ բավականությամբ լսվեց ԵՊՀ պատվավոր դոկտոր Ռ. Պալյանի շնորհակալական խոսքը. «Մեծարգո՛յ ռեկտոր, գիտական խորհրդի յարգարժան անդամներ, հիւրեր և սիրելի՛ բարեկամներ, ճշմարիտ յու-

գումով է, որ ես այսօր մտայ պատկառելի «alma mater»-ի կամարներու տակէն, և մարմինս փշաքաղուեցաւ՝ յիշելով ծնողներուս խորատականներն ու իմ պատանեկան երազները Մայր համալսարանին հետ գործակցելու մասին: Ծիշտ է, որ ճակատագրի դասաւորումով ինծի բախտ չփիճակուեցաւ ուսումն ստանալու գիտութեան և հասարակական կեանքի այս օջախին մէջ, բայց միւս կողմէ ինծի պատիւ ընծայուցաւ հայոց միքտի մայր կաճառ մտնել իբրև պատուաւոր դոկտոր: Շնորհակալութիւն կը յայտնեմ ինծի ընծայուած այդ բարձր պատիւին համար:

Ազգային համալսարանը միշտ մօտ եղած է իմ սրտիս, որովհետև ես երկար տարիներ զբաղած եմ կրթական գործով, և իմ աշակերտներէս շատեր իրենց ուսումը ստացած են այս համալսարանին մէջ:

Հայաստանը քարաշատ և անջրոյի երկրամաս մըն է, որ սակայն հարուստ է միտքի և հոգիի դաշտերու արգասաւորմամբ: Այս յարկին տակ է, առաւելաբար, որ հայ գիտական միտքը կը բեղմնաւորուի ու լոյս կու տայ աշխարհին և յոյս՝ հայութեան:

Ես ծանօթ եմ համալսարանի հիմնադրման և անոր սկզբնական թուականներու մռայլ շրջանի պատմութեան: Նաև ականատես եղած եմ համալսարանի բուռն զարգացման, անցման շրջանի վտանգաւոր տատանումներուն և այսօր ուրախ եմ հաստատելու, թէ ան մտած է կայունացման և առաջընթացի փուլէն ներս:

Այս համալսարանին մէջ դաստիարակած և գիտական փայլուն վերելք ապրած են միջազգային լայն ճանաչում վայելող հազարաւոր գիտնականներ:

Սփիռքը ևս հսկայ պարտք մը ունի այս համալսարանին, որովհետև այստեղ ուսանած են սփիռքահայ բազմաթիւ սերունդներ, որոնք կը գտնուին այսօր փնտրուած ասպարէզներու մէջ և մեր ազգային կեանքի առաջին գիծին վրայ:

Հետևաբար այսօր, երբ համալսարանը կը գտնուի կարիքի մէջ, բոլորիս պարտքն է համազգային հոգատարութեան խնդիր դարձնել անոր ճակատագիրը:

Ի դեպ, Հայաստանի մէջ իմ ամենակարևոր առաքելութիւնն է օգնել մանկավարժութեան զարգացման և երիտասարդութեան ազգային և հայեցի դաստիարակութեան համակարգի ստեղծման: Յատկապէս այսօր, երբ երիտասարդութեան գաղափարական գործը գրեթէ լքուած է իր

վիճակին. արդարև, այսօր բոլոր դասագիրքերէն դուրս կը ձգուին գաղափարական բոլոր չարդարացուած հին մօտեցումները՝ ստեղծելով վտանգաւոր պարապոթիւն մը. ես կը հաւատամ, որ ազգային դաստիարակութեան գաղափարախօսութիւնն է, որ պէտք է լեցնէ այդ պարապոթիւնը՝ անոր խորքին ու հիմքին մէջ դնելով միաբանութիւն սերմանելու հրամայականը: Մեր նոր սերունդներուն կրթութիւնը պէտք է ըլլայ ճշմարիտ, ազգանուէր, ամբողջական և յստակ:

Մեր երկիրն այսօր դարձած է անկախ՝ այդ անկախութեան ընծայած բարիքներով, ազատութիւններով ու նաև պատասխանատուութիւններով. և այսօր այդ պատասխանատուութիւնը շատ ավելի կը կշռէ, քան երբևէ:

Մանկավարժական աշխատանքի երկար փորձառութեամբ յանգած եմ կրթական փիլիսոփայութեան ամենէն կարևոր և օգտակար սկզբունքին, այն, թէ պէտք չէ ժամանակ շահիլ, այլ ընդհակառակը՝ պէտք է ժամանակ ծախսել՝ ամբողջական կերպով կրթելու համար մեր նոր սերունդները: Ամբողջական՝ երբ միտքը կը մշակուի իմաստութեան համար, լեզուն՝ ճարտարախօսութեան, ձեռքերը՝ կեանքի անհրաժեշտ գործողութիւնները հմտութեամբ կատարելու համար:

Այդ նպատակին սահմանուած են մեր կողմէ Մայր համալսարանին ուղղուած քայլերը, և համալսարանին օժանդակելու համար վերջերս կազմակերպեցինք Երևանի պետական համալսարանի բարեկամներու ընկերակցութիւնը Ամերիկայի մէջ: Այդ կերպով հնարաւոր պիտի ըլլայ համալսարանին հասցնել նիւթական որոշ մատակարարում, դասընթացներու կազմակերպում, ուսանողներու և գիտնականներու մասնագիտական փոխանակումներու կազմակերպում և այլ կենսական ծրագիրներու իրագործում:

Բարեգործութիւնը պատուաւոր գոհաբերման արարք է. կարելի չէ զայն չափել դրամով, որովհետև ատելի արժէքաւոր է անոր բարոյական ու մարդասիրական արժէքը:

Այս մտածումներով է, որ որոշեցինք Երևանի պետական համալսարանին մէջ ստեղծել պատմագիտական աշխատասրահ մը. ես նշանակալից խորհուրդ մը կը տեսնեմ այս սրահի կայացման մէջ: Այս աշխատասրահը բոլորին տունն է. ոչ ոք այնտեղ պէտք է օտար զգայ ինքզինք, ո՛չ ծերունազարդ գիտնականը և ո՛չ ալ երիտասարդ ուսանողը. ամէն ոք

պէտք է հարագատ զգայ իմաստուններու խնջոյքի սեղանին շուրջ, թող բոլորը համարձակօրէն նստին այնտեղ՝ մեր ժողովուրդի և բոլոր ժողովուրդներու մեծագոյն միտքերուն ու պատմաբաններուն հետ դէմ առ դէմ՝ աչքերը ուղղած անոնց աչքին ու միքտի խոյանքին, և այն ատեն անոնց դիմաց պիտի բացուին իմացական նոր, ընդարձակ և աննախադէպ հորիզոններ ու հեռաստաններ:

Այնպէս, ինչպէս ծնողքս տուած են ինձի բարեգործութեան դաստիարակութիւնը, Հայաստանն ալ հանդիսացած է ինձի համար ներշնչման ու ոգեշնչումի աղբիւր, և հայ ժողովուրդն ալ եղած է լիցքաւորման ուժ: Իսկ Վարդգէսը՝ կեանքի ընկերս, որ է ամուսինս և հայրը երկու զավակներուս, ինչպէս նաև պապիկը առ այժմ մեր միակ թոռան, եղած է մեծագոյն խորհրդատու: Առանց Վարդգէսի ցուցմունքներուն, առողջ քննադատութիւններուն, ֆինանսական աջակցութեան, քաջալերանքին և համբերութեան՝ ես համարձակութիւնը պիտի չունենայի առանձինս իրականացնելու որևէ մարդասիրական ծրագիր:

Արդ, այս կաճառի պատուաւոր դոկտորի տիտղոսը, գոր Դուք կ'ընծայէք ինձի այսօր, ոչ միայն սիրտս հպարտութեամբ ու երախտագիտութեամբ կը պարտուէ, այլև անսահման ուրախութեամբ և յոյսով: Որովհետև Դուք՝ Հայաստանի խումբ մը յարգարժան գիտնականներդ, ունեցաք հեռատեսութիւնն ու քաջութիւնը շնորհելու այդ տիտղոսը կնոջ մը՝ իր մարդասիրական, կրթական և ազգային ծառայութիւններուն համար:

Հեռատեսութեան հետ միասին արիութիւն կը պահանջէ, սահմանուած ասանդութիւններէն անդին անցնելով, հասնիլ աւելի բարձր և լուսաւոր հորիզոններու և բաժնեկից դարձնել նաև ուրիշները այդ վսեմութեան: Այստեղ կ'ուզեմ յիշատակել նախագահ Չոն Քենեդիի մէկ նշանաւոր խօսքը, որ կ'ըսէր՝ «Մարդկութիւնը մեզ պիտի յիշէ ոչ թէ պատերազմի դաշտին վրայ տարած մեր յաղթանակներուն համար, ոչ ալ նիւթական հարստութեան և մեր աշխարհակալութեան համար, այլ միայն մեր ներդրումներուն համար, որոնք կը սատարեն զարգացնելու և ազնուացնելու մարդու միտքն ու հոգին»:

Յարգարժան բարեկամներ, թոյլ տուէք իմ խորին շնորհակալութիւնը յայտնելու Ձեզի, որ ինձի շնորհեցիք պատուակալ դոկտորի կոչում՝ Երևանի պետական համալսարանի բարգաւաճման ի խնդիր իմ համեստ աւանդս բերած ըլլալուս համար: Ես յոյս ունիմ, որ, մասնակից դառնա-

լով Ամերիկայի մէջ հիմնուած «Երևանի պետական համալսարանի բարեկամներու միութեան» ստեղծման, կը մնամ ընդմիջտ համալսարանի բարեկամներու շարքին:

Ընդունեցէք, ուրեմն, իմ շնորհակալութեան երկիւղած զգացումներս»:

Վերջում ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը կրկին շնորհավորեց Ռ. Պալյանին և նրան ու նրա ընտանիքին ցանկացա՞վ ամենայն բարիք ու հետագա հաջողություններ և հայրենամարտի գործունեություն՝ ի շահ Հաստանի ու Մայր համալսարանի:

### **ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԻՆ ԳՈԿՏՈՐԸ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՍԻՐՈՎ**<sup>51</sup>

Քիչ են այն հայ կանայք, որոնք, փիլիսոփայությունը, և նրա պատմությունը դարձնելով իրենց ուսումնասիրության ու հետաքրքրությունների առարկա, այդ գիտաճյուղում հասել են զգալի նվաճումների: Նրանցից մեկն էլ Սաքենիկ (Սեղա) Գրիգորի Պարսումյան-Տատոյանն է: Նա անցյալ տարվա աշնանը Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտացված խորհրդում պաշտպանեց իր թեզը՝ հայցելով փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան: Գիտխորհրդի որոշումը՝ նրան այդ աստիճանը շնորհելու մասին, վերջերս հաստատվեց բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի կողմից: Սեղա Պարսումյանն այդպիսով դարձավ հայ և համաշխարհային փիլիսոփայության պատմության գծով այդ բարձր աստիճանը կրող առաջին հայ կինը: Ի դեպ, նա առաջին կինն է նաև, որ, մեկ մոտ թեկնածուական ատենախոսություն չպաշտպանելով, միանգամից արժանացել է դոկտորի գիտական աստիճանի:

Սեղա Պարսումյանը Սփյուռքում և հայրենիքում ճանաչված մտավորական է, արվեստաբան, մի քանի գրքերի ու բազմաթիվ հոդվածների հեղինակ, լավ տիրապետում է անգլերենին, ֆրանսերենին, արաբերենին և թուրքերենին, խորապես գիտի գրաբար ու արևմտահայերեն: Նա ծնվել է Հալեպում, նախնական կրթությունը ստացել է «Քառեն Եփսե»

<sup>51</sup> «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատու:

ազգային ճեմարանում, այնուհետև՝ 1965 թ., ավարտել է Բեյրութի համալսարանական քոլեջը՝ «Փիլիսոփայություն և գեղարվեստ» մասնագիտությամբ, և, պաշտպանելով «Եզնիկ Կողբացի. Չարի փիլիսոփայությունը» ավարտաճառը, ստացել է «պակավոր արվեստից» աստիճան՝ պատվավոր տիտղոսով: Իր գիտելիքները հարստացնելու և արվեստի մեջ խորանալու նպատակով 1966-67 թթ. նա սովորել է նաև Լոնդոնի «Սիթի անդ Կայլազ» գեղարվեստից վարժարանում՝ խորանալով գեղանկարչության և քանդակագործության ասպարեզներում, իսկ 1969 թ. ավարտել է Բեյրութի ամերիկյան համալսարանը՝ ստանալով փիլիսոփայության գծով «Մագիստրոս արվեստից» աստիճան, որը, ըստ էության, համապատասխանում է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Ս. Պարսումյանն այդ տիտղոսին արժանացել է «Դավիթ Անհաղթ. Փիլիսոփայության սահմանումները» աշխատանքի համար:

Ուսումնառությանն ու գիտահետազոտական աշխատանքին զուգընթաց՝ Ս. Պարսումյանը զբաղվել է նաև մանկավարժությամբ: Նա, սկսած 1967 թ., աշխատել է Բեյրութի համալսարանական քոլեջում՝ դասավանդելով «Ընդհանուր փիլիսոփայություն», իսկ 1980-87 թթ. եղել է տեղի Հայկազյան վարժարանի «Հայ իմաստասիրության պատմության», «Մշակույթների պատմության» և «Արվեստի պատմության» դասախոսը: 1986 թ. առ այսօր Ս. Պարսումյանը նույն առարկաներն ուսուցանում է Բեյրութի ամերիկյան համալսարանում, որտեղ էլ արժանացել է պրոֆեսորի բարձր տիտղոսին:

Սեղա Պարսումյանի դոկտորական թեզի թեման է՝ «Հովհաննես Պլուզ Երզնկացու «Ի տաճկաց իմաստասիրաց»-ը և իմաստասիրական արձակն իսլամական աղբյուրների լույսի տակ», որը մշակվել և վերջնական տեսքի է բերվել Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության պատմության ամբիոնում, որտեղ նա 1989 թ. ձևակերպվել է որպես դոկտորանո: Նրա գիտական խորհրդատուն եղել է նույն ամբիոնի վարիչ, պրոֆ. Հ. Միրզոյանը:

Հիշյալ թեմայի մշակմանը Ս. Պարսումյանը ձեռնամուխ է եղել Բեյրութում: Ի դեպ, նա իր գիտաստեղծագործական գործունեության մեծ մասը նվիրել է հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրությանը, մի շարք նյութեր է տպագրել՝ նվիրված Եզնիկ Կողբացու, Դավիթ

Անհաղթի, Հովհաննես Երզնկացու և այլ հայ ու օտար ազգի փիլիսոփաների ստեղծագործությունների վերլուծությանը: Ինչ էլ գրել է նա՝ հողված թե գիրք, սերտ աղերսներ է ունեցել փիլիսոփայության հետ: Նույնիսկ արվեստաբանության խնդիրներին նվիրված նրա գրեթե բոլոր աշխատությունները գեղանկարչությունն ու արձանագործությունը դիտարկում են արվեստի փիլիսոփայության տեսանկյունից:

Հովհաննես Պլուզ Երզնկացու «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեայ բանք» երկն ու իմաստասիրական մյուս արձակ գործերը Ս. Պարսուճյանը վերլուծել է համաշխարհային փիլիսոփայության ընդհանուր համակարգում՝ ցույց տալով դրանց աղերսներն արաբական աշխարհի փիլիսոփայության հետ: Միջնադարյան այդ ձեռագիրը, ինչպես հայտնի է, հրատարակվել է Ս. Արևշատյանի կողմից դեռևս 1958 թ.: Այս երկը հրատարակման պահից ի վեր դարձել է մի շարք գիտնականների ուշադրության առարկա, նրա մասին գրվել են հոդվածներ ու այլ նյութեր, որոնումներ են կատարվել սկզբնաղբյուրները գտնելու ուղղությամբ: Եվ այդ ճանապարհին բավականին հետազոտվել են հայ-արաբական մշակութային աղերսները: Սակայն հայ-արաբական փիլիսոփայական ու հասարակական առնչությունները՝ կապված Հովհաննես Պլուզի «Ի տաճկաց իմաստասիրաց»-ի հետ, լավ չէին հետազոտվել: Ս. Պարսուճյանը, փաստորեն, առաջինը եղավ, որ, հմուտ լինելով արաբերենի մեջ, լայն որոնումներ կատարեց արաբական փիլիսոփայության անդաստանում և կարողացավ գտնել այն սկզբնաղբյուրը, որից օգտվել է Հովհաննես Երզնկացին: Դա 10-րդ դարի արաբական մշակույթի կարևորագույն հուշարձաններից մեկն է, որը հայտնի է «Մաքրության եղբայրության թղթերը» անվամբ: Այդ հայտնաբերումը դիսերտանտի կարևորագույն նվաճումն է, որով պայմանավորված են նրա հետազոտության մյուս նյութերն ու դրույթները: Նա, մանրամասնորեն ներկայացնելով «Մաքրության եղբայրության թղթերի» բովանդակությունը, կառուցվածքն ու գաղափարները, զուգահեռաբար քննում է Երզնկացու «Ի տաճկաց իմաստասիրաց»-ը, ցույց տալիս այն հատվածները, որոնցից համառոտաբար բանաբաղել է Երզնկացին: Գիտնականը միաժամանակ բացահայտել է Երզնկացու մյուս ինքնուրույն աշխատությունների ու քարոզների մեջ թափանցած այն գաղափարները, որոնք կրում են հիշյալ «Թղթերի» ազդեցությունը: Հեղինակն իր աշխատության մեջ վերլուծում

է հայ-արաբական փոխհարաբանական կապերի պատմության և Հովհաննես Երզնկացու գիտական ժառանգության հարցերը: Նրա առաջադրած թեզերը կարևոր նպաստ են բերում հայ-արաբական մշակութային շփումների բազմակողմանի հետազոտության շնորհակալ գործին:

Սեդա Պարսումյանն իր թեզերը տպագրել է առանձին մենագրությամբ և մի շարք հոդվածներով: Նա հեղինակ է նաև Բեյրութում լույս տեսած «Լիբանանահայ նկարչությունը ինքնության տագնապին լույսին տակ» (1984), «Էջեր արևմտահայ մտածումն» (1987) գրքերի, որոնցից առաջինը նվիրված է լիբանանահայ նկարչության պատմափնաստափրական վերակառուցմանը, իսկ երկրորդում վերլուծվում են արևմտահայ նշանավոր անդրապաշտ հեղինակների՝ Ե. Տեմիրճիպաշյանի, Տ. Չրաքյանի, Շ. Պերպերյանի և Գ. Գավաֆյանի աշխարհայացքն ու ստեղծագործությունները՝ հակադրելով դրանք Դանիել Վարուժանի կենսապաշտական մտածողությանը:

Այս ամենի հետ մեկտեղ Ս. Պարսումյանը մասնակցում է հասարակական-մշակութային կարևոր միջոցառումներին, ազգօգուտ աշխատանք կատարում Սփյուռքում ու հայրենիքում: Նա աշխատակցել է սփյուռքահայ «Բագին», «Շիրակ», «Ազդակ» ամսագրերին, «Հայկազեան հայագիտական հանդեսին», «Հասկ հայագիտական տարեգրքին»՝ դրանցում տպագրելով գեղագիտական, մանկավարժական և իմաստասիրական բնույթի ուսումնասիրություններ: Նրա հոդվածները տպագրվել են նաև «Բանբեր Երևանի համալսարանի» և ՀԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսներում: Նա երկու անգամ հրավիրվել է մայր հայրենիք. առաջին անգամ՝ 1980 թ. Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի կողմից՝ իբրև արվեստաբան ներկայացնելու լիբանանահայ նկարչությանը նվիրված երևանյան ցուցահանդեսը, իսկ երկրորդ անգամ՝ 1987 թ., երբ Լիբանանի կանանց կողմից մասնակցել է Երևանում կազմակերպված սփյուռքահայ նշանավոր կանանց հավաքին:

Սեդա Պարսումյանն ունի մեկ այլ նախասիրություն ևս. նա նկարչուհի է, կատարում է նկարազարդումներ, ունի բազմաթիվ կտավներ, նրա նկարչական ոճը կերպավորումն է գեղագիտական և իմաստասիրական իր ըմբռնումների: Նա ինքն է իր գեղեցիկ ու ճաշակով ձևավորել բոլոր հրատարակված գրքերը: Դրանց մեջ հատկապես աչքի է ընկնում



«Յովհաննես Պլուզ Երզնկացիի «Ի տաճկաց իմաստասիրաց»-ը և իմաստասիրական արձակը իսլամական աղբյուրներում լույսին տակ» մենագրությունը, որը լույս է տեսել Բեյրութում 1991 թ.:

Այսօր Սփյուռքը և մայր հայրենիքը պետք է ուրախանան իրենց արժանավոր դասեր փիլիսոփայական ու գեղագիտական նվաճումներով, որոնք ուրույն ներդրում են սփյուռքահայ ինքնության ճանաչման և բնորոշման գործում:

## **ՆՈՐ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԲԱՅՈՒՄ**<sup>52</sup>

Ճանաչված քանդակագործ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ և ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Արա Սարգսյանի (1902-1969 թթ.) հեղինակած բազմաթիվ մոնումենտալ արձաններն ու փոքրածավալ կիսանդրիները զարդարում են ոչ միայն մեր գեղատեսիլ մայրաքաղաքի հրապարակներն ու պուրակները, փողոցներն ու շենքերը, այլև լայնորեն ներկայացված են հանրապետության մյուս բնակավայրերում, ինչպես նաև պատկերասրահներում ու քանդաքաններում:

Սակայն միաժամանակ պետք է նշել, որ մեծամուն արվեստագետի ոչ բոլոր գործերն են, որ բաց երկնքի տակ գտել են իրենց տեղը: Ա. Սարգսյանի շատ քանդակներ դեռևս սպասում են հովանավորների, որպեսզի ձուլվեն ու տեղադրվեն իրենց արժանի վայրերում: Դրանցից մեկն էլ նրա «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» քանդակն է, որը հայ ժամանակակից արձանագործության փայլուն նվաճումներից է:

Եվ ահա Երևանի պետական համալսարանի մասնաշենքի հրապարակում սեպտեմբերի 3-ին մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցավ Ա. Սարգսյանի հեղինակած հիշյալ հուշակոթողի բացումը:

Հանդիսությունը վերածվեց մեծ տոնախմբության, որին մասնակցում էին հարյուրավոր ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմի և մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ ու հյուրեր: Ներկա էին նաև Երևանի քաղաքապետ Ռ. Նազարյանը, մայրաքաղաքի

---

<sup>52</sup> «Էջմիածին» ամսագիր, 2002, թիվ Թ, էջ 116-118:

գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը, այլ պաշտոնատար անձինք և քանդակագործի հարազատներն ու բարեկամները:

Երևանի քաղաքապետը հավաքված լրագրողներին ասաց, որ բացվող հուշարձանախումբը մայրաքաղաքին նոր շունչ կհաղորդի և համահունչ կլինի համալսարանի հրապարակում տեղադրված մեր մյուս մեծերի հուշարձաններին:

ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն իր բացման խոսքում նշեց, որ տաղանդավոր քանդակագործ Ա. Սարգսյանի հանրահայտ «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» հուշարձանի բացումը մեր մայր կրթօջախի առջև պատմական կարևոր նշանակություն ունի ոչ միայն ուսանողության ու պրոֆեսորադասախոսական կազմի համար, այլև այն արժանի նվեր է մեր ողջ կրթական համակարգին: Այնուհետև ռեկտորը նշեց, որ Արա Սարգսյանի այս մտահղացման մարմնավորումը, ունի ավելի քան կեսդարյա պատմություն: Տարիներ շարունակ տարբեր պատճառներով ձգձգվել է այս գեղեցիկ քանդակի տեղադրությունը: Այդ մասին ժամանակին ակնարկել է նաև հեղինակը և խնդրել, որ այն դրվի մայրաքաղաքի արժանավայել տեղերից մեկում: Եվ այսօր՝ կես դար անց, կատարվում է նրա իղձը. նրա ստեղծագործությունների գլուխգործոցը դրվում է մեր մայր բուհի հրապարակում՝ իրեն արժանավայել վայրում: Թվում է, թե մեր առաջին մեծ ուսուցչապետերի այս հուշարձանը ստեղծված է հենց այստեղ կանգնեցվելու համար: Այն մարմնավորում է հայոց Ոսկեդարի և մեր օրերի միջև եղած կապը:

Համալսարանի ռեկտորը նշեց, որ այս քանդակը տեղադրվեց շնորհիվ քանդակագործի մեծ որդու՝ Արմեն Սարգսյանի: Նա իր միջոցներով ձուլել է տվել և հետամուտ եղել, որ այն տեղադրվի իրոք արժանավայել տեղում: Քանդակի վրա մեծ աշխատանք է կատարել նաև Ա. Սարգսյանի աշակերտ, քանդակագործ Աշոտ Անդրիասյանը: Հուշարձանը նախագծել է ճարտարապետ Ռոմեն Ջուլիանյանը, իսկ պատվանդանի հետ կապված աշխատանքներն իրականացրել է վարպետ Վարդան Ամբոյանը՝ իր որդիների հետ:

Այնուհետև հուշարձանի վրայից դանդաղորեն ցած սահեց ճերմակ պաստառը, և հավաքվածների հայացքի առաջ 3.5 մ բարձրություն ունեցող գեղեցիկ պատվանդանից վեր հառնեց շուրջ 2.5 մետրանոց բրոնզաձուլ վեհաշուք կոթողը՝ Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի լուսավոր

կերպարներով: Գիրքը, որ նրանց ձեռքին է, քանդակագործի մտահղացմամբ խորհրդանշում է գրականության ու մշակույթի ունեցած դերը մեր ժողովրդի կյանքում: Գիրքը, որ իր բացված էջերին կրում է հայոց այբուբենը, փաստորեն կապակցում է քանդակի երկու կերպարներին:

Այնուհետև շարականների հոգեզմայլ հնչյունների ուղեկցությամբ Սուրբ մյուռոնով օծվեց հուշարձանը: Օծումը կատարեց Աստվածաբանական ֆակուլտետի դեկան, պրոֆ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը: Սրբագան հայրն իր խոսքում ասաց. «Այսօր մենք հուշարձանի բացումը կատարեցինք Սրբալույս մյուռոնի օծմամբ: Հայ ժողովուրդը և Հայաստանյայց եկեղեցին ունեցած են երեք մեծ սուրբեր: Առաջինն է Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, որ քրիստոնեացուց հայությունը, երկրորդ և երրորդն են սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպ, որոնք քրիստոնեությունը հայացուցին, տվին գայն մեզ և մեր հոգիին մեջ բացին գեղեցիկ այն լեզուն, որ կկոչվի Հայկազյան լեզու»:

Երևանի գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր, պրոֆ. Ա. Իսաբեկյանն իր ելույթում նշեց, որ Արա Սարգսյանը մեր ժողովրդի հիանալի քանդակագործներից և գեղարվեստի ակադեմիայի հիմնադիրներից մեկն էր, որի աշակերտած սաները դարձել են հայտնի արվեստագետներ ու նաև մանկավարժներ: Այս տարի մենք նշելու ենք անվանի քանդակագործի ծննդյան 100-ամյակը, և այսօրվա հանդիսությունը ևս մի սուրբ է նրա վառ հիշատակին:

Պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Բ. Հարությունյանը նույնպես նշեց, որ տեղի ունեցող իրադարձությունը կարևոր նշանակություն ունի Հայաստանի մշակութային կյանքում, և բնավ էլ պատահական չէ, որ այս հուշարձանը կանգնեցվել է մեր համալսարանի գլխավոր մասնաշենքի առջև, որովհետև թե՛ մեր մեծերը և թե՛ 1919 թ. հիմնադրված համալսարանը լույս են բերում:

Բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող, անվանական կրթաթոշակառու Գևորգ Էմին-Տերյանն իր ելույթում նշեց, որ ուսանողների համար չափազանց պարտավորեցնող է մեր երկու մեծերի ոգեղեն ներկայությունը համալսարանի մոտ: Դա մեզ միշտ կհուշի, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում:

Քանդակագործ Աշոտ Անդրիասյանն իր ելույթում ասաց. «Այսօր մեզ համար հուզիչ օր է, քանի որ իրականացավ մեր մեծ ուսուցչի երա-

գանքը, ուսուցիչ, որի սաներն են եղել արվեստագետներ Սարգիս Մուրադյանը, Գուկաս Չուբարյանը, Արա Շիրազը, Սարգիս Բաղդասարյանը, Խաչատուր Իսկանդարյանը, Արշամ Շահինյանը, Յուրի Պետրոսյանը և շատ ուրիշներ, որոնցից շատերն այսօր ներկա են այստեղ»:

Երախտագիտության խոսք ասաց քանդակագործի ծոռնուկի Աստղիկ Ալթունյանը (Երևանի պետական բժշկական համալսարանի դեղագիտության ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանողուհի): «Այս հանդիսությունը մեծ խորհուրդ ունի,- ասաց նա,- քանի որ այն տեղի է ունենում իմ ականավոր պապի ծննդյան 100-ամյակի տարում և այստեղ՝ Երևանի պետական համալսարանում: Ես իմ երախտագիտությունն եմ հայտնում հուշարձանի տեղադրման բոլոր կազմակերպիչներին, ճարտարապետ Ռոմեն Զուլիակյանին, վարպետ Վարդան Ամրոյանին, բոլոր շինարարներին և մասնակիցներին»:

Վերջում, որպես երախտիքի տուրք, համալսարանի ռեկտորը ծաղկեպսակ դրեց նորաբաց հուշարձանի պատվանդանին: Ծաղկեպսակներ դրվեցին նաև Երևանի քաղաքապետարանի և ուսանողության կողմից, և մինչ ուշ երեկո մարդկանց նորանոր խմբեր էին գալիս բացված հուշակոթողը տեսնելու:

## **ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐ<sup>53</sup>**

Ինչպես հայտնի է, դեռ 1995 թ. դեկտեմբերի 14-ին կայացած գիտ-խորհրդի ընդլայնված նիստում էր որոշվել ԵՊՀ պատվավոր դոկտորի աստիճան շնորհել Ամենայն հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ին: Այդ առիթով ապրիլի 27-ին պաշտոնական այցով Երևանի պետական համալսարան ժամանեց Վեհափառ հայրապետը:

Նույն օրը՝ առավոտյան, հարգարժան հյուրը, այցելելով Աստվածաբանության ֆակուլտետ, հանդիպումներ ունեցավ ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի հետ, հանդես եկավ դասախոսությամբ՝ պատասխանելով ներկաների բազմաթիվ հարցերին: Իսկ ժամը 13.00-ին Նորին սրբությունը Աստվածաբանության ֆակուլտետի դեկան,

<sup>53</sup> «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատու:

պրոֆ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի և այլ բարձրաստիճան եկեղեցականների ուղեկցությամբ արդեն Երևանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքում էր, որտեղ նրան դիմավորեց մայր բուհի ղեկավարությունը՝ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի գլխավորությամբ:

Մեծ դահլիճում տեղի ունեցած հանդիսությունը՝ նվիրված Վեհափառին «ԵՊՀ պատվավոր դոկտոր»-ի վկայագիր հանձնելու արարողությանը, մասնակցում էին գիտխորհրդի անդամները, ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի բազմաթիվ ներկայացուցիչներ, հյուրեր այլ բուհերից ու գիտահետազոտական օջախներից:

Նիստը ներածական խոսքով բացելով՝ համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը դասախոսների և ուսանողների անունից բարի գալուստ մաղթեց Վեհափառին, նշեց, որ այս օրը համալսարանի համար օրհնաբեր է ու պանծալի:

«Համալսարանի հիմնադրման օրերին,- ասաց նա,- եվրոպական երկրներում կրթություն ստացած մեր երևելի մտավորականների կողքին եղել են նաև մեծանուն եկեղեցականներ, ինչպես՝ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), որի անվամբ կոչվեցիք Դուք՝ իբրև վարդապետ, եպիսկոպոս և կրկնակի կաթողիկոս. նախ՝ Մեծի Տանն Կիլիկիո, ապա և՝ Ամենայն հայոց: Եվ Ձերդ սրբության՝ Երևանի պետական համալսարան կատարած ներկա այցելությունն անմոռանալի է հատկապես, քանի որ մենք՝ համալսարանականներս, հանձինս Ձեզ, այսօր մեր հարկի տակ առաջին անգամ պատիվ ունենք ընդունելու ոչ միայն մեզ համար շատ սիրելի, հարգարժան մի մարդու, այլև (նույնպես առաջին անգամ համալսարանի պատմության մեջ) Ամենայն հայոց կաթողիկոսին»:

Մեկ անգամ ևս ողջունելով Ամենայն հայոց կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա-ին՝ Ռ. Մարտիրոսյանն ասաց, որ, Նորին վեհափառությանը Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտոր հռչակելու մասին գիտխորհրդի նախապես կայացրած որոշման համաձայն, վկայագրի հանձնումը պետք է կատարվի ոչ թե ընդունված կարգով՝ միայն գիտական խորհրդի ներկայությամբ, այլ համալսարանի այս մեծ դահլիճում բացառիկ հանդիսությամբ, բոլոր համալսարանականների մասնակցությամբ:

Օգտվելով առիթից՝ ռեկտորը համալսարանականների անունից շնորհավորեց Վեհափառին կաթողիկոսական գահակալության մեկամյա տարեդարձի առթիվ, ասաց, որ ակնկալում են այսուհետև մշտապես օգտվել նրա բարի, իմաստուն խորհուրդներից, արժանանալ նրա հովվապետական օրհնությանը: «Հատկապես մեր օրերում,- շարունակեց Ռ. Մարտիրոսյանը,- ազգային, բարոյական, մշակութային ու գաղափարական բոլոր արժեքների վերաիմաստավորման այս պայմաններում թերի կլիներ երիտասարդ սերնդի դաստիարակությունը՝ առանց եկեղեցու աջակցության, առանց մեր երկկողմանի նպատակասլաց գործունության»:

Ընդհանրացնելով իր այդ միտքը՝ ռեկտորն Ամենայն հայոց կաթողիկոսի ներկա այցելությունը որակեց որպես ազգի հոգևոր վերածննդի նպաստող շրջադարձային, դարակազմիկ մի իրադարձություն:

«Մեզ համար մեծ պատիվ է, Վեհափառ տեր, որ Դուք կաթողիկոսական Ձեր բարձրագույն հանգամանքի մեջ սիրահոծար համաձայնեցիք կոչվել նաև Երևանի պետական համալսարանի պատվո «դոկտոր»,- ասաց ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը և ակնածալի զգացումներով ու խորին հարգանքով Վեհափառին հանձնեց «Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի» վկայագիրը:

Շահե արքեպիսկոպոս Աճեմյանն իր ողջունի խոսքում մասնավորապես ասաց. «Մեծ հրճուանքի զգացումով կ'ողջունեն Ձերդ սրբոթիւնը Երևանի պետական համալսարանի այս սրահին մէջ, ուր հաւաքուած ենք բոլորս՝ ընդգրկելու համար Ձեզ կրթական բարձրագոյն այս հաստատութեան անձնակազմին մէջ՝ իբրև պատույ դոկտօր և բացառիկ կարգով դասախօս:»

Մա մեծ պատիւ և հարստութիւն է, որով կը ճոխանայ համալսարանը:

Պատուարժան պարոն ռեկտոր, յարգելի՛ դասախօսներ և սիրելի՛ ուսանողներ, այսօր դուք բոլորդ եկած եք ողջունելու հայ եկեղեցոյ բացառիկ այն ներկայացուցիչը, որ Ս. Գրիգոր Լուսավորչի գահէն կուգայ ձեզի և իրեն հետ կը բերէ անտեսանելի, բայց խորապէս զգալի ներկայութիւնը մեր ազգային եկեղեցոյ բոլոր այն հայրերուն, որոնք հայ գիրին, ոսկեղենիկ դասական լեզուին և մատենագրութեան հետ ստեղծեցին հայ մշակոյթը: Բաւ է յիշել այստեղ Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Սա-

հակ Պարթևի, Մովսէս Խորենացիի, Եղիշէի, Հովի. Մանդակոնիի, Դաւիթ Անյաղթի, Շիրակացիի, Ներսէս Շնորհալիի, Գրիգոր Նարեկացիի և Գրիգոր Տաթևացիի անունները՝ հոյլը եկեղեցոյ այդ մեծ ծառայողներուն, որոնք կերտեցին հայու ոգին:

Անոնք կատարեցին այդ մեծ հրաշքը Աստուծոյ անունով, որովհետև ամէն հայ եկեղեցական, հագնելէ առաջ սքեմը և ծածկելէ առաջ գլուխը վանականի վերարով, կը կատարէ երկու ուխտ. Աստուծոյ հետ՝ հաւատարմութեան ուխտ և իր ժողովրդին հետ՝ նուիրումի ուխտ:

Աստուծոյ հետ կապուիլը հաւատարմութեան ուխտով կը բարձրացնէ մարդը վեր ինքզինքէն, որպէսզի ինքզինքը և ամբողջ մարդկութեանը նայէ միտքի և հոգիի բարձունքներէն, ուր կը շողայ աստուածային լոյսը:

Իր ժողովուրդին հետ կապուիլը նուիրումի ուխտով կը ստեղծէ հոգևորականին սրտին մէջ անդիմադրելի տրամադրութիւն բաժանելու իր ժողովուրդին հետ ինչ որ ունի՝ իմաստութիւն, գիտութիւն, ազգային և համազգային գաղափարաբանութիւն, հաւատք, սէր, գութ և հովուական գորով»:

Պրոֆ. Շ. Աճեմյանը խոսեց նաև Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի կյանքի և գործունէության առանձին դրվագների, նրա եկեղեցական-մշակութային, գիտամանկավարժական և հասարակական գործունէության մասին՝ իր խոսքն համեմելով նրա հայրենամկեր ծառայություններից բերված օրինակներով:

«Այսօր,– իր եզրափակիչ խոսքում ասաց Շահե արքեպիսկոպոսը,– Երևանի պետական համալսարանը կ’ողջունէ ուխտեալ այն եկեղեցականը, որ ո՛չ միայն կաթողիկոսական իր հանգամանքով, այլև առաւել ևս իր անձին շնորհներով գերագոյնն է հայ եկեղեցոյ մէջ»:

«Հագիւ մեկ տարի՝ Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռին վրայ. Չեր խօսքին հնայքով, Չեր պերճախօսութեան կրակով, Չեր գիտութեան անհատնում պաշարով Դուք վերակենդանացուցիք հայ եկեղեցիին առաքելութիւնը Հայաստանի մեր հարազատ ժողովուրդին մէջ: Եւ ասիւ, եկամ ենք այսօր գիտութեան այս կաճառէն ներս արձանագրելու բոլորին միտքին մէջ Ս. Մեսրոպ Մաշտոցի ձեռքով գրուած հայատառ առաջին բառերը՝ Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ:

Բարի ըլլան անտարանիչի Ձեր քայլերը գիտութեան այս լեռան բարձունքին, որ հայոց այս համալսարանն է:

Բարի ըլլան «հանճարոյ բանքը», որ կը բերեն և, կը յուսանք, պիտի բերեն հաճախ՝ իմաստութեան ճանաչումը և հայրական խրատը:

Բարի ըլլայ Ձեր գալուստը, Երևանի պետական համալսարանի պատուոյ դոկտօր՝ Տ. Տ. Գարեգին Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

ՀՀ կառավարությանն առընթեր Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) տնօրեն, ակադեմիկոս Ա. Արևշատյանն իր ողջույնի խոսքում, անդրադառնալով Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի հայրենանվեր գործունեությանը, նշեց, որ հատկապես իրենց՝ Մատենադարանի աշխատակիցներին, վաղուց է հայտնի Վեհափառ հայրապետի նվիրվածությունը մեր եկեղեցուն, գիտությանն ու մշակույթին, հոգատարությունը մշակութային կոթողների նկատմամբ:

«Շուտով լրանում է Հայաստանում (առաջինը աշխարհում) քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունման ու տարածման 1700-ամյակը,- շարունակեց նա:- Եվ Վեհափառի ամենօրյա ուշադրությունն ու հոգատարությունը Մատենադարանի հոգսերի նկատմամբ մեզ պարտավորեցնում է ամենայն լրջությամբ և մեծ պատասխանատվությամբ համախմբել մեր ուժերն ու նախապատրաստվել Հայոց դարձի՝ այդ նշանակալի իրադարձության 1700-ամյակը մեծ շուքով նշելու համար»:

Ա. Արևշատյանը նշեց նաև, որ վերջինս, ունենալով համաքրիստոնեական, համաաշխարհային հնչեղություն, դադարում է զուտ հայկական երևույթ լինելուց: Հանգամանք, որն էլ ավելի է պարտավորեցնում մեզ լինել հպարտ և առավելագույն նվաճումներով ներկայանալ աշխարհին:

Վերջում ելույթ ունեցողը Մատենադարանի անձնակազմի անունից շնորհակալություն հայտնեց ԵՊՀ գիտխորհրդին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ին պատվավոր դոկտորի գիտական աստիճան շնորհելու համար, ջերմորեն շնորհավորեց Նորին սրբությանը՝ մաղթելով նրան արևշատություն:

Հայ բանասիրական ֆակուլտետի դեկան, պրոֆ. Գ. Անանյանը ևս իր ողջույնի խոսքում բարձր գնահատեց Ամենայն հայոց կաթողիկոսի ծառայություններն ու նվիրվածությունը մեր եկեղեցուն ու մշակույթին: Ասաց, որ Վեհափառը Սփյուռքում տասնամյակներ շարունակ եղել է հայ գրքի ու գրականության տարածող, փորձառու գրահրատարակիչ,



մեծամուն գիտնական և ուսուցիչ: «Եվ իր այդ ուսուցչապետությունն ու հայրենանվեր գործունեությունը,- շարունակեց Գ. Անանյանը,- այսօր նա իրականացնում է մայր հայրենիքում՝ որպես հայ եկեղեցու Վեհափառ ու Սրբազան առաջնորդ»:

Պատվավոր դոկտորի դիպլոմ ստանալու առթիվ պրոֆ. Գ. Անանյանը քաջատղջություն ու երկարակեցություն, հայրենանվեր գործունեության մեջ նորանոր հաջողություններ մտաբեց նրան:

Ուսանողության անունից Վեհափառին ուղերձ հղեց Աստվածաբանության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող Լևոն Պետրոսյանը: Նա մասնավորապես ասաց. «Վեհափառ Տեր, մեծարգո պարոն ռեկտոր, հարգարժան դասախոսներ, սիրելի՛ համալսարանականներ, ես անչափ ուրախ եմ, որ Երևանի պետական համալսարանի ուսանողների անունից շնորհավորական խոսք եմ ուղղում Ամենայն հայոց կաթողիկոսին:

Վեհափառ Տեր, ես մեկն եմ Երևանի պետական համալսարանի այն երկու ուսանողներից, որոնք բարձրացան Սուրբ Էջմիածնի տաճարի խորան և մասնակցեցին Ունվվայի արարողությանը: Այդժամ ես ապրեցի իմ կյանքի ամենաերջանիկ վայրկյանները: Վայրկյաններ, որոնք ինձ հոգևոր մեծ ուժ պարգևեցին և էլ ավելի ամրապնդեցին իմ հավատը:

Աստվածաբանության ֆակուլտետի բացման օրից ի վեր՝ յուրաքանչյուր անգամ, երբ լսում ենք Ձեր հայրապետական խոսքը, լինի դա եկեղեցու բեմից, թե հեռուստացույցի էկրանից, մեր հոգին լուսավորվում և լիցքավորվում է Ձեր իմաստությամբ, որը կարող է բխել Լուսավորչի հաստատած եկեղեցուց: Եվ ես երջանիկ եմ հայտարարելու, որ մեզ ավելի լավ ճանաչելու և մեր հայացքը միշտ հոգևոր բարձունքներն ուղղելու Ձեր թելադրանքն արդեն իսկ քայլ առ քայլ դառնում է մեր բարոյական կարգախոսը:

Վեհափառ Տեր, այս պաշտոնական առիթով շնորհավորության մեր խոսքին ավելացնում ենք նաև շնորհակալության խոսքը: Շնորհակալ ենք Ձեզ այն ուշադրության համար, որ Դուք ցուցաբերում եք համալսարանի ուսանողների նկատմամբ: Այդ երախտագիտության զգացումներով էլ մոտենում եմ համբուրելու Ձեր սուրբ աջը և ակնկալում Ձեր հայրական օրհնությունը»:

Մեծ ուշադրությամբ լսվեց Վեհափառի պատասխան խոսքը: Շնորհակալություն հայտնելով Երևանի պետական համալսարանի ռեկտորին, գիտխորհրդի անդամներին, բոլոր համալսարանականներին՝ իր նկատմամբ ցուցաբերած մեծ հարգանքի և ԵՊՀ-ի պատվավոր դոկտորի գիտական աստիճան շնորհելու համար՝ Նորին սրբությունը բոլորին մաղթեց երջանկություն, հաջողություններ ուսման մեջ, գիտամանկավարժական աշխատանքներում և հասարակական ու անձնական կյանքում. «Ավելի քան վաթսուն տարիների իմ կյանքում այս պահն անփոխարինելի զգացումների, հուզական ու հոգեկան ապրումների բացառիկ պահ է: Իսկապես, բարձր պատիվ եմ համարում լինել պատվավոր դոկտորն այնպիսի մի կրթական հաստատության, ինչպիսին Երևանի պետական համալսարանն է: Այս առթիվ իմ խոր երախտագիտությունն եմ ուզում արտահայտել համալսարանի գիտական խորհրդին՝ այս բարձր կոչումին արժանացնելու և այս գեղեցիկ հանդիպումը կազմակերպելու կապակցությամբ», – ասաց նա:

Այնուհետև Ամենայն հայոց կաթողիկոսը հանդես եկավ դասախոսությամբ՝ անդրադառնալով կրոնի և մշակույթի փոխհարաբերությունների խնդրին: Քննեց ու վերլուծեց բազմաթիվ դրույթներ՝ կապված մշակույթի զանազան ըմբռնումների հետ՝ դրանց տալով նորովի մեկնաբանություններ:

«Որևէ ժողովուրդ չի կարող զոյատևել առանց հավատի և հոգևոր արժեքների,- նշեց Նորին սրբությունը,- չի կարող բարգավաճել, եթե չկարողանա տարբերակել իսկական արժեքները կեղծ արժեքներից: Ազգը չի ապրի, եթե չլինի հոգու և մարմնի ներդաշնակություն՝ մտքի ղեկավարությամբ: Եվ համալսարանն է եղել ու կա մեր ազգի իսկական արժեքները պահպանող և դրանք հաջորդ սերունդներին փոխանցող կառուրագույն դարբնոցը»:

«Այս հանդիպումով Մայր Աթոռի և համալսարանի միջև մի ոսկե կամուրջ գցվեց,- իր խոսքը եզրավակելով՝ ասաց նա,- գործուն, բանուկ, կենդանի և ստեղծարար կամուրջ՝ համալսարանի և Գևորգյան ճեմարանի միջև, որով սկիզբ կդրվի մի արդյունավետ գործակցության՝ վասն մեր ազգի ու պետության, Հայաստանյայց սուրբ եկեղեցու բարգավաճման»:

Վեհափառ հայրապետի՝ փաստերով առլեցուն, խոր գիտականությամբ ու կուռ միասնությամբ օժտված խոսքը՝ ներկաների կողմից ընդունվեց ջերմորեն:

Հանդիսավոր նիստն ամփոփելով՝ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը կրկին ջերմ բարեմաղթանքներ հղեց Վեհափառին՝ նրան ցանկանալով հայ եկեղեցու գահակալության երկար տարիներ:

Հանդիպումն ավարտվեց ԵՊՀ ուսանողների ուժերով կազմակերպված ճոխ համերգով:

## **ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՅՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**<sup>54</sup>

Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը նոյեմբերի 18-ին բարեբախտություն ունեցան սեփական հարկի ներքո հյուրընկալելու Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսին: Առիթը Վեհափառ հոր գահակալության 5-րդ տարեդարձն էր: Հանդիպմանը մասնակցում էին նաև բարձրաստիճան հոգևորականներ ու եկեղեցական գործիչներ, մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության թղթակիցներ, հյուրեր:

ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, իր բացման խոսքում ջերմորեն ողջունելով Վեհափառին Մայր համալսարան այցելելու առթիվ և հանգամանորեն անդրադառնալով նրա գործունեությանը գահակալության հինգ տարիների ընթացքում, մասնավորապես ասաց. «Վերջերս լրացավ Նորին սուրբ օծություն Տեր Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օծման և գահակալության հինգ տարին: Այդ առիթով խնդրեցիք Վեհափառ հայրապետին այցելել Երևանի պետական համալսարան: Թույլ տվեք բոլորիս անունից ջերմորեն ողջունել Վեհափառ հորը հայոց մայր կրթօջախում:

Միանգամից նշեմ,- շարունակեց ռեկտորը,- որ Վեհափառ հայրապետի գահակալության անցած հինգ տարիների ընթացքում մեծածավալ աշխատանքներ են կատարվել: Ահավասիկ դրանցից մի քանիսը: Ամենայն հայոց 132-րդ կաթողիկոսի գահակալության սկիզբը համընկավ մեր եկեղեցու գործունեության ամենապատասխանատու շրջանին:

<sup>54</sup> «Էջմիածին» ամսագիր, 2004, թիվ ԺԱ - ԺԲ, էջ 122-125:

Ամենից առաջ այն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակն էր՝ մի հոբելյան, որն ուներ բարդ և ընդգրկուն միջոցառումների հարուստ ծրագիր: Այնուհետև բազում նախաձեռնություններ և միջոցառումներ, որոնցից են՝ միջեկեղեցական կապերի ընդլայնում, հովվապետական այցելություններ, հոգևոր և ազգային խնդիրներին նվիրված գիտաժողովներ, քրիստոնեական դաստիարակության կենտրոնի ստեղծում, երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի անվան գիտական կենտրոնի հիմնադրում, ուսումնական գործունեություն, նոր պարբերականների հրատարակության ձեռնարկում և այլն, և այլն»:

«Վեհափառի նախաձեռնությամբ և աջակցությամբ իրագործվեցին ազգանպաստ բազում ծրագրեր,- շարունակեց ռեկտորը,- «իրականացվեցին 25 նոր եկեղեցիների կառուցման և հների վերանորոգման աշխատանքները, ընդլայնվեցին Մայր Աթոռի տարածքները, ավարտվեց Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի համալիրի շինարարությունը, հիմնովին վերակառուցվեց և վերականգնվեց Գևորգյան հոգևոր ճեմարանը: Ձեռնարկումների շարքում ուրույն տեղ ունեն բարեգործական ճաշարանների հիմնումը, մանկական ճամբարների, նոր հիվանդանոցի կառուցումը, «Շողակաթ» հեռուստաստուդիայի ստեղծումը և այլն:

Շատ ենք կարևորում Վեհափառ հայրապետի գործունեությունը հատկապես ուսումնական և գիտական ասպարեզում: Ինչպես գիտեք,- շեշտեց ռեկտորը,- Ամենայն հայոց կաթողիկոսի նախաձեռնությամբ Հայաստանի հանրակրթական դպրոցներում իրականացվում է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը համապատասխան շքեղ դասագրքերով:

Կրթության հանդեպ Վեհափառ հայրապետի նախանձախնդրության արտահայտություններից է նաև այն,- ավելացրեց ելույթ ունեցողը,- որ երիտասարդ հոգևորականների մասնագիտական բարձր պատրաստվածության նպատակով կազմակերպվում է նրանց գործուղումն աշխարհի տարբեր համալսարաններ, ինչպես նաև մեր համալսարան: Շատ կարևոր նախաձեռնություն է հոգևոր սպասավորների շարքերն արագ համալրելու նպատակով քահանայական երկամյա լսարանի ստեղծումը, որտեղ ուսումնառության են գալիս բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդներ: Կարևոր իրադարձություն է Գևորգյան հոգևոր ճե-

մարանի՝ նաև աստվածաբանական համալսարանի կարգավիճակ ստանալը»:

Անդրադառնալով հայագիտության զարգացման գործում Էջմիածնի խաղացած դերին՝ ռեկտորը նշեց, որ այդ գիտաճյուղը միշտ եղել է Հայոց եկեղեցու հոգածության առարկա: Այդ բնագավառում լուրջ և հետևողական ուսումնասիրությունների կազմակերպման ուղղությամբ հիմնավոր քայլեր էր ձեռնարկել երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսը: Դրանք ավարտին հասցվեցին Գարեգին Բ-ի գահակալության օրոք: Ստեղծվել է «Գարեգին Ա» հայագիտական և աստվածաբանական կենտրոնը, որի գրադարանն այսօր ունի ավելի քան 30.000 կտոր գրականություն, որից 200-ը՝ հնատիպ:

Գարեգին Բ կաթողիկոսի գահակալության անցած հինգ տարիների ընթացքում բարձր մակարդակով կազմակերպվեցին մի շարք գիտաժողովներ, ինչպես, օրինակ, 2000 թ. հրավիրված «Քրիստոնեություն և իրավունք» թեմայով գիտաժողովը, Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու և Սուրբ Էջմիածնի հիմնադրման 1700-ամյակներին նվիրված միջազգային գիտաժողովը, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի 1000-ամյակի առթիվ հրավիրված գիտաժողովը, 2003 թ. «Հովհաննես Օճնեցին և իր ժամանակը» թեմայով անցկացված գիտաժողովը:

Վեհափառ հայրապետի օրհնությամբ և աջակցությամբ էր դարձյալ, որ Երևանում 2003 թ. սեպտեմբերին Հայաստանի գիտությունների ակադեմիան ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի համատեղ ջանքերով կազմակերպվեց Հայագիտական միջազգային առաջին հանձնաժողովը, որտեղ կարդացված զեկուցումներն ընդգրկող մեծածավալ հատորը լույս կտեսնի մոտ օրերս: Ավելացրեց ակադ. Ռ. Մարտիրոսյանը ավելացրեց, որ գիտական աշխատանքների հրապարակման առումով մեծ դեր ունի նաև «Էջմիածին» ամսագիրը: Նա նշեց նաև, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ԵՊՀ-ի միջև եղած կապերն ու համագործակցությունն արդեն 85 տարվա պատմություն ունեն: Այդ ընթացքում հայ գիտության ու մշակույթի երկու կենտրոնները միշտ աջակցել ու սատարել են միմյանց՝ ի փառս մեր ժողովրդի հոգևոր արժեքների պահպանման ու հարստացման:

«Հարգելի՛ ներկաներ,- դիմելով դահլիճում գտնվողներին՝ ակադ. Ռ. Մարտիրոսյանն ասաց,- Վեհափառ հայրապետը վերջին տարիներին լայնորեն բացել է Սուրբ Էջմիածնի դռները մեր մտավորականության առջև, որի վառ ապացույցը վեհաբանում հաճախակի կազմակերպվող միջոցառումներն են՝ նվիրված հայ մշակույթի, գիտության ու կրթության երախտավորներին, ամսագրերի ու նշանակալից տարբեր գրքերի շնորհանդեսներին: Նման ձեռնարկումները հայ մտավորականությանը ուժ, հավատ և վստահություն են ներշնչում՝ նվիրումով, եռանդով ու հաստատակամությամբ գործելու՝ ի փառս մեր հայրենիքի ու ժողովրդի բարօրության»:

Իր գնահատանքի խոսքից հետո ակադ. Ռ. Մարտիրոսյանը հայտարարեց մայր կրթօջախի գիտխորհրդի որոշումը՝ Ամենայն հայոց կաթողիկոսին հայրենասիրական, հասարակական-մշակութային գործունեության և քրիստոնեության քարոզչության ասպարեզում ձեռքբերած ակնառու նվաճումների համար ԵՊՀ պատվավոր դոկտորի գիտական աստիճան շնորհելու մասին: Այա նա Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսին հանձնեց գիտական այդ բարձր տիտղոսի վկայագիրը:

Շնորհավորելով Վեհափառին՝ ԵՊՀ դասախոսներ, հայոց պատմության ամբիոնի դոցենտ Պետրոս Հովհաննիսյանը, աստվածաբանության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռաֆիկ Վարդանյանն ու հայ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆ. Սամվել Մուրադյանը նշեցին, որ հայոց դպրությունը միշտ էլ գտնվել է եկեղեցու հովանու ներքո, և նրա Հովվապետին ԵՊՀ պատվավոր դոկտորի գիտական աստիճանի շնորհումը կնպաստի եկեղեցու և համալսարանի կապերի էլ ավելի ամրապնդմանը, ազգանպաստ խնդիրների լուծման ճանապարհին համատեղ գործունեության ծավալմանը:

Այնուհետև հանդիպմանը ներկա համալսարանականներին իր օրհնության խոսքն ու պատգամը հղեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը: Նորին սրբությունն իր ուրախությունը հայտնեց Երևանի պետական համալսարանում գտնվելու և բարձր պարգևի շնորհման համար: Վեհափառ հայրապետն իր գնահատանքը հայտնեց դասախոսներին՝ իրենց նվիրյալ ծառայության համար, որ իրականացնում են հայորդիների կրթման և դաստիարակման սրբազան գործում:

Հայոց հայրապետն անդրադարձավ Հայ եկեղեցու ներկայիս առաքելությանը, իրականացվող գործունեությանը, եկեղեցու առջև ծառայած խնդիրներին ու մարտահրավերներին, երիտասարդների մասնակացությանը եկեղեցական կյանքին. «Այսօր նոր ժամանակներ է ապրում Հայ եկեղեցին Հայաստանի անկախ պետության հովանու ներքո: Եկեղեցին հնարավորություն է ստացել վերակազմակերպելու և շարունակելու իր առաքելությունը մեր կյանքից ներս, որպեսզի վերանորոգված կյանքով կարողանա լիարժեք իր ծառայությունը մատուցել մեր ազգին ու հայրենիքին: Բայց եկեղեցին քարեղեն կառույց չէ. եկեղեցին հավատացելոց համախմբումն է, Քրիստոսի հավաքքով միաբանված հայ ժողովրդի ամբողջականությունն է:

...Մեր ու մեր եկեղեցականության ջանքերը նպատակաուղղված են հիմնականում եկեղեցական կյանքի ավանդական կառույցների վերակերպմանը, որոնց շնորհիվ եկեղեցին պիտի կարողանա վերադառնալ իր ամբողջական մասնակցությունը բերել մեր ժողովրդի կյանքին, ներկայություն դառնալ հայորդիների հոգիներից ներս, որպեսզի նորանկախ պետության կյանքը գուրկ չլինի հոգևոր շաղախից, որպեսզի մեր պետության հիմերը ամրորեն հաստատված լինեն հոգևոր քարոզական արժեքների վրա, որոնք երաշխիքն են մեր գոյության, մեր լինելիության և հարստության: 1700 տարիներ ապրել և հարստել էնք շնորհիվ քրիստոնեական մեր հավատի, այդ հավատից ծնունդ առած և նույն այդ հավաքքով կերտված հոգևոր արժեքների:

...Ընդրել էք համախարանի մեջ ուսանելու այս մեծ հնարավորությունը, որպեսզի չե՛ր օգրակար ծառայությունը բերեք մեր ազգին ու մայր հայրենիքին, որպեսզի հայորդին ունենա երջանիկ ու ապահով կյանք, հայրենին լինի շեն, բարգավաճ ու հզոր: Մեր առաքելությունը նույնպես նպատակաուղղված է այս զաղափարների իրագործմանն ազգային մեր կյանքից ներս: Ի՞նչը կարող է մեզ բաժանել, որպեսզի մենք մեկտեղենք մեր ջանքերը, վերադառնալ համախմբվենք ազգային մեր նվիրական հաստատության՝ Հայոց առաքելական սուրբ եկեղեցու հարկի ներքո ու, առ Աստված ապավինած, միասնաբար դուրս գանք հաղթահարելու այն բոլոր մարտահրավերները, որոնք այսօր ծառայած են մեր հայրենիքի ու մեր ժողովրդի առջև: Եկեղեցին միայն եկեղեցականությունը չէ, եկեղեցին հավատացյալ հայորդին է, հայ ժողովրդի ամ-

*բողջությունն է: Ուրեմն հայրապետիս հորդորն ու պատգամն է, որ չեր հայացքը դարձնեք դեպի նվիրական սուրբ օջախը հայոց, մասնակցեք, որ չեր րեղն ու դերը ունենաք հայ եկեղեցական կյանքից ներս և չեր առաջնորդի ու հովվի հետ բանաք նոր ճանապարհը Հայ առաքելական եկեղեցու սպասավորության մեր ազգին և հայրենիքին»:*

Հայրապետական իր պատգամի ավարտին Վեհափառ հայրը ԵՊՀ ռեկտորին նվիրեց Ս. Էջմիածնի հիմնադրման 1700-ամյակի հոբելյանական հուշամեդալ և Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում» աշխատության քառահատորը: Ապա հայոց հայրապետը պատասխանեց համալսարանականների բազմաբնույթ հարցերին: Իսկ այն հարցին, թե ինչ կարծիքի է Վեհափառն ինքը ժամանակակից հայ երիտասարդության մասին, Նորին սրբությունը պատասխանեց. «Ես սիրում եմ ձեզ»:

Հանդիպումն ավարտվեց Տերունական աղոթքով և հայրապետական օրհնությամբ ու մաղթանքով:





**ՄԱՍ ՉՈՐՐՈՐԳ**

**ԱՆՎԱՆԻ ԴԱՍԱԽՈՄՆԵՐԻ ԳԻՄԱՆԿԱՐՆԵՐ**



## **ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽՈՍԸ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ<sup>55</sup>**

Նոր ժամանակների արևելահայ հոգեբանական դպրոցի հիմնադիրներից է Սիրական Տիգրանյանը, որի անունը տասնամյակներ շարունակ հանիրավի կերպով մատնված է եղել մոռացության: Այնինչ նա ոչ միայն Հայաստանի համալսարանի առաջին երախտավոր դասախոսներից մեկն է եղել, այլև ժամանակին շատ բան է արել այդ համալսարանի կազմակերպման ու կայացման համար: Առաջինը նա է համախմբել հայ մտավորական կարող ուժերին՝ օգնելու նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը՝ մայրաքաղաք Երևանում հիմնադրելու ազգային համալսարան: Նրա անմիջական նախաձեռնությամբ դեռևս 1918 թ. հոկտեմբերի կեսերին այդ նպատակով Թիֆլիսում գումարվել է մտավորականության ընդլայնված խորհրդակցություն, որտեղ քննարկվել են Հայաստանում բարձրագույն կրթության տարբեր տիպի դպրոցներ հիմնադրելու հարցեր, և այդ համաժողովի արդյունքները նա ներկայացրել է ՀՀ կառավարությանը:

Ս. Տիգրանյանի ավանդը մեծ է եղել նաև Հայաստանի անկախության վերականգնման և պետականության հաստատման ու ամրապնդման գործում: Նա եղել է ՀՅԴ կուսակցության ժրաջան անդամներից մեկը: 1918-1919 թթ. զբաղեցրել է Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարի, հանրային կրթության և արվեստի նախարարի, խորհրդարանի անդամի և փոխնախագահի (ընտրվել է 1919 թ. սեպտեմբերի 16-ին) բարձր պաշտոնները՝ ամենուր ծավալելով հայրենանվեր գործունեություն:

Սակայն, ցավոք, նրա կյանքն ու գործունեությունը դեռևս պատշաճ մակարդակով չեն ուսումնասիրվել: Այնինչ Ս. Տիգրանյանն ունի հարուստ և ուսանելի կենսագրություն ու գիտական ծանրակշիռ ժառանգություն, որի զգալի մասը ցարդ մնում է անտիպ:

---

<sup>55</sup> Արդիականության մարտահրավերները. ԵՊՀ 95-ամյակին և Փոլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին (1964-2014 թթ.) նվիրված միջազգային գիտաժողովի (2014 թ. հոկտեմբերի 10-12) նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2014, էջ 136-139:

Սիրական Տիգրանյանը Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) Տիգրանյանների հանրահայտ գերդաստանից էր, երբայրն էր նշանավոր կոմպոզիտոր Նիկոլայոս Տիգրանյանի: Ծնվել է 1875 թ. ցարական բանակի փոխգնդապետ Թադևոս Տիգրանյանի ընտանիքում՝ Ալեքսանդրապոլում: Ավարտել է Թիֆլիսի արական առաջին գիմնազիան, իսկ բարձրագույն կրթությունը ստացել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, որն ավարտել է 1899 թ. և 1900 թթ. վերադարձել հայրենիք: Պաշտոնավարել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որտեղ դասավանդել է հոգեբանություն և տրամաբանություն, հայ հին իրավունքի պատմություն, եկեղեցական իրավունքի դասընթացները՝ միաժամանակ զբաղվելով գիտահետազոտական աշխատանքով, մասնավորապես՝ հայոց հին իրավունքի և հայկական կանոնագրքերի ուսումնասիրությամբ:

Ժամանակին «Արարատ» հանդեսում Ս. Տիգրանյանի աշխատասիրությամբ լույս են տեսել կանոնների մի շարք բնագրեր: Մյուսիսը վարդապետի հետ հեղինակել է «Կանոնք Դունայ Սուրբ Ժողովին» (Վաղարշապատ, 1905) գիրքը: Հետագա տարիներին ևս շարունակել է զբաղվել հայոց հին իրավունքի, մասնավորապես՝ հայկական կանոնագրքերի հետազոտությամբ: 1918 թ. Պետրոգրադում ռուսերեն հրատարակել է «Հին հայկական կանոնների գիրքը» արժեքավոր աշխատության առաջին հատորը, ռուսերենից կատարել է մի շարք թարգմանություններ:

Ս. Տիգրանյանը 1906 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյանի կոնդակով նշանակվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ: Նույն տարում ընտրվել է Ռուսաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի՝ Պետական երկրորդ դումայի անդամ, գրել է «Դաշնակցական պատգամավորները երկրորդ պետական դումայում» գրքույկը (Թիֆլիս, «Յառաջի» գրադարան, № 57, 1907), ինչպես նաև «Հայոց եկեղեցական տարրական դպրոցների ուսումնական ծրագիրը» (Թիֆլիս, 1907):

Հետագա տարիներին Ս. Տիգրանյանը շարունակել է զբաղվել գիտամանկավարժական և հասարակական-քաղաքական գործունեությամբ: Մեծ եղեռնի օրերին նրան տեսնում ենք Վանում, որտեղ Ա. Մասնուկյանի հետ կազմակերպում է Վասպուրականի հայ ազգաբնակչու-

թյան ինքնապաշտպանությունը, որից հետո ընտրվում է նորաստեղծ Վասպուրականի նահանգի փոխնահանգապետ:

Վանի անկումից հետո Ս. Տիգրանյանը վերադառնում է Թիֆլիս և շարունակում իր հասարակական-քաղաքական գործունեությունը, նպաստում Հայաստանի առաջին հանրապետության կայացման գործին, որի հռչակումից հետո, ինչպես նշվեց վերը, նրա կառավարության կազմում զբաղեցնում է մի շարք բարձր պաշտոններ: Իսկ 1918 թ. ամռանը նա գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի համալսարանի բացման աշխատանքներին: Եվ վերջինիս բացումից հետո ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանի հրամանով 1920 թ. փետրվարի 6-ին նշանակվել է նրա պատմալեզվաբանական ֆակուլտետի փիլիսոփայության դոցենտի պաշտոնակատար:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց և համալսարանի վերակառուցումից հետո ՀԽՍՀ լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի՝ 1920 թ. դեկտեմբերի 28-ի հրամանով Ս. Տիգրանյանը հաստատվել է որպես հոգեբանության և հայ իրավունքի պատմության դասախոս, իսկ 1921 թ. հունվարի 2-ին ընտրվել է նորաստեղծ Հասարակագիտական ֆակուլտետի ղեկան:

1921 թ. փետրվարյան խռովության ճնշումից հետո Ս. Տիգրանյանը՝ որպես այդ խռովության մասնակից, բանտարկությունից խուսանավելով, անցել է Իրան, սակայն շուտով վերադարձել է Երևան և առանց որևէ խոչընդոտի շարունակել դասավանդել Երևանի ժողովրդական համալսարանում՝ վերսկսելով նաև իր ընդհատված գիտահետազոտական աշխատանքները, և ձեռագրի իրավունքով լույս է ընծայել «Հայոց իրավունքի պատմության ներածություն» (Եր., 1923) ուսումնական ձեռնարկը: Գրել է նաև Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» և «Հայոց կանոնագրքի» համեմատական վերլուծությանը նվիրված մի աշխատություն, որը տպագրվել է Թիֆլիսում («Судебная книга Мхитара Гоша и «Книга канонов»», «Известия Кавказского историко-археологического института в Тифлисе», том 3, Тифлис, 1925):

Ս. Տիգրանյանը 1923 թ. տեղափոխվել է Ալեքսանդրապոլ և զբաղվել մանկավարժությամբ, տեղի դպրոցներում ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդել է մանկավարժություն և հոգեբանություն, իսկ 1935 թ. կրկին վերադարձել է

Երևան ու շարունակել իր գիտահետազոտական աշխատանքը՝ ավարտելով հայոց հին կանոնագրքերին նվիրված մենագրության 2-րդ հատորը, որը ցարդ մնում է անտիպ: Նա գրադվել է նաև արևելյան երաժշտության տեսական հարցերով և թողել է իր ավագ եղբոր՝ կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանի ստեղծագործություններին նվիրված մի ծավալուն աշխատություն, որը նույնպես մնում է անտիպ: Նա գրել է տարարնույթ այլ աշխատանքներ ևս, որոնցից հատկապես արժեքավոր է «Армяне» ուսումնասիրությունը, որը ժամանակին տպագրվել էր Ա. Ի. Կոստելյանսկու խմբագրությամբ լույս տեսած ժողովածուում («Формы национального движения в современных государствах. Австро-Венгрия, Россия, Германия», Санкт Петербург, 1910, էջ 495-525):

Ս. Տիգրանյանը Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Երևանի համալսարանում դասախոսելու տարիներին գրել, թարգմանել ու խմբագրել է մի շարք ուսումնական ձեռնարկներ: Նա դեռ 1904 թ. ռուսերենից հայերեն էր թարգմանել Ուիլյամ Ջեմսի «Հոգեբանության սկզբունքները» աշխատության «Հույզ» գլուխը, իսկ 1920 թ. թարգմանել և որպես ուսումնական ձեռնարկ Ալեքսանդրապոլում հրատարակել էր նույն աշխատության այլ գլուխներ՝ շուրջ 7 մամուլ ծավալով, և դրան գուգահեռ, գրել իր դասախոսություններն ու լույս ընծայել առանձին գրքույկով՝ 3 մամուլ ծավալով: Սրանք Հայաստանի համալսարանի ցարդ հայտնի առաջին դասագրքերն են, որոնք ստեղծվել են նրա կողմից: Խորհրդային շրջանում ևս նա է գրել առաջին ուսումնական ձեռնարկը՝ իրավագիտության գծով: Ս. Տիգրանյանը հեղինակ է նաև մի շարք այլ աշխատությունների, որոնք տպագրվել են «Արարատ» հանդեսում և այլուր: Նրա «Армяне» աշխատությունը վերահրատարակվել է Երևանում 1992 թ.: Իսկ 1918 թ. Պետերբուրգում ռուսերեն հրատարակվել է «Հին հայկական կանոնների գիրքը» ուսումնասիրությունը: Նա թողել է գիտական անուրանալի ժառանգություն, որոնք ցարդ մնում են անհայտության մեջ:

Ս. Տիգրանյանը քաղաքական մեղադրանքներով ձերբակալվել է հինգ անգամ, որից երկուսը՝ ցարական կառավարության, իսկ երեքը՝ խորհրդային իշխանության կողմից՝ մեղադրվելով համապատասխանաբար «հեղափոխական գործունեության համար» և «հակահեղափոխական նախկին գործունեության համար»: Վերջին՝ հինգերորդ ձերբակալությունը, որ տեղի է ունեցել 1937 թ., եղել է ճակատագրական. նույն

տարվա դեկտեմբերի 5-ին ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմատի «Եռ-  
յակի» որոշմամբ դատապարտվել է մահապատժի՝ անձնական գույքի  
բռնագրավմամբ, որն ի կատար է ածվել դեկտեմբերի 17-ին: Արդարաց-  
վել է 21 տարի անց՝ 1958 թ. հոկտեմբերի 20-ին:

Արդ Երևանի համալսարանի անդրանիկ ուսումնական ձեռնարկնե-  
րի հեղինակ ու թարգմանիչ, անվանի հոգեբան ու իրավագետ, պետա-  
կան-հասարակական նշանավոր գործիչ Սիրական Տիգրանյանի անու-  
նը պետք է իր արժանի տեղն ունենա մեր մայր կրթօջախի հիմնադիր  
երախտավորների անունների կողքին: Մեզ թվում է՝ ճիշտ կլինի, եթե  
Ուիլյամ Ջեմսի «Հոգեբանություն» գրքի՝ նրա կողմից կատարված թարգ-  
մանությունը, որը լույս է տեսել շուրջ մեկ դար առաջ, վերահրատարկվի՝  
դրան որպես հավելված կցելով նաև 1904 թ. Վաղարշապատում Մայր  
Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակությամբ լույս ընծայված նույն հեղի-  
նակի ու թարգմանչի «Յոյզ» («Հույզ») վերտառությամբ գրքույկը, ինչ-  
պես և «Դասախոսություններ հոգեբանությունից» ձեռնարկը. բոլորը  
հրատարակել՝ մեկ գրքով, անհրաժեշտ առաջաբանով, ծանոթագրու-  
թյուններով ու մասնագիտական մեկնաբանություններով: Այն մի յուրա-  
տեսակ նվեր կլինի Երևանի համալսարանի հիմնադրման մոտալուտ  
100-ամյակին:

## **ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳՐԱԿԱՆԱԳԵՏՆ ՈՒ ԳԱՍԱԽՈՍԸ<sup>56</sup>**

*(Հրանտ Թամրազյանի ծննդյան 70-ամյակը)*

1996 թ. սեպտեմբերի 6-ին բոլորեց հայ անվանի գրականագետ,  
Երևանի պետական համալսարանի հայ գրականության պատմության  
ամբիոնի վարիչ, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գի-  
տությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆ. Հրանտ Մմբատի  
Թամրազյանի ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության  
50-ամյակը: Այդ հիշարժան տարելիցի առթիվ հանրապետության գի-  
տական հաստատություններում, բուհերում ու մշակութային օջախնե-  
րում (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստանի գրողների  
միություն, Հայաստանի ազգային գրադարան, Երևանի պետական հա-

<sup>56</sup> ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, 1996, թիվ 3, էջ 194-197:



մալսարան և այլուր) տեղի ունեցան երեկոներ ու ցերեկույթներ: Այդ հանդիսությունների ընթացքում մեկ անգամ ևս հավաստվեց այն իրողությունը, որ Հր. Թամրազյանը գրականագիտական լուրջ ժառանգություն է թողել գալիք սերունդներին:

Հրանտ Թամրազյանը ծնվել է Հայկական ԽՍՀ Իջևանի շրջանի Աչաջուր գեղատեսիլ գյուղում: 1943 թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, իսկ 1943-1948 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ու գրականության բաժնում: Ուսանելուն զուգընթաց՝ 1944-1945 թթ. եղել է հանրապետության ռադիոպետկոմիտեի թղթակցական ցանցի ղեկավար, իսկ 1945 թ. հունիսից մինչև 1948 թ. վերջերն աշխատել է «Ավանգարդ» թերթի խմբագրությունում՝ որպես գրական աշխատող:

Իր համալսարանական ուսումնառության մասին Հր. Թամրազյանը հետագայում գրել է. «Միջավայրը որոշիչ է, մանավանդ ուժեղ միջավայրը: Համալսարանական առաջին իսկ օրերից ես ինձ զգացի նման միջավայրում: Գրիգոր Ղափանցյանը դասախոսության ընթացքում մտածում էր, վիճում, կասկածում, գտնում և, այնուամենայնիվ, սովորեցնում էր մտածել: Տաղանդավոր Արսեն Տերտերյանը նաև իր բարոյական կերպարով էր ուսուցանում, Հրաչյա Աճառյանը զարմացնում էր համապարփակ գիտելիքներով: Անջնջելի հիշողություններ են մնացել նաև առավել երիտասարդ հրաշալի դասախոսներից՝ գրականագետներ Սկրտիչ Սկրյանից և Արամ Ղանալանյանից, պատմաբան Հայկազ Ժամկոչյանից, լեզվաբան Էդուարդ Աղայանից»<sup>57</sup>:

Հր. Թամրազյանը 1948 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ ղեկավար ունենալով ականավոր գրականագետ Արսեն Տերտերյանին: Ասպիրանտուրան ավարտել է 1952 թ. և մի կարճ ժամանակ՝ մինչև 1955 թ., աշխատել Հայպետհրատում՝ որպես գեղարվեստական գրականության խմբագրության ավագ խմբագիր: «Շիրվանզադեի դրամատուրգիան» թեմայով 1954 թ. պաշտպանել է ատենախոսություն ու ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և անմիջապես աշխատանքի անցել ԵՊՀ հայ

---

<sup>57</sup> Տե՛ս Կենսամատենագիտություն, Ե., 1996: Այսուհետև մեջբերումները կլինեն նույն տեղից:

գրականության ամբիոնում՝ որպես դասախոս, իսկ 1958 թվականից գրադեցրել է դոցենտի պաշտոն: 1962 թ. «Շիրվանգադեի կյանքն ու գործը» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1963 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 1968 թ. նրա անմիջական նախաձեռնությամբ համալսարանում հիմնադրվել է հայ նորագույն գրականության ամբիոնը, որը ղեկավարել է սկզբից մինչև 1980 թ., իսկ 1980 թվականից առ այսօր հայ գրականության ամբիոնի վարիչն է: Պրոֆ. Հր. Թամրազյանը 1986 թ. ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1996 թ. հունվարից իսկական անդամ է: Նրան 1970 թ. ղեկտեմբերին շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում, իսկ 1974 թ. միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի «Հայ գրականություն» դասագրքի համար նա արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի՝ գիտության և տեխնիկայի բնագավառում:

Ուսանողական տարիներից ի վեր Հր. Թամրազյանն իր գործուն մասնակցությունն է բերել հանրապետության գրական-մշակութային կյանքին, 1953 թ. Հայաստանի գրողների միության անդամ է, բազմիցս ընտրվել է ՀԳՄ վարչության և նախագահության անդամ, իսկ 1996 թ. Ավագների խորհրդի անդամ է: 1973 թ. իր «Երիտասարդ Չարենցը» աշխատության համար արժանացել է ՀԳՄ գրական առաջին մրցանակին, իսկ 1986 թ. «Հայ քննադատություն» բազմահատոր աշխատության առաջին երկու գրքերը շահել են Միքայել Նալբանդյանի անվան գրական մրցանակը: Պրոֆ. Հր. Թամրազյանը 1986 թ. պարգևատրվել է Ժողովուրդների բարեկամության շքանշանով: Արժանացել է նաև մի շարք մեդալների ու պատվոգրերի:

Շուրջ կեսդարյա գիտամանկավարժական ուղի է անցել Հր. Թամրազյանը: Եվ այդ՝ մարդու մի կյանք խորհրդանշող տարիներին նա դասավանդել է մեր հանրապետության մայր կրթօջախում՝ Երևանի պետական համալսարանում, աշխատել է նվիրումով, կրքով ու տքնությամբ: Տրվել է աշխատանքին, գիտությանը, գեղեցիկ գրականության սերները չէլ նուսանողական բազմաթիվ սերունդների, որոնք ոգևորվել ու զմայլվել են նրա խոսքով ու սիրել մեր հարուստ մշակույթը: Տքնության ու դատումի է մղել իր շատ ու շատ ասպիրանտների և գործընկերների, հմտորեն կազմակերպել է գրականության դասավանդման ու գրականա-

գետ-քննադատների պատրաստման գործը համալսարանում՝ որպես արժանավոր հաջորդն իր ուսուցիչներ Արսեն Տերտերյանի ու Սկրտիչ Սկրյանի:

Հր. Թամրազյանը, գրականագետի ու գրաքննադատի իր գործունեությունը սկսելով 1950-ականների հակասական ու դժվարին տարիներին, մի խումբ գրական համախոհների հետ ծավալել է գիտական արգասավոր շարժում՝ հանուն կյանքի մեծ բովանդակության, գրականության մեջ ազգային հատկանիշների խտացման ու խորացման և բարձր արվեստի: Նա իր առաջին իսկ հրապարակումներում վերագնահատել է մեր գրական արժեքները, հետևողականորեն բացահայտել հայ գեղարվեստական մտքի ու գեղագիտության առանցքային խնդիրները և փորձել է տալ դրանց համակարգված պատկերը: Դրա վկայությունը եղավ նրա առաջին մենագրությունը՝ «Շիրվանգաղեի դրամատուրգիան» (1954), որը հետագայում լույս է տեսել նաև ռուսերեն (Ե., 1956): Նշենք, որ Հր. Թամրազյանը մեզանում Ա. Տերտերյանից հետո, միակ գրականագետն է, որ համապարփակ կերպով ուսումնասիրել է հայ գրականության մեծ ռեալիստի կյանքն ու գործը: Հայ դասական գրողին նվիրված նրա հիմնարար աշխատություններն ունեցել են մի շարք վերահրատարակություններ (Ե., 1958, 1961, 1971, 1978, Մ., 1967), որոնք ամեն անգամ ավելի հարստացված և նոր կողմերով են բացահայտել Շիրվանգաղեի գրական ժառանգության հիմնահարցերը և կյանքի մանրամասները՝ իր սպրած ժամանակաշրջանի լայնաշերտ ընդգրկումներով: Նրա գրչին է պատկանում նաև «Հայ նոր գրականության պատմություն» հինգհատորյակի 4-րդ հատորում (1972) գետնոված «Շիրվանգաղե» մենագրական գլուխը: Նման լայն ընդգրկումներով մի մենագրություն էլ հեղինակը նվիրել է մեր մյուս մեծ դասականին՝ Դերենիկ Դեմիրճյանին, որն ունեցել է դարձյալ երկու հրատարակություն (1976, 1977):

Տարիների ընթացքում մեկը մյուսի հետևից լույս են տեսել Հր. Թամրազյանի նորանոր աշխատությունները, որոնց թվում՝ «Գրական ուղիներում» (1962), «Պոեզիան պատմության քառուղիներում» (1971), «Գրական դիմանկարներ և հողվածներ» (1975), «Բանաստեղծը և ճակատագիրը» (1978), «Բանաստեղծության հազարամյա խորհուրդը» (1985), «Հայ քնարերգուներ», (հ. Ա, 1996) ժողովածուներն ու մենագրությունները: Այս շարքի հենց առաջին ժողովածուն Հր. Թամրազյանին

արդեն խորաթափանց ու նրբաճաշակ գրականագետի համբավ բերեց: Այդ գրքում գետեղված՝ գրական արժեքները նորովի մեկնաբանող մի շարք հոդվածների կողքին տպագրված էր նաև ««Խմբապետ Շավարշը» պատմական դարաշրջանի լույսի տակ» հոդվածը, որը թարմ ու հեղափոխիչ խոսք էր հայ նորագույն գրականագիտության մեջ: Հր. Թամրազյանի վերոհիշյալ գրքերում տպագրված հոդվածները մի-մի փոքրածավալ մենագրություններ են՝ գրված տաղանդով ու նվիրումով, խորունկ ներշնչանքով ու ոգևորությամբ և գիտնականի լայնախոհ հայացքով: Դրանցում վերլուծվում ու գնահատվում են մեր արդի գրականության առավել արժեքավոր ու մնայուն ստեղծագործությունները:

Պրոֆ. Հր. Թամրազյանի ուսումնասիրությունների տարերքը պետք է որոնել պոեզիայում: «Մարդկային երևակայությունը և հանճարն ավելի մեծ, ավելի բարձր բան չեն ստեղծել, քան պոեզիան,- ասել է գրականագետը:- Այստեղ է, որ առավել ցայտուն երևում է հոգևոր գեղեցկությունը: Եթե արվեստի որևէ տեսակում պակասում է պոեզիան, նշանակում է՝ հեղինակի տաղանդը քիչ է»:

Այս ըմբռնումներով ու ոգևորությամբ էլ նա գրել է նաև իր մյուս մենագրությունները՝ «Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը» (1995), «Սիամանթո» (1964, 1969), «Վահան Տերյան» (1985), «Եղիշե Չարենց» (1981), «Հակոբ Ասատուրյան» (1993) և այլն, որոնց մեջ բազմապատակ գրականագետը չբացահայտված նորանոր շերտեր է գտնում ու ներկայացնում գիտական աշխարհին:

Պրոֆ. Հր. Թամրազյանի գիտահետազոտական բեղմնավոր աշխատանքի արգասիք են նաև «Հայ քննադատություն» բազմահատոր աշխատության առաջին հրատարակված երեք սովորաձևավալ գրքերը (1983, 1985 և 1992): Այդ կոթողային աշխատության մեջ նա տվել է հայ գեղագիտական մտքի շուրջ հազարիինգհարյուրամյա պատմությունը: Առաջին հատորը նվիրված է հայ գրական մտքի ձևավորմանն ու ակունքներին (V դար), երկրորդն ընդգրկում է VI-XV դարերի գործիչների գրական-գեղագիտական հայացքները, գեղեցիկի ըմբռնման նրանց պատկերացումների համակարգը, իսկ երրորդ հատորում վերլուծված են հետագա դարերի մեր գրականագիտական ու քննադատական մտքի առկայծումները: Դրանով նա Երևանի պետական համալսարանում հիմնադրեց ու մշակեց «Հայ քննադատական մտքի պատմություն» դասըն-

թացը, և ինքն էլ եղավ այդ դասընթացի առաջին դասախոսը: Այդ եռա-  
հատոր մենագրության հակիրճ շարադրանքը լույս է տեսել ռուսերեն (Է.,  
1991):

Տասնամյակներ շարունակ կրթելով գրականագետների բազմաթիվ  
սերունդներ՝ պրոֆ. Հր. Թամրազյանը ստեղծել է քննադատության և  
գրականագիտության ոլորտում ու հեղինակավոր դպրոց: Այդ ճանապար-  
հին փորձառու մանկավարժը գրել է նաև դասագրքեր, որոնցից մեկը՝  
«Սովետահայ գրականության պատմությունը», բուհական է և ունեցել է  
երկու հրատարակություն (1980 և 1984):

Պետական մրցանակի արժանացած նրա «Հայ գրականություն»  
դպրոցական դասագիրքն արդեն շուրջ քառասուն տարի է, ինչ վերա-  
փոխված հրատարակություններով ծառայում է մեր դպրոցին:

Հիշարժան են Հր. Թամրազյանի՝ «Արսեն Տերտերյան» վերտառու-  
թյամբ աշխատությունները՝ նվիրված իր ուսուցչապետին: Դրանցից  
առաջինը մեծավաստակ գրականագետի կենսամատենագիտությունն է  
(1961), իսկ երկրորդը՝ նրա ծննդյան 100-ամյակի առթիվ ստեղծված  
գրքույկը, որտեղ համակարգված ու գնահատված է մեծ գիտնականի ու  
մանկավարժի գիտական ժառանգությունը, ուրվագծված նրա կյանքի ու  
գործունեության ուղին:

Հր. Թամրազյանի գրած աշխատությունների ու գրականագիտա-  
կան հոդվածների թիվն անցնում է 250-ից: Նա Հայաստանի ու Սփյուռքի  
մամուլում հանդես է եկել շուրջ 120 հրապարակախոսական ելույթներով  
ու գրախոսականներով, կարդացել է զեկուցումներ ու հրապարակային  
դասախոսություններ, գրել է գրքերի առաջաբաններ ու վերջաբաններ:

Մեր նորագույն շրջանի գրողներից Չարենցն ու Ալսեյ Բակունցը  
նրա կուռքն են ու տարերքը: Եվ պատահական չէ, որ համալսարանում  
տարիներ առաջ հիմնադրեց «Չարենցյան ընթերցումները», որոնց ար-  
դյունքը եղան նույնանուն հինգ ծավալուն հատորները: Նրանց մեջ հրա-  
տարակված զեկուցումներն ու հաղորդումները չարենցագիտության՝  
վերջին շրջանի մեր նվաճումներից են: Բակունցի մասին ուսումնասի-  
րությունների հանրագումարը զետեղված է «Սովետահայ գրականու-  
թյան պատմություն» հատորյակներում:

Այսպիսին է Թամրազյան գիտնականի ու մտածողի հինգ տասնա-  
մյակների գիտամանկավարժական ուղու ոչ լրիվ պատկերը: Դրվատան-

քի է արժանի նաև նրա հասարակական գործունեությունը. եղել է ԵՊՀ հայագիտական կենտրոնի գիտական ղեկավար, բանասիրական գիտությունների գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտացված խորհրդի նախագահ, մի շարք հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ և այլն:

Եվ այսօր էլ գիտնականի խորաթափանցությամբ ու արվեստագետի ներշնչանքով «տքնում, ստեղծում է նա, ուշքը՝ Խորենացու, ձեռքը՝ նոր սերնդի, աչքը՝ ապագա մեծ գրականության դաշտանկարի վրա»: Եվ ճիշտ է նկատել Համո Սահյանը. «Նրա համար գրականագիտությունը ոչ թե գլուխ պահելու և տուն պահելու ապահով շտեմարան է, այլ տուն ու տանիք, կյանք է ու կռիվ, ինքնարտահայտում է և ինքնաիրագործում, ինքնաբաշխում և գոյության խորհուրդ: Նրա մենագրություններից և հոդվածներից ու մինչև անգամ խոր գիտական ուսումնասիրություններից ես խելք ու խրատից ավելի գեղարվեստական հաճույք եմ առնում, ստեղծագործելու շարժառիթ, ներշնչանքի կիրք ու գրգիռ»:

Ավարտելով մեր խոսքը սիրելի ուսուցչապետի մասին՝ ցանկանք նրան իրականացված տեսնել իր իղձերը՝ ավարտին հասցնել «Հայ քննադատության» և արևմտահայ քնարերգուներին նվիրված հերթական հատորները, տպագրել նվիրական «Հուշերի գիրքը»: Մաղթենք նրան երկար տարիների կյանք, ստեղծագործական նորանոր նվաճումներ:

**Խմբագրության կողմից.** «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրությունը և խմբագրական կոլեգիան նույնպես, միանալով այս ջերմ մաղթանքներին, սրտանց շնորհավորում են բազմավաստակ գիտնականին՝ ծննդյան 70-ամյակի առթիվ:

## ԱՆՎԱՆԻ ՀԱՅԵՐԵՆԱԳԵՏՆ ՈՒ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ<sup>58</sup>

Հայ լեզվաբանության ակնառու ներկայացուցիչ, Երևանի պետական համալսարանի երկարամյա դասախոս, Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ նախագահի մրցանակի

<sup>58</sup> Հովհ. Բարսեղյան մատենագիտություն, գրքի առաջաբանը:

դափնեկիր, Եվրոպական միջազգային ակադեմիայի իսկական անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Բարսեղյանն արդեն ոտք է դրել իր կյանքի տասներորդ տասնամյակի շեմին և կրկին շարունակում է իր բոլորանվեր գործունեությունը: Մեծ է նրա ավանդը հատկապես հայոց լեզվի պատմության և տեսության ուսումնասիրության ասպարեզում: Նրա գիտական հետազոտությունները՝ նվիրված արդի հայերենի ձևաբանության, շարահյուսության, ուղղագրության, ուղղախոսության և եզրաբանության (տերմինաբանության) խնդիրներին, իրենց ամուրամալի դերն են կատարել հայերենագիտության զարգացման գործում:

Հովհաննես Խաչատուրի Բարսեղյանը ծնվել է 1920 թ. հոկտեմբերի 25-ին ՀԽՍՀ Թալիմի շրջանի (ներկայումս՝ Արագածոտնի մարզ) Մաստարա գյուղում՝ հողագործի ընտանիքում: Հայրենի գյուղում ստանալով յոթնամյա, իսկ Թալիմ ավանում՝ միջնակարգ կրթություն՝ 1938 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետ: Առաջին իսկ կուրսից նրա մեջ մեծ սեր ու հակում է առաջանում մայրենի լեզվի և լեզվաբանության նկատմամբ: Սակայն սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, և Հովհ. Բարսեղյանը, կիսատ թողնելով ուսումնառությունը, 4-րդ կուրսից կամավոր մեկնում է Կարմիր բանակ: Մինչև 1942 թ. հունվարի 15-ը սովորում է Բաքվի ռազմական հետևակային ուսումնարանում և, ավարտելով այն ու ստանալով լեյտենանտի զինվորական կոչում, մեկնում է ռազմաճակատ՝ մասնակցելու մարտական գործողություններին: Նա եղել է վաշտի հրամանատար և իր վաշտով մարտնչել Ղրիմի ռազմաճակատում, սպա 1943 թ. մասնակցել է Հյուսիսային Կովկասի համար մղվող մարտերին: Երրորդ անգամ ծանր վիրավորվելուց հետո՝ 1943 թ. հուլիսի 15-ին, գորացրվել է, շարունակել կրթությունը Երևանի պետական համալսարանի նույն ֆակուլտետում և 1944 թ. ավարտում այն: Ուսումնառության ընթացքում նա նաև աշխատել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հատուկ ամբիոնում՝ որպես ռազմագիտության դասախոս:

Համալսարանն ավարտելուց մեկ տարի անց՝ 1945 թ., «Հայոց լեզու» մասնագիտության գծով ընդունվում է ասպիրանտուրա և այն ավարտում 1948 թ.: 1952 թ. ակամավոր լեզվաբան Գուրգեն Սևակի գիտական ղեկավարությամբ, պաշտպանում է թեկնածուական ատենախոսու-

թյուն՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1981 թ.՝ դոկտորական՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1955 թ. նրան շնորհվում է դոցենտի, իսկ 1984 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1970 թ. Հովհ. Բարսեղյանն արժանանում է նաև ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

Հովհ. Բարսեղյանի աշխատանքային և գիտամանկավարժական գործունեությունը հիմնականում կապվում է Երևանի պետական համալսարանի հետ, որի հայոց լեզվի ամբիոնում էլ 1946 թ. (դեռ ասպիրանտուրան չավարտած) սկիզբ է դրվում նրա դասախոսական գործունեությամբ: 1948 թվականից նույն պաշտոնով աշխատում է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնում (հեռակա): 1958 թ. կրկին տեղափոխվում է Երևանի պետական համալսարան և շարունակում դասախոսական գործունեությունը հայոց լեզվի ամբիոնում, որտեղ և դրսևորվում են նրա՝ ուսումնագիտական գործի և գիտահետազոտական աշխատանքի հմուտ կազմակերպչի ունակություններն ու կարողությունները: 1969 թ. նա ընտրվում է նույն ամբիոնի վարիչ, որը ղեկավարում է մինչև 1976 թ.: 1977-1985 թթ. ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ղեկանն էր, իսկ 1985-1990 թթ.՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի հիմնադիր-վարիչը:

Հովհ. Բարսեղյանն առաջին հերթին առիմքնող և մեծ հմայքի տեր դասախոս է՝ հոգով և էությամբ նվիրված հայրենական գիտությանը: Ավելի քան վեցուկես տասնամյակ հանրապետության բուռներում, առավելապես՝ Երևանի պետական համալսարանում, դասավանդել է լեզվաբանական, հայերենագիտական մի շարք առարկաներ, որոնց թվում՝ «Ժամանակակից հայոց լեզու», «Հայոց լեզվի պատմություն», «Հայոց լեզվի պատմական քերականություն», «Լեզվաբանության ներածություն» և այլ դասընթացներ: Նա իր հարուստ գիտելիքներն ու ժամանակակից լեզվաբանական մտքի նվաճումները հմտությամբ փոխանցել է ուսանողներին ու ասպիրանտներին՝ դրանով իսկ լուրջ ավանդ ներդնելով երիտասարդ մասնագետներ պատրաստելու գործում: Նրա անմիջական ղեկավարությամբ հայոց լեզվի գծով պաշտպանվել են մի շարք ատենախոսություններ, մագիստրոսական ու ավարտական աշխատանքներ:

Մեծ է Հովհ. Բարսեղյանի ավանդը հատկապես հայագիտության ասպարեզում: Նա մեր ժամանակների ճանաչված ու առաջատար լեզ-



վաբաններից մեկն է, հեղինակ է շուրջ 10 արժեքավոր մենագրությունների, մի քանի տասնյակի հասնող գիտական հոդվածների: Դրանք հիմնականում նվիրված են հայոց լեզվի ձևաբանության ու շարահյուսության խնդիրներին: Նրա «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» (1953 թ.), «Հատուկ անուն» (1964 թ.), «Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները» (1967 թ.), «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» (1980 թ., նույնը՝ թարգմ. ռուս.՝ 1988 թ.), «Հայերենի ուղղագրության հարցերը հայագիտության և գրականության դասականների քննությամբ» (ունեցել է երկու հրատարակություն՝ 2002 թ. և 2004 թ., վերջինը՝ համալրված) մենագրությունները ճանաչվել են իբրև լեզվաբանական գիտության ակնառու նվաճումներ, որոնք զարգացնում ու հարստացնում են ժամանակակից հայերենագիտությունը:

Հովհ. Բարսեղյանի վերը թվարկված աշխատություններից յուրաքանչյուրը վերլուծում և նորովի է մեկնաբանում լեզվաբանության ու հայերենագիտության տվյալ ճյուղին առնչվող հիմնախնդիրները: Այդ առումով նրա առաջին՝ «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» մենագրությունը (այն եղել է նրա թեկնածուական ատենախոսությունը), որը նվիրված է հայերենի բայի բազմակողմանի ուսումնասիրությանը, աչքի է ընկնում իր մի շարք նոր դիտարկումներով, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքը: Իսկ նրա «Հատուկ անուն» հետազոտությունը հայերենագիտության ասպարեզում դեռ այն ժամանակ նոր-նոր ձևավորվող հատկանվանագիտություն միջգիտաճյուղի հիմքն էր դնում, արժարժում լեզվում գործածվող հատուկ անուններին ու դրանց ուղղագրությանն առնչվող բազմաթիվ հարցեր և փորձում տալ դրանց պատասխանները:

Հայ լեզվաբանական գիտության մնայուն արժեքներից են նաև Հովհ. Բարսեղյանի երկարամյա գիտական հետազոտությունների արդյունքներն ամփոփող «Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները» և «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» մենագրությունները, որոնց հիման վրա էլ նա պաշտպանել է իր դոկտորական ատենախոսությունը: Այդ մնայուն աշխատություններում լեզվաբան գիտնականը ներկայացնում է հայերենի (և ոչ միայն) խոսքի մասերի տեսության առաջացման ու զարգացման պատմությունը, որն ընդգրկում է 5-րդ դա-

րից մինչև մեր օրերն ընկած շուրջ 1600-ամյա ժամանակահատվածը, և որտեղ հայերենի խոսքի մասերին առնչվող հարցերը քննվում են հայ քերականագիտության և լեզվաբանության հին ու նոր ուղղությունների հետ սերտորեն զուգակցված: Այդ աշխատություններում հեղինակը համակողմանիորեն ուսումնասիրել և գիտականորեն դասակարգել ու վերլուծել է ժամանակակից հայերենի խոսքի մասերի համակարգը, տվել դրանց հիմնական սկզբունքները:

Այսօր երևի շատերն են հիշում 1960-ական թթ. կեսերին հայ լեզվաբանության մեջ ծավալված այն բուռն բանավեճերը, որոնք վերաբերում էին հայերենի հոլովների տարբերակման սկզբունքներին ու թվին՝ հի՞նգ, թե՞ յոթ: Այդ բանավեճերը երկար տևեցին, գումարվեցին մի շարք ակադեմիական գիտաժողովներ ու այլ նիստեր, որոնց իրենց զեկուցումներով ու ելույթներով մասնակցեցին ժամանակի շատ անվանի գիտնականներ, այդ թվում նաև՝ Հովհ. Բարսեղյանը: Այդ բանավեճերի ընթացքում նա կանգնած էր Մ. Աբեղյանի հինգ հոլովի պաշտպանության դիրքերում: Նա իր այդ տեսակետները հետագայում հանգամանորեն ներկայացրել է «Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները» արժեքավոր աշխատության մեջ: Այստեղ հարկ է շեշտել նաև անվանի լեզվաբանի՝ բանավիճելու արվեստին տիրապետելու և իր տեսակետներն ու սկզբունքները գիտականորեն, կոռ ու տրամաբանված հիմնավորելու կարողությունների մասին: Այդ առումով պետք է նկատել, որ Հովհ. Բարսեղյանի աշխատությունների մեծ մասում առկա է կիրթ և կռռեկտ, գիտական բարձր մակարդակի բանավեճն անցյալի և իր ժամանակի լեզվաբանների հետ: Եվ այդ բարդ խնդիրները նա կարողանում է հասցնել իրենց տրամաբանական հանգուցալուծմանը՝ հետևողականորեն հիմնավորելով ու պաշտպանելով իր տեսակետների ճշմարտացիությունը:

Անուրանալի է նաև Հովհ. Բարսեղյանի ներդրումը հայերենի տերմինաշինության ասպարեզում: Հայերենի եզրաբանության և ուղղագրության հարցերը միշտ էլ եղել են մայրենի լեզվի անադարտությամբ մտահոգված գիտնականի ուշադրության կենտրոնում: Նա տասնամյակներ շարունակ, սկսած 1955 թվականից, լինելով ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից, իսկ 1992 թվականից՝ ՀՀ կառավարությանն առընթեր տերմինաբանական կոմիտեի, ապա՝ Լեզվի պետական տեսչության լեզ-

վի բարձրագույն խորհրդի գիտական քարտուղարը, շատ բան է արել ժամանակակից հայերենի գիտատեխնիկական, հասարակական-քաղաքական եզրույթների (տերմինների) հարստացման ու կանոնարկման ուղղությամբ: Այդ ընթացքում նա հայերենի ուղղագրությանն ու տերմինաբանությանը նվիրված բազմաթիվ առաջարկություններ ու նախագծեր է պատրաստել և ներկայացրել հիշյալ մարմնի հաստատմանը, որոնց զգալի մասի հեղինակը եղել է ինքը: Դրանք նպաստել են հայերենի բառապաշարի հարստացմանը, ուղղագրության, հատկապես՝ հատուկ անունների գրության ձևերի կանոնակարգմանը և ուղղագրական մի շարք այլ կանոնների միօրինակացմանը, ինչպես նաև տողադարձի կանոնների մշակմանը:

Հովհ. Բարսեղյանի մեկնաբանություններով ու խմբագրությամբ 1964 թվականից ի վեր պարբերաբար, ամեն անգամ նոր լրացումներով ու հավելումներով լույս է տեսել «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու» (նախկինում՝ «Տերմինաբանական ուղեցույց»), որը շուրջ չորս տասնամյակ կատարել է նոր իրավիճակներին հայերենի ներդաշնակեցման և մայրենի լեզվի կանոնակարգման շնորհակալ գործը: Այն խմբագրական աշխատանքով զբաղվողների, ուսուցիչների ու դասախոսների և բոլոր նրանց համար, որոնք գործ ունեն գրավոր խոսքի հետ, եղել է ուղեցույց և կատարել ուղղորդողի ու լեզվական օրենսդրի դեր: Նշված ուղեցույցի վերջին՝ անցյալի բոլոր որոշումներն արտացոլող և լրացված հրատարակությունն իրականացվել է 2006 թ.՝ կրկին Հովհ. Բարսեղյանի հեղինակությամբ:

Հովհ. Բարսեղյանը մեզանում հայտնի է նաև որպես դպրոցական դասագրքերի հեղինակ: Ամմրցելի են նրա՝ ակադ. Էդ. Աղայանի հետ կազմած «Հայոց լեզվի» 5-7-րդ դասարանների (1965 թվականից) և 4-րդ դասարանի (1970 թվականից) դասագրքերը, որոնք, մասնագետների կարծիքով, աչքի են ընկնում իրենց ուղղվածությամբ, թեմաների դյուրամատչելիությամբ ու հստակությամբ: Այդ դասագրքերով արդեն չորսուկես տասնամյակ է, ինչ Հայաստանի և նախկին Խորհրդային Սիւրիայան տարածքի հայկական դպրոցների աշակերտները մայրենի լեզու են սովորում: Հովհ. Բարսեղյանը դեռ այսօր էլ լուրջ օգնություն է ցույց տալիս մեր հանրապետության հայոց լեզվի ու գրականության ուսուցիչներին, որոնք իրենց հետաքրքրող լեզվաբանական ու մեթոդական ամենատար-

բեր հարցերով շարունակում են դիմել մեծավաստակ գիտնականին և հմուտ մանկավարժին՝ դրանց շուրջ սպառիչ պատասխաններ ստանալու ակնկալիքով:

Հայ բառարանագրության ասպարեզում ևս մեծ է Հովհ. Բարսեղյանի ներդրած ավանդը: Նա նաև հմուտ բառարանագիր է, որի կազմած «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» (1973 թ.) ժամանակին բարձր է գնահատվել հայագետների կողմից: Այն ընդգրկում է 152 հազար բառային միավոր և, լինելով իր տեսակի մեջ լիակատար ու եզակի մի աշխատանք, մինչև այսօր էլ չի կորցրել այժմեականությունը և ծառայում է իր նպատակին՝ լեզվաբանների համար մնալով սեղանի գիրք:

Հովհ. Բարսեղյանը՝ որպես համահեղինակ, շուրջ չորս տասնյակ տարի պրոֆեսորներ Թ. Խ. Հակոբյանի և Ստ. Տ. Մելիք-Բախշյանի հետ մասնակցել է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» ստեղծման աշխատանքներին, որոնց շնորհիվ 1986-2001 թթ. հրատարակվել են այդ հանրագիտարանային բառարանի հինգ ստվարածավալ հատորները, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 720 տպագրական մամուլ: Իր գործընկերների վախճանվելուց հետո վերջին երկու հատորների աշխատանքների ծանրությունը միայնակ իր վրա է կրել Հովհ. Բարսեղյանը՝ ամենայն բարեխղճությամբ ու բժախնդրությամբ խմբագրելով ու տպագրության պատրաստելով դրանք: Սույն բառարանը բառարանագրության եզակի կոթողներից է, որը մասնագետների կողմից գնահատվել է որպես մշակութային բացառիկ երևույթ: Այն ընդգրկում է պատմական Հայաստանի տարածքի, հատկապես՝ Արևմտյան Հայաստանի բնակավայրերի, ֆիզիկաաշխարհագրական ու պատմամշակութային օբյեկտների մասին բազմաթիվ տվյալներ՝ հին ու նոր անուններով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բոլոր տեղանունները՝ դրանց մասին պատմական, աշխարհագրական ու ազգագրական անհրաժեշտ տվյալներով: Եվ պատահական չէ, որ 2003 թ. բառարանն արժանացել է ՀՀ նախագահի, ինչպես նաև Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» մրցանակներին:

Ներկայումս բառարանի՝ Հովհ. Բարսեղյանի ղեկավարությամբ գիտական աշխատակազմը ԵՊՀ հայագիտական գիտահետազոտական ինստիտուտի համակարգում պետական ֆինանսավորմամբ պատրաս-

տում է նոր՝ «Հայաստանի պատմական և արդի տեղանունների բառարանի» հրատարակությունը, որը լինելու է ավելի լիակատար և ընդգրկելու է վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում և հարակից շրջաններում տեղի ունեցած վարչատարածքային, աշխարհաքաղաքական, ժողովրդագրական (դեմոգրաֆիկ) ու տեղանվանական փոփոխությունները: Իսկ նրա՝ մոտ մեկ միլիոն քարտ պարունակող տեղանունների քարտարանը կարելի է համարել հայագիտության կարևոր շտեմարաններից մեկը:

Այս ամենից գատ՝ պրոֆ. Բարսեղյանը՝ իբրև տերմինաբանական կոմիտեի գիտական քարտուղար, մասնակցել է մի շարք պաշտոնական քննարկումների: Նա համալսարանական ու հանրապետական գիտաժողովներում բազմիցս հանդես է եկել հետաքրքիր գեկուցումներով, մամուլում տպագրել է բազմաթիվ հոդվածներ ու կարծիքներ, մասնակցել հայագիտական բանավեճերի, եղել արտասահմանյան մի շարք երկրներում՝ Բուլղարիա (1967 թ.), ԱՄՆ (1985 թ.), Ռուսաստան (1994 թ.) և այլուր, մասնակցել միջազգային գիտաժողովների, ներկայացրել հայագիտության նվաճումները և նրա զարգացման միտումները: Նրա խմբագրությամբ և առաջաբաններով լույս են տեսել մի շարք գրքեր, որոնց թվում է Հր. Աճառյանի «Հայ գաղթականության պատմություն» (2002 թ.) արժեքավոր աշխատությունը, որի «Երկու խոսք»-ում նա ներկայացնում է այդ գլուխգործոցի ստեղծման ու կորստից փրկելու պատմությունը:

Գիտամանկավարժական աշխատանքին զուգընթաց՝ Հովհ. Բարսեղյանը ծավալել է նաև կուսակցական, հասարակական-քաղաքական լայն գործունեություն: Նա 1955-57 թթ. եղել է Երևանի պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի սկզբնական կուսկազմակերպության քարտուղար, Երևանի պետական համալսարանում տարբեր տարիների ընտրվել է Բանասիրական ֆակուլտետի կուսբյուրոյի քարտուղար, իսկ 1969-1972 թթ. եղել է ԵՊՀ կուսկոմիտեի առաջին քարտուղարը: Հովհ. Բարսեղյանը տարիներ շարունակ եղել է նաև ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության հայոց լեզվի ուսումնամեթոդական բաժանմունքի նախագահը: ՀԽՍՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ևս նա երկար տարիներ զբաղեցրել է լեզվաբանության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական միացյալ խորհրդի փոխնախագահի, իսկ 2000-

2007 թթ.՝ նախագահի պաշտոնները: Ներկայումս էլ այդ խորհրդի անդամ է:

Հովհ. Բարսեղյանը պատերազմի ու աշխատանքի վետերան է, ճանաչված գիտնական ու առաքինի մարդ, հարգված ու սիրված մանկավարժ, որի ծառայությունները հայերենագիտության զարգացման և որակյալ մասնագետներ պատրաստելու գործում գնահատվել են ըստ արժանվույն. նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում (1970 թ.), նա արժանացել է ՀՀ նախագահի (2001 թ.) և «Վահան Թեքեյան» (2003 թ.) մրցանակների, պարգևատրվել է «Պատվոնշան» (1981 թ.), «Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի» (1985 թ.) շքանշաններով ու մեկուկես տասնյակից ավելի տարբեր աստիճանի մեդալներով, որոնց թվում՝ «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» (1955 թ.), «Մարտական ծառայությունների համար» (1964 թ.), «Մովսես Խորենացի» (1999 թ.) և զանազան պատվոգրերով: Վերջերս պրոֆ. Հովհ. Բարսեղյանն ընտրվել է Եվրոպական գիտությունների և արվեստների միջազգային ակադեմիայի իսկական անդամ (2010 թ.):

Անվանի լեզվաբանն իր դարակազմիկ կյանքում անցել է բազում փորձությունների միջով, ականատես է եղել ստալինյան բռնություններին, ապա անցել է Մեծ հայրենականի բոցերով, հաղթահարել շատ դժվարություններ՝ իր հոգու խորքում անմար պահելով Սասնա տան կարոտը, հրճվել է Արցախյան ազատամարտի հաղթանակով և այժմ՝ նոր հազարամյակի շեմին, նոր ավյունով շարունակում է իր հայրենանվեր գործունեությունը: Նա տպագրության է պատրաստում «Հայերենագիտությունն իմ ուսուցիչների և գործընկերների գնահատմամբ» ժողովածուն, որում տեղ են գտնելու նաև իր գնահատանքի խոսքերը՝ ուղղված իր ուսուցիչներ Մ. Աբեղյանին, Հ. Աճառյանին, Գ. Ղափանցյանին, Գ. Սևակին և այլոց, ինչպես նաև իր գործընկերներին՝ Էդ. Աղայանին, Գ. Ջահուկյանին և մյուսներին: Դրա հետ մեկտեղ Հովհ. Բարսեղյանը պատրաստում է «Արդի հայերենի գոյականի և հորովման տեսությունը» մենագրությունը: Դրանք, ինչ խոսք, ներդրում կլինեն հայերենագիտության մեջ:

Հովհ. Բարսեղյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հոբելյանական նիստում, որը կազմակերպել էր ԵՊՀ ռեկտորատը, և որն անցկացվեց

2010 թ. մարտի 25-ին Բանասիրական ֆակուլտետի նորակառույց շենքի դահլիճում, եղան բազմաթիվ ելույթներ, հորեկյարին հանձնվեցին ուղերձներ, պատմվեցին հետաքրքիր հուշեր, ասվեցին գնահատանքի ու մեծարանքի ջերմ խոսքեր: Դրանցից այստեղ ուզում ենք հիշատակել միայն մեկ արտահայտություն, որը հնչեց ելույթներից մեկում. «Ներկա մեր բոլոր դասախոսների ներկա դասախոսը»՝ մի գնահատական, որը շատ բնութագրական է Հովհ. Բարսեղյանի պարագայում և մեծ խորհուրդ ունի իր մեջ: Այո՛, Հովհ. Բարսեղյանը ներկայիս բոլոր դասախոսների դասախոսն է ոչ միայն ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում. նրա պատրաստած սաներից շատերը՝ որպես դասախոսներ ու ուսուցիչներ, աշխատում են հանրապետության գրեթե բոլոր բուհերում և ուսումնական հաստատություններում, դպրոցներում և Սվյուռքում: Շատերն էլ դարձել են ճանաչված գրողներ ու գիտնականներ, պետական-հասարակական ու մշակութային գործիչներ: Նրանք սիրով են հիշում իրենց չափազանց խստապահանջ ու արդարամիտ ուսուցչին, վերհիշում նրա անգուգական դասախոսությունները մայրենի լեզվի պատմությունից ու տեսությունից:

Տողերիս հեղինակը ևս՝ որպես նրա երախտապարտ սաներից մեկը, ցանկանում է սիրելի դասախոսին ու գիտնականին երկար տարիների կյանք և կիսատ մնացած գործերի իրականացում:

### **ԱԿՆՆԱՎՈՐ ՊԱՏՄԱԲԱՆՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ<sup>59</sup>**

*(Գիրական նսրաշրջան՝ նվիրված պրոֆ. Վ. Հ. Ռշտունու  
100-ամյակին)*

Երևանի պետական համալսարանի երախտավորներից է ականավոր պատմաբան, ՀԳԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Վահան Հարությունի Ռշտունին, որի ծննդյան 100-ամյակը լրացավ այս տարվա փետրվարին: Այդ առթիվ ս. թ. հունիսի 2-ին Պատմության ֆակուլտետում՝ հենց իր՝ բազմավաստակ գիտնականի անունը կրող լսարանում,

---

<sup>59</sup> «ԲԵՀ», 1994, թիվ 3, էջ 180-186:

տեղի ունեցավ գիտական նստաշրջան, որը կազմակերպել էին նոր և նորագույն պատմության ամբիոնն ու հիշյալ ֆակուլտետի ղեկավարը:

Նստաշրջանը բացելով՝ Պատմության ֆակուլտետի ղեկավար պաշտոնակատար, դոց. Գ. Հարությունյանը նշեց, որ պրոֆ. Վ. Ռշտունին բացառիկ մանկավարժ էր ու մեծ գիտնական, որը ոչ միայն գիտելիքներ էր հաղորդում իր սաներին, այլև անջնջելի հետք էր թողնում նրանց սրտերում: Նա անդրադարձավ նաև պրոֆ. Վ. Ռշտունու գիտամանկավարժական գործունեությանը, առանձին մանրամասներ պատմեց նրա աշխատանքային ու դասախոսական առօրյայից:

«Կարծես թե այսօր էլ նա ողջ է ու մեզ հետ է,- նշեց ելույթ ունեցողը,- և բարի ժպիտը դեմքին իր բարի խոսքն է ասում մեզ: Նա անսահման բարի մարդ էր, խոշոր գիտնական ու լավ մանկավարժ,- շարունակեց ելույթ ունեցողը,- այդպիսի անհատների կյանքն ու գործունեությունը չափազանց ուսանելի են երիտասարդ սերունդների կրթության ու դաստիարակության համար: Այսօր մեր բոլորի պարտքն է նրանց պատգամները հաղորդել մեր ուսանողությանը, մեր նոր սերնդին: Այդպիսով՝ պահպանել ու ամրապնդել հին և նոր սերունդների միջև եղած շղթան»:

Բացման խոսքից հետո ներկաները լսեցին պրոֆ. Վ. Ռշտունու դասախոսություններից մեկի ձայնագրությունը, որը նա կարդացել էր Պատմության ֆակուլտետում 1962 թվականին: Բոլորը համակ ուշադրությամբ ունկնդրեցին մեծ գիտնականի խորիմաստ ու փաստերով հագեցած դասախոսությունը, հաղորդակից դարձան նրա տպավորիչ ձայնի, խոսքի դանդաղ, բայց և հստակ ու ներգործուն ելևէջներին:

Այնուհետև Վահան Ռշտունու կյանքի և գիտամանկավարժական գործունեության մասին զեկուցում կարդաց նոր և նորագույն պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Հ. Մելիքսեթյանը:

Վահան Ռշտունին ծնվել է 1894 թ. փետրվարի 6-ին Վաղարշապատում՝ Արևմտյան Հայաստանի Ռշտունիք գավառից գաղթած պանդուխտ արիեստավորի ընտանիքում: Նախնական կրթությունը ստանալով ընտանիքում՝ 1904 թ. ուսումնատենչ պատանին ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որտեղ ունկնդրում է Մանուկ Աբեղյանին, Հակոբ Մանանդյանին, Հրաչյա Աճառյանին և ուրիշ անվանի դասախոսների ու գիտնականների:



1915 թ. ավարտելով ճեմարանը՝ Վ. Ռշտունին ուսուցչական աշխատանք է կատարում սկզբում Թավրիզում, ապա՝ Ախալցխայում, Սուխումում և Թիֆլիսում: 1919 թ. նա ընդունվում է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակագիտական ֆակուլտետը, որն ավարտում է 1924 թ.: Այնուհետև Վ. Ռշտունին տեղափոխվում է Երևան և դասախոսական աշխատանքի անցնում կուսակցական դպրոցում ու պետական համալսարանում՝ իր կյանքի վերջին շուրջ հինգ տասնամյակը նվիրաբերելով պատմաբանների բազմաթիվ սերունդների կրթության ու դաստիարակության վեհ գործին: 1925 թ. նա համալսարանում կարդացել է սոցիալիզմի պատմություն, իսկ 1931-32 ուստարվանից՝ ԽՍՀՄ ժողովուրդների պատմության դասընթացը՝ դառնալով համալսարանում այդ ամբիոնի հիմնադիրն ու անփոփոխ ղեկավարը մինչև իր կյանքի վերջը՝ 1970 թվականը: Նրա դասախոսությունները լսվում էին մեծ հետաքրքրությամբ, ուղեկցվում միայն իրեն հատուկ մեղմ ու հաճելի ժպիտով, որն անտարբեր չէր թողնում ոչ մի ունկնդրի: Համալսարանում աշխատելու տարիներին Վ. Ռշտունին եղել է նաև Պատմության ֆակուլտետի ղեկական, ուսումնական մասի վարիչ (պրոռեկտոր), գիտական աշխատանքների սեկցիայի ղեկավար և այլն: Նա գործում մասնակցություն է ունեցել նաև հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին, երկու անգամ ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր և բարեխղճորեն կատարել իր պարտականությունները:

Վ. Ռշտունին ոչ միայն հմուտ մանկավարժ էր, այլև խորաքափանց գիտնական, բեղմնավոր հետազոտող: 1938-1952 թթ. համատեղության կարգով աշխատել է սկզբում ԱրմՖԱՆ-ում, ապա՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում: 1940 թ. «Հայ հասարակական-քաղաքական հոսանքները և 1861-1865-1870 թթ. գյուղացիական ռեֆորմը» թեմայով պաշտպանել է քեկնածուական թեզ, իսկ մի տարի անց՝ 1941 թ.՝ «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870 թ.» թեմայով դոկտորական թեզ: 1943 թ. Վ. Ռշտունուն շնորհվել է պրոֆեսորի, 1946 թ.՝ գիտության վաստակավոր գործչի կոչումներ, իսկ 1956 թ. նա ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, արժանացել պետական մի շարք պարգևների:

Պրոֆեսոր Վ. Ռշտունին հայոց նոր և նորագույն շրջանի պատմության ճանաչված հետազոտողներից էր: Առանձնապես ուշագրավ են

Արևելյան Հայաստանի՝ 19-20-րդ դարերի պատմության, սոցիալ-տնտեսական կյանքի բազմաթիվ հիմնահարցերին նվիրված նրա աշխատությունները: Հայ պատմագիտության մեջ նա առաջինն է ուսումնասիրել 1870 թ. գյուղացիական ռեֆորմը Հայաստանում, հողային հարաբերությունները և գյուղացիական շարժումները: Այս խնդիրներին էր նվիրված նոր և նորագույն պատմության ամբիոնի դոցենտ Ռ. Մելիք-Սարգսյանի «Հայ գյուղացիության պատմության հիմնահարցի լուսաբանումը պրոֆ. Վ. Հ. Ռշտունու աշխատություններում» գեկուցումը:

Վահան Ռշտունու գիտական կյանքը մի ամբողջ ուղենիշ է մեր հայրենական պատմագիտության մեջ,- նշեց գեկուցողը:- Նրա գիտահետազոտական գործունեությունը իր բազմաբովանդակ գեղեցիկ կյանքի դրսևորումներից մեկն էր: Ի տարբերություն մի շարք գիտնականների, որոնք գրել են մեծ քանակությամբ ուսումնասիրություններ, Ռշտունու աշխատությունները սահմանափակվում են մի քանիսով միայն: Բայց կարևորը քանակը չէ, այլ որակը: Ռշտունին, լինելով լայն մտահորիզոնի, վերլուծական մտքի ու հզոր տրամաբանության տեր պատմաբան, իր ուսումնասիրությունները նվիրել է մեր հայրենական պատմության դժվարին շրջաններից մեկի՝ անցյալ դարի պատմությանը: Այդ ուղղությամբ նրա անգնահատելի աշխատություններից են «1870 թ. գյուղացիական ռեֆորմը Հայաստանում» և «Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության» մենագրությունները:

Այս աշխատություններում գիտնականն առաջին անգամ խորհրդահայ պատմագրության մեջ ձեռնամուխ եղավ հայ գյուղացիության պատմության և 1870 թ. գյուղացիական ռեֆորմի հետ կապված պրոբլեմների ուսումնասիրմանը: Սակայն նա, ինչպես ամեն մի մեծ գիտնական, չի սահմանափակվել դրանց հետազոտությամբ: Նա տվել է 19-րդ դարի հայ հասարակության տնտեսական և սոցիալական կառուցվածքը, նրա մոդելը: Լինելով դիալեկտիկ մտածող՝ պրոֆեսոր Վ. Ռշտունին, հասարակության բաղկացուցիչ մասերը ենթարկելով առանձին վերլուծության, դրանք դիտում է միասնական և փոխադարձ կապի մեջ՝ լավ հասկանալով, որ առանձին պրոբլեմների ուսումնասիրությունը՝ կտրված հասարակության մյուս հարցերից, չի կարող վերականգնել նրա ամբողջականությունը:

Պրոֆեսոր Վ. Ռշտունու գիտական ժառանգության առաջնակարգ նշանակությունն այն է,- ասաց զեկուցողը,- որ նա, առաջինը բարձրացնելով վերը նշված պրոբլեմները, հիմք դրեց մի ամբողջ գիտական դպրոցի: Հետագա տարիներին շատ հարցեր, որոնք կապված են եղել գյուղացիության պատմության և սոցիալ-տնտեսական պրոբլեմների հետ, մշակվել ու ուսումնասիրության են ենթարկվել Վ. Ռշտունու աշակերտների կողմից թե՛ պատմագիտության և թե՛ տնտեսագիտության բնագավառներում՝ հիմք ունենալով գիտնականի մշակած գաղափարներն ու տեսակետները:

Գիտնականը, նպատակ ունենալով վերականգնել 19-րդ դարի հայ հասարակության ամբողջական մոդելը, ուսումնասիրության է ենթարկում ֆեոդալական հարաբերությունների զարգացումը Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալու նախօրյակին, ապա, հենվելով արխիվային նյութերի վրա, կանգ է առնում Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի վրա՝ ընդգրկելով բավականին մեծ շրջան՝ 1828 թ. մինչև 19-րդ դարի վերջին տասնամյակը: Ռշտունին փաստական տվյալների հիման վրա տալիս է Արևելյան Հայաստանի տնտեսության զարգացման առաջադիմական ընթացքը ռուսական կայսրությանը միացնելուց հետո: «Նա նշում է Ռուսաստանի դրական դերը հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, ազգային, մշակութային զարգացման ասպարեգում», - ասաց բանախոսը:

«Պրոֆեսոր Վ. Ռշտունու այս եզրահանգումները,- ընդգծեց զեկուցողը,- մեզ համար ունեն ոչ միայն գիտական նշանակություն, այլև արդիական հնչեղություն: Դրանք հանդիսանում են ուղեցույց մեր գործելակերպում և զգուշացում այն «քաղաքագետներին», որոնք, հեռու լինելով պատմությունից, աշխատում են մեր ժողովրդի ասպագան կառուցել սպեկուլյատիվ գաղափարների վրա:

Իրավացիորեն նշելով Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու դրական նշանակությունը՝ գիտնականը չի մոռանում նաև այն հանգամանքը, որ Հայաստանը ցարիզմի կողմից դիտվել է որպես Ռուսաստանի գաղութ և ենթարկվել է ցարիզմի գաղութային համակարգին հատուկ ռազմաֆեոդալական, վարչական, տնտեսական և մշակութային շահագործմանն ու հալածանքներին:

Մեծարժեք են գիտնականի ներդրումները՝ կապված 1870 թ. գյուղացիական ռեֆորմի մի շարք հարցերի հետ,- այնուհետև սասց գեկուցողը:- Նպատակ ունենալով բացահայտել այդ ռեֆորմի բնույթն ու բովանդակությունը՝ պրոֆ. Վ. Ռշտունին մանրագին քննության է ենթարկում ռեֆորմի անցկացման նախադրյալներն ու պայմանները, տալիս է նրա բնութագիրը, վեր հանում պատմական այն առանձնահատկությունները, որոնց պայմաններում տեղի էր ունենում ռեֆորմի իրագործումը: Գիտնականը հանգում է այն եզրակացության, որ այդ ռեֆորմը ֆեոդալական արտադրանեղանակի ճգնաժամի արդյունք էր: Դա պայմանավորված էր մի կողմից Ռուսաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացմամբ, իսկ մյուս կողմից՝ այն սոցիալ-տնտեսական տեղաշարժերով, որոնք տեղի ունեցան Արևելյան Հայաստանում կապիտալիզմի զարգացման հետևանքով: Այնուհետև նա ցույց է տալիս, որ արտաքին և ներքին գործոնների փոխազդեցությունը, Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում առաջ բերելով տեղաշարժեր, պետք է իր արտահայտությունը գտներ նաև հասարակության քաղաքական ոլորտում: 1870 թ. գյուղացիական ռեֆորմն իրավական հաստատումն էր այն տնտեսական պրոցեսների, որոնք տեղի էին ունենում երկրում 19-րդ դարի 50-60-ական թվականներին, և հանդիսանում էր 1861 թ. ռեֆորմի շարունակությունն ու կազմում այդ ժամանակաշրջանում ցարիզմի վարած քաղաքականության անբաժանելի մասը:

Պրոֆեսոր Վ. Ռշտունու գիտական ժառանգության մեջ հատուկ տեղ են գրավում հայ գյուղացիության պատմությանը նվիրված ուսումնասիրությունները: Կանգ առնելով Հայաստանի 19-րդ դարի սոցիալ-տնտեսական կառուցվածքի վրա և բնութագրելով ֆեոդալական դասը, հողատիրության ձևերն ու նրանց առանձնահատկությունները՝ գիտնականն իր ուշադրությունը բևեռում է գյուղացիության վրա, ուսումնասիրում նրա տնտեսական, սոցիալական և իրավական դրությունը ցարիզմի լծի տակ ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու ժամանակաշրջանում, պարզաբանում կապիտալիզմի զարգացման պայմաններում գյուղացիների դրության մեջ առաջացած փոփոխությունները, վեր հանում գյուղացիության քայքայման պրոցեսի ընթացքը Հայաստանի յուրահատուկ պայմաններում՝ կապված այդ երկրամասի գաղութային վիճակի հետ:

Այնուհետև նա քննության է առնում գյուղացիական պայքարը Հայաստանում»:

«Հարկ է նշել,- ասաց զեկուցողը,- որ այս պրոբլեմը ամենաուսումնասիրվածն է մեր պատմագրությունում: Կան բազմաթիվ մենագրություններ, հոդվածներ, ժողովածուներ, որոնցում առկա են արժեքավոր եզրակացություններ: Սակայն պրոֆ. Վ. Ռշտունին առաջինն էր, որ խորհրդահայ պատմագրության մեջ բարձրացրեց գյուղացիական պայքարի հետ կապված մի շարք նոր պրոբլեմներ: Օգտագործելով մեծ քանակությամբ արխիվային նյութեր և դասակարգելով դրանք՝ գիտնականը, չժխտելով կոլեկտիվ պայքարի դրսևորման ձևը, հանգում է այն եզրակացության, որ Հայաստանում գյուղացիական պայքարի իշխողը ձևը անհատական պայքարն էր, որն ուներ զանգվածային և ամենօրյա բնույթ: Պայքարի այդ ձևը մեծ լարվածություն էր առաջ բերում և հարվածում ֆեոդալական համակարգի տնտեսական հիմքերին, որի պայմաններում արդեն կոլեկտիվ երևույթները դառնում էին սոցիալապես խիստ վտանգավոր: Ուսումնասիրելով գյուղացիական ելույթների ծավալն ու բնույթը՝ պրոֆ. Վ. Ռշտունին եզրակացնում է, որ Հայաստանում տեղի չեն ունեցել զինված ելույթներ՝ ուղղված ցարիզմի դեմ: Նա աշխատում է վեր հանել այդ երևույթի ակունքները: Նշելով մի շարք օբյեկտիվ պատճառներ՝ Վ. Ռշտունին առաջին անգամ ոչ միայն խորհրդահայ, այլև խորհրդային պատմագիտության մեջ լուրջ ուշադրություն է դարձնում հասարակության զարգացման պրոցեսում սոցիալական հոգեբանության գործոնի վրա: Նա նշում է, որ Ռուսաստանին միանալը հայ ժողովրդին բերեց կյանքի, գույքի ապահովության, ազգային գոյության պահպանման, մշակութային ու տնտեսական զարգացման հնարավորություն: Ահա թե ինչու, չնայած ցարիզմի գաղութային և ճորտաֆեոդալական ճնշումներին, հայ ժողովուրդը շարունակում էր Ռուսաստանին դիտել որպես իր փրկարարի և հովանավորողի: Այդ հոգեբանական գործոնն արգելակող դեր էր կատարում գյուղացիական պայքարի ծավալման և զինված բնույթ կրելու գործում:

Վարչաիրամայական համակարգի պայմաններում, երբ գիտության, առավելապես՝ հումանիտար գիտությունների բնագավառում իշխում էին անձի պաշտամունքի գաղափարը, գռեհիկ սոցիոլոգիզմը և վոլյունտարիզմը, պրոֆ. Վ. Ռշտունին աշխատում էր դուրս գալ այդ պրոկ-

րուստյան նեղ սահմաններից և գիտական հարցերի լուծումը տալ ոչ թե ընդունված քարացած գաղափարների հիման վրա, այլ կոնկրետ սոցիալ-տնտեսական, պատմական, հոգեբանական և այլ գործոնների ուսումնասիրությամբ: Մինչդեռ, ըստ այն ժամանակվա չափանիշների, այն բավականին դժվար ու վտանգավոր գործ էր: Գիտնականը կարող էր մեղադրվել իդեալիզմի և պատմական դեպքերի խեղաթյուրման մեջ ու ենթարկվել բռնաճնշումների»:

Այնուհետև զեկուցողը նշեց, որ Վ. Ռ-շտունին, բացի Հայաստանի գյուղացիության պատմությանը նվիրված աշխատություններից, որոնք բաղկացած են երեք մասից, սակայն առայժմ լույս են տեսել երկուսը, գրել է նաև «Հայ հասարակական հոսանքների պատմությունից» սովաբաժավ ուսումնասիրությունը, որի մեջ ամփոփված են գիտական պարբերականներում տարբեր ժամանակներում լույս ընծայված նրա մի շարք հոդվածներ: Գիտնականը զբաղվել է նաև Անդրկովկասի պատմությամբ, լուսաբանել ցարիզմի գաղութային քաղաքականությունը պետական տարբեր փուլերում, երկրամասում կապիտալիզմի զարգացման ընթացքը և այլ խնդիրներ: Պրոֆ. Վ. Ռ-շտունին գործուն մասնակցություն է ունեցել հայ ժողովրդի պատմության դպրոցական դասագրքերի և ՀԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած հայոց պատմության բազմահատորյակի ստեղծման գործում:

Չեկուցումներից հետո պրոֆ. Վ. Ռ-շտունու մասին հետաքրքիր հուշեր պատմեցին նրա ժամանակակիցներն ու սաները՝ պրոֆեսորներ Ռ. Մովսիսյանը, Հ. Պետրոսյանը, Լ. Ղարիբջանյանը, Հ. Պողոսյանը և ուրիշներ: Նրանք հատկապես ընդգծեցին, որ պրոֆ. Վ. Ռ-շտունին իր գիտական եզրակացությունները կատարում էր փաստերի և երևույթների բազմակողմանի համադրությամբ ու վերլուծությամբ: 1950-ական թթ. սկզբներին, նրանց հավաստմամբ, մեր երկրի գաղափարական կյանքում բարձրացավ մի նոր ալիք: Մի շարք գիտնականներ մեղադրվում էին «միասնական հոսանքի» և ազգայնականության մեջ: Նրանց թվում էր նաև պրոֆ. Վ. Ռ-շտունին: Սակայն, ի տարբերություն շատ-շատերի, նա մինչև վերջ պաշտպանեց իր տեսակետները՝ անտեսելով դրանից բխող բացասական, անգամ վտանգավոր հետևանքները:

Ելույթ ունեցողներն ընդգծեցին նաև, որ պրոֆ. Վ. Ռ-շտունու կյանքն ու գործունեությունը սերտորեն կապված են եղել 20-րդ դարի հայ մշա-

կույթի, Երևանի պետական համալսարանի և մեր հանրապետությունում պատմագրության զարգացման հետ:

Վերջում ելույթ ունեցավ Վ. Ռշտունու որդին՝ իրավաբան Ռուբեն Ռշտունին, որն իր հոր կյանքից առանձին մանրամասներ պատմեց և ապա շնորհակալություն հայտնեց համալսարանի և ֆակուլտետի ղեկավարությանն ու ամբիոնի անդամներին՝ նման հոբելյանական նստաշրջան կազմակերպելու համար:

**ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ**

**ԵՊՀ ՀԱՆՂԵՄՆԵՐԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՅՍԸ ՍՓՌՈՂ ԱՆՍԱՐԵԼԻ ՉԱՀԵՐ**





## **ՄԵԾ ԱՎԱՆԳ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՈՒ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

### **«ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ» ՀԱՆԳԵՍԻ ԱՆԽԱՓԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

Արդեն քառորդ դար է, ինչ Երևանի պետական համալսարանում անխափան պարբերականությամբ՝ տարեկան երեք անգամ, լույս է տեսնում մեր հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս վաղուց մեծ հեղինակություն վայելող «Գիտական տեղեկագիր» քառամսյա հանդեսը: Այն, փաստորեն, Երևանի համալսարանում 1925 թ. հիմնադրված «ՀՍԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր»-ն է, որը որոշ ձևավորումներով ու տարբեր անվանումներով մինչև այսօր շարունակում է իր գոյությունը: Անվերապահորեն այն կարելի է համարել Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող ամենաերկարակյաց գիտական հանդեսը, որի հիմնադրման 70-ամյակը կլրանա շուտով:

«Գիտական տեղեկագիրը» սկզբնական շրջանում տպագրվում էր անկանոն պարբերականությամբ (տարեկան՝ մեկ-երկու համար), նույնիսկ մեծ ընդհատումներով: Այն արտացոլում էր բնական և հասարակական գիտությունների բնագավառներում համալսարանական գիտնականների ձեռք բերած կարևորագույն նվաճումները: Մինչև 1930 թ. լույս է տեսել «Տեղեկագիրի» 6 համար: Այնուհետև երկրում համալսարանների վերակառուցման հետևանքով նրա տպագրությունը երեք տարի ընդհատվել է: 1933 թ. Երևանի համալսարանի վերաբացումից հետո վերսկսվել է նաև հանդեսի հրատարակությունը, և 1934 թ. այն լույս է տեսել «ՀՍԽՀ պետական համալսարանի աշխատություններ» վերտառությամբ ու նոր տարեշրջանով: Առաջին հատորի 1-ին սերիան կրում է «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» ենթանվանումը, իսկ երկրորդ սերիայի 1-ին պրակը, որը տպագրվել է 1936 թ., ունի «Բիոլոգիական գիտություններ» ենթանվանումը: 1939 թ. լույս է տեսնում հանդեսի հերթական 9-րդ հատորը «Գիտական աշխատություններ» նոր վերնագրով, որի ընդհանուր թվահամարների մեջ ներառվում են նաև «Աշխատություններ» վերնագրով տպագրված հիշյալ երկու պրակները: Այդ

անվամբ հանդեսը տպագրվում է մինչև 1961 թ. վերջը (9-75-րդ հատորները): 1962 թ. սկզբից վերականգնվում է նրա նախնական՝ «Գիտական տեղեկագիր» անվանումը և, 76-րդ հատորից սկսած, տպագրվում է այդ վերնագրով: Շուտով կարգավորվում է հանդեսի հրատարակությունը, որն արդեն լույս է տեսնում կանոնավոր պարբերականությամբ՝ տարեկան մի քանի հատոր՝ տարբեր սերիաներով ու պրակներով: Եվ եթե 1925-30 թթ. տպագրված նրա 6 համարներում բնագիտական և հասարակագիտական աշխատանքները ներկայացվում էին կողք կողքի՝ միևնույն գրքի մեջ, ապա 1934 թ. սկսած լույս են տեսնում առանձին սերիաներով ու գրքերով: Ընդհանուր հաշվարկով մինչև 1967 թ. «Գիտական տեղեկագիրը» ունեցել է 15 սերիա, և 42 տարիների ընթացքում տպագրվել է 104 հատոր:

«Գիտական տեղեկագիրը» նպաստել է բնական և հումանիտար գիտությունների զարգացմանը Հայաստանում: Նրա էջերում տպագրվել են համալսարանի ամբիոններում ու լաբորատորիաներում կատարված գիտահետազոտական աշխատանքների հիմնական արդյունքները: Վերոհիշյալ 104 հատորների գերակշռող մասը նվիրված է բնական և տեխնիկական գիտություններին: Նրանց էջերում իրենց արժեքավոր հոդվածներով ու ուսումնասիրություններով հանդես են եկել ականավոր գիտնականներ՝ բժշկագետներ Գ. Արեշյանը, Լ. Հովհաննիսյանը, Հ. Քեչեկը, Ս. Հակոբյանը, մաթեմատիկոսներ ու ֆիզիկոսներ Ալ. Հակոբյանը, Հ. Նավակատիկյանը, Հ. Անժուրը, Ա. Տեր-Սկրտչյանը, Ս. Մաշուրյանը, Ա. Շահինյանը, Մ. Ջրբաշյանը, Գ. Սահակյանը, Ռ. Ալեքսանդրյանը, Բ. Թումանյանը, կենսաբաններ Ա. Տեր-Պողոսյանը, Պ. Քալանթարյանը, Մ. Թումանյանը, Մ. Չալախյանը, Է. Հասրաթյանը, Ա. Թախտաջյանը, Հ. Փանոսյանը, Գ. Դավթյանը, քիմիկոսներ Ստ. Ղամբարյանը, Հ. Հովհաննիսյանը, Լ. Ռոտինյանը, Վ. Թառայանը, Հ. Չալթիկյանը, Մ. Դարբինյանը, Մ. Դանդյանը, երկրաբաններ Տ. Ջրբաշյանը, Ն. Տրոցկին, Ա. Գաբրիելյանը, աշխարհագետ-ազգագրագետ Ստ. Լխիցյանը և շատ ուրիշներ:

«Տեղեկագրի»՝ անցյալում հրատարակված հատորներում մեծ տեղ են զբաղեցնում նաև հասարակական գիտությունների՝ պատմության և փիլիսոփայության, գրականագիտության և լեզվաբանության, տնտեսագիտության և իրավաբանության հարցերին նվիրված ուսումնասիրու-

թյունները: Առաջին անգամ այստեղ են տպագրվել խոշորագույն հայագետներ Հր. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Հ. Մանանդյանի, Լեոյի (Առաքել Բարախանյան), Ա. Տերտերյանի, Գ. Ղափանցյանի և շատ ուրիշների մի շարք մեծարժեք գիտական հետազոտությունները: Հետագայում՝ 1940-50-ական թթ., «Տեղեկագրում» այս հոշակավոր գիտնականների կողքին հանդես են գալիս նոր հեղինակներ՝ Վ. Ռշտունի, Գ. Սևակ, Մ. Սկրյան, Էդ. Աղայան, Լ. Խաչիկյան, Ա. Մովսիսյան, Գ. Լևոնյան, Ա. Ղարիբյան, Հ. Մամիկոնյան, Էդ. Ջրբաշյան, Հ. Սարախյան և ուրիշներ: Հանդեսում տպագրված նրանց հոդվածներից շատերը հետագայում հիմք են ծառայել նորանոր մենագրությունների ու գիտական թեզերի համար:

«Գիտական տեղեկագրի» սերիաների տպագրությունը, 1950-ական թթ. դրվելով ֆակուլտետների վրա, պատշաճ մակարդակով չի ապահովվում, կրում է ձևական բնույթ: Դրանք դարձյալ շարունակում են լույս տեսնել անկանոն պարբերականությամբ և մեծ ուշացումներով, որն էլ բացասաբար է անդրադառնում «Գիտական տեղեկագրի» տարածման վրա: Հանդեսի սերիաների ու պրակների տեղայնացված հրատարակությունը, նրանց էջերում տպագրված աշխատանքներից շատերը չեն ունենում գիտական պատշաճ մակարդակ ու չեն նպաստում գիտության տվյալ ճյուղի զարգացմանը:

Այս հանգամանքը, ինչպես նաև համալսարանում գիտական աշխատանքների անընդհատ զարգացումը, գիտական կադրերի աճը պահանջում են մշտապես կատարելագործել պարբերական հրատարակությունների բովանդակությունն ու ձևերը: Ուստի 1966 թ. վերջերին Երևանի համալսարանի խորհուրդը որոշում է ընդունում 1967 թ. նոր տարեշրջանից վերակառուցել ու բարելավել «Գիտական տեղեկագրի» հրատարակությունը և միաժամանակ հիմնադրել նոր հանդեսներ: Ըստ այդ որոշման՝ «Գիտական տեղեկագիրը» վերածվում է միայն բնական գիտությունների քառամսյա հանդեսի, և որպեսզի նրա հիմնում նոր համարների միջև արհեստական խզում չառաջանա, և ավանդույթը չխախտվի, վերնագրից բացի, նույնն է թողնվում նաև նրա համարակալման կարգը: Նորաստեղծ հանդեսի անդրանիկ համարը կրում է թիվ 1 (105) համարանիշը: Դա վկայում է, որ կրկին շարունակվում է նրա հիմն համարակալումը:

«Գիտական տեղեկագրի» նախկին՝ հասարակագիտական սերիալների ու պրակների փոխարեն հիմնադրվում է նոր՝ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսը: Այդ երկու գիտական պարբերականներից գուցահեռ ստեղծվում է նաև «Երևանի համալսարան» լրատուն:

Վերականգնված «Գիտական տեղեկագիրը» սկզբից կեթ մշակում է իր կայուն բաժինները, որոնք են՝ «Մաթեմատիկա», «Մեխանիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Երկրաբանություն» և «Ֆիզիկական աշխարհագրություն»: Սրանց հետ մեկտեղ այն ունի «Հաղորդումներ», «Բանավեճ և քննարկում», «Գիտական կյանք», ինչպես նաև «Նոր գրքեր» ու «Նամակ խմբագրությանը» բաժինները, որոնցում հոդվածներ, հաղորդումներ, գրախոսականներ ու նամակներ են տպագրվում գիտության տարբեր խնդիրների շուրջ:

Հայաստանում առաջինն այս հանդեսի էջերում են նյութեր տպագրվել՝ նվիրված մաթեմատիկական կիրառնետիկային, միկրոֆլորային, շրջակա միջավայրի պահպանությանը և գիտության այլ նորագույն ճյուղերի զարգացմանը: Նրա էջերում քննարկվել են մաթեմատիկայի ու մեխանիկայի, ֆիզիկայի ու քիմիայի, կենսաբանության ու երկրաբանության, աշխարհագրության ու հանքաբանության բազմաթիվ խնդիրներ: «Տեղեկագրի» համարներում համալսարանական անվանի գիտնականների կողքին համդես են եկել նաև ՀՀ ԳԱ իսկական ու թղթակից անդամներ, ճանաչված բնագետներ՝ այլ հանրապետություններից:

1967 թվականից առ այսօր լույս տեսած նրա շուրջ 75 համարներում տպագրվել են 2000-ից ավելի հոդվածներ, հաղորդումներ ու նամակներ, որոնց մեծ մասը պատկանում են Երևանի պետական համալսարանի ավագ, միջին և երիտասարդ սերնդի գիտնականների ու դասախոսների գրչին:

Հանդեսի խմբագրական աշխատանքները միշտ էլ դեկավարել են հեղինակավոր գիտնականներ: «Տեղեկագրի» սկզբնական շրջանի ութ համարները չունեն խմբագրի ու խմբագրական խորհրդի մասին նշումներ: Դրանք երևան են եկել 1939 թ. 9-րդ պրակից սկսած. կենսաբանությանը նվիրված հիշյալ պրակի պատասխանատու խմբագիրն է պրոֆ. Ա. Տեր-Պողոսյանը: Այնուհետև այդ սերիայով լույս տեսած մի քանի պրակների խմբագիրը դարձյալ եղել է նա, որից հետո նրան փոխարինել է պրոֆ. Հր. Բատիկյանը: Բնական գիտությունների մյուս սերիաները

խմբագրել են Գ. Մարուխյանը, Ա. Շահինյանը, Մ. Տեր-Սիքայեյանը, Գ. Սահակյանը, Դ. Բաբայանը, Գ. Քոչարյանը և ուրիշներ: Հասարակագիտական սերիաներով տպագրված պրակները տարբեր ժամանակներում խմբագրել են Հ. Ժամկոչյանը, Զ. Բաշինջաղյանը, Վ. Ռշտունին, Ա. Եսայանը, Դ. Շաքարյանը, Ն. Թովմասյանը, Ա. Օսիպյանը և այլք, իսկ բանասիրության պրակները՝ Հովհ. Մամիկոնյանը, Ա. Ղարիբյանը, Ռ. Հովհաննիսյանը: 1952 թվականից հիշյալ պրակը սկսում է խմբագրել Էդ. Աղայանը, այնուհետև՝ Ս. Բագյանը, Հ. Սալախյանը, Մ. Մկրյանը: Այդ ընթացքում «Տեղեկագրի» բոլոր սերիաներն էլ գլխավոր խմբագրի հետ մեկտեղ արդեն ունեին նաև խմբկույներ, պատասխանատու քարտուղարներ և խմբագրի տեղակալներ:

Հանդեսի վերակառուցումից հետո՝ 1967-1972 թթ., նրա գլխավոր խմբագիրը եղել է նշանավոր քիմիկոս, ՀԳԱ թղթակից անդամ Հ. Չալթիկյանը: Այնուհետև այդ պարտականությունները կատարել են պրոֆ. Վ. Ասլանյանը, պրոֆ. Էդ. Չուբարյանը, իսկ 1992 թվականից «Տեղեկագրի» գլխավոր խմբագիրն է ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆ. Վ. Տեր-Անտոնյանը: 1967 թվականից առ այսօր նրա անփոփոխ պատասխանատու քարտուղարն է Լ. Բաղայանը (Շարամբեյան):

Բնական գիտությունների զարգացման արդի բարձր մակարդակը նոր խնդիրներ է դնում «Գիտական տեղեկագրի» խմբագրության առջև, որոնք, թվում է, պատշաճ կերպով կլուծվեն: Սակայն վերջին տարիներին մեր հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող վիթխարի ցնցումներն ու հեղաբեկումները մի տեսակ մոռացության են մատնել գիտության գոյությունը: Այդ տխուր իրողությունը բացասաբար է անդրադառնում նաև գիտական պարբերականները պատշաճ մակարդակով ու ժամանակին հրատարակելու գործի վրա, մի բան, որից զերծ չէ նաև «Գիտական տեղեկագիրը»: Շուկայական հարաբերություններին անցնելը, գների շեշտակի աճը, տպագրական գործի անմխիթար վիճակը վերջին շրջանում հանդեսի լույսընծայումը դարձրել են անկանոն: Սակայն, թվում է, «Տեղեկագիրը» կհաղթահարի ճգնաժամային այս դժվարությունները և իր 70-ամյակը կդիմավորի գիտական մտքի տարածման մեծ փորձով ու ստեղծագործական նորանոր որոնումներով՝ ի շահ բնական գիտությունների զարգացման:

## **Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ**

### **«ԲԱՆՔԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ՀԱՆԳԵՄԻ ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

Լրացավ «Բանքեր Երևանի համալսարանի» քառամյա հանդեսի հրատարակության 25-ամյակը: 1967 թ. նրա հիմնադրումը խոշոր իրադարձություն եղավ Երևանի պետական համալսարանի կյանքում: Այն փոխարինելու եկավ «Գիտական տեղեկագրի»՝ մինչ այդ անկանոն պարբերականությամբ լույս տեսնող հասարակագիտական սերիաներին և շարունակելու նրանց ստեղծած լավագույն ավանդույթները:

Ի տարբերություն ճյուղային այդ պրակների՝ «Բանքերը» սկզբից նեթ ընդգրկեց և ի մի բերեց հասարակական ու հումանիտար գիտությունների այն բոլոր բնագավառները, որոնց խնդիրներով զբաղվում են ոչ միայն համալսարանում, այլև հանրապետության մյուս ուսումնագիտական օջախներում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս և արտասահմանում: Հանդեսի առաջնահերթ և հիմնական խնդիրն է դառնում իր էջերում լայնորեն քննարկել հայագիտության չլուսարանված հարցերը, վերհանել հայոց հին, նոր և նորագույն շրջանների պատմության ու մշակույթի շուտումնասիրված էջերը: Այս ամենի համար էլ այն շուտով գրավում է գիտական հասարակայնության ու ընթերցող լայն շրջանների ուշադրությունը և շահում նրանց սերն ու համակրանքը:

Հրատարակության առաջին իսկ տարվանից հանդեսի խմբագրությունը մեկը մյուսի հետևից նամակներ ու նյութեր է ստանում մալսկին Խորհրդային Միության հայագիտական կենտրոններից ու անհատ մարդկանցից, արտասահմանում ապրող գիտնականներից ու Սփյուռքից: Աշխարհի տարբեր ծայրերից ստացվող այդ մեծաթիվ նամակները, որոնք ներկայումս պահվում են հանդեսի խմբագրության արխիվում, պարունակում են գնահատանքի ու դրվատանքի ջերմ խոսքեր, վեր են հանում հայագիտության զարգացման գործում «Բանքերի» խաղացած դերը: Նրանց հեղինակներն այդ ամենի հետ մեկտեղ նշում են, որ իրենք սիրով ու անհամբերությամբ են սպասում նրա ամեն մի համարի ստացմանը:

Եվ իրոք, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսն անցած 25 տարիների ընթացքում լայնորեն լուսաբանել է հասարակական գիտությունների և հատկապես հայագիտության ուղղությամբ կատարվող աշխատանքները: Մինչ օրս տպագրված նրա 75 հատորներում տեղ են գտել շուրջ 3000 ուսումնասիրություն ու հրապարակում, հողված ու հաղորդում, որոնք նպաստել են հայ ժողովրդի պատմության, լեզվի ու մշակույթի, հնագիտության ու ազգագրության, գրականության ու արվեստի, ինչպես նաև հասարակական գիտությունների զարգացման ու տարածման գործին:

«Բանբերը» առաջին իսկ համարից մշակում է իր անվտոմոս բաժինները, որոնք են՝ «Հողվածներ», «Բանավեճ և քննարկում», «Հրապարակումներ և հաղորդումներ», «Գրքերի տեսություն» և «Գիտական կյանք»: Մրանց մեջ լայն ու բազմազան է «Հողվածներ» բաժնի քննատիկան: Նրանում անցած տարիներին ներկայացվել են նշանավոր գիտնականների հարյուրավոր արժեքավոր հետազոտություններ, որոնք ծառայել են հայագիտության զարգացման առաջընթացին: Հայագիտության զանազան հարցերի քննարկմանը մասնակցել են նաև տասնյակ գիտնականներ՝ Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից, Մոլդովայից, արտասահմանյան տարբեր երկրներից ու Սփյուռքից:

Գիտական մի շարք վիճելի խնդիրներ է արծարծել «Բանավեճ և քննարկում» բաժինը: Այստեղ տպագրված նյութերը ճշմարտության դիրքերից նպաստել են դեռևս չլուծված ու կնճռոտ հարցերի անկողմնակալ լուսաբանմանը:

Հանդեսի ամենալայն՝ «Հաղորդումներ և հրապարակումներ» բաժինը ներկայացրել է անցյալի խոշոր մտածողների կյանքին ու գործունեությանը վերաբերող նորահայտ փաստեր ու վավերագրեր, հայ դասական գրողների, գիտության ու մշակույթի գործիչների, Երևանի համալսարանի երախտավորների ժառանգության՝ մոռացության մատնված էջերը, նրանց նամակները և այլ փաստաթղթեր, քննարկել է գիտության, գրական ու մշակութային կապերին նվիրված ամենատարբեր բնույթի հարցեր, նշել մեծանուն մարդկանց հիշարժան հոբելյանները և այլն: Այս բաժնում տպագրվել են նաև հարյուրավոր աշխատանքներ, որոնք ցույց են տվել աշխարհում հասարակական գիտությունների զարգացման ընթացքն ու մակարդակը: Հանդեսի էջերում լայնորեն լուսաբանվել են Հա-



յաստանի գիտական ու մշակութային նվաճումները: Այն օտար ավերում ապրող գիտնականներին և ընթերցող լայն հասարակայնությանը ծանոթացրել է այդ ձեռքբերումներին և փոխադարձաբար իր ընթերցողներին տեղյակ պահել արտասահմանի հայագիտական նորություններին, անհրաժեշտ նյութեր տպագրել հայ գաղթավայրերի և սփյուռքահայության պատմամշակութային խնդիրների վերաբերյալ:

«Գրքերի տեսություն» բաժինը պարբերաբար ներկայացրել է Հայաստանում և արտասահմանում լույս տեսած արժեքավոր աշխատությունները՝ մեր պատմությանն ու մշակույթին առնչվող մեծագրությունները, հայագիտական օտարալեզու հանդեսները, ուսումնական ձեռնարկներն ու բուհական դասագրքերը: Իսկ «Գիտական կյանք» բաժնում արտացոլվել են Երևանի համալսարանում և ուսումնագիտական մյուս հաստատություններում տեղի ունեցող նստաշրջաններն ու հետազոտական արդյունավետ աշխատանքները:

Քսանհինգ տարիների ընթացքում «Բանբերը» անվերապահորեն իր հաստատուն տեղն է գրավել հայ գիտական մամուլի տարեգրության մեջ: Հանդեսի այդ մեծ հեղինակության ստեղծմանն անշուշտ նպաստել է նրա առաջին գլխավոր խմբագիր, ՀԳԱ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը, որին փոխարինել է պրոֆ. Հ. Ֆելեքյանը, այնուհետև՝ ակադեմիկոս Էդ. Աղայանը: Ընթացիկ տարվա սկզբից խմբագիրն է փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆ. Հր. Սիրգոյանը: Հանդեսի խմբագրական հանձնախմբում ընդգրկված են Երևանի համալսարանի առաջատար գիտնականներից շատերը: Պատասխանատու քարտուղար են աշխատել Հ. Ֆելեքյանը, Ա. Մուրադյանը, Ա. Ափինյանը: Այժմ նրա պատասխանատու քարտուղարն է Լևոն Ավետիսյանը:

Այսօր «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսը թևակոխում է գոյության նոր՝ ավելի պատասխանատու մի շրջան, երբ այն ստեղծագործական առավել մեծ փորձով ու հնարավորություններով կարող է նպաստել հայագիտության ու հասարակական գիտությունների զարգացմանը և նրանց ձեռք բերած նվաճումները դարձնել ժողովրդի սեփականությունը՝ դրանք ի պահ թողնելով գալիք սերունդներին:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Հայ պարբերական մամուլի պատմությունը եղել է հարուստ ու բազմազան: Սակայն մինչև խորհրդային կարգերի հաստատվելը հասարակական-քաղաքական ու գրական-գեղարվեստական հարյուրավոր թերթերի ու ամսագրերի կողքին շատ քիչ են հրատարակվել գիտական պարբերականներ: Ճիշտ է, տարբեր ժամանակներում լույս են տեսել որոշ գիտական հանդեսներ, բայց դրանք ունեցել են հազիվ մի քանի տարվա կյանք:

Հայերեն առաջին պարբերականը, որ լուսարանել է գիտական հարցեր, եղել է «Մետեորան» (խմբագիր-հրատարակիչ՝ Գ. Մսերյան): Այն լույս է տեսել Չմյուռնիայում և գոյատևել է երկու տարի՝ 1880-1882 թթ.: Տպագրվել է միայն երեք հատոր: Գիտական մյուս պարբերականը հրապարակախոս, հասարակական գործիչ, բժիշկ Ն. Տաղավարյանի «Գիտական շարժում» ամսագիրն է, որը հրատարակվել է Կ. Պոլսում և նույնպես ունեցել է կարճ կյանք (1885-87 թթ.): Տպագրվել է ընդամենը 24 համար:

Հայ մամուլի սկզբնավորումից (1794 թ.) մինչև 1920 թ. լույս տեսած շուրջ 2000 թերթերից ու հանդեսներից միայն 16-ն են ունեցել 30 և ավելի տարիների կյանք: Դրանց մեջ են այնպիսի հեղինակավոր ամսագրեր, ինչպիսիք են Վենետիկի Մխիթարյան միաբանության օրգան «Բազմավեպը» (տպագրվում է 1843 թվականից) և Վիեննայի Մխիթարյանների «Հանդես Ամսօրեան», որն արդեն 75 տարեկան է: Սակայն սրանք միշտ էլ իրենց ուշադրության կենտրոնում են պահել հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հարցերը և բնական գիտություններին գրեթե ուշադրություն չեն դարձրել:

Բնական գիտություններով զբաղվող հայ գիտնականներից մի քանիսը փորձեր են արել ստեղծելու գիտական պարբերականներ, բայց գանազան պատճառներով այդ բանը նրանց չի հաջողվել:

Հայաստանի խորհրդայնացումից հետո միայն հայ գիտնականների առջև բացվեցին գործունեության լայն հեռաստաններ:

1925 թ. Երևանի համալսարանում ստեղծվում է խորհրդահայ անդրանիկ գիտական պարբերականը՝ «ՀՍԽՀ պետական համալսարանի

գիտական տեղեկագիրը», որի էջերում տպագրվում են հայ գիտնականների՝ բնական ու հասարակական գիտություններին վերաբերող հոդվածները:

Երևանում 1935 թ. ստեղծվում է ՄՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը: Այն 1943 թ. վերակազմակերպվում ու դառնում է Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիա: Եվ արդեն շուրջ 30 տարի է, ինչ նրա բազմաթիվ ինստիտուտներում հայ գիտնականները զբաղվում են բնական ու հասարակական բոլոր գիտությունների հրատապ հարցերով, հաջողությամբ մշակում են գիտությունների զարգացման նոր ուղիներ ու մեթոդներ:

Այժմ Հայաստանի գիտությունների ակադեմիան հրատարակում է 13 անուն պարբերական, 2 անուն հավելված և զանազան այլ ժողովածուներ ու զեկույցներ:

Ինչպես միության, այնպես էլ աշխարհի գիտական հանդեսների շարքում այսօր իրենց պատվավոր տեղն ունեն ՀՄՍՀ գիտությունների ակադեմիայի պարբերականները, որոնց առաջնեկն է «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիրը: Սկզբում «Լրաբերը» կոչվել է «Տեղեկագիր» և այդ անվամբ հրատարակվել է մինչև 1966 թ.: Դրանից հետո անվանակոչվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» և այդ անունով էլ լույս է տեսնում առ այսօր:

«Լրաբերը» սկսել է հրատարակվել 1940 թ. հուլիսից: ՄՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի որոշմամբ՝ նրա էջերում լուսաբանվել են ինչպես հասարակական, այնպես էլ բնական գիտություններին վերաբերող գիտական հարցեր: Հանդեսի անդրանիկ երկու համարները լույս են տեսել միացյալ 242 էջ ծավալով և 1000 օրինակ տպաքանակով:

Մինչև 1943 թ. լույս են տեսել «Լրաբերի» 24 համարներ, որոնցում մարքսիզմ-լենինիզմի, փիլիսոփայության, տնտեսագիտության, պատմության, հայագիտության, լեզվաբանության, հնագիտության, արվեստի, կենսաբանության, քիմիայի, երկրաբանության, գյուղատնտեսության հարցերին նվիրված իրենց հետազոտություններով հանդես են եկել բազմաթիվ գիտնականներ: Սկսած առաջին համարներից՝ նրան աշխատակցել են նշանավոր գիտնականներ Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Գ. Դավանցյանը, Հ. Մանանդյանը, Ստ. Լիսիցյանը, Ե. Տեր-Մինասյանը,

Լ. Մելիքսեթ-Բեկը, Բ. Պիտրովսկին, Ա. Ռիխտերը, Ա. Վերմիշեր, Ա. Ֆեոդորովը, Հ. Գյուլիքևիսյանը և ուրիշներ:

Գիտության աննախընթաց վերելքն ու գիտական կադրերի արագ աճն առաջադրում են «Լրաբերի» շրջանակների ընդարձակում, որով լայն հնարավորություններ կստեղծվեր հասարակական ու բնական գիտությունների զարգացման համար: Այդ նպատակով էլ 1943 թ. այն սկսում է լույս տեսնել երկու առանձին՝ բնական ու հասարակական գիտությունների սերիաներով՝ իրար հավասար ծավալներով և միևնույն տպաքանակով (400 օրինակ):

«Լրաբերը» իր սկզբնավորման օրվանից մինչև 1950-ական թվականների վերջը եղել է հայերեն կանոնավոր լույս տեսնող հասարակական գիտությունների ակադեմիական միակ պարբերականը: Նա է առաջին անգամ որոշել գիտական այն սկզբունքները, որոնք օրինակ են հանդիսացել նրան զուգահեռ և հետագա տարիներին հրատարակված հայ գիտական պարբերականների համար: Հանդեսը միշտ էլ համաքայլ է ընթացել կյանքի պահանջներին, գործուն միջամտություն է ցուցաբերել հանրապետության գիտական մտքի կազմակերպման ու նրան ուղղություն տալու գործում, խթանել է հասարակական գիտությունների առանցքային հարցերի պարզաբանումը:

Իր հիմնադրման օրվանից մինչև 1948 թ. «Լրաբերի» լույս ընծայումը պարբերական բնույթ չի կրել: Միայն 1948 թվականից (բացառությամբ 1949 թ., երբ տպագրվել է 10 համար) հրատարակվում է ամեն ամիս: 1940 թվականից առ այսօր տպագրվել է «Լրաբերի» 348 համար, որոնցում ի մի են բերված խորհրդահայ հասարակական գիտությունների գրեթե բոլոր նվաճումները՝ գրանցված վերջին 30 տարիների ընթացքում: Հանդեսն իր էջերում լայն տեղ է հատկացրել ինչպես ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում, այնպես էլ հանրապետության բուհերում ու մյուս գիտական հաստատություններում կատարված արժեքավոր հետազոտություններին: Նրա էջերում տպագրվել են նաև օտարազգի հայագետների բազմաթիվ ուսումնասիրություններ:

Հայերեն ակադեմիական անդրամիկ պարբերականի՝ «Լրաբերի» այդ սկզբունքները պահպանվում են նաև այսօր: Նրա էջերում տեղ են գտնում պատմության ու գրականության, տնտեսագիտության ու փիլիսոփայության, արվեստի ու լեզվի, հնագիտության ու արևելագիտության

առավել քիչ ուսումնասիրված հարցերին մվիրված հոդվածներ, արժեքավոր վավերագրեր, գիտական ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հրապարակումներ:

«Լրաբերը» լայն տեղ է հատկացնում կոմունիստական շինարարության տեսական հարցերին, հայ ժողովրդի՝ խորհրդային տարիներին ձեռք բերած հոգևոր մվաճումների գիտական ընդհանրացումներին: Ամսագիրը հատուկ ուշադրություն է դարձնում սվյուռքահայության մշակութային կյանքի, հայ և մյուս ժողովուրդների պատմական ու արդի կապերի գիտական լուսաբանմանը: Նրանում գետեղվում են նորահայտ վավերագրեր, շատ նյութեր ուղեկցվում են պատկերազարդումներով: Առանձին բաժնում տպագրվում են գրախոսականներ՝ նոր լույս տեսած արժեքավոր գրքերի մասին, գիտական լուրեր և այլն: Նյութերն ուղեկցվում են ռուսերեն կամ հայերեն ամփոփումներով, նայած թե ինչ լեզվով է գրված հոդվածը:

«Լրաբերը» («Տեղեկագիրը») տարբեր ժամանակներում խմբագրել են Ս. Կարապետյանը, Հ. Օրբելին, Մ. Ներսիսյանը, Ա. Հովհաննիսյանը, Գ. Ստեփանյանը, Հ. Բատիկյանը, Խ. Մոմջյանը, Հ. Ասլանյանը, Գ. Աբովը, Հ. Ինճիկյանը: Այժմ նրա գլխավոր խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ծ. Աղայանը: Ամսագրի յուրաքանչյուր համարի ծավալը 7 մամուլ է, իսկ տպաքանակը՝ 3400 օրինակ: Այն լայն ընդունելության է արժանացել աշխարհի բազմաթիվ երկրներում:

Հանրապետության գիտությունների ակադեմիան, նշելով իր ավագագույն պարբերականի՝ «Լրաբերի» լույսընծայման 30-ամյակը, բարձր է գնահատել նրա ծառայությունները խորհրդահայ հասարակական գիտությունների զարգացման գործում: Այդ առթիվ ՀՍՍՀ ԳԱ նախագահության 1970 թ. ապրիլի 1-ին ընդունած որոշման մեջ ասված է. «Ամսագիրն իր էջերում գիտական պատշաճ բարձրությամբ լուսաբանել է հասարակագիտական գիտությունների զարգացման կարևոր խնդիրները, մեծապես նպաստել է հայագիտության զարգացմանը, մարքսիստական-լենինյան տեսության ոգով արծարծել է սոցիալիստական հասարակական գիտությունների զարգացման օրինաչափությունները:

Ամսագրի էջերում լայն տեղ են գտել հայ մշակույթի, գիտության տարբեր մարզերի հանգուցային հարցերը: Ամսագիրը կարևոր դեր է խաղացել հասարակական մտքի զարգացման բնագավառում, մշտա-

պես գտնվել է կոմունիստական կուսակցության մարքսլենինյան գաղափարախոսության պրոպագանդման առաջավոր դիրքերում» («Լրաբեր», 1971, № 1):

«Լրաբերը» գիտությանը մատուցած ծառայությունների համար 1970 թ. իր 30-ամյակի կապակցությամբ պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ խոշոր իրադարձություն էր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի օրգան «Պատմաբանասիրական հանդեսի» հիմնադրումը: Այն սկսեց լույս տեսնել 1958 թվականից: Նրա հրատարակումը հարստացրեց հայ գիտական պարբերական մամուլի տարեգրությունը<sup>60</sup>:

Բացի վերոհիշյալ հանդեսներից՝ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան հրատարակում է բնական գիտություններին նվիրված մեկ տասնյակից ավելի պարբերականներ: Դրանց մեջ իր պատվավոր տեղն ունի ակադեմիկոս Վ. Համբարձումյանի խմբագրությամբ լույս տեսնող «Աստրոֆիզիկա» հանդեսը: «Աստրոֆիզիկայի» երևան գալը հայ գիտական մամուլի զարգացման նշանակալից փաստերից մեկն է: Այն տպագրվում է 1965 թվականից ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ: Տարեկան լույս է տեսնում 4 համար:

«Աստրոֆիզիկան» տպագրում է գիտական ինքնատիպ հոդվածներ՝ աստղերի ֆիզիկայի, միգամածությունների ու միջաստղային միջավայրի ֆիզիկայի, աստղային և արտագալակտիկական աստղագիտության, ինչպես նաև աստրոֆիզիկայի սահմանակից բնագավառների գծով: Նրա էջերում հանդես են գալիս ինչպես մեր հանրապետության, այնպես էլ Խորհրդային Միության մեծամուն աստղագետ գիտնականներ: Հանդեսը տպագրվում է միայն ռուսերեն՝ անգլերեն ամփոփումներով:

Ամերիկայի Միացյալ Նահանգների «Ֆարադեյ-պրես» հրատարակչությունը «Աստրոֆիզիկա» հանդեսի յուրաքանչյուր համար թարգմանում է անգլերեն և տարածում աշխարհի բազմաթիվ երկրներում:

---

<sup>60</sup> «Պատմաբանասիրական հանդեսի» մասին մանրամասն տե՛ս մեր պարբերականի 1971 թ. № 11-ում:

«Աստրոֆիզիկա» հանդեսին կից տպագրվում է նաև «Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներ» հավելվածը: Արդեն տպագրվել է 43 պրակ: Բյուրականի օպտիկամեխանիկական լաբորատորիան 1971 թ. սկսել է տպագրել նաև «Մետաղների կտրման ֆիզիկա» հոդվածների ժողովածուի առաջին պրակը, որն այսուհետև պետք է կրի պարբերական բնույթ:

Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հնագույն պարբերականներից է «Հայաստանի կենսաբանական հանդեսը» (խմբագիր՝ Հ. Բատիկյան): Այն հիմնադրվել է 1948 թ.: Սկզբնական շրջանում տպագրվել է «Տեղեկագիր գյուղատնտեսական և կենսաբանական գիտությունների», իսկ 1952 թվականից՝ «Տեղեկագիր կենսաբանական գիտությունների» վերնագրով: 1966 թվականից այն կոչվում է «Հայաստանի կենսաբանական հանդես» և լույս է տեսնում յուրաքանչյուր ամիս:

Քիմիական գիտությունների զարգացման գործում մեծ է «Հայկական քիմիական ամսագրի» դերը: Այն լուսաբանում է ոչ միայն գիտությունների ակադեմիայում իրականացվող քիմիային վերաբերող գիտական փորձերի, այլև հանրապետության բուհերի ու գիտահետազոտական ինստիտուտների քիմիական լաբորատորիաներում կատարվող հետազոտությունների արդյունքները: Հանդեսն ունի «Ընդհանուր և ֆիզիկական քիմիա», «Օրգանական քիմիա», «Քիմիական տեխնոլոգիա» և «Հաղորդումների ու նամակների» բաժինները:

«Հայկական քիմիական ամսագիրը» տպագրվում է 1953 թվականից: Գլխավոր խմբագիրն է Գ. Թադևոսյանը:

ՀՄՍՀ գիտությունների ակադեմիան 1960 թվականից հրատարակում է «Էքսպերիմենտալ եվ կլինիկական բժշկության հանդեսը» (խմբագիր՝ Բ. Ֆանարջյան), որի ուշադրության կենտրոնում են հանրապետության բժշկագիտության զարգացման հարցերը: Նրանում տպագրվում են կլինիկական և փորձարարական բժշկության, ինչպես նաև հայ բժշկության պատմության վերաբերյալ հոդվածներ:

«Էքսպերիմենտալ և կլինիկական բժշկության հանդեսին» կից հրատարակվում է «Արյան շրջանառություն» երկամսյա հանդես-հավելվածը: Սրա հիմնական խնդիրն է գիտական հասարակայնությանը ծանոթացնել այն ինքնուրույն աշխատանքներին, որոնք կատարվում են բժիշկ-գիտնականների կողմից փորձարարական և կլինիկական սրտա-

բանության և արյան շրջանառության ասպարեզում: Հանդեսը լույս է տեսնում 1966 թվականից, որի գլխավոր խմբագիրն է Ա. Միքայելյանը:

«Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի զեկույցները» հրատարակվում է 1944 թվականից: Տարեկան լույս է տեսնում 10 համար (2 հատոր, 5-ական պրակ): Նրա էջերում գետեղվում են գիտական հետազոտությունների նոր, ինքնուրույն հոդվածներ՝ մաթեմատիկայի, մեխանիկայի, ֆիզիկայի, գեոֆիզիկայի, մետալոհենների, միկրոբիոլոգիայի, բիոֆիզիկայի, բիոքիմիայի, բույսերի ֆիզիոլոգիայի, կենդանիների ֆիզիոլոգիայի մասին: «Չեկույցների» գլխավոր խմբագիրն է ակադեմիկոս Ա. Նազարովը:

Ինչպես Հայաստանի, այնպես էլ Խորհրդային Միության ու արտասահմանյան գիտական լայն շրջաններին ծանոթ են ակադեմիայի «Մեխանիկա» (խմբագիր՝ Ն. Հարությունյան), «Մաթեմատիկա» (խմբագիր՝ Մ. Ջրբաշյան), «Ֆիզիկա» (խմբագիր՝ Գ. Ղարիբյան), «Գիտությունների երկրի մասին» (խմբագիր՝ Է. Խաչատրյան), «Տեխնիկական գիտությունների սերիա» (խմբագիր՝ Մ. Կասյան) տեղեկագրերը:

«Մեխանիկան», «Մաթեմատիկան» և «Ֆիզիկան» երկամսյա հանդեսներ են, հրատարակվում են 1966 թվականից: Սրանց հիմնական նպատակն է լուսաբանել մեխանիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բնագավառում հայ գիտնականների կատարած հետազոտությունները, որոնք լայն ճանաչում են գտել ամբողջ աշխարհում:

«Գիտությունների երկրի մասին» տեղեկագիրը, որը նույնպես տարեկան լույս է ընծայում 6 համար, գիտական հասարակայնությանը ծանոթացնում է հայ գիտնականների՝ երկրաբանական ու աշխարհագրական գիտությունների ասպարեզում ձեռք բերած նվաճումներին: Լույս է տեսնում 1958 թվականից:

Շինարարական կոնստրուկցիաներ, ջերմատեխնիկա, հիդրոտեխնիկա, հիդրավլիկա, մեքենաշինություն, մետալուրգիա, մետաղագիտություն, էներգետիկա, հաշվողական և չափողական տեխնիկա, էլեկտրատեխնիկա, գիտական նյութեր՝ տեխնիկական գիտությունների բնագավառներին վերաբերող այս հարցերն է շոշափում ՀՄՍՀ ԳԱ «Տեխնիկական գիտությունների սերիա» տեղեկագիրը, որը հրատարակվում է 1957 թվականից: Տարեկան լույս է տեսնում 6 համար:



Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բոլոր հանդեսները, բացի «Ատորոֆիզիկայից» և «Արյան շրջանառությունից» (սրանք հրատարակվում են միայն ռուսերեն), տպագրվում են հայերեն և ռուսերեն, իսկ գիտական կարևոր նշանակություն ունեցող շատ նյութեր ունենում են նաև անգլերեն ամփոփումներ:

Այս բոլոր հանդեսները միասին վերցրած տպագրվում են տարեկան մոտ 700 մամուլ ծավալով, 200 հազար ընդհանուր տպաքանակով: Այդ պարբերականները իրենց գոյությամբ լայնորեն նպաստում են խորհրդահայ բնական և հասարակական գիտությունների զարգացմանը, համախմբում են անվանի և երիտասարդ շնորհալի գիտնականներին, նպատակամղում են նրանց գործունեությունը, հեղինակային ակտիվի ուժերով արդյունավետ օգտագործում են իրենց հնարավորությունները՝ ճիշտ կերպով լուսաբանելով գիտությունների զարգացման ընթացքը, հարատացնում են հայ պարբերական մամուլի շուրջ երեքդարյա տարեգրությունը:

### **«ՊԱՏՄԱՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԳԵՍ»**

Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում բնական գիտություններին զուգընթաց հուժկու թափով զարգացան նաև հասարակական գիտությունները՝ պատմագիտությունն ու գրականագիտությունը, արվեստագիտությունն ու լեզվաբանությունը, հնագիտությունն ու փիլիսոփայությունը, մի նոր աստիճանի բարձրացավ հայագիտությունն իր լայն առումով: Սակայն, ինչպես գիտության մյուս բոլոր ճյուղերում, այնպես էլ պատմաբանասիրական գիտությունների բնագավառում միշտ էլ եղել են ու դեռ կան չլուսաբանված շատ խնդիրներ, գիտական մանրագնին ուսումնասիրության և արդիականության դիրքերից վերագնահատման կարոտ բազմաթիվ հարցեր: Ահա այս խնդիրների քննարկմանն ու լուծմանն օժանդակելու համար հանրապետության գիտությունների ակադեմիայի նախագահության հատուկ որոշմամբ 1958 թ. սկսվեց «Պատմաբանասիրական հանդեսի» տպագրությունը: Նրա երևան գալը գիտական ու մշակութային մեծ նշանակություն ունեցավ հայագիտության ու կովկասագիտության զարգացման բնագավառում:

Հենց առաջին համարից «Պատմաբանասիրական հանդեսը» արժանացավ գիտական հասարակայնության լայն շրջանների ուշադրությանը: Այն իր արժարժած հարցերի բնույթով ու բազմաբովանդակությամբ սիրելի դարձավ նաև շարքային ընթերցողների համար:

Իր սկզբնավորման օրվանից մինչև այժմ «Պատմաբանասիրական հանդեսը» հրատարակել է բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, լուսաբանել է հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, փիլիսոփայության ու մշակույթի այլևայլ բնագավառների մի շարք հանգուցային հարցեր: Նրա էջերում արժարժվել է նախամեսրոպյան հայ գրի ու գրականության խնդիրը, լուսաբանվել է Մ. Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրության հարցը, տպագրվել են միջնադարյան հայ փիլիսոփայության մի շարք սկզբունքային խնդիրներին վերաբերող հոդվածներ, հայկական գաղթօջախների պատմությունը լուսաբանող նյութեր և այլն:

Առաջին անգամ «Պատմաբանասիրական հանդեսն» է տպագրել գերմանացի նշանավոր արևելագետ Յ. Մարկվարտի «Պարսկահայք նահանգը» աշխատությունը, որը ներկայացնում է գիտական լուրջ հետաքրքրություն: Նշանավոր հայագետ, Բուխարեստի համալսարանի պրոֆեսոր Վ. Բըրըջյանուն հանդեսի էջերում տպագրել է իր «Հայ ժողովրդի ծագման մի քանի խնդիրներ» արժեքավոր ուսումնասիրությունը:

«Հանդեսը» բազմիցս անդրադարձել է հայ-ռուսական, ինչպես նաև ՍՍՀՄ մյուս ժողովուրդների և արտասահմանյան երկրների ժողովուրդների հետ հայ ժողովրդի ունեցած պատմական, տնտեսական, մշակութային, քաղաքական կապերի գիտական լուսաբանմանը: Այդ տեսակետից հիշատակման արժանի են Մ. Ներսիսյանի «Դեկաբրիստները Հայաստանում 1826-1828 թթ.», Ա. Հովհաննիսյանի «Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից», Լ. Մելիքսեթ-Բեկի «Հին Թիֆլիսի և հայ-վրացական կուլտուրական կապերի պատմությունից», Ա. Բաբայանի «19-րդ դարի հայ գրողները և Շիլլերը», Դ. Ղժրիկյանի «Հայերու մասնակցությունը միջնադարյան Ռուսաստանի դիվանագիտական կյանքին մեջ», Ա. Ալպոյաճյանի «Սպանիա և Հայաստան» ուսումնասիրությունները: Մի շարք հոդվածներ էլ տպագրվել են նվիրված հայ-բյուզանդական, հայ-հնդկական, հայ-վրացական հարաբերություններին: Հանդեսը նյութեր է տպագրել նաև վերջին 50 տարիների ընթացքում

որոշ թուրք պատմաբանների կողմից պատմական իրադարձությունների խեղաթյուրման մասին:

Հանդեսը հրապարակել է պատմական արժեքավոր արխիվային շատ փաստաթղթեր, տվել է նրանց մեկնաբանությունները: Անդրադարձել է հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական խնդիրներին, հայ ժողովրդի սոցիալական պայքարի ու ազգային-ազատագրական շարժման պատմությանը, Հայաստանի հելլենիստական շրջանի պատմությանն ու մշակույթին, քննարկել է 10-13-րդ դարերի վերածնության վաղ շրջանի խնդիրները Հայաստանում և այլն: Մի շարք հոդվածներ էլ տպագրվել են նվիրված հայ իրավունքի, հայ միջնադարյան մանրանկարչության, հայ ճարտարապետության, քանդակագործության, վիճակագրության, համեմատական լեզվաբանության, ինչպես նաև հայ բարբառագիտության հարցերի բազմակողմանի ուսումնասիրմանը:

Հայ բազմաթիվ բարբառների և ընդհանրապես բարբառների հարցերին նվիրված բանավեճը, որ սկսել էր «Պատմաբանասիրական հանդեսը», արձագանք գտավ նաև «Вопросы языкознания» ամսագրի էջերում: Այս բանավեճին մասնակցեցին ինչպես խորհրդային, այնպես էլ արտասահմանյան մասնագետները: «Вопросы языкознания» ամսագիրը բանավեճի եզրափակիչ ելույթում բարձր է գնահատել հանդեսի նախաձեռնությունն այդ խնդրի հարցադրման և արդյունավետ քննարկման գործում: Հանդեսում քիչ չեն նաև հայոց լեզվի, հայ մամուլի պատմության, բանահյուսության, առանձին բառերի և տերմինների ստուգաբանության հարցերին նվիրված հոդվածները: Նրա էջերում տպագրվել են խոշոր հայագետներ Յ. Մարկվարտի, Ն. Ադոնցի, Հր. Աճառյանի, Թ. Ավդալբեկյանի, Ա. Ալպոյաճյանի և ուրիշների, ինչպես նաև հայ մշակույթի գործիչներ Ստ. Նազարյանի, Ղ. Ալիշանի, Մուրացանի, Հ. Հովհաննիսյանի, Կոմիտասի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Ե. Չարենցի և այլոց անտիպ նամակներն ու գործերը:

Հանդեսի համարներում տպագրվել են Վ. Ի. Լենինի ժառանգությանը նվիրված բազմաթիվ հոդվածներ, որոնցից են՝ Գ. Ղարիբջանյանի «Լենինը և հայ ժողովրդի ազատագրումը», Լ. Աբրահամյանի «Լենինյան ազգային քաղաքականության պատմական նվաճումները», Մ. Մելիքյանի «Ժողովուրդների բարեկամության լենինյան ուսմունքը» և այլն:

Հանդեսի յուրաքանչյուր համարում հարուստ են լինում «Հաղորդումներ և նկատողություններ», «Հրապարակումներ», «Գրախոսություն», «Ինֆորմացիա» բաժինները: Իսկ արտասահմանում ապրող հայերի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքին վերաբերող նյութերը տպագրվում են «Սփյուռքահայ կյանք» առանձին բաժնում:

Մեծ հորելյաններից ու տարելիցներից հանդեսը նշել է հայ գրերի ստեղծող, 5-րդ դարի հանճարեղ մտածող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, միջնադարի մեծ բանաստեղծ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը, հայ ժողովրդի սգո՝ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցը, ազգային հերոս, մեծ զորավար Անդրանիկի (Ա. Օզանյան) ծննդյան 100-ամյակը, Երևանի հիմնադրման 2750-ամյակը, Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 100-րդ տարելիցները, Հայրենական մեծ պատերազմում խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 25-ամյակը, Հայաստանի խորհրդայնացման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման 50-ամյակը, Երևանի պետական համալսարանի հիմնադրման կեսդարյա հորելյանը և այլն:

Հանդեսի էջերում առ այսօր իրենց աշխատանքներն են տպագրել 600-ից ավելի գիտնականներ, որոնք բաժանվում են երեք խմբի:

Առաջին խմբին են պատկանում Հայաստանում ապրող և ստեղծագործող գիտնականները: Դրանցից են ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Մարյանը, Ա. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Ս. Երեմյանը, Բ. Պիտրովսկին, Ս. Ղարիբյանը, Լ. Խաչիկյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Գ. Սևակը, Ծ. Աղայանը, Գ. Ղարիբջանյանը, ՀՍՍՀ ԳԱ քղթակից-անդամներ Մ. Սկրյանը, Վ. Ռշտունին, Էդ. Աղայանը, Ա. Ղանալանյանը, Գ. Ջահուկյանը, Վ. Նալբանդյանը և շուրջ հինգ տասնյակ գիտության դոկտոր-պրոֆեսորներ ու թեկնածուներ:

Հեղինակների մյուս մասը միության տարբեր հանրապետությունների գիտնականներից են, որոնք զբաղվում են հայագիտության ու կովկասագիտության հարցերով ու դրանց առնչվող խնդիրներով: Այդ հեղինակներից են Մ. Կուսվեն, Ա. Կաժդան, Է. Բասկակովը, Ա. Յուխտը, Հ. Խալվախչյանը (Մոսկվա), Ն. Տոկարսկին, Տ. Իզմայլովան, Ա. Սիվկովը, Ի. Գինգբուրգը, Ա. Յակոբսոնը, Ա. Փերիխանյանը (Լենինգրադ), Մ. Դի-

միտրիենկոն, Ֆ. Շևչենկոն (Կիև), Խ. Փորքեշյանը (Ռոստով), Ի. Կրի-  
այակևիչը, Յա. Իսակիչը, Վ. Գրաբովեցկին, Ն. Կրիվոնսոնը (Լվով), Ա.  
Գուլիևը, Մ. Արիֆը (Բաքու), Ի. Աբուլաձեն, Ի. Ենիկոլտպովը, Կ. Կուցի-  
ան, Շ. Չխեթիան (Թբիլիսի), Բ. Թռչաքյանը (Մոսկ) և բազում ուրիշնե-  
րը:

Մեծ թիվ են կազմում նաև արտասահմանյան հեղինակները, որոն-  
ցից են Հ. Սիրունին, Իոն Նանուն, Դ. Ղժրիկյանը, Ս. Գսգանյանը՝ Ռու-  
մինիայից, Ն. Գասպարյանը՝ Բուլղարայից, Ն. Մարտիրոսյանը, Լ. Մո-  
տալովան՝ Չեխոսլովակիայից, Փանչանան Սահան՝ Հնդկաստանից,  
Ֆրեդերիկ Ֆեյդին, Ժան Ֆուրկեն, Գ. Կյուլբեկյանը, Լ. Մեսրոպը՝ Ֆրան-  
սիայից, Ա. Պատմագրյանը՝ Իրանից, Ա. Ալպոյաճյանը՝ Եգիպտոսից,  
Մ. Հովհաննիսյանը, Ջինոն Արրիզին՝ Իտալիայից, Հրանտ Ք. Արմենը,  
Թոմսոնը, Մ. Թերեաքյանը՝ ԱՄՆ-ից և այլք:

«Պատմաբանասիրական հանդեսը» հենց առաջին համարից գրա-  
վեց Խորհրդային Միության ու արտասահմանյան շատ երկրների գիտ-  
նականների ու գիտական հաստատությունների ուշադրությունը, լայն  
արձագանք գտավ և բարձր գնահատվեց հայ առաջադեմ գործիչների ու  
մամուլի կողմից: Հռչակավոր գիտնական, հանգուցյալ ակադեմիկոս  
Հովսեփ Օրբելին 1960 թ. խմբագրությանը հղած իր նամակում գրել է, որ  
սկսել է լույս տեսնել «շատ լուրջ ակադեմիական ժողովուրդ»: 1964 թ. Օքս-  
ֆորդի համալսարանից գրում են. «Մենք գտնում ենք, որ «Պատմաբա-  
նասիրական հանդեսը» մեր գրադարանի ամենահետաքրքրական ու ա-  
մենաարժեքավոր համալրումն է, և անհամբեր սպասում ենք հետագա  
համարների ստացմանը»: Իսկ Վենետիկի Մխիթարյաններից 1967 թ.  
ստացված մի նամակում ասված է, որ «Պատմաբանասիրական հանդե-  
սը» «իրապես պարծանք մըն է ամբողջ հայության մեջ իր լրջությամբ»:  
Այդպիսի դրվատական նամակներ հանդեսի խմբագրությունը ստացել է  
նաև Լոնդոնից, Փարիզից, Մոֆիայից, Կալիֆորնիայից և բազմաթիվ այլ  
քաղաքներից ու երկրներից:

«Պատմաբանասիրական հանդեսի» աշխատանքները բարձր են  
գնահատել «Սովետական Հայաստան», «Коммунист», «Լրաբեր», «Լե-  
նինյան ուղիով» թերթերն ու պարբերականները: Հանդեսի լույս ընծայ-  
ման 10-ամյակի առթիվ 1968 թ. հանրապետության գիտությունների ա-  
կադեմիայի նախագահությունը խմբագրությանը հղած իր ուղերձում

նույնպես դրվատանքի ջերմ խոսք է ասում՝ նկատի առնելով հայագիտության ու կովկասագիտության ասպարեզում նրա կատարած լուրջ ծառայությունները:

«Պատմաբանասիրական հանդեսը» իր արծարծած հարցերի բազմազանությամբ ու խորությամբ վաղուց դարձել է հայագիտության ամենակարևոր ու հեղինակավոր օրգանը: Այն իր հատուկ տեղն ունի Սիուքյան գիտական պարբերականների շարքում: Մեծ են նաև նրա տարածման շրջանակները՝ Վրաստան, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս, Ուկրաինա, Մոսկվա, Լենինգրադ և ՍՍՀՄ այլ քաղաքներ, ինչպես նաև Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի բազմաթիվ երկրներ (Ֆրանսիա, Անգլիա, ԱՄՆ, Կանադա, Արգենտինա, Ավստրալիա, Եգիպտոս, Իտալիա, ԳՖՀ, Սիրիա, Լիբանան, Իրան, Հնդկաստան, Ավստրիա, Եթովպիա, Ռումինիա, Չեխոսլովակիա, Լեհաստան, Հունգարիա, ԳՂՀ, Նորվեգիա և այլն): Հանդեսը ստանում են նաև բոլոր հայ գաղթօջախներում ու աշխարհի բոլոր խոշոր գրադարաններում: Արտասահմանյան մի շարք պարբերականներ կատարում են նրանից արտատպություններ:

Առաջին տարում՝ 1958 թ., լույս է տեսել «Պատմաբանասիրական հանդեսի» երեք, իսկ հաջորդ բոլոր տարիներին՝ 4-ական համար: Առ այսօր հրատարակվել է 55 համար: Հանդեսի առաջին համարից մինչև այժմ նրա գլխավոր խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը, իսկ խմբագրական հանձնակազմի մեջ մտնում են մեկ տասնյակից ավելի նշանավոր հայագետ-կովկասագետներ:

«Պատմաբանասիրական հանդեսի» գործունեության մասին կարելի է գրել ավելի ընդարձակ, նույնիսկ նրա յուրաքանչյուր բաժին առանձին ուսումնասիրության նյութ կարող է հանդիսանալ, բայց այդ բանը թույլ չեն տալիս ամսագրային հոդվածի շրջանակները:

«Պատմաբանասիրական հանդեսը», հավատարիմ մնալով անդրամիկ համարում հրապարակված իր սկզբունքներին, գիտնականների համատեղ ուժերով ու ջանքերով շարունակում է զարգացնել հայ ժողովրդի պատմության և մշակույթի ուսումնասիրության աշխատանքները, անշեղ պայքար մղել պատմաբանասիրական գիտությունների հետագա զարգացման ու վերելքի համար, հայագիտության և կովկասագիտության հանգուցային ու այժմեական հարցերը և դրանց առնչվող գիտական

բազմաթիվ խնդիրները լուսաբանել մարքսիստական-լենինյան տեսանկյունից:

## **«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» («ՀԱՆՂԵՍ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ») ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԼՐԱՏՈՒՆ**

Քառորդ դար առաջ՝ 1967 թվականին, լույս տեսավ «Երևանի համալսարան» քառամսյա հանդեսի անդրամիկ համարը: Ժամանակի պոլիգրաֆիական, տպագրատեխնիկական հնարավորությունների սահմաններում այն մի գեղեցիկ, պատկերազարդ լրատու էր՝ հարուստ բովանդակությամբ, արտաքին պատշաճ տեսքով ու ներքին ուշագրավ ձևավորումով՝ ուղեկցված գունավոր ներդիրներով ու մեծադիր լուսանկարներով:

«Երևանի համալսարանը», անցած քսանհինգ տարիների ընթացքում հրատարակվելով ամխափան պարբերականությամբ, ծառայել է իր նպատակին, լուսաբանել է Հայաստանի առաջատար բուհի՝ Երևանի պետական համալսարանի հարուստ առօրյան, նյութեր տպագրել այնտեղ կատարվող ուսումնական և գիտական աշխատանքների, համալսարանի միջազգային կապերի մասին, ներկայացրել ուսանողության, դասախոսների, ասպիրանտների, ողջ կոլեկտիվի բազմերանգ կյանքը: Հանդեսը պարբերաբար անդրադարձել է նաև մեր հանրապետության մյուս բուհերին, նրանցում կատարվող առավել աչքի ընկնող գիտահետազոտական աշխատանքներին: Այդ ամենի հետ մեկտեղ նրա էջերում ներկայացվել են մեր անցյալի նշանավոր համալսարաններն ու կրթօջախները, նրանցում աշխատած երևելի մատենագիրների ու դպիրների, եվրոպական կրթություն ստացած գիտնականների վարքն ու աշխարհայացքը: Բազմաթիվ էջեր են նվիրվել արտասահմանյան և նախկին Խորհրդային Միության հնագույն համալսարանների ու բուհերի պատմությանը:

Այն, լինելով գիտաինֆորմացիոն բնույթի հանդես, կարողացել է գիտության ու բուհական կյանքի հարահոս նորությունների հորձանքից քաղել ու իր ընթերցողներին ներկայացնել առավել կարևոր և գիտության ու բարձրագույն կրթության զարգացմանը նպաստող տեղեկություններ,

ցույց տալ մեր հանրապետության գիտակրթական գործի առաջընթացը: Նրա էջերում ներկայացվել են հայոց դպրության ու մշակույթի ականավոր դեմքերի և մեր բարձրագույն կրթության հմուտ կազմակերպիչների, Երևանի պետական համալսարանի երախտավորների, ճանաչված դոկտորների ու պրոֆեսորների, վաստակաշատ դոցենտների ու գիտությունների թեկնածուների կյանքն ու գիտամանկավարժական գործունեությունը: Այնտեղ հանդես են եկել ինչպես Երևանի համալսարանի, այնպես էլ Հայաստանի ու նախկին Միության մյուս հանրապետությունների ու արտասահմանյան համալսարանների անվանի գիտնականներ, գիտության վաստակավոր գործիչներ, գիտական և կրթական գործի փորձառու կազմակերպիչներ, սփյուռքահայ մտավորականներ, որոնք իրենց խոսքն են ասել համալսարանական կրթության ու գիտության զարգացման համաշխարհային արդի մակարդակի մասին:

«Երևանի համալսարան» հանդեսը միայն գիտության ու կրթության մասին չէ, որ նյութեր է տպագրել: Նրա էջերում զետեղվել են նաև մեր հանրապետության սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական խնդիրներին, մշակութային կյանքին, մեր հեռավոր ու մոտիկ անցյալի պատմության կնճռոտ հարցերին նվիրված ուսումնասիրություններ, գրախոսվել են նոր լույս տեսած արժեքավոր գրքերը, և այդ ամենը կատարվել է լրագրական ու գիտական պատշաճ մակարդակով: Ինչ խոսք, եղել են նաև բացթողումներ ու թերություններ, բայց այսօր մեր նպատակից դուրս է դրանց անդրադառնալը: Նրա փոքրաթիվ խմբագրությունը և խմբագրական հանձնախումբը ջանացել են ամեն ինչ անել, որպեսզի հանդեսը հրատարակվի ժամանակին ու բարձր մակարդակով: Եվ դա հիմնականում հաջողվել է նրանց:

«Երևանի համալսարան» հանդեսն այսօր արդեն թևակոխել է իր գոյության հասուն շրջանը: Ներկայումս այն պետք է առավել մեծ փորձով ու պատասխանատվությամբ լուծի իր առջև դրված բազմաթիվ խնդիրները, դառնա Հայաստանի Հանրապետության բուհական կյանքն արտացոլող եզակի հանդես: Եվ իրոք, այդպիսի ծրագրով էլ այն շարունակելու է իր գործունեությունը: Խմբագրությունը և խմբակըն առաջիկայում հարստացնելու են նրա թեմատիկան, բացելու են նոր բաժիններ ու խորագրեր, ավելի են կայունացնելու հները, լրատվական բնույթը փո-



խարհի մեջ է վերադարձվել, և այդպիսով այն դառնալու է ավելի հետաքրքիր ու բովանդակալից:

Սակայն, ցավոք սրտի, մեր հանդեսը դեռևս 1980-ական թվականների սկզբներից արդեն կանգնել էր ծանր կացության առջև: Հիմնականում պահպանելով իր հարուստ բովանդակությունը՝ այն ձևավորման ու տպագրատեխնիկական կատարելության առումով իր նախկին դիրքերը զգալիորեն զիջել էր: Սկզբում նրա գունավոր, շքեղ շապիկին փոխարինեց միագույն, անշուք շապիկը՝ նույնիսկ անվարժ գրված վերնագրով, իսկ մի կարճ ժամանակ անց այդ միագույն շապիկն էլ չքացավ, և հանդեսը սկսեց լույս տեսնել կիսով չափ փոքրացված անշուք տեսքով, անհրապույր կազմով: Նրա էջերից վերացան ոչ միայն գունավոր նկարները, այլև լուսանկարներն ընդհանրապես, և այն կանգնեց փակման վտանգի առջև:

Այդ ամենը կատարվեց նյութական շուկայական հարաբերությունների անցնելու շրջանում սուղ պայմանների հետևանքով, երբ աստիճանաբար, իսկ հետո նաև միանգամից հարյուրապատիկ բանկացան թողթը, տպագրական նյութերը, կլիշեները և ընդհանրապես գրքի վրա կատարվող աշխատանքները: Սրանց էլ ավելացան էլեկտրաէներգիայի ճգնաժամը, դրանից բխող աշխատանքային խափանումներն ու ընդհատումները, որոնց հետևանքով ամիսներով ձգձգվում է գրքերի ու հանդեսների, այդ թվում նաև՝ «Երևանի համալսարանի» տպագրությունը:

Սակայն, չնայած այս ամենին, շարունակվելու է «Երևանի համալսարան» հանդեսի գոյությունը: Եվ որպեսզի մեր հանդեսը կարողանա հաղթահարել իր առջև ծառայած այս ժամանակավոր թվացող դժվարությունները և ծառայի իր հիմնական նպատակին, այն է՝ նպաստի մեր հանրապետության բարձրագույն կրթության ու գիտության զարգացմանը, պետք է ունենա ինչպես վերադաս մարմինների, այնպես էլ Երևանի պետական համալսարանի ղեկավարության, մեր գիտնականների, ընթերցողների և բոլոր նրանց աջակցությունը, ովքեր գնահատում են գիտության և համալսարանական կրթության դերն ու նշանակությունը հասարակական կյանքում:

Մենք պետք է միավորենք մեր բոլորի ուժերը և աշխատենք փոխադարձ օգնությամբ ու շահավետ համագործակցությամբ հաղթահարել առկա դժվարությունները, ուղիներ որոնենք՝ դուրս գալու ներկա ճգնա-

Ժամից ու շարունակելու հանդեսի երկրորդ քսանհինգամյակի տարեգրությունը:

## **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՍԿԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՆԳԵՍ**

Լույս տեսավ «Արաքս» հայ-բասկական միջազգային գիտական եռամսյա հանդեսի անդրանիկ համարը, որը հրատարակում է Երևանի պետական համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնին առընթեր հայ-բասկյան գիտամշակութային համամուն ընկերությունը: Այն բացվում է «Նախաբան»-ով, որի մեջ տրված են հանդեսը լույս ընծայելու նպատակներն ու խնդիրները: Այնտեղ մասնավորապես ասված է, որ խնդրո առարկա առնչությունների հարցը կամ, ավանդական անվանումով, բասկերի ու նրանց լեզվի հայկական ծագման մասին վարկածը գիտությանը հայտնի է ավելի քան չորս հարյուր տարի: Այդ ընթացքում տարբեր հեղինակներ շրջանառության մեջ են դրել բազմաթիվ ուշագրավ փաստեր, մատնանշել են հայ-բասկյան առասպելաբանական, լեզվական, ազգագրական և այլ կարգի զուգահեռներ: Դրանց զանգվածային բնույթը, առանձին դեպքերում նաև խոր հնությունն ու ապացուցողական մեծ արժեքը կասկած չեն թողնում, որ մենք գործ ունենք ոչ թե հատուկենտ, պատահական զուգադիպումների, այլ առավել արմատական ցեղային-լեզվամշակութային ընդհանրությունների մի կուռ և ամբողջական համակարգի հետ:

Բասկերն ապրում են Իսպանիայի կամ Պիրենյան թերակղզու հյուսիսարևելյան մասերում՝ Ալավա, Գիպուսկա և Բիսկայա նահանգներում, մասամբ՝ նաև Նավարայում և Ֆրանսիայի ներքին Պիրենեյներ դեպարտամենտում: Կարծիքներ կան, որ հնում բասկերի զբաղեցրած տարածքը շատ ավելի ընդարձակ է եղել և ընդգրկել է ինչպես Պիրենյան թերակղզու, այնպես էլ Արևմտյան Եվրոպայի ուրիշ շրջաններ: Բասկերը Եվրոպայի հնագույն ժողովուրդներից են և, ըստ ներկայումս տարածված կարծիքի, իրենց այժմյան տարածքներում ապրում են անհիշելի ժամանակներից, ստեղծել և պահպանում են իրենց հարուստ մշակույթն ու ինքնատիպ լեզուն:

Բասկերի ու նրանց լեզվի հայկական ծագման մասին առաջին ուղղակի վկայությունը գտնում ենք բասկ պատմաբան Էստերան դե Գարիբայի «Պատմական համառոտություններ» (1571 թ.) աշխատության մեջ: Գարիբայը, ներկայացնելով հայ-բասկյան առանձին տեղանվանական զուգահեռներ, եզրակացնում է, որ բասկերենը պետք է նմանություններ ունենա Հայաստանի լեզվի հետ: Նույն դարի մեկ այլ բասկ հեղինակ՝ Անդրեա դե Պոսան, իր «Իսպանիայի հնագույն լեզվի, բնակավայրերի ու գավառների մասին» գրքում (1587 թ.) խոսում է բասկերի՝ հենց Հայաստանից գաղթած լինելու մասին: Այս հիշատակությունները, ինչպես նաև բասկ պատմաբան Բալտասար դե Էչավեի «Ճառեր» աշխատության մեջ (1607 թ.) բերված հայ-բասկյան տեղանվանական զուգահեռները «հայկական չափանիշներով» կարող են թվով շատ պարզունակ և զուրկ գիտական արժեքից: Մակայն չպետք է մոռանալ, որ խոսքը վերաբերում է բասկերի գրչության սկզբնավորման ժամանակներին, այսինքն՝ ժամանակագրական առումով բասկերի համար Գարիբայը, Պոսան և Էչավեն նույն նշանակությունն են ունեցել, ինչ որ հայերի համար՝ Ագաթանգեղոսը, Խորենացին, Բուզանդը կամ Եղիշեն: Եվ առաջին հերթին հենց դրանով պետք է բացատրել բասկերի հայկական ծագման մասին վարկածի մեծ կենսունակությունն ու հետագա մշակումը բասկ-իսպանական միջավայրում: Բավական է նշել, որ բասկերի ծագումնաբանական վարկածների ընդարձակ շարքում հայկական տարբերակն ավելի քան չորս հարյուր տարի գերիշխող է եղել և դիտվել է իբրև ազգային, հիմնական ուղղություն՝ մուտք գործելով նաև գեղարվեստական գրականություն:

Այնուհետև հանդեսի խմբագրականում նշվում է, որ հայ-բասկյան հիմնահարցն իր զարգացման գագաթնակետին է հասնում մեր դարի 20-ական թվականներին, երբ դրա ուսումնասիրությամբ սկսում են զբաղվել նաև հայագետները: Այս առումով հայագիտությանն ու բասկագիտությանը մեծ ծառայություն են մատուցել հատկապես մեծանուն գիտնականներ Նիկողայոս Մառը և Յոզեֆ Կարստը: Առանց վարանելու կարելի է ասել, որ հենց նրանց շնորհիվ հայագիտության առջև բացվեցին բասկագիտության դռները, և հայկական նյութը հասավ մինչև Պիրենեյներ: Մառն ու Կարստը բասկերի հայկական ծագման մասին վարկածը բարձրացրին գիտական լուրջ տեսության մակարդակի, շրջանառության

մեջ դրեցին մինչ այդ անհայտ շատ մեծ թվով ուշագրավ գուգահեռներ, և փաստորեն կայացավ երկու քույր գիտությունների՝ հայագիտության և բասկագիտության երկար սպասված հանդիպումը: Մակայն, դժբախտաբար, Մառի և Կարստի գաղափարները չգարգացվեցին հետագա ուսումնասիրողների կողմից: Կուտակված հարուստ նյութը մոռացության մատնվեց. հայ-բասկյան առնչությունների հարցը, չնայած որոշակի գիտական մշակվածությանը, իր դիրքերը զիջեց այլ վարկածների առջև և այժմ դիտվում է սոսկ իբրև պատմական երևույթ:

Վերջին տասնամյակներում հայագիտությունն ու բասկագիտությունը վիթխարի առաջընթաց են ապրել: Այսօր մենք անհամեմատ ավելի շատ բան գիտենք վանյան արձանագրությունների լեզվի՝ ուրարտերենի մասին, ըստ հնարավորին պարզաբանվել են նաև հաերենի և հայասերենի փոխհարաբերության հարցերը: Հայերեն բառերի ստուգաբանության ասպարեզում ևս անչափ մեծ աշխատանք է կատարվել:

Այս շրջանում բասկագիտությունը նույնպես մեծ առաջընթաց է ապրել: Հատկապես բասկագետ Լուիս Միչելենայի «Բասկերենի պատմական հնչյունաբանություն» աշխատության լույս տեսնելուց հետո (1961 թ.) բասկագիտության մեջ շատ բան է փոխվել: Հնարավորության սահմաններում ճշգրտվել են բասկերենի և հարևան հնդեվրոպական լեզուների փոխազդեցությունների հարցերը: Նշանակալի երևույթ էր նաև Անտոնիո Տոբարի և Մանուել Ագուդի «Բասկերեն ստուգաբանական բառարանի» առաջին հատորի (1989 թ.) հրատարակությունը:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ, դարասկզբի համեմատությամբ, ներկայումս գործ ունենք ուրիշ հայագիտության և ուրիշ բասկագիտության հետ, և ինքնըստինքյան հասկանալի է, որ բասկերի հայկական ծագման մասին վարկածին մախկինում տրված գնահատականն էլ այժմ արդեն ուրիշ պետք է լինի: Կարող ենք վստահաբար ասել, որ հայագիտությունն ու բասկագիտությունն այսօր, առավել քան երբևէ, պատրաստ են ձեռնամուխ լինելու հայ-բասկյան հիմնահարցի համակողմանի ուսումնասիրությանը: Դա պետք է կատարվի համակարգված ձևով՝ հաշվի առնելով ինչպես կուտակված փաստական հարուստ նյութը, այնպես էլ հայագիտության և բասկագիտության նորագույն տվյալները:

Այս նպատակն է հետապնդում նորաստեղծ «Արաքս» հանդեսը: Այն ճանապարհ է հարթելու նաև միջազգային գիտական համագործակ-

ցության համար՝ նյութեր տպագրելով ամենատարբեր լեզուներով: Այդ է վկայում հանդեսի անդրանիկ համարը, որում գետեղված նյութերը տրված են նաև բնագրի լեզվով, ունեն հայերեն և իսպաներեն ամփոփումներ:

«Արաբսի» անդրանիկ համարում գետեղված նյութերը նպատակ ունեն ընթերցողին ծանոթացնելու հայ-բասկյան առնչություններին, և, որքան հնարավոր է, տալ այդ հարցի պատմությունն ու գիտական բացատրությունը: Այդ առնչություններին վերաբերող հավաստի տեղեկություններ են տալիս ֆրանսահայ մտավորական և հասարակական գործիչ Արամ Գնթունու՝ «Հայրենիքի ձայն»-ի խմբագրությանն ուղարկած նյութերը (1970 թ.), որոնք ժամանակին ինչ-ինչ պատճառներով չեն տպագրվել: Դրանք են «Պասկը կարելի չէ զանազանել հայեն...» և «Տեսակցություն մը Սպանիո Վալիատոլիտ քաղաքի պասկագիտական սեմինարիայի ղեկավար, բանագետ-լեզվագետ Լուիս Միչելենայի հետ» հոդվածները, որոնք մոլ լույս են սփռում հայ-բասկյան առնչությունների վրա:

Բասկերենի համաժամանակյա և տարաժամանակյա հնչյունաբանությանն է վերաբերում Կոլումբիայի և Սորբոնի համալսարանների պրոֆեսոր Անդրե Մարտինեի ուսումնասիրությունը, որը՝ որպես զեկուցում, նա կարդացել է 1981 թ. Բիլբաո քաղաքում տեղի ունեցած բասկագիտական գիտաժողովում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Բասկերի երկրի տապա-նաքարերը» ուսումնասիրությունը, որը պատկանում է նշանավոր բասկ գիտնական, ակադեմիկոս Միգել Բարանդիարանի գրչին: Այն ժամանակին տպագրվել է բասկերեն-իսպաներեն զուգահեռ տեքստերով և պարունակում է ութ հարյուրից ավելի բասկյան տապանաքարերի կամ, այլ կերպ ասած, սկավառակածև քարակոթողների նկարագրությունն ու հիմնական տարրերի մոտիվների վերլուծությունը:

Բասկյան այդ քարակոթողները, որոնք գալիս են հնագույն ժամանակներից և բասկերի երկրին բերում են, Բարանդիարանի խոսքերով ասած, «Եվրոպայի այս շրջանի ամենահարուստ քարարվեստ ունեցող երկրի համբավը», մնամություններ և առնչություններ ունեն հայկական խաչքարերի հետ: Հայկական և բասկյան խաչքարերի այդ ընդհանուր գծերը, զուգադիպող մոտիվներն ու զարդանախշերը, ինչպես նաև այս

քարակոթողներին շրջապատող հոգևոր միջավայրը պետք է դիտարկվեն և գնահատվեն հայ-քասկյան լեզվական, մարդաբանական և ազգագրական այլ ընդհանրությունների համակարգում՝ վերջիններիս հետ մեկ ամբողջության մեջ:

Հանդեսում տպագրված են սկավառակաձև քարակոթողների ծագման, նրանց կառուցվածքին ու առանձին տարրերին վերաբերող մանրամասներ և դրանց մասին հեղինակի եզրակացությունները, որոնք ներկայացվում են հիշյալ տապանաքարերի 126 գծապատկերների հետ: Գիտական հավաստի տեղեկություններ է պարունակում բունեոսայրեսցի դոկտոր Գ. Օ. Գալուստյանի՝ «Սիոն» հանդեսի 1953 թ. հունվարյան համարից արտատպված «Սպանիոյ և Ֆրանսայի ասիմաններուն վրայ, Պիրենեան լեռներու ստորոտը հայ հին գաղութի մը հետքերը» հոդվածը, որում հեղինակն իսպաներեն մի սկզբնաղբյուրի հիման վրա ցույց է տալիս, որ բասկերը (վասգոնները) և հայերը ցեղակցական կապեր ունեն: Հեղինակը գրում է. «Յետո, կայ նաև մեր գիտցածը. որքան մեծ նմանութիւն հայկական բարձրաանդակի, Մեծ Հայքի, լեռնականներու դիմագծին, նկարագրին, կենցաղին և բարքերուն միջև: Ծիշդ միևնոյն կէտերը՝ իմ վասգոն բարեկամս ալ դիտած էր և կատարեալ համաձայն էինք»:

Հոդվածի հեղինակը նշում է նաև, որ «Ռօքնալի հովիտն ունի եօթը գիւղեր: Գլխավոր գիւղին անունն է Իսապա, որ կը նշանակէ ըստ տեղական բարբառի «նախահարց լոյս»». այս գիւղին հիմնադիր ցոյց կը տրուի Թուպալ անունով ցեղապետ մը որ եղած է Հայերու առաջնորդը, այս գլխաւոր գիւղը Նավարիայի թագաւորութեան թագաւորանիստ քաղաքը եղած է ժամանակին»:

Այնուհետև հեղինակը հոդվածում բերում է պատմական մի շարք տեղեկություններ, որոնք, հիմնված լինելով արխիվային վավերագրերի, հին ձեռագրերի, ժողովրդական ավանդությունների, երգերի, հավատալիքների ու սովորույթների վրա, հավաստում են այն, որ վաղնջական ժամանակներում Հայաստանից Իսպանիայի Նավարա նահանգն են տեղափոխվել մի խումբ «արի, անայլայլ, օտարի լուծին և ոչ ալ ազդեցութեան չենթարկուող» հայեր և բնակություն հաստատել այդ հեռավոր հովտում:

Գալով տեղանունների նմանությանը՝ հեղինակը նշում է. «Կայ մեծ նմանություններ պաքերու երկրի անուններուն և Հայաստանի անուններ-

րուն միջև: Արարատը Հայաստանի մէջ այն լեռն է, որուն գագաթին վրայ կարծուի թե հանգչեցաւ Նոյեան տապանը: Նմանապէս՝ Նավարայի մէջ ներկայիս գտնոււմ են այն լեռը, որ կոչուի Արալար: Հոս կա նաև Արաքս գետը. նաև Հայաստանի մէջ Արաքս գետը: Կօրպեժա Լասկոն Կատայի մէջ. Կօրպեժա՝ նաև Հայաստանի մէջ»:

Մեկ այլ հեղինակ՝ Ատուր Յր. Եաղուպեանը (Լոս Անջելոս), «Հայաստանեայց եկեղեցի» պարբերականի 1941 թ. սեպտեմբերյան համարից արտատպւած իր «Հայ վեղար եւ թափօր ի Սպանիա» վերնագրով հաղորդման մէջ, որը ներկայացւած է «Հետաքննական նօթեր» վերտառութեամբ, նշում է, որ «Հին Սպանիոյ մասին այլեայլ գրքեր եւ պատկերներ աչքէ անցուցած ատենս Սպանիոյ Թոլէտո քաղաքին մէջ «Վանքի մը մէջ Թափօր» պատկերը տեսա, ուր Հայ վարդապետներու վեղար եւ շուրջառով թափօր կը դառնային»: Այն նկարը վերաբերում է մոտավորապէս 13-րդ դարասկզբին:

Հեղինակը, հենվելով Ֆրանսիայի հին շրջանի պատմութեան, «Կրօնքի» և այլ «հանրագիտարանների» վկայակոչած տեղեկությունների վրա, եզրակացնում է, որ բասկերենի քերականութեան որոշ օրենքներ նման են հայերենի օրենքներին: Այդ առթիվ նա վկայակոչում է մի շարք հայերեն բառեր, որոնք նույնութեամբ կամ մասնակի հնչյունավորութեամբ ներկայումս օգտագործվում են իսպաներենում:

Հանդեսում տպագրւած է նաև «Առաջին ջրաղացի մասին բասկյան առասպելի հայկական տարբերակը» հաղորդումը, որին կից ներկայացվում են այդ ավանդազրույցի հայկական և բասկյան տարբերակները՝ քաղված Ե. Լալայանի երկերի 1-ին հատորից (Երևան, 1983, էջ 223) և բասկ գիտնական, ակադեմիկոս Խոսե Մարիա Սատրուստեգիի «Առասպելներ և հավատալիքներ» գրքից (Ման Մեքաստիան, 1980, էջ 172-173, իսպաներեն): Դրանք հանդեսում ներկայացված են հայերեն և իսպաներեն զուգադրությամբ:

Հանդեսի ներկա համարը եզրափակվում է անգլիացի նշանավոր բասկագետ Էդվարդ Սպենսեր Դոջսոնի «Բասկերեն բառերը հայերենում» բառացանկով: Այն ունի նաև համառոտ ներածական, որում տրված են այդ բառացանկի ստեղծման (19 սեպտեմբերի 1893 թ.) հակիրճ պատմությունը և նրա հեղինակի մասին որոշակի կենսագրական տեղեկություններ: Այս հոդվածի տպագրությունը հայ-բասկյան առնչու-

թյունների հարցին վերաբերող այլ փաստեր ու նյութեր որոնելու և հայտնաբերելու նպատակ ունի նաև: Այն թարգմանվել է «Էռուկարա» հանդեսի՝ 1894 թ. մայիսյան համարից, որը սիրով «Արաքսի» խմբագրությանն է տրամադրել բասկերի երկրի Ասկուեի անվան ազգային գրադարանի տնօրեն Խոսե Անտոնիո Արանա Մարտիխան:

Հայ իրականության մեջ միջազգային գիտական հանդես ստեղծելու անդրանիկ փորձերից է «Արաքսի» ծնունդը: Այն առաջին հերթին շահագրգռված գիտնականների համախմբելու նպատակ է հետապնդում, ինչպես նաև կոչված է ճանապարհի հարթելու միջազգային գիտական համագործակցության համար: Հանդեսը նյութեր է ընդունելու և հրատարակելու ամենատարբեր լեզուներով:

Հանդեսի խմբագրությունը նպատակ է դրել կապեր հաստատելու նաև բասկագիտական այլ կենտրոնների հետ ինչպես Իսպանիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: «Հարյուրամյակներ շարունակ, կարողում ենք նրա խմբագրականում, հայագիտությունն ու բասկագիտությունը զարգացել են իրարից անկախ, թեև ունեցել են շփման բազմաթիվ եզրեր, և այսօր «Արաքս» ընկերակցությունը փորձում է այդ երկու բույր գիտությունների միջև միջնորդի դեր կատարել: Թե դա որքանով կհաջողվի, մեծապես կախված է մեր ընթերցողներից, որոնք, հույս ունենք, մեր հեղինակներն են լինելու»:

Խմբագրական խորհուրդը հանդեսի հիմնական խնդիրներից մեկն էլ համարում է անցած տասնամյակներին պարբերական մամուլում հրապարակված և գիտնականների տեսադաշտից դուրս մնացած բոլոր այն նյութերի արտատպությունը, որոնք կարող են հուշել նոր գաղափարներ և յուրովի խթանել բասկագիտության զարգացումը:

Հանդեսի խմբագրական խորհրդում մի խումբ հայ գիտնականների հետ ընդգրկված են նաև մեր ժամանակների երկու ականավոր բասկ գիտնականներ՝ բասկերի երկրի ակադեմիայի գիտական քարտուղար, «Ֆոնտես լինգվե վասկոնում» հանդեսի գլխավոր խմբագիր Խոսե Մարիա Սատրուստեգին և Ասկուեի անվան գրադարանի ակադեմիկոսավանդապահ Խոսե Անտոնիո Արանա Մարտիխան, և սփյուռքահայեր՝ Վ. Մաթևոսյանը (Արգենտինա), Ա. Տոնոյանը (ԱՄՆ) և ուրիշներ: Գլխավոր խմբագիրն է Վ. Սարգսյանը, իսկ գիտական խորհրդատուն՝ Գ. Ջահուկյանը:



Ներկա համարը պատրաստել են Վահան Սարգսյանը և ԵՊՀ հա-  
յագիտական կենտրոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր Ա. Մադոյանը:

**«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ»**  
**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ**

Երևանի պետական համալսարանում լույս տեսնող գիտական հան-  
դեսների ու ժողովածուների թիվը գնալով աճում է: Արդեն երկրորդ տա-  
րին է, ինչ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի գիտական հետազոտու-  
թյունների կենտրոնը հրատարակության է պատրաստում «Իրավագի-  
տության հարցեր» գիտական աշխատությունների միջբուհական ժողո-  
վածուն, որի տպագրությունն առաջին տարում՝ 1997 թ., հովանավորել է  
Ֆրանսիայի հայ փաստաբանների և իրավաբանների միությունը, իսկ  
այս տարվա սկզբից այդ պարտականություններն իր վրա է վերցրել  
ԱՄՆ-ի հայ իրավաբանների միությունը:

Անցյալ տարի տպագրվել է ժողովածուի 4 համար, իսկ այս տարի  
արդեն լույս են տեսել 3-ը, մեկն էլ գտնվում է տպագրության փուլում:  
Այսպիսով, կարող ենք ասել, որ «Իրավագիտության հարցեր» ժողովա-  
ծուի պարբերականությունը տարեկան կազմում է 4 համար: Մինչև այժմ  
լույս տեսած 7 համարներում տպագրվել են ինչպես ԵՊՀ իրավաբանա-  
կան ֆակուլտետի դասախոսների, այնպես էլ հանրապետության նշա-  
նավոր իրավագետների գիտական հետազոտությունները՝ նվիրված Հա-  
յաստանի երրորդ հանրապետության Սահմանադրության, քաղաքացի-  
ական ու քրեական օրենսգրքերի, օրենսդրական դաշտի ստեղծման խն-  
դիրներին: Մի շարք ուսումնասիրություններ էլ արժարժում են հայ իրա-  
վունքի պատմության ու տեսության հարցերը:

Ժողովածուի առաջին համարը բացվում է Ն. Այվազյանի՝ Հայաս-  
տանի Հանրապետությունում մարդու իրավունքների սահմանման և  
պաշտպանության մի քանի հարցերի գիտական լուսաբանությանը  
նվիրված հոդվածով: Մեկ այլ հոդվածում էլ (հեղինակ՝ Ռ. Պետրոսյան)  
քննարկվում են սեփականության իրավունքի, ընդհանրապես գույքային  
իրավունքի խնդիրները: Նույն համարում Գ. Ղազինյանն իր նկատա-  
ռումներն է շարադրել ՀՀ ապագա քրեական դատավարության օրենս-

գրքի նախագծի մասին: Գիտական ուշագրավ խնդիրներ են քննարկվում նաև Գ. Ղարախանյանի («Ծնողների պատասխանատվությունը մինչև տասնհինգ տարեկան փոքրահասակների պատճառած վնասի համար»), Հ. Խաչիկյանի («Մարդասիրությունը և բարեփոխումները ուղղիչ հիմնարկներում»), Գ. Պետրոսյանի («Զաղաքացիների աշխատանքային իրավունքների քրեաիրավական պաշտպանությունը») և ուրիշների հոդվածներում:

Ժողովածուի հետագա համարներում ևս վերոհիշյալ հեղինակներն իրենց նոր ուսումնասիրություններն են տպագրել. միաժամանակ դրանցում ընդգրկվել են նոր թեմաներ ու հեղինակներ: Այսպես՝ Ռ. Պետրոսյանն իր հոդվածում տվել է քաղաքացիական դատավարության ռոմանագերմանական և անգլոսաքսոնական համակարգերի համեմատական բնութագիրը ժամանակակից իրավագիտության մեջ (1997 թ., № 4), իսկ Ն. Ալիյանը քննարկման նյութ է դարձրել «Ազգային հարցը և տարածքը» (1998 թ., № 1) կարևոր թեման, որում, ներկայացնելով 1920-ական թթ. ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի կողմից թույլ տրված անօրինականություններն ու սխալները Լեռնային Ղարաբաղի հարցի կապակցությամբ, հետևեցնում է, որ արցախահայության այսօրվա պայքարը ինքնուրույն պետականության ու տարածքի համար՝ որպես այդ սխալների ու բռնությունների արդյունք, լիովին արդարացված է: Հեղինակն իր հոդվածում մերժում է ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի ինչպես 1921 թ. հուլիսի 5-ի, այնպես էլ ՌԿ(Բ)Կ Անդրերկրումի՝ 1923 թ. հուլիսի 7-ի որոշումները՝ որպես իրավաբանական ուժ չունեցող փաստաթղթեր:

Ժողովածուում հետաքրքիր ուսումնասիրություններ են տպագրել նաև Վ. Վաղարշակյանը («Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր մարմինների մասին (1918-1920 թթ.)» (1997 թ., № 1)), Ա. Ջալինյանը («ՀՀ Սահմանադրական դատարանը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը» (1997 թ., № 4)), Լ. Բաբայանը («Հռոմեական իրավունքը և արդիականությունը» (1998 թ., № 1)) և այլք: Մեկ ամբողջական համար էլ (1997 թ., № 3) նվիրված է «Իրավաբանական կրթության խնդիրները և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով 1997 թ. մայիսի 8-9-ը Երևանում անցկացված միջազգային գիտաժողովի նյութերին:

Ժողովածուի ցարդ տպագրված 7 համարներում գետեղված են 100-ից ավելի իրավաբանական գիտական նյութեր: Խրախուսելի է, որ նրա վերջին երկու համարներում տպագրված են նաև ուսանողների գիտական հետազոտությունների արդյունքները:

«Իրավագիտության հարցեր» միջբուհական ժողովածուն ունի խմբագրական խորհուրդ, որում ընդգրկված են մի խումբ ճանաչված հայ իրավագետներ ոչ միայն Հայաստանից, այլ նաև արտերկրից (Ֆրանսիա, ԱՄՆ): Ժողովածուի գլխավոր խմբագիրն է պրոֆ. Ռ. Պետրոսյանը, իսկ պատասխանատու քարտուղարը՝ դոց. Ա. Հարությունյանը:

Ավարտելով մեր այս հակիրճ խոսքը «Իրավագիտության հարցեր» գիտական աշխատությունների միջբուհական ժողովածուի մասին՝ կարող ենք ասել, որ մենք արդեն ունենք մի պարբերական, որը միտում ունի դառնալու հայ իրավագիտական մտքի հեղինակավոր ամբիոն: Վերջում ուզում ենք անել զուտ տեխնիկական բնույթի մի դիտողություն. սովորաբար նույն անվամբ և պարբերաբար լույս տեսնող հանդեսներն ու ժողովածուները համարակալվում են անընդմեջ՝ նոր տարեշրջանի համարներին փակագծերում ավելացնելով նաև անցած տարիների համարները, մի բան, որն այս ժողովածուի համարակալման մեջ բացակայում է, և այն պետք է ուղղել առաջիկա համարից կամ նոր տարեշրջանից:

Մնում է հաջողություններ մաղթել նորաստեղծ միջբուհական գիտական ժողովածուի հրատարակիչներին և հույս հայտնել, որ այն կդառնա լիարժեք ու կայուն մասնագիտական հանդես:

## **«ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ» ՆՈՐԱՍՏԵՂԾ ԵՐԿԱՄՍՅԱ ՀԱՆԳԵՍԸ<sup>61</sup>**

Հայ մամուլը վերջին տասնամյակներում թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում հարստանում է հասարակական-քաղաքական ու մասնագիտական-ճյուղային նորանոր լրագրերով ու հանդեսներով, որոնց թվում կան նաև գիտակրթական աչքի ընկնող պարբերականներ: Դրանցից մեկն էլ «Կրթությունը և գիտությունը Ղարաբաղում» գիտահանրամատ-

<sup>61</sup> «Հանդես Երևանի համալսարանի» լրատու:

չելի և գիտամեթոդական հանդեսն է, որն արդեն երրորդ տարին է, ինչ մեծ դժվարություններ հաղթահարելով և դեռևս անկանոն պարբերականությամբ լույս է տեսնում՝ իր տեղը հաստատելով հեղինակավոր պարբերականների շարքում:

Վերջերս ընթերցողին հասավ նրա՝ թվով 3-րդ համարը. առաջինը տպագրվել է 1996 թ. հուլիսին, իսկ 2-րդը՝ 1997 թ.:

Նորաստեղծ հանդեսի անդրամիկ համարը բացվում է ԼՂՀ վարչապետ Է. Պետրոսյանի «Քարի երթ»-ի խոսքով, որում մասնավորապես ասված է. «Անշուշտ, գնահատելի ու ողջունելի է ԼՂՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարության նախաձեռնությունը՝ մամուլի հրատարակման ասպարեզում մեր ժամանակներին բնորոշ տարաբնույթ դժվարությունների առկայության պայմաններում ձեռնամուխ լինել գիտամեթոդական հանրամատչելի հանդեսի լույսընծայմանը, ինչը, բնականաբար, ինքնին որոշակի խիզախում է պահանջում: Դա, ըստ երևույթին, բխում է ոչ այնքան Լեռնային Ղարաբաղում նման մի պարբերական նույնպես ունենալու, մեզ մոտ լույս տեսնող մամուլի տակավին մոտ շարքերը ևս մեկ պարբերականով համալրելու սոսկ ենթակայական մղումից, որքան այդ հրատարակության շուրջ հանրապետության առկա մտավոր ներուժը համախմբելու, ասպարեզում կուտակված փորձը, տեսական ժառանգությունն ի մի բերելու և երիտասարդ սերունդներին փոխանցելու, այդպիսով իսկ՝ Լեռնային Ղարաբաղում գիտական, հասարակական մտքի շարունակական, հարաճուն զարգացմանը շոշափելի խթան տալու գուտ առարկայական անհրաժեշտությունից»:

Ծիշտ է գրում հեղինակը. Արցախն ունի կուտակված հարուստ փորձ թե՛ գիտակրթական համակարգում, թե՛ հասարակական-քաղաքական ու գրական-մշակութային կյանքում և թե՛ մամուլի ու գրատպության ասպարեզներում, որն այսօր անհրաժեշտ է ի մի բերել և, հարստացնելով նորօրյա կուտակումներով, փոխանցել գալիք սերունդներին: Դա մեծ ջանք ու եռանդ պահանջող աշխատանք է, որի իրականացման համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան տպագիր օրգան, որը ստեղծվել է ճիշտ ժամանակին, և որի պակասն Արցախում վաղուց զգացվում էր:

Գիտամշակութային ու կրթական հարուստ ավանդույթներ ունեցող Արցախը վերջին տասնամյակներում այդ բնագավառներում զիջել էր իր

դիրքերը: Աղբբեջանի ազերիների կողմից ամեն ջանք գործադրվել էր, որպեսզի մայր հայրենիքից բռնագատված հայոց մշակույթի երբեմնի այդ ծաղկուն լեռնակողին, մտավոր սնուցման ոչ մի երակ չունենալով, հիմնովին չորանար, մեսրոպյան գիրն ու դպրությունն իսպառ վերանային: Եվ դա այն դեպքում, երբ դեռևս V դարում Մաշտոցն ինքը գրերը ստեղծելուց անմիջապես հետո այս կողմերում՝ Ամարասում, հիմնել է իր առաջին դպրոցը: Հետագայում՝ հատկապես X-XIII դարերում, Արցախում՝ Գանձասարի, Երեքմանկանց, Գոչա և այլ վանքերին կից, բացվել են բարձր տիպի դպրոցներ, իսկ ավելի ուշ՝ XVIII-XIX դարերում, շատ գյուղերում գործել են նաև ծխական դպրոցներ: XIX դարում, այս դպրոցներից զուգահեռ, խոշոր բնակավայրերում ու քաղաքներում հիմնադրվել են նաև գավառական, թեմական և ռեալական դպրոցներ, որոնց շարքում մեծ է եղել Շուշիի թեմական հոգևոր դպրոցի դերը: Այն հիմնադրվել է 1838 թ. հունիսի 22-ին և գործել է մինչև 1918 թ.: Նման դպրոցներ 1857-58 թթ. բացվել են նաև Գանձասարում ու Դաղիվանքում: Շուշիի դպրոցներից ժամանակին մեծ համբավ է ունեցել նաև Մարիամ Հախումյանի ջանքերով ու միջոցներով 1864 թ. հիմնադրված Ղարաբաղի «Սուրբ Մարիամ» օրիորդաց հայկական միջնակարգ դպրոցը, որը, փաստորեն, աղջիկների անդրանիկ ուսումնարանն է եղել այս լեռնաշխարհում: Հիշյալ դպրոցներին զուգահեռ Շուշիում գործել են նաև յոթնամյա և միջնակարգ արական ու իգական ռուսական դպրոցներ: Նախախորհրդային շրջանում միայն Շուշի քաղաքում եղել է 12 դպրոց, իսկ ողջ Արցախի տարածքում դրանց թիվը հասնում էր 50-ի, որոնցում սովորում էին 4000-ից ավելի աշակերտներ: Այդ դպրոցներում, հոգևոր առարկաներից ու «Աստվածաշնչից» բացի, ուսուցանվում էին նաև մայրենի լեզու և գրականություն, հայոց պատմություն, վայելչագրություն ու նկարչություն, բնական գիտություններ, ինչպես նաև արհեստներ: Այդ դպրոցներում դասավանդում էին ժամանակի անվանի մանկավարժներ, գրական ու մշակութային գործիչներ, որոնց թվում՝ Պետրոս Շանշյանը, Պերճ Պողոջյանը, Ղազարոս Աղայանը, Սեդրակ Մանդինյանը, Վրթանես Փափազյանը, Լեոն (Առաքել Բաբախանյան), Համբարձում Առաքելյանը, Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Հայկ Գյուլիքևսյանը, Ավետիք Տեր-Պողոսյանը և շատ ուրիշներ:

ԼՂՀ ներկայիս մայրաքաղաք Ստեփանակերտը ևս անցյալ դարի կեսերից հայտնի է դարձել որպես կրթամշակութային աշխույժ կենտրոն: Այս բնակավայրն ունի շուրջ 2000 տարվա պատմություն: Մինչև 1847 թ. կոչվել է Վարարակն, հետագայում՝ Խանքենո, որը 1847 թ. դասվել է քաղաքների շարքը, իսկ 1923 թ.՝ ականավոր հեղափոխական, հասարակական-քաղաքական ու պետական մեծանուն գործիչ Ստ. Շահումյանի հիշատակը հավերժացնելու նպատակով վերանվանվել է Ստեփանակերտ: Այնտեղ 1920-ականներից գործել է գյուղատնտեսական տեխնիկում, 1940 թ. հիմնադրվել է երկամյա ուսուցչական ինստիտուտ, 1970-ականներին բացվել է մանկավարժական ինստիտուտ՝ հայկական, ռուսական և աղբյուրագրական բաժիններով: Հետագայում հիմնադրվել և մինչև 1993 թ. գործել են Վանաձորի մանկավարժական և Երևանի ճարտարագիտական ինստիտուտների մասնաճյուղերը, որոնց հիման վրա էլ կազմակերպվել է Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը (ներկայումս՝ Արցախի պետական համալսարան):

Աղբյուրցանի վարչակազմի մեջ մտնելուց հետո (1921 թ. հուլիսի 5-ին)՝ նախախորհրդային շրջանում, մամուլի և գրատպության հարուստ ավանդույթներ ունեցող Ղարաբաղում դադարում է գրահրատարակչական գործը: Շուշի քաղաքը, որը դեռևս անցյալ դարի կեսերից Անդրկովկասում հայտնի էր որպես արդյունաբերական, արհեստագործական ու կրթամշակութային նշանավոր կենտրոն, հայ գրքի ու մամուլի հրատարակության կարևոր օջախ, մղվում է հետին պլան: Մի քաղաք, որը հայ պատմագրության մեջ հիշատակվում է IX դարից, 1752 թվականից դառնում է բերդ-ամրոց, 1840 թ.՝ դասվում Անդրկովկասի խոշոր քաղաքների շարքը: 1916 թ. Շուշին ունեցել է 43.5 հազար բնակիչ, որից 35 հազարը հայեր էին: Սակայն խորհրդային շրջանում հայերն այստեղից աստիճանաբար արտաքսվում են, և քաղաքը մնում է ազերիների:

Շուշիում դեռևս 1827 թ. Շվեյցարիայի Բագել քաղաքից Ավետարանական միսիոներական ընկերության անդամներ Ա. Դիտրիխի ու Ֆ. Ջարենբախի նախաձեռնությամբ բացվում են դպրոց ու տպարան: Այդ տպարանում էլ 1828 թ. լույս է տեսնում Շուշիում առաջին գիրքը՝ «Պատմություն սուրբ գրոց»: Այդ տպարանն իր գործունեության 8-9 տարիների ընթացքում լույս է ընծայել 11.679 օրինակ գիրք:

Երկրորդ տպարանը Ղարաբաղում բացվում է Շուշիի թեմական դպրոցին կից, որտեղ 1874 թ. տպագրվում է Խորեն Ստեփաննի խմբագրած «Հայկական աշխարհ» շրջիկ հանդեսը, որը հիմնադրվել էր 1864 թ. Թիֆլիսում, մինչև 1871 թ. տպագրվել էր այնտեղ, 1875 թ.՝ Գանձակում, 1876 թ.՝ դարձյալ Թիֆլիսում, իսկ 1877-79 թթ.՝ Բաքվում ու Երևանում: Դա կապված էր աշխատանքի բերումով խմբագրի տեղափոխությունների հետ: 1881 թ. Շուշիում բացվում է Միրզաջան Մահտեսի Հակոբյանի՝ թվով երրորդ տպարանը, որն ավելի է աշխուժացնում մամուլի ու գրատպության գործը: Այնտեղ սկսում են տպագրվել «Քնար խոսնակ», «Գործ», «Ազգագրական հանդես», «Ղարաբաղ», «Շուշինսկի լիստոկ», «Շուշինսկայա ժիզն», «Փայլակ», «Ծիածան», «Նեցուկ», «Արցախ», «Նոր կյանք» և այլ հանդեսներ ու թերթեր: Շուշիում են տպագրվել նաև Բաֆիու, Պերճ Պռոշյանի, Ղազարոս Աղայանի, Լեոյի և շատ այլ գրողների ու գիտնականների մի շարք գրքեր:՝

Ահա այսպիսի հարուստ տպագրական ավանդույթներ ունեցող երկրամասում ազերիներն ավերել ու ոչնչացրել էին տպագրական գործը: Արցախում այդ տարիներին լույս էին տեսնում ընդամենը երկու մարզային և չորս շրջանային թերթեր, որոնց մի մասը՝ աղբյուրներն ու ռուսերեն: Պարզ է՝ դրանք չէին կարող բավարարել ընթերցող լայն շրջանների ու մասնագետների պահանջները: Այստեղ տասնամյակներ շարունակ չէին տպագրվում հայերեն գրքեր, գրական-գեղարվեստական ու մշակութային, գիտամեթոդական և այլ բնույթի պարբերականներ, որոնք այնքան անհրաժեշտ էին պատմական հարուստ անցյալ ու հին մշակույթ ունեցող, ճարտարապետական կոթողներով առատ երկրամասի համար:

Ահա նաև այս հիմնախնդիրներն էին ստիպում արցախահայությանը ընդվզել աղբյուրների թուրքամետ վարչակարգի դեմ: Այսօր Ղարաբաղը պայքարով իր իրավունքները նվաճած, պատերազմում հաղթանակած ազատ ու անկախ հանրապետություն է, որն ինքն է որոշում իր անելիքները երկրամասի կրթական ու գիտամշակութային կյանքում, որոնց լուծմանը նպաստելու համար էլ ստեղծվել է «Կրթությունը և գիտությունը Ղարաբաղում» հանդեսը, որի նմանը արցախահայ մամուլի պատմությունը չի ունեցել: Այդ առթիվ ընթերցողներին ուղղված իր սրտի

խոսքում ճիշտ է նկատում ԼՂՀ կրթության, գիտության ու մշակույթի նախարար Հ. Գրիգորյանը, երբ գրում է. «Դարեր շարունակ Արցախն աշխարհին տվել է գիտության, դպրության և մշակույթի լավագույն ներկայացուցիչներ, որոնց կյանքն ու գործը եղել են իսկական սխրանք, բայց նրանք իրենց սեփական հողում չեն ունեցել մեծ մի պարբերական, որը կարողանար վեր հանել իրենց գիտական մտքի սխրանքները, օգտակար լինել բնօրրանի ծաղկմանն ու բարգավաճմանը...»:

«Արցախյան հինավուրց հողի վրա հաստատված մաշտոցյան ոգեղեն ամբողջին ավելացող այս սրբատաշ քարը,- ավելացնում է նա,- հայտառ ու հայագիր այս հանդեսը լծվում է դժվարին, բայց շնորհակալ մի գործի, որի նպատակն է կրթության, գիտության և մշակույթի նորությունները հասցնել իր ընթերցողին, լինել յուրաքանչյուր մանկավարժի ու մշակույթի բնագավառի աշխատողի ամենօրյա օգնականն ու խորհրդատուն, Արցախ լեռնաշխարհի տաղանդների հայտնաբերողը, ատեղ-ծագործական լավագույն ավանդույթների ժառանգորդն ու շարունակողը»:

Ծանոթանալով հանդեսի արդեն լույս տեսած երեք համարների բովանդակությանը՝ կարելի է նկատել, որ լայն են նրա արծարծած խնդիրների շրջանակները՝ մաթեմատիկա և ֆիզիկա, տեխնիկա և ինֆորմատիկա, քիմիա և կենսաբանություն, երկրաբանություն և աշխարհագրություն, ինչպես նաև հայ բանասիրություն ու պատմագիտություն, երաժշտություն ու ճարտարապետություն, մանկավարժություն ու հոգեբանություն, ազգագրություն ու բանասիրություն և այլ բնագավառներ: Գիտաճյուղերի այս հարուստ ընդգրկումը հանդեսում ներկայացվում է «Գոյապայքար», «Հանրակրթության դժվարամատչ քառուղիներում», «Արցախյան շարժման նախակարապետները», «Արցախի տնտեսությունն ու բնապաշարները», «Համալսարանական կրթություն և գիտություն», «Արցախահայ դպրոցի պատմություն» բաժիններում, ինչպես նաև «Գիտական», «Գիտահանրամատչելի», «Օգնություն ուսուցչին», «Հայ նշանավոր գիտնականներ», «Մեթոդական ցուցումներ», «Առաջարկում է մասնագետը» ենթաբաժիններում: Հանդեսի վերջին էջերը հիմնականում զբաղեցնում են «Մեր օրացույցը», «Դպրոցականների համար», «Հետաքրքրասերների համար», «Մեր հեռակա օլիմպիադան», «Խճանկար», «Խնդրաշտեմարան» խորագրերի տակ զետեղված



հակիրճ նյութերը, որոնք պատանիների մեջ կարող են սեր արթնացնել գիտության ու մշակույթի նկատմամբ, հաճախ էլ՝ օգնել ուսուցիչներին այս կամ այն հարցը պարզաբանելիս: Հանդեսը տպագրում է նաև նշանավոր արցախցիկների վերաբերյալ, ակնարկներ ներկայացնում կրթության ու մշակույթի բնագավառների առաջավորներին: Ուշադրություն են գրավում այնտեղ տպագրված հետաքրքրաշարժ նյութերը, խաչբառերը, հանելուկներն ու զվարճալի խնդիրները: Առանձին բաժին են կազմում նոր լույս տեսած գրքերի մասին գրախոսությունները:

Հանդեսի նյութերի զգալի մասը նվիրված է Արցախի կրթության, գիտության ու մշակույթի պատմությանն ու արդի վիճակին, երկրամասի գիտատեխնիկական առաջընթացի, պետականության կերտման և Հայաստանի հետ նրա տնտեսության սերտացման հիմնախնդիրներին: Մի շարք նյութեր էլ նվիրված են Արցախի տնտեսության ղեկավարման ժամանակակից հիմնախնդիրներին և այլն:

Այդ նյութերից ընդհանուր պատկերացում ենք կազմում Արցախի կրթական ու մշակութային համակարգի մասին: ԼՂՀ-ում այսօր գործում է 148 հանրակրթական դպրոց, որից 91-ը՝ միջնակարգ, 46-ը՝ ոչ լրիվ միջնակարգ, 11-ը՝ տարրական: Այդ դպրոցներում սովորում են 22044 աշակերտներ, որոնց կրթությամբ ու դաստիարակությամբ զբաղված են 2735 ուսուցիչներ: Հանրապետության կրթական համակարգի առայժմ միակ բուհն Արցախի պետական համալսարանն է, որտեղ սովորում են 2025 ուսանողներ: Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններից են Շուշիի մշակութալուսավորչական և Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանները, որոնցում համապատասխանաբար սովորում են 159 և 137 ուսանողներ, իսկ երեք պրոֆտեխուսումնարաններում ընդգրկված են 641 սովորողներ: Այս թվերը, իհարկե, այսօր փոփոխված կլինեն: Սակայն փաստ է, որ վերջին տասնամյակում պատերազմը, բնակչության բռնի տեղահանություններն ու ոչնչացումը, գյուղերի ավերումն ազդեցիկների կողմից մեծ հարված են հասցրել ոչ միայն Ղարաբաղի տնտեսությանը, այլև կրթական համակարգին. փակվել են շատ դպրոցներ, գրեթե կիսով չափ պակասել է սովորողների թիվը: Արցախում կրթական գործի արագ զարգացման մասին պատկերացում կազմելու համար նշենք, որ «1923-1924 ուստարում մարզում դպրոցների թիվը հասել էր 104-ի, աշակերտների թիվը՝ 7687-ի, իսկ ուսուցիչների թիվը՝ 222-ի:

Իսկ 1930 թ. այստեղ աշխատում էր ավելի քան 2 հազար ուսուցիչ: 1940-41 ուստարում մարզում գործում էր 196 դպրոց, իսկ 1970-71 ուստարում՝ 216 դպրոց՝ 40,3 հազար աշակերտով: Վերջին տվյալներով (1987 թ.) ԼՂԻՄ-ի (առանց Շահումյանի շրջանի) դպրոցների թիվը հասնում էր 195-ի, որտեղ սովորում էր շուրջ 32 հազար աշակերտ»<sup>62</sup>: Իհարկե պետք է նկատի ունենալ, որ հեղինակի բերած այս թվերի մեջ է մտնում նաև մարզում տվյալ ժամանակներում գործած աղբյուրաչափային դպրոցների և նրանց աշակերտների քանակը:

Հանդեսի հրապարակումներից կարելի է եզրակացնել, որ Արցախի կրթամշակութային համակարգն առաջիկայում կընդլայնվի ու մեծ զարգացում կապրի, կբացվեն նորանոր դպրոցներ և ուսումնարաններ, որոնցից մեկն էլ վերջերս Շուշի քաղաքում բացված «Արամ Մանուկյան» վարժարանն է:

Նշված կրթական ու մշակութային հաստատությունների կյանքը ևս պետք է գտնվի հանդեսի մշտական ուշադրության կենտրոնում, ինչպես նշված է նրա «Բարի երբ»-ում: Հանդեսը չունի զուտ տեղական բնույթ: Այն լուսաբանում է նաև Հայաստանի, Սփյուռքի և արտերկրի կրթական, գիտական ու մշակութային կյանքի հետաքրքիր ու արժեքավոր էջերը, անդրադառնում այդ բնագավառների նշանավոր մարդկանց գործունեությանը:

Ամփոփելով ավելացնենք միայն, որ խմբագրությունը դեռ շատ անելիքներ ունի հանդեսի վերջնական ձևավորման և արժարժվելիք խնդիրների շրջանակները սահմանագծելու ուղղությամբ: Հանդեսը դեռևս չունի իր վերջնական տեսքն ու բովանդակությունը, չեն պահպանվում նյութերի ծավալն ու համամասնությունը, բաժիններն ու օգտագործվող խորագրերը հաճախ չեն համապատասխանում հանդեսի բնույթին, տպագրվում են կրթությանն ու գիտությանը չառնչվող նյութեր, բաժինները չունեն իրենց կայուն դասավորությունն ու հերթագայությունը: Մի շարք խորագրեր, ինչպիսիք են, օրինակ, «Օգնություն ուսուցչին»-ը, «Մեթոդական ցուցումներ»-ը և այլն, փոխանակ տարվեն վերջին էջերը, տեղ են զբաղեցնում հանդեսի կենտրոնական մասերում: Նկատե-

---

<sup>62</sup> Տե՛ս Ս. Մելքումյան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտելիք» հրատ., 1977, էջ 123:

լի են մաս լեզվական անհարթություններ, կան գիտական սխալ ձևակերպումներ, ոճական անճշտություններ և այլ բնույթի վրիպումներ:

Մեզ թվում է՝ այս ամենն ունի ժամանակավոր բնույթ՝ կապված մեր օրերի դժվարությունների ու տնտեսական ճգնաժամի հաղթահարման հետ: Կարճ ժամանակ անց բոլոր խնդիրները կհաղթահարվեն, և «Կրթությունը և գիտությունը Ղարաբաղում» հանդեսը կդառնա Արցախ աշխարհի գիտամշակութային ու կրթական համակարգի հայելին, կունենա իր ուրույն դեմքն ու դիրքը մեր հարուստ մամուլի անդաստանում, մանավանդ որ նրա շապիկի վրա ներկայացված է Մաշտոցի ձեռքով Արցախում ստեղծված առաջին դպրոցի՝ Սուրբ Ամարասի վանքի զանգակատան պատկեր-խորհրդանիշը:

Նորաստեղծ հանդեսն ունի խմբկող և խմբագրական խորհուրդ, որոնց մեջ ընդգրկված են թե՛ Արցախի և Հայաստանի, թե՛ Ռուսաստանի Դաշնության և թե՛ ԱՄՆ-ի գիտության, կրթության և մշակույթի երևելի ներկայացուցիչներ: Նրանցից շատերը Լեռնային Ղարաբաղից են և, հասկանալի է, ամեն ինչ կանեն հանդեսը գիտական պատշաճ մակարդակով լույս ընծայելու համար: Հանդեսի գլխավոր խմբագիրն է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, պատասխանատու խմբագիրը սկզբում եղել է Կ. Աթայանը, ներկայումս Ա. Ասրյանն է, տեղակալները՝ Օ. Քամայանը և Կ. Մարգարյանը, գեղարվեստական խմբագիրը՝ Վ. Օվյանը: Բացի դրանից՝ հանդեսի յուրաքանչյուր բաժին ունի իր մասնագիտական խմբագիրը:

Բարի՛ երթ Արցախ աշխարհի նորաստեղծ հանդեսին:

**ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԳ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՌԱՋՆԵԿԸ**



## ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՀԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ԱՌԱՋՆԵԿԸ

Խորհրդահայ մամուլի պատմության մեջ իր հետաքրքիր ու բովանդակալից ուղին ունի «Երևանի համալսարան» շաբաթաթերթը, որի առաջին համարը՝ «Նոր կադրեր» անվամբ, լույս է տեսել 1929 թ. նոյեմբերի 29-ին: Իսկ մինչ այդ՝ Երևանի ժողովրդական համալսարանի հիմնադրման առաջին իսկ օրերից (1920 թ. դեկտեմբերի 17), հաստատության ուսումնական կյանքն ու առօրյան լուսաբանելու համար մեծապես օգտագործվում էր ստորին մամուլը: 1920-ական թվականներին համալսարանում գրավոր խոսքի հիմնական աղբյուր էին պատի թերթերը, որոնք միշտ էլ եղել են կուսակցական և կոմերիտական բջիջների ուշադրության կենտրոնում: Այդ է վկայում նաև այն փաստը, որ 1924 թ. փետրվարի 12-ին կոմբջիջի բյուրոն լսել է պատի թերթերի խմբկուլի նախագահ Նաիրի Չարյանի զեկուցումը և կայացրել որոշում՝ համալսարանում պատի թերթ հրատարակելու երկու շաբաթը մեկ անգամ<sup>63</sup>:

Բայց դրա հետ մեկտեղ արդեն անհրաժեշտություն է դառնում նաև ուսանողական տպագիր օրգանի ստեղծումը: Համալսարանի խորհուրդը որոշում է հրատարակել «Նոր ուսանող» ամսագիրը: Ամսագրի առաջին և միակ համարը լույս է տեսել 1924 թ. մարտին 72 էջ ծավալով: Դրանից հետո համալսարանում նորից շարունակում են հրատարակվել ձեռագիր թերթեր: Իսկ 1928 թ. սկզբից հիմնադրվում է համալսարանական «Պրոլետարական ուսանող» պատի թերթը: Սակայն ինչպես այս վերջին, այնպես էլ ֆակուլտետներում առիթից առիթ լույս տեսնող մյուս թերթերը չեն կարողանում ժամանակին արձագանքել համալսարանում տեղի ունեցող իրադարձություններին և բազմաթիվ հուզող հարցերին:

Համալսարանի կուսկուրբյուրոյում 1929 թ. հոկտեմբերին հարց է դրվում Մոսկվայի, Լենինգրադի և Խորհրդային Միության այլ խոշոր համալսարանների օրինակով հրատարակելու տպագիր թերթ: Այդ առիթով կայացվում է որոշում, որը և հաստատվում է: Հրատարակվելիք թերթին տրվում է «Նոր կադրեր» անունը: Ահա թե իր հուշերում այդ մասին ինչ է գրում «Նոր կադրերի» խմբագիր, այժմ անհատական թոշակառու Արսեն Սարգսյանը: «1926-1927 ուստարվանից համալսարանի կուսակ-

<sup>63</sup> Տե՛ս ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 116, գ. 8, ք. 12:

ցական և կոմերիտական կազմակերպությունների կողմից սկսեցին հրատարակվել ֆակուլտետային պատի թերթեր, որոնք լույս էին ընծայվում շատ անկանոն և հարմարեցվում էին տոնակատարություններին: Դա այլևս չէր կարող բավարարել ընդհանուր համալսարանական պահանջներին:

1928 թվականից սկսեց լույս տեսնել ընդհանուր համալսարանական պատի թերթ՝ «Պրոլետարական ուսանող» անունով, որի խմբկողի անդամն էր և տողերիս հեղինակը: Սակայն «Պրոլետարական ուսանողը» իր բովանդակությամբ ու տեխնիկայով չէր կարող բավարարել նոր պահանջներին: Անհրաժեշտություն դարձավ ունենալ բազմատիրաժ թերթ: Ես համալսարանի կուսկոլբյուրոյի անդամ և նրա գիտալրույն էի: 1929 թ. հոկտեմբեր ամսվա վերջին օրերից մեկում կուսկոլբյուրոյում հարց դրվեց հրատարակել բազմատիրաժ թերթ: Երկար ու տաք վիճաբանություններ առաջ եկան թերթի անվան և պարբերականության հարցերի շուրջը: Վերջապես որոշվեց հրատարակել երկշաբաթաթերթ՝ «Նոր կադրեր» անունով: Հաստատվեց խմբագրական կոլեգիա հետևյալ կազմով. Արսեն Սարգսյան (պատասխանատու խմբագիր), Արշակ Տոնյան (խմբկողի անդամ, դասախոս), Աբրահամ Ալլանյան (խմբկողի անդամ, կուսգործբյուրոյի ներկայացուցիչ), Խորեն Երիցյան (խմբկողի անդամ, դասախոս՝ Գյուղֆակից), Պողոս Սոսնիկյան (խմբկողի անդամ, ռուսաց լեզվի դասախոս), Մելքոն Գրիգորյան (խմբկողի անդամ, ուսանող՝ Պատմագրական ֆակուլտետից), Վիկտորյա Հովհաննիսյան (ուսանող, կոմերիտկոլբյուրոյից): Այս կազմը հաստատվելուց հետո խմբկոլն անցավ իր գործնական աշխատանքներին՝ առանց նյութական և տեխնիկական միջոցների: Ամեն ինչ պետք է ձեռք բերեր ինքը՝ խմբկոլը՝ կապվելով համալսարանի ռեկտորի (Հակոբ Հովհաննիսյան) հետ: Մեծ դժվարությամբ որոշվեց ապակետիպի միջոցով հրատարակելու հարցը: Գտնվեց նաև լավ ձեռագիր ունեցող անձնավորություն, որի գրածն ապակետիպի միջոցով բազմացվելու էր... Բոլոր ճիգ ու ջանքը գործադրելով, հայ ժողովրդի վերածննդի պատմական օրը՝ 1929 թ. նոյեմբերի 29-ին, լույս ընծայվեց «Նոր կադրերի» առաջին համարը՝ 200 օրինակ տպաքանակով: Դրա 100 օրինակը ես անձամբ, որպես հաճելի անակնկալ, բաժանեցի Հայաստանում սովետական կարգերի հաստատման 9-րդ տարեդարձի

առթիվ կուլտուրայի տանը կայացած հանդիսավոր նիստի մասնակիցների: Դա մեծ ուրախություն պատճառեց բոլորին»<sup>64</sup>:

«Նոր կադրերը» համալսարանի բազմատիրաժ հրատարակության առաջնեկն է: Թերթի հրատարակման նպատակների ու խնդիրների մասին նրա խմբագրական հոդվածում ասված է. ««Նոր Կադրերը» այժմ հնարավորություն չունի դառնալու գիտական-քաղաքական օրգան (այդ հետագայի բան է): Նա փոխարինում է անցյալ տարվա մեր համալսարանական պատի լրագրին, սակայն այն տարբերությամբ, որ նա իր շուրջը համախմբող ուժերով, քննության առնելիք խնդիրներով և որակով ավելի բարձր է լինելու, քան «Պրոլետարական ուսանողը»... «Նոր կադրերը» օժանդակելու է դասախոսական կազմին՝ քննության դնել դասավանդման մեթոդները, վերակառուցման և առհասարակ ակտիվ մեթոդներին անցնելու խնդիրները: Նա հաշվի է առնելու այս կամ այն դասախոսի և կուրսի դրական փորձը այս ասպարեզում՝ այն ըստ հնարավորության ընդհանրացնելու նպատակով... «Նոր կադրերի» նպատակն է ամենալայն մասսայական ծավալ տալ ինքնաքննադատության կիրառմանը և, որ ամենագլխավորն է, կազմակերպել մասսաներին և մեր բոլոր կազմակերպություններին՝ մեր բացերի ու թերությունների վերացման գործնական խնդիրների շուրջը»<sup>65</sup>:

Ինչպես տեսնում ենք խմբագրականից, «Նոր կադրերը» հետապնդել է մի շարք նպատակներ ու խնդիրներ: Սակայն թերթն ունեցել է կարճ կյանք: Լույս է տեսել ընդամենը երեք համար. առաջինը՝ առանձին, իսկ երկրորդը և երրորդը՝ միացյալ:

1930 թ. ՍՍՀՄ-ում իրականացվում է բարձրագույն կրթության վերակառուցում, որի հիման վրա կազմալուծվում է Երևանի համալսարանը: Նրա առանձին ֆակուլտետների բազայի վրա ստեղծվում են ինքնուրույն մասնագիտական ինստիտուտներ: Այս պատճառով էլ դադարում է «Նոր կադրերի» հրատարակումը: 1933 թ. սեպտեմբերին վերաբացվում է Երևանի պետական համալսարանը: Համալսարանի խորհուրդն անմիջապես օրակարգ է մտցնում թերթի հրատարակության հարցը: Որոշվում է շարունակել նրա հրատարակությունը: Եվ այդ ուստարվանից էլ սկսում

<sup>64</sup> Տե՛ս «Երևանի համալսարան», № 29, 10 հոկտեմբերի 1970 թ.:

<sup>65</sup> Տե՛ս «Նոր կադրեր», № 1, 29 նոյեմբերի 1929 թ.:



է լույս տեսնել «Հարվածային ուսանող»<sup>66</sup> կիսամյա թերթը, որը եղել է համալսարանի կուսակցական, ԼԿԵՄ կոլբյուրոնների և արհկոմի օրգանը:

Ինչպես դեռևս 1924 թ. լույս տեսած «Նոր ուսանող» հանդեսը, այնպես էլ «Նոր կադրեր» և «Հարվածային ուսանող» թերթերը հետաքրքիր նյութեր են պարունակում այն ժամանակվա աշխատանքային ձևերի, մեթոդների, համալսարանի առօրյայի մասին: Նրանց էջերում արձանագրված է համալսարանի ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմի բազմահարուստ կյանքը: Շատ համարներ ու նպատակային էջեր նվիրված են համալսարանին հուզող, նրա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող հարցերին, խաշոր իրադարձություններին ու տոնակատարություններին: «Հարվածային ուսանողը» առանձնապես մեծ ուշադրություն է դարձրել համալսարանում սոցիալիստական մրցության ծավալման գործին՝ սիստեմատիկորեն հետևելով այդ կարևոր միջոցառման արմատավորմանն ու ընթացքին:

Համալսարանի ռեկտորատը, կուսակցական, արհմիութենական ու կոմերիտական կազմակերպությունները միշտ էլ իրենց ուշադրության կենտրոնում են պահել և հոգ են տարել, որ հրատարակվող թերթերը լիմեն գաղափարապես հագեցված, նպաստեն կոլեկտիվի և ուսանողության քաղաքական դաստիարակությանը:

---

<sup>66</sup> **Գ. Լևոնյանի** «Հայոց պարբերական մամուլը» (Երևան, 1934) լիակատար ցուցակում նշված է, որ «Հարվածային ուսանողը» նախ կոչվել է «Երիտասարդ հարվածային» (էջ 162, № 1508): Նույնն է ասված նաև Հ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» գրքի 3-րդ հատորում (էջ 117): Գ. Լևոնյանի մայր ցուցակում (էջ 153, № 1421) «Երիտասարդ հարվածային» դիմաց գրված է «Օրգան պետհամալսարանի ուս. մանկ. բաժնի, պատկերազարդ, Երևան, 1931, խմբկող. № 1-2 (17x25) հ. մետր, պետհրատի տպարան»: Նույն փաստերն են արձանագրված նաև Հ. Պետրոսյանի «Բիբլիոգրաֆիայի» 3-րդ հատորում (էջ 111), միայն այն տարբերությամբ, որ այստեղ ասված է, թե այն ունեցել է 4 էջ ծավալ: Սակայն ո՛չ Գ. Լևոնյանը և ո՛չ էլ Հ. Պետրոսյանը չեն նշում «Երիտասարդ հարվածայինը» թե՛րթ է եղել, թե՞ հանդես: Իսկ Հ. Ֆելեքյանի «Հայաստանի պարբերական մամուլը» (Երևան, 1970) գրքի հավելվածում «Երիտասարդ հարվածայինը» դասված է հանդեսների շարքին (էջ 542): Մեզ չի հաջողվել տեսնել «Երիտասարդ հարվածային» ոչ մի համար: Սակայն մի բան մնում է կասկածելի. 1931 թ. պետհամալսարան գոյություն չունեք, «Երիտասարդ հարվածայինը» ինչպե՞ս կարող էր լինել նրա օրգանը: Ըստ երևույթի, այն եղել է համալսարանի փոխարեն ձևավորված Մանկավարժական ինստիտուտի հանդեսը:

«Հարվածային ուսանողի» խմբագիրներն են եղել Ռուբեն Փոքսու-  
ղյանը, Արմո Հարենցը (Արամայիս Հարությունյան) և Գառնիկ Ոսկա-  
նյանը, որոնք թերթը խմբագրել են համալսարանում ուսանելու տարիներ-  
ին: Ռ. Փոքսուղյանը և Գ. Ոսկանյանը գոհվել են Հայրենական մեծ պա-  
տերազմում, իսկ Արմո Հարենցը ներկայումս պատմական գիտություն-  
ների դոկտոր, պրոֆեսոր է, դեկավարում է Հայկական գյուղատնտեսա-  
կան ինստիտուտի ՄՄԿԿ պատմության ամբիոնը:

1933 թ. սեպտեմբերից մինչև 1936 թ. վերջը լույս է տեսել «Հարվա-  
ծային ուսանողի» 61 համար. 6-ը՝ 1933 թ., 13-ը՝ 1934 թ., 16-ը՝ 1935 թ., և  
26-ը՝ 1936 թ.: Թերթի վերջին՝ 26 (61)-րդ համարը լույս է տեսել 1936 թ.  
դեկտեմբերի 20-ին: Չնայած որոշ հեղինակներ ու մատենագիրներ հի-  
շատակում են, որ «Հարվածային ուսանողի» հրատարակությունը շա-  
բույնակվել է մաս 1937 թվականին, բայց նրանք իրենց ձեռքի տակ հիմ-  
նավոր փաստեր չեն ունեցել: Միակ փաստը, որը գուցե առիթ է տվել  
մյուս եզրակացության, հենց իր՝ «Հարվածային ուսանողի» 1936 թ.  
նոյեմբերի 7-ի № 18 (53)-ում տպագրված հայտարարությունն է, որում  
նշված է, որ բացված է թերթի՝ 1936 թ. հոկտեմբերից մինչև 1937 թ. հուլի-  
սի 1-ի բաժանորդագրությունը: Սակայն թերթի լույսընծայումն ավարտ-  
վում է 1936 թվականով: 1937 թ. «Հարվածային ուսանողը» լույս չի տե-  
սել:

Երկար ընդմիջումից հետո՝ 1950 թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի  
խորհրդայնացման 30-ամյա տարեդարձի օրը, վերսկսվում է համալսա-  
րանի թերթի հրատարակությունը: «1950 թ. նոյեմբերին կուսակցական  
կոմիտեում արտակարգ աշխուժություն և չտեսնված եռուզեռ էր,- իր հու-  
շերում գրում է թերթի նախկին խմբագիր Մ. Մելիքյանը:- Ամբողջ երկու  
շաբաթ կուսկոմիտեն վերածվեց թերթի խմբագրության: Խմբագրական  
աշխատանքներին մասնակցում էին շատ մարդիկ: Կոմիտեի քարտու-  
ղար ընկ. Ա. Միմոնյանը նայում էր հիմնական հողվածները, համարի  
խմբագիր Գ. Հարությունյանը կազմում ու կրկին վերակազմում էր ամեն  
մի հողված՝ վիճելով բազմաթիվ կամավոր օգնող «խմբագիրների» հետ:  
Վերջապես բոլոր նյութերը պատրաստ էին, և 1950 թ. նոյեմբերի 28-ի  
երեկոյան համալսարանի տպարանում սկսվեց առաջին համարի տպագ-  
րությունը: Մեզանից ավելի քիչ չէին հուզված մաս տպարանի բանվորնե-  
րը: Հաջորդ կեսօրին արդեն համալսարանի միջանցքների պատերին

փակցված ցուցափեղկերի մոտ ուսանողներն ու դասախոսները մեծ խմբերով հավաքված՝ ուրախ հուզմունքով կարդում էին «Սովետական ուսանողություն» թերթի առաջին համարը»<sup>67</sup>:

1950 թ. նոյեմբերի 29-ից մինչև 1955 թ. մայիսը հրատարակվել է «Սովետական ուսանողություն» շաբաթաթերթի 191 համար<sup>68</sup>: 1955 թ. մայիսից 9-ից թերթն անվանվում է «Երևանի համալսարան» և այդ անվամբ լույս է տեսնում մինչև այժմ: «Սովետական ուսանողության» խմբագիրներն են եղել Աշոտ Թադևոսյանը (այժմ՝ «Սովետական Հասարակական» ամսագրի խմբագիր), Մեհենդակ Մելիքյանը (այժմ՝ համալսարանի պատմական մատերիալիզմի և բարոյագիտության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), Միքայել Հակոբյանը (այժմ՝ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի աշխատակից), Ռաֆիկ Հարությունյանը (այժմ՝ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի հայ գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ): Երբ «Սովետական ուսանողություն» անվանվում է «Երևանի համալսարան», նրա խմբագիր է նշանակվում Սմբատ Ավագյանը (այժմ՝ համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս, դոցենտ, բանասիրական գիտությունների դոկտոր): Այնուհետև թերթը խմբագրել են Թերեզա Գալստյանը (այժմ՝ համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնի ավագ դասախոս), Սուրեն Սարուխանյանը (այժմ՝ Հայպետկինոյի աշխատակից, թատերագետ), Սերգեյ Աթաբեկյանը (այժմ՝ սովետական գրականության ամբիոնի դասախոս), Խաչիկ Վարդանյանը (այժմ՝ համալսարանի հայ գրականության ամբիոնի դասախոս): 1971 թ. դեկտեմբերի 1-ից «Երևանի համալսարան» խմբագրում է տողերիս հեղինակը:

Անցած 45 տարիների ընթացքում «Երևանի համալսարան» ստեղծել է մի շարք լավագույն ավանդույթներ, որոնք շարունակվում են

<sup>67</sup> Տե՛ս «Երևանի համալսարան», № 6, 25 փետրվարի 1959 թ.:

<sup>68</sup> «Սովետական ուսանողություն» թերթի ընդհանուր համարների գումարին չեն ավելացել ո՛չ «Նոր կադրերի» 3 և ո՛չ էլ «Հարվածային ուսանողի» 61 համարները: Ավելին՝ թերթի ընդհանուր համարների գումարում հետագայում թույլ են տրվել մի շարք սխալներ: Այժմ այդ սխալներն ուղղված են, և, բացի դրանից, «Երևանի համալսարանի» ընդհանուր համարների գումարին են ավելացել «Նոր կադրերի» և «Հարվածային ուսանողի» բոլոր համարները (այդ մասին տե՛ս «Երևանի համալսարան», № 29, 10 հոկտեմբերի 1970 թ. և № 17, 5 մայիսի 1973 թ.):

մինչև այսօր: Եթե «Նոր կադրերը» և «Հարվածային ուսանողը» եղել են կիսամյա թերթեր, ապա «Երևանի համալսարանը» արդեն շուրջ քառորդ դար է, ինչ անընդմեջ, ամեն շաբաթ հասնում է իր բազմահազար ընթերցողներին: Այն դարձել է համալսարանի ռեկտորատի, կուսակցական, արհմիութենական և ԼԿԵՄ կազմակերպությունների հուսալի օգնականը բարձրորակ մասնագետների պատրաստման և նրանց՝ կոմունիստական ոգով դաստիարակման գործում: Թերթը միշտ էլ իր ուշադրության կենտրոնում է պահել ուսանող երիտասարդության քաղաքական-գաղափարական ու ինտերնացիոնալ դաստիարակության հարցերը, պայքար է մղել երիտասարդության շրջանում նկատվող խորք բարքերի ու երևույթների դեմ: Օգտագործելով լրագրային բոլոր ժանրերը՝ այն սիստեմատիկաբար օգնություն է ցույց տվել ուսանողներին, եղել է նրանց ընկերն ու խորհրդատուն: Այն իր էջերում հետևողականորեն լուսաբանել է համալսարանի բազմաբեղուն կյանքի բոլոր կողմերը:

Սակայն թերթի համար առաջնակարգ հարցը եղել ու մնում է ուսումնական ընթացքը: Նրա էջերում լայն տեղ է հատկացվում համալսարանի ցերեկային, երեկոյան և հեռակա ուսուցման խնդիրներին, այդ ուղղությամբ տարվող աշխատանքների դրվածքին: Թերթն ուշադրություն է դարձնում ոչ միայն առանձին ֆակուլտետների, կուրսերի, խմբերի նվաճումների ու բացերի վրա, այլև քննարկում է առանձին առարկաների դասավանդման հիմնական հարցերը, ուսումնական պրոցեսի կազմակերպման խնդիրները: Թերթը լավագույն ձևով է կազմակերպում քննաշրջանի նախապատրաստությունը և ամփոփում ու սրտաբաց գրույց բացում դրանց արդյունքների շուրջ, որին մասնակցում են ինչպես քննող դասախոսները, այնպես էլ ուսանողներն ու համալսարանի ղեկավար անձինք: Նրա էջերում հաճախակի կարելի է հանդիպել «Մեր գերազանցիկները», «Մեր անվանական թռչակառուները», «Մեր ակտիվիստները», «Եղի՛ր օրինակելի» և այլ խորագրերի, որոնց տակ տպագրված նյութերը պատմում են համալսարանի լավագույն ուսանողների մասին: Բազմաթիվ նյութեր ու նպատակային էջեր են նվիրվում ուսումնասիրտադրական պրակտիկային և ուսանողների դիպլոմային աշխատանքների կատարմանը:

Թերթի գլխավոր խնդիրներից մեկն էլ համալսարանում տարվող գիտահետազոտական աշխատանքների լուսաբանումն է: Նրա էջերում

«Գիտական կյանք», «Մեր լաբորատորիաները», «Գիտության մեր նոր դոկտորները», «Մեր ամբիոնները» և այլ խորագրերի տակ կարելի է հանդիպել բազմաթիվ նյութեր, որոնք պատմում են բնական և հասարակական գիտությունների բնագավառներում համալսարանի գիտնականների ձեռք բերած նվաճումների, նրանց անելիքների ու ծրագրերի մասին: Իսկ «Գիտության շավիղ» վերտառությամբ էջը, որը ստեղծվել է վերջին տարիներին և լույս է տեսնում պարբերաբար, լուսաբանում է ուսանողական գիտական ընկերության խմբակներում ու բաժանմունքներում կատարվող աշխատանքները:

«Երևանի համալսարանի» էջերում իրենց մշտական տեղն ունեն կուսակցական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների գործունեությունը լուսաբանող նյութերը: «Կուսակցական կյանք», «Արհմիութենական կյանք», «Կոմերիտական կյանք» խորագրերով տակ հաճախակի տպագրվող նյութերում խոսվում է համալսարանի տարբեր ֆակուլտետներում կատարված աշխատաքի մասին: Թերթում պարբերաբար հաղորդումներ են տպագրվում նաև քաղաքական ու մշակութային միջոցառումների, համալսարանի միջազգային կապերի, ուսանողների հանգստի ու կենցաղի, ինչպես և մարզական կյանքի վերաբերյալ: Մասնավորապես լայն տեղ է տրվում ուսման ու աշխատանքի առաջավորների դրական փորձի լուսաբանմանն ու պրոպագանդանը: Թերթի աչքից չի վրիպում նաև համալսարանում գործող մի շարք ուսանողական կազմակերպությունների ու ակումբների գործունեությունը: Դրանցից են, օրինակ, հուշարձանների պահպանության ընկերության բաժանմունքը, գրական ստուդիան, Գայի անվան ռազմահայրենասիրական և դպրոցներում շեֆական աշխատանքների «Ջահ» ակումբները: Իսկ միջազգային կապերի երիտասարդական «Կռունկ» ակումբն ունի իր օրգան «Կռունկ» թերթը, որը պարբերաբար լույս է տեսնում «Երևանի համալսարանի» էջերում: Թերթն իր էջերը լայնորեն տրամադրում է նաև ուսանողների ինտերնացիոնալ դաստիարակությամբ, մեր երկրի ժողովուրդների բարեկամությամբ: Այս տեսակետից «Երևանի համալսարանը» առանձնանում է հանրապետության բուհական մյուս թերթերից՝ «Պոլիտեխնիկ», «Ապագա բժիշկ», «Մանկավարժ», «Գյուղատնտես», «Կադրերի համար»: Դեռևս չի եղել նշանավոր մի դեպք, մի երևույթ, որին չանդրադառնա «Երևանի համալսարան»

նը»։ Թերթելով նրա տասնյակ տարիների հավաքածուները՝ կարելի է հանդիպել բազմաթիվ նպատակային համարների ու էջերի, որոնք նվիրված են հայ ժողովրդի, մյուս եղբայրական հանրապետությունների ու աշխարհի այլ ժողովուրդների բարեկամությանն ու նրանց նվիրական տոներին, մեծանուն գավակների հորելյաններին, պատմական կարևոր իրադարձություններին, հիշարժան տարեթվերին։ Դրանցից իրենց գեղեցիկ ձևավորմամբ, նյութերի հարստությամբ առանձնապես աչքի են ընկնում հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի 1600, Սայաթ-Նովայի 250, հայ ժողովրդի մեծ ողբերգության՝ Եղեռնի 50, Երևան քաղաքի հիմնադրման 2750, Հ. Թումանյանի, Կոմիտասի, Վ. Ի. Լենինի 100, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման և Հայաստանի կոմկուսի ստեղծման, Երևանի պետական համալսարանի հիմնադրման, ՍՍՀՄ կազմավորման 50-ամյա հորելյաններին նվիրված նպատակային համարները։ Թերթն ուրույն ձևով է նշել նաև Շ. Ռուսթավելու, Ա. Պուշկինի, Մ. Գորկու, Ն. Նեկրասովի և այլ գրողների հորելյանները։

Բացի այս ամենից՝ «Երևանի համալսարանը» լայն կապեր ունի Մյուսթյան մի շարք համալսարանների թերթերի խմբագրությունների հետ։ Նպատակային էջեր, գույգ էջեր ու համարներ է փոխանակել «Մոսկովսկի ունիվերսիտետ», «Լենինգրադի ունիվերսիտետ», «Կիևսկի ունիվերսիտետ», «Թբիլիսիսի ունիվերսիտետ», «Սարճոթա պեղագոգի», «Պետրոգավոդսկի ունիվերսիտետ» և այլ թերթերի խմբագրությունների հետ։ Թերթը լայն կապեր ունի նաև սոցիալիստական մի շարք երկրների համալսարանների պարբերականների հետ։ «Երևանի համալսարանի» այս կապերը բազմիցս մամուլի կողմից արժանացել են դրվատանքի շերտ խոսքերի<sup>69</sup>։

«Երևանի համալսարանը» մեծ աշխատանքներ է կատարել ուսանող-երիտասարդության գրական ճաշակի ձևավորման, համալսարանի երիտասարդ ստեղծագործողների խրախուսման և նրանց պրոպագանդման ուղղությամբ։ Դեռևս 30-ական թվականներից թերթի էջերում իրենց առաջին ստեղծագործություններն են տպագրել Սկրտիչ Կորյունը, Մա-

<sup>69</sup> Տե՛ս «Սովետական Հայաստան» (28.02. 1986 թ., № 49), «Սովետական Վրաստան» (30.1. 1968 թ., № 13, 7.3. 1968 թ., № 29, 5.3. 1970 թ. № 27), «Վեչերնի Տբիլիսի» (12.3. 1970 թ., № 58), «Երեկոյան Երևան» (3.5. 1970 թ., № 103), «Ռյա թազա» (7.6. 1969 թ., № 46 և 18.4. 1973 թ., № 31), «Սարճոթա պեղագոգի» (25.2. 1970 թ., № 6) և այլն։

րո Մարգարյանը, Աբրահամ Բախշունին, Թևան Խաչյանը, Դերենիկ Չարխչյանը և ուրիշներ: Նրանց գրական առաջին քայլերը թերթում քաջալերել են համալսարանի դասախոսներ, պրոֆեսորներ Ա. Տերտերյանը, Յ. Խանգաղյանը, Ս. Հակոբյանը և այլ գրականագետներ:

Հետագայում՝ 1950-1960-ական թվականներին, թերթում հաճախակի կարելի է հանդիպել Վարդգես Պետրոսյանի, Արտաշես Պողոսյանի, Արարատ Այվազյանի, Նանսեն Միքայելյանի, Հենրիկ Արթենյանի, Հենրիկ Սևանի, Յուրի Սահակյանի և ուրիշ բանաստեղծների ու արձակագիրների անուններին:

«Երևանի համալսարանում» իրենց նոր ստեղծագործություններով բազմիցս հանդես են եկել Հ. Շիրազը, Պ. Սևակը, Ս. Կապուտիկյանը, Հ. Հովհաննիսյանը և խորհրդահայ այլ անվանի գրողներ: Նրա էջերում իրենց առաջին մկրտությունն են ստացել նաև հանրապետության այսօրվա շատ նշանավոր լրագրողներ ու հրապարակախոսներ: Բացի դրանից՝ նրանում համալսարանի ուսանողությանն ու պրոֆեսորադասախոսական կազմին և աշխատակիցներին ուղղված իրենց խոսքն են տպագրել մեծանուն գիտնականներ Մ. Աբելյանը, Հր. Աճառյանը, Ա. Տերտերյանը, Հ. Գյուլիքիսյանը, Տ. Մուշեղյանը, Ա. Տոնյանը և ուրիշներ: Թերթի էջերում կարելի է հանդիպել նաև Մարտիրոս Սարյանի, Գոհար Գասպարյանի, Կոստանդին Սիմոնովի և շատ այլ մեծ արվեստագետների ու գրողների ինքնագրերին:

Այսօր էլ մեծ է «Երևանի համալսարանի» թղթակցության ակտիվը: Իրենց սիրելի թերթին գրում են թե՛ դասախոսները, թե՛ ուսանողները և թե՛ համալսարանի աշխատակիցները: Նրա էջերում կարելի է հանդիպել անվանի գիտնականներ Ս. Մերգելյանի, Ա. Շահինյանի, Մ. Ջրբաշյանի, Գ. Սևակի, Էդ. Աղայանի, Մ. Սկրյանի, Ա. Թալալյանի, Հր. Բատիկյանի և այլոց անուններին: Թերթին սիրով են թղթակցում նաև դոցենտներ Վ. Հասրաթյանը, Հ. Աղամյանը, Գ. Անանյանը, Հ. Պետրոսյանը, Ռ. Իշխանյանը, Գ. Հարությունյանը և ուրիշներ, ինչպես նաև համալսարանի նախկին շրջանավարտները, որոնք աշխատում են մեր հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

Այս է հանրապետության բուհական թերթերի առաջնեկի, Հայաստանի խոշորագույն ուսումնագիտական հաստատության օրգանի՝ «Երևանի համալսարանի» հիմնադրման ու նրա անցած 45-ամյա ուղու

համառոտ պատմությունը: Անշուշտ, թերթն ունեցել է նաև որոշ թերություններ, հաճախ նրա էջերում պակասել է սուր քննադատությունը, բայց, այդուհանդերձ, այն եղել է մի հայելի, որը տասնամյակների միջով այսօր մեզ է փոխանցում հայոց Մայր համալսարանի անցած ուղու ու բազմաբեղուն կյանքի հարուստ պատմությունը: Եվ այսօր էլ թերթը մեծ ուշադրություն է դարձնում ուսանող երիտասարդությանը մարքս-լենինյան աշխարհայացքով զինելու, նրանց ինտերնացիոնալ ոգով դաստիարակելու գործում իր առջև ծառայած խնդիրներին: Նա ոչ միայն լավի ու առաջավորի պրոպագանդողը և արմատավորողն է համալսարանում, այլև պատվով է կատարում կոլեկտիվ քարոզչի ու կազմակերպչի իր դերը:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՌԱՋՆԵԿԸ**

Խորհրդային Հայաստանի բուհական բազմատպաքանակ թերթերի շարքում ուրույն տեղ ունի «Երևանի համալսարան» շաբաթաթերթը, որի 1500-րդ հոբելյանական համարի լույսընծայումը հիրավի հիշարժան երևույթ է հայ երիտասարդական մամուլի տարեգրության մեջ:

«Երևանի համալսարան» թերթը միշտ բարձր է պահել հանրապետության բուհական մամուլի առաջնեկի ու դրոշակակրի իր դերն ու կոչումը: Այն իր հիմնադրման օրվանից ընդհուպ մինչև 1950-ական թթ. երկրորդ կեսը մեր հանրապետությունում տպագրվող միակ ուսանողական թերթն էր, որը համալսարանի օրինակով ուշի-ուշով ուրվագծում էր բարձրագույն կրթության զարգացման ընթացքը Հայաստանում՝ յուրացնելով միութենական բուհական մամուլի առաջավոր փորձը, որոնում էր նոր եղանակներ ու մեթոդներ՝ ուսանող երիտասարդության կյանքն ու առօրյան լավագույն ձևով լուսաբանելու համար:

Հետագայում Երևանում հիմնադրված «Պոլիտեխնիկ» (1957 թ.), «Ապագա բժիշկ» (1958 թ.), «Գյուղատնտես» (1958 թ.), «Կադրերի համար» (1958 թ.), «Մանկավարժ» (1965 թ.) և «Տնտեսագետ» (1977 թ.) բուհական թերթերը շարունակում ու հարստացնում են «Երևանի համալսարան» շաբաթաթերթի ստեղծած ավանդույթները, նրա հետ հյուսում Խորհրդային Հայաստանի բարձրագույն դպրոցի պատմությունը:



Համալսարանում անդրանիկ պարբերականը տպագրվել է 1924 թ. մարտ ամսին «Նոր ուսանող» վերտառությամբ, ամսագրի ձևով, 72 էջ ծավալով: Նրա հիմնական բովանդակությունը կազմում են Խորհրդային Հայաստանի երեքամյա համալսարանի նվաճումների մասին պատմող նյութերը: Նրանց մի մասն էլ նվիրված է նորաստեղծ հանրապետության կրթական և մշակութային, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքին:

Առաջին համարի լույսընծայումից հետո տպագրատեխնիկական դժվարությունների պատճառով դադարեցվել է «Նոր ուսանողի» հրատարակությունը: Այնուհետև լույս են տեսել տարբեր բնույթի ձեռագիր թերթեր, որոնց 1928 թվականից փոխարինելու է գալիս «Պրոլետարական ուսանող» համալսարանական պատի թերթը: Սակայն վերջինս չէր կարող լայնորեն լուսաբանել համալսարանի կյանքը, բարձրացնել ժամանակի պահանջներին համապատասխան հարցեր: Ուստի և անհրաժեշտություն է դառնում վերականգնել տպագիր պարբերականի հրատարակությունը: Եվ 1929 թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու 9-րդ տարեդարձի օրը, լույս է տեսնում «Նոր կադրեր» սպակետիպ երկշաբաթաթերթի անդրանիկ համարը: Տպագրվել է «Նոր կադրերի» ընդամենը երեք համար:

Համալսարանի վերակառուցման հետևանքով 1930 թ. դադարել է «Նոր կադրերի» լույսընծայումը: 1931 թ. Երևանում լույս է տեսել «Երիտասարդ հարվածային» պատկերազարդ պարբերականի երկու համար: Այն եղել է, ըստ երևույթին, համալսարանի հիմքի վրա ստեղծված Մանկավարժական ինստիտուտի ուսումնական բաժնի օրգանը<sup>70</sup>:

1933 թ. վերաբացվում է Երևանի համալսարանը: Նույն տարվա սեպտեմբերից էլ սկսվում է տպագրվել «Հարվածային ուսանող» երկշաբաթաթերթը, որն իր գոյությունը պահպանում է մինչև 1937 թ. սկիզբը:

Շուրջ մեկուկես տասնամյակ ընդմիջումից հետո՝ Խորհրդային Հայաստանի 30-ամյակի օրը՝ 1950 թ. նոյեմբերի 29-ին, վերսկսվում է թերթի հրատարակությունը՝ այս անգամ լույս տեսնելով արդեն «Սովետական ուսանողություն» վերտառությամբ: Իսկ 1955 թ. մայիսի 9-ից թերթն ան-

---

<sup>70</sup> Տե՛ս **Գ. Լևոնյան**, Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, էջ 153, № 1421:

վանվում է «Երևանի համալսարան» և պարբերաբար՝ շաբաթը մեկ անգամ տպագրվում է մինչև այսօր:

Անցած վեց տասնամյակների ընթացքում «Երևանի համալսարան» շաբաթաթերթը ստեղծել է մի շարք ավանդույթներ, որոնք մեր հանրապետության բուհական մամուլի լավագույն էջերից են: Թերթի ցայսօր տպագրված 1500 համարներում լուսաբանված է համալսարանի պատմությունը: Թերթն իր առաջին իսկ համարից եղել է համալսարանի ուսանողական խորհրդի, ապա՝ կուսակցական, արհմիութենական և ԼԿԵՄ կոմիտեների մարտական օրգանը: Նրա էջերում 1920-30-ական թթ. հանդես են եկել պրոֆեսորներ Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Ազատյանը, Ա. Տերտերյանը, Ա. Տոնյանը, Վ. Կոստանյանը, Տ. Մուշեղյանը, Ս. Հակոբյանը, Վ. Ռշտունին, Յ. Խանգաղյանը, Պ. Ստոնիկյանը և շատ ուրիշներ: Թերթում այդ տարիներին տպագրվել են նաև կուսակցական ու պետական նշանավոր գործիչներ Ա. Մռավյանի, Ս. Լուկաշինի, Ա. Հովհաննիսյանի ճառերն ու ելույթները՝ արտասանված համալսարանի հոբելյանական տարելիցների ժամանակ:

Հետագայում՝ 1950-ական թթ. և հետո, թերթի էջերում հանդիպում ենք ակադեմիկոսներ Վ. Համբարձումյանի, Ս. Մերգելյանի, Ա. Շահինյանի, Մ. Ներսիսյանի, Գ. Սևակի, Մ. Ջրբաշյանի, Գ. Սահակյանի, Էդ. Աղայանի, Ա. Գաբրիելյանի, Ս. Համբարձումյանի, Էդ. Ջրբաշյանի, Ծ. Աղայանի, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Մ. Սկրյանի, Վ. Թառայանի, Դ. Բաբայանի, Ռ. Ալեքսանդրյանի, Ա. Թալալյանի, պրոֆեսորներ Հր. Թամրազյանի, Հր. Գաբրիելյանի, Ս. Պողոսյանի, Հովհ. Բարսեղյանի, Հր. Բատիկյանի, Թ. Հակոբյանի, Վ. Սաղաթելյանի, Պ. Բեգիրզանյանի, Մ. Դավթյանի, Լ. Սկրտչյանի, Վ. Գաբրիելյանի, Ս. Ամիրյանի, դոցենտներ Հր. Հարությունյանի, Ա. Լալայանի, Վ. Հասրաթյանի, Ս. Նալչաջյանի, Գ. Տոնոյանի, Խ. Նազարյանի, Գ. Ղարախանյանի, Ռ. Տոնոյանի և շատ ուրիշների անունների, որոնք մի շարք հետաքրքիր հարցեր են բարձրացրել ուսումնագիտական աշխատանքները բարելավելու և բարձրագույն կրթությունը կատարելագործելու ուղղությամբ:

«Երևանի համալսարանի» էջերում հանդիպում ենք նաև գրակառույցի ու արվեստի գործիչների անունների: Նրանցից շատերը՝ Գ. Մահարին, Գ. Վանանդեցին, Մ. Կորյունը, Հովհ. Շիրազը, Պ. Սևակը, Ս. Կապուտիկյանը, Վ. Դավթյանը, Արաքսը, Վ. Պետրոսյանը, Ա. Քալան-

քարյանը, Վ. Բալայանը, Ն. Միքայելյանը և այլք, եղել են համալսարանի սաներ և իրենց ստեղծագործական առաջին քայլերը կատարել են թերթի էջերում:

Թերթի հիմնադիրն ու առաջին խմբագիրը եղել է խորհրդահայ ականավոր բանաստեղծ Ն. Չարյանը: Հետագայում թերթը խմբագրել են Ա. Սարգսյանը, Ռ. Փոքրսուդյանը, Ա. Հարենցը, Գ. Ոսկանյանը, Մ. Սելիքյանը, Մ. Հակոբյանը, Ռ. Հարությունյանը, Ս. Ավագյանը, Թ. Գալստյանը, Ս. Սարուխանյանը, Խ. Վարդանյանը և ուրիշներ:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից ռազմաճակատ մեկնած համալսարանականների շարքերում են եղել նաև թերթի նախկին խմբագիրներ ու աշխատակիցներ, որոնցից Ռ. Փոքրսուդյանը, Գ. Ոսկանյանը, Մ. Արմենյանը, Ալ. Մարտիրը, Մ. Մանուկյանը ընկել են հերոսի մահով:

«Երևանի համալսարան» շաբաթաթերթը վերջին տարիներին հեղինակ է դարձել մի շարք հետաքրքիր նախաձեռնությունների, որոնք խրախուսվել են հանրապետության մամուլի կողմից: Թերթի բազմամյա բեղմնավոր աշխատանքի գնահատականն էր նաև 1974 թ. ապրիլի 3-ին նրան 1000-րդ համարի լույսընծայման առթիվ և ուսանող երիտասարդության կոմունիստական դաստիարակության բնագավառում ձեռք բերված հաջողությունների համար Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով պարգևատրելը:

Թերթի ձեռքբերումներն առանձնապես ակնառու են ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարներից հետո ընկած ժամանակաշրջանում: Գործունեության ուղենիշ ունենալով համագումարների, կուսակցության ու կառավարության կողմից բարձրագույն դպրոցի և կրթության կատարելագործման վերաբերյալ ընդունված որոշումներն ու փաստաթղթերը՝ «Երևանի համալսարանը» մեծ ուշադրություն է դարձրել ուսումնական գործընթացի, գիտահետազոտական և ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի ու արդյունավետության բարձրացմանը:

«Երևանի համալսարանը» ունի իր կայուն խորագրերն ու մշտական բաժինները՝ «Մեր լեռինյան և անվանական կրթաթոշակառուները», «Մեր կոմունիստ ուսանողները», «Ճանաչեցե՛ք գերազանցիկներին», «Հասարակական աշխատանքի ակտիվիստները», «Ուսումնական լաբորատորիաներում», «Ուսումնական գործեր, հոգսեր, խնդիր-

ներ», «Հանրակացարանային կյանք», «Հասարակական-քաղաքական պրակտիկայի ամբիոն», «Նորը համալսարանում», «Սուր անկյան տակ», «Մարզական կյանք», «Երգիծանք և հումոր» և այլն: Թերթն ունի նաև «Կուսակցական կյանք», «Արհմիութենական կյանք», «Կոմերիտական կյանք» մշտական բաժինները: Պարբերաբար տպագրվում են նաև «Գեղեցիկի աշխարհում», «Ներկայացնում է գրական ստուղիան», «Ստեղծագործում են մեր դասախոսները» խորագրերով էջեր:

Լայն են մեր համալսարանի ինտերնացիոնալ ու միջազգային կապերը, ուսանողության բարեկամության միջօրեականները: Եվ թերթում 1964 թվականից պարբերաբար լույս է տեսնում «Կռունկ» վերնագրով էջը: Ուսանողության ինտերնացիոնալիստական դաստիարակությանը մեծապես նպաստում են նաև արդեն ավանդույթ դարձած «Ուսանողական գարուն» և «Քաղաքական երգ» փառատոները, որոնց նվիրված նյութերը ընթերցողների կողմից ընդունվում են մեծ սիրով:

«Երևանի համալսարանի» գործունեության մյուս կարևոր ոլորտը համալսարանում տարվող գիտահետազոտական աշխատանքների լուսարանումն է: Թերթում իրենց պատշաճ տեղն ունեն «Ինչի՞ վրա են աշխատում մեր գիտնականները», «Գիտահետազոտական լաբորատորիաներում», «Գիտությունների մեր նոր դոկտորները» և այլ խորագրեր: Իսկ համալսարանում ուսանողական գիտական ընկերության կատարած աշխատանքները լուսարանվում են «Գիտության շավիղ» հատուկ էջում, որը պարբերաբար լույս է տեսնում 1970 թվականից:

Թերթի գործունեության ոլորտներից մեկն էլ համալսարանում սովորող սփյուռքահայ ուսանողների ու արտասահմանյան քաղաքացիների ուսումնական խնդիրների և նրանց մշակութային-կենցաղային պայմանների լուսարանումն է:

Գնալով ավելի սերտ են դառնում թերթի և ուսանողների, համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվի կապերը: Այդ գործին մեծապես նպաստում են կուսկոմիտեն և ռեկտորատը, որոնք հաճախակի անդրադառնում են թերթի գործունեությանը, օգնում խմբագրությանը՝ ապահովելու լրագրային ելույթների նպատակասլացությունն ու ներգործությունը, վառ կերպով ու հետաքրքիր լուսարանելու համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվի առօրյան, նրա առջև ծառայած խնդիրները:

Խորհրդային մամուլի առջև այսօր լուրջ խնդիրներ են դրված: ՍՄԿԿ XXVII համագումարը մեկ անգամ ևս ընդգծեց, որ այժմ էլ ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում զանգվածային լրատվական միջոցների գործունեությունը: Կուսակցությունը, հանձինս նրանց, տեսնում է արարման գործիքի, համակուսակցական տեսակետ արտահայտողի: Հայաստանի կոմկուսի XXVIII համագումարը ևս մեծ նշանակություն տվեց մամուլին՝ նրանից պահանջելով գաղափարական բարձր մակարդակ և հանրապետության կյանքը բազմակողմանիորեն լուսաբանելու գործում օպերատիվություն, հրատապ, լուրջ խնդիրների առաջադրում, ընթերցողների հետ շիտակ, անկեղծ խոսակցության վարում, լինել ճշմարտացիության և ստույգության, մեր կյանքում տեղ գտած թրուքյունների ու բացերի քննադատում:

Կուսակցության կողմից մամուլին առաջադրված այս պահանջները վերաբերում են նաև «Երևանի համալսարան» շաբաթաթերթին, որի էջերում դեռևս անցյալ տարվա սեպտեմբերից բացվել են նոր խորագրեր ու վերնագրեր: Դրանց տակ զետեղված նյութերում վեր են հանվել հանրապետության մայր բուխում կատարվող նախահամագումարյան աշխատանքներն ու մթնոլորտը:

ՍՄԿԿ XXVII համագումարի օրերին և նրանից հետո թերթում բացվում են նոր խորագրեր՝ «Կենսագործվում են ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումները», «ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումները գործողության մեջ» և այլն: Մարտի սկզբից մինչև այսօր այդ խորագրերով թերթի գրեթե յուրաքանչյուր համարում տպագրվում են մեկից ավելի նյութեր, որոնցում ներկայացվում են համալսարանի տարբեր օղակներում կատարվող աշխատանքները, ինչպես նաև բացահայտվում թրուքյունները:

Այսօր նոր խնդիրներ են դրվում «Երևանի համալսարան» թերթի խմբագրության առջև՝ կապված «Երկրում բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթության վերակառուցման հիմնական ուղղությունները» ՍՄԿԿ կենտկոմի որոշման դրույթների պրոպագանդման հետ: Թերթն իր թղթակցական ակտիվի ուժերն առաջիկայում կնպատակամղի կուսակցության այդ կարևոր փաստաթղթի մասսայականացմանը: Դրա հետ մեկտեղ մեծ ուշադրություն կդարձնի ուսանող երիտասարդության բազմակողմանի դաստիարակությանը, կօգնի համալսարանի ռեկ-

տորատին, կուսկոմիտեին և հասարակական կազմակերպություններին՝ լուծելու այն խնդիրները, որոնք բարձրագույն դպրոցի առջև դրել են կուսակցությունն ու կառավարությունը: Եվ թերթի 1500-րդ հոբելյանական համարի լույսընծայումն ու այդ առթիվ նրան Հայկական ՄՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության և լուսավորության, բարձրագույն դպրոցի, գիտական հիմնարկների հանրապետական կոմիտեի պատվոգրով պարգևատրումը խմբագրության ստեղծագործական կոլեկտիվին ու թղթակցական ակտիվին պարտավորեցնում է էլ ավելի բարձրացնել տպագրվող նյութերի գաղափարական մակարդակը, ավելի մեծ ավանդ մուծել ուսանող երիտասարդության կոմունիստական դաստիարակության, ուսման առաջադիմության բարձրացման և ժողովրդական տնտեսության համար որակյալ մասնագետների պատրաստման գործում:

## **ՈՒՍԱՆՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՕԳՆԱԿԱՆՆ ՈՒ ԽՈՐՀՐԳԱՏՈՒՆ**

*(«Երևանի համալսարան» շաբաթաթերթի 60-ամյակի առթիվ)*

Լրացավ Խորհրդային Հայաստանի բուհական մամուլի առաջնեկի՝ «Երևանի համալսարան» շաբաթաթերթի 60-ամյակը: Լույս տեսավ թերթի տարեդարձին նվիրված հոբելյանական համարը:

«Երևանի համալսարան» թերթն անցել է հարուստ ու հետաքրքիր ճանապարհ:

Թերթի անդրանիկ համարը «Նոր ուսանող» վերտառությամբ, ամսագրի ձևով, 72 էջ ծավալով լույս է տեսել 1924 թ. մարտին՝ համալսարանի երեքամյա հանդիսությունների օրերին և պատմում է երեք տարիների ընթացքում հայոց համալսարանի, ինչպես և Խորհրդային Հայաստանի նվաճումների մասին:

Առաջին համարի լույսընծայումից հետո տպագրատեխնիկական դժվարությունների հետևանքով դադարեցվել է թերթի հրատարակությունը: Այնուհետև համալսարանում լույս են տեսել տարբեր բնույթի ձեռագիր թերթեր, որոնց 1928 թվականից փոխարինել է «Պրոլետարական ուսանող» համալսարանական պատի թերթը:

Սակայն վերջինս չէր կարող լայնորեն լուսաբանել համալսարանի կյանքը, բարձրացնել ժամանակի պահանջներին համապատասխան հարցեր: Ուստի և անհրաժեշտություն է դառնում վերականգնել տպագիր պարբերականի հրատարակությունը: Եվ 1929 թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու օրը, լույս է տեսնում «Նոր կադրեր» ասպակետիպ երկշաբաթաթերթի անդրանիկ համալրը: Տպագրվել է «Նոր կադրերի» ընդամենը երեք համար:

1930 թ. համալսարանի վերակառուցման հետևանքով դադարել է «Նոր կադրերի» լույսընծայումը: 1933 թ. սկսվում է տպագրվել «Հարվածային ուսանող» երկշաբաթաթերթը, որն իր գոյությունը պահպանում է մինչև 1937 թ. սկիզբը:

Շուրջ մեկուկես տասնամյակ ընդմիջումից հետո՝ Խորհրդային Հայաստանի 30-ամյակի օրը՝ 1950 թ. նոյեմբերի 29-ին, վերսկսվում է քերթի հրատարակությունը. այս անգամ՝ արդեն «Սովետական ուսանողություն» վերտառությամբ: Այն 1955 թ. մայիսի 9-ից անվանվում է «Երևանի համալսարան» և պարբերաբար՝ շաբաթը մեկ անգամ տպագրվում է մինչև այսօր:

Անցած վեց տասնամյակների ընթացքում «Երևանի համալսարան» շաբաթաթերթը ստեղծել է մի շարք ավանդույթներ, որոնք մեր հանրապետության բուհական մամուլի լավագույն էջերից են: Թերթի ցայսօր տպագրված 1400-ից ավելի համարներում լուսաբանված է համալսարանի պատմությունը: Թերթն իր առաջին իսկ համարից եղել է համալսարանի խորհրդի, ասպա՝ կուսակցական, արհմիութենական և ԼԿԵՄ կոմիտեների մարտական օրգանը: Նրա էջերում 1920-30-ական թթ. հանդես են եկել պրոֆեսորներ Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Ազատյանը, Ա. Տերտերյանը, Ա. Տոնյանը, Վ. Կոստանյանը, Տ. Մուշեղյանը, Ս. Հակոբյանը, Վ. Ռշտունին, Յ. Խանգաղյանը, Պ. Սոտնիկյանը և շատ ուրիշներ:

Թերթում այդ տարիներին տպագրվել են նաև կուսակցական ու պետական նշանավոր գործիչներ Ա. Մռավյանի, Ս. Լուկաշինի, Ա. Հովհաննիսյանի ճառերն ու ելույթները՝ արտասանված համալսարանի հորելյանական տարելիցների ժամանակ:

Հետագայում՝ 1950-ական թթ. և հետո, քերթի էջերում հանդիպում ենք ակադեմիկոսներ Վ. Համբարձումյանի, Ս. Մերգելյանի, Ա. Շահի-

նյանի, Մ. Ներսիսյանի, Գ. Սևակի, Մ. Ջրբաշյանի, Գ. Սահակյանի, Էդ. Աղայանի, Ա. Գաբրիելյանի, Ս. Համբարձումյանի, Էդ. Ջրբաշյանի, Ծ. Աղայանի, ՀՍՍՀ ԳԱ քոթակից անդամներ Մ. Մկրյանի, Վ. Թառայանի, Դ. Բաբայանի, Ռ. Ալեքսանդրյանի, Ա. Թալալյանի, պրոֆեսորներ Հր. Թամրազյանի, Հր. Գաբրիելյանի, Ս. Պողոսյանի, Հովհ. Բարսեղյանի, Հր. Բատիկյանի, Թ. Հակոբյանի, Վ. Մաղաթելյանի, Պ. Բեզիրզանյանի, Մ. Դավթյանի, Լ. Սկրտչյանի, Վ. Գաբրիելյանի, դոցենտներ Հր. Հարությունյանի, Ա. Լալայանի, Վ. Հասրաթյանի, Ս. Նալչաջյանի, Գ. Տոնոյանի, Խ. Նազարյանի, Գ. Ղարախանյանի, Ռ. Տոնոյանի և շատ ուրիշների անունների, որոնք մի շարք հետաքրքիր հարցեր են բարձրացրել ուսումնագիտական աշխատանքները բարելավելու և բարձրագույն կրթությունը կատարելագործելու ուղղությամբ:

«Երևանի համալսարանի» էջերում անվանի գիտնականների, կուսակցական ու պետական գործիչների, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների անունների կողքին հանդիպում ենք նաև գրականության ու արվեստի գործիչների: Նրանցից շատերը՝ Գ. Մահարին, Գ. Վանանդեցին, Մ. Կորյունը, Հ. Շիրազը, Պ. Սևակը, Ս. Կապուտիկյանը, Վ. Դավթյանը, Արաքսը, Վ. Պետրոսյանը, Ա. Քալանթարյանը, Վ. Բալայանը, Ն. Սիքալեյանը և այլք, եղել են համալսարանի սաներ ու իրենց ստեղծագործական առաջին քայլերը կատարել թերթի էջերում:

Թերթի հիմնադիրն ու առաջին խմբագիրը եղել է խորհրդահայ ականավոր բանաստեղծ Ն. Չարյանը: Հետագայում թերթը խմբագրել են Ա. Սարգսյանը, Ռ. Փորսուղյանը, Ա. Հարենցը, Գ. Ոսկանյանը, Մ. Մելիքյանը, Մ. Հակոբյանը, Ռ. Հարությունյանը, Ս. Ավագյանը, Թ. Գալստյանը, Ս. Սարուխանյանը, Խ. Վարդանյանը և ուրիշներ:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից ռազմաճակատ մեկնած համալսարանականների շարքերում են եղել նաև թերթի նախկին խմբագիրներ ու աշխատակիցներ, որոնցից Ռ. Փորսուղյանը, Գ. Ոսկանյանը, Մ. Արմենյանը, Ալ. Մարտիրոսյանը, Մ. Մանուկյանը ընկել են հերոսի մահով:

«Երևանի համալսարան» շաբաթաթերթը վերջին տարիներին հեղինակ է դարձել մի շարք հետաքրքիր նախաձեռնությունների, որոնք խրախուսվել են հանրապետական մամուլի կողմից: Թերթի բազմամյա



բեղմնավոր աշխատանքի գնահատականն էր նաև 1974 թ. ապրիլի 3-ին նրան 1000-րդ համարի լույսընծայման առթիվ և ուսանող երիտասարդության կոմունիստական դաստիարակության բնագավառում ձեռք բերված հաջողությունների համար Հայկական ՄՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով պարգևատրելը:

Թերթի ձեռքբերումները առանձնապես ակնառու են ՄՄԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարներից հետո ընկած ժամանակաշրջանում: Գործունեության ուղենիշ ունենալով համագումարների, կուսակցության ու կառավարության կողմից բարձրագույն դպրոցի և կրթության կատարելագործման վերաբերյալ ընդունված որոշումներն ու փաստաթղթերը՝ «Երևանի համալսարանը» մեծ ուշադրություն է դարձրել ուսումնական գործընթացին, գիտահետազոտական և ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի ու արդյունավետության բարձրացմանը:

«Երևանի համալսարանը» ունի իր կայուն խորագրերն ու մշտական բաժինները՝ «Մեր լենինյան և անվանական կրթաթոշակառուները», «Մեր կոմունիստ ուսանողները», «Ճանաչեցե՛ք գերագանցիկներին», «Հասարակական աշխատանքի ակտիվիստները», «Ուսումնական լաբորատորիաներում», «Ուսումնական գործեր, հոգսեր, խնդիրներ», «Հանրակացարանային կյանք», «Հասարակական-քաղաքական պրակտիկայի ամբիոն», «Նորը համալսարանում», «Սուր անկյան տակ», «Մարզական կյանք», «Երգիծանք և հումոր» և այլն: Թերթն ունի նաև «Կուսակցական կյանք», «Արհմիութենական կյանք», «Կոմերիտական կյանք» մշտական բաժինները: Պարբերաբար տպագրվում են նաև «Գեղեցիկի աշխարհում», «Ներկայացնում է գրական ստույիան», «Ստեղծագործում են մեր դասախոսները» վերտառությամբ նյութեր, բանաստեղծություններ ու պատմվածքներ:

Լայն են մեր համալսարանի ինտերնացիոնալ ու միջազգային կապերը, ուսանողության բարեկամության միջօրեականները: Եվ թերթում 1964 թվականից պարբերաբար լույս է տեսնում «Կռունկ» վերնագրով էջը: Ուսանողության ինտերնացիոնալիստական դաստիարակությանը մեծապես նպաստում են նաև արդեն ավանդույթ դարձած «Ուսանողական գարուն» և «Քաղաքական երգ» փառատոները, որոնց նվիրված նյութերն ընթերցողների կողմից ընդունվում են մեծ սիրով:

«Երևանի համալսարանի» գործունեության մյուս կարևոր ոլորտը համալսարանում տարվող գիտահետազոտական աշխատանքների լուսաբանումն է: Թերթում իրենց պատշաճ տեղն ունեն «Ինչի՞» վրա են աշխատում մեր գիտնականները», «Գիտահետազոտական լաբորատորիաներում», «Գիտությունների մեր նոր դոկտորները» և այլ խորագրեր: Իսկ համալսարանում ուսանողական գիտական ընկերության կատարած աշխատանքները լուսաբանվում են «Գիտության շավիղ» հատուկ էջում, որը պարբերաբար լույս է տեսնում 1970 թվականից:

Թերթի գործունեության ոլորտներից մեկն էլ համալսարանում սովորող սփյուռքահայ ուսանողների ու արտասահմանյան քաղաքացիների ուսումնական խնդիրների և նրանց մշակութային-կենցաղային պայմանների լուսաբանումն է:

Գնալով ավելի սերտ են դառնում թերթի և ուսանողների, համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվի կապերը: Այդ գործին մեծապես նպաստում են կուսկոմիտեն և ռեկտորատը, որոնք հաճախակի անդրադառնում են թերթի գործունեությանը, օգնում խմբագրությանը՝ ապահովելու լրագրային ելույթների նպատակասլացությունն ու ներգործությունը, վառ կերպով ու հետաքրքիր լուսաբանելու համալսարանի բազմահազարանոց կոլեկտիվի առօրյան, նրա առջև ծառայած խնդիրները:

Մեծ են այսօր «Երևանի համալսարան» թերթի առջև ծառայած խնդիրները, որոնք բխում են ՍՄԿԿ կենտկոմի հունիսյան և ՀԿԿ կենտկոմի հուլիսյան (1983 թ.), ինչպես նաև 1984 թ. փետրվարյան ու ապրիլյան պլենումների որոշումներից: Այսօր թերթի խմբագրության ուժերը հիմնականում նպատակատուղված են նպաստելու ուսանողության բազմակողմանի դաստիարակությանը, օգնելու համալսարանի ռեկտորատին, կուսկոմիտեին և հասարակական կազմակերպություններին՝ լուծելու այն խնդիրները, որոնք բարձրագույն դպրոցի առջև դրվել են կուսակցության ու կառավարության կողմից: Եվ թերթի հորելյանը խմբագրության ստեղծագործական կոլեկտիվին ու թղթակցական ակտիվին պարտավորեցնում է էլ ավելի բարձրացնել տպագրվող նյութերի գաղափարական մակարդակը, ավելի մեծ ավանդ ունենալ ուսանող երիտասարդության կոմունիստական դաստիարակության, ուսման առաջադիմության բարձրացման և ժողովրդական տնտեսության համար որակյալ մասնագետների պատրաստման գործում:

**2000-ԲՊ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ  
ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ\***

*(Հանդիսավոր նիստը՝ նվիրված «Երևանի համալսարան» թերթի  
2000-րդ՝ հոբելյանական համարի լույսընծայմանը)*

«Երևան համալսարան» թերթը Հայաստանի բուհական մամուլի առաջնեկն ու ջահակիրն է, մեր մայր կրթօջախի տարեկիցն ու տարեգիրը, նրա պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողական բազմաթիվ սերունդների մտերիմ բարեկամն ու ուղեկիցը: Վերջերս լույս տեսավ թերթի 2000-րդ՝ հոբելյանական համարը, որի առթիվ մարտի 18-ին Ե. Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ:

ԵՊՀ ռեկտորը, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, բացելով նիստը, նշեց, որ «Երևանի համալսարան» թերթի 2000-րդ՝ հոբելյանական համարի լույսընծայումը, հիրավի, համալսարանական կյանքում տեղի ունեցող ամենակարևոր իրադարձություններից, նրա պատմության մնալուն էջերից մեկն է: Այա նա հակիրճ բնութագրեց թերթի նշանակությունը, վերհանեց նրա կարևոր դերը համալսարանի տարեգրության ստեղծման, նրա կյանքի տարբեր ոլորտների լուսաբանման, ուսանող երիտասարդության կրթության ու դաստիարակության գործում:

«Մեր թերթը,- ասաց ռեկտորը,- մայր բուհի հետ նրա հիմնադրման առաջին իսկ օրվանից երկար ճանապարհ է անցել, և, այդ ընթացքում, դիմագրավելով ու հաղթահարելով շատ դժվարություններ, նույնիսկ համալսարանի համար ծանր տարիներին նրա գործունեությունը չի ընդհատվել, այլ լույս է տեսել պարբերաբար և ըստ պատշաճի լուսաբանել մեր ուսումնագիտական և հասարակական-մշակութային կյանքը՝ ստեղծելով համալսարանի հավաստի պատմությունը»:

«Այսօր «Երևանի համալսարան» թերթն ավելի վստահ քայլերով է առաջ ընթանում,- շարունակեց ռեկտորը,- արձանագրում մեր նվաճումներն ու հաջողությունները, անդրադառնում բուհական կյանքի հրատապ խնդիրներին, վերհանում ուսուցման նոր համակարգի պրոբլեմները և լայն քննարկման նյութ դարձնում ուսանողությանը հուզող հար-

---

\* «Երևանի համալսարան» թերթ, 31 մարտի 2004 թ., № 10, էջ 1-2:

ցերը»: Ապա ակադ. Ռ. Մարտիրոսյանը դրվատանքի ջերմ խոսքեր ուղղեց թերթի ստեղծման նվիրյալներին, նրա շարունակական գոյությունն ապահովող, նախաձեռնող մասնակիցներին ու թղթակիցներին, բոլոր նրանց, ովքեր տասնամյակներ շարունակ իրեն հողվածներով ու թղթակցություններով հանդես են գալիս թերթի էջերում ու նպաստում նրա բովանդակության հարստացմանը: Ռեկտորը բոլորին մաղթեց ստեղծագործական հետագա հաջողություններ:

«Երևանի համալսարան» թերթի անցած ուղուն էր նվիրված նրա ներկայիս խմբագիր, բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Մաղալյանի զեկուցումը, որում ներկայացվեց Հայաստանի բուհական մամուլի առաջնեկի հարուստ պատմությունը:

Չեկուցողը նշեց, որ «Երևանի համալսարան» թերթը ծնունդ է առել մեր մայր կրթօջախի հիմնադրման հետ մեկտեղ: Մի փաստ, որն ավելի քան խորհրդանշական է, քանի որ աշխարհում հազվադեպ է պատահում, երբ որևէ համալսարանի հիմնադրում նշանավորվում է սեփական մամուլի հրատարակմամբ: Պետք է ուրախությամբ նշել, որ այդպիսի համալսարանների թվին է պատկանում նաև Երևանի պետական համալսարանը, որի հանդիսավոր բացումը Ալեքսանդրապոլում այն հեռավոր 1920 թ. հունվարի 31-ին՝ շաբաթ օրը, նշանավորվել է «Հայաստանի համալսարան» միօրյա թերթի լույսընծայումով, որն ունեցել է նաև «Նվեր Հայաստանի անդրանիկ համալսարանին» ենթանվանումը, ինչպես և «Գիտությունը ուժ է» նշանաբանը: Այսօր «Երևանի համալսարան» թերթը նույնպես կրում է այդ նշանաբանը:

Ապա զեկուցողը նշեց, որ «Հայաստանի համալսարանի» հրատարակությունից ուղիղ 84 տարի անց՝ 2004 թ. հունվարի 31-ին՝ նույնպես շաբաթ օրը, լույս է տեսել նրա շարունակությունը հանդիսացող «Երևանի համալսարան» թերթի 2000-րդ՝ հոբելյանական համարը: Երկու թերթերի այդ տոնական համարների տպագրության ամսաթվերի ու օրերի այս համընկնումը որքան էլ պատահական զուգադիպություն համարենք, այնուամենայնիվ, իր մեջ ինչ-որ մի լուսավոր խորհուրդ է պարունակում, որը կարևոր է ինչպես թերթի, այնպես էլ մեր Մայր համալսարանի հարատևության համար:

Հայաստանի համալսարանը մեկ կիսամյակ Ալեքսանդրապոլում գործելուց հետո կրկին փոխադրվում է Երևան, և վերահաս պատերազ-

մական իրավիճակի ու քաղաքական կարուկ փոփոխությունների հետևանքով 1920 թ. աշնանը պարապմունքները ժամանակավորապես դադարեցվում են: Այնուհետև Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր, և 1920 թ. դեկտեմբերի 17-ին ՀԽՍՀ լուսժողովմատի հրամանով վերսկսվում է համալսարանի գործունեությունը, իսկ պարապմունքները շարունակվում են 1921 թ. հունվարի 24-ից: Այդ ժամանակվանից էլ անկանոն պարբերականությամբ սկսում են լույս տեսնել ֆակուլտետային պատի թերթերը: 1924 թ. փետրվարի 12-ին կոմբջջի բյուրոն լսում է պատի թերթերի խմբկոլի նախագահ, ուսանող, հետագայում ականավոր բանաստեղծ Նաիրի Չարյանի զեկուցումը, որի հիման վրա որոշում է ընդունվում պատի թերթերը հրատարակելու ամիսը երկու անգամ: Իսկ նույն տարվա մարտին Ն. Չարյանի խմբագրությամբ լույս է տեսնում ուխտրիդի օրգան «Նոր ուսանող» պարբերականը 72 էջ ծավալով ու 1000 օրինակ տպաքանակով:

Սակայն տպագրատեխնիկական դժվարությունների հետևանքով այդ մեկ համարով էլ ավարտվում է նրա հրատարակությունը:

Այնուհետև համալսարանում դարձյալ շարունակվում են լույս տեսնել տարբեր բնույթի պատի թերթեր, որոնց 1928 թ. փոխարինելու է գալիս համալսարանական «Պրոլետարական ուսանող» ձեռագիր թերթը: Վերջինս, սակայն, չէր կարող լայնորեն լուսաբանել ուսանողության բազմաբեղուն կյանքը, բարձրացնել ժամանակի պահանջներին համահունչ հարցեր, ուստի անհրաժեշտություն է առաջանում վերականգնել տպագիր օրգանի հրատարակությունը: 1929 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի խորհրդայնացման 9-րդ տարեկիցի օրը, լույս է տեսնում «Նոր կադրեր» ապակետիպ երկշաբաթաթերթի անդանիկ համարը 200 օրինակ տպաքանակով:

ԽՍՀՄ-ում 1930 թ. անցկացվում է բարձրագույն կրթության վերակառուցում, որին ենթարկվում է նաև Երևանի համալսարանը: Այն լուծարվում է, և նրա ֆակուլտետների հիման վրա Հայաստանում ստեղծվում են մի քանի բուհեր: Այդ իսկ պատճառով դադարում է «Նոր կադրերի» տպագրությունը, որից լույս էր տեսել ընդամենը երեք համար, վերջին երկուսը՝ միացյալ:

1993 թ. ԽՍՀՄ-ում կրկին վերաբացվում են համալսարանները, որոնց թվում նաև՝ Երևանի համալսարանը: Նույն տարվա սեպտեմբերից

այստեղ սկսում է լույս տեսնել «Հարվածային ուսանող» երկշաբաթաթերթը, որն իր գոյությունը պահպանում է մինչև 1936 թ. վերջը: Այս շուրջ մեկուկես տասնամյակ ընդմիջումից հետո՝ Խորհրդային Հայաստանի 30-ամյակի օրը՝ 1950 թ. նոյեմբերի 29-ին, վերսկսվում է համալսարանական շաբաթաթերթի հրատարակությունը՝ այս անգամ լույս տեսնելով արդեն «Մովետական ուսանողություն» անվամբ, իսկ 1955 թ. մայիսից առ այսօր շաբաթաթերթը կրում է «Երևանի համալսարան» վերտառությունը: 1992 թ. ապրիլից ծագած տնտեսական դժվարությունների հետևանքով խախտվել է նրա պարբերականությունը՝ շաբաթաթերթից վերածվելով երկշաբաթաթերթի, իսկ տպաքանակը 3500 օրինակից դարձել է 500: 2003 թ. հունվարի 1-ից կրկին ավելացվում է նրա պարբերականությունը՝ այն վերածելով տասնօրյա թերթի, իսկ տպաքանակը դառնում է 1000 օրինակ: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ «Երևանի համալսարանը» Հայաստանի բուհական մամուլի առաջնեկն է, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության համալսարանական առաջին ու հեղինակավոր թերթերից մեկը: «Մոսկովսկի ունիվերսիտետ» թերթը հիմնադրվել է մեր թերթից հինգ տարի անց՝ 1925 թ. մարտին:

Անդրադառնալով թերթի գործունեությանը՝ զեկուցողը նշեց, որ, առաջին իսկ համարներից սկսած, նրա էջերում ուսանողների աշխատանքների հետ կողք-կողքի տպագրվել և այժմ էլ շարունակում են տպագրվել մեր անվանի դասախոսների հոդվածները, որոնց մեծ մասն այսօր ևս չի կորցրել իրենց թարմությունն ու հրատապությունը: Թերթը նաև ուղի է հարթել բազմաթիվ տաղանդավոր ուսանողների համար, որոնք հետագայում դարձել են անվանի գրողներ ու հրապարակախոսներ, գիտնականներ ու մշակութային գործիչներ:

Այնուհետև զեկուցողը նշեց, որ իր գոյության բոլոր տարիներին լինելով ԵՊՀ գիտխորհրդի, ռեկտորատի, ինչպես նաև կուսակցական ու հասարակական կազմակերպությունների օրգանը, իսկ վերջին 13 տարիների ընթացքում՝ անկուսակցական, չքաղաքականացված պաշտոնաթերթ, թերթը միշտ էլ իր առաջնահերթ խնդիրն է համարել օգնել հիշյալ ղեկավար մարմիններին բարձրորակ մասնագետներ պատրաստելու, նրանց կրթելու և դաստիարակելու գործում: Նրա արժարժած թեմաները հիմնականում վերաբերում են ԵՊՀ բազմաբեղուն կյանքին, ուսում-

նական գործընթացին և գիտահետազոտական աշխատանքներին, մայր կրթօջախի մշակութային կյանքին ու միջազգային կապերին, ուսանողությանը հուզող, ինչպես և համալսարանի առջև դրված հիմնահարցերին, որոնք բազմաբնույթ ու բարդ են մեր օրերում: Թերթի կարևոր խնդիրներից են նաև ուսուցման եռաստիճան համակարգին անցնելուց հետո ուսումնական կյանքում ծագած դժվարությունների, ստացված արդյունքների և ունեցած նվաճումների լուսաբանումը և նկատված թերությունների ու բացերի վերհանումը: Թերթն իր գոյության ընթացքում ստեղծել է մի շարք ավանդույթներ, մշակել նյութերի մատուցման ձևեր ու եղանակներ և մամուլի ձևավորման ուրույն սկզբունքներ, որոնց համար էլ այն սիրով է ընդունվում համալսարանականների կողմից և մեծ համարում ունի ոչ միայն ուսանողության ու պրոֆեսորադասախոսական կազմի, այլև ընդհանրապես մասնագետ-լրագրողների շրջանում:

«Երևանի համալսարանը» գիտակցաբար զերծ է մնում վերջին շրջանում մամուլի որոշ օրգաններին բնորոշ գործելակերպից՝ բոլորի «ուշադրությունը գրավող», այսպես կոչված, սենսացիոն հրապարակումներից, և, հավատարիմ հայ մամուլի լավագույն ավանդույթներին, բարձր է դասում խոսքի ճշմարտացիությունը, տպագրվող նյութերի հրատապությունը, դրանց լեզվի և ոճի մաքրությունը, գրագիտության պատշաճ մակարդակը և այլն: «Մի խոսքով,- նշեց խմբագիրը,- մեր թերթը հետևում է որակական և ոչ թե մասսայական, դեղին մամուլի օրինակին: Իր դավանած այս սկզբունքների, մայր կրթօջախի կյանքը պատշաճ մակարդակով լուսաբանելու ու ուսանող երիտասարդությանը հայրենասիրական ոգով դաստիարակելու համար էլ թերթը ժամանակին արժանացել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրին և մի շարք այլ բարձր պարգևների»:

«Երևանի համալսարանն» այժմ էլ պահպանում է այդ ավանդույթները, ստեղծում է նոր բաժիններ ու խորագրեր, որոնց տակ տեղ են գտնում պատրաստվող բազմաբնույթ նյութերն ու ուսանողների ստեղծագործությունները, համալսարանական տարբեր սերունդների հրապարակախոսական ելույթները: Չեկուցողն ընդգրկեց, որ այսօր էլ թերթի աշխատանքներին իրենց գործուն մասնակցությունն են բերում մեծ թվով անվանի գիտնականներ, որոնց կապը այս պարբերականի հետ հաստատվել է դեռևս նրանց ուսանողական տարիներից և շարունակվում է առ այսօր: Ուսանողների շրջանում ևս կան ժրաջան տղաներ ու աղջիկ-

ներ, որոնք սերտորեն կապված են խմբագրության հետ և իրենց մասնակցությունն են բերում թերթի աշխատանքներին:

Թերթի խմբագրությանը մշտապես օգնում է համալսարանի ղեկավարությունը: Այն գտնվում է ԵՊՀ գիտխորհրդի, ռեկտորատի, արհկոմիտեի, ուսանողական ու հասարակական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Խմբագրության առջև ծառայած խնդիրները լուծվում են հոգատարությամբ, ինչպես և ժամանակին արձագանք են գտնում նրա էջերում բարձրացված օրախնդիր հարցերը: Այստեղ հատկապես ուզում ենք նշել,- ավելացրեց զեկուցողը,- որ թերթի խմբագրության աշխատանքները մշտապես գտնվել են ռեկտորների ուշադրության կենտրոնում, և նույն գործը վերջին մեկ տասնամյակում բժախնդրորեն կատարում է ակադ. Ռ. Մարտիրոսյանը: Շուրջ երեք տասնամյակ թերթի խմբագրությանն իր անմիջական օգնությունն է ցույց տվել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆ. Ս. Հախումյանը: Նա խմբագրության աշխատակիցների նկատմամբ ցուցաբերած իր հոգատար ու բարյացակամ վերաբերմունքով և բանիմաց խորհուրդներով ու հորդորներով, հաճախ նաև թղթակցելով նպաստել է թերթի գործունեության աշխուժացմանն ու նրա որակի բարձրացմանը: Այսօր էլ պրոֆ. Ս. Հախումյանը՝ որպես ռեկտորատի խորհրդական, մեծ պատրաստակամությամբ օգնում և աջակցում է խմբագրության գործունեությանը: Նույնը կարելի է ասել նաև մյուս պրոռեկտորների մասին, որոնք երբևէ ի պաշտոնն ղեկավարել են թերթի աշխատանքները: Ներկայումս այդ դժվարին պարտականությունը ստանձնել է պրոֆ. Ա. Սիմոնյանը:

Վերջում զեկուցողը խմբագրության և թերթի բոլոր ընթերցողների անունից շնորհակալություն հայտնեց ռեկտորատին, արհկոմիտեին և ուսանողական կառույցներին՝ հանձին ռեկտոր, ակադ. Ռ. Մարտիրոսյանի՝ թերթի դերը համալսարանի կյանքում մշտապես կարևորելու, նրա 2000-րդ համարի լույսընծայումը մշակութային հիշարժան երևույթ դիտելու և այդ իրադարձության հանդիսավոր նշումը բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Թերթի անցած ուղու մասին ընթերցված զեկուցումից հետո ռեկտորը կատարեց պարզևների հանձնման արարողություն: Նա հրապարակեց ՀՀ ԿԳ նախարարության որոշումը՝ խմբագիր Վ. Մաղալյանին հիշյալ նախարարության պատվոգրով պարգևատրելու մասին, և այն



հանձնեց նրան: Ապա ընթերցվեց ՀՀ ժողովապետների միության վարչության որոշումը խմբագրին իր երկարամյա ու անբասիր աշխատանքի համար Ժողովապետների միջազգային ֆեդերացիայի կազմում ընդունելու մասին, և նրա հանձնվեց այդ կազմակերպության անդամատուհար: Իսկ թերթի խմբագրության մի խումբ աշխատակիցներ և տարբեր տարիների լավագույն թղթակիցներ՝ դեկաններ, դասախոսներ և ուսանողներ, պարգևատրվեցին ԵՊՀ ռեկտորատի պատվոգրերով ու դրամական պարգևներով, որոնք հանդիսավորությամբ նրանց հանձնեց ռեկտորը:

Այնուհետև շնորհավորական ելույթներով հանդես եկան Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար, բանաստեղծ Հ. Հովեյանը, ժողովապետների միության վարչության կողմից պատմական գիտությունների թեկնածու, ՀԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Կ. Սամվելյանը, բանաստեղծ և հրապարակախոս Անահիտ Պարսամյանը, թերթի նախկին խմբագիր, դոց. Խ. Վարդանյանը, «Տնտեսագետ» թերթի երկարամյա խմբագիր, «Երևանի համալսարան» թերթի նախկին աշխատակից Ռ. Երվանդյանը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դասախոս, քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, թերթի կետադրյան թղթակից Գ. Ղարախանյանը, նույն ֆակուլտետի բավալավրիատի 2-րդ կուրսի ուղանողուհի Մոնա Թևանյանը, ժողովապետի կայի ֆակուլտետի բակալավրիատի 1-ին կուրսի ուսանող Նաիրի Հոխիկյանը, ֆիզդաստիարակության և սպորտի ամբիոնի վարիչ, դոց. Հ. Թումանյանը և ուրիշներ: Նրանք ջերմ խոսքեր հղեցին մայր բուհի պաշտոնաթերթի 2000-րդ՝ հոբելյանական համարի լույսընծայման առթիվ, նրա խմբագրության բոլոր հին ու նոր աշխատակիցներին ու թղթակիցներին ցանկացան ստեղծագործական բեղմնավոր աշխատանք՝ միաժամանակ հպարտությամբ նշելով, որ իրենց առաջին ստեղծագործություններն ու թղթակցությունները տպագրվել են այդ թերթի էջերում: Բոլոր ելույթ ունեցողներն էլ «Երևանի համալսարան» թերթին և համալսարանին մաղթեցին անխափան ու հարատև գործունեություն:

Եզրափակելով հանդիսավոր նիստը՝ ակադ. Ռ. Մարտիրոսյանը կրկին շնորհավորեց հանդիսության մասնակիցներին՝ խմբագրության աշխատակազմին ու թղթակիցներին մաղթելով նորանոր հաջողություններ:

**ՄԱՍ ՅՈԹԵՐՈՐԳ**

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՐՔԸ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ  
ԱՆՍՊԱՌ ՇՏԵՄԱՐԱՆ**



## **Հորելյանական հրատարակություններ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ»**

Երևանի պետական համալսարանը Հայաստանի առաջատար բարձրագույն ուսումնագիտական հաստատությունն է, մեր հանրապետության բուհերի առաջնելը, մեր «Alma mater»-ը: Չափազանց մեծ է նրա դերը հայ ժողովրդի մշակույթի նորագույն շրջանի պատմության ասպարեգում: Նրանից է սկզբնավորվել մեր հանրապետության բարձրագույն դպրոցը: Նա է հիմք հանդիսացել Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծման համար: Նրա սաներից շատերը դարձել են աշխարհահռչակ գիտնականներ, անվանի գրողներ ու մշակույթի գործիչներ, ճանաչված դասախոսներ, երևելի մտավորականներ, որոնց անուններն այսօր լայնորեն հայտնի են ոչ միայն մեզ մոտ, այլև աշխարհի տարբեր մասերում:

Այսպիսի հարուստ ավանդույթներ ստեղծած համալսարանի ամբողջական պատմության ստեղծումը վաղուց դարձել էր օրակարգի հարց: Սակայն, ցավոք, մենք, հորելյանների առիթներով լույս ընծայած մի քանի գրքերից ու ժողովածուներից<sup>71</sup> բացի, առ այսօր չունենք նրա լի-

---

<sup>71</sup> Դրանք են Երևանի պետական համալսարանի հիմնադրման 20-ամյակի առթիվ լույս տեսած ռեկտոր **Գ. Բ. Պետրոսյանի** «Երևանի պետական համալսարանը» (Երևան, 1941, 37 էջ) գրքույկը և 50-ամյակի առթիվ տպագրված «Երևանի պետական համալսարան» գրքույկը (Երևան, 1970, 212 էջ), որը հրատարակվել է նաև ռուսերեն ու անգլերեն (Երևան, 1970), «Երևանի պետական համալսարան» լուսանկարների ալբոմը (տեքստը՝ հայերեն և ռուսերեն, կազմող՝ **Ա. Հ. Ասրյան**) (Երևան, 1970), **Վ. Վ. Սաղաթելյանի** համալսարանի 60-ամյակի օրերին տպագրված «Մաքեմատիկան Երևանի համալսարանում» (Երևան, 1980, 148 էջ), «Երևանի պետական համալսարան» (Երևան, 1981, 324 էջ), «Наука в Ереванском государственном университете (информационное издание к 60-летию ЕГУ)» (Երևան, 1981, 216 էջ) գրքերը: Հորելյանների առիթներով տպագրվել են նաև «Մեր անվանի դասախոսները», գրքի 1-ին հատորը (Երևան, 1970, 268 էջ), **Փ. Ի. Ենգոյանի** «Երևանի համալսարանը մեծ Հայրենականի տարիներին» (Երևան, 1975, 312 էջ), «Հայերենագիտությունը 60 տարում» (Երևան, 1981, 200 էջ) ժողովածուները, ինչպես նաև առանձին հոդվածներ ու ուսումնասիրություններ են տպագրվել «Գիտական տեղեկագրում» (Երևան, ԲՊՀ, 1925 թվականից սկսած, հատկապես 1927 թ. № 2-3-ում տպագրված՝ ռեկտոր **Հ. Գ. Հովհաննիսյանի** հոդվածը՝ նվիրված համալսարանի հիմնադրման 5-ամյակին), «Սովետական Հայաստան» ամսագրում (Երևան, 1946, № 5. այստեղ համալսարանի 25-ամյակի առթիվ տպագրվել է ռեկտոր **Հ. Խ. Բունիաթյանի** «Պանծալի հորելյանը» վերտառությամբ հոդվածը, հետագայում՝ նաև այլ նյութեր), «Բանբեր Երևանի համալսարանի», «Երևանի համալսարան» (1993 թվականից՝ «Հանդես Երևանի համալսարանի») և այլ հանդեսներում: Սակայն պետք է նշել, որ այդ գրքերում ու ժողովածուներում, ինչպես և ինչյալ պարբերական-

արժեք պատմությունը՝ հիմնադրումից մինչև մեր օրերը: Եվ դա այն դեպքում, երբ աշխարհի շատ համալսարաններ առանձին հատորներով ու տարեգրությունների ձևով ստեղծել են իրենց պատմությունը: Ավելին՝ կան նույնիսկ այնպիսիները, որոնք պարբերաբար տպագրում են իրենց դասախոսներին ու սաներին նվիրված կենսագրական բառարաններ:

Մեզանում նկատված այդ բացը երեք տասնամյակ առաջ մասամբ լրացնելու եկավ Լ. Պ. Ղարիբջանյանի «Երևանի պետական համալսարանը» մենագրությունը<sup>72</sup>, որը բարեփոխված տեսքով վերահրատարակվեց նորերս՝ մեր մայր կրթօջախի հիմնադրման 75-ամյակի առթիվ<sup>73</sup>:

Այս գրքի առաջին հրատարակության մասին ժամանակին Հայաստանի ու Սփյուռքի մամուլում լույս են տեսել բազմաթիվ դրվատական գրախոսականներ<sup>74</sup>, ուստի մենք չենք ուզում կրկին ծանրանալ այս նոր տպագրության բովանդակության վրա, նամանավանդ որ հեղինակը նրանում հաշվի է առել մամուլում արված դիտողությունները, ցանկություններն ու առաջարկությունները և իր աշխատանքը հարստացրել է նոր գլուխներով ու բաժիններով: Մենք հիմնականում անդրադառնում ենք հեղինակի բերած այդ նորություններին:

Գիրքն ունի «Առաջաբան», նրան հաջորդող վեց գլուխ և «Վերջաբան», ինչպես նաև «Հավելված» ու Երևանի պետական համալսարանում 1919-1930 թթ. աշխատած դասախոսների մասին կենսագրական համառոտ տեղեկություններ:

---

ներում տպագրված նյութերը Երևանի համալսարանի գործունեության ոչ բոլոր շրջաններն են սպառնիչ կերպով լուսարանում:

<sup>72</sup> Տե՛ս Լ. Պ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը (1920-1930 թթ.), Երևան, «Միտք» հրատ., 1965, 298 էջ: Նույնը թարգմանվել և հրատարակվել է նաև ռուսերեն. տե՛ս Լ. Պ. Գարիբձաճյան, Ереванский государственный университет (1920-1930 гг.), Երևան, «Հայաստան» հրատ., 1971, 227 էջ:

<sup>73</sup> Լ. Պ. Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը (1919-1930 թթ.), Երևան, Եր. համ. հրատ., 1994, 304 էջ:

<sup>74</sup> Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2; «Լենինյան ուղիով», 1966, № 5; «ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության բյուլետեն», 1966, № 1; «Սովետական Հայաստան» օրաթերթ, 22. I. 1966, № 19; «Երեկոյան Երևան», 23. I. 1966, № 23; «Ավանգարդ», 03. II. 1966, № 17; «Բանվոր», 09. II. 1966, № 33; «Հայրենիք» (Բոստոն), 21-23. IV. 1966; «Արմենիա» (Բուենոս Այրես), 25. III - 02. IV. 1966; «Բիւրակն» (Փարիզ), 03. V - 06. VII. 1966; «Սեւան» (Արգենտինա), 01-02. II. 1967 և այլն:

«Առաջաբանում» հեղինակը հիմնավորում է իր կատարած աշխատանքի կարևորությունը, որով նա սկսել է զբաղվել դեռևս 1950-ական թվականների կեսերից, վկայակոչում է այն արխիվներն ու պարբերականները, որոնցից օգտվել և անհրաժեշտ նյութեր է քաղել իր ուսումնասիրությունների ընթացքում: Այնտեղ խոսվում է նաև այն հավելումների ու փոփոխությունների մասին, որոնք կատարվել են ներկա՝ երկրորդ հրատարակության մեջ:

Առաջին գլխում քննարկվում են Հայաստանում բարձրագույն դպրոցի հիմնադրման նախադրյալները, համառոտ ներկայացվում միջնադարյան Հայաստանի բարձր տիպի դպրոցները (համալսարանները): Այստեղ ուրվագծվում է նաև երկրում կրթական գործի ընդհանուր պատկերը վաղնջական ժամանակներից մինչև XVIII դարի վերջը: Այնուհետև հեղինակը վերլուծում է հայկական բարձրագույն կրթության հարցը XIX դարում և XX դարի սկզբին, ներկայացնում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1818-1917), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1824-1924), Էջմիածնի Գևորգյան ճեմարանի (1874 թվականից մինչև այժմ) և երկրի ներսում ու դրսում գործող բազմաթիվ այլ նշանավոր դպրոցների գործունեության պատմությունը: Միաժամանակ քննարկվում են այն հարցադրումները, որոնք ժամանակին հայրենի հողում ազգային համալսարան հիմնելու համար բարձրացրել են մեր մեծամուն գործիչները՝ Խաչատուր Աբովյանից մինչև Հովհ. Թումանյան:

Աշխատության երկրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Երևանի համալսարանի հիմնադրման պատմությանը, որտեղ տրվում են Հայաստանի համալսարանի (1919-1920 թթ.) և Երևանի ժողովրդական համալսարանի ստեղծման մանրամասները: Հեղինակը, ով իր գրքի առաջին հրատարակության մեջ, ելնելով ժամանակի տիրող գաղափարախոսությունից, թուցիկ ու թերահավատորեն է լուսաբանել Հայաստանի համալսարանի հիմնադրումն ու նրա գործունեության առաջին մեկուկես տարին, այս հրատարակության մեջ առանձին բաժին է նվիրել այդ կարևոր հարցերի քննարկմանը, այսպես՝ Երևանի համալսարանի հիմնադրման ճշգրիտ տարեթիվը խորհրդային կարգերի օրոք ընդունված 1920 թ. դեկտեմբերի 17-ի փոխարեն տվել է 1919 թ. մայիսի 16-ը: Այդ կապակցությամբ նա ըստ արժանվույն է գնահատում համալսարան ունենալու փափագով տարված Հայաստանի առաջին հանրապետության

ղեկավարների (Ա. Խատիսյան, Գ. Մելիք-Ղարաբյոզյան, Ն. Աղբալյան, Ս. Տիգրանյան և ուրիշներ) և անվանի գիտնականների (Յու. Ղամբարյան, Դ. Չավրյան, Մ. Տեր-Մովսիսյան, Գ. Հովսեփյան, Ստ. Մալխասյանց, Մ. Աբեղյան, Ե. Տեր-Մինասյան, Ռ. Աբրահամյան, Ա. Լոռու Մելիք-Քալանթար և այլք), ինչպես նաև խորհրդային կարգերի հաստատումից հետո նրա վերաբացմամբ ու զարգացմամբ շահագրգռված պետական գործիչների (Ալ. Մյասնիկյան, Ա. Մռավյան, Ս. Կասյան, Աշ. Հովհաննիսյան) և հայրենամկեր դասախոսների (Հ. Մանանդյան, Հ. Հովհաննիսյան, Պ. Քալանթարյան, Հ. Գյուլքնիսյան, Լ. Արիսյան, Ա. Եղիազարյան, Գ. Արեշյան...) ջանադիր աշխատանքը:

Երևանի համալսարանի ուսանողությանն ու պատրաստած կադրերին է նվիրված գրքի երրորդ գլուխը: Հեղինակն այստեղ անդրադառնում է ֆակուլտետների ստեղծման պատմությանը, ներկայացնում է նրանց ձևավորման ու զարգացման ընթացքը, կատարված փոփոխությունները: Անդրադառնալով ուսանողությանը վերաբերող խնդիրներին՝ նա բերում է բազմաթիվ մանրամասներ՝ կապված նրա թվական աճի, սոցիալական կազմի, համալսարանում ստեղծված առաջին երիտասարդական կազմակերպությունների և այլ խնդիրների հետ, խոսում է նրանց ուսումնական հաջողությունների ու գիտական պրպտումների մասին:

Նույն գլխում առանձին բաժնով ներկայացվում են համալսարանի անդրանիկ շրջանավարտները, որոնք, անցնելով աշխատանքի, շատ բան են անում Հայաստանի քայքայված տնտեսությունը վերականգնելու և լուսավորությունը տարածելու համար:

Մենագրության չորրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորմանն ու նրա գործունեության առաջին շրջանին: Հեղինակը հետևողականորեն, ըստ թվականների, մեկ առ մեկ թվարկում և բնութագրում է այն բոլոր դասախոսներին, ովքեր արտասահմանից ու Ռուսաստանից վերադառնում էին հայրենիք և լծվում երիտասարդ մասնագետների պատրաստման գործին Մայր համալսարանում: Առաջին տարում նրանց թիվը ընդամենը 27-ն էր, որը տասնամյակի վերջում հասնում է 138-ի: Նրանց մեջ էին Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Լեոն (Առաքել Բաբախանյան), Գ. Ղափանցյանը, Ա. Տոնյանը, Հ. Ազատյանը, Հ. Նավակատիկյանը, Գ. Էղիլյանը, Հր. Անժուրը, Ա. Տեր-Պողոսյանը, Ստ. Ղամբարյա-

նը, Վ. Արծրունին, Ա. Տերտերյանը, Լ. Ռոտինյանցը, Ալ. Հակոբյանը, Վ. Ռշտունին, Ստ. Ներսիսյանը, Ս. Սանթրոսյանը և շատ ուրիշներ: Դասական գիտնականների այս կազմը, ինչպես ճիշտ կերպով նկատում է գրքի հեղինակը, իր գիտական վաստակով կարող էր պատիվ բերել աշխարհի ամեն մի առաջնակարգ համալսարանի: Նրանք անգնահատելի ծառայություն են մատուցում ոչ միայն գիտության զարգացման գործին, այլև կրթում ու դաստիարակում են մի քանի սերունդների՝ իրենց ուսերի վրա տանելով հայ մտավորականության պատրաստման դժվարին, բայց և պատվավոր գործը:

Գրքի հաջորդ երկու գլուխներում քննարկվում են Երևանի համալսարանում տարված ուսումնական և գիտահետազոտական աշխատանքները: Այստեղ մեծ տեղ է հատկացված համալսարանի ուսումնադաստիարակչական և մեթոդական աշխատանքների լուսաբանմանը: Փաստական հարուստ նյութի հիման վրա հեղինակը հանգամանորեն քննում և վերլուծում է տարբեր ֆակուլտետների ու ամբիոնների գործունեությունը, անդրադառնում է դասավանդվող առարկաներին ու նրանց ծրագրերին, դասախոսություններին ու գործնական պարապմունքներին, դասավանդման ձևերին ու մեթոդներին վերաբերող հարցերին:

Համալսարանում սկզբից ևեթ գիտահետազոտական լայն աշխատանքներ են ծավալվում: Այն դառնում է Հայաստանի գիտության առաջատար օջախը: Այստեղ կենտրոնանում բնական, հումանիտար ու հասարակական գիտությունների գծով աշխատող գիտնականների մեծ մասը: Հեղինակը մանրամասնորեն քննարկում է համալսարանական գիտնականների կատարած հետազոտական աշխատանքները, նրանց հրատարակած մենագրություններն ու ուսումնական ձեռնարկները և հանգում այն ճիշտ եզրակացությանը, որ համալսարանից սկիզբ առան գիտության այն բոլոր հիմնական ճյուղերը, որոնք հետագայում նոր թափ ու լայն ծավալ ստացան մեր հանրապետությունում: Նա ներկայացնում է բազմաթիվ գիտնականների ստեղծագործական կյանքի պատմությունը, ցույց տալիս նրանց անմնացորդ նվիրումը հայրենի գիտության զարգացման գործին: Այդ ամենը գրքում շաղկապվում է երկրի հասարակական-քաղաքական ու տնտեսական-մշակութային կյանքի, ինչպես նաև բարձրագույն դպրոցի զարգացման առանձին փուլերի հետ: Այստեղ ներկայացվում են նաև հիշյալ ժամանակահատվածում հանրապետու-



թյան առաջատար բուհի ունեցած միջազգային կապերը միութենական ու արտասահմանյան համալսարանների հետ:

«Վերջաբանում» հարուստ փաստերի հիման վրա ցույց են տրված Երևանի համալսարանի այսօրվա պատկերը և այն դերը, որ նա կատարել է հանրապետության տնտեսական շինարարության, գիտության ու մշակույթի, ինչպես և բուհական կրթության զարգացման գործում:

Ինչպես արդեն նշել ենք, մեր հանրապետության անդրանիկ բուհը հիմնադրման տարում կոչվում էր Հայաստանի համալսարան: Այնուհետև՝ խորհրդային կարգերի հաստատումից հետո, այն անվանափոխվում և կոչվում է Երևանի ժողովրդական համալսարան, 1923 թ. հոկտեմբերի 20-ից ժողկոմխորհի որոշմամբ վերանվանվում է ՀՍԽՀ պետական համալսարան, իսկ 1933 թվականից կրում է Երևանի պետական համալսարան անունը: Այսպիսի բազմաթիվ անհրաժեշտ տեղեկություններ ենք քաղում Պ. Ղարիբջանյանի գրքից, իմանում, որ իր գոյության առաջին տասնամյակի վերջում համալսարանում արդեն ձևավորվել էին հետևյալ ֆակուլտետները՝ Մանկավարժական (երեք բաժիններով՝ ֆիզիկամաթեմատիկական, կենսաբանական և պատմագրական), Իրավատնտեսագիտական, Գյուղատնտեսական, Տեխնիկական և Բժշկական: ԽՍՀՄ բուհերի վերակառուցման հետ 1930 թ. վերակառուցվում է նաև Երևանի համալսարանը, և նրա վերոհիշյալ ֆակուլտետների հիմքի վրա, ելնելով երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման նոր պահանջներից, ստեղծվում է հինգ բուհ: Դրանք են Պոլիտեխնիկական, Գյուղատնտեսական, Բժշկական, Կոոպերատիվ-տնտեսագիտական և Մանկավարժական ինստիտուտները: Այդ վերակառուցումից երեք տարի անց՝ 1933 թ. սեպտեմբերին, հարկ եղավ վերաբացել Երևանի համալսարանը՝ մանկավարժական և կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտների հիման վրա:

Լ. Պ. Ղարիբջանյանի մենագրության մեջ քննարկված հարցերը վերաբերում են այս վերակառուցմանը նախորդած տասնամյակին: Ներկա հրատարակությունը, նախորդի հետ համեմատած, վերամշակվել ու համալրվել է նոր փաստերով, արխիվային նորահայտ վավերագրերով հարստացվել է գրքի «Հավելվածը», նորովի են ներկայացվել 1930-ական թվականների բռնություններին ու հալածանքներին զոհ դարձած մի շարք դասախոսների համառոտ կենսագրությունները,

դրանց ավելացվել են նոր անուններ, որոնք բացակայում են մախորդ հրատարակության մեջ: Այստեղ մախկինում ներկայացված 64-ի փոխարեն տպագրվել են 73 դասախոսների կենսագրություններ, որոնք համալսարանում գիտամանկավարժական, հասարակական-քաղաքական ու վարչական գործունեություն են ծավալել 1919-1930 թվականներին: Միայն պետք է ասիտանքով նշել, որ այդ կենսագրականները, ինչպես մախորդ հրատարակության մեջ է, չեն ուղեկցվում դիմանկարներով: Մի բան, որը մեկ անգամ ևս վկայում է մեր ներկա նյութական սուղ պայմանների, տպագրական դժվարությունների ու մեծ ծախսերի մասին: Սակայն, այդուհանդերձ, այս նոր հրատարակությունը ևս նկարագարող է, հարուստ է սև ու սպիտակ և գունավոր ներդիրներով, խմբակային և անհատական լուսանկարներով: Նախկին գրքում տպագրված շատ լուսանկարներ փոխարինվել են նորերով, որոնք ավելի հարուստ ու համապարփակ են դարձնում աշխատության բովանդակությունը:

Լ. Պ. Ղարիբջանյանի գիրքը գրված է բարեխղճությամբ ու գիտական պատշաճ մակարդակով, Երևանի համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ողջ կոլեկտիվի նկատմամբ ունեցած ջերմ սիրո ու հարգանքի անթաքույց արտահայտությամբ: Խորհրդանշական է նաև այն, որ հեղինակն իր գիրքը նվիրել է բռնություններին զոհ դարձած մտավորականների անմոռաց հիշատակին:

Մնում է հուսալ, որ հեղինակը կշարունակի իր այդ հայրենանվեր գործը և կստեղծի Երևանի պետական համալսարանի հետագա տասնամյակների ամբողջական պատմությունը ևս: Առիթից օգտվելով՝ ուզում ենք նշել նաև, որ պետք է անպայման ստեղծվի «Մեր անվանի դասախոսները» գրքի երկրորդ հատորը: Առաջին հատորի տպագրությունից հետո անցել է քառորդ դար, կյանքից հեռացել են շատ անվանի դասախոսներ, որոնց վարքի ու գործունեության թելուզ և հակիրճ պատմությունը հայրենասիրական ու դաստիարակչական մեծ նշանակություն կունենա գալիք սերունդների համար:

Երևանի պետական համալսարանը մեր ամենամեծ կրթօջախն է, մեր սրբություն սրբոցը, և նրա մասին գրված ամեն մի գիրք սիրով է ընդունվում մեր մտավորականության ու ընթերցող լայն հասարակայնության կողմից: Մեզ թվում է՝ այդպիսի սիրով էլ կընդունվի պրոֆ. Լ. Պ. Ղարիբջանյանի ներկա մենագրությունը:

## **«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐՆԵՐԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ**

Երևանի պետական համալսարանը, որի 80-ամյակը մեծ շուքով նշվեց ընթացիկ տարվա հոկտեմբերին, հիմնադրվել է Երևանում 1919 թ. մայիսի 16-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության օրոք: Սակայն մայրաքաղաքում համապատասխան շենք չլինելու պատճառով նրա պաշտոնական բացումը տեղի է ունեցել Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) 1920 թ. հունվարի 31-ին և մեկ կիսամյակ՝ մինչև նույն տարվա հունիսը, այնտեղ գործելուց հետո կրկին տեղափոխվել է Երևան, բայց երկրում ստեղծված քաղաքական ծանր կացության հետևանքով մի կարճ ժամանակ չի գործել և վերաբացվել է խորհրդային կարգերի հաստատվելուց հետո միայն՝ 1920 թ. դեկտեմբերի 17-ին:

Այգրնական շրջանում մայր կրթօջախը կոչվել է Հայաստանի համալսարան, իսկ 1920 թ. դեկտեմբերից՝ Երևանի ժողովրդական համալսարան: 1923 թ. հոկտեմբերի 20-ից ՀՍԽՀ ժողովմիտրիի որոշմամբ ժողովրդական համալսարանը վերանվանվել է ՀՍԽՀ պետական համալսարան, իսկ 1933 թ. սեպտեմբերից առ այսօր կոչվում է Երևանի պետական համալսարան:

Այս հոբելյանական տարում համալսարանի 80-ամյակի առթիվ լույս են տեսել մի շարք գրքեր, որոնք հիմնականում նվիրված են մեր մայր կրթօջախի պատմությանը, վեր են հանում նրա անցած ուղու հանգուցային փուլերը և ուրվագծում Հայաստանում համալսարանական կրթության ընդհանուր պատկերը:

Այդ գրքերի մեջ առանձնապես աչքի է ընկնում «Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919-1999)» ժողովածուն, որի մեջ ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացված են նրա՝ մինչև այսօր ունեցած 21 ռեկտորների կյանքն ու գործունեությունը՝ իրենց դիմանկարներով: Այն կազմել և առաջաբանը գրել է ԵՊՀ պատմության քանգարանի տնօրեն, պրոֆ. Լ. Ղարիբջանյանը:

«Անցած ութսուն տարիների ընթացքում,- նշում է նա,- համալսարանի ռեկտորները, ըստ կարելվույն, նպաստել են ոչ միայն մայր կրթօջախի բարգավաճմանն ու համընդհանուր ճանաչմանը, այլև գիտական նե-

րուժի հզորացմանն ու հայրենի գիտության նվաճումները միջազգային ասպարեզ դուրս բերելուն: ԵՊՀ ռեկտորներից շատերը եղել են անվանի գիտնականներ, հմուտ մանկավարժներ: Նրանք, իրենց պաշտոնավարության ժամկետից անկախ, յուրովի կազմակերպելով կոլեկտիվի աշխատանքները, ներազդել են համալսարանի գործունեության վրա, նպաստել նրա հեղինակության բարձրացմանը:

Այս առումով արժե հիշատակել նրա կազմակերպիչ և առաջին ռեկտոր (տեսուչ), գիտության մեծ երախտավոր, անվանի իրավագետ, Մոսկվայի, Պետերբուրգի և Բրյուսելի համալսարանների պրոֆեսոր, Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի երբեմնի ռեկտոր և քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ Յուրի Ստեփանի Ղամբարյանի (1850-1926) անունը: Ծնվել և միջնակարգ կրթությունն ստացել է Թիֆլիսում, այնուհետև ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի Իրավաբանական ֆակուլտետը. մինչև 1899 թ. աշխատել է նույն համալսարանում՝ 1884 թվականից ստանձնելով պրոֆեսորի պաշտոն: 1900 թ. նա իր մասնակցությունն է բերել Փարիզում հումանիտար գիտությունների գծով Ռուսաց բարձրագույն դպրոցի հիմնադրմանը, դասախոսել է նաև Բրյուսելի համալսարանում, իսկ 1906-11 թթ. վարել է Պետերբուրգի համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնը: Մի շարք արժեքավոր աշխատությունների հետ մեկտեղ պատրաստել ու հրատարակել է քաղաքացիական իրավունքի դասընթացը:

Ռուսաստանում ու Եվրոպայում ծավալած բեղմնավոր գիտամանկավարժական աշխատանքից հետո Յու. Ղամբարյանը վերադարձել է իր ծննդավայրը՝ Թիֆլիս՝ ստանձնելով Վրաստանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտորի, նաև քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչի պարտականությունները: 1919 թ., երբ հիմնադրվում է Հայաստանի համալսարանը, պրոֆ. Յու. Ղամբարյանը հրավիրվում է որպես ռեկտոր՝ իր գործունեությունը սկսելով նույն թվականի հուլիսից: Առաջինը նա է բանակցություններ վարել Եվրոպայի, Ռուսաստանի և Կովկասի նշանավոր գիտնականների հետ և նրանց հրավիրել Հայաստանի համալսարանում աշխատելու, որտեղ էլ նա պաշտոնավարել է մինչև 1920 թ. վերջը: Հետագայում պրոֆ. Յու. Ղամբարյանը տեղափոխվել է Փարիզ, որտեղ և վախճանվել է 1926 թվականին: Առաջմ անհայտ է նույնիսկ նրա շիրիմի տեղը:

Պրոֆ. Յու Ղամբարյանից հետո Երևանի համալսարանի ռեկտոր է ընտրվել մեծանուն պատմաբան Հակոբ Համազասպի Մանանդյանը (1873-1952). նա 1939 թ. արժանացել է ԽՍՀՄ ԳԱ իսկական անդամ ընտրվելու բարձր պատվին, իսկ 1943-ին դարձել ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամ: Պատմագիտական վիթխարի ժառանգություն է թողել Հ. Մանանդյանը, որի մեջ հայ ժողովրդի պատմության բազմաթիվ խնդիրներ հնագույն դարերից սկսած մինչև նոր ժամանակները քննական վերլուծության են ենթարկվել՝ ստանալով իրենց պատասխանները:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը վախճանվել է 1952 թ. փետրվարի 4-ին. հիշատակը հավերժացնելու նպատակով նրա աճյունն ամփոփվել է համալսարանի հին պատմական շենքի բակում, և շիրմին կանգնեցվել է կիսանդրի:

Հետագայում՝ տարբեր տարիների, ռեկտորներ են եղել անվանի գիտնականներ Հակոբ Հովհաննիսյանը (1875-1941), Անուշավան Արզումանյանը (1904-1965), Գարեգին Պետրոսյանը (1902-1997), Հրաչյա Բունիաթյանը (1907-1981), Գագիկ Դավթյանը (1909-1980), Նագուշ Հարությունյանը (1912-1993), Սկրտիչ Ներսիսյանը (1909-1999), Սերգեյ Համբարձումյանը, Նորայր Առաքելյանը և ուրիշներ: 1993-ի հոկտեմբերից համալսարանի ռեկտորն է ականավոր ֆիզիկոս, ՀԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը»:

Գրքում այսպես՝ ժամանակագրական կարգով, սեղմ ձևով ներկայացված են Երևանի պետական համալսարանի բոլոր ռեկտորների կյանքն ու գործունեությունը, վերհանված նրանց գիտական վաստակը: Իհարկե, մի բան պարզ է, որ նրանցից շատերի կենսագրությունների ուսումնասիրությունն ու շարադրումը կապված են եղել որոշակի դժվարությունների հետ ոչ միայն այն պատճառով, որ ռեկտորների մեծ մասը վաղուց հեռացել է կյանքից, արդեն չկան նաև նրանց մերձավորներն ու ժամանակակիցները, այլև նրա համար, որ հանգամանքների բերումով վաղուց ոչնչացվել կամ կորել են նրանցից շատերի անձնական գործերն ու արխիվները: Շատ կենսագրություններ գրքում հյուսվել են սակավաթիվ ու ժլատ տեղեկությունների ու փաստերի հիման վրա՝ քաղված մասնույից, առանձին հրատարակություններից, նրանց սերնդակիցների ու գործընկերների հատուկեմտ հուշերից և այլն: Դրա համար էլ գրքում խախտված է ռեկտորների կենսագրությունների համամասնությունը,

իսկ առանձին դեպքերում դրանք նույնիսկ հեռու են սպառնիչ լինելուց: Ուստիս որոնումները պետք է անպայման շարունակել, պրպտել և վերականգնել Երևանի պետական համալսարանի ոչ միայն ռեկտորների, այլև բոլոր երախտավորների և անվանի դասախոսների կյանքի ու գործունեության մանրամասները և դրանք հրատարակել «Մեր անվանի դասախոսները» մատենաշարով, որի անդրանիկ հատորը լույս է տեսել 1970 թ. ու այլևս չի շարունակվել:

Ներկա գիրքը փաստորեն կարելի է այդ մատենաշարի հավելումը համարել, որը մոռացությունից փրկում և սերունդներին է փոխանցում մեր «Ալմա մատերին» վերաբերող շատ մանրամասներ: Գրքում ռեկտորների կենսագրություններին զուգահեռ ներկայացված են նաև բազմաթիվ լուսանկարներ, որոնք ոչ միայն հարստացնում են նրա բովանդակությունը, այլև վավերագրական հետաքրքիր փաստաթղթեր են անցած ժամանակների մասին:

Ավելացնենք միայն, որ ռեկտորների կենսագրությունները, պրոֆ. Լ. Ղարիբջանյանից բացի, գրել են տարբեր հեղինակներ, ովքեր ներկայումս անվանի գիտնականներ են և մոտիկից ճանաչել են նրանցից շատերին, ժամանակին եղել են ուսանողներ կամ էլ աշխատել են համալսարանում՝ նրանց կողքին:

Գիրքը լույս է ընծայել Երևանի համալսարանի հրատարակչությունը: Այն մի գեղեցիկ նվեր է Մայր համալսարանի հոբելյանին և հարստացնում է հայրենի գիտության պատմությունը:

## **ԱԿԱՆԱՎՈՐ ՊԱՏՄԱԲԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ**

Հուշեր սովորաբար գրվում են գրականության և արվեստի նշանավոր գործիչների մասին: Իսկ ինչ վերաբերում է գիտնականներին, ապա նրանք հազվադեպ են դառնում հուշագրության «հերոսներ»: Դրա համար էլ մենք այսօր մեր հռչակավոր գիտնականների մասին քիչ հուշագրություններ ունենք, ու եղածներն էլ հիմնականում ցրված են ժամանակի պարբերական մամուլի էջերում, տարբեր հեղինակների երկերում և այլուր: Դրանք ժողովելը և առանձին հատորներով հրատարակելը

դժվարին աշխատանք են: Այդ իսկ պատճառով նման ժողովածուներ մեզանում գրեթե չեն ստեղծվել, որոնք նվիրված կլինեին գիտության այս կամ այն երախտավորի կյանքին ու գործունեությանը:

Հայ իրականության մեջ նման վերաբերմունքի թերևս առաջինն արժանանում է ականավոր պատմաբան, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Համազասպի Մանանդյանը, որին նվիրված հուշերի արժեքավոր ժողովածուն<sup>75</sup> լույս է ընծայվել վերջերս: Այն կազմել ու տպագրության է պատրաստել ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների թեկնածու Պետրոս Հովհաննիսյանը:

Հ. Մանանդյանը մեր նորագույն շրջանի պատմագրության ու բանասիրության երախտավորներից մեկն է: Նա, գիտական ասպարեզ իջնելով անցյալ դարի սկզբներին, խոշորագույն հայագետներ Գալուստ Տեր-Սկրտչյանի (Միաբան), Մանուկ Աբեղյանի, Գարեգին Հովսեփյանի, Նիկողայոս Ադոնցի, Հրաչյա Աճառյանի և այլ կարկառուն դեմքերի հետ կարողացել է հայագիտությունը բարձրացնել մի նոր մակարդակի և դրանով իսկ իր մնայուն ու պատվավոր տեղն զբաղեցնել նրանց շարքում: Նրա թողած գիտական հարուստ ժառանգությամբ կրթվել ու դաստիարակվել են հազարավոր երիտասարդ պատմաբաններ ու բանասերներ ոչ միայն մայր հայրենիքում, այլև արտերկրում: Նրա փաստալից դասախոսությունները համակ ուշադրությամբ են լսել Երևանի պետական համալսարանի ուսանողության առաջին սերունդները, որոնցից շատերը հետագայում դարձել են մեծանուն գիտնականներ, պետական ու մշակութային նշանավոր գործիչներ:

Հ. Մանանդյանը ծնվել է 1873 թ. նոյեմբերի 22-ին Ախալցխայում, որի Կարապետյան վարժարանում ստացել է նախնական կրթություն, ապա 1883-1893 թթ. ուսումնառությունը շարունակել է Թիֆլիսի առաջին գիմնազիայում, այնուհետև բարձրագույն կրթություն է ստացել Գերմանիայում՝ ուսանելով Ենայի, Լայպցիգի և Ստրասբուրգի համալսարաններում, իսկ 1898 թ. էքստեռն կարգով ավարտել է նաև Սանկտ Պետեր-

---

<sup>75</sup> Ժամանակակիցները Հակոբ Մանանդյանի մասին, հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 254:

բուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը: Հարուստ գիտելիքներով վերադառնալով հայրենիք՝ շուրջ հինգ տարի (1900-1905 թթ.) աշխատել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում՝ ծավալելով գիտամանկավարժական բեղուն գործունեություն, ապա 1906-1907 թթ. պաշտոնավարել է Թիֆլիսի առաջին և երկրորդ գիմնազիաներում ու Ներսիսյան դպրոցում, որից հետո կրկին էքստեռն կարգով հանձնելով քննություններ՝ 1909 թ. ավարտել է Դորպատի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և աշխատանքի մեկնել Բաքու, որտեղ շուրջ մեկ տասնամյակ զբաղվել է փաստաբանությամբ և եղել երդվյալ հավատարմատար: Այդ ընթացքում նա դասախոսել է նաև Ժողովրդական համալսարանում (1911-1913 թթ.), այնուհետև՝ 1915-1919 թթ.՝ առևտրական դպրոցում:

Հայաստանի առաջին հանրապետության կառավարության կողմից 1919 թ. դեկտեմբերին Հ. Մանանդյանը հրավիրվել է Երևանի նորաստեղծ համալսարան և նշանակվել դասախոս, ապա՝ Պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, իսկ խորհրդային կարգերի հաստատումից հետո ընտրվել է ռեկտոր<sup>76</sup>: Նա իր ռեկտորության կարճատև շրջանում ամեն ինչ արել է համալսարանում նոր ֆակուլտետներ բացելու և բարձրագույն կրթության հիմքերն ամրապնդելու ուղղությամբ: Այդ օրերին գրած իր մամակներից մեկում նա հետևյալն է ասում. «...Ես ապրում եմ միայն համալսարանի ստեղծագործական գաղափարով, որ համարում եմ այս երկրի համար ամենակարևոր գործը և՛ վերա-

---

<sup>76</sup> Մինչև 1989 թ. մայիսի 15-ը խորհրդային իրականության մեջ այն տեսակետն էր արմատավորված, որ ԵՊՀ առաջին ռեկտորը եղել է Հ. Մանանդյանը: Սակայն նշված օրը տեղի ունեցած գիտաժողովում, որը մվիրված էր մայր կրթօջախի հիմնադրման տարեթվի ճշգրտմանը, վերջնականապես վերականգնվել է այն իրողությունը, որ Երևանի համալսարանը ստեղծվել է 1919 թ. մայիսի 16-ին, և նրա առաջին ռեկտորը եղել է նշանավոր իրավաբան, պրոֆեսոր Յուրի Գամբարյանը (1850-1926): Իսկ Հ. Մանանդյանը եղել է Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այդ համալսարանի հիմքի վրա 1920 թ. դեկտեմբերի 17-ին վերակառուցված Երևանի ժողովրդական համալսարանի առաջին ռեկտորը, որն ընտրվել է 1921 թ. հունվարի 2-ին նորակազմ խորհրդի անդամիկ նիստում կայացած փակ (զադտնի) քվեարկությամբ և այդ պաշտոնը վարել է մինչև նույն տարվա հոկտեմբեր ամիսը: Ի դեպ, ԵՊՀ ռեկտորներից միայն Հ. Մանանդյանն է, որ, ըստ կանոնադրության, այդ պաշտոնն զբաղեցրել է ընտրությամբ: Հետագայում՝ մինչև այժմ դարի վերջերը, ռեկտորները նշանակվել են ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության պետական կոմիտեի, ապա այդ կոմիտեի՝ նախարարությամբ փոխանվելուց հետո՝ վերջինիս կողմից:



շինության, և՛ վերածնության միակ ուղիղ ճանապարհը: Իմ ամբողջ կյանքը միմիայն կապված է համալսարանի հետ, որիչ այլ բովանդակություն ու ընթացք մեր կյանքը չէ ունեցել»<sup>77</sup>:

Ռեկտորությունից հետո ևս Հ. Մանանդյանն աշխատել է համալսարանում, եղել Արևելագիտության և Պատմագրական ֆակուլտետների ղեկան՝ միաժամանակ հիմնադրելով ու վարելով հայ ժողովրդի պատմության ամբիոնը: Նա համալսարանում վարչական ու գիտամանկավարժական աշխատանք է կատարել մինչև 1931 թ., որից հետո անցել է գուտ գիտական գործունեության:

Հ. Մանանդյանի կենսագրական այս տեղեկությունները մենք քաղում ենք նրա հուշերի ներկա ժողովածուն բացող «Հայագիտության երախտավորը» վերտառության առաջաբանից, որի հեղինակն է գիրքը կազմող և հրատարակությամբ պատրաստող Պ. Հովհաննիսյանը: Դասնաչված պատմաբանն իր այդ ներածականում հակիրճ ներկայացնում է նաև Հ. Մանանդյանի հետագա գործունեությունը ՀԽՍՀ ԳԱ համակարգում, անդրադառնում է նրա թողած գիտական հարուստ ժառանգության կարևորությանը հին և միջնադարյան Հայաստանի պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար, փորձում վերհանել նրա ավանդը հայ պատմագրության զարգացման գործում:

Հ. Մանանդյանն ապրել ու ստեղծագործել է հասարակական-քաղաքական կյանքի չափազանց բարդ ու պեղծություններով լի մի ժամանակաշրջանում, երբ տեղի են ունեցել Առաջին աշխարհամարտն ու Հայոց մեծ եղեռնը, ապա դրանց հաջորդել են մի շարք խոշոր հեղափոխումներ, որոնց ականատեսն ու վկան է եղել նա, հետագայում՝ նաև մասնակիցն իր ժողովրդի կյանքում տեղի ունեցած բոլոր իրադարձությունների, որոնցից մեկն էլ Երևանի պետական համալսարանի հիմնադրումն էր, որի մեջ անուրանալի է նրա ավանդը: Թե՛ համալսարանում աշխատելու տարիներին և թե՛ դրանից հետո՝ ընդհուպ մինչև իր մահը (1952 թ. փետրվարի 4), Հ. Մանանդյանը ծավալել է գիտահետազոտական բեղուն գործունեություն և ունեցել է լայն շրջապատ, նաև անվանի գործընկերներ, հանդիպել է երևելի գիտնականների ու արվեստագետներ-

---

<sup>77</sup> Տե՛ս Ժամանակակիցները Հակոբ Մանանդյանի մասին, էջ 3 (այսուհետև սույն գրքի էջերը կնշվեն շարադրանքի մեջ՝ փակագծերում)»

րի հետ, շրջապատված է եղել ուսանողներով ու երիտասարդ հետազոտողներով, որոնցից ոմանք հետազայում գրել են իրենց հուշերն ու տպավորությունները այդ ժրաջան գիտնականի ու անգուգական ուսուցչի, առաքինի մարդու, մեծ անհատականության մասին: Դրանց մի զգալի մասը ժամանակին տպագրվել է մամուլում՝ թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում, իսկ մի քանիսն էլ մնացել են անտիպ:

Ներկայացվող ժողովածուում ամփոփված են հրապարակի վրա եղած ու արխիվներում պահպանվող այդ հուշագրությունները, որոնք թվով 18-ն են, իսկ հեղինակները՝ 16-ը: Նրանցից մեկը՝ տեխնիկական գիտությունների թեկնածու Արսեն Մանանդյանը, ով պատմաբանի կրտսեր եղբայրն էր, գրքում ունի երեք նյութ, որոնցից միայն մեկը կարելի է հուշ համարել, որը նա գրել է եղբոր մահվան հիմնգերբորդ տարելիցի կապակցությամբ, իսկ մյուս երկուսը վերաբերում են գիտնականի բնավորության բնորոշ գծերի վերհանմանն ու աշխատությունների բնութագրմանը:

Մյուս հուշագիրները տարբեր մասնագիտությունների տեր, հասարակական-քաղաքական ու կուսակցական տարբեր հայացքներ ունեցող անձինք են, որոնցից են, օրինակ, հռչակավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը, խոշոր պատմաբաններ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Բորիս Գրեկովը, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյանը, ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, պատմաբան ու հնագետ Մորուս Հասրաթյանը, գիտությունների թեկնածու Վազգեն Ոսկանյանը, ՀՅԴ կուսակցության երևելի գործիչներ Սիմոն Վրացյանն ու Ռուբեն Դարբինյանը, եկեղեցական-հասարակական գործիչ Արսեն ավագ քահանա Սիմոնյանը, պրոֆեսորներ, լեզվաբան Հովսեփ Կուսիկյանը, թատերագետ-արվեստաբան Գառնիկ Ստեփանյանը և գրականագետ Հովհաննես Ղանալանյանը, սփյուռքահայ ճանաչված մտավորականներ Գառնիկ Գյուգալյանն ու Աշոտ Արծրունին, մանկավարժ Հակոբ Մխիթարյանը: Նշված հեղինակներից շատերը Հ. Մանանդյանին ճանաչել են մոտիկից, ոմանք եղել են նրա հայրենակիցները, աշխատել են նրա հետ, ունեցել են սերտ հարաբերություններ և կամ եղել են նրա սաները Երևանի համալսարանում ու այլ կրթօջախներում, լսել են նրա դասախոսությունները և դրանց տպավորությունների տակ գրել են իրենց սրտառուչ հուշերը:

Հատկապես ջերմ ու անմիջական են Հր. Աճառյանի հուշերը, որոնք վերաբերում են Հ. Մանանդյանի հետ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում աշխատելու տարիներին, երբ նրանք համատեղ ուժերով հրատարակության են պատրաստել «Հայոց նոր վկաները» արժեքավոր ժողովածուն, որն ընդգրկում է Էջմիածնի մատենադարանում պահվող 1155-1843 թթ. ձեռագրերի հայկական վկայաբանական գրականության քննահամեմատական բնագրերը՝ ընդարձակ տեղեկություններով ու անհրաժեշտ ծանոթագրություններով, ինչպես նաև հատուկ ամունների և օտար բառերի բացատրական ցուցակներ ու ցանկեր: Հ. Աճառյանի վկայությամբ Մանանդյանն Էջմիածնում մանկավարժական գործունեությանը զուգընթաց ժրջանորեն զբաղվել է ձեռագրերի ուսումնասիրությամբ, ծրագրել է մի մենագրություն գրել հայ մշակույթի մասին: Նա այդ տարիներին եղել է նաև «Արարատ» հանդեսի խմբագրի տեղակալ ու ծավալել է խմբագրական-հրատարակչական լայն գործունեություն, կապեր հաստատել հայագիտական այլ պարբերականների խմբագրությունների հետ, աշխատակցել նրանց:

Ժողովածուում ընդգրկված նյութերի մի զգալի մասը ժանրային առումով հուշեր չեն, այլ գնահատանքի խոսքեր են, ակնանավոր հայագետի գործունեությունն ու գիտական վաստակը վերհանող ու արժևորող հոդվածներ, որոնք գրվել են տարբեր առիթներով, հատկապես՝ գիտնականի ծննդյան ու մահվան տարելիցների և հոբելյանների կապակցությամբ: Իսկ բուն հուշերը մեծ թիվ չեն կազմում և հիմնականում վերաբերում են Հ. Մանանդյանի կյանքի ու գործունեության ուշ շրջանին: Իսկ նրա կյանքի վաղ տարիների մասին հուշեր գրեթե չկան, եղածներն էլ փոքրիկ ծվեցներ են, որոնք տեղ են գտել իր եղբոր գրած նյութերում:

Ինչևէ, ներկա ժողովածուն բավական լայն պատկերացում է տալիս Հ. Մանանդյանի մասին: Բոլոր հուշագիրները նրան բնութագրում են որպես պարթևահասակ ու վայելուչ արտաքինով և վերին աստիճանի կիրք ու լայն մտահորիզոն ունեցող, հարուստ գիտելիքներով օժտված անհատականություն, որը կյանքում ու կենցաղում եղել է չափազանց պարզ ու հասարակ, ազնիվ ու շիտակ, միշտ գուսպ ու լուրջ, իր էությանը բարի ու համեստ, սակայն նաև խստաբարո ու պահանջկոտ: Նա եղել է վերին աստիճանի ճշտապահ ու պարտաճանաչ, աշխատասեր ու բարեխիղճ, արդարամիտ ու արդարադատ: Նրա շարժումնի ու գործելակերպի մեջ

երբեք ցուցամոլություն չի նկատվել: Նա եղել է նաև քաղաքավարության բարձր մակարդակ ունեցող անգուգական դասախոս, ով, իր սաներին հարուստ գիտելիքներ տալուց գատ, նրանց հոգիներում սերմանել է խոր հայրենասիրություն: Այդ է վկայում նրա համալսարանական սաներից մեկը՝ Ա. Արծրունին, ով գրում է. «Իր ուսանողներուն համար Մանանդյանը պատմաբանն ու դասախոսն ավելի, կներկայանար որպես գաղափարի առաքյալ մը: Ան գաղափարախոսն էր ջերմ հայրենասիրության և Հայաստանի անկախության: Այդ գաղափարները վրանբաց չէր քարոզեր, սակայն կհասկցներ ու զգալ կուտար ամեն անգամ, երբ իր դասախոսած նյութը կհարկադրեր զինքը «փոքրիկ շեղում մը կատարելու»... Բայց օր մըն ալ Հ. Մանանդյան ներկայացավ ուսանողներուն իր քարոջական ողջ բարձրությամբ և գաղափարական վսեմ խոյանքով» (էջ 59): Հեղինակն այնուհետև վերհիշում է Հ. Մանանդյանի՝ իրենց կուրսում դրանից երեսուն տարի առաջ՝ 1922 թ. մայիսի վերջերին կարդացած դասախոսությունը, որն ականավոր գիտնականն ավարտել է հետևյալ խոսքերով. «Դուք տեսաք,- ըսավ ան, այս անգամ շեշտակի նայելով մեր ուսանողներուն,- որ հայ ժողովուրդն իր պատմության ամբողջ ընթացքին միշտ էլ պայքարել ու վերականգնել է իր երկրի անկախությունը: Եւ ես համոզված եմ, որ այս անգամ էլ նա կթոթափի օտար լուծը ու կվերստանա մեր հայրենիքի անկախությունը... Մագնիսացած ուսանողությունը պահ մը քար լռություն պահեց ու ապա որոտընդոտ ծափահարությամբ ողջունեց իր սիրած պրոֆեսորի վերջին խոսքերը» (էջ 32):

Հ. Մանանդյանի կյանքից առնված մման բնութագրական և ուսանելի դրվագներ շատ կան սույն գրքում, որոնց կարելի է ծանոթանալ հուշերն ընթերցելով: Ի դեպ, հուշերում հիշատակվում են նաև այլ երևելի դեմքեր ու նրանց առնչվող դեպքեր, որոնք կարող են պիտանի լինել նրանց կենսագրություններն ամբողջացնելու համար: Անհրաժեշտ է նշել նաև, որ ժողովածուում զգալի թիվ են կազմում պատմաբանի գիտական ժառանգությանը մվիրված նյութերը, որոնք գրքում ներկայացված են ժամանակագրական կարգով: Դրանցից հատկապես աչքի են ընկնում Աշ. Հովհաննիսյանի, Բ. Գրեկովի, Մ. Հասրաթյանի, Գ. Գյուլալյանի և այլոց գրչին պատկանող ակնարկները, որոնցում նրանք մեկ անգամ ևս փորձ են անում վերլուծելու և գնահատելու Հ. Մանանդյանի մի շարք հիմնարար աշխատություններ, որոնք հայագիտության մնայուն արժեք-

ներից են: Հուշագիրները հատկապես բարձր են գնահատում հայ պատմագրության երախտավորի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» բազմահատոր աշխատությունը, որն ընդգրկում է Հայաստանի՝ Ք.ա. Չ - Ք. հ. ԺԵ դարերի ամբողջական պատմությունը և ցավոք մնացել է անավարտ: Նրանք միաժամանակ անդրադառնում են Հ. Մանանդյանի «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական պատերազմների շրջանում» (1922 թ.), «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական պատմության» (երկու մասով, 1927-1928 թթ.), «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» (1928 թ.), «Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» (1930 թ.), «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում» (1930 թ.), «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» (1934 թ.), «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները՝ ըստ Պևտինգերյան քարտեզի» (1936 թ.), «Տիգրան Բ-ն և Հռոմը» (1940 թ.), «Հայաստանի քաղաքները X-XI դարերում» (1940 թ.), «Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար» (1941 թ.), «Համառոտ տեսություն Հին Հայաստանի պատմության» (1943թ.), «Գառնիի հունարեն արձանագրությունները և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը» (1946 թ.), «Հայ գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջը» (1952 թ.) մենագրություններին և այլ մանր ու խոշոր աշխատությունների, որոնց ընդհանուր թիվն անցնում է 150-ից: Դրանց մի զգալի մասը ժամանակին տպագրվել է նաև ռուսերեն ու եվրոպական մի քանի լեզուներով: Հեղինակները, անդրադառնալով այդ բոլորին, ցույց են տալիս նաև հայ պատմագիտության զարգացման գործում դրանց խաղաղացած հսկայական դերը:

Գիրքն ունի նաև «Հավելվածներ» բաժին, որտեղ առաջինը գետեղված է «Հակոբ Մանանդյանն ինքն իր մասին» վերտառությամբ ելույթը, որը մեծանուն գիտնականի պատասխան խոսքն է՝ ասված իր ծննդյան 75 և գիտական գործունեության 50-ամյակներին նվիրված հանդիսավոր նիստի ժամանակ՝ 1948 թ. դեկտեմբերի 2-ին:

Հոբելյարը, շնորհակալություն հայտնելով իրեն նվիրված հոբելյանական նիստ գումարելու և մեծարելու համար, միաժամանակ համառոտ ներկայացնում է իր գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր պատկերը: Այդ պատասխան խոսքում նա անում է նաև մի շարք դիտողություններ ու առաջարկություններ՝ ուղղված երիտասարդ պատմա-

բաններին, Հայաստանի և հայ ժողովրդի պատմության չուսումնասիրված հիմնահարցերը վերհանելու և դրանք մեկնաբանելու համար: Ակադեմիկոս Հ. Մանանդյանի այդ դիտողություններն ուսանելի դասեր են և այսօր՝ ավելի քան վեց տասնամյակ անց, չեն կորցրել իրենց գիտական արժեքն ու կարևորությունը: Որպես ասվածի վկայություն՝ այդ խոսքից բերենք մի փոքրիկ հատված. «Մեր երիտասարդ գիտնականները պետք է նկատի ունենան,- ասում է նա,- որ հայ ժողովրդի պատմությունն անհրաժեշտ է ուսումնասիրել և շարադրել ոչ թե նախկինում եղած կարծիքները կուրորեն ներմուծելով և կուտակելով, այլ բուն սկզբնաղբյուրների հաղորդած նյութերի նորովի վերլուծությունների հիման վրա, որ հնարավորություն կտա նորապես լուծել հին խնդիրները և անաչառորեն լուսաբանել հայ ժողովրդի պատմության բազում դրվագներ» (էջ 170): Թվում է՝ ծերունագարդ պատմաբանի այս հորդորը վերաբերում է ոչ միայն իր ժամանակի ու այսօրվա, այլև գալիք հետագոտողներին:

Հիշյալ բաժնի մյուս հրապարակումը ճանաչված պատմաբան Պետրոս Հովհաննիսյանի կազմած՝ Հ. Հ. Մանանդյանի կյանքի ու գործունեության և նրա հեղինակած աշխատությունների մասին մամուլում և այլուր տպագրված հոդվածների ու գրախոսությունների նոր՝ համալրված մատենագիտական ցանկն է: Չնայած Հ. Մանանդյանի և նրա երկասիրությունների ու սրանց արձագանքների մասին տպագրվել են մի շարք ցանկեր, ինչպիսիք են, օրինակ, Լ. Մելիքսեթ-Բեկի, Ե. Վլասյանի ու Ռ. Բարաչանյանի, Լ. Բարայանի և Վ. Հակոբյանի կազմածները, սակայն դրանց մեջ սույն ցանկը, որն այստեղ լույս է տեսնում երկրորդ անգամ<sup>78</sup>, առավել ամբողջական և կարևոր աղբյուր կարող է հանդիսանալ ականավոր պատմաբանի կյանքն ու գործը համակողմանիորեն ուսումնասիրելու համար:

Ժողովածուն եզրափակվում է «Հուշագրողների բառարան»-ով, որտեղ կենսագրական հակիրճ, բայց և անհրաժեշտ ու կարևոր տեղեկություններ են բերված հուշերը գրող հեղինակների մասին՝ նշելով նրանց ծննդյան ու մահվան թվականները, ստացած կրթությունը, մասնագիտությունը, հաճախ՝ նաև զբաղեցրած պաշտոնները և այլն, մի

<sup>78</sup> Առաջին անգամ տպագրվել է նույն հեղինակի կազմած «Հակոբ Մանանդյան. Կենսամատենագիտություն» (Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981) գրքում. տե՛ս էջ 56-73:

բան, որն ավելի է բարձրացնում սույն գրքի գիտական արժեքը և հարստացնում է բովանդակությունը: Իսկ ծանոթագրություններում, որ դարձյալ պատկանում են կազմողի գրչին, ցույց են տրված հեղինակների կապն ու առնչությունները Հ. Մանանդյանի հետ, հուշերի գրության ժամանակն ու առաջին անգամ դրանց տպագրվելու տեղը և այլն: Ծանոթագրություններում հաճախ ուղղված են հուշերում սպրդած սխալներն ու անճշտությունները: Կարևոր են նաև հուշերում հիշատակված անձանց, դեպքերի ու իրադարձությունների, թվական տվյալների մասին տրված տեղեկություններն ու բացատրությունները, որոնք, կարծում ենք, մերօրյա ընթերցողների համար կարևոր ուղեցույց կարող են լինել շուրջ մեկ դար առաջ տեղի ունեցած դեպքերի ու գործած դեմքերի մասին: Այս ամենը մենք նշում ենք ցույց տալու համար, թե կազմողն ինչպիսի ջանադիր ու դժվարին աշխատանք է կատարել սույն ժողովածուն գիտական պատշաճ մակարդակով ընթերցողներին ներկայացնելու գործում: Միայն ուզում ենք անել մի յիտողություն, որը վերաբերում է «Ծանոթագրություններ» և «Հուշագրողների բառարան» բաժինների տարանջատվածությանը: Մեզ թվում է՝ կարելի էր այդ երկու բաժինները միավորել և ներկայացնել միասին, մի ընդհանուր վերտառությամբ, որտեղ սկզբից ներկայացվեին հուշագրողների մասին անհրաժեշտ տեղեկությունները, ապա դրանից հետո տրվեին ծանոթագրությունները: Գրքում տեղ են գտել նաև սխալներ ու վրիպումներ, որոնք վերաբերում են Հ. Մանանդյանի աշխատությունների վերնագրերին: Օրինակ՝ միևնույն վերնագիրը տարբեր տեղերում տարբեր ձևերով է ներկայացված, որոնք կարելի էր տողատակերում ուղղել: Կան նաև սրբագրական ակնհայտ վրիպումներ, օրինակ՝ գրքի 8-րդ էջում տպագրված մի վերնագրի մեջ Գառնիի հեթանոսական տաճարը դարձել է «հերոսական տաճար», որը հաճելի չէ:

Ինչևէ, ավարտելով նշենք, որ ընթերցող լայն հասարակության սեղանին է դրվել ականավոր պատմաբանին նվիրված հուշերի մի ժողովածու, որը ոչ միայն ամբողջացնում է մեծ գիտնականի կյանքի ու գործունեության նկարագիրը, այլև հարգանքի տուրք է, երախտիքի անթառամ պսակ նրա հիշատակին:

## ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր՝ անցած երկու տասնամյակներին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը լույս է ընծայել մի շարք արժեքավոր աշխատություններ՝ նվիրված հայ եկեղեցու պատմությանն ու անցյալի մեր նշանավոր հոգևորական գործիչներին: Այդ հրատարակությունների շարքում հատկապես աչքի են ընկնում Գևորգյան ճեմարանին, նրա բազմավաստակ ուսուցիչներին ու երևելի սաներին առնչվող մենագրություններն ու ժողովածուները: Դրանց թվին է պատկանում նաև արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանի հեղինակած և նորերս տպագրված աշխատությունը<sup>79</sup>, որը վեր է հանում մեր հանրահայտ ու հեղինակավոր բազմամյա դպրոցներից մեկի՝ Սուրբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի վերջին վեց տասնամյակների պատմությունը:

Էջմիածնի ճեմարանը, ինչպես հայտնի է, բացվել է 1874 թ. սեպտեմբերի 28-ին Ամենայն հայոց կաթողիկոս երջանկահիշատակ Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու նախաձեռնությամբ ու ջանքերով, որի անունով էլ հետագայում կոչվել է այդ հոգևոր կրթօջախը: Պատմական Հայաստանի հնագույն մայրաքաղաք Վաղարշապատում հիմնադրված սույն դպրոցը նոր ժամանակներում հայրենի հողի վրա խարսխված առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունն էր, որը Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1815-1921 թթ.) և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1824-1924 թթ.) հետ մեկտեղ խոշոր դեր է կատարել Արևելյան Հայաստանում կրթության և գիտության, գրականության ու արվեստի զարգացման և հոգևոր-եկեղեցական կյանքի աշխուժացման ասպարեզներում: Եթե օտար ասիերում ստեղծված վերոհիշյալ երկու նշանավոր դպրոցների փակվելուց հետո այլևս դրանց վերաբացման փորձեր չեն արվել, ապա Գևորգյան հոգևոր ճեմարանը, որը փակվել էր 1917 թ. Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով ստեղծված ռազմական ու քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով, իր երկրորդ կյանքը

<sup>79</sup> Եղիշե ավագ քահանա Սարգսյան, Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանը. Գևորգյան ճեմարան-Աստվածաբանական համալսարան (1945-2006), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009, 408 էջ: Սույն գրքից կատարված մեջբերումների էջերը նշում ենք շարադրանքի հետ, փակագծերի մեջ:



սկսեց Հայրենական մեծ պատերազմից անմիջապես հետո՝ 1945 թ., և անխափան գործում է մինչև այսօր:

Տեր հոր ներկա աշխատության լույսընծայումը զուգադիպել է միջազգային ու համազգային հնչեղություն ունեցող մի քանի հոբելյանների, որոնցից առաջինը քրիստոնեության՝ Հայաստանում պետական կրոն հռչակվելու և Էջմիածնի մայր տաճարի կառուցման 1700-ամյակն է, երկրորդը՝ հայոց գրերի գյուտի և հայագիր դպրոցի հիմնադրման 1600-ամյակը, իսկ մյուսները կապված են հենց իր՝ Գևորգյան ճեմարանի հիմնադրման 130 և վերաբացման 60-ամյակների հետ: Կա նաև մեկ այլ հիշարժան շարժառիթ. դա Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանը աստվածաբանական համալսարանի վերածելն է, որը կյանքի է կոչվել ՀՀ կառավարության 2002 թ. հուլիսի 13-ի հրամանով:

Գիրքը բացվում է Ամենայն հայոց կաթողիկոս և Ծայրագույն պատրիարք Գարեգին Երկրորդի՝ այդ կարևոր իրողությունն արժևորող «Օրինութեան և գնահատանաց» սրբատառ գրով, որում ուրվագծվում է կրթօջախի անցած ուղին, և վեր հանվում նրա մեծ դերը հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքում:

«Գէորգեան հոգեւոր ճեմարանը՝ օրինուած Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի Հայոց Հայրապետի հիմնադիր աջով, գործում է 1874 թվականից,- գրում է Հայոց Հայրապետը:- Հաստատման օրից կրթօջախը՝ շարունակելով Սուրբ Էջմիածնի Մաշտոցեան դպրոցի, հայոց երևելի հայրապետների եւ մեծ ուսուցչապետների դպրոցաշէն աւանդները, մշտապէս հաւատարիմ է եղել բարձրակարգ կրթութիւն մատուցելու իր կոչմանը, հաւատարոք, հայրենամուէր ու եկեղեցաւեր, քաջամիտ ու կորովի հայ հոգեւորականներ կրթելու իր առաքելութեանը: Այս տեսիլքով է հիմնադրուել հաստատութիւնը Գէորգ Դ Հայրապետի կողմից: Նա սկզբում դպրոց էր կառուցում, ապա՝ եկեղեցի, որպէսզի եկեղեցի մտնողը գիտենայ, թէ ու՛ր եւ ինչու՛ է եկել:

Բարձրագոյն կրթական հաստատութեան կարգավիճակով Գէորգեան հոգեւոր ճեմարանը շարունակելու է իր գործը նորոգ քաջալերութեամբ ու նախանձախնդրութեամբ յատկապէս, երբ հաստատութեան շրջանաւարտները հնարատրութիւն ունեն գիտական աստիճաններ հայցելու Հայրենիքում եւ արտերկրում՝ իրենց կարողութիւնները Աստուած-

ճանաչողութեան շինարար դիրքերից ծառայեցնելով հայ գիտութեանն ու բազամադրեան մշակոյթին:

Բարձրագոյն ուսումնական կարգավիճակ ստանալու առիթով ջերմօրէն ողջունում եւ շնորհատրում ենք հոգեւոր կրթօջախի յարգարժան տեսչութեանն ու դասախօսներին, մեծագնի բարերարներին, շրջանաւարտներին եւ ուսանողներին, ի սփիռս աշխարհի Մայր աթոռիս հարագատ բոլոր զաւակներին եւ բերում ենք Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը» (էջ 89):

Չմոռանանք ասել, որ Գևորգյան հոգևոր ճեմարանն է ավարտել մաս սույն սրբատառ կոնդակի հեղինակ, հայոց հայրապետ Գարեգին Երկրորդը, և այդ դպրոցը նրա համար «թանկ ու նուիրական կրթական հաստատութիւն» է:

Նորին սուրբ օծութեան կոնդակին անմիջապէս հաջորդում է «Գիր Օրհնութեանը», որը դարձյալ պատկանում է հայոց հայրապետի գրչին և գնահատանքի բարձր խոսք է՝ ասված գրախոսվող սույն աշխատության առթիվ: Այնտեղ կարդում ենք. «Գիրքը ներկայացնում է մեզ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերջին վեց տասնամյակների պատմությունը՝ անդրադառնալով հատկապէս Գևորգ Զ Հայրապետի ջանքերով 1945 թ. վերաբացված հոգևոր կրթօջախի գործունեությանը: Խաղաղասեր և ուսառատ այդ օրերի սաներից է մաս գրքի հեղինակը՝ արժանապատիվ Տ. Եղիշէ աղագ քահանա Սարգսյանը, որ երկար տարիներ և մինչև այսօր սիրով ու նվիրումով ծառայում է ճեմարանի առաքելությանը: Գրքի էջերում ներկայացված դէպքերն ու հուշերը հարագատ և հուզիչ են ճեմարանում ուսանած և այսօր մեր Եկեղեցու տարբեր թեմերում սպասավորող բազմաթիվ եկեղեցականների, մաս՝ Մեզ համար, որ նույնպէս սան ենք եղել հոգևոր ճեմարանի: Մեր գնահատանքն ենք բերում Տեր Եղիշէ ավագ քահանային իր նախանձախնդրության և կատարած աշխատանքի համար, որի միջոցով մեր ժողովրդի զավակներին և բոլոր ընթերցողներին ավելի ճանաչելի պիտի լինի Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի արդի պատմությունը» (էջ 13-14):

Ամենայան հայոց հայրապետի օրհնության ու գնահատանքի այս գրերից հետո զետեղված է գրքի խմբագիր, Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Պետրոս Հովհաննիսյանի «Երկու խոսք»-ը, որում

ճանաչված պատմարանը ըստ արժանվույն է գնահատում ներկա աշխատությունը և միաժամանակ անդրադառնում Գևորգյան ճեմարանի անցյալի հիշարժան էջերին:

Ինչպես տեսնում ենք, մասնագետներին ու ընթերցող լայն շրջաններին է հանձնվել վաղուց սպասված մի գիրք, որը համգամանորեն ներկայացնում է Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերջին վեց տասնամյակների պատմությունը: Իսկ ինչ վերաբերում է նրա հիմնադրման ու սկզբնական շրջանի գործունեությանը, որն ընդգրկում է 1874-1917 թթ., ապա պետք է ասել, որ համազգային այդ ուսումնական հաստատությանը նվիրված մենք տակավին չունենք հիմնարար գրականություն: Միայն վերջին մի քանի տարիներին գրվել են որոշ գրքեր<sup>80</sup>: Եվ դա այն դեպքում, երբ Մոսկվայի Լազարայն ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի և մեր մյուս կրթօջախների վերաբերյալ ստեղծվել են մի շարք արժեքավոր աշխատություններ թե՛ անցյալում և թե՛ մեր օրերում<sup>81</sup>: Տեր Եղիշե ավագ քահանա Սարգսյանի ներկա մենագրությունը գալիս է մասամբ լրացնելու այդ բացը:

Սակայն մինչ գրքի վերլուծությանն անցնելը հակիրճ ներկայացնենք Գևորգյան ճեմարանի հիմնադրման նախապատմությունը, որն ավելի ամբողջական կդարձնի մեր ասելիքը: Հայտնի է, որ Վաղարշապատում հոգևոր դպրոց բացվել է դեռևս Գրիգոր Լուսավորչի օրոք՝ Դ դարի

---

<sup>80</sup> Տե՛ս **Մ. Գ. Գամաղեյան**, Նվիրում կրթական գործին, Եր., 1986, **Խ. Գ. Բաղիկյան**, Գևորգյան ճեմարանի երախտավորները, Եր., 2005, «Նշանավոր ճեմարանականներ», հ. 1, Էջմիածին, 2005, հ. 2, Էջմիածին, 2008: Սրանց հետ, ինչպես արևելահայ շատ դպրոցների, այնպես էլ Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցի ու Գևորգյան ճեմարանի մասին որոշ բուռյակ տեղեկություններ ենք գտնում նաև Մ. Հ. Սամբրույանի «Արևելահայ դպրոցը ԺԹ դարի առաջին կեսին» (Եր., 1964), Վ. Խ. Երկանյանի «Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905)» (Եր., 1970), Մ. Կ. Խոթոյանի «Արևելահայ դպրոցը 1830-1920 թվականներին» (Եր., 1987) աշխատություններում և այլուր:

<sup>81</sup> Տե՛ս **Ա. Зинovieв**, Исторический очерк Лазаревского института восточных языков, М., 1863, **Ա. Հ. Իգնատյան**, Լազարյան ճեմարան, Եր., 1969, **Ա. П. Базиянц**, Лазаревский институт восточных языков в истории отечественного востоковедения, М., 1973, **Աղ. Երիցեան**, Պատմություն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի, հ. 1 (1824-1899), Թ., 1898, **Ստ. Մալխասեանց**, Համառոտ պատմություն Ներսիսեան հոգևոր դպրոցի 75-ամեայ գոյութեան (1824-1899), Թ., 1900, Անձոռաց դեմքեր, «Ներսիսյան դպրոցի սաներ», Եր., 1965, Հայ մշակույթի օրրանը, Եր., 1971, **Գ. Գրիգորյան**, Ներսիսյան դպրոց, Եր., 1975, **Ս. Ավագյան**, **Գ. Փերիխանյան**, Ներսիսյանցիներ (1824-1924), Եր., 1975: Առանձին գրքեր են տպագրվել նաև Երևանի, Շուշիի, Աստրախանի, Ախալցխայի, Ախալքալաքի և այլ բնակավայրերի հայկական դպրոցների վերաբերյալ:

սկզբին, որը հայ նորաստեղծ եկեղեցու համար պատրաստում էր սպասավորներ: Ուսուցումն այդ դպրոցում տարվում էր օտար լեզուներով՝ հունարենով ու ասորերենով: Հայոց գրերի գյուտից անմիջապես հետո՝ Ե դարի սկզբին, Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը այդ դպրոցը վերակառուցեցին և դարձրին հայալեզու առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Հայաստանում, որտեղ 428 թ. հիմնադրվեց նաև մատենադարան: Այդ ուսումնարանը կրթում ու դաստիարակում էր մայրենի լեզվի ուսուցիչներ, քարոզիչներ և եկեղեցական գործիչներ: Նրա առաջին ուսուցիչներն էին երանելի Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը, իսկ առաջին աշակերտները եղել են Կորյուն Սքանչելին, Հովսեփ Պաղնացին, Մովսես Խորենացին, Հովհան և Դանիել Եկեղեցացիները, Եզնիկ Կողբացին, Թաթևի Բասենցին, Ղևոնդ Վանանդեցին, Վարդան Մամիկոնյանը, Տաճատ Գնթունին, Ներսես Քաջբերունին և ուրիշներ:

Այս դպրոցն անխափան գործել է մինչև 510 թվականը: Հետագայում Հայոց հայրապետական աթոռի տեղափոխությունների հետ հիշյալ դպրոցը ևս տեղից տեղ է փոխադրվել: Իսկ 1441 թվականից կաթողիկոսության՝ Վաղարշապատում հաստատվելուն պես դպրոցը կրկին վերաբացվել է և որոշ ընդհատումներով գործել մինչև 1882 թվականը:

Երջանկահիշատակ Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու հայրապետության օրոք (1866-1882 թթ.), երբ 1869 թ. մայիսի 25-ին նրա կողմից հիմնադրվում և 1874 թ. սեպտեմբերի 28-ին բացվում է ճեմարանը, Վաղարշապատի Ժառանգավորաց դպրոցը դառնում է նրա նախակրթարանը, ապա և շուտով՝ ձուլվում հետը:

Գևորգյան ճեմարանը հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատություն էր, որը գործում էր ռուսաց կայսեր կողմից հաստատված կանոնադրությամբ: Նրա նպատակն էր հայ եկեղեցու համար սպասավորներ, իսկ դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելը: Տնօրենը կաթողիկոսն էր, որը գործերը վարում էր ուսումնական խորհրդի և տեսուչի միջոցով: Այն փակ տիպի գիշերօթիկ էր՝ փոքր թվով երթևեկ աշակերտներով: Ուներ երկու բաժին՝ դասարանական՝ վեցամյա ուսուցմամբ, որն իր սաներին միջնակարգ կրթություն էր տալիս, և լսարանական՝ եռամյա ուսուցմամբ, որը բարձրագույն կրթությամբ մասնագետներ էր պատրաստում: Ավանդվում էր 23 առարկա, որից 9-ը՝ կրոնական: Ամուր հիմքերի

վրա էր դրված գրաբարի, աշխարհաբարի, շուսաց և օտար լեզուների ուսուցումը: Աշակերտների թիվը մերթընդմերթ հասնում էր 300-ի:

Գևորգյան ճեմարանի առաջին սաներից են եղել Գ. Հովսեփյանը, Ստ. Մալխասյանցը, Գ. Տեր-Մկրտչյանը, Կոմիտասը, Մ. Աբեղյանը, Ե. Թաղևոսյանը, Կ. Տեր-Մկրտչյանը, Ավ. Իսահակյանը, Գ. Գեմիրճյանը, Ա. Շահնուրադյանը, Ե. Տեր-Մինասյանը, Ա. Միկոյանը, Գ. Էղիլյանը, Ա. Տերտերյանը և շատ ուրիշներ, որոնց մի զգալի մասը հետագայում Հ. Մանանդյանի, Հր. Աճառյանի, Ք. Կարա-Մուրզայի, Հովհ. Հովհաննիսյանի, Գ. Լևոնյանի և այլոց հետ դարձել է նրա անվանի դասախոսները: Նրանց ուժերով լուծվել են հայագիտական կարևոր խնդիրներ, մշակվել հայկական դպրոցների ուսումնական պլաններ ու ծրագրեր, կազմվել դասագրքեր: Այստեղ գրվել, քննարկվել ու տպագրության են երաշխավորվել մայրենի լեզվի ու գրականության, հայոց պատմության, մանկավարժության, երաժշտության վերաբերյալ շատ արժեքավոր աշխատություններ:

Սակայն, ցավոք, պետք է նշել, որ Ի դարի արշալույսին Առաջին աշխարհամարտի արհավիրքները ճաշակած ու Մեծ եղեռնի սարսափները տեսած հայ ժողովուրդը ծանր կացության մեջ էր: Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը նույնպես այդ շրջանում ապրում էր դժվարին օրեր, ուստի 1917 թ. դեկտեմբերի 21-ին Հայոց հայրապետ Գևորգ Ե Սուրենյանցի որոշմամբ ճեմարանում պարապմունքները դադարեցվում են, իսկ շենքը տրամադրվում է զինվորական հրամանատարությանը: Այդպես ավելի քան 40 տարի գործած Գևորգյան ճեմարանը փակում է իր դռները, և ընդհատվում է այդ մեծահամբավ ուսումնական հաստատության բեղմնավոր ուղին:

Գևորգյան ճեմարանի փակվելուց հետո՝ Հայաստանի առաջին հանրապետության տարիներին (1918-1920), այն վերաբացելու որոշակի փորձեր են արվել, որոնք, սակայն, արդյունք չեն տվել, իսկ հետագայում՝ Հայաստանում խորհրդային կարգեր՝ հաստատվելուց հետո, երբ այդ մասին երազելն անգամ հնարավոր չէր, այնուամենայնիվ, դարձյալ որոշ քայլեր ձեռնարկվել են, սակայն դրանք հանդիպել են մեծ արգելքների և հաճախ՝ անուշադրության: Երջանկահիշատակ Ամենայն հայոց հայրապետ Խորեն Ա Մուրադբեկյանը ևս երազել է Գևորգյան ճեմարա-

նը բացված տեսնել, բայց ունեցել է ողբերգական վախճան, դարձել անհատի պաշտամունքի գոհ:

Գրքում վկայակոչված սահմուկեցուցիչ փաստերից ու օրինակներից ընթերցողը գալիս է այն համոզման, որ Հայաստանյայց եկեղեցու համար 1920-1930-ական թվականները չափազանց ծանր ու դժվարին տարիներ են եղել: Առավել սուսկալի է եղել Հայրենական մեծ պատերազմի շրջանը: 1938 թ. նահատակված կաթողիկոսին որպես տեղապահ փոխարինող Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանն ամեն ինչ արել է, որպեսզի կրկին բարձրացնի Մայր Աթոռի և հայ եկեղեցու վարկն ու հեղինակությունը: Ահեղ պատերազմի ընթացքում նրա քաջալերանքով ու հորդորներով հայ ժողովուրդը թե՛ հայրենիքում և թե՛ Սփյուռքում հսկայական միջոցներ է տրամադրել Սուրբ Էջմիածնին, որի շնորհիվ Մայր Աթոռը կարողացել է պատերազմի թեժ օրերին ռազմաճակատին տրամադրել տանկային երկու շարասյուն՝ «Սասունցի Դավիթ» և «Մարշալ Բաղրամյան» անուններով, որոնք իրենց անուրանալի նպաստն են բերել հաղթանակի գործին: Այս ամենից հետո՝ պատերազմի ավարտին, արդեն նկատելի էր պետության բարյացակամ վերաբերմունքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու հայ եկեղեցու հանդեպ:

Վիճակն ավելի բարենպաստ է դառնում, երբ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը 1945 թ. ապրիլի 5-ին անձնական հանդիպում է ունենում Խորհրդային Միության դեկավարի հետ: Այդ հանդիպման ժամանակ հայ ժողովրդի համար հույժ կարևոր ու կենսական նշանակություն ունեցող մի շարք առաջարկությունների հետ կաթողիկոսական ազգընտիր տեղապահը բարձրացնում է նաև Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերաբացման հարցը, որը շուտով ստանում է դրական լուծում. տրվում է նրա վերականգնման թույլտվությունը:

Մայր Աթոռում 1945 թ. հունիսի 16-22-ը տեղի ունեցած ազգային-եկեղեցական ժողովում միաձայն Ամենայն հայոց կաթողիկոս է ընտրվում Գևորգ Չ Չորեքչյանը, իսկ նույն տարվա նոյեմբերի 1-ին հանդիսավոր պայմաններում նորընտիր կաթողիկոսի օրհնությամբ ճեմարանն սկսում է իր գործունեության երկրորդ շրջանը:

Գրքի առաջին գլուխն ամբողջությամբ նվիրված է Գևորգ Չ կաթողիկոսի կողմից ճեմարանի վերաբացման ուղղությամբ ծավալված գործունեությանը: Ընթերցողն այստեղ կարող է գտնել բազմաթիվ փաստ-

տաքթեր, որոնց թվում և՛ Չորեքչյանի կողմից դեռևս տեղապահ եղած ժամանակ գրված ու պետական այրերին ուղղված «Էջմիածնի հոգևոր ճեմարանի կազմակերպման նախագիծը», որտեղ մանրամասնորեն և մանկավարժական հմտությամբ ներկայացված են բացվելիք կրթօջախի ուսումնական պլաններն ու ծրագրերը՝ ըստ դասարանների ու լսարանների նշելով նաև դասավանդվելիք առարկաներն ու դրանց շաբաթական ժամաքանակը: Այդ նախագծի երկրորդ մասը վերաբերում է տնտեսական խնդիրներին ու նյութական ծախսերին՝ յուրաքանչյուր դասախոսի, աշխատողի ու աշակերտի համար կատարված հաշվարկներով:

Այս կարևոր փաստաթղթին հաջորդել է Չորեքչյանի գեկուցագիրը, որում նա հիմնավորել է ճեմարանի վերաբացման խիստ անհրաժեշտություները և միաժամանակ նշել դրան առնչվող շուտափույթ լուծում պահանջող մի շարք խնդիրներ, որոնցից են՝ ճեմարանի շենքի, ուսանողական կացարանի ու սեղանատան ապահովում, դասախոսների հավաքագրում, տպարանի վերագործարկում, դասագրքերի հրատարակում, Երևանի Մատենադարանում պահվող նախկինում Գևորգյան ճեմարանին պատկանող գրադարանի վերադարձ և այլն:

Գերագույն հոգևոր խորհուրդը 1945 թ. սեպտեմբերի 5-ին բացվելիք ճեմարանի վերատեսուչ է նշանակում ժամանակի աչքի ընկնող մտավորական, անգլերենի լավագույն մասնագետ, Երևանի զանազան բուհերում երկար տարիների դասավանդման փորձ ունեցող դասախոս Մինաս Մինասյանը: Հայոց հայրապետի պատվիրանով հոգևոր ճեմարանի բացումը տեղի էր ունենալու նախկին մատենադարանի շենքում, որն ինչ-ինչ չափով հարմարեցվել էր այդ նպատակի համար:

Այստեղ ճեմարանի բացման արարողության վերաբերյալ բերում ենք գրքի հեղինակի հուշերից մի հատված: Նա, ով եղել է վերաբացված ճեմարանի առաջին 35 սաներից մեկը, այսպես է նկարագրում այդ հանդիսավոր պահը. «Պետք է նշել, որ ընդունված ուսանողներից շատերը եկել էին Հայաստանի զանազան շրջաններից, Երևանից ու Էջմիածնից: Խայտաբղետ հագուստներով, գրական ու բարբառների խառնիխուռն խոսակցություններով զբաղված էին, երբ միջին տարիքի մի մարդ մոտեցավ մեզ: Շարքով նա մեզ առաջնորդեց նախկին Մատենադարանի երկրորդ հարկի գեղեցիկ և ընդարձակ սենյակներից մեկը: Տեղավորվեցինք մեզ առաջարկված ուսանողական սեղանների առջև, շունչներս պահած,

մեզ համար բոլորովին նոր միջավայրում և չափից ավելի հուզված սպասում էինք: Ազդարարեցին Վեհափառի գալուստը:

Մի քանի վեղարավորներ ներս մտան, և ապա ինքը՝ ազգիս սրբագնացույն կաթողիկոսը: Նորին սուրբ օծությանն ուղեկցում էին Ավետիք Իսահակյանը, ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը, Դերենիկ Դեմիրճյանը, բանահավաք-ազգագրագետ Երվանդ Շահազիզը:

Բոլորի դեմքին ուրախություն կա, բայց մաս մտահոգություն: Խորաթափանց հայացքով Հայոց հայրապետը մեզ՝ ուսանողներին իր վեհափառական հայացքի ներքո պահելով՝ սկսեց «Հայր մեր»-ը... և հետո մի աղոթք ասաց, ապա սկսեց ճեմարանի շենքն ու առաջին ուսանողներին օրհնելու արարողությունը: Նրա իմաստուն աչքերից ուրախության արտասուք էր հոսում... Օրհնության արարողության ավարտից հետո բացման խոսքով հանդես եկավ Հոգևոր ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը: Խոսեցին մաս երկու եպիսկոպոսներ՝ Ներսես եպս. Աբրահամյանը և Ռուբեն եպս. Դրամբյանը, որից հետո Վեհափառ հայրապետը մտեց ու սկսեց խոսել: Իր խոսքը բավական երկար էր:

Կարճ ժամանակ հետո ոգևորվեց ու ոտքի ելավ: Իհարկե, ինձ համար դժվար է 58 տարվա հեռավորությունից բառացի վերականգնել 77-ամյա ծերունագարդ իմաստուն այդ մեծ հայրապետի խոսքը: Կարող եմ ասել միայն, որ նա խոսում էր մեղմ, իմաստալից, հատիկ-հատիկ: Կարկառուն այդ անհատականության խոսքից ներկաները հուզված էին, և երբեմն մեկը կամ մյուսը թաշկիմակով սրբում էր աչքերը: Տեսնել էր պետք սքանչելի, չկրկնվող տեսարանը» (էջ 55-56):

Ահա այդպես ճեմարանը սկսում է իր պարապմունքները: Հեղինակը գրքի այս բաժնում ներկայացնում է ճեմարանի կարգ ու կանոնը, դասացուցակները, դասախոսներին ու դասավանդվող առարկաները և այլ մանրամասներ: Պարապմունքները տեղի էին ունենում հարմարություններ չունեցող շենքում, ուստի Վեհափառ հայրապետը ստիպված դիմում է Հայաստանի ղեկավար մարմիններին՝ Գևորգյան հոգևոր ճեմարանի և ննջարանի շենքը վերադարձնելու խնդրանքով, որը, սակայն, կատարվում է դրանից շուրջ 40 տարի անց:

Գրքի առաջին գլուխն ընդգրկում է ճեմարանի գործունեության առաջին տասնամյակը և ավարտվում է այն վերաբացող պաշտելի Վեհափառի երկրային կյանքի ավարտով, որը տեղի է ունեցել 1954 թ. մայիսի



9-ին: Իսկ երկրորդ գլուխը, որը կրում է «Հոգևոր ճեմարանի գործունեությունը Վազգեն Ա վեհափառ հայրապետի գահակալության շրջանում (1955-1994 թթ.)» վերտառությունը, ամենաընդարձակն է գրքում: Այստեղ հեղինակը նշում է, որ երջանկահիշատակ Գևորգ Ջ կաթողիկոսից հետո ճեմարանը որոշակի անկում է ապրում, նույնիսկ ընդունելություն չի կատարվում: Դա երևում է նաև վերատեսուչ Մ. Մինասյանի՝ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1953-54 ուստարվա բացման առթիվ գրած «Ձեկուցագրից»: Տեղի տրոթյան պատճառով այստեղ չենք ուզում մեկ առ մեկ թվարկել այն դժվարությունները, որոնք այդ ժամանակ ծառայած են եղել ճեմարանի առջև:

Սակայն Վազգեն եպս. Պալճյանի՝ հայոց հայրապետ ընտրվելու օրից (30 սեպտեմբերի 1955 թ.) ի վեր ճեմարանի վիճակն աստիճանաբար բարելավվում է: Ըստ ամենայնի գնահատելով առաջին վերատեսուչ Մ. Մինասյանի տասնամյա (1945-1955 թթ.) գործունեությունը այդ հոգևոր կրթօջախի սկզբնավորման ու ամրապնդման գործում՝ 1956 թ. տարեվերջյան հանդեսի ժամանակ Վազգեն Ա կաթողիկոսը ներկայացնում է նոր տեսուչին՝ Տ. Հայկազուն եպս. Աբրահամյանին՝ դրվատելով նաև իբրև «մարդ, անբասիր հոգևորական և վաստակ ունեցող մանկավարժ»:

Այնուհետև իր գահակալության 40 տարիներին Վազգեն Ա վեհափառի ամենատես աչքից երբեք չեն վրիպել ճեմարանի գործունեությունը խոչընդոտող թեկուզև ամենաաննշան կարիքները: Նրա օրոք լուծվել են ճեմարանի բազմաթիվ խնդիրներ: Ուզում ենք շեշտել մի կարևոր հանգամանք, որը վերաբերում է Վեհափառի գործունեության լուսաբանմանը: Գրքի հեղինակը կարողացել է սույն բաժնում ներկայացնել այն բոլոր կարևոր նյութերը, որոնք վեր են հանում ճեմարանի՝ այդ քառասունամյակի պատմությունը, որի մեջ չափազանց մեծ են հայրենասեր կաթողիկոսի ներդրած ջանքերը:

Մենագրության հաջորդ գլուխը նվիրված է Ամենայն հայոց կաթողիկոս Գարգին Ա Սարգսյանի գահակալության կարճատև շրջանում (1995-1999 թթ.) ճեմարանի ունեցած զգալի նվաճումների լուսաբանմանը: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Ամենայն հայոց հայրապետի գահակալության առաջին տարին համընկել է հոգևոր ճեմարանի վերաբացման կեսդարյա հոբելյանին: Մի բան, որն առիթ է հանդիսացել ուսում-

նական գործընթացը և ուսանողության կենցաղի հետ կապված հարցերն ավելի նպատակալաց կազմակերպելու համար: Դրան մեծապես նպաստել է նաև Գևորգյան ճեմարանի պատմական շենքի վերադարձնը, որով վերստին հնարավորություն է ստեղծվել դասախոսություններն անցկացնելու լայնարձակ ու լուսավոր լսարաններում: Այդ շենքը ՀՀ կառավարության կողմից Մայր Աթոռին էր վերադարձվել երջանկահիշատակ Վազգեն Ա հայրապետի վախճանվելուց մեկ տարի առաջ՝ 1993 թ., որից հետո այն վերանորոգվել է, և 1997 թ. սեպտեմբերի 18-ին նրա հյուրընկալ հարկի տակ սկսվել է նոր ուսումնական տարեշրջանը: Այսպիսով, շուրջ 80 տարի օտարված շենքը կրկին դարձել է Մայր Աթոռի սեփականությունը և ծառայել է իր նպատակին: Այն կառուցվել և օրհնվել է ճեմարանի հիմնադիր Գևորգ Դ մեծագործ հայրապետի կողմից ԺԹ դարի երրորդ քառորդին: Գարեգին Ա հայրապետի կաթողիկոսության օրոք կրկին վերանվանվել է Գևորգյան հոգևոր ճեմարան, իսկ նրա սաների ընդունելության թվաքանակն այդուհետև սկսել է համարվել Սևանա վանքի Վազգենյան և Շիրակի դպրոցների շրջանավարտներով:

Մենագրության վերջին՝ չորրորդ գլուխը, որը կրում է «Հոգևոր ճեմարանի վերակառուցումն աստվածաբանական համալսարանի» վերնագիրը, նվիրված է Գարեգին Բ հայրապետի գահակալության (1999 թ. հոկտեմբերի 27-ից) տարիներին ճեմարանի գործունեությանն ու ձեռքբերումներին: Նորընտիր հայոց հայրապետի ջանքերով տեղի են ունենում մի շարք բարեփոխություններ, որոնցից ամենակարևորը և պատմականը թերևս ճեմարանն աստվածաբանական համալսարանի վերածելն էր, որը կատարվել է Գարեգին Բ վեհափառի՝ 2002 թ. մարտի 29-ի թվակիր պաշտոնական նամակի հիման վրա: Այդ առթիվ ՀՀ կառավարության նույն թվականի հունիսի 13-ին «Էջմիածնի հոգևոր ճեմարանի մասին» կայացրած որոշման մեջ ասված է. «Հաշվի առնելով Ամենայն հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Կ. Ս. Գարեգին Բ Ներսիսյանի միջնորդությունը և Հայաստանի Հանրապետության կրթական ոլորտում ու հոգևոր-մշակութային կյանքում Էջմիածնի հոգևոր ճեմարանի բացառիկ դերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Էջմիածնի հոգևոր ճեմարանը համարել բարձրագույն ուսումնական հաստատություն:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին թույլատրել էջմիածնի հոգևոր ճեմարանի սովորողների տեղափոխությունը Հայաստանի Հանրապետության այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ և շրջանավարտների հետբուհական մասնագիտական կրթությունը Հայաստանի Հանրապետության գիտակրթական համակարգում:

Հայաստանի Հանրապետության վարչապետ՝ **Ա. Մարգարյան**

2002 թ. հունիսի 19, Երևան (Էջ 223-225):

Սույն որոշումը 2002 թ. հունիսի 22-ին վավերացրել է ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը:

Այնուհետև ծանոթանում ենք այն բոլոր որոշումներին ու վաստաթղթերին, որոնք մի կողմից Էջմիածնի հոգևոր ճեմարան-աստվածաբանական համալսարանի տնօրենության, մյուս կողմից: ՀՀ ԿԳ նախարարության միջև կատարված պաշտոնական գրագրության արդյունք են: Այստեղ գտնում ենք նաև Գարեգին Բ հայոց վեհափառ հայրապետի սրբատառ կոնդակը՝ տրված 2004 թ. նոյեմբերի 3-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնադրման 130-ամյակի առթիվ՝ ուրախությամբ մշտելով, որ համազգային այդ տոնը համընկել է հանրահայտ կրթօջախն աստվածաբանական համալսարանի վերածելու իրողությանը՝ հայրենիքում ու Սփյուռքում առաջացնելով բերկրալի ցանկություն:

Գրքի հիմնական մասն ավարտվում է «Վերջաբան»-ով, որտեղ հեղինակն ամփոփում է Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի անցած 62 տարիների պատմությունը՝ վեր հանելով հայոց հոգևոր ու գիտամշակութային կյանքում ունեցած վիթխարի դերը: Այն գրվել է ճեմարանի նկատմամբ երախտագիտության ու սիրո խորին զգացումով լցված մի անբասիր եկեղեցականի կողմից, որը, նրա առաջին սաներից մեկը լինելուց բացի, հետագայում՝ 2002-2006 թթ., եղել է նաև իրեն սնուցող կրթօջախի տեսուչը և քիչ բան չի արել նրա բարգավաճման ու համալսարանի վերածվելու համար: Տեր Եղիշեն իր աշխատության մեջ օգտագործել է բազմաթիվ արխիվային վավերագրեր, տարբեր հրատարակություններ, նամակներ ու հուշեր և ճեմարանում իր աշխատած տարիների սեփական դիտարկումների արդյունքների հետ մեկտեղ ստեղծել է մի հավաստի տարեգրություն, որը, ճեմարանի պատմությունը լինելուց բացի,

որոշ իմաստով Մայր աթոռի վերջին վեց տասնամյակների պատմությունն է: Այն իր հաստատուն տեղը կգտնի ճեմարանի մասին գրված ու գրվելիք գրքերի շարքում:

Աշխատությունն ունի նաև հարուստ «Հավելված», որտեղ գետեղված են հիմնականում Գևորգյան հոգևոր ճեմարանի (Աստվածաբանական համալսարան) կանոնադրությունը, ընդունելության կանոններն ու գիտլտորիդի կանոնակարգը, դասընթացների բաշխվածությունը՝ ըստ խմբերի ու կիսամյակների և այլն: Այստեղ գետեղված են նաև այլ կանոնակարգեր ու փաստաթղթեր, որոնք վերաբերում են ֆակուլտետներին, ամբիոններին, քննական հանձնաժողովներին և պաշտոնատար անձանց աշխատանքային գործունեությանը: Վերջում ըստ տարիների (1951-2006 թթ.) բերված են ճեմարանի բոլոր շրջանավարտների ցուցակները և հակիրճ տեղեկություններ՝ յուրաքանչյուրի հետագա գործունեության վերաբերյալ:

Գիրքը հարուստ է նաև լուսանկարներով, որոնք պարունակում են խմբային ու անհատական բազմաթիվ գունավոր ներդիրներ: Առաջին էջերում Ծայրագույն պատրիարք և Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի դիմանկարն ու նրա տված սրբատառ կոնդակի գունագեղ վերատպությունն են, ապա գրքի յուրաքանչյուր գլխին նախորդում է տվյալ շրջանի կաթողիկոսի մեծադիր լուսանկարը: Առանձին էջերով ներկայացված են ՀՀ կառավարության և ԿԳ նախարարության տված հրամանագրերի, արտոնագրերի և վկայագրերի պատճենները, ինչպես և դասախոսների, տեսուչների ու շրջանավարտների լուսանկարները, որոնք կրկնապատկում են սույն աշխատության արժեքը և այն դարձնում ավելի հիմնավոր, հետաքրքիր ու բազմաբովանդակ:

Վերջում նշենք, որ գրքում նկատելի են որոշ կրկնություններ, թվական տվյալների անճշտություններ, սրբագրական ու տեխնիկական վրիպումներ և այլն: Ինչևէ, դրանք ներկա գիրքը չեն ստվերում: Այն գրված է գիտական պատշաճ մակարդակով, հարուստ ու պատկերավոր լեզվով և հասցեագրված է հայ դպրոցի ու մանկավարժության, հայոց եկեղեցու պատմությանը զբաղվող մասնագետներին ու ընթերցող լայն շրջաններին:

## «ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՍԱՐԱՆԻ ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐԸ»

Հայ դպրոցի և մանկավարժության պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որի հիմնադրման 130-ամյակը մեծ շուքով նշվեց վերջերս: Այդ հիշարժան տարեկիցի կապակցությամբ լույս տեսան առանձին ժողովածուներ ու ուսումնասիրություններ՝ նվիրված ճեմարանի պատմությանը<sup>82</sup>: Հեղինակը գրքի առաջաբանում հակիրճ ակնարկով ներկայացնում է XIX դարի և XX դարասկզբի հայոց կրթամշակութային և հոգեմտավոր կյանքի ընդհանուր պատկերը Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Հենց այստեղ էլ նա անդրադառնում է Գևորգյան ճեմարանին նախորդած երկու հայկական բարձրագույն դպրոցների՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1815-1918 թթ.) և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1824-1924 թթ.) գործունեությանը, վեր հանում նրանց դերն ու նշանակությունը հայ ժողովրդի լուսավորության, հոգևոր-մշակութային ու սոցիալ-քաղաքական կյանքի աշխուժացման գործում: Հեղինակն այդ նույն բաժնում առանձին տեղ է հատկացրել նաև Գևորգյան ճեմարանի կատարած բացառիկ դերին, որը, 1874 թ. հիմնադրվելով մայր հայրենիքում և իր ճանապարհին ունենալով 28 տարվա ընդհատում (1917-1945 թթ.), գործում է առ այսօր:

Սակայն պետք է նկատել, որ այդ բարձրագույն հոգևոր դպրոցը դատարկ տեղում չէր հայտնվել: Դեռևս IV դարի սկզբին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվելուց անմիջապես հետո Գրիգոր Լուսավորչի նախաձեռնությամբ Վաղարշապատում ստեղծվում է դպրոց, որն իր ժամանակին պատրաստում էր նորահաստատ հավատի սպասավորներ և ուսուցիչներ: Հայոց գրերի գյուտից անմիջապես հետո Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցն այդ դպրոցը վերածում են մայր վարժարանի, որը կոչվում է նաև Արշակունյաց դպրոց (գործել է V-VI դարերում): Այստեղ մանկավարժական գործունեություն են ծավալել Եզնիկ Կողբացին, Աղան Արծրունին և ուրիշներ, ավանդվել են հայոց լեզու, քերականություն, ճարտասանություն, երաժշտություն, տրամաբանություն, վարքագրություն և կրոնական առարկաներ, սկզբնավորվել է

<sup>82</sup> Խաչիկ Բաղիկյան, «Գևորգյան ճեմարանի երախտավորները», Եր.ն, ԵՊՀ հրատ., 2005, 146 էջ:

գրչության արվեստը: Այդ դպրոցը V դարի վերջերին Կաթողիկոսական աթոռի հետ միասին տեղափոխվել է Դ-վին, ապա՝ այլ վայրեր:

Մայր Աթոռը Սուրբ Էջմիածնում վերահաստատվելուց հետո (1441 թ.) Թովմա Մեծոփեցին հիմնադրում է վարդապետարան, որը քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով գործում է ընդամենը երկու տարի: 1640 թ. Փիլիպոս Աղբակեցին բացում է նոր վարդապետարան, որը հետագայում կոչվում է Էջմիածնի Ժառանգավորաց դպրոց: Որոշ ընդհատումներով այն գործել է մինչև 1882 թվականը: Ներսես Աշտարակեցին այդ դպրոցի համար 1813 թ. կառուցել է նոր շենք: Այնտեղ դասավանդել են Ռսկան Երևանցին, Սիմեոն Ջողայեցին, Ստեփանոս Լեհացին, Առաքել Դավրիժեցին, Պետրոս Կարաղաղցին և մի շարք այլ երևելի դեմքեր: Այդ դպրոցում, սկսած 1836 թ., հայագիտական առարկաների հետ ուսուցանվել է նաև ռուսաց լեզու, իսկ 1860-ականներից՝ նաև լատիներեն, ֆրանսերեն, բնական պատմություն և այլ առարկաներ:

Ինչպես տեսնում ենք, Էջմիածնում, սկսած IV դարից, գրեթե անընդմեջ գործել է բարձր տիպի դպրոց, որը և ծառայել է հայ եկեղեցու ազգանվեր նպատակների իրականացմանը: Ահա այս ամուր հիմքի վրա էլ հետագայում ստեղծվել է Գևորգյան ճեմարանը՝ որպես հոգևոր բարձրագույն դպրոց:

Ճիշտ է, գիրքն ընդգրկող պատմական ժամանակահատվածում բուն Հայաստանում և նրա սահմաններից դուրս եղել են նաև մի շարք այլ ուսումնական հաստատություններ, ինչպիսիք են, օրինակ, Երևանի, Նոր Նախիջևանի, Շուշիի թեմական դպրոցները, Թիֆլիսի Գայանյան և Հովհաննյան օրիորդաց կրթարանները, Արևմտյան Հայաստանի տարածքում գործած վարժարանները, որոնք նույնպես մեծ դեր են կատարել մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության և հայ ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացման գործում: Բայց և այնպես, հիշյալ դպրոցներն իրենց սաներին միայն միջնակարգ կրթություն էին տալիս, իսկ Լազարյան ճեմարանը, Ներսիսյան դպրոցն ու Գևորգյան ճեմարանը կանգնած էին ժամանակի բուհերի մակարդակի վրա և հայ երիտասարդությանը զինում էին հարուստ գիտելիքներով, տալիս բարձրագույն կրթություն:

Նորաստեղծ ճեմարանը փակ տիպի գիշերօթիկ դպրոց էր՝ երթևեկ աշակերտներով: Նրա հիմնական նպատակը եղել է հայ եկեղեցուն կրթված հոգևորականներով ապահովելը և ազգային դպրոցների համար բարձրորակ ուսուցիչներ պատրաստելը: Ունեցել է երկու բաժին՝ դասարանական (միջնակարգ դպրոցի ծավալով՝ վեցամյա ուսուցմամբ) և լսարանական (երեքամյա ուսուցմամբ), որը հոգևոր բարձրագույն կրթություն էր տալիս իր սաներին: Այստեղ դասավանդվում էր 23 առարկա, որից 9-ը՝ կրոնական բովանդակությամբ: Մեծ ուշադրություն էր դարձվում ոչ միայն հայոց լեզվի և մատենագրության, հայոց պատմության, այլև ռուսաց և օտար լեզուների դասավանդմանը: Հետագայում ավելացել են նաև ֆիզիկամաթեմատիկական և բնագիտաաշխարհագրական առարկաներ, որոնք ավելի են ընդլայնել սովորողների մտաևորիզոնը և հարստացրել նրանց պատկերացումներն աշխարհի մասին: Շուտով ճեմարանը դարձել է հայագիտության զարգացման կարևոր կենտրոն, որտեղ իրենց լուծումն են ստացել գիտական բարդ խնդիրներ, մշակվել են հայկական դպրոցների ուսումնական ծրագրեր, կազմվել դասագրքեր և այլն:

Պրոֆ. Խ. Բատիկյանն իր գրքում, հակիրճ ներկայացնելով այս ամենը, անդրադարձել է նաև ճեմարանի սաներից մի քանիսին, որոնք հետագայում դարձել են գիտության ու մշակույթի առաջատար ուժեր: Սակայն հեղինակը նպատակ չի ունեցել տալու այդ դպրոցի ամբողջական պատմությունը, այլ նրա առջև դրված հիմնական խնդիրը եղել է Գևորգյան ճեմարանի առաջին շրջանի, այն է՝ 1874-1917 թթ. երախտավոր ուսուցիչների, այն էլ՝ ոչ բոլորի կյանքի ու գործունեության վերհանումը՝ կապված այդ նշանավոր կրթօջախի հետ:

Առաջինը ներկայացված է ճեմարանի հիմնադիրը՝ երջանկահիշատակ Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճյան (կաթողիկոս՝ 1866-1882 թթ.) կաթողիկոսը, որը հայ իրականության մեջ հայտնի է «Մեծագործ» պատվանունով: Մեծագործ հայրապետը 1874 թ. սեպտեմբերի 28-ին հանդիսավոր պայմաններում բացում է ճեմարանը, որն առաջին տարում ունեցել է ընդամենը 65 աշակերտ և ուսուցիչների մի փոքր խումբ: Սակայն 8 տարի անց՝ 1882 թ. մայիսին, ճեմարանի սաների թիվն արդեն հասնում էր 220-ի, և այստեղ ուսուցիչներ էին հրավիրվել տարբեր վայրերից: Այդ նույն տարում ճեմարանին է միացվել նաև Էջմի-

ածնի Ժառանգավորաց վարժարանը՝ որպես նրա նախապատրաստական բաժին: Կաթողիկոսը հորդորում էր իր սաներին, որ նրանք «հայ լինեն ու ջանան ուսում ձեռք բերել, զի ուսումը միայն կյանք կտա հայությանը»:

Գրքի հեղինակը հայոց Մեծագործ կաթողիկոսին ներկայացրել է նաև այլ կողմերով, ստեղծել նրա գունեղ ամբողջական դիմանկարը, ցույց տվել նրա ազգանվեր բեղմնավոր գործունեության այլևայլ ոլորտները՝ կապված ճեմարանի հետագա զարգացման հետ: Ժրաջան կաթողիկոսի անժամանակ մահվանից (1882 թ.) հետո նրա կողմից հիմնադրված կրթօջախն արժանիորեն կոչվել է Գևորգյան ճեմարան:

Հաջորդ ակնարկը մեր մյուս մեծամուն կաթողիկոսի՝ Սկրտիչ Վանեցու կամ, ինչպես ժողովուրդն է սիրով անվանակոչել, Խրիմյան Հայրիկի (կաթողիկոս՝ 1892-1907 թթ.) դիմանկարն է ուրվապատկերում, որը կաթողիկոս է ընտրվել 1892 թ. մայիսի 5-ին: Նրա օրոք ճեմարանը վերելք է ապրում: Ժողովրդի մեջ մեծ հեղինակություն ունեցող կաթողիկոսը կարողանում է ստեղծել մի հիմնադրամ, որի միջոցներով բարելավվում է ճեմարանի սաների և ուսուցիչների սոցիալական վիճակը, բարձրացվում է վերջիններիս աշխատավարձը, կրկնապատկվում սովորողների թիվը և այլն: Ուսուցման որակը բարձրացնելու նպատակով Խրիմյան Հայրիկը դասախոսներ է հրավիրում Մոսկվայի Լազարյան ճեմարանից ու Թիֆլիսի Ներսիսյան դպրոցից, ինչպես և Փարիզից ու Բեռլինից, որոնց շնորհիվ ճեմարանը դառնում է ազգային կրթության ու մշակույթի ամենավառ ջահը հայրենի հողի վրա:

Եվ այսպես, Խ. Բաղիկյանն իր գրքում ստեղծել է ճեմարանի գործունեության առաջին շրջանի երևելի երախտավորներից 15-ի դիմանկարները: Նրանք են դասական հայագիտության հաստաբեատ կադնին՝ Մանուկ Աբեղյանը (1865-1944 թթ.), մեծահամբավ լեզվաբան Հրաչյա Աճառյանը (1876-1953 թթ.), անվանի լեզվաբան ու գրականագետ Ստեփանոս Պալասանյանը (1837-1889 թթ.), Մակար Եկմայանը (1856-1905 թթ.), ակնավոր բառարանագետ, լեզվաբան ու գրականագետ Ստեփանոս Մալխասյանը (1857-1947 թթ.), հայ քնարերգության գագաթներից Հովհաննես Հովհաննիսյանը (1864-1929 թթ.), աշխարհագրագետ-ազգագրագետ և մանկագիր Ստեփան Լիսիցյանը (1865-1947 թթ.), Կոմիտաս վարդապետը (Մողոմոն Սողոմոնյան, 1869-1935 թթ.), արվես-



տաբան Գարեգին Լևոնյանը (1872-1947 թթ.), երևելի հայագետ-եղբայրներ Ստեփան (1860-1937 թթ.) և Խաչատուր (1881-1976 թթ.) Կանայանները հոգեբան-մանկավարժ Գուրգեն Էղիլյանը (1886-1942 թթ.) և ակադեմիկոս լեզվաբան ու հայտնի ուրարտագետ Գրիգոր Ղափանցյանը (1887-1957 թթ.):

Ակնարկային այս ամբողջական դիմանկարներից բացի՝ հեղինակն իր գրքի տարբեր էջերում դիպուկ բնութագրումներով ներկայացրել է նաև ճեմարանի այլ երախտավորների, որոնցից կարելի է հիշատակել խոշոր պատմաբաններ Լեոյի, Հակոբ Մանանդյանի, երգահան Քրիստավոր Կարա-Մուրզայի, մանկավարժ Սեդրակ Մանդինյանի, գեղանկարիչներ Վարդգես Սուրենյանցի և Եղիշե Թադևոսյանի անունները: Ընդհանուր առմամբ գրքում ներկայացված երախտավորների դիմանկարները հեղինակը կերտել է իրենց բնորոշ գծերով, գիտության ասպարեզում ունեցած ծանրակշիռ ավանդին համապատասխան, որոնք նպաստել են ճեմարանի զարգացմանը, նրա սաների համակողմանի կրթության ու դաստիարակության գործին, մեծապես հարստացրել են հայրենական գիտությունն ու մշակույթը: Եվ պատահական չէ, որ այդ տարիներին ճեմարանի տված 150 շրջանավարտների ցուցակներում հանդիպում են Աղասի Խանջյանի, Անաստաս Միկոյանի, Ասքանազ Մռավյանի, Սիմոն Վրացյանի, Ավետիք Իսահակյանի, Լևոն Շանթի, Ակսել Բակունցի, Արսեն Տերտերյանի, Գարեգին Հովսեփյանի, Նիկողայոս Ադոնցի, Գալուստ Տեր-Մկրտչյանի, Արմենակ Շահմուրադյանի, Սպիրիդոն Մելիքյանի, Վահան Տեր-Առաքելյանի, Ստեփան Մալխասյանցի, Երվանդ Գարագաշի և էլի շատ ուրիշների անունների: Ի դեպ, գրքում ընդգրկված 15 երախտավորների շուրջ կեսը նույնպես ճեմարանավարտներ են, որոնք այնուհետև այստեղ դասավանդել են որպես դասախոսներ: Դճարանականներ են եղել նաև 1943 թ. ստեղծված ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամների մի զգալի մասը:

Հեղինակը կարողացել է այս ամենը խտացված կերպով ի մի բերել իր գրքի սուղ էջերում և ներկայացնել պատմության դասին: Նա օգտվել է արխիվային բազմաթիվ փաստաթղթերից, հրապարակյա վրա եղած գիտական գրականությունից, մամուլի հրապարակումներից և այլ աղբյուրներից, որոնք առավել հավաստի ու գիտական են դարձնում Գևորգյան ճեմարանի՝ մեր ազգային գիտության ու մշակույթի անդրանիկ հաստա-

տության խնկելի երախտավորների գիտամանկավարժական դիմանկարները, նրանց կյանքի ու գործունեության բնութագրումները:

Պրոֆ. Խ. Բաղիկյանի աշխատությունը ըստ ամենայնի ներկայացնում է Գևորգյան ճեմարանի առաջին շրջանի երախտավորներին, որոնց գիտական վաստակն ու մանկավարժական փորձը կարող են ուսանելի լինել ներկա ու գալիք սերունդների համար: Իհարկե լավ կլիներ, որ այստեղ ներկայացված լինեին նաև այդ շրջանի մյուս երախտավորները, մի բան, որն ավելի կամբողջականացներ աշխատությունը: Ցավոք, գրքում նկատվում են փաստական առանձին անճշտություններ, անձնանունների աղավաղումներ, սրբագրական սպրդումներ և այլն: Նշենք դրանցից մի երկուսը: Օրինակ՝ Լեոն, ով վախճանվել էր 1932 թ., չէր կարող ընտրվել 1943 թ. ստեղծված ՀԽՍՀ ԳԱ կազմում, Երվանդ Տեր-Մինասյանը ակադեմիկոս կամ թղթակից անդամ երբեք էլ չի եղել, իսկ ճեմարանավարտ Մակինցյանի անունը Պողոս է և ոչ թե Պետրոս, ինչպես տպագրված է գրքում (էջ 19):

Սակայն, այս ամենով հանդերձ, գիրքն իր կարևոր նպաստն է բերում Գևորգյան հոգևոր ճեմարանի պատմության ուսումնաիրության գործին: Գրքի գլխավոր խմբագիրն է Պարզև Շահբազյանը, իսկ խմբագիրը՝ Ավետիս Քալաշյանը: Այն կարող է օգտակար լինել մասնագետներին ու ուսանողներին, բոլոր նրանց, ովքեր ցանկություն կունենան ծանոթանալու Մայր տաճարի դպրատան պատմությանը:

**ՀԱՆՃԱՐԵՂ ՀԱՅԱԳԵՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
*(Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի ծննդյան 130-ամյակի առթիվ)*

Հայագիտության ռահվիրա, աշխարհահռչակ լեզվաբան, ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Աճառյանը, որի ծննդյան 130-ամյակը լրացավ այս տարի, իր ծանրակշիռ ավանդն է բերել հայրենական գիտության զարգացմանը: Նա իր ապրած երկրային կյանքի 77 տարիներից 65-ը անմնացորդ նվիրել է մայրենի լեզվի համակողմանի ուսումնասիրությանը՝ ստեղծելով այնպիսի աշխատություններ, որոնք իրենց մնայուն տեղն են ապահովել XX դարի գիտության զանձարանում: Նրա բեղուն մտքից ու գրչից ծնված 200-ից ավելի կոթողային հետազոտությունները գիտնականների նորանոր սերունդների համար ուղեցույց են լինելու և ապագայում ևս ծառայելու են հայ մշակույթի առաջընթացին:

Գիտության մեծ երախտավորի ու նրա աշխատությունների մասին թեև գրվել են հարյուրավոր ուսումնասիրություններ ու գրախոսականներ, հոդվածներ ու հուշեր, ականավոր մարդկանց կողմից արժևորվել ու գնահատվել են նրա կատարած տիտանական աշխատանքն ու թողած վիթխարի ժառանգությունը, բայց և այնպես, գնահատանքի այդ խոսքերը դեռևս մնում են մասսայական ու գիտական պարբերականների էջերում սփռված և մատչելի չեն նույնիսկ մասնագետներին: Ուստի վաղուց անհրաժեշտություն էր դարձել, որ այդ ամենն ի մի բերվեր, ու հայագիտության մեծ երախտավորի մասին գրվեր մի հանրամատչելի գիրք, որն ուրվագծեր նրա աստանդական ու ասկետական կյանքի դժվարին ուղին, կտար գիտության ասպարեզում կատարած հերկուլեսյան սխրանքի ընդհանուր բնութագիրը:

Այս բացը լրացնելու առաջին փորձն է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Խաչիկ Բաղիկյանի հեղինակած «Հրաչյա Աճառյան. մարդը և գիտնականը» ծավալուն մենագրությունը, որը հորելյանական պատշաճ տեսքով ու բարձր մակարդակով լույս է ընծայել «Չանգակ-97» հրատարակչությունը: Սկզբից ևեթ նշենք, որ ներկա մենագրությունը, որի լույսընծայումը համընկել է մեծ գիտնականի ծննդյան 130-ամյակին, մի գեղեցիկ ու պատշաճ նվեր

է այդ հիշարժան տարեդարձին: Այս մենագրության ստեղծման վրա հեղինակը, ինչպես ինքն է գրում, աշխատել է երկար տարիներ:

Սակայն մինչ սույն արժեքավոր գիրքը ներկայացնելը, օգտվելով Աճառյանի հոբելյանի առիճնող իրողությունից, ուզում ենք հակիրճ խոսել այն մասին, թե ինչ է արվել մեծավաստակ գիտնականի մահվանից հետո ընկած ժամանակահատվածում՝ հատկապես ծննդյան 125-ամյակի նշումից առ այսօր, նրա անտիպ երկերը լույս ընծայելու ուղղությամբ: Նախ ավստասանքով պիտի նշել, որ գիտության այդ մեծ երախտավորը տքնաջան աշխատանքով ստեղծած իր «ծովածավալ ու լեռնակուտակ» ժառանգության մի փոքր մասն է միայն տեսել տպագրված, իսկ ծանրակշիռ մասը հրատարակվել է հետմահու հիմնականում իր տաղանդավոր ուսանող, ապա ասպիրանտ, հետագայում ականավոր լեզվաբան, ակադեմիկոս Էդ. Աղայանի ջանքերով: Դեռևս 1950-ականներից ի վեր նրա խմբագրությամբ ու առաջաբաններով սկսվում են պարբերաբար տպագրվել Հր. Աճառյանի անտիպ երկերը: Դրանցից հիշատակության արժանի է ՀԽՍՀ ԳԱ հրատարակչության լույս ընծայած «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» դարակազմիկ աշխատությունը, որը բաղկացած է վեց սովորաբաժնավալ հատորներից, որոնցից միայն Ա հատորն է տպագրվել հեղինակի կենդանության օրոք (1952 թ.), իսկ մյուս հատորները լույս են տեսել 1954-1971 թթ. ընթացքում: Դրանցից «Ներածություն»-ը (1955 թ.) ընդգրկված չի հատորների հերթականությունը ներկայացնող թվահամարների մեջ, իսկ Դ հատորը բաղկացած է երկու առանձին մասերից: Բոլոր գրքերը միասին կազմում են ութ մեծածավալ հատոր:

Մյուս կոթողային աշխատությունը՝ «Հայերեն արմատական բառարան»-ը, ԵՊՀ հրատարակությամբ, չորս մեծադիր հատորներով լույս է տեսել 1971-1979 թթ. ընթացքում, որի ձեռագիրն ապակետիպ եղանակով բազմացվել է 1927-1935 թթ. ժամանակահատվածում յոթ հատորով, որոնցից վերջինը՝ VII-ը՝ տպագիր եղանակով: Այն ընդգրկում է ամբողջ բառարանի առաջաբանը, համառոտագրությունները, հավելվածն ու վերջաբանը: «Հայոց անձնանունների բառարան»-ի վերջին՝ V հատորը ևս տպագրվել է հեղինակի մահվանից հետո՝ 1962 թ., իսկ դրա I-IV հատորները լույս էին տեսել 1942-1948 թթ. ԵՊՀ «Գիտական տեղեկագրում»:

«Հայոց գրերը» ևս Հր. Աճառյանի մնայուն աշխատությունների քվին է պատկանում, որի առաջին բաժինը՝ «Սուրբ Մեսրոպի գրերու գիտի պատմութեան աղբիւրներն ու անոնց քննութիւնը», լույս է տեսել դեռևս 1907 թ. Փարիզում: Շարունակելով հարստացնել իր այդ աշխատությունը՝ Հր. Աճառյանը 1910-1921 թթ. «Հայոց գրեր» վերնագրով մաս առ մաս այն տպագրել է «Հանդէս ամսօրեայ»-ում, ապա՝ 1928 թ.՝ առանձին գրքով Վիեննայում: Հետագայում ևս Հ. Աճառյանը շարունակել է իր այս խոշոր մենագրության ստեղծման աշխատանքը և 1946 թ. «Էջմիածին» ամսագրի մի քանի համարներում տպագրել է որոշ հատվածներ, իսկ նրա մահից հետո՝ 1954-1956 թթ., դարձյալ նույն հանդեսի 13 համարներում «Մեսրոպ Մաշտոց» վերնագրով տպագրվել են այդ աշխատության առանձին գլուխներ: Այդ աշխատության մի մասը հետագայում՝ 1968 թ., «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայել «Հայոց գրերը» վերտառությամբ, իսկ ամբողջությամբ այն տպագրվել է 1984 թ. ԵՊՀ հրատարակչության կողմից ակադեմիկոս Էդ. Աղայանի «Երկու խոսք»-ով ու խմբագրությամբ: Նույնի խմբագրությամբ ու բարեփոխումներով է վերահրատարակվել նաև Հր. Աճառյանի «Գրաբարի ուսուցիչ» արժեքավոր ձեռնարկը 1954 թ., որի առաջին հրատարակչությունը կատարվել էր դեռևս 1935 թ. հեղինակի անմիջական հսկողությամբ ԵՊՀ հրատարակչության կողմից: Նույն հրատարակչության հիմնադրած «Հայագիտական հետազոտություններ» մատենաշարով 1976 թ. առանձին գրքով հրատարակվել են մեծանուն լեզվաբանի՝ բանասիրական բնույթի մանր ուսումնասիրությունները, որը կազմել են Ա. Գ. Մադոյանը և Ա. Գ. Տեր-Ստեփանյանը:

Սակայն պետք է նկատել, որ ակադեմիկոս Էդ. Աղայանի մահվանից հետո տեղի ունեցած հեղաբեկումների, ԽՍՀՄ փլուզման և երկրում առաջացած հասարակական-քաղաքական անկայուն վիճակի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական դժվարությունների ու ժողովրդի կենսամակարդակի կտրուկ անկման հետևանքով մի որոշ ժամանակ «լռություն» տիրեց Հր. Աճառյանի ձեռագրերի հրատարակության գործընթացում, որը բարեբախտաբար կարճ տևեց: Նոր հազարամյակի շեմին, երբ լրացավ հայագիտության մեծ երախտավորի ծննդյան 125-ամյակը, հոբելյանական այդ օրերին կրկին վերականգնվեց ու աշխուժացավ ընդհատված աշխատանքը, և Հր. Աճառյանի նկատմամբ մեծ սեր ու համակ-

րանք ունեցող բարերարների աջակցությամբ շարունակվեց նրա անտիպ երկերի հրատարակությունը: Այս անգամ դրա առաջին նախաձեռնողը եղավ Երևանի Հր. Աճառյանի անվան նորաստեղծ համալսարանի ռեկտոր, պրոֆ. Ա. Խաչատրյանը, որի հովանավորությամբ և պատմաբան, ակադեմիկոս Հր. Ավետիսյանի և լեզվաբան պրոֆ. Հովհ. Բարսեղյանի խմբագրությամբ ու առաջաբանով 2002 թ. տպագրվեց Հր. Աճառյանի «Հայ գաղթականության պատմություն» հանրագիտական բնույթի եզակի աշխատությունը: Դրանից անմիջապես հետո ամերիկահայ բարերար Հարություն Սիմոնյանի հովանավորությամբ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը 2003 թ. լույս ընծայեց Հր. Աճառյանի նամակների ժողովածուն: Այն հրատարակության էին պատրաստել մեծ գիտնականի դուստրը՝ Զ. Աճառյանը, որը նաև ժողովածուի առաջաբանի հեղինակն է, և թանգարանի գիտաշխատող Մելանյա Եղիազարյանը, խմբագրել է Արուս Բոյաջյանը: Հարկ է նշել, որ նամականու այդ հատորը նվիրված է Հր. Աճառյանի մահվան 50-րդ տարելիցին:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ ԵՊՀ հրատարակչությունը նույն տարում լույս ընծայեց Հր. Աճառյանի «Քննություն Կիլիկիայի բարբառի» ստվարաձավալ հատորը, որով գրեթե ամբողջացավ հայ բարբառները հետազոտող երախտավորի անխոնջ տքնանքի ու նվիրումի արդյունքը: Նրա կողմից ուսումնասիրված հայերենի 31 բարբառների նկարագրությունը ամբարված է թվով 15 ուսումնասիրություններում, որոնցից 11-ը լույս են տեսել առանձին գրքերով, իսկ 4-ը՝ տարբեր գիտական հանդեսների էջերում և «Հայկական գավառական բառարան»-ում (Թիֆլիս, 1913 թ., «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Թ): Դրանցից 14-ը հրատարակվել են հեղինակի կենդանության օրոք, այդ թվում 3-ը՝ ապակետիպ:

Նույն հիմնարկության միջոցներով ու դարձյալ ԵՊՀ հրատարակչությամբ 2004 թ. լույս է տեսել «Հայոց պատմություն՝ հյուսված ընդհանուր պատմության հետ» արժեքավոր մենագրությունը: Իսկ անցյալ տարի, դարձյալ նույն հիմնարկության հովանավորությամբ ու ԵՊՀ հրատարակչության կողմից տպագրվեց Հր. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» բազմահատորյակի վերջին՝ լրացուցիչ հատորը, որը տպագրության պատրաստել ու խմբագրել են ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսորներ Ս. Գալստյանը

և Խ. Բատիկյանը: Այս հատորը նախատեսված է եղել լույս ընծայել երեք սովորածավալ գրքերով՝ նվիրված հայոց լեզվի իմաստաբանությանը, բառաբանությանը և շարահյուսությանը: Փաստորեն, հայոց լեզվի լիակատար քրեականությունը, ըստ հեղինակի նախնական ծրագրի, պետք է բաղկացած լիներ 10 մեծածավալ հատորներից՝ 1. Ներածություն, 2. Չայնաբանություն, 3. Գոյական, 4. Ածական և Թվական, 5. Դերանուն, 6. Բայ, 7. Դերբայ, Նախադրություն, Մակբայ, Շաղկապ, 8. Շարահյուսություն, 9. Բառագիտություն և 10. Իմաստաբանություն:

Վերջին երեք հատորները հեղինակի հիվանդության ու տեսողության կորստի պատճառով մնացել են անավարտ: Դրանց նյութերը Հր. Աճառյանը չի հասցրել մշակել ու համակարգել: Ուստի այդ նյութերը հրատարակիչների կողմից կարգավորվել ու գետեղվել են հիշյալ լրացուցիչ հատորում, որը նույնիսկ չունի հերթական «VII» թվահամարը:

Այս տարի մասնագետների սեղանին դրվեց նաև մեծահամբավ լեզվաբանի մեկ այլ կարևոր աշխատություն՝ «Պարսից լեզվի պատմություն»-ը, որը հրատարակության է երաշխավորել հեղինակի անունը կրող համալսարանի գիտխորհուրդը, իսկ տպագրությունն իրականացրել է ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը: Գրքի տեքստը տպագրության պատրաստել ու ծանոթագրել է Զ. Աճառյանը, իսկ խմբագրումը կատարել է նույն համալսարանի Արևելագիտության և Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան, դոցենտ Վրեժ Փարսադանյանը:

Հր. Աճառյանը սոսկ լեզվաբանությամբ չէ, որ զբաղվել է: Նրա հետաքրքրությունների շրջանակը չափազանց լայն է և ընդգրկում է հայոց պատմություն, հայ մատենագրություն, հայ գրականության պատմություն, գրաբար և հայոց լեզվի պատմություն, բարբառագիտություն, ձեռագրագիտություն, աղբյուրագիտություն, վիմագրություն, բառարանագրություն, բանահյուսություն, արևելագիտություն, աշխարհագրություն և այլ գիտաճյուղեր, որոնցից մի քանիսի հիմնադիրն ու սկզբնավորողը մեզանում եղել է ինքը և դրանց հիմնահարցերին նվիրել է բազմաթիվ ուսումնասիրություններ ու հոդվածներ, որոնք մինչև այսօր էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքն ու նշանակությունը և կատարում են սկզբնաղբյուրի դեր:

Հր. Աճառյանը նաև զբաղվել է գեղարվեստական գրականությամբ, գրել է արձակ և չափածո գործեր (վեպ, պատմվածք, ակնարկ, ճամփորդական նոթեր, պոեմ, բանաստեղծություններ), դրամա («Տիգրան Բ») և այլն, կատարել է մի շարք թարգմանություններ հայերենից պարսկերեն (Հ. Պարոնյան) և պարսկերենից հայերեն (Ֆիրդուսի, Սաադի, Օմար Խայյամ): Այս ստեղծագործությունների ու թարգմանությունների մի մասը ժամանակին բեմադրվել ու տպագրվել է, իսկ չափածո գործերը լույս են տեսել վերջերս մամուլում և ԵՊՀ «Գրական համալսարան» ժողովածուի IX-X հատորներում: Միաժամանակ ավստրալիացի պետք է նշել, որ Հ. Աճառյանի գեղարվեստական ստեղծագործությունների մի զգալի մասը, այդ թվում և՛ «Արտաշես և Սաթենիկ» պոեմը, անհետացել է 1937 թ. նրա գործերը բռնագրավելուց ու նրան բանտարկելուց հետո: Հր. Աճառյանը խորհրդահայ իրականության մեջ առաջինն է եղել, որ հրատարակության է պատրաստել արևմտահայ հանճարեղ բանաստեղծ, վաղամեռիկ Պետրոս Դուրյանի երկերի ժողովածուն, որը լույս է տեսել 1947 թ.:

Հր. Աճառյանը անգուգական հուշագիր է և բնության պատկերներն ու տեղանքը գերազանց նկարագրող: Այդ է վկայում նրա «Կյանքիս հուշերից» գիրքը, որը լույս է տեսել նույնպես հետմահու՝ 1967 թ., ԵՊՀ «Միտք» հրատարակչության կողմից Էդ. Աղայանի խմբագրությամբ ու առաջաբանով: Հուշերի այս ծավալուն գիրքն առատ նյութ է պարունակում XIX դարի վերջի և անցյալ դարասկզբի գիտամշակութային կյանքի մասին: Հեղինակը, պատմելով իր ապրածի ու տեսածի մասին, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայ և օտարագրի գիտնականների ու հասարակական գործիչների վերաբերյալ, մանրակրկիտ անդրադառնում է իր գիտական աշխատությունները գրելու ու տպագրելու հանգամանքներին, նկարագրում է իր այցելած գավառներն ու երկրները, հայկական գաղթօջախները, հատկապես՝ Պարսկաստանի հայափոխ բնակավայրերը և այլն: Այս ամենով Հր. Աճառյանի հուշերի գիրքը բանասերների, պատմաբանների, աշխարհագետների ու ազգագրագետների համար ունի սկզբնաղբյուրի արժեք:

Մեծանուն գիտնականը հրապարակախոսությամբ նույնպես զբաղվել է. քանիցս անդրադարձել է հայկական հարցին, հողվածներ ու թղթակցություններ, նամակներ ու գրախոսականներ է գրել մամուլի



տարբեր օրգանների համար, ներկայացրել է իր ժամանակի մի շարք գիտնականների, գրողների ու մշակութային գործիչների կյանքն ու գործը, հանդես է եկել կոչերով ու դիմումներով՝ ուղղված սփյուռքահայությանը, տպագրել է հիշատակի խոսքեր կյանքից հեռացած գիտնականների մասին: Ահա այսպիսի անպարփակ գործունեություն է ծավալել հայագիտության մեծ երախտավորը, որի ստեղծած մի շարք մնայուն աշխատություններ էլ դեռ սպասում են իրենց հայրենաճակեր հրատարակիչներին:

Վերը ներկայացվածի մասին ավելի լիարժեք պատկերացում ենք կազմում, երբ ծանոթանում ենք պրոֆ. Խ. Բաղիկյանի հեղինակած մենագրությանը: Հայոց լեզվի ուսումնասիրությանը նվիրված բազմաթիվ աշխատությունների հեղինակ, ճանաչված գիտնական, պրոֆ. Խ. Բաղիկյանը ներկա գիրքը, որը հաջորդել է իր իսկ հեղինակած «Կոմիտասը ինչպիսին եղել է» (2002 թ.) ծավալուն աշխատությանը, կարծեք թե լեզվաբանի համար մի փոքր անսովոր ժանրի ու ոլորտի գործ է, սակայն երբ խորամուխ ենք լինում դրա բովանդակության մեջ, նկատում ենք, որ այդ գիրքը, որքան էլ լինի հանրամատչելի ու վերաբերի մշակութաբանությանը, անվերապահորեն արժանի է քաջալերանքի ու բարձր գնահատանքի: Ներկա գրքերը, մեր մշակույթի ու գիտության երախտավորների հանդեպ հեղինակի ունեցած յուրահատուկ սիրո ու մեծարանքի տուրք լինելուց բացի, կարծում ենք, մի շատ կարևոր առաքելություն ու կենսական խորհուրդ ևս ունեն: Հոգևոր կյանքի անկման ու արժեքների աննախադեպ անտեսման մեր այս ժամանակներում մեծերի կենսագրությանն ու գործունեությանը նվիրված մանօրինակ գրքերը թերևս երիտասարդության համար կարող են լինել բարոյականության ու առաքիճության ուսանելի ու հետաքրքիր դասեր: Եվ այս առումով հազիվ թե գտնվի մեկ այլ՝ ավելի ուսանելի օրինակ, քան Հր. Աճառյանի նման մեծ գիտնականի ապրած կյանքն է ու ստեղծած վիթխարի ժառանգությունը: Հր. Աճառյանն էլ Կոմիտասի նման ժամանակին հրաժարվել է Փարիզի Սորբոնի համալսարանում մնալու և աշխատելու, ինչպես նաև Պետերբուրգում պաշտոնավարելու և բարեկեցիկ կյանքով սպրելու առաջարկներից՝ գերադասելով «աղքատ ուսուցչի» դեգերումներով ու զրկանքներով լի ուղին իր հայրենի երկրում: Ե՛հիշտ նույն կերպ էլ Բեռլինի արքայական կոնսերվատորիայի փայլուն շրջանավարտ Կոմիտասն էր ժամա-

նակին մերժել Բեռլինի օպերայի տնօրենի՝ բարձր աշխատավարձով իր ղեկավարած օպերայի մեներգչի դերը ստանձնելու և իր մոտ աշխատելու առաջարկը՝ ասելով, որ ինքը գերադասում է վերադառնալ իր հայրենիք և ծառայել իր թշվառ ժողովրդին: Կոմիտասը և Հր. Աճառյանը, որոնք մեր ազգի անգուգական մեծություններից են, ահա այսպես, Եվրոպայում ստանալով բարձրագույն հիմնարար կրթություն, նախընտրում են վերադառնալ Հայաստան և իրենց ուժերն ու կարողությունները նվիրաբերել հայ մանուկների կրթության ու դաստիարակության գործին, ծառայել հայրենի գիտության ու մշակույթի առաջընթացին: Այստեղ էլ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում աշխատելու տարիներին խոր մտերմությամբ ու անկաշառ բարեկամությամբ կապված են եղել նրանք միմյանց հետ: Եվ պատահական չեն նրանց կենսագրության այս համանման փաստերը, որոնք իր կյանքում վկայակոչում է պրոֆ. Խ. Բաղիկյանը: Մեծ գիտնականի ապրած կյանքի ուղին գիտության սեմին նոր ոտք դրած ամեն մի երիտասարդի համար անփոխարինելի ուղեցույցի դեր կարող է կատարել:

Հր. Աճառյանի մասին գրելը իրոք բավականին դժվար է: Համակողմանիորեն բնութագրել Աճառյան մարդուն ու գիտնականին, վեր հանել նրա հարուստ կենսագրությունը, ստեղծել նրա հմայիչ կերպարը՝ լուրջ և բարդ խնդիր է, որը կարողացել է պատվով լուծել երկարամյա դասախոս Խ. Բաղիկյանը: Նա հաղթահարել է բազմաթիվ դժվարություններ, ուսումնասիրել Աճառյանի բոլոր աշխատությունները, նամակները, անտիպ երկերը, հատկապես՝ «Կյանքիս հուշերից» գիրքը, նրա մասին գրված հարյուրավոր հոդվածներն ու ուսումնասիրությունները, ժամանակակիցների հուշերն ու վկայությունները, բազմաթիվ արխիվային վավերագրեր և այլ սկզբնաղբյուրներ: Հենվելով դրանց վրա՝ հեղինակը կարողացել է կերտել Հր. Աճառյանի վեհ կերպարը՝ նրան հատուկ բոլոր առաքինություններով հանդերձ: Տարիներ ի վեր նա աշխատել է մեծ գիտնականի անվանը, հեղինակությանն ու վաստակին արժանի մենագրություն ստեղծելու վրա, որը և հաջողվել է նրան:

Գիրքը բացվում է Երևանի Հր. Աճառյանի անունը կրող համալսարանի ռեկտոր, պրոֆ. Ա. Խաչատրյանի հակիրճ, բայց և տարողունակ խոսքով, որը նա ասել է սրանից հինգ տարի առաջ՝ մեծ հայագետի ծննդյան 125-ամյակին նվիրված հանդիսության ժամանակ: Դրան հա-

ջորդում է մենագրության առաջին մասը, որն ունի «Աճառյան մարդը» ընդհանուր վերտառությունը: Այստեղ հեղինակը մանրամասն տեղեկություններ է հաղորդում Հր. Աճառյանի նախնիների ու ծնողների, մանուկ Հրաչյայի առաջին կուրության ու ապաքինման, նրա մանկության ու պատանեկության և Սամաթիայի թաղային ու Պոլսի Կեդրոնական վարժարաններում ուսումնառության մասին: Նա անդրադառնում է «լեզուների հրաշամանուկի» մանկավարժական գործունեությանը Պոլսի հայոց դպրոցներում ու Կարինի Սանասանյան վարժարանում, ուշի-ուշով հետամուտ է լինում նրա գիտական առաջին քայլերին ու պրպտումներին: Այնուհետև մենք պատանի Աճառյանին տեսնում ենք Փարիզում՝ որպես Սորբոնի համալսարանի ուսանող, խոշոր հայագետ Անտուան Մեյեի սան, իսկ դրանից երեք տարի անց՝ Ստրասբուրգում՝ որպես Հայնրիխ Հյուբշմանի դասախոսությունների ունկնդիր: Այդ տարիներին է, որ Հր. Աճառյանը կրում է անբավ դժվարություններ ու գրկանքներ: Ուսումնառության ընթացքում Փարիզում իր հանապազօրյա ապրուստը հոգալու ու «մի կտոր չոր հաց» ճարելու համար նա ինչ ասես, որ չի անում. աշխատում է որպես լրագրավաճառ ու կինոյի հայտագրեր ցրող, վագոններ ավլող ու լվացող, արախիս (գետնանուշ) վաճառող ու կոշիկ մաքրող: Այդ նույն շրջանում է, որ նա հանուն բարեգործության մի հնավաճառի 20 ֆրանկով ծախում է իր անկողինը, և ինքը երկար ժամանակ քնում է խցի քարե պաղ հատակին՝ գլխի տակ որպես բարձ դնելով գրքերը:

Այդ «ճախորդ օրերին» այնուհետև փոխարինում են Անդրկովկասում, Ռուսաստանում ու Պարսկաստանում աշխատելու դժվարին տարիները: Այդ շրջանում նա ուսուցչություն է անում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որտեղ էլ հանդիպում է Կոմիտասին ու Նիկողայոս Մառին, Շուշիի թեմական դպրոցում, որտեղ հյուրընկալում է իր ուսուցչապետ Անտուան Մեյեին, ապա՝ ամուսնանում Արուսյակի հետ: Շուշիի դպրոցի փակվելուց հետո՝ 1904 թ., մեկնում է Բաթում՝ ծնողների մոտ, ապա հրավիրվում է Նոր Բայազետ ուսուցչության, որտեղից էլ մեկնում է Թավրիզ՝ որպես ուսուցիչ աշխատելու: Թավրիզից 1906 թ. Նոր Նախիջևանում աշխատելու հրավեր է ստանում, ուր և մեկնում է ու 12 տարի ուսուցչություն անում տեղի հայկական դպրոցում: Այստեղ էլ նա 1910 թ. կորցնում է հորը: 1914 թ. սկսվում է Առաջին համաշխարհային պատե-

րագմը, ապա՝ Հայոց մեծ եղեռնը, Հոկտեմբերյան հեղափոխությունը, որոնք մեծ փոփոխություններ են մտցնում Հր. Աճառյանի կյանքում, դարձնում այն սուսկալի դժվար: 1918 թ. նա ուսուցչական աշխատանքի է հրավիրվում Թեհրան: Նա Նոր Նախիջևանից Բաքվի վրայով, մագապուրծ լինելով այնտեղ սկսված հայերի սպանողից, կրկին մեկնում է Պարսկաստան՝ ճանապարհին Էնզել քաղաքում տեղավորելով կոտորածից փրկելու համար իրեն վստահված 200-ից ավելի հայ որբ մանուկներին, անցնում է Թեհրան, մի կարճ ժամանակ անց այնտեղից էլ նորից մեկնում է Թավրիզ: Պարսկաստանում գտնվելու ժամանակ հայ բարբառներ գրի առնելու նպատակով լինում է Ռաշտում, Ղազվինում, Սպահանում, Մարաղայում, Նոր Ջուղայում և հայաբնակ այլ վայրերում:

1918 թ. իրականանում է աշխարհասփյուռ հայության երագանքը՝ ստեղծվում է Հայաստանի առաջին հանրապետությունը: 1919 թ. մայիսին հիմնադրվում է հայկական առաջին համալսարանը Երևանում, որն իր պարապմունքները սկսում է Գյումրիում, իսկ 1920 թ. նոյեմբերին Հայաստանը դառնում է Խորհրդային Հանրապետություն և շարունակում է ընդհատված համալսարանի գործունեությունը՝ վերանվանելով այն ՀՍԽՀ ժողովրդական համալսարան: Նույն տարվա դեկտեմբերին Հր. Աճառյանը Թավրիզից հրավիրվում է այդ համալսարանում աշխատելու: Սակայն հանգամանքների բերումով նա չի կարողանում գալ Հայաստան, իսկ 1921 թ. Պոլսում վախճանվում է մայրը, և Աճառյանն ընկնում է ծանր կացության մեջ: Նա հայրենիք է վերադառնում երկրորդ հրավերից հետո՝ 1923 թ., և այնուհետև՝ մինչև իր կյանքի վերջը, աշխատում է Երևանի պետական համալսարանում՝ կրթելով ու դաստիարակելով հարյուրավոր նշանավոր հայագետների:

Այստեղ էլ Հր. Աճառյանի կյանքը խաղաղ չի անցել. 1925 թ. վախճանվել է կինը, ինչը մեծ կորուստ ու վիշտ էր նվիրյալ ամուսնու համար: Նա երկրորդ անգամ ամուսնանում է սիրասուն Արուսյակի մահվանից տասը տարի անց՝ 1935 թ., տիկին Սոֆիայի հետ: 1937 թ. սեպտեմբերի 29-ին ձերբակալվում և կալանավայրում մնում է մինչև 1939 թ. դեկտեմբերի 19-ը: 1949 թ. հունիսից մինչև 1950 թ. ապրիլը՝ շուրջ մեկ տարի, Հր. Աճառյանը հեռացված է եղել համալսարանից լեզվի մասին Ն. Մառի նոր ուսմունքը չընդունելու պատճառաբանությամբ, ապա վերականգնվել է, իսկ 1953 թ. մարտին հիվանդացել է, տեսողությունը լրիվ կորցրել և

նույն թվականի ապրիլի 16-ին՝ վախճանվել: Թաղված է Երևանի քաղաքային գերեզմանատան պանթեոնում:

ԵՊՀ-ում Հր. Աճառյանը կատարել է վիթխարի աշխատանք: Այստեղ է ստեղծվել նրա կոթողային աշխատությունների մեծ մասը, որոնցից տպագրված տեսել է մի քանիսը միայն, այդ թվում՝ «Հայոց լեզվի պատմություն» անգուգական երկհատորյակը և այլ դասագրքեր: Այստեղ նա 1924 թ. արժանացել է պրոֆեսորի գիտական կոչման, 1933 թ.՝ առանց ատենախոսություն պաշտպանելու, նրան շնորհվել է գիտությունների դոկտորի գիտական աստիճան և գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում, իսկ 1943 թ. ընտրվել է ՀԽՍՀ նորաստեղծ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ՝ ակադեմիկոս: Նա անդամ էր նաև Փարիզի լեզվաբանական ընկերության և Արևելագետների XI միջազգային կոնգրեսի (1897 թ.), քրթակից անդամ՝ Չեխոսլովակիայի արևելյան ինստիտուտի գիտական բաժնի (1927 թ.) և այլն: Նրա աշխատությունները տպագրվել են Պոլսում, Փարիզում, Վենետիկում, Վիեննայում, Վաղարշապատում, Նոր Նախիջևանում, Թեհրանում, Թավրիզում, Նոր Ջուղայում, Թիֆլիսում, Բեյրութում, Երևանում և այլուր, որոնցից մի քանիսն արժանացել են բարձր մրցանակների:

Մենագրության երկրորդ մասը, որ կրում է «Աճառյանի գիտական ժառանգությունը» վերտառությունը, ներկայացնում է մեծ հայագետի բազմաթիվ աշխատությունների վերլուծությունը: Այստեղ երևան են հանված Հ. Աճառյանի մեծությունն ու թողած վաստակի մնայուն արժեքը: Իսկ գիրքն ամբողջությամբ լիարժեք պատկերացում է տալիս Աճառյան մարդ-քաղաքացու ու մանկավարժ-գիտնականի մասին: Ընթերցելով այն՝ հաղորդակցվում ես նրա մարդկային կերպարի, բնավորության գծերի, շրջապատող իրականության ու հարազատ մարդկանց հետ, մտնում նրա լուսավոր կերպարի կենսակերպի մեջ: Ընթերցողը մեկ անգամ ևս համոզվում է, որ իսկական մեծությունները երկրային մանր կրքերից ու հաշիվներից վեր կանգնած անհատականություններ են, որոնք կյանքի իմաստավորումը տեսնում են ժողովրդին ու հայրենիքին, գիտությանն ու մշակույթին անմնացորդ ծառայելու մեջ: Հր. Աճառյանը ճիշտ այդպես իր ողջ կյանքը նվիրել է իր ժողովրդին ու հայագիտության զարգացմանը, եղել է իսկական արժանիքները գնահատող ու դավանող,

անհավակնոտ ու անփառասեր, անշահախնդիր ու անկաշառ, վեհանձն ու սկզբունքային և միաժամանակ չափազանց համեստ ու բարի մարդ:

Մենագրության բովանդակությունն ավելի են հարստացնում ու գիտական արժեք տալիս նրանում գետեղված Հր. Աճառյանի և իր ծնողների ու հարազատների, մտերիմների ու բարեկամների, ուսուցիչների ու գործընկերների, լավագույն ուսանողների ու ասպիրանտների անհատական ու խմբակային լուսանկարները, նրա ձեռագրերի ու անձնական իրերի լուսապատճենները: Գրքի վերջում գետեղված են նաև մի քանի ցանկեր, որոնք ներկայացնում են մեծ հայագետի կյանքի տարեգրությունը, նրա ստացած գիտական մրցանակների մասին տեղեկություններ, տարբեր մարդկանց կարծիքները, գնահատանքի խոսքերն ու բնութագրումները, Աճառյանի մասին ցարդ հրապարակված հոդվածների ու ուսումնասիրությունների մատենագիտությունը և այլն, որոնց մեծագույն մասը վկայակոչվել ու օգտագործվել է մենագրության մեջ:

Նշենք նաև, որ ընթերցողը գրքի առաջին իսկ էջերից հրապուրվում է հեղինակի ընտրած գրելաճոճով, որը, գերծ լինելով ակադեմիականությունից, ունի գեղարվեստական խոսքի առատ տարրեր: Հեղինակը դեպքերն ու եղելությունները, դեմքերն ու իրադարձությունները ներկայացնում է քեթև ու սահուն լեզվով՝ համեմված ժողովրդական բառ ու բանով: Նրա խոսքը, պատումը գերծ են ավելորդություններից ու գունագարդումներից, կենդանի են ու բնական, պարզ են ու անպաճույճ: Սակայն միաժամանակ պետք է նշել, որ գիրքն ունի թերություններ, նրանում նկատվում են վրիպումներ ու վրիպակներ, լեզվաճական որոշ շեղումներ ու անհարթություններ, ինչպես նաև անճշտություններ. որոնց վրա չենք ուզում կանգ առնել, քանի որ դրանք չեն նսեմացնում սույն մենագրության կարևոր արժեքն ու գիտաճանաչողական նշանակությունը:

Գիրքը հրատարակվել է Հր. Աճառյանի անունը կրող համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ, և տպագրությունն իրականացվել է նույն համալսարանի հովանավորությամբ:

## ԿՈՌՈՂԱՅԻՆ ՄԻ ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅՈՒՆԸ

Հայ հանճարեղ լեզվաբան Հրաչյա Աճառյանի թողած գիտական ժառանգությունն այնքան հարուստ ու բազմազան է, որ հեղինակն իր կենդանության օրոք բախտ չի ունեցել այն ամբողջությամբ հրատարակված տեսնելու: Նրա աշխատությունների մի զգալի մասը տպագրվել է իր մահից հետո միայն: Եվ այսօր, երբ Հր. Աճառյանի մահից անցել է ուղիղ կես դար, նրա մի շարք ատվար հատորներ դեռևս ապաստում են իրենց լույս աշխարհ գալուն:

Դրանցից մեկն է «Հայ գաղթականության պատմություն» մեծածավալ գիրքը, որը տպագրվել է այս տարի Երևանի Հրաչյա Աճառյանի անվան համալսարանի կողմից և նրա հովանավորությամբ: Այն խմբագրել են ճանաչված գիտնականներ, պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հր. Ավետիսյանը և լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Հովհ. Բարսեղյանը, իսկ ձեռագիրը խնամքով հրատարակության է պատրաստել մեծանուն գիտնականի դուստրը՝ Քնարիկ Աճառյանը:

Ժամանակակիցների ու իր սաների վկայությամբ մեծ լեզվաբանը ոչ մի օր ու ժամ աննպատակ ու անիմաստ չի անցկացրել: Նա սովորություն է ունեցել իր տեսած, կարդացած կամ լսած ամեն ինչի մասին իր համար գրառումներ կատարելու իր մոտ պահվող փոքրիկ թերթիկների վրա: Աճառյանն այդպես շարունակ գրառել է շատ արժեքավոր մտքեր ու բառեր, պատմական փաստեր ու վկայություններ՝ հետագայում դրանք վերլուծելու, ի մի բերելու, բացատրելու և գիտական շրջանառության մեջ դնելու նպատակով:

Այդպես է ստեղծվել և այս կոթողային աշխատությունը, որի հակիրճ «Յառաջաբան»-ում հեղինակը գրում է. «Հարկ համարեցի նորեն կարդալ ամբողջ հին հայ մատենագրութիւնը, հին ձեռագիրներու յիշատակարանները, զանազան արձանագրութեանց և տապանաքարերու հաւաքածոները, հին և միջնադարեան հեղինակներու գրած բազմաթիւ տաղերը և նոր ժամանակի լրագրութիւնը: Իմ բազմաթիւ ճամփորդութեանց ժամանակ օգուտ քաղեցի տեղական արանդութիւններէ, լսեցի նոր ժամանակներու պատմական դէպքերը, իսկ նորագոյն ժամանակնե-

րուն ինքս իսկ ականատես եղայ, և այս բոլորին արդիւնքը ամփոփեցի աշխատութեանս մէջ»:

Այս ծանր աշխատանքին զուգընթաց՝ հեղինակը ստիպված է եղել ուսումնասիրել նաև այն երկրների պատմությունը, որտեղ ստեղծվել են այդ գաղթօջախները, «որովհետև գաղթականութեան կեանքը սերտ կերպով կապուած է անոնց երկրին կեանքին հետ, տեղ-տեղ հարկ եղաւ համառօտի ուրուագծել նոյն երկրին պատմութիւնը: Ամէն մի երկրին գաղթականութեան պատմութեան վերջը հարկաւոր համարեցի դնել իր համառօտ վիճակագրութիւնը՝ որ իր ներկայ կացութեան պատկերը կը ներկայացնէ»:

Գիրքը բացվում է այս հրատարակության գլխավոր խմբագիրներից պրոֆ. Հովհ. Բարսեղյանի «Երկու խոսք»-ով, որում հեղինակը հանգամանորեն ներկայացրել է իր տեսակի մեջ եզակի և չափազանց կարևոր այս աշխատության ստեղծման ու լույս աշխարհ գալու հանգամանքներն ու մանրամասները, բացահայտել նրա արժեքը հայ գաղթօջախների ամբողջական պատմության ստեղծման համար:

Այս հակիրճ, բայց և տարողունակ խոսքին հաջորդում են Հր. Աճառյանի արդեն վերը հիշատակված «Յառաջաբան»-ն ու «Մուտք»-ը: Վերջինիս մեջ հեղինակը շարադրել է գաղթականության և գաղթօջախների ստեղծման խնդիրների վերաբերյալ իր տեսակետները: «Գաղթականութիւն կը կոչուի ազգի մը ամբողջական կամ մասնական հատուածներուն տեղափոխութիւնը՝ մշտական բնակութիւն հաստատելու նպատակով,- գրում է Աճառյանը:- Գաղթականութիւնը ըստ տեղոյ, ըստ եղանակի, ըստ պատճառի, ըստ ձևի և ըստ քանակի կը բաժնուի զանազան տեսակներու»:

Հեղինակի հավաստմամբ՝ «Ըստ տեղոյ՝ գաղթականութիւնը կ'ըլլայ չորս տեսակ՝ ներսէն ներս, ներսէն դուրս, դուրսէն ներս և դուրսէն դուրս: Ներսէն դուրս կը կոչինք գաղթը, երբ ժողովուրդ մը, իր երկիր թողնելով, ուրիշ երկիր մը կը հաստատուի, դուրսէն դուրս կը կոչուի, երբ արտաքին գաղթականութիւն մը ուրիշ երկիր կը դիմէ: Ներսէն ներս գաղթը՝ երբ միևնոյն երկրին մէջ դեգերել տեղափոխութիւն մը կայ. իսկ դուրսէն ներս կ'ըսուի գաղթը, երբ նախկին հատուածեալ մաս մը՝ պարագաներու բերմամբ իր երկիրը կը դառնայ: Հայերս հարուստ ենք մանաւանդ ներսէն դուրս գաղթականութեամբ, որմէ անբաժան է դուրսէն դուրս գաղթը:



Կան նաև շատ ներսէն ներս գաղթեր, բայց դուրսէն ներս գաղթը հազուագիւտ երևոյթ մ'է մեզ համար: Մեր գաղթականութեան պատմութեան մէջ մենք պիտի զբաղուինք առաջին, այսինքն՝ բուն գաղթականութեամբ»:

Ապա հեղինակը գաղթերը ներկայացնում է ըստ եղանակի, որոնք լինում են կամավոր կամ բռնի, ըստ տարածման, երբ գաղթականները միշտ կապ են պահպանում հայրենիքի հետ, և դրան հակառակ՝ ըստ անջատման, երբ նրանք կտրված են լինում հայրենիքից և դատապարտված կորստյան, ըստ քանակի, որոնք լինում են անհատական կամ խմբային: Այս ամենին հետևում են հեղինակի հստակ ու սպառնալի բացատրությունները՝ հայկական կյանքից վերցված բնորոշ օրինակներով:

Մուտքի այս խոսքում տրվում են հայ գաղթականության չորս ուղղությունները, որոնք ունեն չորս գիծ, և, ըստ Հր. Աճառյանի, այդ գծերն են՝ հյուսիսային, հարավային-արևելյան, հարավային-արևմտյան և արևմտյան: Հետևելով այդ ուղղություններին՝ նա իր աշխատությունը բաժանել է չորս մասի, որոնցում ներկայացրել է հայ գաղթօջախների պատմությունը տարածական և ժամանակային առումներով:

Տարածական առումով, կարելի է ասել, Աճառյանն իր պատմության մէջ ընդգրկել է գրեթե բոլոր երկրները, իսկ ժամանակային առումով ներկայացրել է հայ գաղթականության անցած պատմական ուղին: Նա իր գրքում ըստ ժամանակագրության հյուսում է աշխարհի չորս ծագերի շուրջ 60 երկրներում հայ գաղթօջախների առաջացման պատմությունը, ներկայացնում դեպի այդ երկրները հայերի արտահոսքի սկզբնավորման մանրամասները՝ ցույց տալով նաև դրա հիմնական դրդապատճառները:

Աճառյանը չի անտեսել ոչ մի երկիր ու քաղաք, նույնիսկ որևէ աննշան բնակավայր, որտեղ ապրել են մի քանի հայ ընտանիքներ կամ թեկուզ երկու հայ: Նա նույնիսկ նշում է այդ մարդկանց անուն-ազգանունները: Խորամուխ լինելով գրքում բերված փաստերի մէջ՝ մեկ անգամ ևս համոզվում ես, որ մեծանուն լեզվաբանը քաջատեղյակ է նաև հայոց պատմության, այս պարագայում՝ հայ գաղթականության և գաղթօջախների առաջացման, բարգավաճման, հաճախ՝ նաև դրանց մարման ու ձուլման մանրամասներին:

Հեղինակը եվրոպական մի շարք երկրների օրինակով ցույց է տալիս, որ այդ վայրերում հայ գաղթօջախներ գոյություն են ունեցել դեռևս անհիշելի ժամանակներից, սակայն դրանք դարերի ընթացքում մարել և հետագայում նորից են հիմնվել: Աճառյանը, հայ հին մատենագրությունից և օտար աղբյուրներից քաղելով հավաստի տեղեկություններ, մեզ համար վերականգնել է այդ անհետացած գաղթավայրերի երբեմնի ամբողջական պատկերը և միաժամանակ ներկայացրել նոր առաջացածները:

Յուրաքանչյուր գաղթօջախի անդրադառնալիս հեղինակը ներկայացրել է նաև այդ երկրի համառոտ պատմությունը՝ ցույց տալով հայերի խաղացած նշանակալից դերն իրենց ապրած երկրների առևտրատնտեսական, ռազմաքաղաքական և գիտամշակութային կյանքում՝ նրանց մասին հաղորդելով կենսագրական տեղեկություններ:

Հր. Աճառյանն այս գործի վրա աշխատել է երկար տարիներ, գրել է տարբեր վայրերում և հին ու նոր ուղղագրություններով, նաև արևմտահայերեն ու արևելահայերեն, տեղ-տեղ՝ նույնիսկ գրաբար, մի բան, որը բնագրային ու գրաբանության տեսակետից գիրքը դարձնում է եզակի երևույթ:

Երբ հեղինակը 1910-ական թվականներին շարադրում էր այս աշխատանքը, հայ գաղթօջախների մասին գրեթե ոչ մի ամբողջական գործ չկար, և, փաստորեն, նա առաջինն է զբաղվել հայոց գաղթականության ամբողջական պատմության ստեղծման հարցերով՝ ստեղծելով մի համապարփակ աշխատանք, որն այսօր էլ՝ գրվելուց շուրջ մեկ դար անց, չի կորցրել իր կարևորությունը և ունի սկզբնաղբյուրի արժեք:

Անհրաժեշտ է նաև նշել, որ գիրքը լույս է տեսել ակադեմիական պատշաճ տեսքով ու գիտական բարձր մակարդակով, ունի Հր. Աճառյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող հազվագյուտ լուսանկարների ներդրումներ: Մակայն չենք կարող չնշել սրբագրական բնույթի բազմաթիվ վրիպակների և սխալների, թվագրման անճշտությունների ու վրիպումների մասին, որոնց մի զգալի մասը գոնե պետք է մի վերջին ուշադիր ընթերցմամբ և գրքին կցված վրիպակների ցանկով ուղղվեր: Մի բան, որը ցավոք չի արվել:

Ամփոփելով ասենք, որ պետք է ըստ արժանվույն գնահատել Երևանի Հրաչյա Աճառյանի անվան համալսարանի ռեկտոր, բանասի-

րական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ավագ Խաչատրյանի նախա-  
ձեռնությունը Հր. Աճառյանի այս կոթողային աշխատությունը հրատա-  
րակելու գործում, որով կորստից փրկվել և գիտական լայն հասարակա-  
յան սեփականությունն է դարձել այս չափազանց կարևոր գիրքը:  
Հուսով ենք, որ նա առաջիկայում ևս նույն պատրաստակամությամբ  
կնպաստի մեծանուն հայագետի անտիպ մնացած մյուս աշխատություն-  
ների, մասնավորապես՝ «Պարսից լեզվի պատմություն» և «Կիլիկիայի  
բարբառը» արժեքավոր ու մեծածավալ հատորների տպագրությանը:

### **«ՉԱՐԵՆՑՅԱՆ ԸՆԹԵՐԳՈՒՄՆԵՐ»**

Քառորդ դար առաջ՝ մեր հարյուրամյակի հայ խոշորագույն բա-  
նաստեղծ ու մտածող Եղիշե Չարենցի ծննդյան 75-ամյակի օրերին,  
Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի  
խորհրդահայ՝ ներկայումս հայ նորագույն գրականության ամբիոնի նա-  
խաձեռությամբ անցկացվեց «Չարենցյան ընթերցումներ» անունը կրող  
անդրանիկ գիտաժողովը, որն այդուհետև դարձավ ավանդական: Այդ  
գիտաժողովներում կարդացված գեկուցումները Երևանի համալսարանի  
հրատարակչության կողմից սկսեցին լույս ընծայվել առանձին գրքերով,  
որոնք հենց գիտաժողովի անունով էլ կոչվեցին՝ «Չարենցյան ընթեր-  
ցումներ»:

Մինչև վերջերս տպագրվել էր «Չարենցյան ընթերցումներ» ժողո-  
վածուի հինգ հատոր, որոնցից 1-ինը՝ 1973 թ., 2-րդը՝ 1974 թ., 3-րդը՝ 1977  
թ., 4-րդը՝ 1979 թ., և 5-րդը՝ 1988 թ.:

Հիշյալ հոդվածների ժողովածուի հոբելյանական 6-րդ գիրքը դար-  
ձյալ Երևանի համալսարանի հրատարակչությամբ լույս տեսավ այս  
տարի և նվիրված է մեծ բանաստեղծի ծննդյան 100-ամյակին:

1997 թ. աշնանը մեծ հանդիսավորությամբ նշվեց Եղիշե Չարենցի  
ծննդյան դարալիցը: Այդ առթիվ տեղի ունեցան հոբելյանական նիստեր,  
գիտական նստաշրջաններ ինչպես Հայաստանի գիտությունների ազ-  
գային ակադեմիայում, այնպես էլ հանրապետության տարբեր բուհե-  
րում ու գիտահետազոտական հաստատություններում: Իսկ Երևանի պե-  
տական համալսարանում հայ նորագույն գրականության ամբիոնի նա-

խածնունդամբ տեղի ունեցավ ավանդական «Չարենցյան ընթերցումներ» գիտաժողովը:

«Չարենցյան ընթերցումներ» ժողովածուի նոր լույս տեսած 6-րդ հատորի հիմքում ընկած են այդ նստաշրջանում կարդացված գեկուցումները, ինչպես նաև Ալ. Սպենդարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճում 1997 թ. հոկտեմբերի 26-ին տեղի ունեցած հորեյանական հանդիսավոր նիստի ելույթները:

Ժողովածուն բաղկացած է երկու բաժնից: Առաջինն ընդգրկում է հորեյանական երեկոյի ընթացքում հնչած ելույթները, որոնցով հանդես են եկել անվանի գրողներ ու գրականագետներ, պետական ու մշակութային գործիչներ (Հրանտ Մաթևոսյան, Հրանտ Թամրազյան, Էդվարդ Ջրբաշյան, Անդրեյ Բիտով, Տիգրան Մանսուրյան, Պողոս Սնապյան, Ալիսիա Կիրակոսյան, Գլիվ Շահնագ, Չահրատ, Վիկտոր Կոչևսկի, Դավիթ Հովհաննես, Ազատ Մաթյան, Մարիո Բելլոնե): Ելույթ ունեցողները, օգտվելով հորեյանական պատեհ առիթից, իրենց սրտի խոսքում գնահատելով Չարենցի տաղանդը, նրան համարեցին XX դարի ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության խոշորագույն ներկայացուցիչ: Չարենցը, ըստ նրանց գնահատման, խոր հետք է թողել գրականության մեջ: Նրա ստեղծագործությունները թարգմանվել ու թարգմանվում են աշխարհի շատ ժողովուրդների լեզուներով՝ դառնալով նաև նրանց սեփականությունը: Այս առումով իրավացիորեն նշվեց, որ գնալով մեծանուն են աշխարհի առաջադեմ մտավորականության սերն ու հարգանքը, հետաքրքրությունը հայ ազգի և նրա մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի նկատմամբ:

Ժողովածուի երկրորդ բաժնում զետեղված են «Չարենցյան ընթերցումներ» գիտաժողովում կարդացված գեկուցումները, որոնք թվով ինն են: Դրանք են՝ Հր. Հովհաննիսյանի «Եղիշե Չարենց տրագիգմը», Հր. Թամրազյանի «Վերածնության և մեծ ճանապարհի պտեզիան», Վ. Գաբրիելյանի «Չարենցի «ներկայությունը» 1937-1954 թթ.», Ժ. Քալանթարյանի «Ինչպես վկան էր մեր հին՝ Նարեկացին», Գ. Անանյանի «Եղիշե Չարենցը Նիկոլ Աղբալյանի գնահատությամբ», Լ. Եգեկյանի «Չարենցի «Տաղարան» շարքի խոսքարվեստը», Ա. Ավագյանի «Եղիշե Չարենց-Կոստան Չարյան առնչություններից», Ս. Գրիգորյանի «Լատիներեն թևավոր խոսքերը Չարենցի ստեղծագործության մեջ» և Հր.

Բայրամյանի «Չարենցը և վրաց իրականությունը»: Նշվածներին ավելացվել է հայ գրականության ամբիոնի պրոֆեսոր Ս. Մուրադյանի «Միամանրո-Չարենց գրական ազգակցությունը» աշխատանքը, որը նա գրել է չարենցյան հորեյանի առնչությամբ, բայց կարդացել է այդ օրերին տեղի ունեցած մեկ այլ գիտաժողովում:

Հիշյալ նյութերում վեր են հանվել մեծ բանաստեղծի կյանքի ու գործունեության, նրա գրական հարուստ ժառանգության այլևայլ կողմերը, նորովի են գնահատվել մի շարք ստեղծագործություններ, հատկապես նորահայտ էջերը:

Գիրքը հրատարակության է ներկայացրել ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնը: Խմբագիրներն են ՀԳԱԱ ակադեմիկոս Հր. Թամրազյանը և պրոֆ. Վ. Գաբրիելյանը:

«Չարենցյան ընթերցումների» սույն՝ 6-րդ գիրքը նախորդ հրատարակությունների հետ, չարենցագիտությունը հարստացնելուց զատ, մի գեղեցիկ պսակ է՝ նվիրված մեծ բանաստեղծի դարակազմիկ հորեյանին և մահվան 60-ամյա տարելիցին:

### **ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻ «ԱՆԱՀԻՏԸ»**

ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍԸ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1999, 228 էջ:

Հայ մամուլն իր ավելի քան երկդարյա գոյության ընթացքում ունեցել է այնպիսի եզակի հրատարակություններ, որոնք իրենց ծնունդով նոր էջ են բացել մեր մշակութային կյանքի տարեգրության մեջ: Եթե հեռավոր Հնդկաստանի Մադրաս քաղաքում 1794 թ. լույս տեսած «Ազդարարը» հայ մամուլի ու հրատարակախոսության սկիզբն ազդարարեց ի լուր աշխարհի, ապա նրանից հետո՝ մինչև այժմ տպագրված շուրջ 4000 ամուն աշխարհափյուռ թերթերի ու հանդեսների շարքում կարելի է առանձնացնել մի քանի տասնյակի հասնող պարբերականներ, որոնք մեր մշակույթի ու հասարակական-քաղաքական մտքի զարգացման կարևոր շրջափուլերն են սահմանագծել և սերունդների հիշողության մեջ մնացել որպես հեռվից լուսավորող մշտավառ փարոսներ: Հետագա՝ ընդհուպ մինչև մեր օրերի սերունդները՝ որպես այդ մամուլի «ուշացած ընթերցող-

ներ», շատ բան են սովորել նրանից՝ անցյալը ճիշտ հասկանալու, ներկան ու գալիքը իրար հետ ամուր շաղկապելու և նկատված սխալները չկրկնելու համար:

Այս առումով եզակի երևույթ պետք է համարել Վենետիկի Մսիթարյանների «Քազմավէպը», որն իր հիմնադրումից (1843 թ.) ի վեր անխափան հրատարակվում է առ այսօր և իրավամբ համարվում մեր ներկայիս մամուլի «նահապետը»: Անցյալի մեր մամուլի բացառիկ օրգաններ են մնում Հարություն Սվաճյանի և Հակոբ Պարոնյանի «Մեղուն», Ստեփանոս Նազարյանցի ու Միքայել Նալբանդյանի «Հիսիսափայլը», Խորեն Ստեփաննի «Հայկական աշխարհը», Սուրբ Էջմիածնի հայրապետական աթոռի «Արարատը», Գրիգոր Արծրունու «Մշակը», Ավետիք Արասխանյանի «Մուրճը», Աբգար Հովհաննիսյանի «Փորձն» ու «Արձագանքը», Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսը», Աստվածատուր Երիցյանի «Խաթաբալան», Գարեգին Լևոնյանի «Գեղարուեստը» և այլն:

Այս շարքին պետք է դասել նաև Արշակ Չոպանյանի խմբագրությամբ «տիեզերական կեդրոն» Փարիզում շուրջ կես դար լույս տեսած «Անահիտ» հանդեսը: Ազգային, գրական-գեղարվեստական այդ հանդեսի հրատարակությունն սկսվել է 1898 թ. և որոշ ընդհատումներով, շարունակվել մինչև 1949 թ.: Այն ունեցել է հրատարակության երկու շրջան՝ առաջին՝ 1898-1911 թթ. և երկրորդ՝ 1929-1941, 1946-1949 թթ.: Իր կեսդարյա գոյության ընթացքում անընդմեջ տպագրվելով շուրջ երեսուն տարի՝ հանդեսն անգնահատելի դեր է խաղացել հայ-ֆրանսիական և հայ-եվրոպական ժողովուրդների գրական-մշակութային կապերն ամրապնդելու ու զարգացնելու, օտար հեղինակների հայագիտական աշխատությունները թարգմանելու և հայ ընթերցողին մատուցելու, ինչպես և արևմտահայ ազգային դատի պաշտպանության ու Սփյուռք-Խորհրդահայ Հայաստան փոխառնչություններն ընդլայնելու ու զարգացնելու գործում: Եվ այդ ամենով «Անահիտը» հայ մամուլի պատմության մեջ գտել է իր ուրույն ու հաստատուն տեղը:

Սակայն, ցավոք, ցայսօր մեր պատմագրության ու բանասիրության մեջ չկար մի որևէ ամբողջական աշխատություն՝ նվիրված այդ հեղինակավոր պարբերականի բազմակողմանի ուսումնասիրությանը: Չնայած անցյալում և մեր օրերում եղել են թե՛ սփյուռքահայ և թե՛ խորհրդահայ

հեղինակներ, որոնք իրենց հողվածներում ու մենագրություններում այս կամ այն չափով անդրադարձել են «Անահիտի» գործունեությանը, նրա խմբագիր, մեծանուն գրող ու գրաքննադատ Արշակ Չոպանյանի կյանքին ու գործունեությանը նվիրված մենագրություններում ու այլ աշխատություններում ևս խոսվել է «Անահիտի» մասին<sup>83</sup>, փորձ արվել ընդհանուր գծերով ներկայացնելու նրա պատկերը: «Անահիտի» շուրջ բնութագրական խոսք է ասվել նաև տարբեր գրողների ու հրապարակախոսների գրական ժառանգությանը, ինչպես և հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին ու գրականությանը նվիրված աշխատություններում ու հետազոտություններում, ակադեմիական առանձին հրատարակություններում և այլուր: Բայց այդ ամենը «Անահիտի» ամբողջական նկարագիրը չեն տալիս, չեն բացահայտում նրա հասարակական ու գրական-գեղարվեստական նշանակությունը մեր մամուլի պատմության մեջ:

Այս բացը լրացնելու եկավ Յու. Ավետիսյանի ««Անահիտ» հանդեսը» մենագրությունը, որում հեղինակը փորձ է անում առաջին անգամ հիմնավոր կերպով ներկայացնելու այդ հանդեսի գործունեության առաջին շրջանի (1898-1911 թթ.) հիմնական կողմերը, տալու նրա ազգային-հասարակական ու գեղագիտական գնահատականը: Հայտնի է, որ «Անահիտը» անդրադարձել է հայ մշակույթի պատմության ու հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներին: Իր հարցասիրությունների լայնությամբ ու հանրագիտական բնույթով, բազմազան թեմատիկայով ու հարուստ բովանդակությամբ «Անահիտը» կոչված էր նպաստելու հայոց ազգային զարթոնքին, հայ ժողովրդի հոգևոր ու քաղաքական վերածնությանը: Այս առումով հանդեսը ներկայանում է որպես մի յուրահատուկ ամբողջություն, որի ամեն մի տարրը, ներքին ու արտաքին կառուցվածքի, գաղափարական ու գեղագիտական հղացման առանձնահատկությունները գոյանում ու խարսխվում են մեկ ընդհանուր հիմքի վրա և ներկայանում որպես մեկ միասնական ամբողջություն:

Հեղինակն իր մենագրության մեջ անդրադարձել է հանդեսի գործունեության գրեթե բոլոր կողմերին: «Երկու խոսք» հակիրճ նախաբանին

---

<sup>83</sup> Այդ աշխատություններից հատկապես արժեքավոր են Հակոբ Օշականի «Արշակ Չոպանյան» ուսումնասիրությունը, որը տպագրվել է հեղինակի «Համապատկեր արևմտահայ գրականության» բանահատորյակի 5-րդ գրքում (տե՛ս էջ 305-415), ինչպես նաև Կարլեն Դալլաքյանի «Արշակ Չոպանյան» մենագրությունը (Երևան, 1987):

հաջորդում են գրքի հինգ գլուխները, ապա՝ «Վերջաբանի փոխարեն» եզրափակիչ խոսքը: Առաջին գլխում տրված են «Անահիտ» հանդեսի նախապատրաստության և հիմնադրման մանրամասները՝ զուգահեռաբար ներկայացնելով նաև Ա. Չոպանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը: Հեղինակը ճիշտ է նկատում, որ «Անահիտ» հանդեսը հրապարակ է իջել արևմտահայ հասարակական կյանքի ու գրական ընթացքի կենսական պահանջներով, և այն արգասիքն է նրա խմբագիր Արշակ Չոպանյանի անհատականության, գրողի ու քննադատի նրա եռանդուն ջանքերի, ստեղծագործական ու գաղափարական հղացումների<sup>84</sup>: Միաժամանակ այդ հանդեսը նրա ստեղծագործական վաստակի շարունակությունն ու անբաժանելի մասն է, քանզի նրանում տպագրված նյութերի մեծ մասը պատկանում է Ա. Չոպանյանի գրչին: Ուստի հեղինակը ջանացել է հնարավորին չափ համակողմանիորեն ներկայացնել նրա աշխարհայացքի, հասարակական կողմնորոշումների ու գեղագիտական ըմբռումների ձևավորման ու զարգացման ընթացքը, գրական ժառանգության հատկանշական կողմերը: Այստեղ Ա. Չոպանյանը ներկայացված է որպես բանաստեղծ, արձակագիր, գրաքննադատ, հասարակական-մշակութային խոշոր գործիչ և հմուտ ու լայնախոհ խմբագիր ու հրատարակիչ:

Առաջին գրքի երկրորդ ենթագլխում ներկայացվում են Ա. Չոպանյանի խմբագրական աշխատանքի առաջին փորձերը: Հայտնի է, որ մինչև «Անահիտի» հրատարակությունը՝ 1895 թ., Ա. Չոպանյանը Կ. Պոլսում մի կարճ ժամանակ խմբագրել է «Ծաղիկ» հանդեսը, որը հենց այդ մի քանի ամիսների (մարտ-նոյեմբեր) ընթացքում է դարձել առավել լուրջ գրական-գեղարվեստական հանդես: Այդ մասին կան ժամանակակիցների վկայությունները: Նա հարուստ ծրագիր է կազմում ու պլաններ մշակում այդ հանդեսի հետագա լույսընծայման համար: Սակայն 1895 թ. հոկտեմբերին Ա. Չոպանյանը թուրքական հետապնդումներից խուսափելու նպատակով դադարեցնում է «Ծաղիկի» հրատարակությունը և մեկ ամիս անց՝ հեռանում Պոլսից: Չնայած կարճատև եղավ նրա գոր-

---

<sup>84</sup> Տե՛ս **Յու. Ս. Ավետիսյան**, «Անահիտ» հանդեսը, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1999, էջ 7: Այսուհետև հիշյալ գրքից մեջբերումները կտրվեն տեքստում՝ փակագծերում նշելով միայն էջահամարները:



ծունեությունը «Ծաղիկի» խմբագրությունում, և առաջադրված մի շարք կարևոր խնդիրներ մնացին անլուծելի, սակայն ճիշտ է նկատել հեղինակը, որ այդ կարճատև, բայց և բեղմնավոր գործունեությամբ հանդեսը մեծ ազդեցություն է ունեցել արևմտահայ լրագրական արվեստի և գրական-գեղարվեստական մտքի զարգացման վրա: «Ծաղիկը» արևմտահայ իրականություն բերեց անխառն նկարագրով գրական հանդեսի առաջին օրինակը, պայմանավորեց գրական նոր շարժման սկզբնավորումը, նախադրյալներ ստեղծեց «Անահիտ» հանդեսի հրատարակության համար (էջ 41):

Այնուհետև հեղինակն իր մենագրության առաջին գլխի երրորդ ենթագլխում մանրակրկիտ կերպով տալիս է «Անահիտ» հանդեսի հրատարակության պատմությունը և նրա նախնական ծրագիրը, ներկայացնում արևմտահայ հասարակական-քաղաքական ու գրական-մշակութային կյանքի համայնապատկերը: Նա բնութագրում է ժամանակի արևմտահայ գրեթե բոլոր պարբերականները, ներկայացնում նրանց կողմնորոշվածությունը՝ միաժամանակ քննադատելով թուրքական կառավարող շրջանների վարած հայահալած քաղաքականությունը XIX դարի վերջին և XX դարի սկզբին:

Այն, ինչ հնարավոր չի լինում իրականացնել երկրում (Արևմտյան Հայաստանում), Ա. Չոպանյանը փորձում է իրագործել արտասահմանում, տվյալ դեպքում՝ Փարիզում: Գրքի հեղինակն այստեղ ևս կատարել է ընդգրկուն աշխատանք, վերլուծել է այդ ժամանակ Եվրոպայում լույս տեսնող երկու տասնյակից ավելի հայերեն պարբերականները, տվել դրանց ընդհանուր բնութագիրը՝ միաժամանակ կանգ առնելով Ա. Չոպանյանի գործունեության այդ շրջանի վրա: Նա հիմնավոր կերպով վերլուծել է հանդեսի հրատարակության՝ Ա. Չոպանյանի կազմած ծրագրերը, վկայակոչել հայ անվանի գրողների ու մշակութային գործիչների կարծիքները, ելույթներն ու ցանկությունները՝ արտահայտված «Անահիտի» հրատարակության առթիվ:

Ոգեկոչելով հայոց հեթանոս աստվածուհուն՝ Անահիտին՝ հանդեսը նպատակ ուներ արթնացնելու նախնյաց հեթանոս ոգին, լույսի ու կենսականության աղբյուրը. ««Անահիտ» կոչեցի հանդեսը, մեր հիմնավորց և հավիտենական աստվածուհին անունով,- գրում է նրա խմբագիրը, - որպեսզի Ոսկեծղին, Անարատը, բարության Բաշխիչը, հայ ցեղին ոգին

պատկերդ մայրական Դիցանույշը՝ այս ազգային-գրական ձեռնարկը իր լուսավոր քերտովը հովանավորե և գայն գեղեցկությամբ ու կենդանությամբ պայծառացնե» (էջ 56):

«Անահիտի» անդրանիկ համարը լույս է տեսել 1898 թ. նոյեմբերին: Այն ուներ հարուստ բովանդակություն, պարունակում էր «1. Ուսումնասիրություններ հայ ժողովրդին պատմության, գրականության, գեղարվեստին ու լեզվին վրա, և տեսություններ անոր ներկա բարոյական ու նյութական կացության մասին, 2. Ուսումնասիրություններ գեղարվեստական, գիտական և ընկերական ընդհանուր խնդիրներու վրա, 3. Թարգմանություններ օտար հին ու նոր մատենագրությանց ամենեն կարևոր հրաշակերտներուն, 4. Վեպեր, վիպակներ և բանաստեղծություններ ազգային կամ առհասարակ արևելյան կյանքե, 5. Ուսանավոր և արձակ գրություններ գրական ամեն սեռե, 6. Հրատարակություն և ուսումնասիրություն հին ու նոր հայ ժողովրդական բանաստեղծությանց, ավանդության և հեքիաթներու» (էջ 56-57):

Հետագայում Ա. Չոպանյանը նպատակ ուներ ընդլայնելու հանդեսի գեղարվեստական բաժինը՝ հրատարակելով արվեստի գործերի վերատպություններ, հատկապես հայոց միջնադարյան կերպարվեստի նմուշներ ու դրանց վերաբերյալ ուսումնասիրություններ:

Գրքի երկրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է հայ ազգային-քաղաքական կյանքի արտացոլմանը հանդեսի էջերում, որտեղ առանձին ենթագլուխներով քննարկվում են թուրքական իշխանությունների հակահայկական քաղաքականության դրսևորումները, վերլուծվում հայերիտրորքական առնչությունները, ազգային-ազատագրական ուղիների որոնման և արտաքին միջամտության անհրաժեշտության խնդիրները:

Մենագրության ամենաձավալուն գլուխը կրում է «Գրական-գեղարվեստական ընթացքը և «Անահիտ» հանդեսը» վերտառությունը: Նրանում հեղինակը ներկայացնում է հանդեսի գրական ծրագիրը և ժամանակի հոգևոր-մշակութային մթնոլորտը, խոսում «Անահիտի» ազգային ակունքների ու որդեգրած դասական ավանդների մասին, վերլուծում հանդեսի կողմից օգտագործված համաշխարհային գրականության փորձը, անդրադառնում ժամանակի հայ գրականության նվաճումների և գրական ուղղությունների վերաբերյալ հանդեսում շոշափված հարցե-

րին, ազգային արվեստի զարգացման ուղիներին և այլն: Հեղինակն ամենուր կարողանում է մասնագիտական հմտություններով ու համոզիչ բնութագրումներով ներկայացնել «Անահիտի» գրական-քննադատական ճիշտ կողմնորոշումները, տալ նրա գիտական, գրական-գեղարվեստական համայնապատկերը:

Գրքում մի առանձին գլուխ էլ նվիրված է արևմտահայ գրական աշխարհաբարի խնդիրներին, որոնք ժամանակին քննարկվել են հանդեսի էջերում: Հեղինակն այստեղ փորձել է վերլուծել հանդեսի հրապարակումների լեզուն և ոճը, ներկայացնել արևմտահայ գրական աշխարհաբարի վերաբերյալ նրա մշակած տեսակետները:

Աշխատության վերջին գլուխը համակողմանիորեն ներկայացնում է «Անահիտ» հանդեսի ընթերցողական լսարանը: Պետք է նկատել, որ մեր մամուլի պատմության ուսումնասիրության մեջ կիրառված առաջին փորձն է սա: Հեղինակը մանրակրկիտ ուսումնասիրել է «Անահիտի» ընթերցողների թվական, սոցիալական (ընկերային) կազմը, աշխարհագրական կառուցվածքի յուրահատկությունները և այդ լսարանի անմիջական արձագանքները հանդեսի հրատարակության շուրջ: «Անահիտը», հրատարակվելով Փարիզում, իր ընթերցողներն է ունեցել աշխարհի տարբեր ծայրերում՝ Եվրոպայում ու Ասիայում, Ամերիկայում ու Աֆրիկայում և այլուր: Նրա օրինակները ստացվել են Նյու Յորքում, Չիկագոյում, Բոստոնում, Մոսկվայում, Պոլսում, Իզմիրում, Թիֆլիսում, Բաքվում, Վանում, Մուշում, Շապին-Գարահիսարում, Խարբերդում և այլուր, ընթերցողները եղել են անվանի գրողներ, գիտնականներ, մշակութային ու հասարակական-քաղաքական գործիչներ, արհեստավորներ և շինականներ: Խմբագիրը ջանք չի խնայել էլ ավելի ընդլայնելու իր հանդեսի ընթերցողների լսարանը և նրա տարածման աշխարհագրական սահմանները: «Անահիտի» բաժանորդների թիվը նրա հրատարակության առաջին շրջանում հասել է 850-900-ի:

Հեղինակն իր մենագրության հիշյալ գլխում մանրակրկիտ վերլուծում է այդ ամենը, որը շատ կարևոր է մեր մամուլի պատմության համար, և անում է ճիշտ եզրակացություններ: Ըստ նրա հաշվարկների՝ «Անահիտի» ընթերցողական լսարանի 60 տոկոսը կազմել են մտավորականները: Համեմատաբար փոքր է եղել ընկերային մյուս խմբերին պատկանող բաժանորդների թիվը. հասարակական-քաղաքական գոր-

ծիչներ՝ մոտ 13-15 տոկոս, հոգևորականներ՝ 14-15 տոկոս, վաճառականներ՝ 6-7 տոկոս, այլ զբաղմունքի տեր մարդիկ՝ 7-10 տոկոս: Տարիքային առումով գերիշխող դիրք են գրավում երիտասարդները: Լսարանի միջին տարիքը 30-35-ից չի անցնում (էջ 193):

Յու. Ավետիսյանը, փաստորեն, մեզանում առաջին հեղինակն է, ով իր մենագրության մեջ օգտագործել է մամուլի վերլուծության տիպաբանական սկզբունքները և տվել է այդպիսի վերլուծության անդրամիկ օրինակը հայ մամուլի պատմության ու տեսության ասպարեզում՝ հետազոտության նյութ ունենալով «Անահիտ» հանդեսի բարդ կառուցվածքն ու նրա պարունակած նյութերի բազմազանությունը: Նա բնութագրում է «Անահիտի» տիպաբանական հատկանիշները, որոնցով այդ պարբերականն առանձնանում է ժամանակի արևմտահայ գրական-գեղարվեստական և ազգային մյուս պարբերականների շարքում: Միաժամանակ աշխատության մեջ կարևորվում է «Անահիտի» տեղն ու դերը մեր մշակութային կյանքում և մամուլի պատմության մեջ:

Հեղինակն իր աշխատությամբ շրջանառության մեջ է դրել արխիվային բազմաթիվ նյութեր, նամակներ ու փաստաթղթեր, որոնք պահվում են Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանի Ֆոնդերում: Նա խտացված ձևով ի մի է բերում ժամանակի արևմտահայ և եվրոպական մամուլի տեսակետները, «Անահիտ» հանդեսին նշանավոր մարդկանց տված գնահատականները և այդպիսով տալիս հանդեսի ամբողջական նկարագիրը մեր մշակույթի տարեգրության մեջ:

Յու. Ավետիսյանի գիրքը մեզանում Ա. Չոպանյանի «Անահիտ» հանդեսին նվիրված առաջին հաջողված գործն է: Ավարտելով այս արժեքավոր մենագրության ընթերցումը՝ ավստում ես, որ նրանում տրված է միայն «Անահիտի» առաջին շրջանի պատմությունը: Մեզ թվում է՝ հենդիմակը չպետք է շտապեր հրատարակել իր մենագրությունը և այն պետք է լրացներ ու ամբողջացներ՝ ուսումնասիրելով և ի մի բերելով «Անահիտի» հրատարակության երկրորդ շրջանը ևս, մի բան, որը նա կարող էր անել նույն սկզբունքներով ու բարձր մակարդակով:

Գրքի վերնագիրը ևս, մեզ թվում է, ճիշտ չի ընտրվել: Նախընտրելի էր, որ այն լիներ «Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսը», քանի որ սերունդների հիշողության մեջ «Անահիտը» առանց իր խմբագրի անվան

չի պատկերացվել, ինչպես, ասենք, «Գեղարունատը»՝ առանց Գարեգին Լևոնյանի:

Գրքում նկատվել են նաև այլ թերություններ: Հայտնի է, որ «Անահիտը» հաճախակի է անդրադարձել հայոց ազգային-քաղաքական կյանքի խնդիրներին, հայկական հարցի արծարծումներին, մշտապես տեղեկություններ է տպագրել հայ-թուրքական հարաբերությունների, հայկական կոտորածների մասին, ուշագրավ խոսք է ասել հայ քաղաքական կուսակցությունների, մասնավորապես՝ դաշնակցության և հնչակյանների գործունեության վերաբերյալ: Գիրքը, կարծում ենք, մեծապես կշահեր, եթե հեղինակն ավելի մանրամասն անդրադառնար այս հարցերի քննարկումներին՝ նշելով նաև բոլոր այն վրիպումները, որոնք ունեցել է նաև ինքը՝ Ա. Չոպանյանը: Այդ դեպքում գրքի կարևոր ու արժեքավոր երկրորդ գլուխը կլիներ ավելի հարուստ և ծավալուն, որը կբխեր նաև հանդեսի բովանդակությունից:

Ինչպես տեսանք, «Անահիտի» գործունեության գնահատումներին գրքի հեղինակն անդրադարձել է և՛ առաջին, և՛ հինգերորդ գլուխներում: Ճիշտ է, կոնկրետ կարծիքները չեն կրկնվում, բայց աշխատանքի կառուցվածքային ամբողջականությունը պահպանելու համար տեղին կլինեն, եթե դրանք ներկայացնեն գրքի միայն մի բաժնում: Ա. Չոպանյանի կյանքի ու գործունեության ուշ շրջանը ևս, երբ նա խմբագրում էր Փարիզի «Վերածնունդ» (1917-1919 թթ.) և «Ապագա» (1921-1924 թթ.) պարբերականները, գրքում բուցիկ է լուսաբանվել: Այնինչ նրա խմբագրական-հրատարակչական գործունեության այդ շրջանը ևս հարուստ է եղել, և կարելի էր զուգահեռներ անցկացնել առաջին շրջանի «Անահիտի» և այդ պարբերականների միջև՝ ավելի ընդգծելով Ա. Չոպանյանի վարած քաղաքականության յուրահատկությունները հիշյալ տարիներին:

Գրքում նկատվում են նաև տեխնիկական բնույթի վրիպումներ, որոնք կարելի էր կանխել ժամանակին: Այսպես՝ որոշ էջերում մի շարք բառեր տողադարձելիս խախտվել են տողադարձի կանոնները, ամենուր «ու» ձայնավորի վրա հարցական նշանը (պարույկը) չի դրվել համապատասխան բաղադրիչի վրա: Սակայն սրանք էական նշանակություն չունեն այս արժեքավոր մենագրությունում, որը գալիս է հարստացնելու հայ մամուլի պատմությանը նվիրված գրքերի գրադարանը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հեղինակը տարիներ շարունակ ուսումնասիրել է և արդեն ծանոթ է «Անահիտ» հանդեսի ստեղծման ու նրա գոյության առաջին շրջանի պատմությանը, Արշակ Չոպանյանի կյանքի ու գործունեության մանրամասներին, կարող ենք վստահորեն ասել, որ նա նույն հաջողությամբ կարող է ստեղծել նաև այդ հանդեսի հրատարակության երկրորդ շրջանի պատմությունը: Ուստի ցանկալի է, որ Յու. Ավետիսյանը շարունակի իր ձեռնարկած շնորհակալ գործը և ամբողջացնի մեր մամուլի այդ ուշագրավ երևույթի կետարյա հարուստ տարեգրությունը:

### **ԳԻՐՔ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐՈՂԻ ՄԱՍԻՆ**

Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի վարիչ, ՀԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Հր. Թամրազյանի ներկա գիրքը, որը կրում է «Հակոբ Ասատուրյան» վերաառությունը, նվիրված է սփյուռքահայ գրող Հակոբ Ասատուրյանի կյանքին ու գործունեությանը, նրա ստեղծագործությունների ընդհանուր բնութագրին:

Հակոբ Ասատուրյանը Սփյուռքի լավագույն և անվանի գրողներից է, որն անցել է կյանքի մեծ ճանապարհ, ապրել է Եղեռնի ողջ սարսափները և, անապատներից հասնելով Ամերիկա, բնակություն է հաստատել Նյու Չերսի նահանգի Թենֆլայ քաղաքում: Վաղ շրջանից դրսևորվել են նրա երաժշտական ու գրական ակնառու ձիրքերը: Նա հայտնի է կոմիտասյան երգերի իր հրաշալի կատարումներով: Դրա հետ մեկտեղ տաղանդավոր գրողը գրել է բազմաթիվ բանաստեղծություններ, վեպեր ու վիպակներ, հրապարակախոսական ու գրական-տեսական հոդվածներ, որոնք իրենց նպաստն են բերել սփյուռքահայ գրականության ու հրապարակախոսության զարգացման գործին: Հայրենաշունչ գրողն իր ողջ գործունեության ընթացքում կապված է եղել մայր հայրենիքի՝ Հայաստանի գրական-մշակութային ու հասարակական կյանքի հետ, ուրախացել է նրա հաջողություններով և տխրել անգամ ամենավոքոր անհաջողության դեպքում:

Պրոֆ. Հր. Թամրազյանն այս ամենը հարուստ կերպով ներկայացրել է իր աշխատության մեջ, թանձր գույներով ուրվագծել նրա ստեղծա-

գործական ուղին: Գիրքը բաղկացած է հինգ գլուխներից, որոնցում Հակոբ Ասատուրյանը «որբության ճամփեքից» հասնում ու հոգով միանում է լուսաշող «հայրենիքի հետ»: Այդ երկար ու ձիգ ճանապարհին բանաստեղծը «հայրենիքի երգի թևերին» ստեղծում է իր գյուղի երգերը, անապատի տեսարանները, հայացքով դառնում է դեպի իր ծննդավայրի ավերակները և օտար հողի վրա գրում մի շարք մնայուն ստեղծագործություններ, կերտում քարի, հողի և երգի պատմությունը, տարվում հայրենական երազներով և նորանոր որոնումներ կատարում «հայոց տան պատմության» համար:

Այսպես անվերջ որոնումների ճանապարհին գրողը ստեղծում է իր «Անապատի կողմն աշխարհի», «Հովակիմի թռռները», «Հովակիմի թռռնորդիները», «Տո լաճ տնավեր», «Ռ՞ր, Վահրամ» արձակ երկերը, որոնց մանրակրկիտ վերլուծությունը նույնպես արված է պրոֆ. Հր. Թամրազյանի այս նոր գրքում:

Ճանաչված գրականագետն իր գրքի «Մուտք»-ում ընդգծում է. «Գրականության մեջ ինձ ավելի գրավում են բնականությունը և կենսական ուժը: Ասատուրյանի տաղանդը հենված է հողին, ունի կենսական բովանդակություն և բնական շեշտեր: Կարելի է ավելի որոշակի ասել. դրանց հետ միասին կա նաև մի ուրիշ հանգամանք, որը ներշնչանք է տալիս գրականագետին: Ասատուրյանի կյանքն ու գործը չափազանց հարագատ են մեր հայրենիքի տարեգրությանը, մեր ժողովրդի պատմությանը և անմիջական արձագանքն են նրա ճակատագրի: Հեռավոր Հնդգոնի եզերքին հոգեկան մաքառումով և գեղարվեստական պատկերների միաձույլ կերտվածքով նա ստեղծել է հողի և մարդկանց ցնցող պատմությունը, որի էջերի վրա շողում են հայրենի արևն ու գույները...»: Այսպես է բնութագրում գրականագետը Հակոբ Ասատուրյանի ստեղծագործությունը, որը մեծ ճամփաների, ցավի, երազանքի ու որոնումների գեղարվեստական պատկերումն է, նրա պայծառ արտացոլանքը:

Պրոֆ. Հր. Թամրազյանի այս մենագրությունը, փաստորեն, մի նվեր է հայրենաշունչ գրողի ծննդյան 90-ամյակին, և այն ամբողջությամբ ուրվագծում է նրա կյանքի ու ստեղծագործության բազմամյա ուղին:

## ԳԵՐՄԱՆԱՅԻ ՀԱՅԱԳԵՏԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, 1970-ական թվականներից սկսած, «Հայագիտական հետազոտությունների մատենաշար» ընդհանուր վերտառությամբ լույս է ընծայում թե՛ հայ և թե՛ օտարազգի գիտնականների՝ հայագիտության հիմնահարցերին նվիրված արժեքավոր աշխատությունները: Օտարազգի հայագետների ժառանգությունից հիշյալ մատենաշարով 1978 թ. առաջինը տպագրվել է Անտուան Մեյեի (1866-1936) «Հայագիտական ուսումնասիրություններ» սովարածավալ հատորը ֆրանսերենի լավագույն մասնագետ Մարտիրոս Սինասյանի թարգմանությամբ ու ծանոթագրություններով և ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի խմբագրությամբ: Նրա մեջ ժողովված են ֆրանսիացի մեծանուն հայագետի՝ հայոց լեզվին ու հայ մշակույթին նվիրված մանր ու խոշոր աշխատությունները:

Եվ ահա դրանից շուրջ քառորդ դար անց՝ նոր հազարամյակի շեմին, մեկը մյուսի հետևից կրկին սկսեցին լույս աշխարհ գալ օտարազգի հայագետների արժեքավոր գրքերը: Այս կարևոր գործին մեծապես նպաստեց «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկությունը, որի հովանավորությամբ էլ տպագրվեցին այդ նոր հատորները: Դրանցից առաջինը Յոզեֆ Կարստի (1871-1962) «Կիլիկյան հայերենի պատմական քերականությունը» (2002 թ.) աշխատությունն էր, որը գերմաներենից հայերեն է թարգմանել հիշյալ կենտրոնի գիտաշխատող Դմիտրի Սիլվինյակը, առաջաբանը գրել է ավագ գիտաշխատող Վահան Սարգսյանը, իսկ հրատարակության պատրաստել ու խմբագրել է ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռուբեն Ղազարյանը: Յոզեֆ Կարստի այս աշխատությունը բաղկացած է առաջաբանից, երկու հիմնական մասից և հավելվածից, որոնցում քննվում են կիլիկյան հայերենի հնչյունաբանությանն ու ձևաբանությանը առնչվող երևույթներն իրենց պատմական զարգացման մեջ, ինչպես նաև հավելվածում ընդհանուր գծերով տրվում են այդ լեզվի շարահյուսական առանձնահատկությունները:

Արդ մասնագետների սեղանին են գերմանացի մյուս մեծանուն հայագետի՝ Յոհան Հայնրիխ Հյուբշմանի (1848-1908) երկու սովարածավալ հատորները, որոնցից մեկը կրում է «Հայերենի քերականություն»



(2003 թ.) ընդհանուր վերտառությունը և ամբողջությամբ նվիրված է հայերենի ստուգաբանությանը, իսկ մյուսը, որն ունի «Հայագիտական ուսումնասիրություններ» (2004 թ.) խորագիրը, ներառում է մեծամուն հայագետի մի շարք աշխատություններ, որոնք նա գրել է իր կարճատև կյանքի ընթացքում:

Յոհան Հայնրիխ Հյուբշմանը՝ «արդի հայագիտության հայրը», ինչպես կոչել են նրան ժամանակակիցները, նախատեսել էր հայերենի քերականությունը գրել երեք հատորով, որոնցից առաջինում պետք է տար բառերի ստուգաբանությունը, երկրորդում՝ լեզվական նյութը՝ բառապաշարը (արմատական բառերը, նախածանցները և վերջածանցները), իսկ երրորդ հատորում՝ հնչյունաբանությունը և ձևաբանությունը, ինչպես նաև շարահյուսության մասին համառոտ ակնարկ: Եվ չնայած նա շուրջ քառորդ դար զբաղվել է այդ գրքերի ստեղծմամբ, սակայն կարողացել է ավարտել միայն «Հայերենի ստուգաբանությունը» վերտառությամբ հատորը, որտեղ ընդգրկված են 2000-ից ավելի բառեր, որոնցից 1971-ը՝ հասարակ, իսկ 217-ը հատուկ անուններ են: Հատորն ունի ընդարձակ առաջաբան, որը պատկանում է հեղինակի գրչին, իսկ նյութը բաժանված է հինգ մասերի, որոնցում գիտնականը քննական վերլուծության է ենթարկել բուն հայկական և կասկածելի ծագում ունեցող բառերը, անդրադարձել է պարսկական, ասորական և հունական փոխառություններին և տվել է դրանց ստուգաբանությունները: Գրքի տարբեր մասերում նա անդրադարձել է նաև նոր պարսկերեն և արաբերեն, ինչպես և ֆրանսերեն փոխառյալ բառերի ու հատուկ անունների ստուգաբանություններին և հարակից այլ հարցերի:

Գրքի առաջաբանը, ծանոթագրությունները և տեքստերը թարգմանել է ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Հունան Ղուկասյանը, իսկ բառերի ստուգաբանությունների բուն տեքստը հնարավոր սխալներից ու վրիպումներից զերծ մնալու նպատակով հրատարակչությունը նպատակահարմար է գտել տպագրել պատճենահանման եղանակով, որը կատարվել է Հ. Հյուբշմանի այս աշխատության՝ 1972 թ. հիդրեսիայնյույրքյան հրատարակչությունից: Ի դեպ, հիշյալ գրքի առաջին տպագրությունը տեղի է ունեցել Լայպցիգում 1897 թ. հեղինակի հսկողությամբ:

Հյուբշմանի՝ նոր լույս տեսած «Հայագիտական ուսումնասիրություններ» վերնագիրը կրող երկրորդ հատորը մի ընդհանուր ժողովածու է, որտեղ ամփոփված են ականավոր լեզվաբանի ու հայագետ-իրանագետի՝ 1875-1906 թթ. ընթացքում եվրոպական տարբեր գիտական հանդեսներում տպագրված հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնց թիվն անցնում է երկու տասնյակից, և որոնք այսօր դժվարամատչելի են մասնագետներին: Դրանք հիմնականում վերաբերում են հայերենի դիրքին հնդեվրոպական լեզուների ընտանիքում, հին հայերենի արտասանությանն ու տառադարձությանը, նրա դասական շրջանի համեմատական քերականության բազմապիսի խնդիրներին: Հյուբշմանն այստեղ ևս անդրադարձել է հին հայերենում պարսկական, արաբական, ասորական և հունական փոխառություններին և հանգամանորեն ստուգաբանել է դրանք: Նա իր աշխատանքների մի զգալի մասն էլ ժամանակին տարբեր հանդեսներում տպագրել է «Հայկական» ընդհանուր վերնագրիով, որոնք նույնպես տեղ են գտել սույն հատորում: Դրանք ևս նվիրված են հայոց լեզվի այլևայլ խնդիրների լուսաբանությանը:

Հյուբշմանն իր այս աշխատություններում առաջինն է ապացուցել, որ հայերենը, պատկանելով հնդեվրոպական ընտանիքին, ներկայանում է իբրև ինքնուրույն, անկախ ճյուղ: Նրա ստեղծած այդ հայտնի տեսությունը ժամանակին հեղաշրջող նշանակություն է ունեցել ոչ միայն հայագիտության, այլև հնդեվրոպաբանության մեջ ընդհանրապես և կարևոր դեր է խաղացել լեզվաբանության հետագա զարգացման համար:

Հյուբշմանի ներկա գրքի համար ներածական խոսք է գրել Ռյուդիգեր Ծմիդտը, որում հեղինակը հակիրճ ներկայացնում է մեծանուն լեզվաբանի կյանքի ու գիտական գործունեության ուղին, արժևորում նրա հայագիտական հարուստ ժառանգությունը:

Նշենք նաև, որ ինչպես հիշյալ ներածությունը, այնպես էլ գիրքն ամբողջությամբ հայերեն է թարգմանել ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի դոցենտ Մարիամ Հարությունյանը, իսկ երկու հատորների մասնագիտական խմբագրությունը կատարել, բառացանկերը հայատառ ներկայացրել և հրատարակության է պատրաստել ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռուբեն Ղազարյանը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ հայ մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության սեփականությունը դարձան գերմանացի մե-

ծանուն լեզվաբանի հայագիտական կարևոր ուսումնասիրությունները: Թարգմանության և հրատարակության է սպասում Հյուբշմանի մյուս կոթողային աշխատությունը՝ «Հին հայկական տեղանուններ» գիրքը, որը առաջին անգամ լույս է տեսել Ստրասբուրգում 1904 թ.՝ հեղինակի կենդանության օրոք, իսկ երկրորդ անգամ՝ Ամստերդամում 1969 թ.: Այս հատորը ևս ժամանակին իր լուրջ նպաստն է բերել հայագիտության զարգացմանը, և նրա հայերեն վերահրատարակությունն այսօր կարող է օգտակար լինել հայ լեզվաբանների և այլ բնագավառների մասնագետների համար:

### **«Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»**

«Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը, որը ստեղծվել է 1890 թ. Թիֆլիսում՝ Քրիստափոր Միքայելյանի (1859-1905), Միմոն Չավարյանի (1865-1913) և Ստեփան Չորյանի (Ռոստոմ) (1867-1919) անմիջական նախաձեռնությամբ ու ջանքերով, երկու տարի առաջ՝ 1990 թ., բոլորեց իր գոյության 100-ամյակը: Այդ հիշարժան հոբելյանի կապակցությամբ թե՛ Միյոտքում և թե՛ մայր հայրենիքում լույս տեսան մի շարք գրքեր ու աշխատություններ, որոնց մեջ հատկապես աչքի է ընկնում Միքայել Վարանդյանի «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութիւն» արժեքավոր գիրքը, որը հայրենիքում առաջին անգամ լույս է ընծայում Երևանի համալսարանի հրատարակչությունը (1992 թ.):

Միքայել Վարանդյանը «Հայ հեղափոխական դաշնակցության» նշանավոր տեսաբաններից մեկն է: Նա նպատակադրվել էր հիմնավոր ու գիտական պատշաճ մակարդակով գրել այդ կուսակցության անցած ուղու պատմությունը, որը, սակայն, նրա անժամանակ մահվան պատճառով չհասցվեց ավարտին: Նա կարողացավ գրել այդ պատմության առաջին հատորը միայն և երկրորդ հատորի առանձին հատվածներ: Առաջին հատորը ժամանակին՝ 1932-ին, լույս է տեսել Փարիզում, իսկ երկրորդ հատորը տպագրվել է տևական ընդմիջումից հետո: Դրա պատճառը եղել է հեղինակի անժամանակ մահը, որը տեղի է ունեցել 1934 թվականին: Մ. Վարանդյանն այդպես էլ չի կարողացել իր աշխատու-

թյունը հասցնել ավարտին, և, փաստորեն, նրա գրքի երկրորդ հատորը մնացել է անավարտ ու խմբագրման վիճակում: Եվ այդպես կիսատ էլ այն տպագրվել է 1950 թ.:

Հեղինակն իր աշխատությունը բաժանել է առանձին գլուխների և բաժինների: Առաջին հատորն ընդգրկում է 26, իսկ երկրորդը՝ 4 գլուխ: Դրանցից բացի՝ գիրքն ունի նաև հակիրճ առաջաբան, որում նա տալիս է իր աշխատության ստեղծման պատմական մախաղըրյալներն ու դրդապատճառները, կանգ առնում «Հայ հեղափոխական դաշնակցության» պատմության ստեղծման գլխավոր հանգուցակետերի վրա, վեր հանում մի շարք այլ կարևոր խնդիրներ:

«Հայ Հեղափոխական Դաշնակցութեան պատմությունը», ինչպես նշվեց վերը, Երևանում տպագրվում է առաջին անգամ: Նրանում առաջին ու երկրորդ հատորները միացվել և ներկայացվել են մեկ ընդհանուր գրքով: Նրա մեջ տրվում է «Հայ հեղափոխական դաշնակցության» պատմությունը իր սկզբնավորման ժամանակներից՝ անցյալ դարի վերջերից, մինչև մեր դարի 10-ական թվականները: Գրքում հանգամանորեն քննարկվում են այդ տասնամյակներին տեղի ունեցած քաղաքական խոշոր իրադարձությունները և դրանցում «Հայ հեղափոխական դաշնակցության» խաղացած դերը:

«Հրատարակչության կողմից» փոքրիկ առաջաբանում ճիշտ է նշված, որ հարյուրամյա ազատագրական շարժման անչափ կարևոր հատվածներից մեկը ներկայացնող այս աշխատությունը չի կորցրել իր արդիական շունչը և իր արժանի ավանդը կարող է բերել սերունդների դաստիարակության ու ազգային պայքարի գործին:

Մ. Վարանդյանի «Հ. Յ. Դաշնակցութեան պատմությունը» լույս է տեսել մասսայական տպաքանակով, որին կարող են ծանոթանալ շատերը:

### **«ՄՏԱԾՈՒՄՆԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»**

Այս խորագիրն է կրում վերջերս Երևանի համալսարանի հրատարակությամբ լույս տեսած գրքույկը, որի հեղինակն է Ն. Հանգոյցը: Դա հեղինակի գրական ծածկանունն է, որով հանդես է եկել նշանավոր հա-

սարակական-քաղաքական, գրական-մշակութային ու պետական գործիչ, երևելի մանկավարժ Նիկոլ Աղբալյանը: Հայտնի է Ն. Աղբալյանի հայրենանվեր գործունեությունը: Նա, գրչի մշակ լինելուց բացի, իր ողջ կյանքի ընթացքում ծառայել է իր ժողովրդի լուսավորության գործին թե՛ մայր Հայաստանում և թե՛ Սփյուռքում:

1918 թ., երբ ստեղծվում է Հայաստանի Հանրապետությունը, Ն. Աղբալյանը ընտրվում է նրա խորհրդարանի անդամ և մնում մինչև հանրապետության վախճանը: 1919 թ. նա ստանձնում է Հայաստանի լուսավորության նախարարի պատասխանատու պաշտոնը և այն մինչև վերջ վարում իր անձին վայել լրջությամբ: Նրա անվան հետ են կապված 1919 թ. Երևանի համալսարանի հիմնադրումը և հանրապետության կրթական գործի բարելավումը:

Հետագայում՝ 1921 թվականին, երբ Ն. Աղբալյանը շատերի հետ բռնում է տարագրության ուղին, դարձյալ չի կտրվում մանկավարժական աշխատանքից ու գրական կյանքից: Սփյուռքում նա հայրենասիրական ու լուսավորական մեծ գործունեություն է ծավալում: Որտեղ էլ հանգրվանել է նա՝ Պարսկաստանում թե Եգիպտոսում, Լիբանանում թե մեկ այլ տեղ, զբաղվել է հայկական դպրոցների կազմակերպման գործով: Սփյուռքում նա, հանդիպելով կովկասյան իր երբեմնի ընկերներին, հասկապես՝ մեծանուն գրող Լևոն Շանթին, նրանց հետ հիմնում է կրթական ու հրատարակչական հաստատություններ՝ ի բարօրություն տարագիր հայության: 1930 թ. Լ. Շանթը և Ն. Աղբալյանը հիմնում են Հայ ճեմարանը, որի տնօրենի պարտականությունները ստանձնում է վերջինս ու վարում մինչև իր մահը: Ն. Աղբալյանն այդ ճեմարանի խորհրդի անդամ էր նաև և բարձր դասարաններում գրաբար ու հայ գրականության պատմություն էր դասավանդում:

Ն. Աղբալյանը, երևելի մանկավարժ ու գրչի մշակ լինելուց բացի, անմնացորդ նվիրվել է նաև «Հայ հեղափոխական դաշնակցության» գործունեությանը: Նա 1928 թ. այդ կուսակցության և նրա կանոնագրի ու ծրագրի շուրջը իր՝ տարիների խորհրդածություններն ու փորձը հանձնել է թղթին: Նրա այդ մտածումները տպագրվել են ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակ»-ի՝ 1929-30 թթ. մի շարք համարներում, որոնք և հետագայում՝ 1930 թ., Փարիզում լույս են տեսնում առանձին գրքով՝ որպես «Դրօշակ»-ի հավելված: Ներկա հրատարակությունը կատարվել է դրանից:

Գրքում Ն. Աղբալյանը հանգամանորեն քննում է «Հ. Յ. Դաշնակցության» ծրագիրն ու կանոնագրի հողվածները, վերլուծում է կուսակցության հեղափոխական գործելակերպը, ներքին կարգապահության, անդամակցության և այլ հարցեր:

Գրքին կցված են նաև Գառնիկ Բանյանի ուրվագծերը՝ Նիկոլ Աղբալյանի կյանքի և գործի մասին, որոնք տպագրվել են որոշ հասպավումներով: Գիրքն ամբողջությամբ ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Նրանում անաչառ ու սկզբունքային մարդու և կուսակցության անդամի կողմից խորագնին վերլուծության են ենթարկվում կուսակցական համայնավարության շատ խնդիրներ: Ներկա աշխատանքը Հայաստանում հրատարակվում է առաջին անգամ: Այն շատ կողմերով կօգնի բոլոր կուսակցություններին, որոնք օր օրի բազմանում ու զարգանում են Հայաստանում: Սակայն իր հարյուրամյակը վերջերս բոլորած «Հ. Յ. Դաշնակցությունը» ճանապարհի մեծ փորձությամբ ու հարուստ գործունեությամբ առանձնանում է նրանցից, և նրա անցած ուղու պատմությունը ուսանելի կարող է լինել ամեն մի նորաստեղծ կուսակցության համար:

### **«ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻՆ ԿՈՒԻՆ»**

Երևանի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել գորավար Անդրանիկի «Առաքելոց վանքին կռիւր» հուշերի գրքույկը, որը ժամանակին՝ 1924 թ., Ֆրեզնոյում մեծ գորավարի շուրթերից գրի առել և նույն տարվա ապրիլի 5-ին ավարտել է Լևոն Կ. Լյուլեճյանը:

Առաքելոց վանքի կռիվը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջերից է, որը տեղի է ունեցել 1901 թ. նոյեմբերին: 22 կտրիճներ գորավար Անդրանիկի գլխավորությամբ հիշյալ թվականի հոկտեմբերի վերջերին բարձրանում ու դիրքավորվում են Մշո Առաքելոց վանքում և 20 օր շարունակ՝ մինչև նոյեմբերի 27-ը, մահու ու կենաց կռիվ են մղում թուրքական 6000-անոց կանոնավոր զորքի դեմ՝ ունենալով ընդամենը 37 հրացան ու փոքր քանակությամբ զինամթերք: Մեծ գորավարը իր հուշերի սկզբում, խոսելով այդ կռվի նշանակության ու դրոյապատճառների մասին, ասում է. «Պետք էր ցույց տալ թուրք եւ քիւրտ ժողո-

վորդին, թե Հայ բազուկը գիտե հրացան բռնել: Հայ սիրտը գիտե կռուիլ եւ պաշտպան կանգնիլ իր իրաւունքներուն: Այս ամէնն պետք է ի հայտ բերելին «ափ մը ճան ֆէտայիներ», որոնք ուխտած էին գոհուիլ Ազգին ազատութեան սիրուն, արդարացնելով այն մեծ հաւատքն ու յոյսը որ ժողովուրդը կեդրոնացուցած էր իրենց վրայ»:

Այդ անձնուրաց կտրիճների մեջ են լինում գորավարի զինակիցներ Ուրուխցի Հարութունը, Գևորգ Չավուշը, Վաղարշակը, Հաջի Հակոբը (Կոտոյան) և ուրիշներ: Ի դեպ, Գևորգ Չավուշն իր «Չավուշ» մականունը ստացել է այդ կռվի օրերին: «Անվանակոչութեան» այդ պահը այսպէս է նկարագրում գորավարը. «Այն ատենն էր, որ թուրք մը ձայն տուաւ եւ ըսաւ. «Գևորգ Չաուշ դո՛ւն ես»: Այդ վայրկեանէն Գևորգին անունը մնաց Գևորգ Չաուշ»: Դա եղել է մարտերից մեկի ժամանակ:

Ինչո՞ւ է Առաքելոց վանքը ընտրվում որպէս կռվի վայր և ոչ թե մեկ այլ տեղ: Այս հարցին դարձյալ դիպուկ պատասխան է տալիս գորավարը. «Սբ. Կարապետի վանքը իր դիրքով անյարմար էր: Սբ. Հովհաննու վանքը նույնպէս աննպաստ էր, Սբ. Առաքելոց վանքը՝ որուն Թարգմանչաց Վանք ալ կըսվէր, ամենէն յարմարագոյնն էր: Մտքիս մէջ այս որոշումը տալէ վերջ պարզեցի իմ բոլոր տէսութիւններս: Բոլոր դժուարութիւնները աչքի առջեւ ունենալով հանդերձ տղայքը ուրախութեամբ ընդունեցին իմ առաջարկս կռուիլ՝ Հայ ժողովուրդին բարօրութեան համար՝ դիմագրաւելու համար մահը կամ յաղթանակը»:

Եվ նրանք 20 օր շարունակ կռվում են հանուն այդ սուրբ նպատակի: Չորավար Անդրանիկը՝ որպէս այդ ապստամբութեան կազմակերպիչ ու հրամանատար, օր առ օր ու ժամ առ ժամ նկարագրում և վերլուծում է բոլոր գործողությունները, որոնք տեղի են ունենում վանքում ու նրա շրջակայքում: Նա մեկ առ մեկ ներկայացնում է իր զինվորներին, ցույց տալիս նրանց տրամադրությունն ու մարտական ոգին, առանց որևէ գեղարվեստական ավելորդ միջամտությունների նկարագրում է շրջապատը, բնութայունը, որոնք, ձուլվելով մի միասնութեան մեջ, դառնում են մի գեղեցիկ հյուսվածք, հավասարի պատմություն՝ այդ դաժան ու ծանր օրերի, այդ ճակատագրական ճակատամարտի մասին:

Շուրջ մեկամսյա դիմադրությունից հետո՝ նոյեմբերի 28-ի գիշերվա կեսին, Անդրանիկ գորավարն իր կտրիճների հետ գաղտնի կերպով ճեղքում է թուրքական բազմահազարանոց բանակի շրջափակումը և, դուրս

գալով վանքից, հեռանում է դեպի լեռները: Մեկ ամիս տևած այդ պաշարման ընթացքում նա տալիս է ընդամենը երկու գոհ:

«Այլևս վանքի նվիրական դռներն դուրս էինք,- հիշում է Անդրանիկ գորավարը:- Քսան օր այդ հոյակապ եւ պատկառելի հաստատութիւնը մեզի օթեան եւ պատնէշ եղած էր կռուելու Ազատութեան և Արդարութեան համար, ու հիմա կը մեկնէինք այլևս այդ օրհնուած ու անեղծ մնացած սրբավայրէն դեպի վտանգներով լեցուն անորոշ կայանները...»:

Չորավարը բժախնդիր մանրամասնություններով նկարագրում է իրենց անցած ճանապարհը վանքից դուրս գալուց հետո, այդ կռվի շուրջ անում է իր ճշմարտացի ու խոր եզրակացությունները: Այդ կռիվը նույն օրերին արձագանք է գտնում Վանի, Պոլսի, Կարինի, Խարբերդի և Տիգրանակերտի նահանգներում: Այն դառնում է մի ասիական գործակալական բռնապետության դեմ և ազատության կանչ հայ ժողովրդի համար:

Առաքելոց վանքի դիմադրությունը առիթ է դառնում, որ թուրքական կառավարությունը հաշվի նստի ապստամբողների հետ: Թեժ մարտերի օրերին կողմերի միջև նամակների միջոցով տեղի են ունենում բանակցություններ, իսկ նոյեմբերի 23-ին ֆիդայիների պահանջով վանքում պաշտոնապես տեղի է ունենում սուլթանական բանագնացների ընդունելություն, որի ընթացքում թուրքական կառավարությանն առաջադրվում են գործնական մի շարք պահանջներ, ինչպիսիք են մայիսյան ծրագրի բարեփոխումների իրագործումը, քաղաքական բանտարկյալներին ազատ արձակելը, Սպադանքի և մի շարք այլ գյուղերի հայ բնակչությանը կոտորողներին ու տներն ավերողներին պատժելը և տրված վնասը հատուցելը և այլն: Այս առաջարկությունների ու պահանջների մի մասը նույն օրերին թուրքական կառավարությունը ստիպված իրականացնում է:

Այդ հերոսամարտի մասին շատ է գրվել, և շատերն են գրել: Սակայն այս հուշապատումն առավել հավաստի է ու վավերական, քանի որ պատմողն ինքը այդ կռվի կազմակերպիչ ու ղեկավար Անդրանիկ գորավարն է: Ընթերցողին մնում է վերապրել ու այսօրվա դիտանկյունից իմաստավորել մեր պատմության՝ հայրենասիրությամբ տոգորող այդ սխալի էջը:

Ներկա գրքույկն առաջին անգամ տպագրվել է 1924 թ. Բոստոնում: Այնուհետև արտասահմանում ունեցել է այլ հրատարակություններ ևս:



Հայաստանում հրատարակվում է առաջին անգամ և ազատության ու անկախության ուղին բռնած մեր հանրապետության ընթերցողների, ինչպես նաև Արցախի ազատագրության նպատակով ոտքի ելած ու քաջաբար կռվող մարտիկների համար կարող է ուղեցույց լինել: Հայրենասիրության, խիզախության, արիության ու հաղթական մարտեր մղելու իմաստալից շատ դասեր են պարունակում Առաքելոց վանքի ազատաբաղձ կռվի մասին մեծ գորավարի այս հուշերը:

## **ԱՆԴՐԱՆԻԿ ՉՈՐԱՎԱՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ**

Հայոց ազգային-ազատագրական պայքարի ականավոր ներկայացուցիչ, գորավար Անդրանիկը (Օզանյան) մի շարք աշխատություններ ու հուշեր է թողել սերունդներին: Դրանցից մեկն էլ «Մարտական հրահանգներ»-ն է, որը նա ձոնել է իր «բոլոր իյնող ընկերներու յիշատակին»: Հեղինակը, դիմելով կյանքի ու մահվան գնով ժողովրդի ազատության դժվարին ուղին հարթած իր մարտական ընկերներին, գրում է. «-Ձեր գործունեութեամբ փորձառու դարձուցիկ ձեր յետնորդները, ձեր անմահ յիշատակին նուիրեմ այս գրքույկը, յուսով՝ որ անոր ընթերցումը անելի փորձառու կը դարձնէ անձնուէրները և կը նպաստէ անելի օգտակարապէս ծառայելու ձեր սիրած գաղափարին» (1906, մայիս):

Ելնելով ազգային-ազատագրական պայքարի բազմամյա փորձից՝ գորավարը մատչելիորեն շարադրում է իր նկատառումները մարտական հրահանգների ձևով: Պարտիզանական կռիվներում հետագա սխալներից խուսափելու համար նա իր փորձառությունն է փոխանցում գալիք սերունդներին:

Անդրանիկի «Մարտական հրահանգներ»-ն ամփոփում է «Ձինվորական խորհուրդ», «Օժանդակ խումբեր», «Խումբը երկրի մէջ», «Թռուցիկ խումբեր», «Ապստամբութիւն», «Մարտական ընդհանուր հրահանգներ եւ նկատողութիւններ», «Ձգուշութիւններ ճանապարհին», «Ձգուշութիւններ», «Կռիւներու մասին անհրաժեշտ գիտելիքներ», «Փախստականներ», «Դրամը երկրի մէջ», «Գիտական դասեր», «Ձէնքը երկրի մէջ», «Քիւրդերը եւ քրդական միութիւն» ենթաբաժինները: Գրքույկն ու-

նի նաև «Վերջաբանի փոխարեն» գլուխը, որը հասցեագրված է երիտասարդությանը:

Մեծ հայրենասերն ու գորավարը, ավարտելով իր մարտական հրահանգները, գրում է. «Ես չեմ որ կը հրախրեմ ձեզ, արտասահմանեան հայ երիտասարդներ, այլ դժբաղդ Հայրենիքին հողն ու քարը իրենց արիւնով ներկած մեր նահատակներն ու պաշտելի հերոսներն են, որ կոչ կ'ընեն ձեզի՝ զեճքի՛, զինավարժութեան ու վրէժխնդրութեան: Լսեցէք անոնց Չայնը՝ որ մեր կյանքին Չայնն է»:

«Մարտական հրահանգներ»-ում, որն ունի նաև «Առաջարկներ, նկատողություններ և խորհուրդներ» ենթավերնագիրը, տրոփում է հայրենասեր մարդու սիրտը: Նրա խորհուրդները, մարտական լինելուց բացի, պարունակում են ազգային բնավորության ամրապնդման, տոկունության, հաստատակամության ու խիզախության դրսևորման և հայրենի բնաշխարհը ճանաչելու շատ գաղտնիքներ:

Գրքույկը լույս է տեսել մասսայական տպաքանակով: Մեծ գորավարի մարտական հրահանգներն ազատագրական պայքար մղող ժողովրդի համար այսօր էլ անհրաժեշտ ու հրատապ են:

## «ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇ»

Հայ նշանավոր գրող ու հասարակական-քաղաքական գործիչ Ռուբեն Չարդարյանի «Գեորգ Չաուշ» գրքույկը նվիրված է մեր ազատագրական պայքարի խոշորագույն դեմքերից մեկի՝ ազգային հերոս Գեորգ Չավուշի դյուցազնական կյանքին: Այն բացվում է հերոսի հիշատակին նվիրված հանրահայտ երգով, որն ավարտվում է հետևյալ սրտաճմլիկ տողերով.

Վերջին բարեներս տարեք հայ ազգին,  
Վերջին համբոյրներս որդոյս՝ Վարդգէսին.  
Լացին ընկերներ, կանգնեցան շարքով,  
Համբուրեցին զինք ու անցան խմբով:

Նայեց բոլորտիք, ալ չկար ընկեր,  
Ինկան կռուի դաշտ, տառապ ու անտէր,

Համբուրեց հողը քաղցր հայրենեաց,  
Փակեց աչերը ներքեւ աստեղաց:

Ըստ ժողովրդական երգի՝ Գևորգ Չավուշն այսպես է հրաժեշտ տվել կյանքին:

1907 թ. մայիսի 27-ին Մշո դաշտի Սուլուխ գյուղի մոտ թուրքական գորքերին հաջողվում է շրջապատել Չավուշի խմբին: Սկսված անհավասար մարտում նա ծանր վիրավորվում է: Ընկերները նրան մի կերպ հանում են մարտի դաշտից և, իրենց ուսերին դրած, տանում դեպի լեռները: Սակայն ճանապարհին «լեռների ասլանը» դիմում է նրանց: Այդ դիմունքը շատ խորն ու հուզիչ է հնչում վերոհիշյալ երգում.

Ճամբան աղաչեց, քաջն մահամերձ,  
Հանգիստ ձգեք զիս, մի ընէք շնչահեղձ,  
Դրէք զիս այստեղ, ծածկեցեք խոտով,  
Գացեք ընկերներ, դուք գացեք բարով:

Գրքույկում Ռ. Ջարդարյանը մեծ ներշնչումով է տվել Գևորգ Չավուշի դյուցազնական կյանքի ու գործունեության նկարագիրը: Գեղարվեստական վարպետությամբ ու խորին ակնածանքով է նա գրել իր ամեն մի բառն ու նախադասությունը ազգային հերոսի մասին:

Գևորգ Չավուշը ծնվել է Սասունի Բսանաց գավառի Մկրեք գյուղում 1870 կամ 71 թվականին: Սովորել է Մշո Առաքելոց վանքի դպրոցում: Հենց այստեղ էլ նա ուխտել է իր ողջ կյանքը նվիրել հայ ժողովրդի ազատագրության գործին: Շրջագայել է Մերձավոր Արևելքի երկրներում: 1891-93 թթ. մասնակցել է Սասունի ինքնապաշտպանական կռիվներին և 1894 թ. հերոսամարտին: Այդ ընթացքում ձերբակալվել է թուրքական իշխանությունների կողմից և դատապարտվել 15 տարվա ազատազրկման: Շուրջ երկու տարի բանտում մնալուց հետո նրան հաջողվել է փախուստի դիմել ու կրկին հասնել Սասուն: 1896 թ. ծանոթացել է Անդրանիկ գորավարի հետ, զինակցել նրան ու նրա հետ 1901 թ. մասնակցել Բերդակի և Առաքելոց վանքի կռիվներին, 1904 թ.՝ Սասունի ապստամբությանը: Դեկավարել է Իշխանաձորի ու Տավրիկի ճակատամարտերը: Իսկ 1907 թ. մայիսի 27-ին Սուլուխի ճակատամարտում կրճքից ծանր

վիրավորվում և մայիսի 28-ին մահանում է: Այդպես հանգչում է «Սասունի հրաբուխը»:

Իր անձնուրաց զավակի համար սգում է ողջ հայ ժողովուրդը: Նրա մասին գրվում են գրքեր, ձոնվում երգեր, պատանհները ուխտում են հար նմանվել նրան...

Նրա մարմինը բերվում է Մուշ, և հուղարկավորությունը կազմակերպվում է մեծ շուքով: Գևորգ Չավուշի թաղումը կատարվում է հայ աշակերտների ու եկեղեցականների մասնակցությամբ, թուրքական կառավարության կարգադրությամբ ու պետական հատուկ նվազախմբով: Սգո թափորը քայլում էր Շոպենի մահերգի տխրալուր հնչյունների ներքո: Գևորգ Չավուշի դին հողին է հանձնվում Ծիրինկատարին՝ հայոց գերեզմանատանը:

Ահա այդ օրերին է Ռ. Ջարդարյանը ստեղծել իր այս սքանչելի ակնարկը, որն առաջին անգամ հրատարակվել է Ժնևում հերոսի նահատակությունից մի փոքր ժամանակ անց՝ 1907 թվականին:

Ներկա տպագրությունը կատարվել է 1967 թ. Բեյրութի հրատարակությունից: Գրքույկն ունի հավելված, որտեղ գետեղված են Գևորգ Չավուշի երկու նամակները՝ ուղղված իր զինակից ընկերներին ու կազմակերպություններին: Այն ունի նաև «Երկու խոսք» հուզիչ առաջաբանը, որը պատկանում է Կ. Սասունու գրչին:

Հայ մեծանուն գրողի «Գևորգ Չավուշ» գրքույկի ներկա հրատարակությունը համահունչ է մեր օրերին, և այն մեկ անգամ ևս բորբոքում է հայրենանվեր մարդկանց սրտերը, ոգևորում նրանց, ովքեր դարձյալ գենք են առել հայրենի հողի փրկության ու նրա ազատության համար: Այնպիսի հերոսները, ինչպիսին Գևորգ Չավուշն էր, երբեք չեն նահատակվում: Նրանք, անմահության փառապսակը ճակատներին, միշտ էլ ապրում են ժողովրդի հոգու մեջ:

## ՄԵԾ ԵՂԵՆՆԻՑ ՄԱՉԱՊՈՒՐԾ ԵՐՉՆԿԱՑԻՆԵՐԻ ՏՈՀՄԱԳԻՐՔԸ<sup>85</sup>

Հայոց մեծ եղեռնի մասին շատ է գրվել և դեռ էլի պիտի գրվի: Հայաստանում, Սփյուռքում, արտասահմանյան տարբեր երկրներում հայերեն ու օտար լեզուներով լույս են տեսել բազմաթիվ վավերագրեր, ուսումնասիրություններ, ականատեսների հուշագրություններ, գեղարվեստական գրքեր, պետական, հասարակական-քաղաքական ու մշակութային ականավոր գործիչների, դիվանագետների վկայություններ և այլ աշխատություններ: Ստեղծված այդ հարուստ գրականությունը դատապարտում է անցյալ դարասկզբին Թուրքիայի կողմից արևմտահայության նկատմամբ կատարված իր նախադեպը չունեցող ոճրագործությունը:

Սակայն այդ վիթխարածավալ գրականության մեջ այնքան էլ մեծ թիվ չեն կազմում այն գրքերը, որոնք գրվել են այդ ոճիրի ամբողջ ծանրությունն իրենց վրա կրած, նրա սահմնկեցուցիչ պատկերներին ականատես դարձած ու դառնությունները ճաշակած մարդկանց կողմից: Այդպիսի հեղինակներից մեկն է անվանի արվեստաբան Գառնիկ Ստեփանյանը, որի «Մղձավանջային օրեր» ինքնակենսագրական վեպը Մեծ եղեռնի մասին Խորհրդային Հայաստանում հրատարակված առաջին գիրքն է եղել և իր տեսակի մեջ լավագույններից մեկը: Այն իր ժամանակին ամբողջական պատկերացում է տվել կատարված սոսկալի վայրագությունների, տեղահանությունների ու կոտորածների մասին, որոնք իրականացվել են թուրքական իշխանությունների ու տեղական կառավարիչների կողմից Երզնկա քաղաքում ու նրա շրջակա հայկական բնակավայրերում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ու դրանից հետո՝ ընդհուպ մինչև 1920-ական թվականների սկիզբը:

Հետաքրքիր է այս գրքի ստեղծման պատմությունը, որի առաջին մասը, ինչպես նշեցինք, լույս է տեսել Հայրենական մեծ պատերազմից անմիջապես հետո՝ 1945 թ. կեսերին: Ըստ երևույթին, նման մի գրքի դյուրին տպագրությունն այն դժվարին տարիներին իրականացվել է մտածված ձևով: Դրան նպաստել է նախ այն հանգամանքը, որ Հայրենական մեծ պատերազմի ընթացքում Թուրքիան Գերմանիայի դաշնակիցն էր,

<sup>85</sup> «Էջմիածին» ամսագիր, 2009 թ., հոկտեմբեր, թիվ Ժ, էջ 123-131:

ուստի և Խորհրդային Միության թշնամին, և հետո այն, որ Գերմանիան էլ, Առաջին աշխարհամարտի տարիներին Ռուսաստանի հետ պատերազմի մեջ լինելով, Հայոց մեծ եղեռնի կազմակերպման գործում պակաս կարևոր դեր չէր խաղացել՝ Թուրքիային մղելով այդ ոճրագործությանը: Հայտնի է, որ Թուրքիան, նրա դրոմամբ օգտագործելով 1914-1918 թթ. պատերազմական իրավիճակը, ողջ արևմտահայությանն արտաքուստ ռազմական գոտուց դուրս բերելու և նրա անվտանգությունն ապահովելու, իսկ ներքուստ, այսպես կոչված, ռուսական կողմնորոշում ունենալու պատճառով բռնի կերպով տեղահանել էր իր պատմական բնօրրանից և տարագրության ճանապարհներին ու Դեր-Չորի անապատներում սրի քաշել ու ոչնչացրել՝ թալանելով ու ավերելով նրա ունեցվածքն ու բնակավայրերը: Եվ այժմ՝ այդ աշխարհացունց ոճրագործությունից քառորդ դար անց՝ 1941-1945 թթ., Գերմանիան, կրկին Թուրքիայի հետ դաշնակցած, կռվում էր Խորհրդային Միության դեմ: Ուստի այդ պատերազմում Գերմանիայի պարտությունը հասունացրել էր պահը՝ ազատագրելու Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի տարածքները, որոնց մի զգալի մասը նախկինում եղել էր Ռուսաստանի կազմում: Սակայն, ինչպես հայտնի է, պատերազմի վերջում ստեղծված քաղաքական անբարենպաստ հանգամանքների բերումով այդ ծրագիրը չիրագործվեց և հետաձգվեց:

Գ. Ստեփանյանի եղեռնապատումն առաջին անգամ լույս է տեսել այդ օրերին, որը, փաստորեն, կատարված ոճրագործությունը վեր հանող մի վկայություն էր՝ ներկայացված ականատեսի կողմից: Այդ գիրքը ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Խորհրդային Միության մեջ տպագրված առաջին վավերագիրն էր՝ նվիրված Հայոց մեծ եղեռնին: Նույն օրերին այդ գրքից մի մեծ հատված թարգմանվել է ռուսերեն և տպագրվել Մոսկվայում: Ծրագրված է եղել նաև գիրքն ամբողջությամբ թարգմանել մի քանի լեզուներով և հրատարակել, բայց, ցավոք, դա ևս չի իրականացվել: Գ. Ստեփանյանի այդ գրքի հրատարակությունը մինչև 1960-ական թվականները թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում եղել է Հայոց մեծ եղեռնի մասին փնտրված գեղարվեստական արժեքավոր երկ: Նրանում ներկայացված է հեղինակի հոր՝ Խաչատուր Տեր-Ստեփանյանի՝ եղեռնի օրերին ապրած կյանքի հավաստի պատմությունը:

Հետագայում Գ. Ստեփանյանը գրում է նաև իր կյանքի պատմությունը «Որբաշխարհ» ընդհանուր վերնագրով: Սակայն «Որբաշխարհը» երկար ժամանակ հեղինակը տպագրության չի ներկայացնում, շարունակում է նրա վրա աշխատել՝ իր մանկական հիշողությունների ծալքերից հանելով նորանոր պատկերներ, գիրքը համալրում է նոր էջերով, ավելացնում նոր բաժիններ ու գլուխներ: Այսպիսով նա ամբողջացնում է Մեծ եղեռնի օրերի ու դրան հաջորդած որբանոցային տարիների մասին իր կենսագրական վեպը: Այն վերջնականապես ավարտում է 1989 թ. և «Միձավանջային օրերի» հետ հանձնում հրատարակության: Բայց, դժբախտաբար, գիրքը դեռ լույս աշխարհ չէկաձ, կյանքից հեռանում է հեղինակը: Իսկ մեկ տարի անց՝ 1990 թ., «Հայաստան» հրատարակչությունը մեկ հատորով 30 հազար օրինակ տպաքանակով լույս է ընծայում այդ գիրքը, որն ուներ երեք բաժին՝ «Պատմում է հայրը», «Պատմում է որդին» և «Որբաշխարհ»: Գրքի ողջ տպաքանակն իսկույն սպառվում է՝ մեծ հետաքրքրություն առաջացնելով ընթերցողների շրջանում:

Արդ, դրանից երկու տասնամյակ անց Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը կրկին լույս է ընծայել Գ. Ստեփանյանի հիշյալ գիրքը<sup>86</sup>: Այս նոր՝ երրորդ համալրված հրատարակչությունը նախորդներից տարբերվում է առաջաբանով ու վերջաբանով: «Երկու խոսք» առաջաբանը, որը գրել են երջանկահիշատակ հեղինակի արժանավոր որդիները՝ Պերճ և Արմեն Ստեփանյանները, ընթերցողին ծանոթացնում է գրքի ստեղծման պատմությանը և այլ անհրաժեշտ ու հետաքրքիր մանրամասների: Այնուհետև «Պատմում է հայրը» («Միձավանջային օրեր») և «Պատմում է որդին» («Որբաշխարհ») մասերի վերջից ավելացված է նոր բաժին՝ «Պատմում է թոռը» (վերջաբան) վերտառությամբ, որտեղ Խաչատուր Տեր-Ստեփանյանի թոռը՝ Արմեն Տեր-Ստեփանյանը, համառոտ ներկայացնում է Մեծ եղեռնի ականատես իր պապի ու հոր կենսագրությունների չգրված էջերը, որոնք նրանց կողմից «մոռացության» էին մատնվել գրքի իրենց պատումներում: Դրանով գիրքը ձեռք է բերել հետաքրքիր կառուցվածք, և «Միձավանջային օրերն» ու «Որբաշխարհը» ունեցել են իրենց տրամաբանական շարունակությունը

---

<sup>86</sup> Գ. Խ. Ստեփանյան, Միձավանջային օրեր, «Հայկական մատենաշար Գալուստ Կիլիպեկեան հիմնարկութեան», Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 588:

և ավարտը: Եվ այն դարձել է Մեծ եղեռնի ընթացքում բնաջնջված երզնկացի Տեր-Ստեփանյանների շեն ու բազմանդամ գերդաստանի՝ հրաշքով փրկված մի շառավիղի տոհմագիրքը: Սակայն այն կարելի է համարել նաև Դեր-Չորի արքայի ճանապարհին նահատակված բոլոր երզնկացիների տոհմագիրքը, նրանց հիշատակի հանդեպ անթառամ մի պասկ: Նրա էջերում՝ հոր ու որդու պատմությունների ընդհանուր ֆոնին, ներկայացված է Մեծ եղեռնի սարսափազդու համայնապատկերը, որն հնարավոր չէ ընթերցել առանց արցունքների:

Գիրքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասն ընդգրկում է հեղինակի հոր՝ Թարգի (ղերձակ) Խաչատուրի գլխով անցած պատմությունները, որոնք շատ դեպքերում նմանվում են հրաշապատում հեքիաթների: Նա ծնվել է Արևմտյան Հայաստանի հինավուրց ու հռչակավոր Երզնկա քաղաքում՝ դերձակ Մարտիրոսի հյուրասեր ընտանիքում: Մանկուց սովորել էր հոր արհեստը և նրա մահից հետո ընտանիքի հոգսն առել իր ուսերին: Հետո Երզնկայից տեղափոխվել էր մոտակա Մամախաթուն գյուղաքաղաքը, որտեղ կազմել էր ընտանիք և շարունակել իրենց բազմանդամ գերդաստանի հարուստ ավանդույթները:

«Թուրքերի հետ մեր հարաբերությունները լավ էին... Լավ էինք ապրում, բայց չէինք տեսնում, որ կապույտ երկնքում ամպեր էին կուտակվում», - պատմում է նա (էջ 14): Սակայն շուտով սկսվում է պատերազմը, և ամեն ինչ գլխիվայր շուռ է գալիս:

Թարգի Խաչիկը գորակոչվում է թուրքական բանակ՝ բախտի քմահաճույքին թողնելով իր ընտանիքը՝ ծեր մորը, կնոջը, երեք մանկահասակ երեխաներին, մյուս հարազատներին: Մթնոլորտը գնալով շիկանում է, ամպերը խտանում են հայոց բնակավայրերի գլխին, կայծակի արագությամբ տարածվում է չարաղետ լուրը. «Թուրքիան միացել է Գերմանիային և պատերազմ հայտարարել Ռուսաստանին»: Սկսվում է «ջիհադը»՝ սրբազան պատերազմը: Եվ մեկը մյուսի հետևից դատարկվում են Երզնկան, Սեբաստիան, Մալաթիան, Կարինը և շատ ու շատ այլ հայկական քաղաքներ ու գյուղեր: Տեղահանվում է ողջ արևմտահայությունը: Շեն ու բարգավաճ երկիրը ամայանում է, վերածվում փլատակների ու մոխրակույտերի: Եվ այս ամենը կատարվում է քար աշխարհի աչքի առջև: Սկսվում է զինվոր Թարգի Խաչիկի ողիսականը: Անհավատալի են թվում նրա՝ այդ օրերին տեսածն ու լսածը, դժոխքի վերածված իր



հայրենի եզերքի մասին նրա պատմածները: Եվ նա, կորցրած տուն ու տեղ, ընտանիք ու երեխաներ, բոլոր հարազատներին, հրաշքով փրկվելով, մի կերպ հասնում է Հայաստան: «Ես վերջացրի իմ. թող որդիս էլ պատմի իր ողիսականը», - այսպես է ավարտում իր ապրած մոճավանջային օրերի պատմությունը: Իսկ որդու՝ Գառնիկի մանկության ու պատանեկության հուշապատումն առավել սոսկալի ու սահմռկեցուցիչ է: Այն ընդգրկում է գրքի երկրորդ մասը, որն ունի «Պատմում է որդին» վերտառությունը: Այս մասն ունի երկու բաժին, որոնցից առաջինն ընդգրկում է Գառնիկ Ստեփանյանի մանկական հուշերն իր ծննդավայր Մամախաթունի, ծնողների, պապի ու տատի և մյուս հարազատների մասին: Դրանք մանկական անաղարտ հոգում պահպանված սրտազեղ պատմություններ են՝ գրված գեղարվեստական ճոխ լեզվով ու մեծ վարպետությամբ: Դրանցում իշխում են կարոտի ցավն ու թախծաշաղախ զգացմունքները, հայրենի եզերքի անմոռանալի պատկերները, որոնք հաճախ մոռացվում ու մթագնում էին թուրք բարբարոսների վայրագ միջամտություններով:

Հետո գալիս են ավելի սոսկալի ու դառնաղի օրեր. հորը տանում են զինվորական ծառայության, իրենք մնում են անելանելի վիճակում, մոլեգնում են սովն ու համաճարակը, հիվանդանում ու մահանում է փոքրիկ քույրը՝ Վարսենիկը, ապա սկսվում է տեղահանությունը, և աքսորի կես ճամփին սաստկացող ձյան փաթիլների տակ է մնում հոգնած ու ուժասպառ, մահվան ճիրաններում գալարվող Վարդանուշ տատի մարմինը: «Տատիկիս թողեցինք ճանապարհի վրա, - հիշում է Գառնիկը, - լաց լինելով շարունակեցինք քայլել: Մի երկու քայլ գնում էինք, հետ էինք նայում: Նույն տեղում և նույն դիրքով նստած էր... Իսկ ձյունը խոշոր-խոշոր փաթիլներով իջնում էր նրա վրա:

-Գայլերը հիմա տատիկիս կուտեն,- ասացի ու սկսեցի լաց լինել:

Ոչ ոք ոչինչ չասաց: Կրկին նայեցի: Հիմա հազիվ էր երևում, երևում էր ոչ թե մարդու, այլ ձնեմարդու տեսքով, ինչպիսին երեխաներս ճմռան ամիսներին պատրաստում էինք մեր բակերում: Մեկ էլ նայեցի, հազիվ նշմարելի ձյունե մի արձանի էր նմանվում: Հետո՝ ոչինչ-ոչինչ չէրևաց: Տատիկս սառած մնաց կես ճամփին (էջ 210-211):

Աքսորյալների քարավանը շարունակում է ճանապարհը: Մայրը, գրկած փոքրիկ Ավետիսին և բռնած Գառնիկի ձեռքից, թուրք ու չեչեն

նստիկանների մտրակների շաշյունների տակ շարունակում է քայլել բզկտված քարավանի նոսրացող շարքերում: Իսկ փոքրիկ Ավետիսը՝ քաղցած ու ծարավ, լալիս է մոր գրկում: «Չէր իջնում նրա գրկից, փետում, քաշում էր մագերը, բղավում», - հիշում է եղբայրը: Ու հանկարծ Եփրատի բարձրադիր ասիին տեղի է ունենում այն, ինչ մարդկային մտքից ու երևակայությունից դուրս է: «Քեմախ բողազի կոչվող ահռելի կիրճի մոտ ժանդարմներից մեկը, խլելով Ավետիսին մոր գրկից, մի ակնթարթում նետեց գետը, հրեշային մի ծիծաղով հայտնելով, թե վերջապես ազատել է մորս լալկան երեխայից ու ծանր բեռից», - գրում է Գառնիկը (էջ 212): Ինչպե՞ս բնութագրել այս ողբերգությունը կամ այն մյուսը, որին դարձյալ ականատես են եղել մայր ու որդի. «Վեց շնչից էր բաղկացած այդ ընտանիքը՝ մայրը և հինգ երեխա, երկուսը տղա, - հիշում է հեղինակը: - Կինը տառապում էր ճամփին. ո՛ր մեկին գրկեր, ո՛ր մեկին տաներ, ո՛ր մեկին հաց տար: Մի գիշեր ջղածգական վիճակի մեջ թունավորեց հինգ երեխաներին: Նստեց նրանց կողքին, տեսավ նրանց մարմնական ահավոր գալարումները: Լաց չեղավ, քարացել-մնացել էր, գուցե ցնդել... Դիտեց որդիների հանգչելը, և բռունցքները վեր բարձրացած, անիծեց աստծուն, աշխարհի մարդկանց ու ինքը նույնպես ձուլվեց Եփրատի ջրերի հետ» (էջ 212):

Այսպիսի տեսարանները քիչ չեն գրքում: Եվ կարող էին ավելի շատ լինել, եթե հեղինակը դրանք չհաներ գրքից, չոչնչացներ: Ահա այդ մասին ինչ է գրում նա. «Հետո ի՞նչ պատահեց մեր քարավանին: Ես այդ ամբողջ պատմությունը գրել էի 1948 թվականին, երբ լույս տեսավ իմ «Որբաշխարհ» գրքի առաջաբանը «Գրական թերթում»: Գրել էի նաև այլ գլուխներ: Բայց 100 էջից բաղկացած այդ հատվածը, որտեղ նկարագրել էի Երզնկայից մինչև Մալաթիա մեզ հետ պատահած դեպքերը, ինձ չբավարարեց, պատռեցի և գցեցի զամբյուղը: Ինձ թվում էր, թե սուտ են դրանք, արդյունք իմ բորբոքված երևակայության, այդպիսի բաներ չէին կարող լինել:

Հիմա էլ այն կարծիքին եմ, որ չպետք է գրվի այդ գլուխը ոչ միայն ներվեր խնայելու համար, այլ այն պատճառով, որ չեն կարող գրել այն մարդիկ, որոնք ականատես են եղել դրանց: Հոգեբանական ինչ-որ բան կա, որ չեմ կարողանում բացատրել: Նման նյութեր հաղթահարելու հա-

մար ամենից առաջ ժամանակ է հարկավոր: Գուցե մեկ դար անց ավելի հեշտ լինի հաղթահարել դժվարությունը և գրել» (էջ 211):

Ինչպես տեսնում ենք, հեղինակն իր աչքի առաջ կատարված աներևակայելի ոճիրները նույնիսկ տասնամյակներ անց չի ցանկացել գրել ու ներկայացնել ըմբերցողներին՝ մտածելով, թե դրանք անհավատալի ու մտացածին կրթված և կարող են մարդկանց հոգեկան աշխարհը...

Այո՛, հարյուր հազարավոր գաղթականների քարավանները հենց իրենց ուղեկցող թուրք ու չեչեն ոստիկանների կողմից ամայի ճանապարհներին ու ձորերում ենթարկվում էին դաժան կոտորածների ու թալանի, մայրերն ու մանուկները նետվում էին կիրճերն ու գետերը, դեռատի աղջիկները բռնաբարվում ու անարգվում էին, ծերերին սրախողխող էին անում ու թողնում ճանապարհների եզրերին՝ գազաններին կեր դառնալու: Հեղինակը վկայում է, որ Երզնկայի մոտակայքից դուրս բերված 1200 հոգուց բաղկացած քարավանից մինչև Մալաթիայի այգիները մնում են ընդամենը 50-60-ը: Մայր ու որդի կարողանում են փախուստի դիմել, որպեսզի փրկվեն ոչնչացումից: Սակայն այդ փորձն էլ չի փրկում նրանց հետագա սարսափներից ու տառապանքներից: Ամենուր ահն ու մահն էին թագավորում, ամեն քայլափոխի մի նոր դիպված էր հանդիպում նրանց: Ավելորդ չենք համարում այստեղ վկայակոչել Մալաթիայի մոտակայքում՝ աղբյուրի մոտ տեղի ունեցած «սարսափելի պատահարի» նկարագրությունը, որպեսզի ցույց տանք, թե եղեռնի օրերին թուրք ազգաբնակչության շրջանում ինչ հոգեբանություն էր ներարկվել, և ինչպիսի վերաբերմունք էր արմատավորվել «էրմենի մուհաճիրների» (հայ գաղթականների) նկատմամբ:

«Մայր ու տղա, կանգնած աղբյուրի մոտ, սարսափից դողում էինք,- գրում է նա:- Ուզեցի ջուր խմել, թուրք աղջիկը հրեց մի կողմ՝ ասելով, թե իրավունք չունեն իմ գյավուրի բերանով պղծել մաքուր ջուրը...

Աղբյուրի մոտ հայտնվեցին երկու թուրք երիտասարդներ: Մեկի ձեռքին կար հաստ պարան. երկուսի ձեռքին էլ կեռ դաշույններ՝ պատյանների մեջ: Գլխներին սպիտակ չալմա ունեին, ոտներին՝ կարմիր եմենի:

Նախ զննեցին մեզ ոտից գլուխ, մեկը գլուխը բարձրացրեց դեպի երկինք, փառաբանեց աստծուն՝ այս մատաղը իրեն վերապահած լինելու համար: Աղբյուրի մոտ արդեն հավաքվել էին 4-5 այլ կանայք, ովքեր

դիտում էին տեսարանը՝ անհամբերությամբ: Տղամարդիկ, դառնալով մեզ, հրամայեցին հետևել իրենց դեպի ձորի ստորոտը:

Մայրս չէր ուզում բաժանվել կանանցից: Խնդրում էր նրանց ազատել մեզ: Ոչ ոք կարևորություն չտվեց: Թուրքերը մեզ հրեցին դեպի ձորը, պարանը անցկացրին մորս վզովը և սկսեցին քաշել...

Դեպի սպանդանոց տարվող ոչխարի համակերպությամբ հետևեցինք նրանց: Բավականին իջանք ցած: Արդեն աղբյուրը չէր երևում, ձորն էլ գնալով ավելի ու ավելի խորն էր դառնում, երկու կողմերին մեկ-մեկ նեղ կածան:

Երբ հասանք ամայի մի տեղ, պարանը քաշեցին, մայրս ընկավ գետին: Ես կանգնած նրա մոտ ամբողջ մարմնով դողում էի: Արտասուքը չորացել էր աչքերումս. հասկանում էի, որ մեզ սպանելու են... Պարանից բռնած՝ մորս քաշ տվին դեպի առուն, մեկը պինդ բռնեց մարմինը, մյուսը հանեց կեռ դաշույնը, քշտեց թևերը...

Մեր բախտից, հենց այդ պահին, առվի կողքին կածանի վրա երևաց տարիքոտ մի կին՝ գյուգյունը ուսին՝ ջրի գնալիս: Հենց որ տեսավ մեզ՝ փայլատակող դաշույնի տակ, ցած դրեց գյուգյունը, վազեց մեր կողմը, նետվեց ուղիղ մորս մարմնի վրա և բղավեց մարդասպանների երեսին.

-Բավական է, անօրեններ, չկշտացաք անմեղ մարդկանց արյունից, ի՞նչ եք ուզում խեղճ ու անօգնական այս թշվառներից, այս չոճուխից: Տղամարդ եք, գնացեք թշնամու դեմ:

Մոլեգնած երիտասարդները մի դաժան հայացք գցեցին պառաձի վրա, մեկը ուզեց հրել նրան մի կողմ և ավարտել սկսված գործը, բայց թրքուհին փաթաթվել էր մորս և ասում էր, թե միևնույն է, չի թողնելու, որ սպանեն:

Հետո այն, որ դաշույնը ձեռքին էր, ասաց,- դու մեր բարեկամ Մուստաֆա էֆենդիի մայրն ես, ես ճանաչում եմ քեզ, որդուդ խաթեր խնայում եմ, թող կորչեն այս կողմերից, թող ուրի՛շը սպանի, միևնույն է, նրանք իրավունք չունեն ասրելու: Այդպես է ասել մեր մողլան՝ ոչ մի հայ չպետք է մնա Մալաթիայում: Դաշույնը դրեց պատյանի մեջ և ընկերոջ հետ բարձրացան դեպի աղբյուրը:

Մայրս դեռ պառկած էր գետնին և սառած աչքերով նայում էր ազատարար կնոջ դեմքին, առանց հասկանալու, թե ինչ կատարվեց, երա՞զ էր, հրա՞շք, իրականություն՞ն... Իսկ ես նայում էի թրքուհու նիհար, ոսկ-

րացած դեմքին, կապտած ձեռքերին, որոնք այնքան մման էին իմ տատիկի ձեռքերին...» (էջ 216-217):

Ահա այսպիսի դիպվածներով ու արկածներով մայր ու որդի կարողանում են իրենց գոյությունը պահպանել՝ մերթ ցերեկայանալով որպես թուրք գաղթականներ, մերթ քաքնվելով ամայացած հայկական բնակավայրերի փլատակներում, մինչև որ մեղմվում են հայերի կոտորածները: Եվ այդպես ահ ու սարսափի մեջ լինելով՝ նրանք Սեբաստիայում մի կերպ քարշ են տալիս իրենց գոյությունը: Հետո փոքրիկ Գառնիկը թուրքի անունով ընկնում է թուրքական որբանոց, որտեղ իր մման ծպտյալ հայ երեխաներ էլի կային: Սակայն ամեն վայրկյան վտանգի մեջ էր նրանց կյանքը: Հետո բարի մարդկանց միջնորդությամբ տեղափոխվում է այլ որբանոցներ, ծանր հիվանդանում և ընկնում է ամերիկյան հիվանդանոց: Առողջանալուց հետո դառնում է մի հայ կոշկակարի աշակերտ, հանդիպում է նոր, չարաղետ դիպվածների: Եվ մի օր էլ հաճախում է Սեբաստիայի նորաբաց հայկական դպրոցը: Սակայն Թուրքիայում շուտով փակվում են հայկական դպրոցները, և պատանեկության շեմին նոր-նոր ոտք դրած Գառնիկը, հրաժեշտ տալով մորն ու հարազատ վայրերին, «մահվան նավով» բազմաթիվ հայ ու հույն որբերի հետ տեղափոխվում է Հունաստան: Հուզիչ է նկարագրված պատանի Գառնիկի մորից բաժանվելու պահը. «Մայրս համբուրեց ինձ, լաց եղավ և մտեց ձյան վրա. նա բաժանվում էր որդուց, որին անցկացրել էր Մամախաթունից Մալաթիա, Մալաթիայից Սեբաստիա ձգվող սհավոր ճանապարհով՝ կրելով աննկարագրելի տանջանքներ ու գրկանքներ» (էջ 340):

Հունաստանում պատանի Գառնիկի համար սկսվում է մի նոր, բայց դարձյալ ոչ այնքան դյուրին կյանք, որը նա նկարագրում է «Որբաշխարհի» երկրորդ բաժնում: Գրքի այս բաժինը բաղկացած է հինգ գլուխներից, որոնցում հեղինակը ներկայացնում է իր հետագա ճակատագիրը՝ մինչև Եգիպտոս տեղափոխվելը: «Մահվան նավը» նստելուց հետո նա իրեն լրիվ որբ է գգում. իր հետ չէր մայրը՝ իրեն պահպանողը, սնուցողն ու խնամողը, իր հույան ու ապավենը, հոր մասին ոչ մի լուր ու տեղեկություն չունեք, գնում էր մի անհայտ աշխարհ:

Մարսափելի է «մահվան նավում» բռնկված համաճարակի նկարագրությունը, որի համար նավը քառասուն օր մնում է ծովի ջրերում կանգնած: Խղերայից ու ժանտախտից վախճանվում են հարյուրավոր

որբեր ու գաղթականներ, որոնց մարմինները նետում էին ջուրը: Քառասուն օրվա ընթացքում նավի վրա եղած 2500 մարդուց մնում է ընդամենը 800 հոգի: Նախախնամությունը այստեղ ևս օգնում է Գառնիկին, և նա, հաղթահարելով այդ ծանր հիվանդությունները, հրաշքով փրկվում և հասնում է Էլլատայի ափերը:

Նա այստեղ որոշ ժամանակ մի խումբ հայ որբերի հետ, վտղոցներում աստանդական կյանք վարելուց հետո ապաստանում է Լուֆրա Էդիպոսի, Խալքիսի և Սկալա Օրոպոսի որբանոցներում, տեսնում թե՛ հայ, թե՛ հույն և թե՛ ամերիկացի չար ու բարի դաստիարակների ու ուսուցիչների, ցմրուր ճաշակում որբանոցային կյանքի ամբողջ դառնությունները, մաշկի վրա զգում «միստեր Չաքալոֆի ճիպոտի» գորությունը, տանում շատ ու շատ այլ դժվարություններ: Ամենուր նույն խոսքն էր լսվում՝ «որբ մը ավել, որբ մը պակաս»: Գ. Ստեփանյանի «Որբաշխարհը» ընթերցելիս ակամայից հիշում ես մեծ բանաստեղծ Հ. Շիրազի «Իմ ընկեր Լորիկը» պոեմը.

Հե՛յ, վշտի բույն որբանոց,

Հուշերդ անգամ սրտախոց...

Ոչ մի տարբերություն չկա Գ. Ստեփանյանի նկարագրած «միստեր Օգդենի» և Հ. Շիրազի «միստր Վորդի» միջև: Նրանք երկուսն էլ նույն մարդիկ են, մեկը՝ «փոս ընկած աչքերով, դուրս ցցված այտուսկրներով, ձվաձև ու երկար դեմքով», իսկ մյուսը՝ «բերանը՝ մի շան բույն, լեզուն՝ մեջը կապած շուն»: Երկուսն էլ՝ օտար ու խորթ Մեծ եղեռնի մղձավանջներով անցած, ծնողներ ու հարազատներ կորցրած, հայրենի տան փլատակները տեսած հայ որբ մանուկների համար: Նրանց երազը իրենց ծննդավայրերը վերադառնալն էր, կորցրած ծնողներին ու հարազատներին գտնելը, բայց, ավա՛ղ, այդ բախտը շատ շատերին այդպես էլ չի վիճակվում:

Գ. Ստեփանյանի «Մղձավանջային օրեր» եռագրությունն ավարտվում է այնտեղ, երբ նա, «մնաս բարով» ասելով հյուրընկալ Էլլատայի ասփերին, չափահաս դարձած մեկնում է Եգիպտոս: Թե ինչ է անում նա այդ նոր երկրում, հետաքրքրասեր ընթերցողը դրա և շատ այլ հարցերի

պատասխանները կարող է ստանալ՝ կարդալով նրա «Հողվածներ և հուշեր»<sup>87</sup> գիրքը:

Միայն նշենք, որ Գառնիկը դեռևս Խալքիսի որբանոցում եղած ժամանակ նամակ էր ստացել հորից՝ Թարգի Խաչիկից, որն ապաստանել էր Երևանում: Այդ պահից որդու միակ ցանկությունն էր օր առաջ հասնել Երևան, տեսնել հորը, փնտրել ու գտնել մորը: Կահիրեում նա մնում է հինգ տարի, աշխատում է «Արև» թերթի խմբագրությունում՝ որպես գրաշար: Այդ ընթացքում ծանոթանում է Երվանդ Օտյանի, Վահան Թեքեյանի և շատ այլ նշանավոր մտավորականների հետ, մինչև որ 1930 թ. վերջնականապես գալիս է Երևան ու հանդիպում հորը: Նրա կյանքի հետագա մանրամասներին կարելի է ծանոթանալ գրքի «Պատմում է թոռը» վերջաբանից, օրինակ՝ ինչպես է մայրը՝ Ոսկեգյուլը ևս գտնում է կորցրած ամուսնուն ու որդուն և Պոլսից տեղափոխվում է Երևան: Եվ այդպես եղեռնից հրաշքով փրկված երզնկացի այս բեկորները գտնում են իրար ու կրկին շարունակում Տեր-Ստեփանյանների երբեմնի շեն ու բազմանդամ գերդաստանի ավանդույթները:

«Մղձավանջային օրերը» հայ նորագույն գրականության լավագույն ինքնակենսագրական վեպերից մեկն է: Նրանում ներկայացված է ոչ միայն Հայոց մեծ եղեռնի ականատեսի վկայությունները, այդ գեեեցից փրկված բեկորների՝ հարազատ վայրեր վերադառնալու և քարուքանդ եղած օջախները նորից ծխացնելու փորձերը, ցիրուցան եղած, մերկ ու բոկոտն հազարավոր որբերի կյանքը օտար ավերում, այլև հայկական մի ողջ երկրամասի՝ Երզնկայի, Մեքաստիայի ու Մալաթիայի՝ եղեռնի օրերի հավաստի պատմությունը: Գրքի բոլոր հերոսներն իրական մարդիկ են իրենց անուն-ազգանուններով, որոնք հետագայում դարձել են մեր գիտության ու մշակույթի երևելի դեմքեր, անվանի անձինք:

Այս գրքով կորստից փրկվել են երզնկացիների ազգային սովորույթներից, առօրյա կյանքին ու կենցաղին, տարազին ու ծեսերին, բնակավայրերի ու տների ներքին կառուցվածքին ու հարդարանքին վերաբերող շատ ու շատ տեղեկություններ: Հատկապես արժեքավոր են լեռների ու ձորերի, գետերի ու աղբյուրների, բերդերի ու կամուրջների մասին պահ-

---

<sup>87</sup> Գ. Խ. Ստեփանյան, Հողվածներ և հուշեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1985:

պանված ավանդությունները, որոնք մեծ վարպետությամբ ներկայացված են վեպում: Գրքի արժանիքներից մեկն էլ պետք է համարել ժողովրդական հարուստ բառ ու բանի, առականների, ասացվածքների, դարձվածքների ու թևավոր խոսքերի, բանավոր ասվող երգերի օգտագործումը:

Գ. Ստեփանյանի վեպի արժանիքների մասին կարող ենք շատ խոսել, վկայակոչել Հունաստանում լսած երգերի ու ավանդությունների տեղին օգտագործումը, բնության չքնաղ տեսարանների ու գեղեցիկ հուշարձանների նկարագրությունները և այլն: Սակայն բավարարվենք այսքանով՝ ավելացնելով նաև այն խոր հայրենասիրությունը, որ հորդում է գրքի յուրաքանչյուր էջից, և հատկապես որբերի հոգիներում անթեղված այն ցավն ու մրմուռը, կարոտն ու սերը կորսված եզերքի նկատմամբ, որոնք ալեկոծում են նրանց մատաղ հոգիները: Այդ ամենը գիրքը դարձնում են առավել հուզիչ մի հիշատակարան, գեղարվեստական բարձր արժեք ունեցող մի ծաղկագիր մատյան:

Ավելացնենք, որ վեպի այս հրատարակության մեջ, նախորդի հետ համեմատած, կատարվել են վերջին երկու մասերի միավորում, առանձին բաժինների ու վերնագրերի բարեփոխություններ, խմբագրական աննշան միջամտություններ և այլն, որոնք, մեր կարծիքով, պետք չէին: Ցավոք, այս հրատարակության մեջ սպրդել են նաև սրբագրական մի շարք վրիպակներ ու սխալներ: Վերջում կցված է դժվար հասկանալի բառերի բացատրական բառարան, որը կազմվել է թուրքագետ Հ. Ստեփանյանի օգնությամբ: Հեղինակի պատումներում հանդիպող որոշ դարձվածքներ ու մտքեր ուղեկցված են տողատակի ծանոթագրություններով: Գիրքն ավարտվում է Գ. Ստեփանյանի ընտանեկան այլոմից հանված մի շարք արժեքավոր լուսանկարների ներդիրներով:

Նշենք նաև, որ Գ. Ստեփանյանի «Մոճավանջային օրերի» ներկա հրատարակությունը նվիրված է բազմավաստակ հեղինակի ծննդյան 100-ամյակին, ինչպես և Մեծ եղեռնի բոլոր զոհերի հիշատակին: Այն լույս է տեսել որպես «Գալուստ Գ-լուրենկյան» հիմնարկության «Հայկական մատենաշարի» հեթքական հատոր նույն հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն դոկտոր Զավեն Եկավյանի հովանավորությամբ: Մեծ եղեռնի 95-րդ տարելիցի շեմին սույն վեպի վերահրատարակությունը, մեր կարծիքով, կարևորվում է նաև նրանով, որ այն Հայոց



ցեղասպանության միջազգային ճանաչման ներկա փուլում կարող է դառնալ հանրությանը ներկայացվող մի անժխտելի վավերագիր, որն օտար լեզուներով թարգմանելը այս օրերին ցանկալի է և անհրաժեշտ:

## **ԵՐԵՔ ԳԻՐՔ՝ ՆՈՒՅՆ ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ**

Երևանի համալսարանի հրատարակչությունը 1990 թ. «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության կազմավորման 100-ամյակի առթիվ հիմք դրեց մի նոր մատենաշարի և սկսեց լույս ընծայել հայ ազգային-ազատագրական պայքարի ու «Հայ հեղափոխական դաշնակցության» հիմնադիրների ու նրա նշանավոր դեմքերի կյանքի ու գործունեության էջերը վեր հանող և նրանց ուղեւնշային ու լավագույն ստեղծագործությունները ամփոփող գրքեր:

Այդ մատենաշարով մինչև այժմ հրատարակվել է երեք գիրք, որոնք են Քրիստափոր Միքայելյանի «Հեղափոխական մտքերը» (1990 թ.), Սիմոն Զավարյանի «Երկերը» (1991 թ.) և Լևոն Շանթի «Անկախությունը պահանջ ազգային գոյության» (1991 թ.) աշխատությունը:

**ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ** (1859-1905) «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության հիմնադիրներից մեկն է ու նրա կարկառուն ներկայացուցիչը: Ծնվել է Վերին Ագուլիսում և, այնտեղ ստանալով տարրական կրթություն, ընդունվել է Թիֆլիսի ուսուցչական դպրոցը, որն ավարտել է 1880 թ.: Այնուհետև՝ մինչև 1884 թ., իր ծննդավայրում, ապա նաև Թիֆլիսում զբաղվել է մանկավարժությամբ: Այդ շրջանում էլ հարել է նարողնիկությանը, 1882-83 թթ. մասնակցել Թիֆլիսի՝ ազգային-ժողովրդավարական ու նարողնիկական ուղղություն ունեցող գաղտնի խմբակի ստեղծմանը, որը գոյատևել է մինչև 1886 թ.: Անդրկովկասում հայկական դպրոցների փակվելուց հետո նա ուսման պակասը լրացնելու նպատակով մեկնել է Մոսկվա, որտեղ էլ սովորել է քաղաքատնտեսություն և ընկերաբանություն, ծանոթացել փիլիսոփայության հիմունքներին ու մարքսիստական ուսմունքին: 1888 թ. վերադարձել է Թիֆլիս ու ձեռնամուխ եղել կուսակցության ստեղծման գործին և 1890 թ. Ս. Զավարյանի ու Ս. Զորյանի (Ռոստոմ) հետ հիմնադրել է «Հայ հեղափոխական դաշնակցությունը», ապա՝ 1891 թ., նրա օրգան «Դրոշակ» թերթը: Այնու-

հետև իր համախոհների հետ մինչև վերջ նվիրվել է այդ կուսակցության մարտունակությունը բարձրացնելու, հեղափոխական շարժումներ խմորելու և արևմտահայությանը սուլթանական բռնապետությունից ազատագրելու գործին: Շուրջ տասը տարի նա Կովկասում լինում է «Հայ հեղափոխական դաշնակցություն» ոգին: Այդ ընթացքում երկու անգամ բանտարկվում է. առաջին անգամ բանտարկվում է Թիֆլիսում ու մեկ տարով աքսորվում Բեսարաբիա, իսկ երկրորդ անգամ՝ 1895 թ. Բաքվում: Ինչպես նրա կենսագիրներից մեկը՝ Պիեռ Բիարն է նշում, նա հայկական դատին նվիրեց այն բոլոր դադարները՝ ընկած խուզարկության, բանտի և աքսորի միջև, որոնք ռուս ոստիկանությունը տալիս էր նրան: Քաշքշված, հալածված տեղական իշխանություններից, ընտանեկան բավական ծանր բեռը վզին՝ նա նվիրում էր քարոզչությանը ոչ միայն իր ժամանակն ու ուժերը, այլև այն դրամական միջոցները, որոնք կարողանում էր ձեռք բերել լրագրական աշխատանքով:

Ք. Միքայելյանը կուսակցության երկրորդ համաժողովի որոշմամբ 1898 թ. անցնում է արտասահման՝ Ժնև, ստանձնում «Դրոշակի» խմբագրման աշխատանքները և դրա հետ մեկտեղ նախապատրաստում ահաբեկչություն Սուլթան Համիդի դեմ: Այդ նպատակն իրականացնելու համար նա 1903 թ. դարձյալ գալիս է Կովկաս՝ նյութական միջոցներ հայթայթելու: Եվ մույն տարում էլ Բաքվից մեկնում է Ժնև՝ այնտեղից Պոլիս անցնելու և Կարմիր Սուլթանի դեմ իր ահաբեկչական նպատակն իրականացնելու համար: Եվրոպայում Ք. Միքայելյանն իր երկու-երեք ընկերներով նվիրվում է երկու առաքելության. նախ՝ ապահովել «Հայ հեղափոխական դաշնակցության» ապագան և երկրորդ՝ հայկական դատի կողմը գրավել արևմտյան երկրների հասարակական կարծիքը: Եվ այդ ճանապարհին ոչ մի անհաջողություն նրան չընկճեց ու չհուսալքեց: Նա մինչև վերջ գնաց իր նպատակների իրականացման ուղիով: Կյանքի վերջին օրերին, ինչպես նշում է Ավետիս Ահարոնյանը, նա ծպտյալ՝ մեծատուն Սամուել Ֆայնի անվամբ աղջիկն էլ Ռուբինա Ֆայն էր դարձել, մի խումբ համախոհների հետ լրտեսներով ու ոստիկաններով շրջապատված Պոլսում՝ Սուլթան Համիդի քթի տակ, ուժանակներ (ռումբ) էր պատրաստում: Եվ այդ ինքնաշեն ուժանակների փորձարկման ժամանակ էլ նա զոհվեց ընդամենը 45 տարեկան հասակում, նա ընկավ Վիտոռչի լանջին նախքան Կարմիր Սուլթանին տալիք հարվածը:

«Իր ընկերներն ու Սոֆիայի ժողովուրդը մի փառահեղ թաղում արեցին բուլղարական մայրաքաղաքի մեջ,- գրում է Պիեռ Քիարը,- իսկ Կովկասի ավաններում հայերը նրա հիշատակին նվիրեցին այնպիսի սգահանդեսներ, որպիսին չէ եղել ոչ մի պետական մարդու համար»:

Այսպես է ավարտվում իր ազգին անմնացորդ նվիրված Ք. Միքայելյանի կյանքը: Նա, ով եղավ «հայ հեղափոխության սիրտը և հայ մարտնչող երիտասարդության փայփայանքը» (Մ. Վարանդյան), թողել է քաղաքական հրապարակախոսական բնույթի երկեր և լրագրական բազմաթիվ հոդվածներ, որոնցից հատկապես աչքի են ընկնում «Ամբոխային տրամաբանություն» (1900 թ.) և «Կովկասահայի տագնապը» (1903 թ.) աշխատությունները: Սրանցից առաջինը հրատարակվել է հեղինակի եղերական մահից հետո՝ 1909 թ., ժնկում: Իր այս աշխատության մեջ Ք. Միքայելյանը բազմաթիվ էջեր է նվիրել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմությանը: Իր գրքի առաջին մասում նա հատկապես ներկայացնում է արևմտահայության ծանր վիճակը, վերլուծում այդ վիճակը ծնող պատճառները, այդ առնչությամբ անդրադառնում համաշխարհային հասարակական կարծիքին, բերում է բազմաթիվ օրինակներ մամուլից ու այլ տեղերից, որոնք պաշտպանում են հայկական դատը և մերկացնում սուլթանական Թուրքիայի բարբարոսությունները: Ք. Միքայելյանն այդ կապակցությամբ քննադատում է նաև այն ազգային գործիչներին, ովքեր այդ տարիներին հայոց հասարակայնության որոշ շրջաններում տարածում էին այն անհեթեթ կարծիքը, թե հայ հեղափոխականներն են հայկական սոսկալի կոտորածների իսկական պատճառը: Նա, միջազգային հեղինակություններին դիմելով, բազմաթիվ օրինակներով ցույց է տալիս այդ վարկածի ու անհիմն մեղադրանքների սնանկությունը: Այդ ամենը նա վերագրում է ամբոխային տրամաբանությանը: Հեղինակն անում է հայ ազատագրական պայքարի իր առաջարկությունները, տեսականորեն ու գործնականում սպասուցում ու հիմնավորում դրանք, որոնք բխում էին նաև «Հայ հեղափոխական դաշնակցության» ծրագրից: Նա պաշտպանում է ցույցերի, արշավների, սահաբեկչական գործողությունների միջոցով Արևմտյան Հաստանը ազատագրելու գաղափարը:

Հեղինակը, ամփոփելով իր մտքերը, գալիս է այն հիմնական եզրակացության, որ բոլոր ժողովուրդներն էլ ազատության հասել են տևական

պայքարի ու կռվի միջոցով: Հայ ժողովուրդն էլ եթե ցանկանում է ազատագրվել օտար նվաճողների լծից, ապա պետք է մղի հարատև կռիվ. ահա թե որտեղ է նրա փրկության բանալին: «Պահպանենք, շարունակենք կռիվը,- ասում է նա,- որպեսզի լայնանա, ընդարձակվի և ընդարձակվելով հարատևի, ահա դեպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը»:

Ք. Միքայելյանի «Կովկասահայի տագնապը» փոքրածավալ աշխատությունը «Ամբոխային տրամաբանության» օրգանական շարունակությունը կարելի է համարել: Այնտեղ ևս հեղինակը պայքարի կոչ է անում: Նա ցույց է տալիս Արևելյան Հայաստանի ծանր վիճակը ցարական Ռուսաստանի տիրապետության տակ, ինչպիսին Արևմտյան Հայաստանին է արյունարբու Սուլթան Համիդի լծի տակ: Հեղինակն այդ ծանր վիճակից դուրս գալու միակ ելքը տեսնում է պայքարի մեջ: «Մեղկ անդորրությունը չէ, որ ապահովում է մարդկային իրավունքը, այլ կռիվը,- ասում է նա:- Առանց կռվի չկա իրավունք, ինչպես որ առանց աշխատանքի չկա սեփականություն»: «Կռվի մեջ միայն պիտի գտնես քո իրավունքը»: «Արդարությունը մի ձեռքում բռնած ունի կշիռ, մյուս ձեռքում՝ սուր: Կշռով նա կշռում է իրավունքը, սրով պաշտպանում, հաստատում է նրան: Սուրն առանց կշռի՝ մերկ բռնությունն է, կշիռն առանց սրի՝ իրավունքի անգործությունը». այսպես է տրամաբանում գերմանացի Երիմզը՝ եվրոպական ամենառաջակալոր իրավաբաններից մեկը՝ վկայակոչում է Ք. Միքայելյանը:

Հեղինակն այդ կռվում հաղթանակի հասնելու պայմաններից մեկը համարում է ազգային համերաշխության սկզբունքը, որի հետ անհրաժեշտ են նաև կռվի անդորվելի վճռականությունը և իրար խառնվելու, իրար հետ միանալու, իրոք մի ամբողջություն կազմելու միահամուռ, միահոգի պահանջը, որը պետք է ընդհանուր նշանաբան դառնա: «Պատռել է հարկավոր քարտեզների վրա այս կամ այն ավագակապետի կամքով գծված սահմանները,- գրում է նա,- ջնջել է հարկավորը այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից և որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատև են լինում: Ոչ մի բռնություն, ոչ մի հալածանք, ոչ մի սահման չի կարող բաժանել մի ժողովուրդ, եթե նա, տոգորված ընդհանուր շահերի գիտակցությամբ, ունի նաև կռվելու անսասան վճռականություն և կապված, միացած է դարե-

րով սնված ու պահպանված ընդհանուր բնագոյների ու զգացմունքների առողջ զարկերով»:

Մեկ նպատակ, մեկ ամբողջություն՝ հեղափոխական անհաշտ կռվի համար. այսպես է իր մտքերն ավարտում իր ժողովրդի ազատագրությանը որդեգրված հեղափոխականը:

Ք. Միքայելյանի գիրքը հրատարակության է պատրաստել բան. գիտ. թեկնածու Ս. Փանոսյանը: Այն ունի առաջաբան, որը ընտրովի վերցված է Ա. Ահարոնյանի՝ Քրիստափոր Միքայելյանի մահվան 20-ամյակի առթիվ գրված ծավալուն կենսագրականից: Գիրքն ունի նաև վերջաբան, որը պատկանում է ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ Պիեռ Քիարի գրչին: Նրա մեջ հեղինակը խոր հուզականությամբ և հակիրճ տալիս է հայ մեծ հեղափոխականի ու հասարակական-քաղաքական գործչի կյանքի պատմությունը: «Ծանոթագրություններ» բաժնում ներկայացվում են Ավետիս Ահարոնյանի և Պիեռ Քիարի մասին համառոտ տեղեկություններ՝ կապված Ք. Միքայելյանի ներկա գրքի հետ:

**ՍԻՄՈՆ ՉԱՎԱՐՅԱՆԸ** (1865-1913) նույնպես, ինչպես և Ք. Միքայելյանը, անցել է կյանքի դժվարին ուղի: Նրանք գրեթե համատեղ են սկսել իրենց գործունեությունը, 1882-86 թթ. մեկտեղ են եղել Թիֆլիսի հայ նարողնիկական խմբի անդամ, միաժամանակ են բանտարկվել ու ենթարկվել հալածանքների, Ս. Չորյանի հետ միասին են ստեղծել «Հայ հեղափոխական դաշնակցություն» և մինչև իրենց կյանքի վերջը եղել նրա ղեկավար կենտրոնի (բյուրոյի) անդամ:

Ս. Չավարյանը ծնվել է Լոռու Այգեհատ գյուղում: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո սովորել է Մոսկվայի Պետրովսկի երկրագործական ակադեմիայում: Այն ավարտելուց և Կովկաս վերադառնալուց հետո աշխատել է նաև որպես գյուղատնտես: Գրել է ուսումնասիրություններ Երևանի նահանգի, Կարսի մարզի և Արցախի գյուղատնտեսության վերաբերյալ, որոնցում ագրարային հարցերը քննել է լիբերալ նարողնիկության և բուրժուական լիբերալիզմի դիրքերից՝ առաջնությունը տալով ոչ թե սոցիալ-տնտեսական, այլ բնակլիմայական պայմաններին: Մահացել է 1913 թ. Կոստանդնուպոլսում, հետագայում նրա աճյունը տեղափոխվել է թաղվել է Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը:

Ս. Չավարյանի ներկա «Երկերը» ընդգրկում են նրա քաղաքական բնույթի երեք հիմնական աշխատությունները, որոնք են՝ «Ապակենտրո-

նացում», «Հոսանք մը և իր պատճառները» և «Ընտրություններու շուրջ», ինչպես նաև Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյանի դագաղի մոտ արտասանած դամբանական ճառը: Հիշյալ աշխատություններում Հ. Հ. Դաշնակցության «տիպար-ռահվիրան» վերլուծում է իր ապրած ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները, հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքը և այդ համայնապատկերի վրա որոնում հայ ժողովրդի փրկության ուղիները, այդ առթիվ անում իր եզրակացությունները: Նրա այդ աշխատություններն այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը և շատ հարցերում կարող են օգտակար լինել հասարակական-քաղաքական կյանքի հորձանուտը մտած գործիչներին:

Գիրքն ունի նաև առաջաբան («Տիպար Ռահվիրա»), որի հեղինակն է Մ. Վարանդյանը, ինչպես նաև հավելված, որտեղ տպագրված են Ա. Չոպանյանի «Հայկական դերվիշը» ելույթը, որը նա արտասանել է Փարիզում Ս. Չավարյանի մահվան քառասունամյակի առթիվ կազմակերպված սգահանդեսի ժամանակ, և Դ. Վարուժանի դամբանական խոսքը՝ ասված Բանկայթիի գերեզմանատանը՝ հանգուցյալի դագաղի մոտ:

Այս ամենը միասնաբար կերտում են Ս. Չավարյանի ամբողջական կերպարը, ներկայացնում նրան թե՛ իբրև մարդ-անհատի և թե՛ իբրև հասարակական-քաղաքական ականավոր գործիչ:

Ս. Չավարյանի «Երկերը» հրատարակության է պատրաստել բան. գիտ. թեկնածու Դ. Պետրոսյանը:

Մատենաշարի երրորդ գիրքը գրող, մանկավարժ, հասարակական գործիչ **ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ** (1869-1951) գրչին է պատկանում, համարվում նրա պատմաքաղաքական բնույթի լավագույն երկերից մեկը: Լ. Շանթը (Նահաշչպետյան, ապա հոր՝ Սեղբոսի անունով՝ Սեղբոսյան) ծնվել է Կ. Պոլսում, նախնական կրթություն ստացել Սկյուտարի հայոց ճեմարանում, իսկ 1884-91 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Այնուհետև՝ 1892-99 թթ., ուսանել է Լայպցիգի, Յյուրիխի, Ենայի, Մյունխենի (Գերմանիա) համալսարաններում, որից հետո վերադարձել է Անդրկովկաս: Այստեղ 10 տարի ուսուցչություն է արել Թիֆլիսի Գայանյան օրիորդաց և Երևանի թեմական դպրոցներում, եղել է Հովհ. Թումանյանի հիմնադրած «Վերնատան» գործունե անդամներից մեկը, լայն կապեր է ունեցել Ղ. Աղայանի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի և այլ գրողների հետ:

Լ. Շանթը եղել է «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության անդամ և նրա ակտիվ գործիչներից մեկը: 1920 թ. ամռանը նա է գլխավորել Խորհրդային Հայաստանի հետ բանակցելու նպատակով Մոսկվա մեկնած Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը, որը մերժել է բարեկամության պայմանագիր կնքելու խորհրդային կառավարության առաջարկը: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1921 թ., Լ. Շանթը մեկնել է արտասահման, ապրել տարբեր երկրներում (Իրան, Ֆրանսիա, Եգիպտոս) և զբաղվել ուսուցչությամբ ու գրական գործունեությամբ: 1929 թվականից տեղափոխվել է Բեյրութ և մինչև իր կյանքի վերջն ապրել է այնտեղ:

Լ. Շանթն անցել է վաթսուամյա գրական-ստեղծագործական ուղի և այդ ճանապարհին, գրական մեծարժեք երկերից բացի, գրել է նաև պատմագիտական բնույթի մի շարք աշխատություններ, որոնցից են՝ «Ազգությունը հիմք մարդկային ընկերության», «Մտավորականություն և կուսակցություն» և այլն, որոնց մեջ մեծանուն գրողն ու հասարակական-կուսակցական գործիչը քննարկում է ազգային հարցին, հայ ազգի ճակատագրին առնչվող խնդիրներ, դրանց շուրջ անում իր խորհրդածությունները: Նա առավելապես ծանրանում է ընդհանուր բնույթի հարցերի վրա: Նա դեռ այն ժամանակ՝ 1922-23 թթ., առաջ անցնելով ազգային հարցի շատ տեսաբաններից, կանխագուշակում էր բոլոր տեսակի տիրապետությունների խորտակումը, անգամ ամենավտրք ժողովուրդների ազգային զարթոնքը և նրանց անկախության ձգտումը: Նա իր դիտարկումները փորձում է գուգորդել հայ ժողովրդի ազատագրության և անկախության խնդիրների հետ:

Այս հարցերն առավել խորությամբ մեկնաբանվում են Լ. Շանթի «Անկախությունը պահանջ ազգային գոյության» աշխատության մեջ: Այստեղ նա պատմական հարուստ նյութի հիման վրա և հայ ժողովրդի օրինակով վերլուծում է ազգային հարցին առնչվող բազմաթիվ ու բազմապիսի խնդիրներ: Նրա այդ աշխատությունը բաղկացած է ութ հիմնական գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանվում են մի շարք առանձին ենթաբաժինների: Յուրաքանչյուր գլխում ու նրանում ընդգրկված ենթաբաժիններում հեղինակը վերլուծում է հայ ժողովրդի վիճակն Արևելքի ու Արևմուտքի, այնուհետև՝ Եվրոպայի ու արևմտյան քաղաքակրթությունների խաչմերուկներում: Ապա անդրադառնում է ասորապարսկական,

հունահռոմեական ու մահմեդական հազարամյակներին, որոնք եղել են մեր գոյության «դարավոր մենամարտը», և նոր դարաշրջանի խնդիրների քննարկմանը: Գրքի երրորդ գլուխը նվիրված է մեր դարասկզբի ուղղության բնորոշ գծերին, ազգերի անկախացմանն ու դաշնակցմանը: Այնուհետև նա վերլուծում է Անգլիայի ու Ռուսաստանի հակադիր ձգտումները Սերձավոր Արևելքում: «Հայ կյանքի հին ու նոր ղեկավարները» գլխում հեղինակը քննարկում է մի շարք կարևոր հարցեր՝ կապված Արևելքի ու Արևմուտքի հետ Հայաստանի ունեցած փոխհարաբերություններին, վեր հանում ազնվականության, հոգևորականության, ղեկավար դասակարգերի առանձնահատկությունները: Սրան հաջորդող գլխում քննարկում է հայ նոր ղեկավարության ձգտումները, նրա «երազն ու քարոզը», պատերազմի բերած «հույսերն ու հուսալքումը», խոսքի և գործի դրսևորման շրջանները և այլն: Գրքի մյուս երկու գլուխներում Լ. Շանթն անդրադառնում է մեր ազգի գոյությանը և անկախության հասնելու նրա ոգորումներին: Հեղինակը գալիս է այն հաստատ համոզման, որ անկախության ձգտումը գոյության հարց է, և վաղ թե ուշ բոլոր մեծ ու փոքր ժողովուրդները պետք է հասնեն դրան: Նա գտնում է, որ դա է միակ «բնական ճամփան», և այդ ուղուց ամեն մի շեղում անհիմաստ է, ու ամեն վարանում՝ վնասակար: Նա ազգամիջյան հարաբերությունների գլխավոր միտումը նույնպես տեսնում է մի կողմից ազգային պետությունների առաջացման կամ «ապակենտրոնացման», իսկ մյուս կողմից՝ անկախության հիմքի վրա, նրանց «դաշնակցության» մեջ:

Այսպիսով, Լ. Շանթի հրապարակախոսության գագաթը հանդիսացող ներկա աշխատության մեջ արծարծված շատ հիմնահարցեր այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունն ու հնչեղությունը, և դրանց մի մասն իրականություն է դառնում մեր օրերում:

Գիրքն ունի նաև հավելված, որտեղ զետեղված են Սիմոն Վրացյանի «Շանթի հետ» և Մուշեղ Իշխանի «Լևոն Շանթ» հուշերն ու գնահատանքի խոսքերը՝ հայ խոշորագույն գրողի, հասարակական-քաղաքական ու պետական գործչի մասին: Այն կազմել և առաջաբանը գրել է բան. գիտ. թեկնածու Ս. Փանոսյանը:

Ամփոփելով վերոհիշյալ երեք գրքերի մասին մեր գրախոսությունը և մի փոքր շեղվելով՝ այստեղ մենք հատվածաբար բերում ենք Մ. Վարանդյանի՝ Ս. Ջավարյանին և Բ. Միքայելյանին տված բնութագրումներից



երկուսը, որոնք քաղել ենք Ս. Չավարյանի՝ նույն մատենաշարով լույս տեսած «Երկերի» առաջաբանից: Դրանք նույնությամբ կարելի է վերագրել նաև Լ. Շանթին: «Մեռելներ կան, որ թերևս պետք էլ չունին կենդանագիրների ու հուշարձանների,- գրում է նա:- Ոչ մի դագաղ, ոչ մի տապանաքար չի բաժանի մեզ՝ ժամանակավոր ողջերիս, մեր հարազատ Սիմոնից, մեր անմոռանալի Քրիստափորից: Նրանք կմնան միշտ մեր ուղեղների ու սրտերի մեջ, մեր ճիգերի մառախլապատ լաբիրինթոսում, որպես հավերժական ուղեկիցներ և անբաժան ճառագայթող փարոսներ»: «Կգա, այո՛, ժամանակ,- ասում է նա,- երբ նրանք երկուսը կցուցադրվին հայկական երախտագետ սերունդների առջև, կենսագրական ընդարձակ գրվածքներում, իրենց հզոր ու դյուբիչ կերպարանքներով, գաղափարային անհասանելի մեծությամբ»:

Այժմ եկել է այդ ժամանակը: Եվ նրանց, ինչպես նաև «Հայ հեղափոխական դաշնակցության» մյուս մեծանուն գործիչների հիշատակը, որն անցած 70 տարիների ընթացքում անհարկի կերպով մոռացության էր մատնվել, երախտագետ հայ ժողովրդի սրտում մնացել է անքառամ: Նրանց հիշատակը հարգվում էր Սփյուռքում, նրանց երկերը տպագրվում էին արտասահմանում, բայց, ցավոք, դրանք մայր հայրենիք չէին հասնում, իսկ հասնելու դեպքում էլ դրվում էին փականքի տակ:

Արդեն փոխվել են ժամանակները, և անցյալի մեր ազգային մեծանուն գործիչների թողած գիտական ու գրական ժառանգությանը պետք է ծանոթացնել ամեն մի հայ ընթերցողի: Այդ նպատակով էլ Երևանի համալսարանի հրատարակչությունը սկիզբ է դրել այս գեղեցիկ մատենաշարին: Պահանջարկն այդ գրքերի նկատմամբ այսօր չափազանց մեծ է, մի բան, որի վկայությունն է գրախանութներից դրանց տպաքանակների ակնթարթորեն սպառվելը:

### **«ՆՈՐ ՏԵՏՐԱԿ, ՈՐ ԿՈՉԻ ՅՈՐԳՈՐԱԿ»**

Շուրջ երկու տասնամյակ առաջ Հայաստանի գիտությունների ակադեմիայի կողմից հրատարակվող «Գրական հուշարձաններ» մատենաշարի գրքերից մեկի շապիկին տպագրված ծանուցման մեջ ասված է, որ նրա հերթական հատորը զբաղեցնելու են «Նոր տետ-

րակ, որ կոչի Յորդարակ» երկի բնագիրն ու աշխարհաբար թարգմանությունը: Սակայն տարիներ անցան, և ոչ միայն այդ գիրքը լույս աշխարհի չեկավ, այլև Հերոդոտոսի «Պատմության» տպագրությունից հետո նշված մատենաշարի հրատարակությունն ընդհանրապես ընդհատվեց:

Այս տարվա սկզբներին Երևանի համալսարանի հրատարակչությունը «Ուսանողի գրադարան» մատենաշարով լույս ընծայեց հիշյալ գրքի աշխարհաբար թարգմանությունը, որն իրականացրել է հայ գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Խաչատրյանը: Այն ժամանակ էլ հայ գրականության այդ կոթողային երկը թարգմանելու և հրատարակության պատրաստելու գործը դարձյալ հանձնարարված է եղել ճանաչված գրականագետին:

Արդ, չանդրադառնալով «Նոր տետրակի» բովանդակությանն ու նրա ստեղծման պատմությանը, միայն նշենք, որ մեր գրականության այս սեծարժեք երկը գրվել է XVIII դարի երկրորդ կեսին Հնդկաստանում Մադրասի հայրենասիրական խմբակի նշանավոր դեմքերից մեկի՝ Հակոբ Շահամիրյանի հեղինակությամբ և Մովսես Բաղրամյանի եռանդուն աշխատակցությամբ: Առաջին անգամ այն հրատարակվել է 1772-73 թվականներին Մադրաս քաղաքում Հակոբ Շահամիրյանի տպարանում, և նրա իսկ ծախքով:

Այն ժամանակ աննախընթաց վերելք էր ապրում հնդկահայ գաղթօջախը, և հայ ժողովրդի ազատագրության ու հայկական պետականության վերականգնման գաղափարներով տոգորված, գաղութի ուսյալ ու երևելի անձինք մեծ ջանքեր էին թափում հայոց մեջ լուսավորական գաղափարներ տարածելու և «հայկազուն երիտասարդներին ու պատանիներին ծուլության քնի վեհերոտ ու անհոգ թմրությունից սթափեցնելու համար»: «Նոր տետրակը» շարադրված է հենց այդ նպատակով, և նրա մեջ լուսավորական գաղափարախոսության դիրքերից հայ բնաշխարհին ու պատմական անցյալը ճանաչելու հիմքի վրա բարձրացված են համայն հայության միասնակա-

նության, նրա գաղափարական արթնացման և ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման խնդիրները:

Գրքում առաջին անգամ Հայաստանի աշխարհագրական տարածքը ներկայացվում է թուրքական և իրանական հատվածներով: Ընթերցողը հնարավորություն է ստանում տեղեկանալու, թե այս կամ այն գյուղը, բնակավայրը որ հատվածին են պատկանել, որտեղով է անցել սահմանը: Պակաս կարևորություն չի ներկայացնում նաև այն, որ, հայկական բնաշխարհից բացի աշխարհագրության մեջ ներառված են նաև այն օտար վայրերն ու երկրները, որտեղ ապրում էին հայեր: Այդպիսով, գրքի 6-րդ գլուխն ընդհանուր հայաշխարհի նկարագրությունն է, որն օժանդակում է մեր անցյալի գաղթօջախների պատմության ուսումնասիրությանը:

Շահամիրյաններն առաջինն էին ու պատշաճ ուշադրություն դարձրին Արցախի հայ մելիքություններին և «Նոր տետրակի» 5-րդ գլխում առանձին հատված նվիրեցին Հայաստանի այդ երկրամասի նկարագրությանը: Թե՛ գործնական հարաբերություններում Արցախի հայ իշխանական տների հետ իրենց մոտիկ կապերով և թե՛ «Նոր տետրակի» պատմական բաժնում նրանք Հայաստանի ազատագրության համար գալիք պայքարի սկիզբն ու կազմակերպումը կապում էին Արցախի մելիքների ուժի ու մարտական կարողությունների հետ: Իրապես, «Նոր տետրակը» մեզանում առաջին տպագիր խոսքն է Արցախի հայ մելիքների մասին:

Չնայած գիրքը ժամանակին գրվել ու հրատարակվել է չափազանց կարճ ժամանակամիջոցում՝ ընդամենը վեց ամսվա ընթացքում, բայց երիտասարդ Հակոբ Շահամիրյանը և նրա ուսուցիչ ու գործակից Մովսես Բաղրամյանը ոչինչ չեն խնայել այն անթերի ու ամբողջական դարձնելու համար: Երախտագիտության զգացում են առաջ բերում գրքի նախաբանը, վերջաբան-հիշատակարանները և այնքան մանրակրկիտ կազմված ցանկերը, որոնք օժանդակում են այդ հուշարձանի հեղինակային տեքստի կատարելությանն ու գործնական օգտագործմանը:

Այս երկը, որն ունի գիտական, գեղարվեստական և հրապարակախոսական բնույթ, իր արժանավոր տեղն ունի մեր գրականության ու մշակույթի պատմության մեջ: Այն մեր նոր ժամանակների քաղաքական մտքի առաջին դրսևորումն է: Եվ իզուր չէ, որ Լեոն նրա հեղինակին անվանում էր մեր առաջին քաղաքական հրապարակախոսը: Նրա դերն ըստ պատշաճի գնահատվել է հետագա ժամանակների պատմաբանների ու գրականագետների կողմից, և այդպես էլ այն դարձել է մեր մշակույթի պատմության անբաժանելի մասունքը:

Սակայն, չնայած այս ամենին, «Նոր տետրակը» այլևս չի ունեցել ո՛չ գրաբար և ո՛չ էլ աշխարհաբար հրատարակություն, եթե չհաշվենք 1786 թ. սանկտպետերբուրգյան ռուսերեն համառոտ (5-րդ և 6-րդ գլուխների) թարգմանությունը, որն իրականացրել է ռուսական բանակի սպա Վառլամ Վահանովը (Բարաղամ Վահանյան):

«Նոր տետրակի» առաջին և միակ հրատարակությունից անցել է ուղիղ 220 տարի: Այդ ընթացքում մեծ փոփոխություններ են կատարվել Հայաստանի ու հայ ժողովրդի կյանքում: Միշտ էլ հայ ազատախոս գործիչները, ոգեշնչվելով «Նոր տետրակից», ցանկացել են տեսնել հայոց պետականությունը վերականգնված և հայ ժողովրդին ազատագրված: Եվ 220 տարի հետո էլ՝ այսօր, նույն տրամադրություններով է ապրում մեր ժողովուրդը: Այժմ էլ հնացած չեն «Նոր տետրակի» հորդորներն ու գաղափարները: Ուստի նրա աշխարհաբար թարգմանությունն ու հրատարակությունը պետք է համարել մի կարևոր երևույթ մեր գրական-հասարակական կյանքում:

«Նոր տետրակի» ներկա թարգմանությունն ուղեկցվել է մի շարք դժվարություններով: Նրա առաջին չորս գլուխները գրված են բանաստեղծական քառատողերով և ունեն հանգավոր հորինվածք, իսկ մյուս՝ 5-8-րդ գլուխները արձակ են: Թարգմանիչը պահպանել է նույն կառուցվածքը. չափածոն թարգմանված է բանաստեղծական տողերով, իսկ արձակը՝ արձակ: Թարգմանելու ընթացքում կատարվել են բազմաթիվ ու բազմապիսի շտկումներ, ուղղվել են մադրասյան հրատարակության սխալներն ու աղավաղումները, տպագրական ակնհայտ վրիպումները և այլն: Թարգմանիչը հատկապես մեծ ջանք

է գործադրել «Նոր տետրակի» բովանդակության արժանահավատությանը վերաբերող տեղեկությունները ի մի բերելու և հարուստ ծանոթագրություններ կազմելու գործում: Թարգմանիչը բացահայտել նրա պատմական սկզբնաղբյուրները. պարզվում է, որ, բացի Խորենացու «Հայոց պատմությունից» և մեր դասական պատմագրության այլ հուշարձաններից, գրքի հեղինակն օգտվել է Ղազար Ջահկեցու «Դրախտ ցանկալի» աշխատության 19-րդ գլխից և հատկապես Մխիթար Աբբահոր ու նրա աշակերտների հրատարակած «Հայկագյան լեզվի բառգրքի» երկրորդ հատորից (Վենետիկ, 1769):

Թարգմանիչն իր կողմից գրված խոսքում և հարուստ ծանոթագրություններում տալիս է նաև այլ եզակի ու անհրաժեշտ մանրամասներ, որոնք «Նոր տետրակի» ներկա՝ երկրորդ աշխարհաբար հրատարակությունը վեր են հանում սովորական հրատարակությունների շարքից և այն դարձնում գիտական ու չափազանց կարևոր: Այս ամենը հաշվի առնելով՝ մեկ անգամ էլ պետք է նշել, որ ճիշտ ժամանակին է տպագրվել «Նոր տետրակը», որի գաղափարներն ու ծրագիրն արդիական են, և նրա հրատարակությունը մեր օրերում իսկապես հրատապ պահանջ էր: Միայն ավստս, որ գրքի տպագրության պոլիգրաֆիական կատարումն այնքան էլ բավարար չէ և չի համապատասխանում նրա բովանդակությանը:

**ՀՆԱՄՅԱ ՔԱՂԱՔԻ ՀԱՎԱՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.  
ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ «ԵՐՁՆԿԱ. ՀՆԱԳՈՒՅՆ ԳԱՐԵՐԻՑ  
ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ\***

Մայր հայրենիքում վերջին տասնամյակների ընթացքում, իսկ Սփյուռքում ավելի վաղ՝ ետեղեռնյան շրջանից սկսած, լույս են տեսնում Հայաստանի նշանավոր բնակավայրերին նվիրված առանձին մենագրություններ ու գրքեր, որոնք արժեքավոր փաստեր ու տեղեկություններ

---

\* Գ. Ստեփանյան, Երզնկա. հնագույն դարերից մինչև մեր օրերը, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005, 672 էջ: Տպագրվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության միջոցներով:

են պարունակում մեր բազմադարյան բնակավայրերի մասին: Այս ավանդույթը գալիս է հնուց: Մեզանում առաջինն այս բնագավառով զբաղվել է Մովսես Խորենացին, որն իրավամբ համարվում է հայկական տեղանվանաբանության (տոպոնոմիկա) հիմնադիրը: Նա իր «Պատմութիւն Հայոց» կոթողային երկում նկարագրել է հայկական բազմաթիվ բնակավայրեր, տվել դրանց հիմնադրման ստույգ ժամանակը և անունների ծագման ստուգաբանությունը: Մեր մյուս մատենագիրները ևս ընդհուպ մինչև XVIII դարի վերջերը շարունակել են Պատմահոր ավանդույթը:

Հին և միջին դարերում օտարազգի մատենագիրներն ու ճանապարհորդները ևս զբաղվել են մեր բնակավայրերի պատմությամբ, բայց նրանք դա արել են ոչ նպատակադրված, այլ անհրաժեշտության բերումով՝ պատմական այս կամ այն դեպքերն ու իրադարձությունները նկարագրելիս, որոնք տեղի են ունեցել իրենց հիշատակած վայրերում: Հունահռոմեական, պարսկաբյուզանդական և արաբաթուրքական աղբյուրներում ևս մեր որոշ բնակավայրերի մասին գտնում ենք արժեքավոր տեղեկություններ: Սակայն փաստ է, որ ինչպես հին ժամանակներում, այնպես էլ միջնադարում ո՛չ հայ մատենագիրները և ո՛չ էլ օտարազգի հեղինակները հայկական բնակավայրերին նվիրված առանձին աշխատություններ չեն ստեղծել: Բայց ինչ էլ որ արել են նրանք, արժեքավոր է: Պատմական Հայաստանի քաղաքների ու գյուղերի մասին նրանց թողած տեղեկությունները այսօր կարևոր նշանակություն ունեն մեր պատմագրության համար:

Նոր և նորագույն շրջաններում նույնպես ստեղծվել են մի շարք հետաքրքիր աշխատություններ՝ նվիրված հայկական բնակավայրերի պատմությանն ու նրանց անունների ծագումնաբանությանը, լույս են տեսել պատմական, պատմաաշխարհագրական ու տեղագրական բնույթի գրքեր և բառարաններ: Այդ կարևոր աշխատանքով զբաղվել են Ղ. Ալիշանը, Հ. Հյուբշմանը, Ն. Ծիվանյանը, Հ. Առաքելյանը և ուրիշներ: Ավելի ուշ՝ Մեծ եղեռնից հետո, Սփյուռքում հայրենակցական միությունների եռանդագին ջանքերով մեկը մյուսի հետևից սկսում են լույս տեսնել բազմաթիվ ուշագրավ գրքեր՝ նվիրված Արևմտյան Հայաստանի նահանգներին, գավառներին, քաղաքներին և նույնիսկ առանձին գյուղերի: Դրանք պատմական երկեր, հուշագրություններ, բանասիրական և ազգագրական բնույթի աշխատություններ են, որոնք կորստից փրկում են

հոգևոր շատ արժեքներ: Հատկապես ուշադրության արժանի են Ա. Փոլատյանի, Հ. Քոսյանի, Ա. Սահակյանի, Թ. Ազատյանի, Ա. Ալպոյաճյանի, Գ. Գալուստյանի, Հ. Հովակիմյանի (Արշակունի), Հ. Պուրսալյանի, Վահե Հայկի և ուրիշների հեղինակած աշխատանքները՝ նվիրված Արաբկիրին, Ակնին, Կարինին, Եղեսիային, Կեսարիային, Մալաթիային, Մարաշին, Խարբերդին, Եվրոկիային, Սեբաստիային, Ամասիային, Ադանային, Ջեթունին, Պարտիզակին, Հաճնին և հայկական ու հայաբնակ այլ բնակավայրերի:

Խորհրդային Հայաստանում ևս որոշակի աշխատանքներ են կատարվել հայրենի բնակավայրերի պատմության ուսումնասիրության ուղղությամբ: Գրքեր են գրվել Երևանի, Լենինականի (այժմ՝ Գյումրի), Կիրովականի (այժմ՝ Վանաձոր), Ղափանի (այժմ՝ Կապան), Էջմիածնի, Գորիսի, Ալավերդու և այլ քաղաքների մասին: Հատկապես լուրջ աշխատանք է կատարել պատմաբան, պրոֆ. Թ. Հակոբյանը: Հիշատակության արժանի են նրա՝ Երևան և Անի մայրաքաղաքներին և պատմական Հայաստանի քաղաքներին նվիրված շուրջ 10 սովորաձավալ հատորները: Վերջին երեսուն տարիների ընթացքում լույս տեսան «Հայկական սովետական հանրագիտարան»-ի 13 հատորները (1974-1987 թթ.), որոնցում իրենց հակիրճ պատմությամբ ներկայացված են Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր: Այս բնագավառի լուրջ նվաճումներից են նաև Թ. Հակոբյանի, Ստ. Մելիք-Բախշյանի և Հովհ. Բարսեղյանի հեղինակած «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի հինգ սովորաձավալ հատորները (1986-2001 թթ.), որոնց ընդհանուր ծավալը հասնում է 700 մամուլի՝ ընդգրկելով 120 հազար տեղանուն՝ հավաստի տեղեկություններով:

Մակայն անհրաժեշտ է նշել, որ հիշյալ գրքերից շատերը հանրագիտական ու տեղեկատվական բնույթի են և մեր բնակավայրերի պատմությունը ըստ ամենայնի չեն ներկայացնում: Իսկ վերջին տարիներին հայրենի բնակավայրերի մասին տպագրված բազմաթիվ գրքերի շարքում քիչ են այն աշխատանքները, որոնք գրված են գիտական պատշաճ մակարդակով և ամբողջությամբ վեր են հանում տվյալ բնակավայրի պատմությունը, ցույց տալիս նրա դերն ու նշանակությունը երկրի տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում:

Ահա այս եզակի աշխատությունների շարքը պետք է դասել Երևանի համալսարանի հրատարակչության կողմից վերջերս տպագրված Գառնիկ Ստեփանյանի «Երզնկա. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» սովորաժամալ մենագրությունը, որը երջանակահիշատակ հեղինակի տքնաչան աշխատանքով ստեղծված ուսումնասիրություն է: Այն տպագրվել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ, որի հայկական բաժանմունքի տնօրեն, դոկտոր Ջավեն Եկավյանը ամեն ինչ անում է Հայաստանում հայագիտության զարգացման և հայագիտական կոթողային հրատարակություններ իրականացնելու համար: Ներկա գիրքն այդ հիմնարկության աջակցությամբ ԵՊՀ-ում լույս ընծայված 39-րդ հատորն է:

Այս եզակի գրքի՝ Գ. Ստեփանյանի (Տեր-Ստեփանյան, 1909-1989) հեղինակությամբ լույս աշխարհ գալը որոշ իմաստով գուցե անսպասելի էր մեր մասնագետների և ընթերցողների շրջանում: Չէ՞ որ Գ. Ստեփանյանը մեզանում հայտնի է որպես նշանավոր արվեստաբան-թատերագետ, արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, որի մեծարժեք հետազոտությունները հիմնականում նվիրված են արևմտահայ գրականության ու թատրոնի, հասարակական մտքի զարգացման պատմությանը, ինչպես նաև սփյուռքահայ մշակութային կյանքին ու նշանավոր գործիչներին: Սակայն դա մինչև գրքին ծանոթանալը: Իսկ երբ ընթերցում ես, խորամուխ լինում գրքի էության մեջ, համոզվում ես, որ այդպիսի մնայուն աշխատանք կարող էր կատարել միայն այն հեղինակը, որը հայրենի եզերքի գեղեցկությունները տեսել է մանկան աչքերով, իր անաղարտ հոգով զգացել ու ճաշակել նրա բնության ջերմությունը և հետո՝ ընդմիշտ կորցրել մանկության սքանչելի օրրանը:

Գ. Ստեփանյանը, արմատներով լինելով բնիկ երզնկացի (ծնվել է Երզնկայի մոտ գտնվող Մամախաթուն բերդաքաղաքում), հոգու խորքում մինչև կյանքի վերջը սրբորեն պահել է թանկ հիշատակները: Մեծ եղեռնի օրերին նա եղել է ընդամենը վեց տարեկան, և նրա աչքի առջև են կատարվել իր հայրենի քաղաքի ողբերգական դրվագները, իր հարազատների՝ եղբոր, քրոջ ու տատի, ինչպես և հորեղբոր բազմանդամ ընտանիքի ողջակիզումը թուրքերի կողմից: Հետո նրանց ընտանիքի ողջ մնացած անդամները՝ հայրը, մայրը և ինքը, այդ մղձավանջային օրերին



կորցրել են միմյանց, ցրվել աշխարհի տարբեր վայրեր և տարիներ անց՝ 1930 թ., Երևանում երջանիկ պատահականությամբ գտել իրար:

Իր մանկության օրերի զարհուրելի պատկերները, ինչպես նաև հայրենի եզերքի կարոտն ու հիշատակները միշտ էլ մղել են նրան գրի առնելու այդ ամենը և թողնելու սերունդներին: Դրա հիման վրա հետագայում գրել է «Միճավանջային օրեր» հուշապատում գիրքը, որն առաջին անգամ տպագրվել է Հայաստանում 1945 թ.: Ի դեպ, դա Խորհրդային Հայաստանում Մեծ եղեռնի մասին լույս տեսած առաջին գիրքն էր: Սակայն դրանով հեղինակն ավարտված չի համարել իր աշխատանքը: Նա տարիներ շարունակ մանրագնին կերպով ու քննախույզ հայացքով հետազոտել է մեր հնադարյան մատյանները, հնագիտական, ազգագրական, պատմական, աշխարհագրական աշխատությունները, հուշամատյանները, արևմտահայ ու արևելահայ, ինչպես նաև սփյուռքահայ հսկայածավալ մամուլը, գեղարվեստական գրականությունը և դրանց էջերից քաղել է Եկեղյաց գավառի ու նրա կենտրոն Երզնկայի մասին եղած ամեն մի տեղեկություն, փաստ ու մանրուք, ժողովրդական երգ ու տաղ, ավանդություն ու գրույց: Բացի դրանից՝ նա հանդիպումներ է ունեցել Մեծ եղեռնից մազապուրծ հատուկեմտ երզնկացիների հետ և նրանց շուրթերից գրի առել հուշեր ու հավաստի պատմություններ հայրենի եզերքի մասին: Նա ուսումնասիրել է նաև Ե. Չարենցի անվան ԳԱԹ արխիվը և այնտեղ գտել անհրաժեշտ վավերագրեր Երզնկայի մասին: Հեղինակին գրքի շարադրման գործում մեծապես օգնել են իր հոր՝ Թարգի Խաչիկ Տեր-Ստեփանյանի ձեռագիր երկու սովարածավալ տետրերը՝ գրի առնված 1949 թ. Երևանում:

Հավաքված բոլոր նյութերը հեղինակը համադրել, վերլուծել և քննադատաբար օգտագործել է սույն աշխատության մեջ՝ իր ծանրակշիռ գրքերի կողքին ավելացնելով սույն մնայուն հուշամատյանը՝ նվիրված Երզնկայի երեքհազարամյա պատմությանը: Կարող ենք անվարան ասել, որ սա երախտավոր արվեստաբանի կյանքի գիրքն է, նրա գիտական վաստակի պսակը, որը, ավանդ, դարձավ հեղինակի «կարապի երգը»:

Երիզայի ու Երզնկայի մասին ցարդ լույս տեսած գրքերի մեջ Գ. Ստեփանյանի սույն մենագրությունն առաջինն է, որն ամբողջությամբ ներկայացնում է այդ նշանավոր քաղաքի ու գավառի պատկերը: Հեղի-

նակն իր աշխատության ներածության մեջ մեկ առ մեկ թվարկել ու վերլուծել է եղած գրքերը<sup>88</sup>, ցույց տվել դրանց առավելություններն ու թերությունները և իր մենագրության մեջ օգտագործել նրանց նյութերի արժեքավոր մասը:

Գ. Ստեփանյանի մենագրությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը, որ կրում է «Երզնկան հին և միջին դարերում» ընդհանուր վերաառությունը, ունի տասնմեկ գլուխ, որոնցում, հայ ժողովրդի այդ հնագույն բնօրրանի անվան ծագման, աշխարհագրական պատկերի՝ տեղագրության, կլիմայի, բուսական և կենդանական աշխարհի, օգտակար հանածոների մասին սպառիչ տեղեկություններ տալուց բացի, Երզնկան ներկայացնում է հնագույն դարերում, ապա՝ որպես Հայաստանի կենտրոն, այնուհետև վեր է հանվում նրա դերը հայկական պետականության կազմավորման և հզորացման, Ամառիտի պաշտամունքի և վաղ քրիստոնեության, ինչպես նաև արաբական, բյուզանդական, սելջուկյան, մոնղոլական, թուրք-թաթարական և օսմանյան տիրապետությունների շրջաններում: Առանձին գլուխներ են նվիրված Երզնկայի՝ XIII դարի հայկական իշխանությանը, ապա ներկայացված են Երզնկայի 32 նշանավոր վանքերը, ինչպես և հայ մատենագրության տեղի դպրոցը, որի կարկառուն ներկայացուցիչներն են եղել Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Երզնկացի Պլուզը, Հովհաննես Երզնկացի Ծործորեցին, Կիրակոս Երզնկացին, Մովսես Երզնկացին, Գրիգորիս Երզնկացին, Մխիթար Երզնկացին և Գևորգ Երզնկացին:

Գրքի երկրորդ մասը՝ «Երզնկան նոր ժամանակներում», բաղկացած է տասներեք գլուխներից, որոնցում քննարկվում են Երզնկայի ընդհանուր վիճակը XIX դարում, նրա կրթական, մշակութային, համայնական կյանքը, բանահյուսությունը, հարսանեկան ծեսերը և այլն: Այս մասում են ներկայացված հայ ազգային-ազատագրական պայքարում երզնկացիների մասնակցությունը, նրա հայ բնակչության վիճակն օսմանյան սահմանադրության շրջանում, Երզնկայի հայերի տուրքը Մեծ եղեռնին, ապա Երզնկան ներկայացված է ռուսական գրավման շրջա-

---

<sup>88</sup> Դրանցից կարելի է առանձնացնել Գարուստ Մյուրմենյանի «Երզնկա» (Գահիրե, 1947), Հարություն Քյուրտյանի «Երիզա և Եկեղյաց գավառ» (հատ. Ա, Վենետիկ, 1953), Գուրգեն Տեր-Վարդանյանի «Երզնկա – Կամախ գավառաբարբառը և ազգագրական հուշեր» (Երուսաղեմ, 1968), Դարիկո Կոստանյանի «Երզնկայի բարբառը» (Եր., 1979) գրքերը:

նում (1916-1917 թթ.): Գրքի վերջին գլուխները նվիրված են ամայացած Երզնկային ու եղեռնից մազապործ եղած այն փոքրաթիվ երզնկացիներին, որոնք ցրվել են աշխարհով մեկ՝ Ռուսաստան, Արևելյան Հայաստան, տարբեր արտերկրներ: Գիրքն ավարտվում է ՀԽՍՀ Աշտարակի շրջանում 1965 թ. Նոր Երզնկա ավանի հիմնադրման նկարագրությամբ:

Գրքում զգալի էջեր են նվիրված Երզնկայի հայության ազգագրությանը, հավատալիքներին, բանահյուսությանը, կենցաղին ու սովորույթներին, հասարակական կյանքի տարբեր կողմերին, ինչպես նաև ընդգրկված են մի շարք հետաքրքիր հուշեր: Նրա բովանդակությունը հարստացնում և ուշագրավ են դարձնում շուրջ երեք մասով (46 էջ) ներդիրները, որոնցում ներկայացված են պատմական արժեք ունեցող 83 լուսանկար ու Եկեղյաց գավառի մեկ քարտեզ:

Գիրքն ունի նաև հակիրճ առաջաբան, որի հեղինակն է նրա խմբագիրներից ծագումով երզնկացի, պատմագիտության թեկնածու, դոցենտ Պետրոս Հովհաննիսյանը, իսկ մյուս խմբագիրը հեղինակի կրտսեր որդին է՝ բանասիրական գիտությունների թեկնածու, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող Արմեն Տեր-Ստեփանյանը, որը նաև ձեռագիրը վերջնական տեսքի բերել ու պատրաստել է հրատարակության:

Հեղինակն իր տասնամյակների տքնաջան աշխատանքով ստեղծած մենագրությունը ձոնել է իր հոր՝ Թարգի Խաչիկի և մոր՝ Ռսկեգյուլի պայծառ հիշատակին: Սակայն այս գիրքը ոչ միայն նրանց, այլև 1895-96 թթ. աբդուլհամիդյան կոտորածներին և 1915 թ. Մեծ եղեռնին զոհ դարձած բազմահազար երզնկացիների հիշատակը հավերժացնող մի հուշարձան է, որը գալիք սերունդներին պետք է պատմի հայկական այդ հինավուրց գավառի ու նրա շքեղ կենտրոնի՝ Երզնկայի անցյալի փառքերի, հետագա ողբերգական դրվագների, նրա հերոսական ոգորումների ու սխրանքների մասին:

Ամփոփելով մեր խոսքը՝ կարող ենք նշել, որ հրատարակվել է մեծարժեք մենագրություն, որն աչքի է ընկնում պատմական ժամանակաշրջանի լայն ու խոր ընդգրկումով, փաստագրական հարուստ նյութերով ու գիտական բարձր մակարդակով: Հեղինակի լեզուն, գիտական լինելով հանդերձ, պարզ է ու պատկերավոր, ժողովրդական բառ ու բանով հարուստ: Այն ոգով ու ավյունով գրված, կենդանի նկարագրություննե-

րով հարուստ մի ասքապատում է, որը հարստացնում է մեր կորուսյալ բնակավայրերին նվիրված արժեքավոր աշխատությունների գրադարանը և կարող է օգտակար լինել պատմաբանների, ազգագրագետների ու լեզվաբանների, հայրենի բնակավայրերի պատմությամբ զբաղվող մասնագետների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

**ԿԻԼԻՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԵ ՈՒ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԸ. ԳԷՈՐԳ ՄԱԳՈՅԵԱՆԻ «ԳՐԻԳՈՐ  
ԱՆԱԻԱՐՁԵՑԻՆ ՇԱՐԱԿԱՆԱԳԻՐ»\***

Միջնադարյան հայ ականավոր բանաստեղծ և հոգևոր-մշակութային գործիչ Գրիգոր Անավարզեցին եղել է ժամանակի հասարակական-քաղաքական նշանավոր դեմքերից մեկը, որի ավանդը մեծ է նաև Կիլիկյան Հայաստանի դիվանագիտության զարգացման ասպարեզում: Նա նաև հայ երգարվեստի կիլիկյան դպրոցի երևելի մշակներից էր, ով հորինել է բազմաթիվ գանձեր ու տաղեր, տարբեր տոների նվիրված շարականներ ու այլ բնույթի ստեղծագործություններ: Նրա թողած գրական-մատենագրական հարուստ և միաժամանակ արժեքավոր ժառանգությունը մեր միջնադարյան մշակույթի անբաժան մասն է կազմում: Բայց, ցավոք, մինչև վերջերս Գրիգոր Անավարզեցու կյանքն ու գործունեությունը հայագիտության մեջ բավարար ուշադրության չէին արժանացել, մակերեսորեն ու քիչ էին ուսումնասիրվել՝ նույնիսկ տեղիք տալով հակասական ու իրարամերժ կարծիքների ու տեսակետների՝ կապված նրա եկեղեցական, քաղաքական գործունեության հետ: Անավարզեցին ըստ պատշաճի չէր գնահատվել նաև որպես կաթողիկոս: Եղած ուսումնասիրություններում՝ հատկապես հայ եկեղեցու պատմությանը նվիրված աշխատություններում, միանշանակ գնահատականներով չէր ներկայացվել նրա գործունեությունը, աթոռակալության շրջանի (1293-1307 թթ.) նրա քաղաքական-դավանաբանական դիմագիծը ևս չէր հստակվել, և վերջապես չէին որոշվել նրա տեղն ու դերը հայ եկեղեցու և հայ մշակույթի պատմության մեջ:

---

\* Գեորգ Մադոյեան, Գրիգոր Անավարզեցին շարականագիր, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2002, 176 էջ:

Վաղուց անհրաժեշտություն էր առաջացել այդ երևելի բանաստեղծի կյանքի ու գործունեության, նրա գրական ժառանգության անկողմնակալ, հիմնավոր ու համակողմանի քննության, նրա մասին ցարդ եղած նյութերի, գնահատականների ու բնութագրումների համադրման ու նորովի մեկնաբանության: Այս բացը լրացնելու և տարակուսելի հարցերին պատասխանելու եկավ Գևորգ Մաղոյանի «Գրիգոր Անաւարզեցիւն շարականագիր» մենագրությունը, որը քրիստոնեության՝ Հայաստանում պետական կրոն հռչակվելու 1700-ամյակի առթիվ լույս է ընծայել Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը:

Գ. Մաղոյանի ներկա աշխատության հիմնական նպատակն է հանգամանորեն քննել Անավարզեցու շարականները, պարզել դրանց հեղինակի դերը հայ շարականագրության մեջ: Սակայն մի բան պարզ է, որ դա հնարավոր չէր լինի իրականացնել առանց պատմական բազմակողմանի ուսումնասիրություններ կատարելու: Ուստի հեղինակը փորձ է արել լուսաբանելու Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսի ապրած ժամանակաշրջանը, ի հայտ բերելու նրա կյանքի ու գործունեության որոշ առնչություններ, ճշգրտելու կենսական ինչ-ինչ մանրամասներ, դեպքեր ու փաստեր: Եվ դա հաջողվել է նրան: Նա, օգտվելով գրականագիտության, բանասիրության և պատմագիտության նորագույն նվաճումներից, կարողացել է հստակ պատկերացում տալ տվյալ ժամանակաշրջանի և ուսումնասիրվող հեղինակի մասին:

Մենագրությունը բաղկացած է «Ներածությունից» և երկու հիմնական գլուխներից, որոնք շարադրված են գիտական պատշաճ մակարդակով և, միմյանց շողկապվելով, կազմում են մի կուռ միասնություն, ինչպես նաև վերջաբանից ու ծավալուն հավելվածից:

«Ներածություն» մեջ հակիրճ ներկայացված է ԺԳ-ԺԴ դարերի Կիլիկյան Հայաստանի պետության պատմությունը՝ հատկապես մեծ ուշադրություն դարձնելով հիշյալ դարերի սահմանագծի կարևոր իրադարձություններին: Հեղինակը ճիշտ է նկատում, որ միջնադարում եկեղեցին կարևոր տեղ էր զբաղեցնում պետական համակարգում: Պետության արտաքին քաղաքականությունը լոկ արքունիքի մենաշնորհը չէր: Այդ գործում իրենց ներդրումն ունեին նաև հոգևոր գործիչները: Փաստերը հաստատում են, որ միջպետական հարաբերություններում քննարկվում էին ոչ միայն քաղաքական, այլև հոգևոր հարցեր, որոնք, վերջին հաշվով,

նույնպես քաղաքական աստառ ունեին: Եվ ժողովրդի ճակատագրի հետ կապված քաղաքական հարցերի լուծման գործում հաջողության հասնելու նպատակով Կիլիկյան Հայաստանի առաջնորդները, նուրբ դիվանագիտություն հանդես բերելով, հաճախ կրոնական ինչ-ինչ խնդիրներում գիջումներ կատարելու համաձայնություն էին տալիս:

Գ. Մաղոյանն իր մենագրության մեջ առաջին անգամ հետագոտել է տվյալ խնդիրն ըստ էության: Պատմական այդ բարդ ժամանակաշրջանի ֆոնին նա ներկայացրել է Կիլիկյան Հայաստանի հոգևոր-մշակութային կյանքը, գրականությունը և փորձ է արել վերականգնելու միջնադարյան հայ բանաստեղծ և կրոնական գործիչ Գրիգոր Անավարզեցու գրական ժառանգության և դիվանագիտական քայլերի կարևորությունը: Նա ներկայացնում է Ռուբինյան հարստության հաստատումը Կիլիկիայում, ապա Հեթումյանների՝ իշխանության գլուխ անցնելը, կաթողիկոսական աթոռի՝ Անիից Կիլիկիա տեղափոխվելը, ինչպես և երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը: Հատուկ ուշադրություն է դարձված ԺԳ դարի ութսունական թվականներից մինչև հաջորդ դարի առաջին տասնամյակն ընկած ժամանակահատվածին: Այդ շրջանում եկեղեցիների միության խնդիրը կարևոր տեղ էր զբաղեցնում արևմտյան և արևելյան պետությունների քաղաքական-դիվանագիտական փոխառնչություններում: Իսկ Կիլիկյան Հայաստանը, գտնվելով Արևմուտքի ու Արևելքի սահմանագծում, իր գոյությունը պահպանելու նպատակով պետք է կարողանար ճկուն դիվանագիտություն վարել թե՛ արևմտյան և թե՛ արևելյան տերությունների հետ: Այդ իսկ պատճառով թե՛ հայոց կաթողիկոս Գրիգոր Է Անավարզեցին և թե՛ իր ժամանակակից հայոց արքաները ստիպված էին սերտ հարաբերություններ հաստատել մյուս քրիստոնեական տերությունների հետ՝ դաշնակիցներ ձեռք բերելու հույսով: Բայց օգնության ձեռք մեկնելուց առաջ և՛ Բյուզանդիան, և՛ Հռոմը դավանաբանական պահանջներ էին ներկայացնում հայկական կողմին: Գրքի հեղինակը, պատկերելով Կիլիկյան Հայաստանի քաղաքական այս կարևոր անցուդարձերը և դավանաբանական խնդրումները, որոնք Անավարզեցու եկեղեցական բուն գործունեության շրջանում սպառնալից տեսք էին ընդունել, կարողացել է ըստ ամենայնի ներկայացնել պատմական իրողությունը և անել գիտական ճիշտ եզրահանգումներ: Ըստ նրա դիտարկումների՝ Անավարզեցին և մյուս գործիչները

անում էին ամեն ինչ, որպեսզի եկեղեցական վեճերը խոչընդոտ չհանդիսանան Կիլիկիայի արտաքին քաղաքականության բավիղներում: Կախված իրադրությունից՝ նրանք կարող էին համաձայնություն տալ լատիններին և մերժել հույներին, ապա՝ կտրականապես փոխել դիրքորոշումը՝ հարաբերություններ վարելով հակառակ կողմի հետ՝ երկու դեպքում էլ ունենալով ուրիշ նպատակ, այն է՝ խուսափել առճակատումից: Ահա այդպիսի ճկուն դիվանագիտության շնորհիվ Կիլիկիան կարողացավ տասնյակ վտանգավոր թշնամիների շրջապատում ամբողջ երեք դար պահպանել իր պետականությունը:

Սակայն որքան էլ ճկուն լինեք հայ թագավորների ու կաթողիկոսների «դիվանագիտությունը», այնուամենայնիվ հնարավոր չէր այդ ամենն իրագործել՝ մշտապես խուսանավելով հակասություններից: Նման հակասություն նկատելի է նաև Գրիգոր Անավարզեցու գործունեության, բնականաբար նաև ստեղծագործության մեջ: Նա, ընդառաջ գնալով եկեղեցիների միության գաղափարի իրականացմանը, որը փաստորեն նշանակում էր Հայ առաքելական եկեղեցու ենթարկում կաթոլիկ եկեղեցու գերակայությանը, ձգտում էր վերանայելու հայ եկեղեցու դավանաբանությունն ու արարողակարգը: Գրքի հեղինակը հստակորեն ներկայացնում է այդ գործընթացները, հանդես է բերում գիտական և դավանաբանական հարցերի մեջ ճիշտ կողմնորոշվելու և գնահատելու զգոնություն:

«Գրիգոր Անավարզեցու կեանքի եւ գործունեութեան համառոտ ուրուագիծ» գլխում, հիմնվելով ժամանակի գրավոր աղբյուրների վրա, հեղինակը վերլուծում է Անավարզեցու կյանքը: Կաթողիկոսի վաղ և երիտասարդական տարիների վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել: Գրքում բերված են Մ. Չամչյանի, Ղ. Ալիշանի և Հր. Աճառյանի ենթադրությունները, համաձայն որոնց՝ Գրիգորը ժամանակին կոչվել է Մեծքարեցի՝ Մեծքարի վանքում սովորելու կամ ուխտը գլխավորելու համար: Դրանից հետո ապագա հայրապետը ստացել է Անավարզեցի մականունը՝ Անարգարայի արքեպիսկոպոսական աթոռին բարձրանալու կապակցությամբ: Նկատի ունենալով, որ դա տեղի է ունեցել 1268 թ., և ենթադրելով, թե առնվազն 20-25 տարեկան պիտի լինեք այդ ժամանակ Գրիգորը, հեղինակը եզրակացնում է, որ Անավարզեցին պետք է ծնված լինի 1240-ական թվականներից ոչ ուշ: Նա Անարգարայի արքե-

պիսկոպոսն էր մինչև 1293 թ., երբ Հեթում Բ թագավորի կամքով ու գործակցությամբ արժանանում է Հայաստանյայց եկեղեցին գլխավորելու պատվին և օծվում է կաթողիկոս: Ապա հեղինակը ներկայացնում է Անավարզեցու կենսագրության այլ մանրամասներ: Նրա օրոք՝ 1293 թ., Հայրապետական արքունի Հռոմկլայից տեղափոխվել է Սիս, քանի որ Հռոմկլան 1292 թ. ավերվել էր Եգիպտոսի մամլուքների կողմից: Իսկ 1296 թ. Սսի Ս. Սոփիայի հայրապետանիստ տաճարում Գրիգոր Է Անավարզեցին Կիլիկիայի հայկական պետության թագավոր է օծել Հեթում Երկրորդի եղբորը՝ Սմբատին:

Անավարզեցու կենսագրության մանրամասներին զուգահեռ՝ Գ. Մաղոյանը դիտարկել է նաև նրա ստեղծագործությունները, այս կամ այն խնդիրը քննարկելիս հենվել դրանց վրա: Անավարզեցու խմբագրած «Շարակնոց»-ի, «Յայամաուրք»-ի, «Ժամագրիք»-ի, ու «Ներբողեաններ»-ի կողքին նա առանձին կարևորություն է տալիս «Նամականուն»:  
Վերջիններից ամենակարևորը գրքի հեղինակը համարում է «Թուրք առ թագաւորահայրն Հէթում» նամակը, որը մեծ նշանակություն ունի միության խնդիրները պարզաբանելու գործում:

Մենագրության մյուս գլուխները, որ կրում են «Անուարզեցու աստուածաշնչյան թեմաներով երգերը» և «Անուարզեցու «ազատ» շարականները» վերտառությունները, նվիրված են հայտնի շարականագրի գրական ժառանգության քննությանը: Հեղինակն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դնում Գրիգոր Անավարզեցու՝ տակավին ձեռագիր վիճակում գտնվող շարականները: Նրա երեք տասնյակից ավելի կանոններից մինչ այժմ հրատարակված էին միայն հինգը, որոնցից մեկը, ինչպես և երեք այլ շարական գիտնականները վերագրել էին ուրիշի: Մաղոյանը բազմաթիվ փաստերով հերքում է այդ ենթադրությունները և ապացուցում, որ Անավարզեցին է դրանց հեղինակը: Բացի դրանից՝ ուսումնասիրողը հայտնաբերել և շրջանառության մեջ է դրել մինչև այժմ կորած համարվող վեց կանոն, որոնց հեղինակը նույնպես Անավարզեցին է: Այնուհետև, ուսումնասիրելով հրատարակված և նորահայտ շարականները, Գ. Մաղոյանը գնահատել է այդ հոգևոր երգերը, մատնանշել, թե ինչ տեղ է զբաղեցնում Անավարզեցին հայ շարականագրության մեջ: Նա բերում է նաև Անավարզեցի շարականագրի հասցեին հնչած կարծիքները: Ինչպես հավաստում է հեղինակը, դրանք իրարից էապես



չեն տարբերվում, որովհետև գիտնականները հետևել են Անավարզեցու շարականներով առաջինը զբաղվող Ղ. Ալիշանի խոսքերին՝ «չիք վստահական ոճ նախնի շարականաց»։ Հեղինակը նշում է, որ շատերը, առանց հիմնովին ուսումնասիրելու, պարզապես մեջ են բերել այս խոսքերը և բավարարվել դրանով՝ նույնիսկ չկարդալով դրանց շարունակությունը։

Անցնելով Գրիգոր Անավարզեցու շարականների քննությանը՝ ուսումնասիրողը, ըստ բովանդակած նյութի, շարականները բաժանում է երկու խմբի՝ Ա. աստվածաշնչյան թեմաներով գրված և Բ. «ազատ» շարականներ։ Առաջինները բացառապես Նոր կտակարանի պատմությունների հիման վրա են գրված, իսկ երկրորդ խմբի շարականները համեմատաբար ազատ թեմատիկա ունեն և պարունակում են տարբեր սրբերի կենսագրական տեղեկություններ, տիեզերական ժողովներից վերցված դեպքեր, ինչպես և դավանաբանական հարցեր։ Այնուհետև քննարկվում են այդ խմբերի շարականներն առանձին-առանձին, պարզվում դրանց գրության թվականները և այլ մանրամասներ։ Հեղինակը հաճախ չի համաձայնում Անավարզեցուն տրված գնահատականներին ու բնութագրումներին («հետին շարականագիր» և այլն), քայլ առ քայլ գնահատում է Գրիգոր Անավարզեցու գրական ժառանգության մնայուն արժեքը։ Նա գտնում է, որ Անավարզեցին Ներսես Շնորհալու արժանի հետևորդն է, որովհետև հայ իրականության մեջ միայն Ներսես Շնորհալին և Գրիգոր Անավարզեցին են արժանացել «Երգեցող» կոչմանը։ Իսկ այդ կոչումը բացառիկ է և քիչ է հանդիպում քրիստոնեական աշխարհի մշակութային կյանքում։

Գ. Մաղոյանը կատարել է Անավարզեցու Ղ. Ալիշանի «Սիսուան և Լեռն Մեծագործ» երկում տեղ գտած շարականային կարգերի համեմատական քննությունը, ապա Լվովի Վ. Ստեֆանեկի անվան գրադարանում և Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող երկու եզակի նյութերի, ինչպես և Սահակ Ամատունու «Հին և նոր պարականոն կամ անվաւեր շարականներ» ժողովածուի համեմատական ուսումնասիրությամբ պարզել է, թե ինչ շարականներ են պահպանվում Անավարզեցուց, և որն է դրանց հոգևոր բանաստեղծական արժեքը։

Հեղինակն իր ուսումնասիրությունների հիման վրա եկել է այն եզրակացությանը, որ հաճախ նեղ դավանաբանական հարցերի տեսան-

կյունով դիտարկելու հետևանքով անցյալի գեղարվեստական շատ արժեքներ տեսադաշտից դուրս են մնացել կամ ըստ արժանվույն չեն գնահատվել: Այդպիսի մի օրինակ է նաև Գրիգոր Անավարզեցու գրական ժառանգությունը: Իր այս մենագրությամբ Գ. Մաղոյանը նորովի է գնահատում Անավարզեցուն, որը նկատելի հետք է թողել ոչ միայն հայոց պատմության, այլև գրականության մեջ թե՛ որպես հոգևոր ու քաղաքական գործիչ և թե՛ որպես բանաստեղծ, որն ունակ էր վեր կանգնելու ամեն տեսակ մախապաշարմունքներից ու կաշկանդիչ կաղապարներից, նորովի մոտենալու իր առջև ծառայած խնդիրներին, թարմացնելու գրական կյանքը:

Գ. Մաղոյանի ներկա գիրքն արժեքավոր է նաև նրանով, որ ունի ծավալուն «Հավելված», որտեղ ի մի են բերված Գրիգոր Անավարզեցու ցարդ հայտնաբերված բոլոր երգերն ու շարականները:

## **ՀԻՆ ՀՆԳԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆԸ ՀԱՅԵՐԵՆ**

Հարուստ ավանդույթներ ունեցող հին հնդկական գրականությունը, որը համաշխարհային մշակույթի գանձարանը հարստացրել է մի շարք մնայուն արժեքներով, սկզբնավորվել է դեռևս մեզանից երեք հազարամյակ առաջ և հռչակվել իր վեղաներով ու բողոքայական իմաստախոսություններով: Գրեթե նույն շրջանում են ստեղծվել նաև պալի ու պրակրիտ լեզուներով հյուսված ժողովրդական բանավոր ստեղծագործությունները: Մի փոքր ավելի ուշ՝ մ. թ. ա. առաջին հազարամյակի կեսերին, սանսկրիտերեն արդեն հայանի էին «Մահաբհարաթա» և «Ռամայանա» էպիկական պոեմները, իսկ մ. թ. 3-4-րդ դարերում ձևավորվում է քալիմական գրականության կոթողներից մեկը՝ «Պանչատանտրա» հեքիաթների ժողովածուն, որով էլ հնդկական գրականության մեջ սկզբնավորվում է, այսպես կոչված, «շրջանակող» պատմվածքի ժանրը, ապա 4-5-րդ դարերում ստեղծվում են «Տիրուկուրալ» ասացվածքների գիրքն ու բազմաթիվ այլ գրական հուշարձաններ:

Այս գլուխգործոցների շարքում իր ուրույն տեղն ունի նաև «Վիկրամայի կյանքը կամ արքայական գահի 32 պատմությունները» բանահյուսական մեծարժեք ժողովածուն, որն այլ լեզուներով ավելի ուշ թարգման-

ված լինելու հետևանքով համաշխարհային գրականության պատմությանը քիչ է հայտնի: Հայ թարգմանական գրականության մեջ ևս այս եզակի ստեղծագործությունը մինչև վերջերս հայտնի չէր: Այս ժողովածուն նույնպես դասվում է «շրջանակող» ստեղծագործությունների թվին, որում հավաքված տարբեր բնույթի պատմվածքները կառուցվածքով միմյանց հետ կապվում-միավորվում են «պատմողական շրջանակի» միջոցով, ինչպես նաև ունեն թեմատիկ ու գաղափարական միասնություն: Եվրոպական գրականության մեջ այդ ժանրն օգտագործվել է ավելի ուշ, որի աչքի ընկնող երկերից մեկն է Ջովաննի Բոկաչչոյի «Դեկամերոնը»:

«Վիկրամայի կյանքը կամ արքայական գահի 32 պատմությունները» ժողովածուն, որ հակիրճ կոչվում է նաև «Վիկրամայի կյանքը», հայերեն թարգմանությամբ նորերս լույս է ընծայել Երևանի համալսարանի հրատարակչությունը: Ճիշտ է, թարգմանությունը կատարվել է ոչ թե սանսկրիտերենից (բնագրի լեզվից), այլ ռուսերենից<sup>89</sup>, բայց և այնպես պետք է նկատել, որ թարգմանիչները երկար են աշխատել այդ գրական հուշարձանի համահավաք տեքստի վրա, խոր կերպով ուսումնասիրել են այն և ի վերջո կարողացել են հայոց լեզվի ընձեռած հնարավորությունները լայնորեն օգտագործելով ներկայացնել բնագրին հարազատ մի թարգմանություն: Գրական մամուլին հետևողները երևի դեռ չեն մոռացել, որ «Վիկրամայի կյանքը» ժողովածուի առանձին պատումները, սկսած դեռևս 1980-ականների կեսերից, պարբերաբար տպագրվում էին և արժանանում ուշադրության: Եվ ահա այսօր նույն թարգմանիչների՝ Արմենուտի Չատինյանի և Վահան Մելքոնյանի թարգմանությամբ իրականացել է նրա ամբողջական հրատարակությունը<sup>90</sup>:

Մեծարվեստ պատումների այս ժողովածուն նվիրված է Վիկրամա կամ Վիկրամադիտյա թագավորի առասպելական խիզախության, մեծագործությունների, առատաձեռնության և այլ առաքինությունների փառաբանմանը: «Վիկրամա» բառը սանսկրիտերեն նշանակում է «քա-

---

<sup>89</sup> Жизнь Викрамы или 32 истории царского трона, перевод с санскрита, предисловие и примечания П. А. Гринцера, Москва, издательство восточной литературы АН СССР, 1960, 236 стр.

<sup>90</sup> Վիկրամայի կյանքը կամ արքայական գահի 32 պատմությունները, ռուսերենից թարգմանեցին Արմենուտի Չատինյանը, Վահան Մելքոնյանը, Երևան, Եր. համալս. հրատ., 2001, 240 էջ:

ջություն», իսկ «Վիկրամադիտյա»՝ «քաջության արև»: Հենց այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ այս վերտառությամբ նյութերում գովերգվում է մի ոմն մեծագործ թագավորի կամ հերոսի փառքը:

Վիկրաման՝ որպես պատմական անձնավորություն, իրոք, Հնդկաստանի հյուսիսային մարզերից մեկի՝ Մալավայի թագավորն է եղել մ. թ. ա. I դարում: Նա առաջինն է այդ երկրամասն ազատագրել սակերի հարձակումներից ու դրանով իսկ սկզբնավորել է նոր դարաշրջան: Նրա բարության ու արդարամտության մասին սկսում են առասպելներ պատմել: Գրքում նշվում է, որ նա, դառնալով թագավոր, մշտապես կատարում է աստվածների, բրահմանների, ինչպես նաև անպաշտպանների, կաղերի, սապատավորների և այլ դժբախտ մարդկանց ցանկությունները: Նա ջանադրաբար պաշտպանում էր իր հպատակների շահերը, ծառաները միշտ գոհ էին նրանից, իսկ նախարարների, վասալ կառավարիչների և մյուս մերձավորների սրտերը գրավում էր իր խոսքի տերը լինելով: Այդպես նա թագավորում էր՝ երբեք չխախտելով օրենքն ու սովորույթները: «Աշխարհում մեկ ուրիշ թագավոր, ինչպիսին Վիկրաման էր, չի եղել, նշված է պատումներից մեկում: - Դրա համար էլ շուտով տարածվում է Գանգեսի նման անկասելի նրա փառքը»:

Մի անգամ աստվածների աշխարհում Ինդրան Վիկրամային իր առաքինությունների համար մեծամեծ պարգևներ է շնորհում և միաժամանակ նվիրում թանկարժեք քարերով զարդարված մի գահ, որն ուներ 32 արձաններ և վեր էր բարձրանում՝ ոտքերով հենվելով այդ արձանների գլուխներից: Ինդրայի թույլտվությամբ Վիկրաման վերցնում է այդ հույակապ գահն ու վերադառնում իր երկիրը: Եվ այնտեղ նա բարձրանում է այդ գահին ու կառավարում իր թագավորությունը:

Անցնում են շատ տարիներ, և մի օր էլ չար դիպվածով վախճանվում է հռչակավոր Վիկրամա թագավորը, որից հետո՝ մինչև կմեծանար թագավոր օծված նրա նորածին որդին, երկիրը ղեկավարում են նախարարները: Իսկ Ինդրայի ընծայած գահը երկար ժամանակ մնում է թափուր: Եվ ահա մի անգամ թագավորական խորհրդում հնչում է մի աներևույթ ձայն. «Նախարարներ, - կոչում է ձայնը, - կհա մի թագավոր, որ արժանի լինի այդ գահը բարձրանալուն: Ուստի վերցրե՛ք այն և թաղե՛ք դաշտում»: Նախարարներն այդպես էլ վարվում են. գահը տանում ու թաղում են դաշտում:

Գարձյալ անցնում են շատ տարիներ, և երկրում թագավոր է կարգվում Բհոջան: Նա իր մի շրջագայության ժամանակ հայտնաբերում է հիշյալ գահը և դաշտից տեղավոյժում պալատ: Հետո թագավորի ու բրահմանի միջև այդ գահի շուրջ տեղի են ունենում մի շարք գրույցներ: Եվ երբ Բհոջա թագավորը ոտքը դնում է գահը երիզող արձաններից մեկի գլխին, որպեսզի նստի գահին, հանկարծ արձանը սկսում է խոսել. «Ո՛վ թագավոր,- ասում է նա,- եթե դու, ինչպես Վիկրաման, օժտված ես խիզախությամբ, ազնվությամբ և այլ առաքինություններով, ապա նստիր այս գահին»: Թագավորի և արձանի միջև մի քանի այսպիսի գրույցներից հետո Բհոջա թագավորը խնդրում է խոսող արձանին» «Պատմիր ինձ այն մարդու մեծագործությունների մասին, ում պատկանում է այս գահը»: Եվ այդ ժամանակ արձանը սկսում է պատմել Վիկրամա թագավորի մասին: Եվ ամեն անգամ, երբ Բհոջա թագավորը մոտենում է գահին և ցանկանում նստել նրա վրա, արձաններից մեկը սկսում է պատմել Վիկրամայի մի որևէ մեծագործության մասին: Եվ այդպես 32 արձանները հերթով Բհոջային ներկայացնում են Վիկրամայի արիությունը, ազնվությունը, քաջությունը, համարձակությունը, խիզախությունը, ինքնագոհությունը, անձնուրացությունը, վճռականությունը և նրա այլ առաքինությունները: Եվ ամեն անգամ այդ պատումները ներառում են բազմաթիվ այլ ասքեր ու գրույցներ, որոնք դառնում են «շրջանակող պատմություններ»: Եվ ամեն անգամ իրենց պատմությունն ավարտելիս գրուցող արձանները դիմում են Բհոջա թագավորին. «Եթե քեզ հատուկ են Վիկրամայի մեծահոգությունն ու նման առաքինությունները, ապա նստի՛ր այս գահին»: Եվ այսպես մեկը մյուսի հետևից հյուսվում է Վիկրամա թագավորի կյանքի առասպելը, որտեղ նա ներկայանում է որպես հզոր ու արդար տիրակալ, անպարտելի ռազմիկ, ճնշվածների ու վիրավորվածների պաշտպան, բոլոր մարդկանց բարերար: Գովաբանվում է նաև նրա անշահախնդիր հովանավորությունը գիտնականներին ու բանաստեղծներին, որի շնորհիվ էլ իր երկրում մեծ ծաղկում են ապրել գիտությունն ու արվեստները: Այս է ներկայացվող գրական հուշարձանի համառոտ սյուժեն, որը, ժողովրդի մեջ շրջելով ու բերանից բերան անցնելով, վերջնականապես ձևավորվել ու ամբողջացել է մ. թ. 10-րդ դարի առաջին կեսին: Նրանում խտացված են նաև հնդիկ ժողովրդի՝ ամտիկ շրջանի փիլիսոփաբարոյական ըմբռումները, աշխարհի ու տիեզերքի մասին դի-

ցաքանական պատկերացումները, մարդ էակի նկատմամբ բարձր պահանջները, գեղարվեստական-բանաստեղծական վառ մտածողությունը և այլ հատկանիշներ, որոնք հայերեն թարգմանության մեջ նույնպես արտահայտվում են հարազատորեն:

«Վիկրամայի կյանքը» ժողովածուի ռուսերեն գիտական հրատարակությունը, որից կատարվել է հայերեն թարգմանությունը, իրականացրել է ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտը 1960 թ.: Այն սանսկրիտերենից ռուսերեն թարգմանել, ներածությունը գրել և ծանոթագրություններով օժտել է Պ. Ա. Գրինցերը: Հայերենի թարգմանիչները նույնությամբ ներկայացրել են գիտական բարձր մակարդակով գրված նրա առաջաբանը և հարուստ ծանոթագրությունները՝ անհրաժեշտության դեպքում հաճախ տողատակերին կատարելով իրենց լրացումներն ու հավելումները, որոնք հայ ընթերցողներին ավելի մատչելի են դարձնում տեքստի բարդ կառույցներն ու հասկացությունները, ինչպես նաև հատուկ անունները:

Նկատի ունենալով Պ. Ա. Գրինցերի այդ ընդարձակ ներածությունը, որում մանրամասնորեն ներկայացված է հին հնդկական գրական հուշարձանի ստեղծման պատմությունը, վերլուծված են նրան առնչվող բազմաթիվ բանահյուսական ու գրականագիտական խնդիրներ, տարբեր լեզուներով թարգմանությունների մասին տրված են հարուստ տեղեկություններ, մենք հարկ չենք համարում անդրադառնալ այդ ամենին: Միայն ցանկալի էր, որ հայերեն հրատարակությունն ունենար իր թեկուզև հակիրճ առաջաբանը, որում տրված կլինեին թարգմանությանը վերաբերող որոշ մանրամասներ ու բացատրություններ: Մեզ թվում է, որ դա ավելի կհարստացնե գիտական այս գողտրիկ հրատարակությունը:

Ինչևէ, ավարտելով մեր խոսքը, նշենք, որ նկատված այս և այլ բնույթի թերությունները սովեր չեն զգում ներկա հրատարակության վրա, որը հարստացնում է հայ թարգմանական գրականությունը և հայ-հնդկական մշակութային կապերի հանգույցներից մեկն է դառնում: Կապեր, որոնք, ըստ Քսենոփոնի (մ. թ. ա. V-IV դդ.), Չենոբ Գլակի (մ. թ. IV դ.), Մովսես Խորենացու (մ. թ. V դ.), Պրոկոպիոս Կեսարացու (մ. թ. VI դ.) և այլ պատմիչների վկայությունների, սկիզբ են առել դեռևս մ. թ. ա. V-IV դարերում և առավել հարստացել ու խորացել են XVI-XVIII դարերում, երբ Հնդկաստանում կազմավորվել են հայկական առաջին համայնքնե-

րը: Նաև չպետք է մոռանալ, որ հնդկահայ գաղթօջախներում են ծլար-  
ձակել նոր ժամանակների հայ ազգային-ազատագրական պայքարի ա-  
ռաջին հունդերը, այնտեղ է մշակվել մեր առաջին սահմանադրությունը,  
ու այնտեղից է թևածել մեր հրապարակախոսության ու պարբերական  
մամուլի առաջին ազդարարը, և այս ամենը՝ դեռևս XVIII դարում: Հետա-  
գա դարերում ևս ամուր են եղել հայ և հնդիկ ժողովուրդների բարեկամա-  
կան ու մշակութային կապերը, որոնց արդյունքն են մի շարք բարձրար-  
ժեք քարզանությունները: Դրանց թվին ավելացավ նաև ներկա հրա-  
տարակությունը, որը կարևոր աղբյուր կարող է դառնալ հին հնդկական  
բանահյուսությամբ, մշակույթով, փիլիսոփայությամբ ու բանասիրու-  
թյամբ, ինչպես նաև արևելագիտությամբ զբաղվող և ընթերցասեր լայն  
հասարակայնության համար:

### **«ԳՐԱԿԱՆ ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ» ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ**

Հեթանոսական գրական շարժումը, որը ձևավորվեց անցյալ դարի  
սկզբներին, մեծապես նպաստեց արևմտահայության ազգային հոգևոր  
զարթոնքին: Դա մի շրջան էր, երբ Թուրքիայում իշխանության գլուխ  
անցած երիտթուրքերը իրենց սահմանադրական բարեփոխումներով  
ազդարարում էին Օսմանյան կայսրության տարածքում ապրող բոլոր  
ժողովուրդներին հավասար իրավունքներ ու ազատություններ, ազգային  
լեզուների ու մշակույթների ծաղկում, տնտեսական ու հասարակական-  
քաղաքական կյանքի մեծ առաջընթաց: Այդ կոչերը հնչեցին Առաջին  
աշխարհամարտին նախորդած տարիներին: Սակայն, ինչպես ցույց  
տվեց ժամանակը, նրանց այդ խոստումները սին ու խաբուսիկ դուրս  
եկան, որոնց ճշմարտացիությանը հավատով ապավինած ողջ արևմտա-  
հայությունը շուտով սրի քաշվեց ու բնաջնջվեց իր պատմական հայրե-  
նիքում: Այդ անասելի արհավիրքին նախորդած հինգ տարիները՝ 1909-  
1914 թթ., կարելի է ասել, արևմտահայ (և ոչ միայն) գրականության ու  
մշակույթի համար հուժկու վերելքի տարիներ եղան: Այդ ժամանակ էլ  
սկզբնավորվեց «գրական հեթանոսությունը», որը ոչ թե նահանջ էր դե-  
պի հին դարերի գրականությունը, այլ անցյալի կենսունակ արժեքների

արմատներից սնվելու և մեծ թռիչքով առաջ մղվելու մի նախապատրաստություն, որը արևմտահայ մի խումբ անվանի գրողների ջանքերի շնորհիվ պսակվեց հաջողությամբ:

Այդ շարժման սկզբնավորողն էր արևմտահայ խոշորագույն բանաստեղծ Գանիել Վարուժանը, որի «Հեթանոս երգեր» ժողովածուն (Կ. Պոլիս, 1912 թ.) հիմք հանդիսացավ «գրական հեթանոսության» համար: Այն դարձավ ժամանակի արևմտահայ պոեզիայի աչքի ընկնող երևույթ, որին հաջորդեցին Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման և նույն տարում տպագրված «Նավասարդ» տարեգիրքն ու մի փոքր անց՝ «Մեհյան» գրական-գեղարվեստական հանդեսը: Ցավոք, առաջինն ունեցավ միայն մեկ գիրք, իսկ երկրորդը իր գոյությունը պահպանեց մինչև Մեծ եղեռնի սկիզբը՝ տպագրվելով ընդամենը յոթ համար: Ինչպես նշված գրքերը, այնպես էլ դրանց հաջորդած այս երկու հադեսները և ժամանակին կազմակերպվող «Գրական ասուլիսների» շարքը խթան հանդիսացան հայ գրականության մեջ հեթանոսական շարժման համար:

Արդ ուղիղ մեկ դար է անցել գրական հեթանոսության սկզբնավորումից: Այդ ընթացքում մեր գրողներից ու գրականագետներից շատերն անդրադարձել են չափազանց կարճ տևած, բայց մայրենի գրականության վրա իր ազդեցությունը թողած շարժման խնդիրներին: Սակայն նրանց այդ աշխատություններում նշված խնդիրները քննարկվել են այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել իրենց հետաքրքրող թեմաների լուսաբանման համար:

Գրական հեթանոսության թեման պահանջվող խորությամբ ուսումնասիրել է ԵՊՀ հայ գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Խաչատուր Վարդանյանը: Արդեն հրապարակի վրա է նրա «Գանիել Վարուժանը և գրական հեթանոսությունը» մենագրությունը, որը վերոհիշյալ ամբիոնի երաշխավորությամբ լույս է ընծայել ԵՊՀ հրատարակչությունը:

Աշխատությունն ընդգրկում է տասը բաժին, որոնցում հեղինակը հիմնավոր կերպով անդրադառնում է գրական հեթանոս շարժման ծագման ակունքներին ու պատճառներին, նորահայտ փաստերով ու յուրովի է ներկայացնում այդ շարժման հիմնադիր Գ. Վարուժանի կյանքը իր ծննդավայր Բրզնիկից մինչև Գեմտ, նրա մանկությունը, ուսումնառությունը, ճամփորդությունները հայրենի եզերքում ու արտասահմանում և



վերջապես գրական բուռն գործունեությունը Կ. Պոլսում: Աշխատության առաջին բաժիններում ժամանակակիցների՝ մամուլում տպագրած հոդվածների, հուշերի ու միմյանց գրած նորահայտ նամակների բովանդակած նյութերի հիման վրա հեղինակը կարողացել է հանգամանորեն ներկայացնել գրական հեթանոսություն շարժման պատմությունը, վերլուծել դրա շուրջ ծավալված բանավեճերը, ստեղծված գրականությունը, տալ շատ ու շատ թերմբոնումների ու վիճելի հարցերի պարզաբանումները:

Աշխատության արժեքավոր էջերից են Դ. Վարուժանի ժողովածուների վերլուծություններն ու մեկնաբանությունները, որոնք ներկայացվում են բազմադարյան հայ գրականության հարուստ ժառանգության համայնապատկերում: Նորովի է մեկնաբանված նաև Լ. Շանթի «Հին աստվածներ» դրաման:

Հայ գրական մամուլի պատմության համար հետաքրքիր նյութեր են տալիս նաև Խ. Վարդանյանի՝ «Նավասարդ» տարեգրքի ու «Մեհյան» հանդեսի հրապարակումներին նվիրված վերլուծություններն ու գնահատականները, որոնցով էլ ավարտվում է հեղինակի երկարամյա գիտաստեղծագործական պրպտումների արդյունքը հանդիսացող մենագրությունը:

Խ. Վարդանյանի ներկա աշխատությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով և հարուստ լեզվով: Սակայն միաժամանակ պետք է նշել, որ հեղինակը մերթընդմերթ այնքան է ոգևորվում ու հրապուրվում նյութով, որ «պատկերախեղ» է անում իր ասելիքը և պարզ դատողությունները ներկայացնում բարդ լեզվով: Գրքում նկատվում են նաև նորաստեղծ արհեստական բառեր, որոնց առկայությունը այս լուրջ աշխատանքում անհարկի է:

Ինչևէ, Խ. Վարդանյանը ընթերցողների ու մասնագետների դատին է հանձնել մի արժեքավոր աշխատություն: Այն լույս է տեսել ճիշտ ժամանակին, երբ լրանում են արևմտահայ բանաստեղծ, Մեծ եղեռնի նահատակ Դանիել Վարուժանի ծննդյան 125-ամյակը և նրա կողմից սկզբնավորված գրական հեթանոսության դարալիցը:

## ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԱՍԵՐԸ<sup>91</sup>

*(Գիրական նստաշրջան՝ նվիրված Մեծ եղեռնի 80-ամյակին)*

Ուրսուն տարի առաջ՝ 1915 թ. գարնանը, Թուրքիայում իշխանության գլուխ անցած երիտթուրքերը, օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորություններից, ըստ վաղորոք մշակված ծրագրի, փորձեցին Հայկական հարցը լուծել թուրքական ձևով: Նրանք համայն մարդկության աչքի առջև կատարեցին պատմությանը մինչ այդ անհայտ մի ոճրագործություն, այն է՝ միտումնավոր նպատակներով իր վաղնջական բնօրրանից հանեցին ու սրի քաշեցին ողջ արևմտահայությանը: Թուրք բարբարոսները նախ զինակոչեցին և, ռազմաճակատում կամ թիկունքում, աշխատանքային ճամբարներում տաժանակրությամբ հյուծելով, ոչնչացրին օսմանյան բանակում ծառայող հայ զինվորականությանը, ապա մի գիշերվա մեջ ձերբակալեցին ու գնդակահարեցին հայ մտավորականությանը՝ արևմտահայությանը զրկելով ղեկավար և կազմակերպիչ ուժից: Այնուհետև եղեռնագործ բարբարոսները պատերազմական կացության պատրվակով ստիպեցին անգն ու անպաշտպան հայերին տարագրվել և աքսորի ճանապարհներից գանգվածաբար կոտորեցին դիմադրության բոլոր հնարավորություններից զրկված անգն բնակչությանը: Չանգվածային այդ ջարդերի հետևանքով տարագրվածների միայն խլյակները հասան Դեր-Չորի անապատները, որտեղ նրանց մեծ մասը նույնպես թուրքական կամ քրդական մոլեռանդ խուժանի անընդմեջ հարձակումների հետևանքով ոչնչացվեց: Այս ահավոր եղեռնագործությանը զոհ գնացին 1.5 միլիոն հայեր, հարյուր հազարավոր հայեր էլ ցրվեցին աշխարհով մեկ՝ ծնունդ տալով արդի Սփյուռքին:

Այդուհանդերձ, թուրքական դահիճներն իրենց իղձերն իրականացնել չկարողացան: Հայ ժողովուրդը չանհետացավ պատմության թատերաբեմից և, Մեծ եղեռնից ընդամենը երեք տարի անց՝ 1918 թ. մայիսին, Սարդարապատի ահեղ ճակատամարտում հաղթելով թուրքական բազ-

---

<sup>91</sup> ԲԵՀ, 1995, թիվ 1, էջ 205-212:

մահազարանոց բանակին, վերականգնեց իր պետականությունը՝ հանձին Հայաստանի առաջին հանրապետության:

Այսօր՝ ութսուն տարի անց, հայ ժողովուրդը, ի դեմս Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների, կերտում է իր պետականությունը և կանգնած է Թուրքիայի պանթուրքական ծրագրերի կենսագործման ճանապարհին՝ խոչընդոտելով նրա մուտքը դեպի Միջին Ասիա և Արևելք:

Գերմանիայի աջակցությամբ Թուրքիայի կողմից կազմակերպված արևմտահայության եղեռնը մարդկության դեմ ուղղված հանցագործություն է, որը ոչ մի վաղեմություն չի ճանաչում: Խորհրդային հասարակարգի պայմաններում չնայած հայ ժողովուրդը կարողացավ տնտեսական ու մշակութային խոշոր նվաճումներ ունենալ, բայց և այնպես, ըստ էության արգելված էր ջարդերի մասին խոսելը: Միայն 1965 թ. ապրիլին՝ Մեծ եղեռնի 50-ամյակի օրերին տեղի ունեցած հուժկու ցույցերը հնարավորություն տվեցին ընդունելու և պաշտոնապես նշելու սգո այդ օրը՝ ապրիլի 24-ը:

Անցած այդ տարիներին Մեծ եղեռնի մասին արտասահմանում օտարազգի հեղինակների կողմից բազմաթիվ գրքեր են գրվել ու հրատարակվել: Դրանց մեջ քիչ չեն համաշխարհային գիտական հասարակայնությանը ապակողմնորոշելու նպատակով ստեղծված թուրք հեղինակների գրքերը: Մուսուլման զեղծարարները մերժում են եղեռնը, թաքցնում այն բարբարոսությունները, որոնք հայերի նկատմամբ կատարվել են Թուրքիայում՝ սկսած 1890-ականներից մինչև 1920-ական թվականները և հատկապես 1915 թ.:

Մեծ եղեռնի վերաբերյալ 1965 թ. առ այսօր մեզանում մույնպես վիթխարի քանակությամբ գրականություն է ստեղծվել, որը լայն պատկերացում է տալիս մոճավանջային այն օրերի մասին: Սակայն, չնայած այդ ամենին, Մեծ եղեռնի պատմագրության մեջ դեռևս շատ խնդիրներ կան, որոնք սպասում են իրենց լուծմանը: Այդ հիմնահարցերի քննարկմանն էր նվիրված Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում ս. թ. ապրիլի 18-ին կայացած Մեծ եղեռնի 80-ամյակին նվիրված գիտական մատաշրջանը, որը կազմակերպել էր հիշյալ ֆակուլտետը Ազգային հարցի և գեոցիոլի ուսումնասիրման կենտրոնի հետ:

Բացելով գիտական նստաշրջանը՝ Պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Բ. Հարությունյանը նշեց, որ 80 տարի առաջ Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցավ հայության դեմ ուղղված իր նախադեպը չունեցող մի ոճրագործություն, որը ժողովուրդն անվանել է Մեծ եղեռն: Թուրքիան դրանով ցանկացավ Հայկական հարցն իսպառ լուծել: Սակայն հայ ժողովուրդը, որն անցել էր բազմաթիվ փորձությունների միջով, այդ մեծագույն արհավիրքին էլ տոկաց: Օսմանցիներին չհաջողվեց այդ ձևով Հայկական հարցը հանել օրակարգից:

Այսօր փոխվել են ժամանակները, և, հակառակ թուրքական պետության բոլոր մեքենայությունների, արևմտահայերի Մեծ եղեռնը չմոռացվեց մարդկության հիշողությունից, և թուրք ժողովուրդն ու թուրքական պետությունը պետք է պատասխանատվություն կրեն դրա համար: Այդ օրը վաղ թե ուշ գալու է: Համաշխարհային հանրությունը, թեկուզ դանդաղ ու դժվարությամբ, սակայն աստիճանաբար հակվում է հայերի ցեղասպանությունը ճանաչելու մտքին: Դրա վառ առիավատչյան է օրերս Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի կողմից հայկական եղեռնը ճանաչելու փաստը: Հատկանշական է, որ Պետական դուման իր որոշման մեջ հստակորեն արձանագրեց, որ ռուսական պետությունը թուլացնելու նպատակով Արևմտյան Հայաստանում՝ իր հայրենիքում, հայությունը ենթարկվել է ցեղասպանության:

«Արևմտահայության Մեծ եղեռնից և Առաջին համաշխարհայինից հետո,- շարունակեց պրոֆ. Բ. Հարությունյանը,- հայ ժողովրդի զավակները իրենց մեջ ուժ գտան պատժելու հայերի ցեղասպանության գլխավոր մեղավորներին: Նրանց վրիժառությունից չխուսափեցին ո՛չ Թալեաթ փաշան, ո՛չ Էնվերը, ո՛չ Ջեմալը և ո՛չ էլ մյուսները: Մեծ եղեռնից թեկուզ անցել է 80 տարի, սակայն կատարված ցեղասպանության համար Թուրքիան պետք է կրի տարածքային և նյութական պատասխանատվություն: Դա կլինի մեր սերնդի թե հաջորդ սերունդների օրոք, ըստ էության կարևոր չէ: Խնդիրն այն է, որ այդ օրն անպայման կգա: Մեր սերնդին հաջողվեց վերականգնել Հայաստանի քաղաքական անկախությունը: Հայաստանի Հանրապետության կողքին այսօր ծնվել և զարգանում է հայկական երկրորդ պետությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Այս գիտաժողովը,- այնուհետև շարունակեց պրոֆ. Բ. Հարությունյանը,- նվիրված է հայոց Մեծ եղեռնի 80-ամյակին, և մեր նպատակն է ցույց տալ մարդկության դեմ ուղղված այդ մեծագույն ոճիրի պատճառներն ու հետևանքները: Ապրիլի 24-ը սերունդների հիշողության մեջ մնալու է որպես հիշատակի օր: Սակայն, ամեն տարի նշելով այդ օրը, մեր հիմնական նպատակն է աշխարհին ցույց տալ պատմական ճշմարտությունը և նպաստել մեր առջև ծառայած ազգային կարևորագույն խնդիրների լուծմանը: Ներկա գիտաժողովի մյուս կարևոր խնդիրը պատմությունից դասեր քաղելն ու չարագործներին պատմության դատաստանին հանձնելն է»:

Գիտական նստաշրջանում կարդացված առաջին զեկուցումը նվիրված էր «Հայոց ցեղասպանության պատճառները և պատմական դասերը» քեմային, որով հանդես եկավ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, ՀԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Լ. Խուրշուդյանը: Նա սկզբից կեթ նշեց, որ նախքան հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությանն անցնելը անհրաժեշտ է տալ դրան առնչվող մի շարք կարևոր հարցերի պատասխանները: Դրանք են՝ ե՞րբ է սկսվել հայոց ցեղասպանությունը, որո՞նք են ցեղասպանության պատճառները, ի՞նչ նպատակներ են հետապնդել ցեղասպանները, ինչքա՞ն է զոհերի թիվը, և վերջապես՝ որո՞նք են ցեղասպանության պատմական դասերը:

«Թվարկված հարցերի մի մասի պատասխանները հայոց պատմագիտությունն առաջմ չունի,- ասաց նա,- իսկ մյուս մասինը վիճահարույց են: Սակայն առաջին հարցի պատասխանը միանշանակ է: Հայոց ցեղասպանությունը սկսվել է այն ժամանակվանից, երբ թուրքական ցեղերը գրավել են Փոքր Ասիան ու Հայաստանը և հիմք են դրել Օսմանյան կայսրությանը: Նվաճելով Հայկական լեռնաշխարհը՝ թուրքերը ձեռնամուխ են լինում հայ ժողովրդի «խաղաղ» գեներոցիդի քաղաքականության իրագործմանը: Այդ ցեղասպանությունը,- նշեց զեկուցողը,- որը տևել է շուրջ 500 տարի, կենսագործվել է հետևյալ ձևերով՝ հայ ժողովրդի ձուլում, մահմեդականացում, երկրից արտաքսում և մասնակի ջարդեր: Նման ծրագրի իրականացման համար Օսմանյան կայսրությունը ստեղծել էր տնտեսական, քաղաքական, կրոնական և ազգային ճնշման դոմինանտ թուրք պայմանները: Ընդ որում, արտագաղթածները ևս դատապարտված էին սպիտակ գեներոցիդի: Հետևաբար,- եզրակացրեց զեկուցո-

ղը,- հայը թե՛ սեփական երկրում և թե՛ նրանից դուրս դատապարտված էր անխուսափելի ձուլման: Ահա այսպիսի ձևերով էին թուրքերը 500 տարի շարունակ պայքարում հայոց պատմական հայրենիքը սեփականացնելու համար»:

«Գոյություն ունի այն տեսակետը,- ընդգծեց գեկուցողը,- որ այդ 500 տարին պետք է համարել հայոց ցեղասպանության նախապատմություն: Սակայն մենք կարծում ենք, որ հիշյալ ժամանակահատվածը ոչ թե նախապատմություն է, այլ հայոց ցեղասպանության բուն պատմության առաջին փուլը, երբ թուրքական իշխանությունները դեռ հույս ունեին Հայաստանը հայաթափել ոչ թե հայությանը ֆիզիկապես ոչնչացնելու, այլ սպիտակ գեմոցիդի միջոցով: Սակայն, համոզվելով, որ Հայաստանի հայաթափման այդ ձևերն արդյունավետ չեն, Օսմանյան կայսրության ղեկավարությունը XIX դարի 90-ական թթ. սկզբներից անցնում է հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման քաղաքականության իրականացմանը: Սրանով սկսվում է Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ցեղասպանության երկրորդ փուլը, որը շարունակաբար կրկնվել է ընդհուպ մինչև 1990 թ. հունվարին Բաքվում կազմակերպված հայկական ջարդերը: Այս փաստերից ելնելով՝ կարելի է ասել, որ հայոց ցեղասպանությունը 1915-1923 թթ. սահմանափակող ժամանակահատվածի մեջ տեղադրելու մինչև այժմ ընդունված և ընդհանուր ճանաչում գտած տեսակետը գիտական առումով անընդունելի է»:

Ջեկուցողն այնուհետև անդրադարձավ ցեղասպանության ակունքներին, արխիվային նորահայտ վավերագրերով ու թուրքական սկզբնաղբյուրներով ապացուցեց, որ ցեղասպանությունը Օսմանյան կայսրության կողմից վաղօրոք ծրագրված ու պետականորեն մշակված քաղաքականություն է եղել, և այն մշտապես իրագործվել է ընդհանրապես Թուրքիայում բնակվող քրիստոնյա ժողովուրդների և հատկապես հայերի նկատմամբ: «Անցյալ դարի 90-ական թվականներին հայերի ֆիզիկական ոչնչացման՝ Աբդուլ Համիդի որդեգրած քաղաքականությունն ուներ իր հիմնական պատճառներն ու նպատակները: Նախ՝ անհրաժեշտ էր, որ Թուրքիան ամբողջությամբ մահմեդականացվեր, և սպա՝ ստեղծվեր Օղուզական պետություն, որի մեջ պետք է մտնեին Թուրքիան, Ադրբեջանը, Պարսկաստանը կամ պարսկական Ադրբեջանը և Թուրքմենստանը: Այս նպատակին հասնելու համար երիտթուրքերը

կազմակերպեցին արևմտահայության Մեծ եղեռնը: Սակայն Արևմտյան Հայաստանի յուրացումով չէր վերացվում «հայկական սեպը»: Միայն «հայկական սեպի» վերացումից և Օղուզական պետության ստեղծումից հետո ոչ մի խոչընդոտ այլևս չէր արգելում թուրքալեզու ժողովուրդներին միավորվելու մեկ միասնական հզոր պետության, այն է՝ Մեծ Թուրանի մեջ»,- ասաց ամբիոնի վարիչը:

XX դարասկզբին Թուրքիայում ձևավորվում է պանթուրքիզմը, որը դառնում է թուրքալեզու ժողովուրդների ազգային գաղափարախոսությունը: Երիտթուրքերը, որդեգրելով այդ գաղափարախոսությունը, ձեռնամուխ են լինում նրա ծրագրի իրականացմանը և շուտով կազմակերպում են արևմտահայոց Մեծ եղեռնը:

Այնուհետև զեկուցողն անդրադարձավ եղեռնից հետո բզկտված Հայաստանի ու աշխարհասփյուռ հայ ժողովրդի ճակատագրին առնչվող մի շարք կարևոր խնդիրների, նշեց, որ արևմտահայությանը ոչնչացնելուց հետո թուրքերը նպատակադրվում են աշխարհի քարտեզից իսպառ վերացնել նաև Արևելյան Հայաստանը, որպեսզի վերացվի «հայկական սեպը»: Սակայն, իրենց խոշոր հաջողություններով հանդերձ, նրանք չեն կարողանում կենսագործել պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացման հիմնական պայմանը. չի վերացվում «հայկական սեպը», հետևաբար Մեծ Թուրանի ստեղծման համար Արևելյան Հայաստանը մնում է հիմնական խոչընդոտը: Թուրքական պետության դեկն իրենց ձեռքն առած քենալականները ևս որոշում են գրավել Արևելյան Հայաստանը, սակայն նրանց նույնպես դա չի հաջողվում:

«Հայ ժողովրդի համար դժվարին պայմաններում Արևելյան Հայաստանում 1920 թ. նոյեմբերի 29-ին հաստատվում են խորհրդային կարգեր,- շարունակեց պրոֆ. Լ. Խուրշուդյանը,- և, չնայած մեծ կորուստներին, այնուամենայնիվ, դրանից հետո անցած 70 տարիների ընթացքում ԽՍՀՄ կազմի մեջ մտած Հայաստանի ու հայ ժողովրդի համար բացառվում է ցեղասպանությունը: Խորհրդային իշխանության տարիներին պանթուրքիզմն անցնում է ընդհատակ՝ վտխելով գործունեության մեթոդները: ԽՍՀՄ փլուզումից հետո պանթուրքիզմը կրկին հանդես եկավ նեոպանթուրքիզմի դիմակով և լայնամասշտաբ գործունեություն ծավալեց նախկին Խորհրդային Միության բոլոր թուրքալեզու ժողովուրդների

շրջանում: Թուրքիան կրկին պանթուրքական ուժերի դրոշակակիրն է ու հայ ժողովրդի ոխերին թշնամին: Հայկական հարցի ու ցեղասպանության ճանաչման դեմ ուղղված գործունեությունը, հակահայկական գործողությունները աշխարհի բոլոր երկրներում, Նախիջևանի հայաթափումը, հայկական ջարդերը Սումգայիթում, Բաքվում, Ադրբեջանի հայաբնակ շրջաններում, Լեռնային Ղարաբաղի անկախության դեմ մղվող պայքարը, Հայաստանի շրջափակումը՝ այդ բոլորը կազմակերպվում է պանթուրքիզմի կողմից Թուրքիայի գլխավորությամբ: Պանթուրքիզմի խնդիրները մնում են նույնը՝ «հայկական սեպի» վերացումը և Մեծ Թուրան պետության ստեղծումը»:

Հայոց ցեղասպանության պատճառների վերլուծությունից հետո զեկուցողն անդրադարձավ նրա պատմական դասերին: Նա մշեց, որ չնայած պանթուրքիստներն իրականացրին իրենց ծրագրի առաջին փուլը՝ յուրացրին Արևմտյան Հայաստանի տարածքը, բայց, այնուամենայնիվ, նրանց չհաջողվեց վերջնականապես հասնել իրենց երազանքին՝ վերացնել «հայկական սեպը»: Եվ արդ, քանի դեռ չեն իրագործվել պանթուրքիզմի ծրագրերը իրենց վտանգներով, կա և գոյություն կունենա պանթուրքիզմը: Սա անվիճելի իրողություն է, և սա է հայերի համար ներկա փուլում պատմության առաջին կարևոր դասը:

«Արևմտյան Հայաստանը, Կարսի մարզը, Արդահանը և Սուրմալուն թողնելով Թուրքերին, իսկ Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը հանձնելով Ադրբեջանին,- ասաց զեկուցողը,- Ռուսաստանն այնուամենայնիվ չվերացրեց «հայկական սեպը», քանզի պանթուրքիզմի հաղթանակը նշանակում է ռուսական կայսրության մասնատում: Այդ առումով էլ պանթուրքիզմը և ռուսաց ազգային գաղափարախոսությունը հավերժ անհաշտելի թշնամիներ են: Հետևաբար,- ընդգծեց նա,- պատմության ներկա փուլում պանթուրքիզմի առկայությունը և նրանից բխող մշտական վտանգը պատմական դաս են նաև ռուս ժողովրդի և ռուսաց կայսրության համար: Հենց այս իրողությունից հայերը պետք է քաղեն պատմության երկրորդ կարևոր դասը: Եթե պանթուրքիզմը սպառնում է ռուսական կայսրությանն ու հայ ժողովրդի գոյությանը, ուրեմն նրանց շահերը առնչված են պատմության ճակատագրով: Հենց այդ առումով էլ Հայաստանի ճակատագիրը պետք է կապված լինի Ռուսաստանի հետ»:



«Պանթուրքիզմի վտանգից խուսափելու միակ ելքը հայ քաղաքական մտքի նախորդ սերունդների մշակած մարտավարության և ռազմավարության սկզբունքներին հարագատ մնալն է», - իր գեկուցման մեջ ընդգծեց պրոֆ. Լ. Խուրշուդյանը: Այդ սկզբունքներն են՝ պայքարել ուժեղ, անկախ հայկական պետականության կայացման համար, ստեղծել հզոր և մարտունակ բանակ, ինչպես նաև արտաքին քաղաքականության բնագավառում, անկախ Ռուսաստանում տիրող վարչակարգից, պահպանել ավանդական ռուսական կողմնորոշումը: Հայոց նորաստեղծ պետականությունը պետք է ղեկավարվի դարերի ընթացքում մշակված, պատմության քննությունը բռնած ազգային գաղափարախոսության սկզբունքներով՝ հաշվի առնելով, իհարկե, նաև արդի ժամանակաշրջանի խնդիրներն ու պահանջները:

«Ելնելով պատմական այս անխուսափելի վտանգի սպառնալիքից, - վերջում ասաց գեկուցողը, - հայ ժողովուրդը, նրա քաղաքական ղեկավարությունը, ազգային գաղափարախոսները պարտավոր են խոր ու բազմակողմանիորեն վերլուծել հայոց ցեղասպանության պատճառները, համապատասխան դասեր քաղել դրանից և հուսալի միջոցներ ձեռք առնել պանթուրքիզմի հարձակումներին դիմակայելու համար: Պատմության դասերը հաշվի չառնելու դեպքում հայոց նոր ցեղասպանությունը կդառնա անխուսափելի»:

Գիտական նստաշրջանում կարդացված մյուս գեկուցումները ևս մեծ հետաքրքրություն առաջացրին ունկնդիրների շրջանում: Դրանք ասես մեկը մյուսի շարունակությունը լինեին և ամբողջական պատկերացում էին տալիս անցած 100 տարիների ընթացքում հայ ժողովրդի դեմ կիրառված ծանր հանցագործությունների մասին: Պատմական հարուստ փաստեր էին բերված, օրինակ, Ազգային հարցի և գեներալի ուսումնասիրման կենտրոնի անդամ, դոց. Լ. Մկրտչյանի «Հայոց ցեղասպանության սկիզբը (1890-ական թվականներ)» գեկուցման մեջ: Հեղինակը պատմական հարուստ փաստերի վկայակոչումով անդրադարձավ արևմտահայության ցեղասպանության արդյուհամիդյան քաղաքականության տարբեր կողմերին: Նա նշեց, որ արյունարբու Աբդուլ Համիդ II-ը Օսմանյան խարխլված կայսրությունը փլուզումից փրկելու նպատակով մանրամասնորեն մշակեց մի ծրագիր, որն ընդգրկում էր երկրի տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի

բոլոր ոլորտները և ուներ գաղափարախոսական ամուր հիմք: Նրանում հաշվի էին առնված նաև ազգային հարցը, երկրում տիրող սոցիալ-դասակարգային իրավիճակը և դրանց առնչվող բազմաթիվ այլ գործոններ: Իբրև գաղափարախոսություն՝ այդ ծրագրի հիմքում Աբդուլ Համիդը դրեց XIX դ. երկրորդ կեսին ձևավորված պանիսլամիզմը, որի նպատակն էր մահմեդականություն դավանող բոլոր ժողովուրդներին միավորել վերազգային և վերադասակարգային մի ընդհանրության մեջ: Սուլթանն իր ծրագրում մտցրեց նաև նոր օսմանների օսմանյան հայրենիքի միասնության և հզորության վերաբերյալ հիմնարար դրույթները: Պանիսլամիզմի գաղափարախոսությամբ հագեցած իր այս ծրագիրը դնելով պետական քաղաքականության հիմքում՝ Աբդուլ Համիդը փաստորեն դարձավ դոկտրինայի հիմնադիր, որին հետագայում հավատարիմ մնացին նաև երիտթուրքերն ու քեմալականները:

«Իր այդ նպատակներն իրականացնելու համար Աբդուլ Համիդն ընտրում է երկու ուղի,- այնուհետև ասաց զեկուցողը:- Դրանցից մեկը վերաբերում էր կայսրության տնտեսությանը, որի մեջ պետք էր ուժեղացնել մուսուլմանների՝ հատկապես թուրք բուրժուազիայի դերը: Այդ նպատակին հասնելու համար Սուլթանը ստեղծում է հայերին և հույներին հակակշիռ մուսուլման ձեռնարկատերեր և թուրք մտավորականության մի նոր խավ: Նրա նպատակն էր մոլեռանդ, ռասիստ թուրք մտավորականություն դաստիարակելն ու դրա հետ մեկտեղ մասնակի բարենորոգչությունների օգնությամբ ապագա միաէթնիկ պետության համար տնտեսական հիմքի ստեղծումը:

Առավել մեծ բարդությունների հետ էր կապված Սուլթան Համիդի երկրորդ՝ միատարր ազգաբնակչությամբ արևելյան կայսրություն ստեղծելու երազանքը,- ասաց զեկուցողը:- ...Դրա համար հարկավոր էր ամենից առաջ լուծել քրիստոնյա ժողովուրդների ձուլման, երկրից արտաքսման կամ ոչնչացման հարցը: Սա շատ ավելի բարդ խնդիր էր, և այստեղ պետք էր փնտրել ևս մեկ պատասխան այն հարցի, թե ինչու սուլթանն անմիջապես չորդեգրեց թուրքիզմը: Անվերապահորեն հռչակելով թուրքական պետություն ստեղծելուն ուղղված քաղաքականություն՝ Աբդուլ Համիդն իր դեմ կլարեր կայսրության մուսուլման մյուս ժողովուրդներին, որոնցից շատերն ունեին իրենց զարգացած մշակույթը, ազգային նկարագիրն ու անկախության ձգտումը: Այդ պատճառով այստեղ

և սուլթանը որոշեց գործել աստիճանաբար. նախ ստեղծել մուսուլմանական երկիր և ապա այն վերածել թուրքականի: Այդ դեպքում, բնական է, առաջին հարվածը պետք է հասցվեր քրիստոնյա ժողովուրդներին:

Այդ ժողովուրդներին ոչնչացնելու համար նա կազմակերպում է գրոհային ջոկատներ, և այդ «պատիվը» շնորհվում էր ոչ թե թուրք մուսուլմաններին, այլ քրդերին, ալբանացիներին և կովկասյան խաժամուժ ցեղերին: Աբդուլ Համիդի առաջին և միակ նպատակն էր ոչնչացնել հայերին: Մահմեդական օվկիանոսի մեջ վեր խոյացած «հայկական կղզին» անհանդուրժելի էր Համիդի համար: Առավել բարձր մշակույթ ունեցող քրիստոնյա ժողովրդին ձուլելը փաստորեն անհնար էր, և սուլթանն ընտրում է մյուս՝ բնաջնջման միջոցով հարցը լուծելու ճանապարհը: Ըստ այդմ՝ ստեղծվում է խորապես մշակված, կոռ և ամբողջական մի համակարգ, որտեղ հաշվի էր առնված ամեն մի մանրուք, ամենից առաջ՝ արտաքին գործոնի դերը»:

«1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո, շարունակեց զեկուցողը,- հայերը Եվրոպայից ստանում են բարենորոգումների վերաբերյալ 61-րդ հոդվածը: Պարզ է, որ այդուհետև այդ խնդիրն ստանալու էր միջազգային հնչեղություն, և Հայկական հարցը՝ որպես արևելյան հարցի մի բաղկացուցիչ մաս, գտնվելու էր մեծ տերությունների ուշադրության կենտրոնում: Այդ պարագայում Աբդուլ Համիդը, համոզվելով, որ Եվրոպայում Օսմանյան կայսրությունն ապագա չունի, 1895-96 թթ. Հայկական հարցի հետ միասին մեծ տերությունների սեղանին է դնում Կրետեի քարտը, որով Եվրոպային մասնակի զիջումներ անելով Բալկաններում՝ փոխարենը որոշակի ազատություն էր ստանում «Հայկական կղզում»: Այդ բանին օգնում է նաև այն հանգամանքը, որ 1870-80-ականներին՝ բուլղարական հայտնի դեպքերից հետո, ռուսաց Նիկոլայ II ցարը վերանայել էր իր արտաքին քաղաքականությունը այդ տարածաշրջանում: Ռուսաց ցարի և թուրքական սուլթանի մտորումներն այստեղ համընկնում են. երկուսի համար էլ անհանդուրժելի էր երկատված, սակայն ներուժի մեծ հնարավորություն ունեցող հայ ժողովրդի միավորումը: Հենց այստեղ սուլթանը ճկուն ձևով կարողանում է օգտվել պահից և քաղաքական դաշինքի մեջ է մտնում Ռուսաստանի հետ՝ ընդդեմ հայ ժողովրդի»:

«Ահա քաղաքական այսպիսի պայմաններում,- շարունակեց գեկուցողը,- արևմտահայությունը Թուրքիայում ենթարկվում էր դաժան բռնությունների: Տնտեսական ու մշակութային գեոնոցիդից հետո սկսվեցին կազմակերպված զանգվածային ջարդերը: Առաջին կազմակերպված ֆիզիկական ոչնչացումը սկսվեց ազգային-ազատագրական պայքարի մշտաբորբոք Սասունում, որտեղ 1892-94 թթ. սկսած մինչև 1890-ականների վերջը մահու և կենաց կռիվ էր մղվում: 1895 թ. սեպտեմբերի 30-ին ահավոր կոտորած տեղի ունեցավ Բաբերդում, 1895 թ. հոկտեմբերի 5-ին սկսվեց Տրապիզոնի սարսափելի ջարդը, որտեղ սրի քաշվեցին հազարավոր հայեր, ավերվեցին շրջակայքի հայկական բնակավայրերը: Երկու ամսվա ընթացքում կոտորածների ալիքը տարածվեց հայկական ու հայաբնակ համարյա բոլոր մարզերում: Տասնյակ հազարավոր կանայք, երեխաներ, ծերեր ու երիտասարդներ ոչնչացվեցին Երզնկայում, Դերջանում, Բիթլիսում, Ուռհայում, Շապին-Գարահիսարում, Կարինում, Խարբերդում, Մալաթիայում, Մարզվանում, Դիարբեքլիում, Սղերդում, Սեբաստիայում, Այնթապում, Մարաշում և այլուր: Այդ ջարդերը կազմակերպվում էին պետության կողմից և կառավարող շրջանների հսկողությամբ, սպա Բարձր Դռան կողմից աշխարհին ներկայացվում որպես հեղափոխականների, ազգային կուսակցությունների և անհնազանդների սադրանքներ, ինչպես և մուսուլման մոլեռանդների բարբարոս գործունեության արդյունք»:

Չեկուցողը, վկայակոչելով 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ում ընդունված Գեոնոցիդի կոնվենցիայի 2-րդ հոդվածը, ասաց, որ հազարավոր արխիվային վավերագրեր անհերքելիորեն վկայում են, որ 1880-ական թվականներից արևմտահայության նկատմամբ բուրբական վարչակարգի կողմից կիրառվել են միաժամանակ բոլոր ենթակետերով սահմանված գործողությունները: Նախքան ֆիզիկական բնաջնջումը երկրում ստեղծվեցին կյանքի, կենցաղի դժոխային պայմաններ, պետական քաղաքականությամբ քայքայվեց հայ ընտանիքը, պատերազմ հայտարարվեց այդ ժողովրդի կրոնին ու մշակույթին: Այնուհետև ոչնչացվեց շուրջ 300 հազար հայ, նույնքան օսմանահպատակ հայեր տարագրվեցին երկրից, հազարավոր երեխաներ որպես ստրուկ վաճառվեցին՝ համալրելով հարեմներն ու անառականոցները, իսկ մի հսկայական զանգված հարկադրաբար դավանափոխվեց՝ փրկելու համար իր կյանքը:

«Այսպիսով,- վերջում ընդգծեց գեկուցողը,- անժխտելի է, որ 1880-ական թթ. սկսյալ մինչև 1890-ականների վերջերը թուրքական պետական վարչամեքենան Արդուլ Համիդ II սուլթանի անմիջական ղեկավարությամբ սկսեց իրականացնել հայ ժողովրդի օսմանահպատակ հատվածի սիստեմատիկ բնաջնջման ծրագիրը: Այդ քաղաքականությունը մասամբ ձախողվեց շնորհիվ հայ ժողովրդի ազգային-ազատագրական զինված պայքարի, որը, չնայած ծանրագույն կորուստներին տոկալով և դիմադրելով, Օսմանյան կայսրությանը կանգնեցրեց ներքին և արտաքին բնույթի այնպիսի բարդությունների առջև, որոնք թուրքական կառավարող շրջաններին ստիպեցին առժամանակ դադարեցնել հայության ֆիզիկական ոչնչացման քաղաքականության իրականացումը»:

Նստաշրջանում ընթերցված հերթական գեկուցումը նվիրված էր «Հայոց ցեղասպանությունը Ադրբեջանում (1918-1990 թթ.)» թեմային, որով հանդես եկավ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ Յու. Հովսեփյանը: Նա իր գեկուցման մեջ ցույց տվեց հայերի նկատմամբ կիրառված բռնություններն ու սպիտակ ջարդերը Ադրբեջանի հայաբնակ շրջաններում, Նախիջևանում և Լեռնային Ղարաբաղում:

«Անդրկովկասյան սեյմի լուծարումից հետո,- նշեց գեկուցողը,- առաջացավ Ադրբեջանի Հանրապետությունը, որն իր գոյության առաջին իսկ օրերից սկսեց առաջնորդվել պանթուրքիզմի գաղափարախոսությամբ: Նա անմիջապես տարածքային պահանջներ ներկայացրեց նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը: Ադրբեջանի մուսավաթականները, օգտվելով թուրքական զորքերի առաջխաղացումից, 1918-1920 թթ. իրենց տարածքում կազմակերպում և իրականացնում են հայկական ջարդեր: 1918 թ., երբ թուրքական զորքերը մտնում են Բաքու, ադրբեջանցիների հետ սրի են քաշում 30 հազար հայերի, այնուհետև հրո ճարակ են դարձնում հիմավորց Շուշին:

Ադրբեջանի խորհրդայնացումից հետո էլ վիճակը մնաց նույնը,- նշեց գեկուցողը:- Խորհրդային Ռուսաստանի համաձայնությամբ Նախիջևանը, Շարուրը, Լեռնային Ղարաբաղը բռնի կերպով միացվեցին Ադրբեջանին: Միայն անունով կոմունիստ դարձած, իսկ էությանբ նախկին մուսավաթականները 70 տարի շարունակ «սոցիալիստական ինտերնացիոնալիզմի» դրոշի ներքո, հավատարիմ պանթուրքիզմի գաղա-

փարախոսությանը, այդ բռնակցված հայկական տարածքներում իրականացրին հայության «սպիտակ գենոցիդ»»:

Այնուհետև, զեկուցողը վկայակոչելով բազմաթիվ թվական տվյալներ ու փաստեր, մանրամասնորեն ներկայացրեց, թե ինչպես են աղբբեջանցիներն իրենց նպատակին հասնելու համար հայության նկատմամբ կազմակերպել տնտեսական հալածանքներ, մշակութային գենոցիդ, բռնակցված հայկական հողերում ազերիների բնակեցում և այլն: Իսկ վերջին տարիներին գորբաչովյան ռեժիմի թողտվության հետևանքով 1988-1990 թթ. աղբբեջանցիներն իրականացրին նոր ցեղասպանություն. Սուճալիթում, Բաքվում, Գանձակում, Շամխորում, Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի շրջաններում և այլուր սրի քաշեցին հազարավոր հայերի և հարյուր հազարավորների, արտաքսեցին իրենց պապենական բնակավայրերից՝ թալանելով նրանց ունեցվածքը: Այդ ամենը կատարվում էր նույն մեթոդներով ու ձևերով, որոնցով Արևմտյան Հայաստանում 1915-1916 թթ. իրականացվել էր արևմտահայության ցեղասպանությունը:

Նոր և նորագույն պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Հ. Մելիքսեթյանն իր՝ «Սփյուռքը որպես ցեղասպանության հետևանք» թեմայով զեկուցման մեջ անդրադարձավ 1915 թ. հայոց Մեծ եղեռնի ունեցած դառն հետևանքներին: Նա նշեց, որ եղեռնը մեր ժողովրդի ճակատագրում ողբերգական դեր խաղաց. նախ մորթվեց 1.5 միլիոն հայ, ապա հայ ժողովուրդը գրկվեց իր վաղնջական հայրենիքի մեծագույն մասից, ոչնչացվեցին դարերի ընթացքում ստեղծված տնտեսական ու մշակութային բյուրավոր գանձեր: Այդ ցեղասպանության անմիջական հետևանքը եղավ նաև հայկական Սփյուռքի առաջացումը աշխարհի չորս ծագերում:

«Իհարկե,- նշեց զեկուցողը,- մինչև Մեծ եղեռնն էլ Հայաստանում հաստատված օտար բռնապետությունների վարած հայահալած քաղաքականության հետևանքով ծայր առած արտագաղթի միջոցով աշխարհի տարբեր անկյուններում առաջացել էին հայկական գաղթօջախներ: Սակայն դրանցում ապրող հայության թիվը, չհաշված բուն օսմանյան և ռուսական կայսրությունների տարածքներում եղած հայկական գաղթավայրերի բնակչությունը, չէր անցնում 200 հազարից: Մեծ եղեռնից հետո արևմտահայության վերապրող բեկորները սփռվեցին աշխարհով մեկ, և հայրենաբնակ հայության կողքին, նրանից էլ ավելի մեծ թվով հայ

բնակչություն ունեցող գաղթօջախներ առաջացան: Եվ այդպես Առաջին աշխարհամարտից հետո մեր լեզվի մեջ մտավ «Հայկական սփյուռք» տերմինը, որն ունի աշխարհագրական ու քաղաքական որոշակի իմաստ և արտահայտում է հայ ժողովրդի աշխարհասփյուռ վիճակը»:

Այսպիսով, ժամանակակից Հայկական սփյուռքը կազմավորվել է Առաջին համաշխարհային պատերազմից հետո և արդեն 1920-ական թվականների սկզբներին ձեռք է բերվել որոշակի դիմագիծ: Այսօր արտաքին Սփյուռքում ապրող հայության թիվն անցնում է 3 միլիոնից, որը հայրենիքից հեռու պահպանում է իր լեզուն, ազգային դիմագիծն ու սովորույթները և զարգացնում է մշակույթն ու տնտեսությունը, ունի իր քաղաքական ու հասարակական կուսակցություններն և կազմակերպությունները, եկեղեցին:

Հետաքրքրությամբ լսվեց նաև միջազգային հարաբերությունների պատմության ու տեսության ամբիոնի դոցենտ Հ. Հակոբյանի զեկուցումը, որը նվիրված էր «Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը» թեմային: Նա, ներկայացնելով հայրենիք վերադառնալու գաղափարը և այն դիտելով որպես նստակյաց կյանք վարող քաղաքակիրթ ժողովուրդներին հատուկ՝ հնագույն ժամանակներից եկող երևույթ, մասնավորապես կանգ առավ հայերին Օսմանյան կայսրության մեջ ցեղասպանության միջոցով հայրենագրկելու փաստի և իրենց բնօրրանից արտաքսված հայերի ու նրանց սերունդների՝ հայրենիք վերադառնալու իրավունքի խնդրի վրա:

Չեկուցողը, վերլուծելով հայերի տարագրության պատմական, իրավական և բարոյահոգեբանական գործոնները և վկայակոչելով ժամանակակից միջազգային իրավունքի համապատասխան նորմերն ու դրույթները, հանգեց այն եզրակացության, որ բռնագաղթի ենթարկված արևմտահայերի և նրանց սերունդների՝ հայրենիք վերադառնալու գաղափարը կարող է իրացվել միայն միջազգային իրավունքի գործող նորմերով, մասնավանդ որ արդեն հայոց ցեղասպանության հետևանքների վերացման կապակցությամբ բարձրացվում է փոխհատուցման պահանջը, մի բան, որն անպայմանորեն կընդունվի միջազգային հանրության կողմից, քանի որ, ՄԱԿ-ի կողմից 1968 թ. ընդունված հայտնի կոնվենցիայի համաձայն, ցեղասպանության համար պատժելիությունը վաղեմություն չունի: Ուստի միջազգային իրավունքի նորմերի պահպանումը և

նրա պահանջների կատարումն այս դեպքում իմպերատիվ (պարտադիր) են:

Վերջում զեկուցողն ընդգծեց, որ բռնագաղթված հայերին ու նրանց սերունդներին իրենց պատմական բնօրրան՝ Արևմտյան Հայաստան վերադառնալու իրավունքը կարող է տրվել նաև մինչև Հայ դատի արմատական լուծումը, և դա ոչ թե կխանգարի, այլ կնպաստի վերջինիս արմատական լուծմանը, քանի որ այդ դեպքում ինքնըստիներյան կճանաչվի արևմտահայության իրավունքը իր հայրենիքի նկատմամբ:

«Ահաբեկչությունը որպես ազգային-ազատագրական պայքարի ձև (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)» թեմայով իր զեկուցման մեջ հայոց պատմության ամբիոնի դասախոս Հ. Գրիգորյանը նշեց, որ Հայկական հարցի միջազգայնացման և թուրքական պետության կողմից հայոց ցեղասպանության ծրագրման պայմաններում XIX դարի վերջերին սկսվում է հայ ազգային-ազատագրական շարժման զինված պայքարի ժամանակաշրջանը, որը հենց սկզբից որդեգրում է ահաբեկչությունը՝ որպես պայքարի արդյունավետ ձևերից մեկը: Այն իր արտացոլումն է գտնում հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերում, թեև ահաբեկչության տարբեր ձևերի կիրառման նպատակահարմարության և այլ հարցեր ճշգրտվում ու հաստատվում են միայն ազատագրական պայքարի ընթացքում, երբեմն՝ նաև դառն դասերի գնով:

«Հայկական ահաբեկչությունը ոչ թե օտար փորձի սոսկ մեխանիկական կիրառում էր հայ իրականության մեջ՝ իր ծանր հետևանքներով, ինչպես պնդում են առանձին հեղինակներ,- շարունակեց զեկուցողը,- այլ օրինաչափ արդյունքն այն ծանր իրականության, որում գտնվում էր արևմտահայությունը օսմանյան տիրապետության ներքո: Ազատության ձգտում, արդարության պահանջ, վրիժառության զգացում՝ ահա նրան սնող սկունքները: Այդ պայմանների ազդեցությամբ ծնունդ առավ հայ ահաբեկչությունը՝ որպես ժողովրդական վրեժխնդիր պոռթկումի արտահայտություն, և երբեմնի հլու զանգվածներից դուրս եկան ժողովրդական վրիժառուները՝ որպես արտահայտիչներ հայության հավաքական կամքի: Հայ վրիժառուն սառնափրտ մարդասպան չէր, այլ գաղափարապաշտ զինվոր՝ պատրաստ զոհաբերելու իր կյանքը հանուն ազգային իդեալների»:



Չեկուցողն ընդգծեց նաև, որ ահաբեկումը հայ իրականության մեջ, որպես կանոն, ինքնապաշտպանական մարտավարության դրսևորում էր և չէր կարող Հայկական հարցի լուծման արդյունավետ միջոց հանդիսանալ: Սակայն դա պայքարի անցանկալի համարվող այն միջոցներից էր, առանց որի՝ չէր կարող արդյունավետ լինել որևէ ազգային-ազատագրական շարժում, այդ թվում նաև՝ հայկականը: Թեև այս հարցում եղել են նաև վրիպումներ, սակայն թուրքական իրականության պայմաններում, երբ ճշմարտությունը հաճախ դժվար էր պարզել, իսկ թույլատրելիի ու անթույլատրելիի, արդարացվածի ու չարդարացվածի միջև սահմաններն անորոշ էին կամ պարզապես չկային, ահաբեկման այս ձևը, ամբողջությամբ վերցրած, արդարացված էր և նպատակահարմար:

«Այլ էր ազատագրական ուժերի վերաբերմունքը հակառակորդի գանգվածային ահաբեկման հարցում,- այնուհետև ասաց զեկուցողը:- Թեև թուրքական պետությունը հայության դեմ կիրառում էր հենց նման քաղաքականություն, որի արտահայտությունն էին 1890-ական թթ. ջարդերը և Մեծ եղեռնը, հայ քաղաքական ոչ մի ուժ չգնաց պատասխան համարժեք քայլի՝ դա համարելով հակամարդկային բարբարոսություն:

Բուն Արևմտյան Հայաստանում հայկական ահաբեկչությունը գլխավորապես ուղղվում էր առավել դաժան քուրդ աղաների ու բեկերի դեմ, որոնք հանդես էին գալիս հայությանը տնտեսապես հարստահարողի և հայ ազգային-ազատագրական շարժման հիմնական հակառակորդի դերում: Նրանց դեմ կիրառված ահաբեկչական ձեռնարկները որոշ չափով զսպում էին քրդերին և այդ առումով արդարացված ու ընդունելի էին»:

Վերջում զեկուցողը նշեց, որ արևմտահայ իրականության մեջ եղան նաև ահաբեկումներ, որոնք, լինելով երկարատև նախապատրաստական աշխատանքի և նյութական բավականաչափ միջոցների ծախսման արդյունք, ձգտեցին դուրս գալու ինքնապաշտպանության շրջանակներից և ձեռք բերեցին քաղաքական ուղղվածություն՝ փորձելով դառնալ Հայկական հարցի արագ ու արդյունավետ լուծման միջոց (Օսմանյան դրամատան գրավում, Բաբը Ալիի ռումբի պայթեցում, Աբդուլ Համիդի դեմ մահափորձի կազմակերպում): Կոստանդնուպոլսում իրականացված ցուցադրական այդ ձեռնարկումները, իրենց նպատակին չհասնելով հանդերձ, ունեցել են նաև գործնական հետևանքներ: Դրանք

և 1890-ական թթ. մի շարք այլ իրադարձություններ մի կողմից ճշգրտեցին ու սրբագրեցին հայ ազատագրական շարժման համար անխախտ ճշմարտություն համարվող մի շարք գաղափարներ, մյուս կողմից իրենց դերը խաղացին հայկական զանգվածային ջարդերը դադարեցնելու գործում: Հայ ազատագրական շարժումը դարձավ իրական քաղաքական ու ռազմական գործոն, որը չէին կարող անտեսել ո՛չ Աբդուլ Համիդը, ո՛չ էլ թուրք ընդդիմադիր ուժերը:

Նստաշրջանն անցավ գիտական բարձր մակարդակով: Նրա մասնակիցների կողմից հայոց Մեծ եղեռնի և ցեղասպանության ճշմարտացի պատմությունը ստեղծելու վերաբերյալ առաջադրվեցին մի շարք նոր դրույթներ, եղան կարևոր առաջարկություններ, որոնց շուրջ տեղի ունեցավ մտքերի փոխանակություն: Վերջում նստաշրջանի արդյունքներն ամփոփեց պրոֆ. Բ. Հարությունյանը և նշեց, որ նրանում ընթերցված բոլոր զեկուցումները տպագրվելու են առանձին պրակներով:

### **ՀԱՅ ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԵԾ ՍԽՐԱՆՔԸ<sup>92</sup>**

#### **(Գիտական նստաշրջան՝ նվիրված Ձեյթունի 1895-96 թթ. ապստամբության դարավիցին)**

Կիլիկյան Հայաստանի Ձեյթուն գավառն իր գոյության ընթացքում չորս տասնամյակից ավելի մարտեր է մղել շրջակա քոչվոր ելուզակների ու թուրքական բռնակալների դեմ և երբեք ծնկի չի եկել: Եվ պատահական չէ, որ Տավրոսի լեռներում ծվարած այդ փոքրիկ երկրամասը կոչվել է «արծվաբույն Ձեյթուն» ու դարձել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նշանավոր կենտրոն: Սակայն այդ պայքարի տարեգրության մեջ հատկապես աչքի են ընկնում զեյթունցիների՝ 1860-1890-ական թթ. Օսմանյան կայսրության դեմ մղած հերոսամարտերը: Այդ շրջանում նրանց առաջին համաժողովրդական ապստամբությունը տեղի է ունեցել 1862 թ., երբ թուրքերը փորձեցին վերացնել Տավրոսի հայ լեռնականների կիսանկախ վիճակը և կոտորել ու աշխարհով մեկ ցրիվ տալ նրանց: Թուրքական հրոսակներին, սակայն, չհաջողվեց իրակա-

---

<sup>92</sup> ԲԵՀ, 1995, թիվ 3, էջ 216-220:

մացնել այդ ծրագիրը: Հերոս լեռնականները թշնամուն խիզախորեն դիմադրեցին մահ 1877-78 թթ. ապստամբության օրերին:

Ազատատենչ զեյթունցիների հաջորդ ամենամեծ ու հուժկու դյուցազնամարտը սկսվեց 1895 թ. հոկտեմբերին, որը տևեց մինչև 1896 թ. փետրվարը և ավարտվեց նրանց փայլուն հաղթանակով: Արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը, ով կարողացել էր այդ նույն շրջանում Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում բնաջնջել հարյուր հազարավոր հայերի, Չեյթունում խայտառակ պարտություն կրեց:

Այս տարվա հոկտեմբերին լրացավ հայ ազգային-ազատագրական պայքարի այդ հերոսական դրվագի 100-ամյակը: Այդ պանծալի հոբելյանի առթիվ տեղի ունեցան մի շարք գիտական մատաշրջաններ և համաժողովրդական տոնախմբություններ: ՀԳԱԱ պատմության ինստիտուտը «Չեյթուն» պատմամշակութային միության հետ հոկտեմբերի 18-ին անցկացրեց գիտաժողով: Գիտաժողովներ տեղի ունեցան մահ Հայաստանի ազգային գրադարանում և այլ հաստատություններում, ինչպես մահ Սփյուռքում:

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում և «Չեյթուն» պատմամշակութային միության հետ նոյեմբերի 30-ին գումարվեց գիտական մատաշրջան՝ նվիրված հիշյալ հերոսամարտի դարալիցին: Բացման խոսքով հանդես եկավ Պատմության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, դոց. Հ. Արրահամյանը:

«Մեր ֆակուլտետում արդեն ավանդույթ է դարձել ամեն տարի անցկացնել գիտական մատաշրջաններ՝ նվիրված հայ ժողովրդի պատմության հիշարժան իրադարձություններին ու տարելիցներին,- ասաց մահ: Մեր ժողովրդի պատմական ճակատագիրը եղել է այնպիսին,- այնուհետև շարունակեց ելույթ ունեցողը,- որ մահ օտարների լծից ազատագրվելու, իր գոյությունը պահպանելու և ազգային պետականությունը վերականգնելու համար հաճախակի է դիմել ազգային-ազատագրական զինված պայքարի: Մեր ժողովրդի պատմության նախորդ փուլերից, որքան էլ որ դրանք հարուստ են խոշոր իրադարձություններով՝ պարսիկների, արաբների, մոնղոլների, թաթարների լծի դեմ ընդվզումներով, այնուամենայնիվ աչքի է ընկնում XIX դարը, հատկապես՝ նրա երկրորդ կեսը, երբ համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին այդ շարժումների համար: Դրանցից էին հասարակական կարծիքի ձևավո-

րումը, հասարակական-քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների ասպարեզ իջնելը, որոնց ծրագրային գլխավոր խնդիրն ազգային պետականություն ստեղծելն էր: Այդ շրջանի միջազգային հարաբերությունները ևս նպաստում էին նման շարժումների բորբոքմանը: Մեծ տերությունները, հատկապես՝ Ռուսաստանը, սկսեցին քաղաքական ավելի ակտիվ դեր խաղալ ինչպես բալկանյան ժողովուրդներին Թուրքիայի լծից ազատագրելու, այնպես էլ Կովկասում ու Փոքր Ասիայում, մասնավորապես Արևմտյան Հայաստանը գրավելու գործում, որն ինքնըստինքյան նշանակում էր արևմտահայության ազատագրումը թուրքական բռնակալությունից: Հիմնականում այդ խնդիրն էր ընկած հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերի հիմքում»:

Անդրադառնալով Ձեյթունի 1895-96 թթ. հեղոսամարտին՝ ելույթ ունեցողը հատկապես ընդգծեց այն միտքը, որ այդ ապստամբությունը մեծ չափով նպաստեց ազգային-ազատագրական պայքարի ծավալմանը: Սակայն, չնայած դրան,- ասաց նա,- Ձեյթունի ապստամբությունը այդ օրերին մնաց եզակի: Եվ որքան էլ գեյթունցիներն իրենց այդ ապստամբությամբ մնացին միայնակ, այնուամենայնիվ, նրանք հասան զգալի հաջողությունների, ձեռք բերեցին քաղաքական որոշակի ազատություններ և թուրքերը ստիպված եղան անելու որոշ զիջումներ: Ձեյթունի հեղոսական ապստամբությունը մեծ արձագանք գտավ ժամանակի մամուլում և միջազգային հասարակական-քաղաքական կյանքում»:

«Հայ պատմագիտությունը շատ բան ունի անելու,- իր խոսքն ամփոփելով՝ ասաց դոց. Հ. Աբրահամյանը:- Անհրաժեշտ է նոր տվյալների ու փաստերի հիման վրա հանգամանորեն վերլուծել և նորովի գնահատել Ձեյթունի 1895-96 թթ. ապստամբության դերն ու նշանակությունը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ: Մեր ներկա գիտական նստաշրջանը նույնպես այդ նպատակն է հետապնդում»:

Այնուհետև լավեց հայոց պատմության ամբիոնի վարիչ, ՀԳԱԱ թղթակից անդամ Լ. Խուրշուդյանի զեկուցումը՝ «Ձեյթունի 1895-1896 թթ. ապստամբության մի քանի հարցերի շուրջ» թեմայով: «Այդ ապստամբությունը,- ասաց նա,- XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայոց ազգային-ազատագրական պայքարի բարձրակետն է, մեծադույն հաղթանակը: Բեռլինի կոնգրեսից հետո հայոց ազգային-ազատագրական

պայքարը մտնում է նոր փուլ՝ զինված պայքարի շրջանը: Խրիմյան Հայրիկի «Երկաթե շերեփի» կարգախոսը օրակարգի խնդիր են դարձնում Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները: Նրանց կողմից դեկավարվող ազգային-ազատագրական պայքարի ձևերն էին հայրուկային կոիվները, ապստամբությունները, ինքնապաշտպանական կոիվները, ասպատակությունները, արշավանքները և այլն, որոնք պետք է հանգեցնեին ընդհանուր ժողովրդական ապստամբության: Եվ այդ պայքարի բարձրակետը եղավ Ձեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունը»:

«Ձեյթունցիների հաղթանակով հայերի ազգային-ազատագրական շարժումը դարձավ մի հզոր գործոն, որի հետ հաշվի էին նստում թուրքական իշխանությունները», - հավաստեց զեկուցողը: Ձեյթունի ապստամբության հաղթանակից հետո, ըստ նրա, Աբդուլ Համիդը հարկադրված էր բանակցություններ սկսել հայ ազգային կուսակցությունների հետ: Եվ վերջապես, Ձեյթունի հաղթանակով թուրքերը դադարեցնում են հայերի զանգվածային կոտորածները:

«Արևմտահայության պայքարը շարունակվում է մինչև Մասունի 1904 թ. զինված ապստամբությունը: Սակայն համահայկական այդ ընդվզումները մինչև այսօր ճիշտ չեն գնահատվել,- շարունակեց զեկուցողը:- Հայոց՝ ավանդական պատմագիտությունը ազգային-ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրության հարցերում ընթացել է անընդունելի ճանապարհով: Հայրենիքի ազատության և պետականության վերականգնման համար մղված զինված պայքարը բնութագրվել է որպես ինքնապաշտպանություն:

Այս կապակցությամբ առաջանում է մի չափազանց կարևոր հարց, այնուհետև ասաց զեկուցողը:- Օսմանյան կայսրության նվաճած բոլոր ժողովուրդները զինված պայքար են մղել թուրքական լծից ազատագրվելու, ազգային պետականությունը վերականգնելու համար: Դրա փայլուն օրինակը տվել են բալկանյան ժողովուրդները»: «Իսկ հայե՞րը: Համաձայն ավանդական պատմագրության,- ասաց նա,- հայ ժողովուրդը միայն ինքնապաշտպանական մարտեր է մղել իր գոյապահպանման համար: Նման հակապատմական տեսակետը, ցավոք, ավանդույթի ուժով տիրապետող է մնում նաև մեր օրերում»:

«Տեսակետների նման համակարգում,- շարունակեց նա,- Ձեյթունի ապստամբությունը կորցնում է իր նշանակությունը և հնարավորություն

չի տալիս վեր հանելու նրա պատմական տեղն ու դերը հայոց պատմության մեջ: Ո՞րն է պատճառը, ինչու՞ է հայոց ավանդական պատմագիտությունը նման ճանապարհ ընտրել: Բանն այն է, որ Հայկական հարցի և ցեղասպանության թուրքական կոնցեպցիայով արևմտահայության 1890-ական թվականների ջարդերը բացատրվում են եվրոպական տերությունների ու Ռուսաստանի գործակալներ հայ ազգային կուսակցությունների ապստամբություններով: Փոխանակ գիտականորեն ապացուցելու թուրքական այդ պատմահայեցողության անհեթեթությունը, բացահայտելու ցեղասպանության իրական պատճառները՝ հայ պատմագիտությունն ընթացել է այլ ուղիով. ընտրել է հայոց հայրենիքի ազատագրության համար մղված զինված պայքարի ոչ ճիշտ մեկնաբանման ճանապարհը: Այդ տեսակետը աղքատացնում ու նսեմացնում է հայոց պատմությունը»,- իր գեկուցման մեջ ընդգծեց Լ. Խուրշուրյանը:

Չեկուցողն այնուհետև ներկայացրեց XIX դարի վերջին ստեղծված պատմական պայմանները և այն առանձնահատկություններն ու նախադրյալները, որոնց առկայությամբ ծնունդ առավ Չեյթունի ապստամբությունը: Նա վերջում հավաստեց, որ այդ հերոսամարտն իր նախադեպը չունեցող համաժողովրդական քաղաքական ելույթ էր, ազգային-ազատագրական պայքար, որի նպատակն էր հայ ժողովրդին ազատագրել թուրքական դարավոր լծից:

«Չեյթունի 1895 թ. ապստամբությունը և նրա պատմական նշանակությունը»՝ այսպես էր վերնագրված նույն ամբիոնի դոցենտ Լ. Սկրտչյանի գեկուցումը, որում հեղինակն անդրադարձավ Չեյթունի 1895-96 թթ. ապստամբության նախադրյալներին: Չեկուցողը նշեց, որ Աբդուլ Համիդի կողմից իրականացված հայաջինջ քաղաքականության մեջ առանձնապես կարևորվում էր հայ ժողովրդի ազատագրական շարժման կենտրոնների՝ Սասունի, Չեյթունի, Վանի ոչնչացումը: Ցեղասպանության իրականացման ընթացքում հարկավոր էր ամենից առաջ ոչնչացնել հայության մարտական ու կորովի խորհրդանիշը՝ Չեյթունը: «Ի պատիվ Չեյթունացիների,- նշեց գեկուցողը,- պետք է ասել, որ նրանք, գիտակցելով օրհասական վտանգը, առաջինը դիմեցին զինված ապստամբության: Գրավվեց գորանոցը, կազմվեց Չեյթունի անկախ կառավարություն՝ հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ Աղասու (Կարապետ Թուրսարգիսյան) գլխավորությամբ:

Այսպիսով, 1895-96 թթ. ապստամբությունը կարելի է բաժանել երկու փուլի,- այնուհետև ասաց զեկուցողը:- Սկզբնական շրջանում հնչակյան գործիչների և Նազարեթ Չավուշի գլխավորությամբ զեյթունցիների մի հատվածը բարձրացրեց ապստամբության դրոշը: Ձեյթունի ավագանին՝ իշխանական տների ղեկավարները, աջակցելով ապստամբներին, մարտավարական նպատակներով պահում էր արտաքին չեզոքությունը: Ապստամբության երկրորդ փուլն սկսվեց 1895 թ. դեկտեմբերից, երբ Ձեյթունի վրա շարժվեցին երկու կանոնավոր զորաբանակներ, տասնյակ հազարավոր բաշիբոզուկներ: Նրանք գալիս էին ոչնչացնելու արծվաբույնը, տեղահանելու և ջարդելու բնակչությանը: Այդ վճռական օրերին էր, որ ապստամբությունը վերաճեց համաժողովրդական դիմադրության, և Կարապետ իշխանն ինքը ղեկավարեց Ս. Աստվածածին վանքի մատույցներում մղվող ճակատամարտը»:

Ձեկուցման վերջում Լ. Սկրտչյանն անդրադարձավ Ձեյթունի ապստամբության միջազգային հնչեղությանն ու համազգային նշանակությանը: Ձեյթունը հայկական 30-ամյա հեղափոխության բարձրակետն էր, և զեյթունցին անհաղթելի մնաց, որովհետև պայքարում էր սեփական հայրենիքում ազատ ապրելու իրավունքի համար: Սուրբանը ստիպված էր եվրոպական վեց պետությունների ներկայացուցիչների միջամտությամբ հաշտության պայմանագիր ստորագրել սեփական հպատակների հետ և ճանաչել նրանց իրավունքներն ու ազատությունները:

Ձեյթունի 1895 թ. հերոսամարտի պատմության սկզբնաղբյուրներին ու առանձնահատկություններին էր նվիրված «Ձեյթուն» պատմամշակութային միության նախագահ, քիմիական գիտությունների դոկտոր, վերլուծական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր Դ. Գալբակյանի զեկուցումը, որում նա վե բիանեց մի շարք կարևոր ու հիմնական սկզբնաղբյուրներ: Նա, լինելով բնիկ զեյթունցիների շառավիղ, իր զեկուցման համար նյութ էր քաղել Ձեյթունի 1895-96 թթ. հերոսամարտի մասնակիցների ու ականատեսների հուշերից ու գրառված պատմություններից, որոնք տակավին հիշատակված չեն այդ կռիվների մասին ցարդ եղած գրականության մեջ: Դրանք, ինչպես հավաստեց նա, ժամանակին ինքն է գրի առել, և առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Նախքան այդ ամենին անցնելը նա նշեց, որ Ձեյթունի այդ վերջին ազատա-

մարտի մասին հրատարակվել են մի շարք ուսումնասիրություններ, որոնց մեջ հասկապես աչքի են ընկնում վեցը: Դրանցից նա նախ անդրադարձավ Մնացական Սեմերճյանի (Չեթունցի) «Չեթունի անցեալէն և ներկայէն» (Փարիզ, Ա. հատ., 1900, Բ հատ., 1909) գրքին: Նրանում բերված են Չեթունի ծագման, անվան ստուգաբանության և չորս տասնյակից ավելի մարտերի և ապստամբությունների մասին տեղեկություններ,- ասաց զեկուցողը,- որոնց մի մասը նվիրված է 1895 թ. դեպքերի նկարագրությանը: Սակայն պետք է ասել, որ հերոսամարտը ներկայացված է խիստ սեղմ գծերով և այն էլ՝ ոչ հեղինակի տեսածով, այլ լսածներով, քանի որ ապստամբության օրերին նա Չեթունում չի գտնվել:

«Մյուս հիշարժան գիրքը կամ տեղեկատու աղբյուրը,- ասաց զեկուցողը,- պատկանում է գրող և պատմաբան, ծագումով Չեթունցի Սմբատ Բյուրատի (Տեր-Ղազարենց) գրչին: Գիրքն անվանել է «Չեթունի վրեժը», քանի որ, հեղինակի բառերով ասած, «Չեթունցիները Սասունի վրեժը լուծեցին իրենց հաղթանակով»: Այս գիրքն ավելի շատ գեղարվեստական, քան պատմական, բնույթ ունի: Ընդ որում, նախորդների մեծ նրա հեղինակը նույնպես այդ ընթացքում Չեթունում չի եղել:

Ուշագրավ է Աղասու ծավալուն գիրքը՝ «Չեթուն և իր շրջակաները», որը ֆրանսերեն լույս է տեսել 1897 թ., իսկ հայերեն՝ անհամեմատ ավելի ուշ (Պեյրոթ, 1968): Հեղինակը ծագումով Հաճնցի է, երվյալ հնչակյան: Նա հնչակյան ազատական կուսակցության առաջյալն է եղել Չեթունում և ղեկավարել է այդ մարտերը: Գրքում դեպքերը նկարագրված են ռազմագետի տեսանկյունից: Նրանում օրավոր ընթացող գործողությունների ժամանակագրական նկարագրությունն է: Ընթերցողն անպայման կնկատի, որ հերոսամարտի հաղթանակի փառքը վերագրվում է նախ հնչակյան կուսակցությանը, ապա նոր միայն՝ Չեթունին: Մինչդեռ մենք հակառակ կարծիքին ենք: Աղասու որոշ դրույթներ չեն ընդունվում շատերի կողմից»:

«Մեր կարծիքով,- շարունակեց զեկուցողը,- բավականին հարուստ տվյալներ կան Հովհ. Ահարոնյանի նկարագրություններում, որոնք բերված են «Չեթունի պատմագիրք» (հրատարակություն Չեթունի հայրենակցական միության. Մոսթեվիլեո-Ուրուգուայ, 1960, տպ. «Արարատ», Պուեբլո Այրէս, Արիս Ահարոնյանի և Նշան Պատունեանի խմբագրությամբ) աշխատության մեջ: Սրա հեղինակը եղել է Չեթունի կենտրոնա-



կան վարժարանի հարգված ու սիրված ուսուցիչներից և հնչակյան կուսակցության Չեյթունի մասնաճյուղի անդամներից մեկը, որոնք նախապատրաստել են զեյթունցիների այդ հերոսամարտը»: Բացի դրանից՝ Հ. Ահարոնյանը, ինչպես ինքն է շեշտում, պատերազմի օրերին եղել է Ադասու կողքին և միշտ նրա հետ, իսկ բանակցությունների ժամանակ՝ թուրքերենի թարգմանիչ: Ըստ այդմ՝ նա փորձում է բացահայտել առանձին հեղինակների բերած սխալ տվյալներն ու մեկնաբանությունները: Հենց Հ. Ահարոնյանի տվյալների հիման վրա է 1896 թ. հունվարին հաշտության բանակցություններին մասնակցած իտալացի հյուպատոս Հենրիկո Վիթթոն գրել իր «Հայերը և Չեյթունը» գիրքը, որն ամբողջությամբ նվիրված է այդ հերոսամարտին: Այդ արժեքավոր գիրքն իտալերեն առաջին անգամ լույս է տեսել 1897-ին, սակայն, ցավոք, մինչև օրս այն չի թարգմանվել ու հրատարակվել հայերեն»:

1912 թ. Մարզվանում լույս է տեսել Մամիկոն Վարժապետյանի «Յուշիկը Չեյթունի» աշխատությունը՝ ըստ Կարապետ Տեր-Հակոբյանի պատմածի: Վերջինս պատերազմին մասնակցել է առաջին օրվանից մինչև հաշտությունը: Ուստի պետք է նկատել, որ նրա բերած տվյալներն աչքի են ընկնում իրենց հավաստիությամբ ու համոզականությամբ:

«Ինչպես տեսնում ենք,- այնուհետև նշեց զեկուցողը,- հիշյալ գրքերի մի մասը գրվել է ուրիշների պատմածների ու փաստաթղթերի հիման վրա, այդ իսկ պատճառով միևնույն դրվագների նրանց նկարագրությունները հաճախ տարբերվում են միմյանցից և շեղվում իրականությունից: Մեծ տարբերություններ կան նաև նրանց օգտագործած փաստական ու թվական տվյալների մեջ»:

«Սակայն Չեյթունի 1895-96 թթ. հերոսամարտի դեպքերն ու դեմքերը նկարագրող ու գնահատող կա մի այլ աղբյուր ևս, որին գրեթե ոչ ոք չի անդրադարձել,- շարունակեց զեկուցողը:- Դրանք այն հուշերն ու հավաստի պատմություններն են, որոնք ես լսել եմ այդ ապստամբության մասնակիցներից ու ականատեսներից: Նրանք եղել են իմ հարազատներն ու մերձավորները, ովքեր մանրամասնորեն պատմում էին այն հեռավոր օրերի իրենց տեսածն ու ապրածը: Նրանցից արժե հիշատակել Չարուհի Կեսիսանյանին, որի հայրը՝ Ավետիք Կեսիսանյանը, 1895-96 թթ. եղել է Չեյթունի կենտրոնական վարժարանի տնօրենը: Նա, նաև հնչակյան ազատական կուսակցության Չեյթունի մասնաճյուղի ղեկա-

վարը լինելով, Ավագ Չաքրյանի, Հարություն Չովուռյանի և Հովի. Ահարոնյանի հետ մեկտեղ ոտքի է հանել Ձեյթունի ավագանուն ու ազգաբնակչությանը, կազմակերպել Աղասու և նրա հինգ ընկերների մուտքը Ձեյթուն քաղաք: Նրանք բազմաթիվ միջոցառումներով ու հանդիպումներով նախապատրաստել են իր նախադեպը չունեցող այդ հերոսամարտը: Իսկ տատիս մայրը եղել է Չաքրյան հայտնի տոհմի աղջիկը, այդ պատճառով տարեց գեյթունցիները միշտ հավաքվում էին մեր տանը և քննարկում անցած-գնացած դեպքերն ու իրադարձությունները: Դրանց մի մասը տեղ չի գտել վերոհիշյալ հեղինակների գրքերում»:

Հենց դրանց էլ անդրադարձավ գեկուցման հեղինակը և շարադրեց իր տեսակետներն այդ հերոսամարտի մասին: Նա նշեց, որ Ձեյթունի 1862 և 1895-96 թթ. ապստամբություններն իրենց էությանը և բնույթով խիստ տարբերվում են իրարից: Հիմնական տարբերիչ առանձնահատկությունն այն է, որ 1895-96 թթ. հերոսամարտը կազմակերպված բնույթ ուներ: Այն կազմակերպվել էր վաղօրոք՝ նկատի ունենալով Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ 1890-ական թթ. կիրառված բարբարոսությունները և իրագործված ջարդերը, որոնց նպատակն էր կասեցնել հայկական բարենորոգումները Թուրքիայում և վիժեցնել Հայկական հարցի լուծումը: Անցյալ դարավերջի բալկանյան ազատագրական շարժումները ևս ահագանգ են եղել Կարմիր Սուլթանի համար և նրան լուրջ առիթ տվել ավելի ուշադիր հետևելու Թուրքիայում ապրող ազգային փոքրամասնությունների ազատագրական շարժումներին և դրանց առաջն առնելու ամենադաժան միջոցներով: Առաջին հերթին դա վերաբերում էր Անատոլիայի և Կիլիկիայի հայերին: Ըստ նախապես ծրագրվածի՝ այդ ժամանակ ջարդեր տեղի ունեցան Մուշում, Շապին-Գարահիսարում և այլուր, իսկ 1893 թ. սուլթանն արյան մեջ խեղդեց հերոս Սասունը: Եվ ահա, քաջալերված այս հաջողություններով, օսմանյան կառավարությունը նպատակադրվեց արմատախիլ անել նաև արծվաբույն Ձեյթունը: Ձեյթունցիները, կանխատեսելով գալիք վտանգը, Հնչակյան կուսակցության մասնաճյուղի հետ համագործակցելով, սկսեցին նախապատրաստվել մեծ պայքարի: «Այդ պայքարում,- այնուհետև շեշտեց գեկուցողը,- գեյթունցիները մնացին մենակ: Ոչ ոք նրանց օգնության չհասավ, եթե չհաշվենք Հաճնից, Մարաշից և Այնթապից եկած 27 կորիճներին և հանգանակությամբ հավաքված մի քանի հարյուր օսմա-

նյան ոսկեդրամը: Առաջին հաղթական մարտից հետո նրանք սկսեցին ամրապնդել իրենց սահմանները, ստեղծեցին ինքնավարություն, որը փաստորեն կարելի է համարել հայկական պետականության հիմնադրման փորձ:

«Այդ ապստամբության մեջ մեծ է եղել նաև գեյթունցի կնոջ դերը,- շարունակեց գեկուցողը:- Եթե 1862 թ. ապստամբության ժամանակ գեյթունցի կանայք՝ ջահել հարսներն ու օրիորդները, Շուրի կամրջի վրա խմբված, սպասում էին, որ հայերի պարտության դեպքում թուրքերի ձեռքը չընկնելու համար նետվեն գետը և փրկեն իրենց անունն ու պատիվը, ապա 1895-96 թթ. հերոսամարտի օրերին նրանք արդեն իրենց անուսինների ու եղբայրների կողքին գենքը ձեռքներին պայքարում էին թշնամու դեմ: Եվ այդ օրերին եթե նրանք գթասրտորեն վերաբերվեցին գերված թուրքական զորանոցի կանանց ու երեխաների նկատմամբ, որոնց իրենց աղքատ միջոցներից հաց ու ջուր էին բաժին հանում, ապա չներեցին թուրք գերի զինվորներին, որոնք պատերազմի թեժ պահին գեյթունցիների թիկունքը խոցելու նպատակով փորձեցին հրդեհել քաղաքը: Այդ ժամանակ էր,- ասաց գեկուցողը,- որ կանայք, սրերով ու կացիններով զինված, հարձակվեցին գերիների վրա և կոտորեցին նրանցից 250-ին, մինչև ճակատից հասած հայ մարտիկներն այդ արդար դատաստանից մի կերպ փրկեցին ողջ մնացածներին: Իր նախադեպը չունեցող այդ դեպքը,- շարունակեց գեկուցողը,- շուտով ճակատագրական նշանակություն է ունենում: Երբ Չեյթունի ավագանին քննարկում էր թուրքական հրամանատարության առաջարկած հաշտության պայմանները՝ հանձնել հնչակյան կուսակցության այսպես կոչված «խռովարարներին», գրաված զորանոցն ու զինամթերքը և 600 գերի զինվորներին, հարց է ծագում. եթե իրենք կատարեն այդ ամենը, հապա կանանց կողմից սպանված 250 զինվորներին ինչպե՞ս վերադարձնեն: Ուստի որոշում են կռվել մինչև արյան վերջին կաթիլը: Եվ այդ օրհասական պայքարում գեյթունցի հայ կինը տղամարդկանց հետ զինված մարտնչում էր թուրք բարբարոսների դեմ»:

«Չեյթունի հերոսամարտի ամենակարևոր նշանակությունն այն էր,- նշեց գեկուցողը,- որ այդ ընթացքում կասեցվեցին հայկական ջարդերը Թուրքիայում: Մյուս կողմից՝ ապացուցվեց, որ հայերը կարող են հաղթել

թուրքական հսկա բանակին, եթե նրանք պայքարի դուրս գան կազմակերպված ու միասնաբար:

Կարծում ենք, որ ցարդ թերի են ուսումնասիրված 1895-96 թթ. հերոսամարտի դրվագները,- վերջում ասաց զեկուցողը,- բավարար չափով վերլուծված և լուսաբանված չեն շատ դեպքեր ու իրադարձություններ, դեռևս շատ հարցեր չունեն իրենց պատասխանները, և ընդհանրապես, ըստ էության չի գնահատվել մեր ազգային-ազատագրական պայքարի այդ դրվագը, որի դասերը, ըստ իս, կարող են անհրաժեշտ ու ուսանելի լինել նաև մերօրյա արցախյան գոյապայքարի համար»:

Գիտաժողովին զուգընթաց՝ ԵՊՀ գրադարանի նորակառույց շենքի ճեմասրահում կազմակերպվել էր այդ հերոսամարտը բնութագրող 80-ից ավելի լուսանկարների ու գրքերի ցուցահանդես, որը տևեց մի քանի օր:

**ՔԱՆԵՐՈՐԳ ԳԱՐԻ ՄԵՃԱԳՈՒՅՆ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԸ<sup>93</sup>**  
**(Գիտական նստաշրջան՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 50-ամյակին)**

Համաշխարհային պատմությունը, սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, ունեցել է այնպիսի իրադարձություններ ու պահեր, որոնք ճակատագրական ու բախտորոշ են եղել ողջ մարդկության համար: Այդպիսին եղավ նաև Երկրորդ համաշխարհային պատերազմը: Այդ ահեղ աշխարհամարտը, որը 1939 թ. սեպտեմբերի 1-ին Եվրոպայում սանձազերծեց ֆաշիստական Գերմանիան, 1941 թ. հունիսի 22-ից Խորհրդային Միության բազմազգ ժողովուրդների համար վերածվեց Հայրենական մեծ պատերազմի: Գերմանիան, խախտելով ԽՍՀՄ-ի հետ 1939 թ. օգոստոսի 23-ին տասը տարի ժամկետով կնքված չհարձակվելու պայմանագիրը, ուխտադրժորեն արշավանք կազմակերպեց խորհրդային երկրի վրա՝ նպատակ ունենալով տիրանալու նրա տարածքներին ու հարստություններին, ստրկացնելու նրա ժողովուրդներին և ստեղծելու գերմանական ռասիստական մի մեծ կայսրություն արևմուտքից մինչև Հեռավոր Արևելք և հյուսիսից մինչև ծայր հարավ: Դրանով սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի նոր փուլը: Այն ա-

<sup>93</sup> ԲԵՀ, 1995, թիվ 2:

վելի ընդլայնվեց՝ ներառելով նորանոր երկրներ ու ժողովուրդներ: Փաստորեն, ամբողջ աշխարհը տրոհվեց երկու հակամարտ կողմերի, որոնք ընդգրկեցին մոլորակի բնակչության շուրջ 80 տոկոսը, մարտական գործողությունների մեջ մտան 60-ից ավելի պետություններ:

1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմը, Խորհրդային Միության ժողովուրդների պատմության ամենածանր ու դժվարին ժամանակաշրջանը հանդիսանալով հանդերձ, միաժամանակ նրանց կենսագրության ամենահերոսական փուլը եղավ: Աշխարհի ոչ մի ժողովուրդ երբևէ չի կրել այնպիսի ծանրագույն փորձություններ, ինչպիսիք բաժին ընկան Խորհրդային ժողովուրդներին: Երկրորդ համաշխարհային պատերազմը, չնայած ավարտվեց ազատասեր ժողովուրդների մեծ հաղթանակով, իր հոգևոր ու նյութական ավերածությունների կնիքը դրեց ողջ աշխարհի վրա: Այդ պատերազմում զոհվեց 60 միլիոնից ավելի մարդ, որից միայն 22 միլիոնը կազմում էին Խորհրդային Միության քաղաքացիները, ավերվեցին հարյուրավոր քաղաքներ, հազարավոր գյուղեր ու ավաններ, նյութական վնասը կազմեց 2569 միլիարդ ռուբլի:

Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած պատմական մեծ հաղթանակն իր նշանակությամբ ու հետևանքներով մեր դարի՝ սերունդների ճակատագիրը որոշող խոշորագույն փորձությունը եղավ: Ֆաշիզմի դեմ տարած այդ բախտորոշ հաղթանակը ձեռք բերվեց հիմնականում Խորհրդային Միության ժողովուրդների բյուրավոր զավակների արյան գնով: Այդ հաղթանակով ամբողջ աշխարհն ազատվեց ստրկացումից, ռասիզմի ճիրաններից, համաշխարհային քաղաքակրթությունն ու մշակույթը փրկվեցին կործանումից:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո Խորհրդային Միությունը, հավատարիմ իր դաշնակցային եղմանը, 1945 թ. մայիսի 9-ից մինչև սեպտեմբերի 2-ը մասնակցեց Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին փուլին՝ Հեռավոր Արևելքում վճռական նպաստ բերելով միլիտարիստական ճակատների պարտությանը: Այդպիսով ավարտվեց քսաներորդ դարի երկրորդ մեծ աշխարհամարտը, որով և փլուզվեց հիտլերյան խմբավորումը, վերջ դրվեց ֆաշիզմին:

Պատերազմի առաջին իսկ օրերից հայ ժողովրդի քաջարի զավակներն անարգ թշնամու դեմ մարտնչել են թե՛ ազգային գորամիավորումներում և թե՛ ինտերնացիոնալ գորամասերում, թե՛ դաշնակիցների բա-

նակներում և թե՛ դիմադրական շարժման ու պարտիզանական ջոկատներում: Հայաստանը խորհրդային զինված ուժերի կազմում ուներ հայկական և հայերով համալրված ազգային վեց դիվիզիաներ, որոնցից 89-րդ՝ կարմրադրոշ, կրկնակի շքանշանակիր հայկական Թամանյան դիվիզիան իր լեգենդար հրամանատար Նվեր Սաֆարյանի գլխավորությամբ հաղթական արշավով մտավ Բեռլին: Հայրենական պատերազմին միայն Խորհրդային Միությունից մասնակցել են կես միլիոնից ավելի հայորդիներ, որոնցից 250 հազարը զոհվել են տարբեր մարտերում: Հայ ռազմիկներից 70 հազարը պարզևատրվել են շքանշաններով ու մեդալներով, իսկ կռիվներում առավել աչքի ընկած 113 հայորդիների շնորհիվ է Խորհրդային Միության հերոսի կոչում, որոնցից Հովհ. Բաղրամյանը և գվարդիայի փոխգնդապետ, լեգենդար օդաչու Նելսոն Ստեփանյանն այդ բարձր կոչմանն արժանացել են երկու անգամ: 27 հայ զինվորներ դարձել են Փառքի շքանշանի բոլոր երեք աստիճանների լրիվ ասպետներ, որոնք ևս հավասարապես օգտվում են ԽՍՀՄ հերոսի կոչում ունեցողների բոլոր իրավունքներից: Պատերազմի տարիներին 13 հայի շնորհիվ է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Հայրենական մեծ պատերազմին, 1945 թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով, մասնակցել են 63 հայ գեներալ, ավիացիայի մեկ մարշալ ու մեկ ծովակալ: Հետպատերազմյան տարիներին հայ գեներալների թիվը անցել է 130-ից: Աշխարհին այսօր հայտնի են Խորհրդային Միության մարշալ Հովհ. Բաղրամյանի, նավատորմի ծովակալ Հովհ. Իսակովի (Իսահակյան), ավիացիայի մարշալ Սերգեյ Խոտյակովի (Խամփերյանց), զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի, ինժեներական զորքերի մարշալ Սերգեյ Ադանովի (Ադանյան) և շատ ու շատ ուրիշների անուններն ու սխրագործությունները: Մարտնչող հայորդիներն ամենուրեք բարձր են պահել հայ ժողովրդի պատիվը, հարստացրել են նրա մարտական փառապանծ ավանդույթները և իրենց արժանի ներդրումն են կատարել առաջադիմության ու մարդկության ոխերին թշնամի ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակի գործում:

Եվ այժմ, երբ արդեն կես դար է անցել այն օրից, ինչ լռել են Մեծ հայրենականի հրանոթների համազարկերը, պատերազմի մասին գրվում են նորանոր գրքեր, հայտնաբերվում են անհայտ շատ զինվորներ

րի անուններ, աստիճանաբար վերականգնվում, նորովի են գնահատվում այն անեղ տարիների դեպքերն ու դեմքերը, եղելություններն ու իրադարձությունները, փորձեր են արվում ստեղծելու Հայրենական մեծ պատերազմի ճշմարտացի պատմությունը:

Այդ կարևոր խնդիրն էր հետապնդում մայիսի 6-ին Պատմության ֆակուլտետում տեղի ունեցած Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 50-ամյակին նվիրված պրոֆեսորադասախոսական կազմի գիտական նստաշրջանը: Այն բացելով՝ հիշյալ ֆակուլտետի դեկան, պրոֆ. Բ. Հարությունյանը նշեց, որ այդ հաղթանակը հատկապես կարևոր էր հայ ժողովրդի համար, որովհետև եթե այդ պատերազմում ֆաշիստական Գերմանիան հաղթեր, ապա հայության գոյությունը կրկին սպառնալիքի տակ կդրվեր: Նա միաժամանակ բարձր գնահատեց ՀՀ ԳԽ որոշումը՝ մայիսի 9-ը որպես Հաղթանակի ու խաղաղության օր նշելու մասին: Այնուհետև նա անդրադարձավ հայ ռազմիկների մասնակցությանը պատերազմին: Նա վկայակոչեց բազմաթիվ դեպքեր ու դեմքեր, որոնց շնորհիվ ձեռք բերվեց ցանկալի հաղթանակը, հիշատակեց հայազգի մի շարք գորավարների ու քաջարի մարտիկների անուններ, որոնք հանուն հայության փրկության ու բարգավաճման անմնացորդ նվիրումով պայքարել են Թուրքիայի դաշնակից ու հովանավոր ֆաշիստական Գերմանիայի դեմ՝ Թուրքիայի կողմից Հայաստանի վրա հնարավոր հարձակումը կանխելու նպատակով: Նա ասաց նաև, որ Հայրենական պատերազմում տարած հաղթանակի շնորհիվ հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ ոչ միայն շարունակելու իր գոյությունը, այլև հիմնելու իր անկախ պետականությունը: «Չմոռանանք նաև նշել, որ Մայիսի 9-ը կրկնակի թանկ է մեզ համար,- վերջում ավելացրեց պրոֆ. Բ. Հարությունյանը,- չէ՞ որ հայ ազատամարտիկները անցյալ տարի այդ օրը, մտան Շուշի քաղաքն ու ազատագրեցին այն՝ մեր դրոշի վրայից սրբելով 1920 թ. աղբյուրեղանցիների կողմից կազմակերպված Շուշիի կոտորածի արյունոտ հետքերը»:

«Հայրենական մեծ պատերազմի պատմության հիմնահարցերն արդի պատմագրության գնահատմամբ» թեմայով իր զեկուցման մեջ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Դարբինյանը մանրամասնորեն վերլուծեց պատերազմի վերաբերյալ եղած հին ու նոր կարևոր հարցերը և դրանց հիման վրա արեց մի շարք եզրակացություն-

ներ: Նա ասաց, որ Հայրենական մեծ պատերազմի պատմության հիմնահարցերի մեծ մասը 1980-ական թթ. հետո արմատապես վերանայվել է, և կանգ առավ այն ուսումնասիրությունների ու մեծագրությունների վրա, որոնց հեղինակները փորձել են նոր մոտեցմամբ բացատրել ու մեկնաբանել Կարմիր բանակի՝ պատերազմի առաջին շրջանում՝ հատկապես 1941-42 թթ. կրած ծանր պարտություններն ու կորուստները: Ձեկուցողը վերստին հաստատեց այն միտքը, որ թեև Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում Կարմիր բանակի կրած պարտությունների ու նահանջի պատճառների մասին եղած և խորհրդային պատմագիտության մեջ տիրապետող տեսակետներն իրենց կնիքն են դրել պատերազմի առաջին շրջանի ռազմական գործողությունների ընթացքի լուսաբանման վրա, սակայն միակողմանի կլիներ հիշյալ պարտությունները միայն դրանցով բացատրելը: Այդ առթիվ նա վկայակոչեց Ռուսաստանում, ինչպես նաև արտասահմանում վերջին շրջանում լույս տեսած մի շարք հեղինակների (Ն. Վերտ, Տ. Տոման, Ա. Սամսոնով, Վ. Կողիշ, Ն. Պավլենկո, Դ. Վոլկոզոնով և ուրիշներ) արժեքավոր աշխատությունները, որոնց մեջ փորձ է արվում իրականությունը ճշմարտացիորեն վերհանելու և տալու պատերազմի առաջին շրջանի օբյեկտիվ պատմությունը: Հիշյալ հեղինակները Կարմիր բանակի կրած այդ ժամանակավոր պարտություններն ու նահանջը կապում են հիմնականում Ստալինի վարած քաղաքականության և կոմունիստական բռնապետական վարչակարգի բացթողումների ու սխալների հետ:

Այդ պարտությունները հետևանք էին նաև 1930-ական թթ. կեսերից սկսված և ընդհուպ մինչև 1941 թ. շարունակված ստալինյան բռնությունների, որոնց գոհ գնացին ԽՍՀՄ զինված ուժերի տասնյակ հազարավոր բարձրաստիճան հրամանատարներ: Ձեկուցողը նշեց, որ խորհրդային զորքերի հիշյալ պարտությունների առաջին և հիմնական պատճառն իրավիճակին ամբողջովին չհամապատասխանող ռազմական ըմբռնումը՝ կոնցեպցիան էր և նոր ռազմական դոկտրինայի բացակայությունը: Ըստ Ստալինի՝ ԽՍՀՄ-ը հնարավոր ներխուժման դեպքում ռազմական գործողությունները պետք է մղեր ոչ թե իր տարածքում, այլ նրանից դուրս: Դրա համար էլ ռազմավարությունը և զորքերի տեղաբաշխումը համապատասխանեցվել էին հարձակողական պատերազմի պահանջներին, և անպաշտպան էին մնացել երկրի արևմտյան սահմանները:



Մյուս պատճառը, ըստ զեկուցողի, Ատալինի սխալ հաշվարկներն էին, որոնք անտեսում էին ֆաշիստական Գերմանիայի՝ Խորհրդային Միության վրա հնարավոր հարձակումը՝ չնայած այն բանին, որ ԽՍՀՄ-ն օտարերկրյա հետախուզությունների և Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի պաշտոնական շրջանների կողմից ներկայացվում էին հավաստի տեղեկություններ այն մասին, որ Գերմանիան խորհրդային երկրի դեմ նախապատրաստվում է մեծ պատերազմի: Թույլ տրվեցին լուրջ սխալներ. սահմանապահ զորքերը չվերախմբավորվեցին ու մարտական պատրաստակամության չբերվեցին, ռազմական օդանավակայանները, զինանոցները, պահեստները չքողարկվեցին, կամուրջներն ու ճանապարհները չականապատվեցին, որոնց հետևանքով էլ թշնամին հարձակման առաջին ամիսներին ունեցավ մեծ հաջողություններ:

Չեկուցողն անդրադարձավ նաև նախապատերազմյան շրջանի ընդհանուր կացությանը: Նա, վկայակոչելով 1939 թ. օգոստոսի 23-ին ԽՍՀՄ-ի ու Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագիրը, այն կարծիքն հայտնեց, որ այդ տարիներին ստալինյան վարչակարգը վարում էր անհեռատես քաղաքականություն: Չհարձակման վերոհիշյալ համաձայնագրի հետ ստորագրվել էր նաև մի լրացուցիչ՝ գաղտնի արձանագրություն, որի գոյության փաստը տասնամյակներ շարունակ լռության էր մատնվել խորհրդային պատմագրության կողմից: Ըստ այդ արձանագրության՝ ԽՍՀՄ-ը և Գերմանիան համամիտ են եղել Կենտրոնական Եվրոպան ազդեցության գոտիների բաժանելու ծրագրին: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ԽՍՀՄ-ը շահագրգռված չի եղել հակահիտլերյան խմբավորում ստեղծելու գործում և, համոզես գալով որպես սգրեսոր, արևմտյան տերությունների հետ համատեղ պատասխանատվություն է կրում Երկրորդ համաշխարհային պատերազմը սանձազերծելու համար:

«1939 թ. օգոստոսի 23-ի խորհրդագրերմանական չհարձակման պայմանագրի շուրջ»՝ այս էր դրցենտ, պատմական գիտությունների թեկնածու Մ. Հովհաննիսյանի զեկուցման թեման: Չեկուցման մեջ նշվեց, որ Երկրորդ համաշխարհային պատերազմը լուրջ փորձություն հանդիսացավ իր մասնակից բոլոր երկրների և առաջին հերթին հակահիտլերյան խմբավորում ստեղծած երեք տերությունների համար: Նա այնուհետև բազմաթիվ փաստերով ու մեկնաբանություններով ներկայացրեց

պատերազմի նկատմամբ այդ երկրների ունեցած վերաբերմունքը, նրան պատրաստ կամ անպատրաստ լինելու, կողմնակից կամ ընդդիմադիր հանդես գալու իրողությունը և փորձեց պատասխանել դրանց վերաբերող մի շարք հարցերի: Մ. Հովհաննիսյանը նշեց, որ ըստ արևմուտքում լայն տարածում գտած տեսակետի, որի նպատակն էր ամեն կերպ քողարկել սեփական մեղքերը և պատերազմի սանձազերծման ողջ պատասխանատվությունը ֆաշիստական Գերմանիայի հետ միասին բարդել նաև Խորհրդային Միության վրա, խորհրդագերմանական գործարքի հետևանքով էր, որ գերմանական գորքերը մտան Լեհաստան, և սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Այնուհետև զեկուցողն ասաց. «Բայց եթե միակողմանի չմտենանք և տուրք չտանք սուբյեկտիվիզմին, ապա իսկույն կնկատենք, որ պատմական տվյալ ժամանակահատվածում քաղաքական իրադրությունը թելադրում էր այդպիսին լինել, քանի որ ԽՍՀՄ-ին սպառնում էր չափազանց վտանգավոր քաղաքական մեկուսացում, որովհետև Անգլիան ու Ֆրանսիան հրաժարվել էին ԽՍՀՄ-ի հետ ընդհանուր ճակատ կազմել ընդդեմ ֆաշիստական Գերմանիայի: Ինքնապաշտպանական բնագործ թելադրված, բայց ոչ այնքան հաճելի այդ քայլը եթե կարելի է ինչ-որ կերպ բացատրել և նույնիսկ ընդունելի համարել, ապա այն, ինչ կատարվեց դրանից հետո Գերմանիայի և Խորհրդային Միության միջև կնքված գաղտնի գործարքի հետևանքով, չի կարող որևէ արդարացում ունենալ», քանի որ այստեղ խոսքը վերաբերում է Լեհաստանի բաժանմանը, մերձբալթյան հանրապետությունների գրավմանը և մի շարք այլ գործողությունների, որոնք ունեին բացահայտ նվաճողական բնույթ: Սակայն, այդ պատերազմում կարևորելով ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակը, զեկուցողն այն միտքը հայտնեց, որ դա վիթխարի դեր խաղաց եվրոպական ժողովուրդների հետագա զարգացման ու բարգավաճման գործում:

Վերջին տասնամյակներում արևմտյան պատմագրության մեջ այն կարծիքն է իշխում, որ իբր Հայրենական մեծ պատերազմը եղել է ոչ իրավացի, անարդարացի պատերազմ: Տարածում գտած այս և նման բնույթի այլ տեսակետների ժխտմանն էր նվիրված պատմական գիտությունների թեկնածու, դոց. Գ. Հարությունյանի «Ժողովրդի սխարանքը. պատմությունը և արդիականությունը» թեմայով զեկուցումը: Հեղինակը, քննադատելով այդ տեսակետներն ու մերժելով դրանք, հատկապես

կանգ առավ ֆաշիզմի դեմ ելած ժողովուրդների սխրագործությունների վրա: Նա պատմական բազմաթիվ հավաստի փաստերով ցույց տվեց, որ այդ պատերազմը խորհրդային բազմազգ ժողովուրդների համար եղել է իրոք արդարացի, և իզուր չէ, որ այն կոչվել է Հայրենական մեծ պատերազմ: Եվրոպական ժողովուրդների համար ևս այդ պատերազմը եղել է սրբազան պատերազմ, քանի որ նրանք ոտքի են ելել ֆաշիստական լուծը թոթափելու և ազատ ապրելու համար: Հայտնի է, որ մեր դարի 30-ական թվականներին եվրոպական ժողովուրդներին մնում էր ընտրել երկու ուղի. կա՛մ պետք է ենթարկվելին չարին և կորցնելին իրենց ազատությունը, կա՛մ էլ պետք է պայքարի դուրս գալին ֆաշիզմի դեմ և չեզոքացնելն վերահաս վտանգը: ԽՍՀՄ ժողովուրդն ընտրեց երկրորդ ուղին և աշխարհի առաջադեմ մարդկության հետ համատեղ պայքարով կործանեց ֆաշիզմը: «Սակայն այսօր՝ տասնամյակներ անց, - ասաց զեկուցողը, - ասպարեզ են իջել մարդիկ, ովքեր փորձում են ծուռ հայելու մեջ ներկայացնել Հայրենական մեծ պատերազմը, խեղաթյուրել պատմությունը, նենգափոխել շատ ճշմարտություններ: Այդ բանը հատկապես ավելի բացահայտ դրսևորվեց գորբաչովյան, այսպես կոչված, «վերակառուցման» տարիներին ու դրանից հետո»:

Այնուհետև զեկուցողը փորձեց վեր հանել պատմական ճշմարտությունը պատերազմի մասին և դրա հետ ներկայացնել արդիական մի շարք նենգափոխված տեսակետներ ու հիմնովին մերժեց դրանք: Նա փաստերով հավաստեց, որ ռուս ժողովրդի մարտական նվաճումներն ու կորուստները չափազանց մեծ են եղել պատերազմի ընթացքում, անդրադարձավ նաև հայերի մասնակցությանը Երկրորդ աշխարհամարտին: Բացահայտեց այդ տարիներին Թուրքիայի վարած խորամանկ ու նենգ քաղաքականությունը, որի գերագույն նպատակն էր տիրանալ Անդրկովկասին և իսպառ բնաջնջել հայ ժողովրդին: Սակայն Գերմանիայի ծրագրերն ու Թուրքիայի հաշվարկները ձախողվեցին, և պատերազմում մեծ հաղթանակ տարավ խորհրդային երկիրը: Եվ այսօր մենք պետք է հարգանքի տուրք մատուցենք բոլոր նրանց, ովքեր իրենց արյան գնով ապահովեցին աշխարհում կայուն խաղաղությունը:

«Մեծ հաղթանակից չնայած արդեն անցել է հինգ տասնամյակ, - վերջում ասաց զեկուցողը, - և շատ բան է փոխվել աշխարհում, փլուզվել է ԽՍՀՄ-ը, ու նրա փոխարեն ստեղծվել է Անկախ պետությունների համա-

գործակցությունը, այնուամենայնիվ, մենք երբեք չպետք է մոռանանք պատերազմի դասերը: Հայաստանը միշտ եղել է Ռուսաստանի և ռուս ժողովրդի հետ, և ուրախալի է, որ այս անգամ էլ Հայաստանն առաջինը մտավ այդ համագործակցության մեջ և պայմանագիր կնքեց Ռուսաստանի Դաշնության հետ, որպեսզի նրա ռազմական բազաները տեղակայվեն Հայաստանում: Այդ պայմանագիրը մեծ երաշխիք է մեր հանրապետության պաշտպանունակության հզորացման և նրա անվտանգության համար: Անշուշտ, այն շահավետ է նաև Ռուսաստանի Դաշնության համար նրա հարավային սահմանների պաշտպանությունը ամրապնդելու գործում»:

Գոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Հ. Հակոբյանն իր՝ «Երկրորդ համաշխարհային պատերազմում ԽՍՀՄ-ի ազատագրական առաքելության հարցի շուրջ» թեմայով զեկուցման մեջ բնութագրեց այն խնդիրները, որոնք վերաբերում էին Գերմանիայում ֆաշիզմի հաղթանակի և Եվրոպայում պատերազմական օջախ ստեղծելու գործում ԽՍՀՄ-ի մեղավորությանը: Այդ կապակցությամբ նա վկայակոչեց մի շարք նոր փաստեր, որոնք առատ նյութ էին տալիս Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանի ճշմարտացի պատմությունը ստեղծելու համար: Նա անդրադարձավ նաև Երկրորդ աշխարհամարտում Խորհրդային Միության ազատագրական առաքելության խնդրին, նշեց, որ իրոք եղել է այդ առաքելությունը: Սակայն այդ հարցին պետք է մոտենալ վերապահորեն, քանի որ դա եղել է ոչ թե հետևողական, սկզբունքային քաղաքականություն, այլ ի սկզբանե ինքնապաշտպանական բնագրով թելադրված հարկադրական քայլ: «Գաղափարախոսական և քաղաքական նկատառումներով խեղաթյուրվել են փաստերը,- ասաց զեկուցողը:- ԽՍՀՄ-ը ֆաշիստական Գերմանիայի դեմ չի պայքարել հանուն Եվրոպայի կողեկոտիվ անվտանգության, հանուն ստրկացված ժողովուրդների ազատագրման, ինչպես ներկայացվում էր խորհրդային պատմագրության մեջ, այլ սկզբից ևեթ Ստալինի գլխավորությամբ նպաստել է Երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծմանը՝ հանդես գալով իբրև այնպիսի ագրեսոր, ինչպիսին Գերմանիան էր»: Չեկուցողն ասվածն ապացուցելու նպատակով վկայակոչեց 1939 թ. սեպտեմբերի 17-ին Լեհաստանի վրա հարձակվելը և նույն թվականի օգոստոսի 23-ին Մոսկվայում կնքված չհարձակման հա-

մածայնագրին առընթեր գաղտնի արձանագրությամբ ֆաշիստական Գերմանիայի կողմից ԽՍՀՄ ազդեցության գոտի ճանաչված ներձբալթյան հանրապետությունների՝ Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, ինչպես և Բեսարաբիայի նվաճումը, Ֆինլանդիան գրավելու ապարդյուն փորձերը և այլն, որոնք ստիպում են վերապահորեն մոտենալու ԽՍՀՄ-ի ազատագրական առաքելության խնդրին: Ջեկուցողը միաժամանակ արեց հետևյալ եզրակացությունները. 1. Արևելյան Եվրոպայի մի շարք ժողովուրդների ստրկացման գործում ԽՍՀՄ-ն ուներ մեղքի իր բաժինը, 2. Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում ֆաշիստական լծի թոթափումից հետո խորհրդային զենքի օգնությամբ, հակառակ ժողովուրդների կամքին, հաստատվեցին սոցիալիստական կարգեր և 3. Հետագայում այդ կարգերի կապանքներից դուրս գալու փորձերը ԽՍՀՄ-ի կողմից արգելվեցին բռնությամբ (1956 թ. Հունգարիայի դեպքերը, 1968 թ. «Պրահայի գարունը» և այլն):

Ջեկուցողն այնուհետև կատարեց մի շարք հարցադրումներ՝ կապված Երկրորդ համաշխարհային պատերազմին Խորհրդային Միության մասնակցության ժամանակի ու նրա նվաճողական քաղաքականության հետ, և աշխատեց գիտականորեն հիմնավորված պատասխաններ տալ դրանց: «Մակայն, այնուամենայնիվ,- վերջում ասաց նա,- ԽՍՀՄ-ի ազատագրական առաքելությունն անվիճելի է, քանի որ նա մարտնչում էր հակաֆաշիստական խմբավորման կազմում, և ինքն էլ ամբողջությամբ այդ առաքելությունն իրականացնողն էր: Բացի դրանից՝ ԽՍՀՄ-ն այդ խմբավորման գլխավոր ուժն ու ֆաշիզմի կործանողն էր: Այլ խնդիր է, որ նա հետագայում ստրկացրեց Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրների ժողովուրդների, որոնք այդ լուծը թոթափեցին սոցիալիստական համակարգի և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո միայն»:

Երկրորդ համաշխարհային պատերազմը մեծ փորձություն եղավ բազմաթիվ ժողովուրդների, այդ թվում՝ և հայ ժողովրդի համար: Ֆաշիստական տերությունների ռազմաքաղաքական խմբավորման կատարյալ պարտությունից ու հատկապես երեք մեծ տերությունների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի և ԽՍՀՄ ղեկավարների՝ կոնֆերանսներում ամենաբարձր մակարդակով քննարկվող հարցերից և որոշումներից մեծ ակնկալիքներ ունեին ոչ միայն ֆաշիզմի լծի ներքո գտնվող ժողովուրդները, այլև հայ ժողովուրդը, որի բազմաթիվ ներկայացուցիչներ, կռվելով խորհրդային ժո-

ղովուրդների կողքին, իրենց արյան գնով մոտեցրին ու կոփեցին բաղձալի հաղթանակը՝ միաժամանակ հույս ունենալով վերամիավորված տեսնելու իրենց հայրենիքի բռնամասնատված երկու հատվածները: Խորհրդային Հայաստանի իր ազգակից եղբայրների հետ այդպիսի պայծառ ու ազնիվ, պատմական մեծագույն արդարություն պահանջող, պատմության կողմից լիովին արդարացված, միջազգային-իրավական տեսանկյունից ամբողջովին հիմնավորված ակնկալիքներ ուներ նաև աշխարհով մեկ սփռված ողջ հայությունը: Եվ այդպես մեծ հույսեր կային, որ լուծում կստանա հայկական հարցը: Այս թեմային էր նվիրված պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Մուրադյանի զեկուցումը, որը կրում էր «Պոտսդամի խորհրդաժողովը և հայկական հարցը» վերնագիրը: Հեղինակը նշեց, որ այդ խորհրդաժողովը տեղի է ունեցել հաղթանակից անմիջապես հետո՝ 1945 թ. հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 2-ը, Պոտսդամում: Այդ ընթացքում սփյուռքահայ շատ կազմակերպություններ, հայ մտավորականության բազմաթիվ մեծանուն ներկայացուցիչներ դիմում էին երեք մեծ տերությունների ղեկավարներին՝ Թուրքիայի տիրապետության տակ մնացած հայոց տարածքները Խորհրդային Հայաստանին միացնելու խնդրանքով: Խորհրդաժողովի 6-րդ և 7-րդ նիստերում խորհրդային պատվիրակության ղեկավարները, ելնելով ԽՍՀՄ-ի ռազմաստրատեգիական և քաղաքական շահերից, դաշնակից պետությունների ղեկավարների առջև բարձրացնում են այդ հարցը: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց այդ հարցի քննարկման արդյունքները, անդրադարձավ ԽՍՀՄ պատվիրակության ղեկավարների ու հակառակ կողմերի ելույթներին:

«Սակայն, ցավոք սրտի,- վերջում ասաց զեկուցողը,- Պոտսդամի խորհրդաժողովը չլուծեց Խորհրդային Հայաստանին Թուրքիայի կողմից բռնագրավված հայկական տարածքների մի մասի վերադարձի հարցը չարդարացնելով այն հույսերը, որ նրա հետ կապել էր հայ ժողովուրդը, մասնավորապես՝ նրա Սփյուռքի հատվածը: Միաժամանակ խորհրդաժողովում քննարկվող հարցի ընթացքը ցույց տվեց, որ, ելնելով իր ռազմավարական շահերից, տվյալ փուլում ԽՍՀՄ-ը հետամուտ էր հայկական հողերը վերադարձնելու հարցի լուծմանը, սակայն Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը գրավում էին միանգամայն հակառակ դիրք, որի հետևանքով էլ հայկական հարցը դարձյալ մնաց առկախ»:

«Ամեն մի բանակ, որքան էլ ուժեղ լինի, եթե չունենա ամուր թիկունք, չի կարող հաղթել պատերազմում»։ այս հանրահայտ ճշմարտությունն էր ընկած դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Մ. Սահակյանի «Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի օգնությունը ռազմաճակատին» թեմայով զեկուցման հիմքում, որում հեղինակը վերհանեց այն օգնության հավաստի պատկերը, որը Հայրենական մեծ պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը ցույց է տվել Կարմիր բանակին։ Չորս տարի շարունակ ռազմաճակատը թիկունքից ստանում էր թե՛ բարոյահոգեբանական և թե՛ նյութատեխնիկական օգնություն։ Աշխատանքային կոլեկտիվների և անհատ մարդկանց կողմից տրամադրված դրամական միջոցներով պատրաստվեցին բազմաթիվ ինքնաթիռներ, զենք ու զինամթերք և տրամադրվեցին ռազմաճակատին։

Չեկուցողն այնուհետև բազմաթիվ քվեր ու փաստեր բերեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի ժողովրդական տնտեսության վերաբերյալ, ցույց տվեց, թե աշխատանքային ծանր պայմաններում ու զրկանքների գնով ինչպիսի հաջողությունների են հասել թիկունքի աշխատողները՝ առաջնորդելով «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով։ Նրանց հերոսական ջանքերով ռազմաճակատին մատակարարվում էին շուրջ 300 տեսակի զենք ու զինամթերք, պարեն ու հագուստ։ Աշխատավորների խնայողությունների հաշվին կազմակերպվում են «Հայաստանի երիտասարդություն», «Հայաստանի գյուղացիություն», «Զանգեզուրի հանքագործ» տանկային շարասյուները, «Խորհրդային Հայաստան», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» ավիաէսկադրիլիաները և այլն։

Պատերազմի հաղթանակի գործում զգալի ներդրում ունեցավ նաև սփյուռքահայությունը, որի ճնշող մեծամասնությունը կողմնորոշվեց դեպի մայր հայրենիքը և համախմբվեց ազգային ճակատի կազմակերպությունների շուրջը։ 1944 թ. փետրվարին Առաջին մերձբալթյան ռազմաճակատի 119-րդ առանձին տանկային գնդի կազմում մարտերի մեջ մտավ սփյուռքահայերի հանգանակությամբ կառուցված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը։ Նույն տարվա աշնանը Թեհրանի հայ երիտասարդության ուժերով միջոցներ հայթայթվեցին «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյան համար և այլն։ Հանգանակություններ են կազմակերպվում գրեթե բոլոր գաղթօջախներում։

«Հայրենական պատերազմի ավարտից հետո ևս,- վերջում ասաց զեկուցողը,- հայ ժողովուրդը գործուն մասնակցություն է ունեցել երկրի ավերված քաղաքների ու գյուղերի վերականգնման աշխատանքներում, 8 միլիոն ռուբլի է մուծվել Լենինգրադի ու Ստալինգրադի, Օդեսայի և մյուս քաղաքների շինարարության ֆոնդին»:

«Հայ ժողովրդի մարտական ավանդը Մեծ հայրենականի հաղթանակում»՝ այս էր պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Հ. Մելիքսեթյանի զեկուցման թեման: Անդրադառնալով աշխարհացունց պատերազմի լիարժեք ու ճշմարտացի պատմության ստեղծման խնդրին՝ զեկուցողը նշեց, որ դեռևս թերի են լուսաբանված հայ ժողովրդի մասնակցությանը առնչվող հարցերը: Նա ասաց, որ ամեն մի իրադարձության կամ երևույթի տարեկիցի, առավել ևս կետայրյա հորեյլանի նշումը երբեք էլ ինքնանպատակ չէ: Անշուշտ, այն նոր մտորումների տեղիք է տալիս և տվյալ իրադարձության ու երևույթի շուրջ ավելի խոր, բազմակողմանի և նորովի մեկնաբանության առիթ ծառայում, քանի որ ժամանակի հոլովույթն իր սրբագրություններն է մտցնում դրանց մեջ: Այս առումով մոտենալով հարցին՝ զեկուցողը նոր մեկնաբանություններ տվեց հայտնի փաստերին ու դեպքերին և որոշ դիտողություններ ու առաջարկություններ արեց դրանց շուրջ: Նա ասաց, որ չնայած բավականին նյութեր են հավաքվել այդ պատերազմում հայ ժողովրդի հարյուր հազարավոր զավակների մասնակցության վերաբերյալ, այնուամենայնիվ, մինչև օրս գիտական բավարար մակարդակով հիմնարար աշխատություններ չեն գրվել, չեն ճշտվել, թե որքան հայ է գորակոչվել Կարմիր բանակի շարքերը այդ տարիներին, որքան է գոհվածների թիվը և այլն: Դրանց մասին մինչև այժմ էլ շրջանառության մեջ են գտնվում միայն մոտավոր և իրարից խիստ տարբերվող թվեր: Որքան էլ տարօրինակ է, մինչև այժմ վերջնականապես ճշտված չէ Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած հայերի թիվը: Ինչ խոսք, նման անճշտություններն աններելի են պատերազմում հայ ժողովրդի մասնակցության հիմնախնդրով զբաղվող հայ պատմաբանների համար: Այս կարգի նաև ուրիշ բացթողումներ կան, որոնք Հայրենական մեծ պատերազմի պատմությամբ զբաղվող մասնագետները պետք է աշխատեն շուտափույթ հաղթահարել: «Հատկապես մեր օրերում,- այնուհետև շարունակեց զեկուցողը,- երբ վերագնահատվում են հեռու և մոտիկ անցյալի շատ իրադարձություններ ու



գործիչներ, երբ մենք ականատես ենք լինում որոշ նորաթուխ քաղաքական գործիչների՝ անտեղյակության կամ միտումնավոր ծայրահեղականության հետևանքով մի շարք իրողությունների վերաբերյալ արտահայտած անհիմն ու բացասական գնահատականների, առավել անհրաժեշտ է դառնում մեր պատմության կարևորագույն հիմնահարցերի մասին առարկայական ու ճշմարտացի հետազոտությունների կատարումը: Անկախ ՀՀ խորհրդարանում և այլուր հնչող որոշ տգետ կամ ծայրահեղական ելույթներից՝ հայ ժողովուրդը միանգամայն իրավացիորեն իր կարևոր ավանդն է ներդրել Մեծ հայրենականի հաղթանակում, և նրա հարյուր հազարավոր զավակների թափած արյունը պատշաճ գնահատության պետք է արժանանա: Խոսակցություններն այն մասին, թե հայ ժողովուրդը չպետք է մասնակցեր պատերազմին, անհիմաստ են եղել գոհողությունները և այլն, աներկբա վկայում են, որ մման տեսակետների հեղինակները հեռու են պատմության ընթացքը հասկանալուց: Նրանք չեն ըմբռնում, որ գերմանական ֆաշիզմի հետ գործարքների մեջ մտած Թուրքիան պատեհ առիթի էր սպասում Խորհրդային Հայաստանի վրա հարձակվելու և իր պանթուրքական ծրագրերն իրականացնելու համար: Դժվար չէ պատկերացնել, թե այդ դեպքում ինչ ճակատագիր էր սպասվում մեր ժողովրդին: Ուստի Մեծ հայրենականի ռազմաճակատներում մեր ժողովրդի բյուրավոր զավակների կյանքի գնով էր մաս, որ ապահովվեց Հայաստանի Հանրապետության անձեռնմխելիությունը: Ահա թե ինչու պատերազմի սկսվելու պահից մինչև հաղթանակի բերկրալի օրը մեր ժողովուրդը թե՛ հայրենիքում և թե՛ Սփյուռքում ամենագործուն մասնակցությունն ունեցավ նրանում: Ռազմական իրադրության պահանջներին համապատասխան՝ սեղմ ժամկետներում վերակառուցվեցին թիկունքի ամբողջ աշխատանքները, ապահովվեց ռազմաճակատի կարիքների անխափան բավարարումը:

Պատերազմի հենց սկզբից Հայաստանում ձևավորվեցին Կարմիր բանակի մի քանի զորամիավորումներ, որոնց հանրապետությունն ապահովեց ոչ միայն մարդկանցով, այլև տրանսպորտով, հանդերձանքով և նյութատեխնիկական այլ միջոցներով, ասաց զեկուցողը: Թիկունքում աշխատանքը վերակառուցելու և պատերազմի պահանջներին համապատասխան կազմակերպելու այդ լարված օրերին խորհրդագերմանական ռազմաճակատի տարբեր հատվածներում ծավալված առաջին իսկ

մարտերում ծնվեցին ու առնականացան նաև բազմաթիվ հայ ռազմիկներ ու սպաներ: Պատերազմի առաջին հայ խիզախների թվում անմոռաց սխրանքներ կատարեցին Բրեստի ամրոցի հերոսական պաշտպանությանը մասնակցած շուրջ 200 հայ ռազմիկներ:

Եթե պատերազմի առաջին ամիսներին հայ խիզախներն առանձին անհատներ կամ փոքր խմբեր էին, ապա հետագայում նրանց թիվը զգալիորեն բազմապատկվեց: Խորհրդային բանակի տարբեր զորատեսակներում հազարավոր հայ մարտիկներ ու սպաներ աչքի ընկան Մոսկվայի մատույցներում ու Լենինգրադի պաշտպանների շարքերում, Ստալինգրադում ու Կուրսկի աղեղում, Ղրիմում ու Կովկասում, Ուկրաինայում ու Բելոռուսիայում, Մերձբալթիկայում ու եվրոպական երկրներում: Հայ ռազմիկների մարտական սխրագործությունների տարեգրությունը մեծապես հարստացավ ազգային զորամիավորումների կազմավորումից հետո, Կերչի ու Կովկասի համար մղված ճակատամարտերում ու հետագայում: Ազգային զորամիավորումների ստեղծումը ռազմաքաղաքական շատ կարևոր նշանակություն ունեցող երևույթ էր: Այդ ուղղությամբ արդեն 1941 թ. վերջերին և 1942 թ. սկզբներին լարված աշխատանք կատարվեց Հայաստանում: Այստեղ կազմավորվեց 7 հրաձգային դիվիզիա՝ 89-րդ, 408-րդ, 409-րդ, 61-րդ, 320-րդ, վերստին կոմպլեկտավորվեց երկու կադրային դիվիզիա: Չևավորվեցին նաև երկու առանձին մոտոհրաձգային գումարտակներ և մեծ թվով երթային վաշտեր: Թվարկված առաջին հինգ դիվիզիաները պաշտոնապես ստացան «Հայկական» անվանումը, իսկ վերջին չորսը չնայած «Հայկական» չկոչվեցին, բայց նրանց անձնակազմի 60-80 տոկոսը ևս հայեր էին, ուստի դրանք մույնպես կարելի է «Հայկական» ազգային զորամիավորումներ անվանել: Բացի դրանցից՝ Հայաստանը մասնակցել է ևս 16 դիվիզիաների կազմավորմանը»:

Այնուհետև գեկուցողը հակիրճ ներկայացրեց վերոհիշյալ հայկական զորամիավորումների մարտական գործողությունների պատմությունը, այն ռազմաճակատների ընդհանուր պատկերը, որոնցում ֆաշիստական գերակշիռ զորքերի դեմ մարտեր են մղել հայկական դիվիզիաները, անդրադարձավ հայ ռազմիկների, սպաների ու գեներալների սխրագործություններին: «Պատերազմի հաղթական ավարտի շրջանում,- ասաց նա,- հայկական զորքերը թշնամուն հետապնդում ու ջախջախում էին

Գերմանիայի ու նրա դաշնակիցների տարածքներում: 409-րդ՝ Կիրովո-գրադյան և 89-րդ Թամանյան դիվիզիաները մասնակցեցին ինչպես Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Բուլղարիայի, Հարավսլավիայի ազատագրմանը, այնպես էլ Գերմանիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Ավստրիայի ջախջախմանը: 89-րդ դիվիզիան խորհրդային բանակի միակ զուտ ազգային զորամիավորումն էր, որը մասնակցեց Բեռլինի գրավմանը և պատերազմը ավարտեց Էլբայի ափին: Հայ ժողովրդի զավակները գործուն մասնակցություն ունեցան նաև միլիտարիստական ճապոնիայի ջախջախման գործում:

Խորհրդային բանակի 1943-44 թթ. վճռական հաղթանակների մեջ, - ասաց զեկուցողը,- իրենց ավանդն ունեցան նաև օկուպացված Դրինում, Հյուսիսային Կովկասում, Ուկրաինայում, Բելոռուսիայում, Լենինգրադի մարզում, Մերձբալթիկայում և այլ շրջաններում ու բշտամու խոր թիկունքում գործած պարտիզանները, որոնց շարքերում ևս աչքի ընկան հազարավոր հայեր՝ ունենալով ինքնուրույն պարտիզանական ջոկատներ:

Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության և հաղթանակի գործում նրա ներդրած ավանդի մասին խոսելիս չպետք է մոռանալ սփյուռքահայությանը,- շարունակեց զեկուցողը:- Պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ դաշնակիցների բանակներում կռվել են ավելի քան 80 հազար սփյուռքահայեր, որոնք գորակոչվել էին ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Հունաստանից, Լիբանանից, Եգիպտոսից, Սիրիայից և այլ երկրներից: Միայն ԱՄՆ-ի բանակում մարտնչում էին 20 հազար հայեր, շուրջ 30 հազար հայ ռազմիկներ կային Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի բանակներում, հազարավոր հայեր մասնակցում էին դիմադրական-պարտիզանական պայքարին: Սփյուռքահայերից պատերազմում իրենց խիզախությամբ աչքի ընկան շատերը, որոնցից են ԱՄՆ-ի հերոս Երվանդ Դերվիշյանը, Ֆրանսիայի ազգային հերոս Միսաք Մանուշյանը և բազմաթիվ ուրիշներ: Հայրենական մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում իրենց հերոսական սխրանքներով անմար փառք վաստակեցին հայ ժողովրդի կես միլիոնից ավելի զավակներ: Հայ ժողովուրդը գերազանց դրսևորեց իրեն թե՛ թիկունքում և թե՛ ռազմաճակատում, մարտերում զոհված նրա շուրջ 250 հազար որդիների սխրագործություններն ու հիշատակը երբեք չեն խամրի ժամանակի հողովույթում»:

Մեծ հաղթանակի 50-ամյակին նվիրված գիտական նստաշրջանն անցավ բարձր մակարդակով: Կարդացված զեկուցումների շուրջ եղան ելույթներ, բազմաթիվ հարցադրումներ, հեղինակների կողմից տրվեցին լրացուցիչ մեկնաբանություններ ու բացատրություններ:

## **ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՎԵՐՁԻՆ ԳԻՐՔԸ\***

Երևանի պետական համալսարանի գրական կապերի բաժինը, որը գործում է հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի (հայագիտական կենտրոն) կազմում, երկու տասնամյակ առաջ հիմք դրեց մի մատենաշարի, որը կրում է «Ռուս դասականները և ԽՍՀՄ ժողովուրդների գրականությունը» խորագիրը: Այդ մատենաշարով անցած քսան տարիների ընթացքում լույս են տեսել տասը գրքեր՝ նվիրված Ա. Մ. Գորկու (1970 թ.), Ն. Ա. Նեկրասովի (1972 թ.), Մ. Յու Լերմոնտովի (1974 թ.), Ա. Ս. Պուշկինի (1975 թ.), Լ. Ն. Տոլստոյի (1978 թ.), Ա. Պ. Չեխովի (1982 թ.), Վ. Վ. Մայակովսկու (1983 թ.), Ն. Վ. Գոգոլի (1986 թ.), Ն. Գ. Չերնիշևսկու (1988 թ.) ստեղծագործությունների վերլուծությանը և Խորհրդային Միության ժողովուրդների գրականությունների վրա նրանց թողած ազդեցությանը: Մատենաշարի խմբագրական խորհրդի մեջ են մտնում Երևանի, Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Թբիլիսիի և Մերձբալթյան հանրապետությունների լավագույն գիտնականները: Իսկ այդ գրքերում տպագրված նյութերի հեղինակները միութենական ու ինքնավար հանրապետությունների, ինչպես նաև երկրի խոշոր քաղաքների ճանաչված գիտնականներ են, ովքեր համակողմանիորեն և մասնագիտական բարձր մակարդակով վերլուծում են Միության բազմազգ, գրականությունների կապը ռուս գրականության անցյալի դասական ավանդների հետ:

Երևանի համալսարանի հրատարակությամբ 1991 թ. լույս տեսավ հիշյալ մատենաշարը եզրափակող հատորը, որն ամբողջությամբ նվիրված է ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Բլոկի գրական

---

\* «Երևանի համալսարան լրատու», 1992, թիվ 2, էջ 60-61:

ժառանգության և նրա՝ ԽՍՀՄ ժողովուրդների գրականությունների հետ ունեցած փոխառնչությունների համակողմանի քննությանը:

Համաձայն ստեղծված ավանդույթի՝ ինչպես նախորդ ինը հատորները, այնպես էլ ներկա՝ տասներորդ գիրքն ունի երկու բաժին: Առաջին բաժնում բացահայտվում և քննարկվում են Ա. Բլոկի՝ ռուս դասական գրականությանն առնչվող ստեղծագործական կապերը: Ինչպես ընդունված է, Ա. Բլոկով ավարտվում են անցյալ դարաշրջանի ռուսական դասական քնարերգության ավանդույթները, և նրանով էլ բացվում է նորագույն պոեզիայի առաջին էջը: Բլոկն անցյալի դասական ավանդների ժառանգորդն ու նորագույն գրականության հիմնադիրն է: Նա ռուս իրականության մեջ հանդես է գալիս որպես գրական երկու՝ անցյալ ու ներկա դարերը իրար միավորող օղակ: Գրքի առաջին բաժնում տպագրված մեկուկես տասնյակ հոդվածներից ու հաղորդումներից մի քանիսում արծարծվում են վերոհիշյալ խնդիրները:

Մի շարք ուսումնասիրություններ էլ, որոնց հեղինակներն են Կ. Կումպանը, Ֆ. Ֆեոդորովը, Ի. Ուսոկը, Ջ. Միսցը, Ջ. Պապերնին և ուրիշներ, նվիրված են Պուշկինի, Գրիբոյեդովի, Լերմոնտովի, Հերցենի, Նեկրասովի, Ֆետի, Տոլստոյի, Չեխովի և ռուս դասականների գեղարվեստական փորձի՝ Ա. Բլոկի կողմից ընկալման ու յուրացման հարցերին: Այդ աշխատանքների հեղինակներից ոմանք՝ Վ. Իսվանով, Օ. Մոլա, Ե. Պաստեռնակ և այլք, զուգահեռներ են անցկացնում Անդրեյ Բելու, Վլադիմիր Մայակովսկու, Բորիս Պաստեռնակի և Ալեքսանդր Բլոկի ստեղծագործությունների միջև՝ ցույց տալիս վերջինիս պոեզիայի սերտ կապն ու հոգեհարազատությունը հիշյալ հեղինակների հետ, ինչպես նաև իր մեծ նախորդների ու ժամանակակիցների գրական ժառանգություններից ունեցած տարբերությունները:

Նույն բաժնում առանձին ուսումնասիրություն է տպագրված՝ նվիրված Ա. Բլոկի քնարերգության վրա ժողովրդական բանահյուսության ազդեցությանը, նրա միֆական կողմին, որի հեղինակն է Ա. Յուլովան: Իսկ նույն բաժինը եզրափակող Մ. Գասպարովի հոդվածը

նվիրված է ռուսական բանաստեղծության պատմության մեջ Ա. Բլոկի խաղացած դերին:

Գրքի երկրորդ բաժինը նվիրված է Ա. Բլոկի ստեղծագործությունների պատմության ու տեսության խնդիրներին, այդ ասպարեզում ծագած դժվարություններին: Այստեղ ևս տպագրված են մեկուկես տասնյակ աշխատանքներ, որոնց հեղինակները՝ Վ. Ջվինյացկովսկի, Ս. Իլյով, Ա. Իսահակյան, Ս. Ջոլյան, Ա. Սիմոնյան, Ռ. Պապայան, Գ. Մարգվելաշվիլի, Ե. Կալնինյա, Ս. Իսակով, Լ. Սպորգե, Ա. Ռոզենֆելդ և այլք, արժեքավորում են տարբեր հանրապետություններում ռուս մեծ բանաստեղծի գրական գործերի քարգմանությունները, կատարում դրանց վերլուծությունները՝ հիմնական շեշտը դնելով նրա «Տասներկուսը» նշանավոր պոեմի՝ տարբեր լեզուներով և տարբեր սերունդների բանաստեղծների կողմից կատարված քարգմանությունների վրա: Միաժամանակ դիտարկվում են նաև Ա. Բլոկի ստեղծագործական կապերը Ուկրաինայի, Բելոռուսիայի, Հայաստանի, Լատվիայի, Էստոնիայի, Ուզբեկստանի և Տաջիկստանի գրական կյանքում:

Ներկա հատորը, ինչպես գտնում է նրա խմբագրությունը, սկիզբն է կոլեկտիվ այն մեծ հետազոտության, որը լուրջ ներդրում կլինի Ա. Բլոկի գրական ժառանգության և մեր երկրի բազմազգ ժողովուրդների գրական կապերի ու փոխառնչությունների ուսումնասիրման բնագավառում: Հատորի նյութերը ժողովել և այն կազմել է Ղ. Այվազյանը: Գիրքը տպագրության են պատրաստել Երևանի պետական համալսարանը և ԽՍՀՄ ԳԱ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների գրականության ինստիտուտների և երկրի առաջատար բուհերի գիտնականների համագործակցությամբ: Այն տպագրության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնը:

**Մ. Վահանյան**

## Բովանդակություն

Որպես մուտքի խոսք .....	3
Մայր համալսարան .....	5

### **ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. Հայոց լեռնաշխարհում վառվում է հոգևոր**

<b>լույսի մեծ ջահը.....</b>	<b>7</b>
Հայաստանի համալսարանի հիմնադրումը .....	9
Հայաստանի համալսարանի գիտական գրադարանի հիմնադրման պատմությունից.....	24
Հայաստանի համալսարանի առաջին հրատարակությունները.....	35

### **ՄԱՍ ԵՐԿՐՈՐԳ. «Մի ձեռքում սուր պիտի ունենանք,**

<b>մյուս ձեռքում գրիչ բռնենք».....</b>	<b>47</b>
«Հայաստանի համալսարան» թերթը .....	49
Համալսարանի գիտական գրադարանը.....	54
Երևանի համալսարանի հրատարակչությունը .....	58
Համալսարանի ասպիրանտուրան .....	66
ԵՊՀ գիտական գրադարանի անվանակոչությունը .....	76
Երևանի համալսարանի պատմության թանգարանը .....	93
Երևանի համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը .....	102
Նշվեց Մայր համալսարանի կեսդարյա հոբելյանը.....	112
Մեզ շնորհավորում են.....	122
Համալսարանը 60 տարեկան է.....	130
Երևանի պետական համալսարանի 75 տարին .....	134
ԵՊՀ հիմնադրումն ազդարարող փաստաթղթերի ժողովածուն.....	146
Գիտական նստաշրջան .....	161
Երևանի պետական համալսարանը մեր պատմական հուշարձանների պահապան .....	166
Մոսկվայի պետական համալսարանը՝ 250 տարեկան.....	176

**ՄԱՍ ԵՐՐՈՐԳ. Հիշարժան իրադարձություններ**

**ԵՊՀ կամարների ներքո .....191**  
«Իմ արմատներ հոս են» .....193  
«Կը մնամ ընդմիշտ համալսարանի բարեկամներու շարքին» .....198  
Սփյուռքահայ կին դոկտորը արվեստի և փիլիսոփայության սիրով .....204  
Նոր հուշակոթողի բացում .....208  
Ամենայն հայոց կաթողիկոսը ԵՊՀ պատվավոր դոկտոր .....211  
Ամենայն հայոց հայրապետը Մայր համալսարանում .....218

**ՄԱՍ ՉՈՐՐՈՐԳ. Անվանի դասախոսների դիմանկարներ .....225**

Հոգեբանության առաջին դասախոսը Երևանի համալսարանում .....227  
Բազմավաստակ գրականագետն ու դասախոսը  
(*Հրանդ Թամրազյանի ծննդյան 70-ամյակը*) .....231  
Անվանի հայերենագետն ու վաստակաշատ համալսարանականը .....237  
Ականավոր պատմաբանն ու մանկավարժը  
(*Գիյոսկան նսրաշրջան՝ նվիրված պրոֆ. Վ. Հ. Ռշտունու 100-ամյակին*) .....246

**ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԳ. ԵՊՀ հանդեսները գիտության**

**լույսը սփռող անմարելի ջահեր .....255**  
Մեծ ավանդ բնական գիտությունների զարգացման ու տարածման գործում: «Գիտական տեղեկագիր» հանդեսի անխափան հրատարակության 25-ամյակի առթիվ .....257  
Ի նպաստ հայագիտության զարգացման: «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի հիմնադրման 25-ամյակի առթիվ .....262  
Հայկական ՄՍՀ ԳԱ պարբերականները .....265  
«Պատմաբանասիրական հանդես» .....272  
«Երևանի համալսարան» («Հանդես Երևանի համալսարանի»)  
գիտատեղեկատվական լրատուն .....278  
Միջազգային բասկագիտական նոր հանդես .....281  
«Իրավագիտության հարցեր» մասնագիտական պարբերականը .....288  
«Կրթությունը և գիտությունը Ղարաբաղում»  
նորաստեղծ երկամսյա հանդեսը .....290



<b>ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԳ. Հայաստանի բուհական մամուլի առաջնեկը .....</b>	<b>299</b>
Հանրապետության բուհական թերթերի առաջնեկը .....	301
Հայաստանի բուհական մամուլի առաջնեկը .....	311
Ուսանող երիտասարդության օգնականն ու խորհրդատուն («Երևանի համալսարան» շաբաթաթերթի 60-ամյակի առթիվ) .....	317
2000-րդ հանդիպումը Մայր բուհի ուսանողության հետ (Հանդիսավոր նիստը՝ նվիրված «Երևանի համալսարան» թերթ 2000-րդ հոբելյանական համարի լույսընծայմանը) .....	322

**ՄԱՍ ՅՈԹԵՐՈՐԳ. Համալսարանական գիրքը գիտելիքների  
անսպառ շտեմարան.....329**

Հոբելյանական հրատարակություններ	
«Երևանի պետական համալսարանը» .....	331
«Երևանի պետական համալսարանի ռեկտորները» ժողովածուն .....	338
Ականավոր պատմաբանը Ժամանակակիցների հուշերում .....	341
Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի պատմությունը .....	351
«Գևորգյան ճեմարանի երախտավորները» .....	364
Հանճարեղ հայագետին նվիրված մենագրություն (Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի ծննդյան 130-ամյակի առթիվ) .....	370
Կոթողային մի անտիպ աշխատության հրատարակությունը .....	382
«Չարենցյան ընթերցումներ» .....	386
Արշակ Չոպանյանի «Անահիտը» .....	388
Գիրք սփյուռքահայ գրողի մասին .....	397
Գերմանացի հայագետի ուսումնասիրությունները .....	399
«Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն» .....	402
«Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին» .....	403
«Առաքելոց վանքին կռիւր» .....	405
Անդրանիկ Ջորավարի մարտական հրահանգները .....	408
«Գեորգ Չաուշ» .....	409
Մեծ եղեռնից մազապուրծ երզնկացիների տոհմագիրքը .....	412
Երեք գիրք՝ նույն մատենաշարով .....	424
«Նոր տետրակ, որ կռչի յորդորակ» .....	432

Հնամյա քաղաքի հավաստի պատմությունը. Գառնիկ Ստեփանյանի «Երզնկա. հնագույն դարերից մինչև մեր օրերը» մենագրություն .....	436
Կիլիկյան Հայաստանի անվանի կաթողիկոսն ու մշակութային գործիչը. Գեորգ Մադոյեանի «Գրիգոր Անաարզեցին շարականագիր» .....	443
Հին հնդկական գրական հուշարձանը հայերեն .....	449
«Գրական հեթանոսությունը» նոր մեկնաբանությամբ .....	454
Հայոց ցեղասպանության պատճառներն ու պատմական դասերը.....	457
Հայ լեռնականների մեծ սխրանքը.....	473
Քսաներորդ դարի մեծագույն փորձությունը .....	483
Մատենաշարի վերջին գիրքը .....	499

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Վ. Ս. ՄԱՂԱԼՅԱՆ**

**ԻՄՆՎԵՐԸ  
ՄԱՅՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ**


*(Հոդվածների ժողովածու)*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. սրբագրումը՝ Մ. Կետյանի, Գ. Գրիգորյանի

Տպագրված է «Քոփի փրինթ» ՍՊԸ-ում:  
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 12.07.2019:  
Չափսը՝ 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 31.625:  
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.yసు.am](http://www.publishing.yసు.am)



## ՄԱՂԱԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ (ՎԱՅԱՆ) ՍԱՐԳՍԻ

Ծնվել է 1942 թ. մարտի 20-ին Վր. ԽՍՀ Թեթրիժղարոյի շրջանի Դաղեթ-Խաչեն գյուղում, որտեղ 1958 թ. ավարտել է 9-րդ դասարանը, 1960 թ. Ծալկայի շրջանի Նարդևան գյուղի միջնակարգ դպրոցը, որը ավարտել է ոսկե մեդալով, 1968 թ. ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, 1977 թ. ասպիրանտուրան:

1962-1965 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1968-1971 թ. եղել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ամբիոնի ավագ լաբորանտ, 1969-1970 թթ.՝ նաև խմբագրել ԶԱՍԻ «Կադրերի համար» բազմատպաքանակը: 1971-2006 թթ. եղել է «Երևանի համալսարան» շաբաթաթերթի խմբագիր, 1991-2000 թթ.՝ նաև «Հանդես Երևանի համալսարանի» գիտատեղեկատվական լրատուի գլխավոր խմբագիր: 2007 թ.-ից ԵՊՀ ԶՀԻ ավագ գիտաշխատող է:

1989 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: ԵՊՀ-ում և այլ բուհերում զբաղվել է նաև դասախոսական աշխատանքով:

Հեղինակ է ավելի քան 100 հոդվածի և մի շարք գրքերի, որոնցից են՝ «Գրական-մշակութային կյանքը Երևանի համալսարանում (1919-2009 թթ.)» (Եր., 2009), «Երևանի պետական համալսարանը վավերագրերում (1919-2009 թթ.)» (Եր., 2009), «Սրտի խոսք» (Եր., 2009), «Երևանի համալսարանի հոբելյանները (1919-2009 թթ.)» (Եր., 2011), «Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885-1991 թթ.)» (Եր., 2014): Կազմել և հրատարակության է պատրաստել «Գրական համալսարան» տարեգրքի մի քանի հատոր, «Քնար համալսարանի» ժողովածուն և այլ գրքեր: Զբաղվել է նաև գրական-ստեղծագործական և թարգմանչական գործունեությամբ:

1969 թ.-ից եղել է ԽՍՀՄ ԺՄ անդամ: 1965 թ. պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի 1941-1945 թթ. հաղթանակի 20 տարին» մեդալով: Երեք անգամ արժանացել է ԵՊՀ ոսկե հուշամեդալի:



ՄԱՂԱՍՐԿՎՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2019  
publishing.ysu.am